**THIS TRANSLATION IS PUBLISHED WITH THE FINANCIAL SUPPORT OF THE COUNCIL OF EUROPE**




**Թարգմանությունը հրատարակվում է Եվրոպայի խորհրդի ֆինանսական աջակցությամբ**

Legal and Human Rights Capacity Building Department
Directorate of Co-operation
Directorate General of Human Rights and Legal Affairs
Council of Europe
F-67075 Strasbourg Cedex

Իրավական և մարդու իրավունքների զարգացման
ծրագրերի վարչություն
Համագործակցության տնօրինություն
Մարդու իրավունքների և իրավական հարցերի
գլխավոր տնօրինություն
Եվրոպայի խորհուրդ
F-67075 Strasbourg Cedex

JEREMY McBRIDE

# HUMAN RIGHTS AND CRIMINAL PROCEDURE

# THE CASE LAW OF THE EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

*General and legal editing of the Armenian translation by* **VAHE YENGIBARYAN**
Executive Director of the Association of Judges of the Republic of Armenia,
Professor of YSU Law Faculty, PhD in Law

*Translation into Armenian by:* **ANNA VARDAPETYAN**
**LUSINE ABRAHAMYAN**




Yerevan
«Antares»
2009

ՋԵՐԵՄԻ ՄԱՔԲՐԱՅԴ

# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

*Հայերեն թարգմանության ընդհանուր և իրավաբանական խմբագիր՝* **ՎԱՀԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ**
ՀՀ դատավորների միության գործադիր տնօրեն,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դոցենտ,
իրավագիտության թեկնածու

*Թարգմանիչներ՝* **ԱՆՆԱ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**
**ԼՈՒՍԻՆԵ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

Երևան
«Անտարես»
2009

ՀՏԴ 341.231.14 : 343
ԳՄԴ 67.91 + 67.99(2)93
Մ 410

Տպագրվում է
ՀՀ դատավորների միության խորհրդի որոշմամբ

Մաքբրայդ Ջերեմի
Մ 410 Մարդու իրավունքները և քրեական դատավարությունը:
Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի
նախադեպային պրակտիկան.- Եր.: Անտարես, 2009.- 468 էջ:

Սույն աշխատանքի մեջ ընդգրկվել են մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ընդունված վճիռներից առանձին հատվածներ, որոնք հնարավորություն են տալիս ամբողջական պատկերացում կազմել քրեական դատավարության բնագավառում մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի մասին: Այն էական նշանակություն կարող է ունենալ ներպետական դատարանների իրավակիրառ պրակտիկայի համար:

Աշխատանքի նպատակն է աջակցել դատավորներին, դատախազներին, փաստաբաններին, ինչպես նաև իրավակիրառ գործունեություն իրականացնող մյուս մարմիններին ու կազմակերպություններին ծանոթանալու Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկային:

Աշխատանքը կարող է օգտակար լինել նաև Եվրոպական դատարան դիմելու մտադրություն ունեցող քաղաքացիների, իրավաբանական բուհերի ուսանողների և իրավունքի բնագավառում գիտական հետազոտություններ կատարող անձանց համար:

ՀՏԴ 341.231.14 : 343
ԳՄԴ 67.91 + 67.99(2)93

ISBN 978-9939-51-169-6

© Ջերեմի Մաքբրայդ, 2009թ.
© Եվրոպայի խորհուրդ, 2009թ.
© ՀՀ դատավորների միություն, 2009թ.
© Վահե Ենգիբարյան, 2009թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** ..... 17

**Ա. ՔՐԵԱԿԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔ** ..... 26

**Բ. ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ** ..... 39

**Ի. ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ** ..... 39

**1. Բազմակողմանի և արդյունավետ քննություն կատարելու պարտականությունը** ..... 39

**2. Անկողմնակալ լինելու պարտականության բացակայությունը** ..... 42

**3. Մամուլում հրապարակված տեղեկությունները** ..... 43

**4. Պաշտոնատար անձանց քննադատությունը** ..... 46

**II. ՉԵՐԲԱԿԱԼՈՒՄ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄ** ..... 49

**1. Իրավական հիմքը** ..... 49

**2. Հիմնավոր կասկածի պահանջը** ..... 51

*ա. Որոշ ապացույցներ, որոնք չեն պահանջվում* ..... 51
*բ. Բավարար հիմք* ..... 52

**3. Հանգամանքները և ուժի կիրառումը** ..... 57

*ա. Ընտանիքի անդամների ներկայությամբ* ..... 57
*բ. Ուժի կիրառում* ..... 58
*i. սահմանազանցող* ..... 58
*ii. չսահմանազանցող* ..... 60

**4. Պատճառաբանելու պարտականությունը** ..... 61

*ա. Բավարար տեղեկություն* ..... 61
*բ. Անհապաղ* ..... 63

**5. Առաջին անգամ դատավորի մոտ տարվելը** ..... 64

*ա. «Դատավոր» հասկացությունը* ..... 64
*բ. Ժամկետները* ..... 65
*i. սահմանազանցող* ..... 65
*ii. չսահմանազանցող* ..... 68

*գ. Լսումները* ..... 69
*դ. Որոշման էության ինքնաբերաբար քննության անհրաժեշտությունը* ..... 70
*ե.Ազատ արձակելու իրավասության անհրաժեշտությունը* ..... 70

**6. Կալանավորումը պատճառաբանելու պարտականությունը** ..... 72

**7. Պայմանները և վատ վերաբերմունքը** ..... 73

**8. Արտաքին շփումները** ..... 74

**III. ԿԱԼԱՆՔ** ..... 75

**1. Իրավական հիմքերը** ..... 75

**2. Իրավաչափությունը** ..... 76

*ա. Անհրաժեշտության դեպքում քննարկելու պարտականությունը* ..... 76
*բ.Հանցանքի հստակ ապացուցված լինելու անհրաժեշտության բացակայությունը* ..... 76
*գ. Հատուկ հիմնավորման անհրաժեշտությունը* ..... 77
*դ. Հանցանքի ծանրության և հնարավոր պատժի բավարար չլինելը* ..... 78
*ե. Հիմնավոր կասկած* ..... 79
*զ. Թաքնվելու վտանգը* ..... 80
*է. Արդարադատության իրականացմանը խոչընդոտելու վտանգը* ..... 84
*ը. Նոր հանցագործությունների կատարման վտանգը* ..... 88
*թ. Հասարակական կարգի խախտման սպառնալիքը և կալանավորի պաշտպանությունը* ..... 89

*ժ. Ազատ արձակման հարցի քննարկման ինքնաբերաբար բացառումը* ..... 90

**3. Կալանավորի առողջական վիճակը հաշվի առնելու պարտականությունը** ..... 91

**4. Այլընտրանքային միջոցների կիրառումը** ..... 92

*ա. Գրավ* ..... 92
*բ. Բնակավայրը չփոխելու պահանջը* ..... 96
*գ. Տնային կալանք* ..... 96
*դ. Ոստիկանության հսկողությանը հանձնելը* ..... 97
*ե. Ամնաագրի հանձնում* ..... 98

**5. Վերահսկողությունն օրինականության նկատմամբ** ..... 98

*ա. Առկայությունը* ..... 98
*բ. Արագությունը* ..... 101
*գ. Վերանայման սահմանները* ..... 102
*դ. Պարբերականությունը* ..... 103
*ե. Գործին ծանոթանալու հնարավորությունը* ..... 104
*զ. Դատախազի միջնորդության մասին չծանուցելը* ..... 105
*է. Գործի քննությանը նախապատրաստվելու պատշաճ հնարավորություն* ..... 105
*ը. Պաշտպանի մասնակցությունը* ..... 106
*թ. Մեղադրյալի մասնակցությունը* ..... 108
*ժ. Հասարակական լսումների անհրաժեշտ չլինելը* ..... 109
*ի.Պատշաճ դատական լսման պայմանները* ..... 110
*լ. Ազատ արձակվելու իրավունքի անհրաժեշտությունը* ..... 112

**6. Պայմանները** ..... 112

*ա. Որակը* ..... 112
*բ. Ազատազրկման դատապարտված անձանցից անջատ պահելը* ..... 115
*գ. Խիստ մեկուսացման ռեժիմ* ..... 115
*դ. Հաղորդակցությունների վերահսկողությունը* ..... 116
*ե. Ընտանիքի հետ շփվելու հնարավորությունը* ..... 117
*զ. Վտանգի տակ գտնվող անձանց հսկողությունը* ..... 120
*է. Պաշտպանությունը մյուս կալանավորներից* ..... 121
*ը. Բժշկական հսկողություն* ..... 122
*թ. Քվեարկելու իրավունքը* ..... 126
*ժ.Վատ վերաբերմունքը կալանավայրի աշխատակիցների կողմից* ..... 127

**7. Տևողությունը** ..... 128

*ա. Դիտարկման անհրաժեշտությունը* ..... 128
*բ. Ժամանակահատվածը որոշելը* ..... 128
*գ. Ոչ անողջամիտ* ..... 128
*դ. Անողջամիտ* ..... 131
*ե. Ժամկետն ավարտվելուց հետո ազատ արձակելը* ..... 133
*զ. Նշանակված պատժի հետ հաշվակցելը* ..... 135

**IV. ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՀԱՎԱՔԵԼԸ** ..... 137

**1. Խուզարկություն և առգրավում** ..... 137

*ա. Խուզարկություն* ..... 137
*բ. Առգրավում* ..... 147
*գ. Ուժի կիրառումը* ..... 148
*դ. Սեփականությունը վնասելը* ..... 149

**2. Անձնական քննումը՝ ներառյալ հերձումը** ..... 150

**3. Հոգեբուժական հետազոտությունը** ..... 151

**4. Մեղադրյալի մասնակցությամբ դեպքի տեղի զննություն կատարելը** ..... 153

**5. Հաղորդակցությունների վերահսկողությունը** ..... 153

**6. Տեսա-ձայնագրում** ..... 155

**7. Գաղտնի գործակալներ** ..... 157

**8. Տեղեկություն տալու պարտականությունը** ..... 161

**9. Գաղտնիության պահպանման պարտականությունն ապացույցներ հավաքելիս** ..... 166

**10. Ապացույցի պահպանումը նախնական քննության/ մեղադրանքի ավարտից հետո** ..... 167

**V. ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ** ..... 170

**1. Պաշտպան ունենալու իրավունքը** ..... 170

**2. Լռություն պահպանելու իրավունքը** ..... 177

**3. Հարցաքննության ապօրինի մեթոդները** ..... 179

*ա. Խոշտանգում* ..... 179
*բ. Անմարդկային և նվաստացնող վերաբերմունք* ..... 181

**VI. ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԴԱՏԱՐԵՑՈՒՄԸ** ..... 182

**1. Մեղադրվելու իրավունքի բացակայությունը** ..... 182

**2. Մեղքը ենթադրող որոշումների պատճառաբանությունը** ..... 184

**3. Արդարացման որոշման վիճարկումը** ..... 185

**Գ. ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ** ..... 187

**I. ԴԱՏԱՐԱՆ** ..... 187

**1. Եզրութաբանությունը** ..... 187

**2. Օրենքի հիման վրա ստեղծված** ..... 187

**3. Անկախությունը** ..... 190

**4. Անկողմնակալություն** ..... 191

*ա. Նախնական գործողություններ* ..... 191
*բ. Անձնական շահ* ..... 197
*գ. Նախադատելի հանգամանքներ* ..... 199
*դ. Վարքագիծը դատարանում* ..... 201
*ե. Հայտարարություններ դատարանից դուրս* ..... 202
*զ. Մամուլում տեղ գտած հրապարակումների ազդեցությունը* ..... 203
*է. Այլ անձանց ազդեցությունը* ..... 204

**5. Զինվորական դատարաններ** ..... 205

*ա. Քաղաքացիական բնակչության վերաբերյալ գործերի քննությունը* ..... 205
*բ. Ծառայող անձնակազմի վերաբերյալ գործերի քննությունը* ..... 206

*գ. Ազգային անվտանգության և արտակարգ դրության դատարաններ* ..... 208

**6. Փոփոխություն դատարանի կազմում** ..... 209

**7. Դատարանի դահլիճը** ..... 212

**8. Վարչական պատիժների վերանայումը** ..... 213

**II. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐ** ..... 213

**1. Բովանդակությունը** ..... 213

**2. Սահմանափակումներ, որոնք ներառում են հրաժարումը** .... 216

**3. Տեղեկացում դատավճռի վերաբերյալ** ..... 218

**4. Տեղեկացում սահմանափակումների վերաբերյալ** ..... 220

**III. ԱՊԱՑՈՒՅՄԱՆ ԾԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ** ..... 225

**1. Կասկածյալը շահում է հիմնավոր կասկածից** ..... 225

**2. Կանխավարկածները և ծանրության տեղափոխումը** ..... 225

**3. Ինքնախոստովանության արգելքը** ..... 230

**IV. ՎԿԱՆԵՐ** ..... 232

**1. Լսելու պարտականություն** ..... 232

**2. Անաչառություն** ..... 232

**3. Խաչաձև հարցաքննություն** ..... 234

**4. Արժանահավատություն** ..... 243

**5. Սուտ ցուցմունք տալը** ..... 245

**V. ՓՈՐՁԱԳԵՏ ՎԿԱՆԵՐ** ..... 246

**1.Անկողմնակալությունը** ..... 246

**2. Հնարավորությունների հավասարություն/պաշտպան-
փորձաքննություն** ..... 247

**3. Խաչաձև հարցաքննություն** ..... 249

**VI. ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆ** ..... 251

**1. Թույլատրելիության դեպքերը պետք է
մանրամասն ուսումնասիրվեն** ..... 251

**2. Խոշտանգումների և անմարդկային ու
նվաստացնող վերաբերմունքի կիրառումը** ..... 252

**3. Ինքնախոստովանության արգելքին հակառակ** ..... 255

**4. Հանցագործության կատարման սադրումն այն
բացահայտելու նպատակով և դրդչությունը** ..... 260

**5. Սեփականության իրավունքի խախտումը** ..... 263

*ա. Ապօրինի խուզարկություններն ու առգրավումները* ..... 263
*բ. Գաղտնալսող սարքերի կիրառումը* ..... 264
*գ. Տեսագրող սարքերի կիրառումը* ..... 266

**6. Առանց պաշտպանի ներկայության արված
ինքնախոստովանությունը** ..... 267

**7. Լսածի վերաբերյալ ցուցմունք տալը** ..... 270

**8. Նախկինում արված հայտարարությունները և
առերեսումները** ..... 271

**9. Վկաներին տրվող անձեռնմխելիությունը (իմունիտետը)** .... 272

**10. Ներպետական իրավունքի խախտումը** ..... 273

**VII. ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ** ..... 274

**1. Երբ է կիրառվում** ..... 274

**2. Ապահովելու պարտականությունը** ..... 275

**3. Որակը** ..... 276

**4. Հետագա մեղադրանքը, որի դեպքում այն տրամադրվում է անվճար** ..... 277

**VIII. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ** ..... 278

**1. Մեղադրանքի վերաբերյալ ծանուցումը** ..... 278

**2. Դատական ծանուցագիրը** ..... 284

**3. Բավարար ժամանակ և հնարավորություններ** ..... 284

**4. Մեղքն հաստատող ապացույցների բացահայտումը** ..... 290

*ա. Գործի նյութերի մատչելիությունը* ..... 290
*բ. Ապացույցի չբացահայտումը՝ հասարակական շահից ելնելով* ..... 294

**5. Մեղադրյալի՝ իր շահերն ինքնուրույն ներկայացնելու իրավունքը** ..... 297

**6. Իրավական ներկայացուցչություն** ..... 301

*ա. Ժամանակի հաշվումը* ..... 301
*բ. Արդարադատության շահը պահանջում է պետական աջակցություն* ..... 302
*i. Գործին վերաբերող հանգամանքներ* ..... 302
*ii. Փոխհատուցման պարտականություն* ..... 304

*գ. Ընտրություն* ..... 305
*դ. Իրավասություն* ..... 308
*ե. Անկախություն* ..... 312
*զ. Հաղորդակցություն* ..... 313
*i. Տեսակցություններ* ..... 313
*ii. Թղթակցություն և հեռախոսային խոսակցություններ* ... 318

*է. Ներկայացուցչի պատասխանատվությունն իր հայտարարությունների համար* ..... 321
*ը. Լսմանը ներկա գտնվելը* ..... 324

*թ. Ծախսերի հատուցումը* ..... 325
*ժ. Գույքային պատիժներ զանցանքների համար* ..... 326
*ի. Վարույթից հեռացվելը* ..... 326

**7. Ապացույցի թույլատրելիությունը** ..... 328

**8. Մեղադրյալի՝ լսված լինելու և ապացույցներ ներկայացնելու հնարավորությունը** ..... 329

*ա. Ներկայություն* ..... 329
*բ. Լսված լինելու անհրաժեշտությունը* ..... 330
*գ. Ապացույցներ ներկայացնելու հնարավորությունը* ..... 331

**9. Վարույթի նշանակման անհրաժեշտությունը** ..... 332

**10. Հարկադրանքի միջոցների կիրառումը** ..... 335

**IX. ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ** ..... 336

**1. Որևէ մեկի մեղադրելու իրավունքի բացակայությունը** ..... 336

**2. Որպես քաղաքացական կողմ մեղադրանքին միանալու իրավունքի բացակայությունը** ..... 339

**3. Գործի նախնական քննությանը մասնակցելու հնարավորությունը** ..... 340

**4. Վարույթի դադարեցումը և արդարացումը՝ որպես քաղաքացիական իրավունքի դադարեցման հիմք** ..... 342

**5. Վարույթներին մասնակցելու սահմանափակումը** ..... 344

**6. Դիմումները չբացահայտելը** ..... 345

**7. Սահմանազանցող հետաձգում** ..... 345

**X. ՎԱՐՈՒՅԹԸ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ** ..... 346

**1. Մասնակցությունից հրաժարվելը** ..... 346

**2. Իրավական ներակայացուցչություն** ..... 349

**3. Վերանայման անհրաժեշտություն** ..... 350

**4. Բացակայությունը պատիժ նշանակելիս** ..... 353

**XI. ԴԱՏԱՎՃԻՌ** ..... 354

**1. Մեղավոր ճանաչելը** ..... 354

*ա. Պատճառաբանման անհրաժեշտությունը* ..... 354
*բ. Նույն փաստերով հետագա վարույթը* ..... 357

**2. Վարույթի դադարեցումը** ..... 361

**3. Դատապարտում** ..... 363

**4. Արդարացում** ..... 366

*ա. Արդյունքը* ..... 366
*բ. Պահպանման պարտականությունը* ..... 368
*գ. Հետագա քաղաքացիական վարույթները* ..... 368
*դ. Պատշաճ արձանագրություն* ..... 370

**5. Դատական նիստի արձանագրության մատչելիությունը** ..... 371

**Դ. ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ** ..... 372

**I. ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ** ..... 372

**1. Իրավունքը** ..... 372

**2. Հրաժարումը** ..... 381

**3. Մարմինը** ..... 385

**4. Անկողմնակալությունը** ..... 385

**5. Նիստի մասին ծանուցումը** ..... 388

**6. Մեղադրանքի վերաորակումը** ..... 391

**7. Դիմումների մասին չտեղեկացնելը** ..... 396

8. Բավարար ժամանակ և հնարավորություններ ..... 399

9. Նոր ապացույցների թույլատրելիությունը ..... 402

10. Վկաների հարցաքննությունը ..... 404

11. Հնարավորությունների հավասարությունը ..... 406

12. Իրավական ներկայացուցչությունը ..... 410

13. Մեղադրյալի ներկայությունը ..... 414

14. Հասարակական լսումներ ..... 418

15. Դատավճռի վերաբերյալ տեղեկացումը ..... 424

16. Անարդարություն ..... 425

17. Պատճառաբանված դատավճռի անհրաժեշտությունը ..... 427

18. Որոշման սահմանները ..... . 428

II. ՎԱՐՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ ..... 429

1. Մեղադրանքի կողմի պահանջը ..... 429

2. Բավարարման առավել ընդունելի ձևը ..... 431

Ե. ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ ..... 432

ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ ..... 432

1. Նշանակված ժամանակահատվածը ..... 432

2. Խախտումների հայտնաբերման հետ կապված քննություն ..... 433

3. Արդյունավետ ընթացակարգի ապահովում ..... 438

Զ. ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄ ԵՎ ՇԱԽՍԵՐ ..... 441

**I. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ** ..... 441

**1. Ձերբակալում և կալանք** ..... 441

*ա. ՄԻԵԴ-ի պահանջների խախտում* ..... 441
*բ. Դրույթների բացակայություն* ..... 441
*գ. Կասկածի վրա հիմնված մերժում* ..... 443
*դ. Առանց լսումների և պատճառների մերժումը* ..... 445
*ե. Գնահատում* ..... 447

**2. Արդարացում/կարճում** ..... 447

*ա. Մեղքի ընդունման վրա հիմնված մերժում* ..... 447
*բ. Կասկածի վրա հիմնված մերժում* ..... 448

**3. Ապօրինի դատապարտում** ..... 451

**II. ՁԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ** ..... 454

**1. Ոչ ընդհանուր իրավունք** ..... 454

**2. Մերժում և անմեղության կանխավարկած** ..... 454

**3. Մերժում այն դեպքերում, երբ հանցագործությունները հակասում են ՄԻԵԴ-ին** ..... 456

**Է. ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ** ..... 458

**1. Կալանքի տակ պահելը** ..... 458

**2. Հարցաքննություն** ..... 462

**3. Ապացույցների օգտագործումը** ..... 464

**4. Արդարացի դատաքննության ապահովում** ..... 464

**5. Դատավարության գործընթացի ընդհարում** ..... 467

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Սույն ձեռնարկը նպատակ է հետապնդում աջակցել դատավորներին, դատախազներին և փաստաբաններին Քրեական դատավարության օրենսգրքի և նմանատիպ կամ դրա հետ կիրառվող օրենսդրության մեկնաբանության և կիրառման ժամանակ պահպանելու Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) և հատկապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքում ամրագրված պահանջները: Նշված նպատակի իրականացման համար ձեռնարկում կան մեջբերումներ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ Եվրոպական հանձնաժողով)[1] առանցքային որոշումներից, որոնք կապված են Եվրոպական Կոնվենցիայի մեկից ավելի խախտումների հետ և կայացվել են նախնական քննության, մեղադրանքի առաջադրման և դատական քննության, ինչպես նաև վերաքննության և քրեադատավարական այլ ընթացակարգերի խախտումների կապակցությամբ դիմողների ներկայացրած գանգատների վերաբերյալ:

2. Եվրոպական կոնվենցիայի տարբեր պահանջների լուսաբանման համար վերոնշյալ որոշումներից մեջբերումներ են արվել ցույց տալու համար, որ միայն Կոնվենցիայի տեքստը բավարար չէ որոշելու այդ իրավական ակտի կիրառման հետևանքները, քանի որ դա առավելապես կախված է վերոնշյալ երկու մարմինների մեկնաբանություններից, բացի դրանից, ընտրված յուրաքանչյուր գործի հանգամանքները պատկերացում են տալիս այն մասին, թե ինչպես կիրառել այդ պահանջները կոնկրետ իրավիճակում:

3. Քրեական դատավարության օրենսգրքի և նմանատիպ կամ դրա հետ կիրառվող օրենսդրության մեկնաբանության և կիրառման հետ Եվրոպական կոնվենցիայի առնչությունը բխում է ինչպես վերջինի դրույթներից, որոնք ուղղակիորեն ամրագրում են պահանջներ՝ կապված քրեական արդարադատության համակարգի գործունեության հետ, այնպես էլ շատ այլ հանգամանքներից, որոնք նպաստում են մի շարք ենթադրյալ պահանջների վերհանմանը, որոնք ևս պետք է հաշվի առնվեն:

[1] Այս մարմինն իր դերակատարությունն ունեցել է Եվրոպական կոնվենցիայի փոխատեղման (իմպլեմենտացիայի) գործում մինչև N 11 արձանագրության ուժի մեջ մտնելը, սակայն նրա որոշումները շարունակում են կարևորվել քրեական դատավարությանը վերաբերող դրույթները կիրառելիս: Սույն ձեռնարկում փորձ է արվել հիմնականում ծանոթացնել Եվրոպական կոնվենցիայի համակարգին:

4. Հստակ արտահայտված պահանջներն առաջին հերթին բխում են 5-րդ հոդվածով նախատեսված ազատության և անձեռնմխելիության և 6-րդ հոդվածով նախատեսված՝ ներկայացված քրեական մեղադրանքի առնչությամբ արդար դատական քննության իրավունքներից, ինչպես նաև քրեական գործերով բողոք ներկայացնելու, սխալ դատապարտման համար փոխհատուցում ստանալու իրավունքներից և կրկնակի դատապարտման անթույլատրելիությունից՝ նախատեսված համապատասխանաբար 2, 3, և 4-րդ հոդվածներով, ինչպես նաև N7 արձանագրությամբ:

5. Եվրոպական կոնվենցիայի ենթադրյալ պահանջները մասամբ բխում են 2-րդ հոդվածով նախատեսված կյանքի իրավունքից և խոշտանգումները և անմարդկային վերաբերմունքն ու պատիժն արգելող 3-րդ հոդվածից (որոնք կարևորվում են այնպիսի դեպքերում, ինչպիսիք են՝ ուժի կիրառումն օրենքով նախատեսված գործողությունների կատարման, հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների ստուգման և հարցաքննությունների ժամանակ), անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության անձեռնմխելիության իրավունքներից, որոնք նախատեսված են 8-րդ հոդվածով (վերջինս նախատեսում է լուրջ սահմանափակումներ՝ կապված ոչ միայն հանցագործությունների քննության և ապացույցների հավաքման, այլ նաև անձին ձերբակալելու և կալանքի տակ պահելու, ինչպես նաև քրեական դատավարության այն կողմերի հետ, որոնք կարող են լուսաբանվել), 10-րդ հոդվածով նախատեսված խոսքի ազատության իրավունքից (որը կապված է ոչ միայն քրեական դատավարության վերաբերյալ տեղեկությունների հրապարակման հետ, այլ նաև այն սահմանափակումների հետ, որոնք կարող են վերաբերել քրեական արդարադատության համակարգի քննադատությանը և հատկապես կոնկրետ գործով դրա հետևանքներին), N 1 արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված սեփականության տիրապետման իրավունքից օգտվելուց (որը պետք է պահպանվի օրենքով նախատեսված գործողությունների կատարման ժամանակ և կարող է նաև կապված լինել գործով ձեռք բերված ապացույցների պահպանության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման գործընթացի հետ), N4 արձանագրության 2-րդ հոդվածով նախատեսված տեղաշարժման ազատությունից (որը կարող է գործի նախնական կամ դատական քննության ընթացքում կասկածյալի կամ մեղադրյալի համար նախատեսել սահմանափակումներ):

6. Կարող է այնպես ստացվել, որ Քրեական դատավարության օրենսգրքով և նմանատիպ կամ դրա հետ կիրառվող օրենսդրությամբ նախատեսված եզրույթները կապված լինեն Եվրոպական կոնվենցիայի՝ քրեական դատավարությանը վերաբերող եթե ոչ բոլոր, ապա շատ պահանջների հետ: Ինչևէ, սա այն ձևն է, որով դրանք արտա-

հայտվում են պրակտիկայում, և որը որոշում է, թե Եվրոպական կոնվենցիայի պահանջներն իրականում պահպանվում են, թե՝ ոչ: Այն ձևի պահպանումը, որով Եվրոպական դատարանը և նախկին Եվրոպական հանձնաժողովը որոշակի հանգամանքների առկայության դեպքում մեկնաբանել և կիրառել են Եվրոպական կոնվենցիայի դրույթները, կարող է ծառայել որպես ուղեցույց Քրեական դատավարության օրենսգրքի և նմանատիպ կամ դրա հետ կիրառվող օրենսդրության մեկնաբանության և կիրառման ժամանակ՝ դրանով իսկ հավաստելով, որ Եվրոպական կոնվենցիայի 1-ին հոդվածով նախատեսված իրավունքները և ազատությունները պահպանելու պարտականությունը պատշաճորեն կատարվել է:

7. Քրեական արդարադատության և Եվրոպական կոնվենցիայի ընդհանրությունները քննարկելիս պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքներն ու ազատությունները, հատկապես նրանք, որոնք կապված են 8–11-րդ հոդվածներով նախատեսված՝ միավորումների, կազմավորումների, խոսքի, անձնական կյանքի և դավանանքի, ինչպես նաև 7-րդ հոդվածով նախատեսված՝ ռետրոսպեկտիվ պատիժների արգելքի հետ, պարունակում են նյութաիրավական արգելքներ՝ կապված քրեական իրավունքի սահմանների հետ: Նշած արգելքները ներառված չեն սույն ձեռնարկում, քանի որ այն սևեռվում է միայն քրեական դատավարության վրա, որտեղ չկան հարցադրումներ քրեական պատասխանատվության ենթարկելու թույլատրելիության վերաբերյալ:

8. Ի լրումն դրա, անհրաժեշտ է նշել, որ Եվրոպական կոնվենցիայի իմաստով՝ «քրեական» հասկացությունը չի սահմանափակվում յուրաքանչյուր պետության իրավական ներհամակարգում առկա տեսությամբ: Եվրոպական կոնվենցիայի բազմաթիվ այլ պահանջների նման, Եվրոպական դատարանի և նախկին Եվրոպական հանձնաժողովի կողմից «հանցագործությանը» տրվել է ինքնուրույն իմաստ: Հետևաբար, թեև ազգային իրավունքում որպես «քրեական» սահմանվող հասկացությունը կարող է որոշիչ լինել քրեական վարույթին վերաբերող՝ Եվրոպական կոնվենցիայի տարբեր պահանջներ պարունակող դիմումներ ընդունելիս, սակայն այն փաստը, որ կոնկրետ վարույթները նույն կերպ դասակարգված չեն ազգային իրավունքում, չի կարող բացառել համապատասխան պահանջների քննարկումը:

9. Ինչպես վկայում են գրքի առաջին մասում ներկայացված մեջբերումները, անկախ այն բանից, թե այդ ենթատեքստում հատկապես կարևորվող հանգամանքներն առկա կլինեն, թե՝ ոչ, քննարկվող նորմը, որպես, կանոն կիրառելի է, եթե նշանակված պատժի նպատակը փոխհատուցումն է կամ պատժելը՝ անկախ այն բանից, թե պատիժը ենթադրում է ազատազրկում, թե՝ որոշակի այլ պահանջների կատա-

րում (օրինակ՝ որոշակի էական գումարի վճարում): Այս չափանիշների կիրառումն ի վերջո հանգեցրել է ուղղիչ հիմնարկներում կատարվող կարգապահական խախտումների, ճանապարհային երթևեկության կանոնների, ինչպես նաև հարկային օրենսդրության խախտումների՝ Եվրոպական կոնվենցիայի իմաստով՝ որպես «հանցագործություն» մեկնաբանմանը: Նշված մոտեցումը բնավ չի նշանակում, որ վերոնշյալ դեպքերն ազգային իրավական համակարգում պետք է մեկնաբանվեն որպես «հանցագործություն», սակայն դրանց քննության առանձնահատկությունները պետք է հավաստեն, որ այդ վարույթներով ապահովված են պաշտպանության համանման միջոցներ: Հետևաբար, Քրեական դատավարության օրենսգիրքը և նմանատիպ կամ դրա հետ կիրառվող օրենսդրությունը չի կարող որպես «քրեական» որակվող արարքների քննության ժամանակ լինել Եվրոպական կոնվենցիայի պահանջների կատարումն ապահովող միակ ազգային դատավարական չափորոշիչը:

10. Ինչ խոսք, կարևոր է հիշել, որ մեջբերումներում առկա չեն Եվրոպական կոնվենցիայի պահանջների բոլոր մանրամասները: Դա անհնարին է ոչ միայն ձեռնարկի սահմանափակ ծավալի պատճառով, այլ նաև այն պատճառով, որ Եվրոպական դատարանի և նախկին Եվրոպական հանձնաժողովի նախադեպային իրավունքը չի առնչվում յուրաքանչյուր հնարավոր հիմնախնդրի, որ կարող է առաջանալ Եվրոպական կոնվենցիայի՝ քրեական դատավարության ենթատեքստում մեկնաբանության և կիրառման ընթացքում: Նոր հարցադրումներ, անկասկած, առաջանալու են, քանի որ քրեական արդարադատության համակարգը կապված է քրեական վարքագծի փոփոխվող բնույթի հետ: Ավելին, Եվրոպական կոնվենցիան ինքնին կենսունակ իրավական ակտ է և կարող է արդյունավետ լինել, եթե դրա պահանջների մեկնաբանումը և կատարումը, առանց բացառության, հստակ վերաանայվեն, ինչպես Եվրոպական համաձայնության, այնպես էլ պահանջվող զարգացումների լույսի ներքո[2]: Այս որակումների առարկա հանդիսացող մեջբերումներն ընտրվել են Եվրոպական կոնվենցիայի ներկայիս պահանջների սահմանների ճիշտ ուրվագծման հեռանկարով:

11. Ձեռնարկը կառուցված չէ Եվրոպական կոնվենցիայի պահանջների կարգով: Այն կառուցված է քրեական դատավարության տարբեր փուլերի հերթականությամբ՝ սկսած նախնական քննության փուլից՝ ներառելով այդ փուլում վարույթն իրականացնող մարմնի տարբեր պարտականությունները՝ ձերբակալումը, նախնական կա-

[2] Տե՛ս նաև Բորգերսն ընդդեմ Բելգիայի, 12005/86, 30.10.1991, 6-րդ հոդվածում նախատեսված անկողմնակալության պահանջի մասին, և Սելմոնին ընդդեմ Ֆրանսիայի [GC], 25803/94, 28. 10. 1999, այն մասին, թե ինչ է ներառում «խոշտանգում» հասկացությունը:

լանքը և կալանքի տակ պահելը, ապացույցներ հավաքելը և հարցաքննությունը, ինչպես նաև մինչև դատարան ուղարկելը գործով վարույթի դադարեցումը: Այնուհետև՝ դատական քննության փուլը՝ դատարանին ներկայացվող պահանջները, հասարակական լսումների անհրաժեշտությունը, ապացուցման ծանրությանն առնչվող մոտեցումները, վկաների հետ կապված պարտականությունները, ապացույցների թույլատրելիությանը վերաբերող պահանջները, մեկնաբանության իրավունքը, հատկապես կարևորվող՝ պաշտպանության իրավունքը, հանցագործության մասին հայտարարություն տալու տուժողի իրավունքը, գործի քննությունը բացակայության պայմաններում, դատավճռին և դրա հետևանքներին վերաբերող չափորոշիչները: Բացի դրանից, այն առնչվում է վերաքննությանը և վարույթի վերսկսմանը, գործի քննության ողջամիտ ժամկետներին և փոխհատուցումների և ծախսերի հետ կապված տարբեր պարտականություններին: Այն եզրափակվում է անչափահասների վերաբերյալ գործերի առանձնահատկությունների քննարկմամբ, որոնք բխում են Եվրոպական կոնվենցիայի պահանջներից:

12. Եվրոպական կոնվենցիայի՝ քրեական դատավարությանը վերաբերող հիմնական տարրերն ընդգծված են ներկայացված պարագրաֆներում՝ ցույց տալու համար դրանց կիրառման հետևանքները: Կարևոր է նշել՝ քանի որ քրեական դատավարությունը ներառում է փուլերի որոշակի հաջորդականություն, ապա հնարավոր է, որ Եվրոպական կոնվենցիայով նախատեսված շատ իրավունքների և ազատությունների ապահովման հարցը բարձրանա ոչ թե մեկ, այլ մի քանի փուլերում, և անհնարին է խստորեն տարանջատել այն պահանջների կատարումը, որոնցից դրանք սկիզբ են առել:

13. Քրեական գործի նախնական քննությանը ներկայացվող պահանջները և, մասնավորապես, նրանք, որոնք վերաբերում են գործի նախնական քննության բազմակողմանիությանը, արդյունավետությանը և անկախությանը, բխում են 3-րդ հոդվածի խախտմամբ կատարվող անօրինական սպանությունների և վատ վերաբերմունքի վերաբերյալ պնդումների ենթատեքստից, սակայն ձևավորված չափորոշիչները, որպես կանոն, պետք է կիրառվեն հանցագործությունների վերաբերյալ բոլոր հաղորդումներն ստուգելիս և ոչ թե միայն այն պատճառով, որ ներկայացված հաղորդումները վերաբերում են Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված մի շարք նյութական իրավունքների կիրառման հետ կապված սխալների, որոնք կարող են հանգեցնել նաև 13-րդ հոդվածով նախատեսված՝ արդյունավետ քննության իրավունքի խախտման:

14. 5-րդ հոդվածով նախատեսված ազատության և անձեռնմխելիության իրավունքը ենթադրում է կասկածյալի ազատության կայուն

կանխավարկած: Այն սահմանում է կարևոր պարտականություն, որը վերաբերում է անձի ձերբակալմանը, կալանավորմանը և կալանքի տակ պահելու ժամկետին: Հիմնավոր կասկածի անհրաժեշտությունը շարունակական պահանջ է, սակայն ինքնին բավարար չէ, քանի որ Եվրոպական դատարանի ուշադրության կենտրոնում են հատկապես անթույլատրելի միջոցների կիրառման դեպքերը և կալանքի տակ պահելու ժամկետի երկարացումը՝ բավարար պատճառաբանության և օբյեկտիվ հիմնավորումների մասով: Բացի դրանից, դեռևս չավարտված դատական քննության փուլում կալանավորման տևողությունը պետք է մանրամասն քննարկվի՝ հաշվի առնելով գործով վարույթի մասնավոր հանգամանքները:

15. Եթե անձը կալանավորված է, ապա արդյունավետ դատական վերահսկողության պահանջի իրականացումը Եվրոպական կոնվենցիայի ներքո հանդես է գալիս ոչ միայն որպես ազատության և անձեռնմխելիության իրավունքի կենսունակ ապահովում, այլ նաև որպես ոչ պատշաճ վերաբերմունքի խոչընդոտ այնպիսի իրավիճակում, երբ անձը հատկապես խոցելի է: Հետևաբար, 5(3)-րդ հոդվածը պարունակում է ազատության սահմանափակման իրավաչափության նկատմամբ մեքենայորեն (ավտոմատ) և անհապաղ դատական վերահսկողության պահանջ, որին կարող է հետևել կասկածյալի կամ մեղադրյալի ձերբակալումը կամ կալանավորումը: Ապա 5(4)-րդ հոդվածը պահանջում է, որ կալանավորված անձի համար ստեղծվի իրական հնարավորություն քրեական դատավարության ընթացքում կամ դրանից հետո բողոքարկելու կալանավորման օրինականությունը՝ ներառյալ բազմաթիվ հատուկ պայմանները, որոնք կհաստատեն դրա արդյունավետությունը:

16. Քանի որ պաշտպան ունենալու իրավունքը քրեական դատավարությունում անձի պաշտպանության իրավունքի առաջնային տարրերից է, և քանի որ պաշտպանության կողմի շահերը կարող են խախտվել դատավարության առավել վաղ փուլերում, Եվրոպական դատարանն հանգել է այն եզրակացությանը, որ պաշտպան ունենալու իրավունքը պետք է առկա լինի գործի նախնական քննության փուլում: Երբ պաշտպան ունենալու իրավունքը ծագում է, կարիք է առաջանում հավաստել, որ պաշտպան ընտրելու՝ անձի հնարավորությունը չի խոչընդոտվում և կարող է իրականացվել առանձին տեսակցության ժամանակ խորհրդակցելու ձևով: Բացի դրանից, պաշտպան ունենալու իրավունքը կարող է ներառել պետության կողմից պաշտպանի նշանակումը և նրա ծառայությունների համար վճարելը, եթե վարույթին ներգրավված անձն ի վիճակի չէ դա անել: Նման իրավիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ մեղադրյալի լիիրավությունը (կոմպետենցիան) և/կամ մեղադրանքի բնույթն այնպիսին են, որ պաշտպան ունենալու իրավունքի ապահովումը բխում է արդարադա-

տության շահերից: Ինչևէ, պաշտպան ունենալու իրավունքը, անկախ այն բանից, թե պաշտպանը տրամադրվում է պետության կողմից, թե՝ ոչ, պետք է ապահովվի, և հատկապես այն դեպքերում, երբ կարող են առաջանալ դատավարական խախտումներ:

17. Մեղադրական ապացույցներ հավաքելը կարող է ազդել Եվրոպական կոնվենցիայով երաշխավորվող շատ իրավունքների վրա: Որպես կանոն, խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի արգելքը բացառում է հարցաքննության որոշակի ձևերի կիրառությունը, իսկ կամավորության վերաբերյալ պահանջը բացառում են քրեական սանկցիաների կիրառումը, որոնք կարող են հանգեցնել ինչպես անձի կողմից ինքնախոստովանական ցուցմունքներ տալուն, այնպես էլ որոշակի հանգամանքներում սադրանքի և դրդչության միջոցների կիրառմանը: Ինչևէ, կարող են լինել իրավիճակներ, որոնցում ապացույցը կարող է ձեռք բերվել անձի կամքին հակառակ կատարվող անձնական խուզարկությունների, բժշկական զննումների արդյունքում: Սակայն, եթե անգամ ապացույցը ձեռք է բերվել անձի անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտմամբ, դրա թույլատրելիության վերաբերյալ պահանջներն իրենց ազդեցությունն են ունենալու ամբողջ դատավարության վրա:

18. Վերջին քննարկման առարկան՝ արդարությունը, նպատակ է հետապնդում վերհանել դատավարության (եթե այն առկա է եղել) և դրա բողոքարկման տարբեր կողմերի զարգացումները: Պաշտպանությունը նախապատրաստելու բավարար ժամանակի, դատարան կանչելու և վկաների խաչաձև հարցաքննության վերաբերյալ մասնավոր չափորոշիչների առկայության պարագայում նախադեպային իրավունքը փաստում է, որ որոշակի ատյանում այդ չափորոշիչների իրական ազդեցությանն ուշադրություն չդարձնելու հարցն սկզբունքորեն առնչվում է Եվրոպական դատարանին: Թեև Դատարանը շահագրգիռ է հետադարձ գնահատական տալու այս պահանջին այն դեպքում, երբ կոնկրետ որոշումը նախադատելի չի լինելու, սակայն այն չի կարող լայնորեն կիրառվել այն դեպքում, երբ դատավարությունը դեռ ընթացքի մեջ է:

19. Քրեական դատավարությունն արդար լինել չի կարող, եթե չկա զենքերի հավասարություն մեղադրանքի և պաշտպանության միջև: Նման անհավասարություն առկա է այնտեղ, որտեղ, օրինակ, փորձագետ վկաները անկողմնակալ չեն և հակված են մեղադրանքի կողմը, պաշտպանության կողմի համար մատչելի չեն գործերի նյութերը, մեղադրանքի կողմը կարող է դիմում ներկայացնել առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարան, որին պաշտպանության կողմը պատասխանել չի կարող:

20. Անմեղության կանխավարկածի իմաստով՝ առաջադրված յուրաքանչյուր մեղադրանքի ապացուցման ծանրությունը դրվում է դատախազի վրա, և սա նշանակում է, որ մեղադրյալին չի կարելի պարտադրել ինքնախոստովանական ցուցմունք տալ, ինչպես նաև այն, որ անձի դատապարտումը պետք է հիմնավորվի ապացույցներով: Միաժամանակ, չի կարող մերժելի համարվել կանխավարկածների դուրսբերումը որոշակի հանգամանքներից, ինչպես նաև որոշակի հանգամանքների առնչությամբ բացատրություն տալու վերաբերյալ մեղադրյալին ներկայացվող պահանջը, եթե առկա են պաշտպանության համապատասխան միջոցներ: Ինչևէ, անմեղության կանխավարկածի առկայությունը պետք է ենթադրվի պաշտոնատար անձանց կողմից դատարանում արված հայտարարություններից, դատավորը պետք է գործի դրա ենթատեքստում, և անմեղության կանխավարկածը պետք է պահպանվի արդարացման կամ վարույթի դադարեցման ժամանակ:

21. Յուրաքանչյուր վարույթի հիմնաքարային տարրերն են դատարանի անկախությունը և անկողմնակալությունը: Դրանք ենթադրում են դատարանի պաշտպանությունը ոչ օրինական ազդեցություններից, քանի որ հանգամանքները կարող են նպաստել երկուստեք՝ իրական կամ հիմնավորված ենթադրությունների վրա հիմնված ճնշումների առկայության մասին, առավել հաճախ վերջինիս առկայության մասին կասկած է առաջացնում այն, որ դատավորները ներգրավված են լինում միհնչդատական վարույթին, շփումներ են ունենում մեղադրողի կամ տուժողի հետ, բացի դրանից, դատավորի վրա կարող են ազդել մամուլում տեղ գտած հրապարակումները:

22. Քրեական դատավարությունում արդարության ապահովմանն ուղղված ղեկավար տարբեր չափորոշիչների «գագաթին» գտնվում է Եվրոպական կոնվենցիայի առանցքային պահանջներից մեկը, այն է՝ անձը պետք է դատապարտվի ողջամիտ ժամկետում: Նշված պահանջը, որը մեծ մասամբ խախտվում է պրակտիկայում, վերաբերում է երկուստեք՝ ինչպես առաջին ատյանում, այնպես էլ վերաքննության տարբեր մակարդակներում իրականացվող վարույթներին: Չկա որոշակի ժամանակահատված, որը կարող է ներկայացվել որպես «ողջամիտ», քանի որ գործերի հանգամանքներն անխուսափելիորեն տարբերվում են: Ինչևէ, թեև համակարգային մոտեցումը կարող է բացատրել որոշ վարույթների երկարատև լինելը, սակայն դրանց ընթացքում ցուցաբերված պասիվությունը և դրանց հետածգումները՝ որպես ռեսուրսների ոչ համապատասխան օգտագործման արդյունք, ընդունելի պատճառաբանություններ չեն:

23. Նշված բոլոր դեպքերն առկա են Եվրոպական դատարանի վճիռներից և նախկին Եվրոպական հանձնաժողովի որոշումներից տարբեր մեջբերումներում: Մեջբերումներն ընտրվել են ներկայացնե-

լու համար Եվրոպական կոնվենցիայի պահանջների տարբեր կողմերը՝ կապված քրեական դատավարության ընթացքում առաջացող տարբեր դեպքերի հետ: Ջեռնարկի ծավալի պատճառով միայն սահմանափակ մեջբերումներ են կատարվել և դրա հետևանքով նախադեպային իրավունքին հղումները, նախադասությունների հատվածներ և նույնիսկ պարագրաֆներ կրճատվել են: Դա արվել է այնպես, որ իմաստավորվի պարզ պատճառաբանությունը և որոշման յուրահատուկ ենթատեքստը, սակայն միաժամանակ, ձգտել ենք սխալ չներկայացնել Եվրոպական դատարանի և նախկին Եվրոպական հանձնաժողովի դիրքորոշումները:

24. Մեջբերված բոլոր որոշումների ամբողջական տեքստերը կարող եք գտնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի HUDOC տվյալների բազայում (http://www.echr.coe.int/ECHR/EN/hudoc), որպես կանոն, երկու՝ անգլերեն և ֆրանսերեն, բայց երբեմն նշված լեզուներից միայն մեկով:

25. Մեջբերումներն արված են մինչև 2009թ. մարտի 31-ը կայացված վճիռներից և որոշումներից:

Ջերեմի Մաքբրայդ

## Ա. ՔՐԵԱԿԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔ

***Էզեհը և Քոննորսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Ezeh and Connors v. United Kingdom [GC]), 39665/98 և 40086/98, 09.10.2003թ.***

82. Դատարանը նշում է, որ անվիճելի է մնում այն, որ սույն դատավարության նկատմամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի քրեական հայեցակետի կիրառելիության հարցի որոշման ելակետը վերը վկայակոչված Էնգելը և այլոք (*Engel and Others*, էջ 34–35, կետեր 82–83) վճռում ընդգծված չափանիշը:

> «82. ...
>
> ... Նախ և առաջ անհրաժեշտ է պարզել, թե արդյոք պատասխանող պետության ներպետական իրավունքում համապատասխան հոդվածները պատկանում են քրեական, թե՝ վարչական իրավունքին, թե՝ երկուսին միաժամանակ: Սա, սակայն, ոչ ավելին, քան ելակետ է: Այդ կերպ ստացված տվյալներն ունեն միայն ձևական և հարաբերական արժեք և պետք է ուսումնասիրվեն տարբեր մասնակից պետությունների օրենսդրություններից բխող ընդհանուր հայտարարից ելնելով:
>
> Իրավական բնույթն ինքնին առավել կարևոր հանգամանք է…
>
> Սակայն Դատարանի վերահսկողությունը դրանով չի սահմանափակվում: Այն թվացյալ կլինի, եթե հաշվի չառնվի նաև պատժի խստության աստիճանը, որը կարող է նշանակվել մեղադրյալի նկատմամբ: Հասարակությունում, ուր գործում է իրավունքի գերակայության սկզբունքը, ազատազրկման ձևով պատիժները գտնվում են «քրեական ոլորտում», բացառությամբ այն պատիժների, որոնք իրենց բնույթով, տևողությամբ կամ իրականացման ձևով չեն կարող համարվել զգալի վնաս հասցնող պատիժներ…
>
> 83. Հենց այդ չափանիշների հիման վրա էլ Դատարանը պարզելու է՝ արդյոք բոլոր դիմողները, թե նրանցից միայն մի քանիսն են ենթակա եղել «քրեական մեղադրանքի»՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով»:

...

86. Ի լրումն դրա, Դատարանի կողմից ձևավորված պրակտիկայի համաձայն Էնգելի գործում առկա երկրորդ և երրորդ չափանիշները այլընտրանքային և ոչ պարտադիր համալիր բնույթ են կրում. որպեսզի 6-րդ հոդվածը կիրառելի լինի, բավական է, որ արարքն իր բնույթով լինի «քրեական»՝ Կոնվենցիայի իմաստով, կամ անձի կողմից կատարված արարքի համար պատասխանատվությունն իր բնույթով և խստության աստիճանով, որպես կանոն, պատկանի «քրեական» ոլորտին… Դա չի բացառում, որ համակարգված մոտեցում կարող է պահանջվել այն դեպքում, երբ յուրաքանչյուր չափանիշի առանձին վերլուծությունն անհնարին է դարձնում քրեական մեղադրանքի առկայության վերաբերյալ հստակ դատողություն անելը…

90. Հանցագործությունները, որոնց կատարման մեջ դիմողները մեղադրվել են, ներպետական օրենսդրությամբ որակվել են որպես կարգապահական, Բանտային կանոնների 47-րդ կանոնի (1)-ին և (17)-րդ կետերի համաձայն՝ դատապարտյալի կողմից կատարված ա-

րարքը հանդիսանում է «կարգապահության դեմ ուղղված ոտնձգություն»…

Այսպիսով… ներպետական օրենսդրության համաձայն նման արարքների քննությունը կատարվում է կարգապահական վարույթի ձևով, և այն ձևավորվել է բանտերում կարգուկանոն պահպանելու համար: Այն փաստը… որ պետի որոշումը չի դարձել դիմողի հանցավոր անցյալի մաս, պարզապես հանդիսանում է նրա արարքը որպես կարգապահական որակելու հետևանք:

91. Ինչևէ, ազգային օրենսդրության մեջ առկա չափանիշներն ունեն միայն ձևական և հարաբերական արժեք, «արարքի բնույթը հանդիսանում է կարևոր հանգամանք» (տե՛ս Էնգելը և այլոք…)…

100. Կոնվենցիայի 6-րդ հոդվածում առկա «քրեական» հասկացության ինքնուրույն բնույթը պարզաբանելիս Դատարանը շեշտադրել է այն, որ Մասնակից պետությունները չեն կարող իրենց հայեցողությամբ արարքը քրեականի փոխարեն որակել որպես կարգապահական կամ «խառը» արարք կատարած անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցել կարգապահական և ոչ թե քրեական վարույթի կարգով, քանի որ դա կհանգեցնի 6-րդ հոդվածի հիմնարար ձևակերպումներն իրենց մասնավոր կամքին ստորադասելուն: 6-րդ հոդվածի իմաստով՝ Դատարանի դերն է հաստատել այն, որ կարգապահականը չի կարող անհիմն ներխուժել քրեականի մեջ…

101. …բանտարկյալի կողմից կատարվող զանցանքները կարող են տարբեր դրսևորում ունենալ. եթե որոշակի արարքներ կարող են ոտնձգել ոչ ավելի, քան ներքին կարգապահության դեմ, ապա կան արարքներ, որոնք չեն կարող քննարկվել այդ լույսի ներքո: Վերաբերելի չափանիշներն այն են, որ «որոշ արարքներ կարող են լինել ավելի լուրջ, քան մյուսները», մինչդեռ հարակից ակտերի անօրինականությունը կարող է բարձրացնել այն հարցը, թե քանի որ արարքը կատարվել է բանտում և Կանոնների իմաստով հանցագործություն է համարվում, այն պետք է դասվի հանցագործությունների թվին նաև քրեական իրավունքի իմաստով, արդյունքում ստացվում է այնպես, որ տեսականորեն հնարավոր չէ կանխել նման դեպքերը միաժամանակ քրեական և կարգապահական վարույթի կարգով քննելը:

102. Ավելին, քրեական պատիժները սովորաբար դիտվում են որպես երկուստեք՝ պատժի և ազատազրկման տարրեր ներառող երևույթ…

103. … տվյալ հանցագործություններն ուղղված են եղել հատուկ, այն է՝ բանտարկյալի կարգավիճակ ունեցող խմբի դեմ, որոնք հակադրվել են այլ քաղաքացիների: Ինչևէ… այս փաստը վկայում է հանցագործության՝ առերևույթ կարգապահական բնույթի լինելու մասին: Սակայն դա հանցագործության բնույթի գնահատման «հարակից չափանիշներից» մեկն է…

104. Երկրորդ… առաջին դիմողին առաջադրված մեղադրանքը համապատասխանում է քրեական իրավունքով նախատեսված հան-

ցագործությանը… Պարզ է դառնում նաև, որ երկրորդ դիմողին առաջադրված ավազակային հարձակման մեղադրանքը հանդիսանում է մեղադրանք ինչպես քրեական իրավունքով, այնպես էլ Բանտային կանոններով նախատեսված հանցագործության համար…

105. Երրորդ, Կառավարությունը նշել է, որ կարգապահական կանոնները և սանկցիաները բանտերում սահմանվում են առավելապես ապահովելու համար պատժի կրումից վաղաժամկետ ազատելու գործընթացի բարեհաջող ընթացքը, հետևաբար, հանցագործության «պատժիչ» տարրը պետք է դառնա երկրորդական անկարգապահության «կանխարգելման» առաջնային նպատակի նկատմամբ: Դատարանը գտնում է, որ լրացուցիչ օրերի հավելումը, ցանկացած առումով, իրականացվում է մեղքը հայտնաբերելուց հետո… դիմողներին պատժելու համար այն հանցագործությունների համար, որոնք նրանք կատարել են, և կանխելու համար հետագայում նրանց և այլ բանտարկյալների կողմից հանցագործությունների կատարումը: Դատարանը համոզիչ չի գտնում Կառավարության փաստարկը՝ կապված տվյալ հանցագործությունների համար սահմանված պատժի և ազատազրկման նպատակների տարբերակման հետ, քանի որ դրանք միմյանց չեն բացառում… և հանդիսանում են քրեական պատիժների բնորոշ գծեր…

106. Այսպիսով, Դատարանը գտնում է, որ այս հանգամանքները, եթե նույնիսկ ինքնին բավարար չեն եզրահանգելու, որ դիմողներին առաջադրված մեղադրանքները պետք է Կոնվենցիայի իմաստով դիտվեն «քրեական», այնուամենայնիվ, նրանց պետք է տրվի որոշակի «երանգ», որն ամբողջությամբ չի համընկնում «զուտ» կարգապահական դեպքերի հետ:

107. Դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է անդրադառնալ երրորդ չափանիշին՝ դիմողի նկատմամբ կիրառման ենթակա հավանական պատժի բնույթին և խստության աստիճանին…

120. Պատժի բնույթը և խստության աստիճանը, որը «պետք է նշանակվի» դիմողի նկատմամբ… որոշվել է՝ հղում կատարելով օրենքով նախատեսված հնարավոր առավելագույն պատժին…

Փաստացի նշանակված պատիժը կապված է ազատազրկման հետ… սակայն այն չի կարող նվազեցնել այն, ինչն ի սկզբանե կարևորվել է…

124. Դատարանը գտնում է, որ մեղքի հայտնաբերումից հետո պետի կողմից լրացուցիչ օրերի հավելումը հանգեցրել է ազատության նոր սահմանափակումների, որոնք պատժիչ նպատակներ են հետապնդել…

125. Դա հետևանք է այն բանի... որ պետի որոշման կայացման ժամանակ դիմողները եղել են բանտարկյալներ, որոնք կրել են օրենքով սահմանված կարգով նշանակված ազատազրկումը, մինչդեռ Դատարանի կարծիքով դա հիմք չի հանդիսանում նրանց գործն ազատության մեջ գտնվող այլ քաղաքացիների կամ ոստիկանության աշ-

խատակիցների գործից անջատելու համար: Ավելին, այս պատճառով է, որ դատավարական երաշխիքները պետք է համաձայնեցվեն բանտերում գործի քննության ընթացակարգի հետ, և այն պետք է քննարկվի համապատասխանաբար Կոնվենցիայի 6-րդ հոդվածի և ոչ թե, ինչպես Կառավարությունն է նշում, 5-րդ հոդվածի պահանջների լույսի ներքո:

126. Դատարանը նշում է, որ Էնգելի և այլոց գործով... ասել է հետևյալը.

> «Այն հասարակությունում, որն ընդունում է օրենքի գերակայությունը, ազատությունից զրկելը վերաբերում է «քրեական» ոլորտին, և այն պետք է դիտվի որպես պատժի նշանակում՝ բացառությամբ այն դեպքերի, որոնք իրենց բնույթով, տևողությամբ կամ կատարման եղանակով չեն կարող լինել էական վնաս պատճառող: Քննարկվող հարցի լրջությունը, Պայմանավորվող պետության սովորութային իրավունքը և անձի ֆիզիկական ազատության կարևորությունը, որն ամրագրված է Կոնվենցիայով, պահանջում են, որ այդպես լինի»:

Համապատասխանաբար, դիմողների նկատմամբ պետք է նշանակվի, և նշանակվել է, ազատությունից զրկելու հետ կապված պատիժ, եթե կանխավարկած կա այն մասին, որ նրանց դեմ ներկայացված մեղադրանքները՝ 6-րդ հոդվածի իմաստով, եղել են «քրեական», այդ կանխավարկածն ամբողջությամբ կարող է հերքվել բացառապես այն դեպքում, երբ ազատության այդ սահմանափակումները, հաշվի առնելով դրանց բնույթը, տևողությունը կամ իրականացման եղանակները, չեն կարող դիտվել որպես «էականորեն վնաս պատճառող»…

128. Սույն գործով լրացուցիչ օրերի առավելագույն թիվը, որը կարող էր պետի կողմից նշանակվել յուրաքանչյուր դիմողի նկատմամբ, յուրաքանչյուր արարքի համար, եղել է 42-ը (Բանտային կանոնների 50-րդ կանոն): Առաջին դիմողի համար նշանակվել է 40 լրացուցիչ օր, և սա եղել է նրա քսաներկուերորդ կարգապահական խախտումը և նրա յոթերորդ հանցագործությունը՝ ներառյալ բռնության գործադրումները: Երկրորդ դիմողի համար նշանակվել է 7 լրացուցիչ ազատազրկման օր, և սա եղել է նրա երեսունյոթերորդ կարգապահական խախտումը: 40 և 7 լրացուցիչ օրերի նշանակումը մոտավորապես հավասար է եղել ներպետական դատարանի կողմից նշանակված 11 և 2-շաբաթյա ազատազրկման ժամկետին, որը նշանակվել է համապատասխանաբար 1991թ. օրենքի 33(1)-րդ բաժնի պահանջների պահպանմամբ...

Դատարանը նաև նշում է, որ... Մեծ պալատ չի ներկայացվել որևէ հիմնավորում այն մասին, որ նշանակված լրացուցիչ օրերը պետք է կրել բանտային պայմաններից տարբերվող պայմաններում և այն նույն բանտային ռեժիմով, որը պետք է կիրառվի մինչև 1991թ. օրենքի 33-րդ բաժնի հիման վրա նշանակված պատժի ժամկետի ավարտը:

129. Այս հանգամանքներում Դատարանը գտնում է, որ ազատությունից զրկելու հետ կապված պատիժները, որոնք պետք է նշանակվեին, և նշանակվել են դիմողների նկատմամբ, չեն կարող դիտվել

որպես ամբողջությամբ ոչ կարևոր կամ ոչ տեղին այն պատճառով, որ ժխտել են նրանց դեմ առաջադրված մեղադրանքների ենթադրյալ քրեական բնույթը:

Դատարանը նշում է, որ առավելագույն պատիժը, որը կարող էր նշանակվել պրն էնգելի նկատմամբ և նրա նկատմամբ իրականում նշանակված պատիժը՝ երկու օր ժամկետով խիստ կալանքը, քրեական ոլորտին վերաբերելու համար երկուստեք եղել է չափազանց կարճատև: Ինչևէ, Դատարանը գտնում է, որ սույն գործով նշանակված նույնիսկ նվազագույն պատժի չափն էականորեն ավելի մեծ է, քան պրն էնգելի գործով նշանակված պատժաչափը...

130. Նման պայմաններում Դատարանը համաձայն է Պալատի հետ, որ մեղադրանքների բնույթը, պատիժների բնույթը, ինչպես նաև վերջինիս խստությունը այնպիսին են եղել, որ դիմողներին ներկայացված մեղադրանքը հանդիսացել է քրեական մեղադրանք՝ Կոնվենցիայի 6-րդ, այսինքն՝ այն հոդվածի իմաստով, որը կիրառվել է նրանց գործի քննության ժամանակ:

***Մեյթիջեկն ընդդեմ Լեհաստանի (Matyjek v. Poland (dec.)), 38184/03, 30.05.2006թ.***

48. Ինչ վերաբերում է էնգելի վճռում ամրագրված առաջին չափանիշին, այն է՝ ներպետական իրավունքում դատավարությունների դասակարգմանը, ապա Դատարանը նշում է, որ դիմողի դեմ ներկայացված փաստարկները վերաբերում են այն բանին, որ նա ներկայացրել է ոչ ճիշտ լյուստրացիոն հայտարարագիր, որում նշել է, որ չի համագործակցել Պետության անվտանգության ծառայությունների հետ: Այս արարքը արգելված է ոչ թե Լեհաստանի քրեական իրավունքով, այլ Լյուստրացիոն ակտով: Պարզվում է, որ ո՛չ ներպետական իրավունքի, ո՛չ ձևավորված դատական մեկնաբանությունների համաձայն Լյուստրացիոն ակտը չի դիտվում որպես քրեական իրավունքի մաս, ինչևէ, Վարշավայի Վերաքննիչ դատարանը, հիմնվելով որոշակի հանգամանքների վրա, ենթադրություն է արել այն մասին, որ այն «ռեպրեսիայի հետ կապված դատավարություն է» և պետք է քննարկվի որպես «քրեական պատասխանատվություն նախատեսող այլ օրենք»...

49. Դատարանը գտնում է, որ առկա է սերտ կապ լյուստրացիոն վարույթի և քրեաիրավական ոլորտի միջև: Մասնավորապես, Լյուստրացիոն ակտը նախատեսում է, որ այն դեպքերը, որոնք վերջինով կարգավորված չեն, ենթակա են քննության Քրեական դատավարության օրենսգրքով: Հետևաբար, Հասարակական շահերի պաշտպանը, ով լիազորված է հարուցել լյուստրացիոն վարույթ, օժտված էր այնպիսի լիազորություններով, ինչպիսիք ունի հանրային մեղադրողը քրեական դատավարության ընթացքում... Նմանապես, լյուստրացիայի ենթակա անձի կարգավիճակը կապված է քրեական դատավարությունում մեղադրյալի կարգավիճակի հետ, քանի որ դատավարական

երաշխիքները, որոնցով նա օժտված է, առկա են անգամ այն դեպքում, եթե Լյուստրացիոն ակտի իմաստով անձը չի դիտվում «մեղադրյալ» և նրա նկատմամբ չի կիրառվում «մեղադրանք» եզրույթը...

50. Դատարանը նշում է նաև, որ Ակտի համաձայն՝ լյուստրացիայի վարույթի հարուցումը և ընթացքը հիմնված են Լեհաստանի քրեական դատավարության մոդելի վրա և Քրեական դատավարության օրենսգրքի կանոններն ուղղակիորեն կիրառելի են լյուստրացիոն վարույթի նկատմամբ: Լյուստրացիոն վարույթներն իրականացվում են լյուստրացիոն դատարանում, որը բաղկացած է վերաքննիչ և տարածաշրջանային դատարանների դատավորներից, ովքեր գործուղվել են նշված դատարանների Քրեական բաժինների կազմի դատավորներից: Ակտը նախատեսում է առաջին ատյանի դատարանի ակտի բողոքարկում վերաքննության կարգով, ինչպես նաև վերջինի վճռաբեկ բողոքարկում Վճռաբեկ դատարանի քրեական բաժին: Երկուստեք՝ վերաքննիչ ու վճռաբեկ փուլերի և վերսկսված վարույթների ընթացքը կարգավորվում է Քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթներով...

51. Վերջնական արդյունքում, թեև լյուստրացիոն վարույթները ներպետական իրավունքով չեն որակվում որպես «քրեական», Դատարանը գտնում է, որ դրանք օժտված են այնպիսի հատկանիշներով, որոնք ունեն խիստ քրեական բովանդակություն:

52. Դատարանը կրկնում է, որ վերը նշված երկրորդ չափանիշը, այն է՝ արարքի բնույթը, որը համապատասխանաբար վերաբերում է նաև պատժի բնույթին, իրենից ներկայացնում է ավելի ծանրակշիռ գնահատական: Այս կապակցությամբ Դատարանը գտնում է, որ դիմողի կատարած ոչ իրավաչափ արարքը կապված է օրենքով սահմանված կարգով ներկայացված հայտարարագրում կեղծ տեղեկություն նշելու հետ: Դատարանն առաջին հերթին նշում է, որ հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը բավականին տարածված երևույթ է, որը ներառում է, օրինակ, նյութական միջոցների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու՝ պառլամենտի անդամների և շատ այլ հասարակական գործիչների պարտականությունը, ինչպես նաև եկամուտների հայտարարագիր ներկայացնելու՝ բոլոր հարկատուների պարտականությունը: Երկրորդ, նման գործերով ճշմարիտ տեղեկություն ներկայացնելու պարտականության խախտումը ներպետական օրենսդրությամբ համարվում է հանցագործություն և, որպես կանոն, հանգեցնում է քրեական բնույթի սանկցիաների կիրառման: Դատարանը գտնում է, որ լյուստրացիոն հայտարարագրում ոչ ճիշտ նշում կատարելու հետ կապված արարքը շատ նման է վերոնշյալ արարքներին: Ավելին, այն նման է կեղծ ցուցմունք տալու հանցակազմին, որը, լյուստրացիայի ենթատեքստից դուրս, կարող է հանգեցնել քրեական իրավունքով նախատեսված պատասխանատվության:

53. Դատարանը նշում է նաև, որ դիմողի կողմից խախտված օրինական պահանջները ուղղված չեն հատուկ կարգավիճակ ունեցող անձանց փոքր խմբերի դեմ, ինչպես դա, օրինակ, կարգապահական իրավունքում է: Այն ուղղված է քաղաքացիների մեծ խմբի դեմ, ովքեր ծնվել են 1972թ. մայիսից առաջ և ոչ միայն իրականացնում են տարբեր հասարակական գործառույթներ, այլ նաև ցանկություն ունեն լինել փաստաբան, հանրային ծառայող, դատավոր և դատախազ, կամ նպատակ են հետապնդում մասնակցել նախագահական կամ պառլամենտական ընտրություններին: Այս ենթատեքստում Դատարանն անհրաժեշտ է համարում շեշտել, որ լյուստրացիոն դատարանում իրականացվող վարույթի առարկան լյուստրացիոն հայտարարագրի ճշմարտացիության ապացուցումն է: Հակառակ իր վերնագրին, բացահայտման վերաբերյալ օրենքը նպատակ է հետապնդում պարզել հասարակական գործառույթներ իրականացնող այն անձանց, ովքեր 1944-1990թթ. ընկած ժամանակահատվածում աշխատել կամ ծառայել են Պետության անվտանգության ծառայություններում կամ համագործակցել նրանց հետ, սակայն նշված օրենքով իրականացվող գործընթացից դուրս են մնում այդ անձանց անցյալը և նրանց պատմությունը՝ կապված կոմունիստական ժամանակաշրջանի անվտանգության ծառայությունների հետ ունեցած նախկին համագործակցությունների հետ: Լյուստրացիոն դատարանը որոշում է, թե լյուստրացիայի ենթակա անձը սխալ հայտարարագիր ներկայացնելով՝ խախտել է, արդյոք, օրենքը: Եթե պարզվի, որ այո, ապա վրա կհասնի օրենքով նախատեսված պատասխանատվությունը: Այսպիսով, լյուստրացիոն վարույթը Լեհաստանում նպատակ չի հետապնդում պատժել կոմունիստական վարչակարգի օրոք կատարած արարքների համար... Վերոգրյալի լույսի ներքո, Դատարանը գտնում է, որ քննարկվող արարքը զուրկ չէ «զուտ» քրեական բովանդակությունից:

54. Ինչ վերաբերում է պատժի բնույթին և խստության աստիճանին, որը դիմողը նշել է Ակտի դեմ ներկայացված գանգատում, ապա Դատարանն առաջին հերթին նշում է, որ Ակտը նախատեսում է միատեսակ պատժի նշանակում այն անձանց նկատմամբ, ովքեր ենթակա են լյուստրացիայի, և վերջնական դատավճռով ճանաչվել են որպես լյուստրացիոն հայտարարագրում կեղծ տվյալ նշած անձինք: Նման բնույթի վերջնական դատական ակտի կայացումից հետո լյուստրացիայի ենթակա անձը զրկվում է հասարակական գործառույթների իրականացման լիազորություններից և 10 տարի ժամկետով զրկվում է բազմաթիվ հանրային պաշտոններ զբաղեցնելու իրավունքից: Դատարանը գտնում է, որ այն անձը, ով կեղծ տվյալ է նշել լյուստրացիոն հայտարարագրում, ինքնաբերաբար զրկվում է այնպիսի բարոյական որակումներից, ինչպիսիք են՝ անբիծ բնութագիրը, չարատավորված, անբիծ և լավ քաղաքացու համբավը կամ հիմնարար արժեքները հարգելը: Նշված հատկանիշներն անհրաժեշտ են դատախազի, դատավորի կամ փաստաբանի պաշտոն զբաղեցնելու համար: Այս

ցանկն սպառիչ չէ, քանի որ Ակտը հղում է կատարում այլ ստատուտների, որոնք կարող են ամրագրել հասարակական գործառույթների իրականացման այլ նախապայմաններ, ներկայացնել պահանջներ՝ կապված վերոնշյալ բարոյական հատկանիշներից որևէ մեկի հետ:

55. Ճիշտ է, ո՛չ ազատազրկում, ո՛չ տուգանք չեն կարող նշանակվել այն անձի նկատմամբ, ով մեղավոր է ճանաչվել կեղծ հայտարարագիր ներկայացնելու մեջ: Այնուամենայնիվ, Դատարանը նշում է, որ երկար ժամանակաընթացքում կոնկրետ պաշտոններ (քաղաքական կամ իրավական) զբաղեցնելու արգելքը և մասնագիտական պարտականություններ կատարելուց զրկելը կարող են մեծ ազդեցություն ունենալ անձի վրա: Ասվածի մասին կարելի է ավելի լավ պատկերացում կազմել՝ քննարկելով այն Լեհաստանի պատմության ենթատեքստում, սակայն դա չի կարող փոխարինել նշանակվող պատժի խստության գնահատականին: Այս պատիժը, այդպիսով, պետք է դիտվի որպես մասամբ պատժիչ և կանխարգելիչ բնույթի:

56. Գործի քննության պահին դիմողը, ով եղել է քաղաքական գործիչ, վերջնական դատավճռով ճանաչվելով որպես «լյուստրացիոն կեղծարար», կորցրել է իր տեղը պառլամենտում և զրկվել 10 տարվա ընթացքում ընտրություններին իր թեկնածությունն առաջադրելու իրավունքից: Այս կապակցությամբ Դատարանը կրկնում է, որ լյուստրացիոն վարույթը նպատակ չի հետապնդում կանխել կոմունիստական ժամանակաշրջանի գաղտնի ծառայությունների աշխատակիցների կողմից հասարակական կառույցներում աշխատելը և Պետության անվտանգության համար կենսական նշանակություն ունեցող այլ ոլորտներում գործունեություն ծավալելը, և նման համագործակցությունը, այն է՝ այսպես կոչված, «հաստատական հայտարարագիր» ներկայացնելը չի հանգեցնում որևէ բացասական արդյունքի, այն նպատակ է հետապնդում պատժել այն անձանց, ովքեր չեն կատարել նման ծառայությունների հետ նախկին համագործակցության վերաբերյալ հասարակությանը տեղյակ պահելու իրենց պարտականությունը...

57. Դատարանը գտնում է, որ հաշվի առնելով Լյուստրացիոն ակտով նախատեսված սանկցիայի բնույթը և տևողությունը, այն պետք է դիտվի որպես վնաս պատճառող և դիմողի համար լուրջ հետևանքներ առաջացնող:

58. Հետազոտելով գործի տարբեր կողմերը՝ Դատարանը նշում է, որ գերակշռում են այն հանգամանքները, որոնք ունեն քրեական բնույթ: Նման պայմաններում Դատարանը եզրակացնում է, որ արարքի բնույթը, պատժի բնույթի և խստության հետ մեկտեղ, այնպիսին է եղել, որ դիմողին ներկայացված մեղադրանքը հանդիսացել է քրեական մեղադրանք՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով:

***Դոգմոխն ընդդեմ Գերմանիայի (Dogmoch v. Germany (dec.)), 26315/03, 08.09.2006թ.***

Անդրադառնալով սույն գործին՝ Դատարանը գտնում է, որ քրեական դատարանի կողմից Ս.-ի, Կ.-ի և նրանց երկու հանցակիցների գույքի վրա կալանք դրվել է քրեական գործի նախնական քննության ընթացքում: Ինչևէ, Շրջանային դատարանի 2000թ. մայիսի 8-ի և Շրջանային դատարանի 2000թ. հունիսի 16-ի որոշումներում դիմողն ուղղակիորեն անվանվել է անձ, որին քրեական մեղադրանք է առաջադրվել:

Անվիճելի է այն, որ վերոնշյալ որոշումներն առնչվել են ներկայացված մեղադրանքին: Այս կապակցությամբ Դատարանն արդեն նշել է, որ անհրաժեշտ է պարզել, թե արդյոք միջոցի ընտրության նպատակը եղել է դիմողի դատապարտումը կամ արդարացումը և արդյոք վիճարկվող միջոցի ընտրությունը ենթադրել է նրա մասնակցությունը հանցագործությանը… Դատարանի համար սրանք գործին վերաբերող հանգամանքներ են, որոնք պետք է հաշվի առնվեն սույն գործով:

Դատարանը նշում է, որ գույքի վրա կալանք դնելու որոշումը նպատակ է հետապնդել ապահովել տուժող կողմերի հայցերը, որոնք հետագայում կարող էին հարուցվել: Իսկ այդպիսիք չհարուցվելու դեպքում, այդ որոշումն ուղղված էր գույքի բռնագրավումների ապահովմանը: Այդ բռնագրավումները կարող էին իրականացվել անձի դատապարտումից հետո հարուցված և իրականացված տարբեր վարույթներով: Չկա որևէ նշում այն մասին, որ գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ որոշումը որևէ կերպ չի ենթադրել նրա մասնակցությունը հանցագործությանը: Նման հանգամանքներում Դատարանը գտնում է, որ վիճարկվող որոշումները՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի իմաստով չեն կարող դիտվել որպես դիմողին «քրեական մեղադրանք ներկայացնել»:

***Ջուսիլան ընդդեմ Ֆինլանդիայի (Jussila v. Finland [GC]), 73053/01, 23.11.2006թ.***

29. Այս գործով դիմողը, հիմք ընդունելով նրա եկամուտների հայտարարագրում առկա անճշտությունները, պարտավորեցվել է վճարել ԱԱՀ և հավելյալ տասը տոկոս տուգանք…

30.Դատարանի կողմից ձևավորված նախադեպի համաձայն՝ առկա է երեք չափանիշ, որոնք պետք է հաշվի առնվեն քրեական հայեցակետի կիրառելիության գնահատման ժամանակ: Այս չափանիշները, որոնք երբեմն վկայակոչվում են որպես «էնգելի չափանիշներ», վերջին ժամանակներս ամրագրվել են Մեծ պալատի՝ Էզեհը և Քոնորսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռում...

32. Դատարանը քննարկել է այն հարցը, որ ֆիսկալ և հարկային գործերով նախադեպային իրավունքն ամրագրում է տարբեր մոտեցումներ...

33. Ջանոսևիցն ընդդեմ Շվեդիայի (գանգատ թիվ 34619/97...) վճռով, Դատարանը... վարույթն իրականացրել է ուղղակիորեն հենվե-

լով վերը նշված՝ էնգելի չափանիշների վրա: Քանի որ վկայակոչումը կատարվել է առկա և հնարավոր պատժի խստության կապակցությամբ (սույն գործով նշանակվել է 161.261 շվեդական կրոնի չափով (SEK), որը համապատասխանում է 17.284 եվրոյի, տուգանք և բացակայել է տուգանքի առավելագույն չափի սահմանը), ապա սա հանդիսացել է առանձին և լրացուցիչ հիմք արարքը որպես քրեական հանցագործություն որակելու համար, որն այդպիսին էր դիտվել հանցագործության բնույթի հետազոտության ժամանակ...

35. Մեծ պալատը համաձայն է Ջանոսևիցի գործով արտահայտված մոտեցմանը, որի համաձայն՝ կողմերի փաստարկները լսելուց հետո դատավճռում պետք է մանրամասն վերլուծվեն գործի հանգամանքները… Որևէ ձևավորված կամ որոշիչ հիմք չկա նախադեպային իրավունքում, որը հարկային կամ այլ վարույթներով կարող է թույլ տալ 6-րդ հոդվածի շրջանակներից հանել քրեական բնույթ ունեցող արարքը:

36. Բացի դրանից, Դատարանը համոզված չէ, որ հարկային տուգանքների վճարման վարույթներն այնպիսին են, որ դրանք գտնվում են կամ պետք է գտնվեն 6-րդ հոդվածով պաշտպանվող հարաբերությունների շրջանակից դուրս: Ի պաշտպանություն հակառակ տեսակետի ներկայացվող փաստարկները վերաբերում են բանտային կարգապահության և նվազ վտանգավորություն ունեցող ճանապարհային երթևեկության կանոնների հետ կապված հանցագործություններին… Թեև կասկած չկա առ այն, որ հարկերը կարևոր դերակատարություն ունեն Պետության արդյունավետ գործունեության համար, սակայն Դատարանը համոզված չէ, որ պատժիչ նպատակ հետապնդող սանկցիաների նշանակման հետ կապված այդ ոլորտում դատավարական պաշտպանության միջոցների չկիրառումն անհրաժեշտ է պահպանելու համար հարկային համակարգի արդյունավետ գործունեությունը կամ հիրավի կարող է համահունչ լինել Կոնվենցիայի ոգուն և նպատակներին: Հետևաբար, սույն գործով Դատարանը կիրառելու է վերոնշյալ *էնգելի* չափանիշները.

37. Վերադառնալով առաջին չափանիշին՝ պարզ է դառնում, որ սույն գործով հարկային տուգանքները դիտվել են որպես ֆիսկալ և ոչ թե քրեական ռեժիմի մաս: Սա, սակայն, որոշիչ հանգամանք չէ:

38. Երկրորդ չափանիշը՝ արարքի բնույթը, ավելի կարևոր է: Դատարանը գտնում է, որ... կարելի է ասել, որ հարկային տուգանքները նշանակվել են՝ ելնելով հարկատուներին, որպես կանոն, ներկայացվող իրավական պահանջներից: Չի հիմնավորվում, որ... ԱԱՀ-ն վերաբերում է բացառապես հատուկ կարգավիճակ ունեցող անձանց սահմանափակ խմբի. ինչպես նշվել է նախորդ վկայակոչված վճիռներում, դիմողը պատասխանատվություն է կրել որպես հարկատու: Այն փաստը, որ նա գործարարական նպատակներից ելնելով ընտրել է ԱԱՀ գրանցումը, չի նվազեցնում այս դրույթի նշանակությունը: Հետագայում, ինչպես ընդունվել է Կառավարության կողմից, հարկային տու-

գանքները նպատակ չեն հետապնդել ապահովելու նյութական վնասի հատուցումը, այլ հանդիսացել են պատիժներ՝ ուղղված հանցանքների կանխմանը: Կարելի է եզրահանգել, որ տուգանքները նշանակվել են կանխարգելիչ և պատժիչ նպատակներով: Առանց ավելին ասելու՝ Դատարանը գտնում է, որ սա ձևավորում է հանցանքի քրեական բնույթը: Պատժի նվազ բնույթը ցույց է տալիս, որ այս գործը տարբերվում է Ջանոսևիչի գործից... *Էնգելի* երրորդ չափանիշի մասով, սակայն, չի հանում այն 6-րդ հոդվածով պաշտպանվող հասարակական հարաբերությունների շրջանակներից: Հետևաբար, 6-րդ հոդվածը կիրառելի է «քրեական» մասով՝ չնայած հարկային տուգանքի թույլ բնույթին:

***Սթորբրաթենն ընդդեմ Նորվեգիայի (Storbråten v. Norway (dec.)), 12277/04, 01.02.2007թ.***

...դիմողի նկատմամբ դատական քննության երկու առանձին և հաջորդական փուլերում կիրառվել է երկու միջոց:

Առաջին՝ Սնանկության մասին օրենքի 142(1)-րդ բաժնի, 1-ին և 2-րդ կետերի ուժով որոշակի իրավունքներից զրկում երկու տարի ժամկետով՝ հաշվի առնելով նրա սնանկության հետ կապված կոնկրետ հանգամանքները և մատնանշելով հատկապես Քրեական օրենսգրքի 286(2)-րդ և 288-րդ հոդվածներով արգելված հարկային և ԱԱՀ, ինչպես նաև հաշվապահական հանցագործությունները: Ապա նա մեղադրվել է երեք դրվագներով, որոնք բոլորն էլ կապված են սնանկության հետ, մասնավորապես՝ Քրեական օրենսգրքի 286-րդ - հոդվածի խախտման, ինչպես նաև գործին վերաբերող՝ Հաշվապահական հաշվառման 1977թ. օրենքի հաշվապահական պահանջների, Ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վերաբերյալ 1969թ. օրենքի 72(2)-րդ բաժնով նախատեսված գործարարական շրջանառության հայտարարագիր ներկայացնելու, ինչպես նաև Հարկահանության վերաբերյալ 1980թ. օրենքի 12-1(1)Դ բաժնով նախատեսված եկամուտների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու հետ կապված խախտումների համար:

Անվիճելի է այն, որ ի վերջո որոշ ակտերի հիման վրա անձը ոչ միայն զրկվել է որոշակի իրավունքներից, այլ նաև նրան քրեական մեղադրանք է առաջադրվել: Վերջում դիմողը մասամբ մեղադրվել է հաշվապահական հանցագործություններ կատարելու համար և դատապարտվել տասնհինգօրյա ազատազրկման: Հարցը վերաբերում է նրան, թե արդյոք վերջին վարույթներով դիմողը կարող է դիտվել «քրեական վարույթով կրկին դատարանի առաջ կանգնած և պատժված... այն արարքի համար, որի համար նա արդեն վերջնականապես... դատապարտված է եղել տվյալ Պետության օրենքի և պատժիչ վարույթի համաձայն»:

Ի սկզբանե Դատարանը փաստել է, որ որոշակի իրավունքներից զրկելը նշանակվել է Սնանկության մասին օրենքի հիման վրա իրա-

կանացված վարույթի վերջում, որն ունի առավելապես քաղաքացիաիրավական հատկանիշներ և որը չի դիտվել «պատժիչ վարույթ (պատասխանող) Պետությունում»...

...Ինչպես ցույց է տրվել դիմողի գործով դեպքերի հաջորդականությամբ, որոշակի իրավունքներից զրկելը վաղ փուլում կիրառելը, ի տարբերություն իրավունքներից զրկելու որոշման, կարող է լրացուցիչ դերակատարություն ունենալ ավելի ուշ փուլում քրեական մեղադրանք առաջադրելու և դատապարտելու ժամանակ, քանի որ պահպանում է մեղադրյալին Քրեական օրենսգրքի 29-րդ հոդվածով երաշխավորված նրա իրավունքները բացատրելու հնարավորությունը: Քանի որ որոշակի իրավունքներից զրկելու որոշումը քրեական դատավարությունում վերհանվելու է արդարացման կամ վարույթի կարճման կապակցությամբ, հետևաբար, նման վարույթի հարուցումը չի կարելի համարել իրավունքներից զրկելու ուղղակի և անխուսափելի հետևանք: Վերջինս չի կարող համարվել նորվեգական իրավունքով հանցագործության համար նախատեսված սանկցիայի մաս, որի հիման վրա դիմողին քրեական գործով մեղադրանք է առաջադրվել…

Ինչ վերաբերում է միջոցների բնույթին և խստության աստիճանին, ապա անհրաժեշտ է նշել, որ որոշակի իրավունքներից զրկելը վերաբերել է նոր սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հիմնադրելու և կառավարելու իրավունքից երկու տարի ժամկետով զրկելուն և ոչ թե ընդհանրապես գործարարական գործունեության մեջ ներգրավվելու արգելքին: Դատարանի կարծիքով, սանկցիայի բնույթն այնպիսին չէ, որ արարքը հնարավոր լինի ներառել «քրեական» ոլորտի մեջ: Թեև որոշակի իրավունքներից զրկելը, որը պետք է գրանցվի հատուկ հասարակական ռեգիստրում, կարող է էական ազդեցություն ունենալ անձի հեղինակության և նրա կողմից մասնագիտական գործունեության իրականացման հնարավորության վրա ..., Դատարանը չի գտնում, որ դիմողի համար կարևորվող հանգամանքն ամբողջությամբ բավարար է եղել արարքը «քրեական» որակելու համար: Սրան չի փոխարինում այն փաստը, որ 142(4)-րդ բաժնի ուժով կարող էին շատ ավելի խիստ միջոցներ նշանակվել, որոնք կտարածվեին նրա ունեցած դիրքի և այլ ընկերություններում նրա զբաղեցրած վարձատրվող պաշտոնների վրա:

Ի հակառակն վերոգրյալի, Դատարանը հանգում է նույն եզրակացությանը, ինչ Նորվեգիայի Գերագույն դատարանը, այն է՝ որոշակի իրավունքներից զրկելը՝ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի իմաստով չի հանգեցնում արարքը որպես «քրեական» որակելուն:

Ի լրումն, պետք է նշել, որ նշված երկու միջոցները ոչ միայն տարբեր նպատակներ են հետապնդում, այն է՝ կանխում և «սարսափեցում» առաջին վարույթով և փոխհատուցում՝ երկրորդ վարույթով, այլ նաև տարբերվում են իրենց բնույթով... Օրինակ՝ թեև սուբյեկտիվ մեղքը դատավարության առաջին փուլում չի հանդիսացել Սնանկութ-

յան մասին օրենքի 142(1)-րդ բաժնի 1-ին կետի դեմ բողոք ներկայացնելու նախապայման, սակայն դատավարության երկրորդ փուլում այն հանդիսացել է քրեական պատասխանատվության սահմանման հիմք, քանի որ պատժի արդարությունը որպես պայման կարևորվել է դատավարության առաջին և ոչ թե երկրորդ փուլի ենթատեքստում:

Վերոգրյալի լույսի ներքո, Դատարանը գտնում է, որ դիմողի նկատմամբ հարուցված քրեական վարույթը, որը հետագայում հանգեցրել է հաշվապահական հանցագործություններ կատարելու համար Գերագույն դատարանի կողմից 11.09.2002թ. նրան մեղավոր ճանաչելուն և դատապարտելուն, չի հանդիսացել 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, այն է՝ «կրկին դատապարտում և պատժում ... մի հանցագործության համար, որի համար նա արդեն վերջնականապես դատապարտված է եղել»:

Տե՛ս նաև ստորև՝ **B.VI.1**

## Բ. ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ

### Ի. ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ

#### 1. Բազմակողմանի և արդյունավետ քննություն կատարելու պարտականությունը

***Ղայան ընդդեմ Թուրքիայի (Kaya v. Turkey), 22729/93, 19.02.1998թ.***

89. …որևէ փորձաքննություն չի իրականացվել սպանվածի ձեռքերի կամ հագուստի վրա վառոդի հետքեր հայտնաբերելու նպատակով կամ քննություն չի կատարվել պարզելու համար, թե ինչու միջոցառումներ չեն իրականացվել զենքի վրա մատնահետքեր հայտնաբերելու համար… այս բացթողումները պետք է մանրամասն և լրջորեն քննարկվեն՝ ի նկատի ունենալով այն, որ դիակը հետագայում հանձնվել է գյուղացիներին, ուստի անհնարին է եղել որևէ այլ, ներառյալ մարմնում գտնված փամփուշտների հետազոտությունը: Հետազոտության նպատակով դեպքի վայրից վերցված իրեղեն ապացույցներ են հանդիսացել զենքը և զինամթերքը, որոնք իբրև օգտագործվել են սպանվածի կողմից: Ինչևէ, անկախ այն հանգամանքից, որ թեև այդ պահին դա կարևոր քննչական գործողություն էր, անհրաժեշտ է նշել, որ հանրային մեղադրողը որոշումը կայացրել է չստանալով դատահրաձգաբանական փորձաքննության արդյունքները…

Միայն դիահերձման արձանագրությունն է պարունակում նշում սպանվածի ստացած հրազենային վնասվածքների բնույթի, ծանրության աստիճանի և դիրքի վերաբերյալ: Դատարանը կիսում է Հանձնաժողովի տեսակետն առ այն, որ այս արձանագրությունն ամբողջական տեղեկություն չի պարունակում կոնկրետ առանցքային հարցերի կապակցությամբ, մասնավորապես, բացակայում են սպանվածի մարմնում գտնված փամփուշտների իրական թվի վերաբերյալ տեղեկությունը և որևէ գնահատական այդ փամփուշտների արձակման հեռավորության վերաբերյալ: Չի կարելի պնդել, որ մակերեսորեն կատարված դիահերձման և դրա արդյունքում հայտնաբերված երևույթների վերաբերյալ արձանագրությունում արված նշումները կարող են դրվել արդյունավետ շարունակական նախնական քննության հիմքում կամ բավարարել անհրաժեշտ պաշտպանության սահմաններում կատարված սպանության քննության նույնիսկ նվազագույն պահանջները, քանի որ բազմաթիվ կարևոր հարցեր մնացել են անպատասխան…

***Էրգին ընդդեմ Թուրքիայի (Ergi v. Turkey), 23818/94, 28.07.1998թ.***

82. …2-րդ հոդվածով նախատեսված կյանքի իրավունքի պաշտպանությունից… բխում է այն դրույթը, որ պետք է լինի արդյունավետ պաշտոնական նախնական քննության մի քանի ձև այն գործերով, համաձայն որոնց անձն սպանվել է ուժի գործադրման արդյունքում… այս պահանջը չի սահմանափակվում այն գործերով, որոնցով պարզվել է, որ սպանությունը կատարվել է Պետության ներկայացուցչի կողմից: Որոշիչ չէ այն, որ սպանվածի ընտանիքը կամ այլոք ձևական բողոք են ներկայացրել այն մասին, որ սպանությունը կատարվել է նախաքննական մարմնի կողմից: Քննարկվող գործով, սպանությունը պետության ներկայացուցիչների կողմից կատարված լինելու վերաբերյալ տեղեկությունը դե ֆակտո (*ipso facto*) հանգեցնում է սպանության հանգամանքների վերաբերյալ արդյունավետ նախնական քննություն կատարելու պարտականությանը, որը նախատեսված է Կոնվենցիայի 2-րդ հոդվածով…

***Մ.Ս.-ն ընդդեմ Բուլղարիայի (M. C. v. Bulgaria), 39272/98, 4.12.2003թ***.

181. Դատարանը ենթադրում է, քանզի պրակտիկայում երբեմն կարող է դժվար լինել ապացուցել համաձայնության բացակայությունը այն դեպքերում, երբ չկան բռնաբարության վերաբերյալ այնպիսի ուղղակի ապացույցներ, ինչպիսիք են բռնության հետքերը կամ «ուղղակի» ցուցմունքները, պաշտոնատար անձինք պարտավոր են հետազոտել գործի բոլոր փաստերը և որոշում կայացնել՝ հիմք ընդունելով հանցագործության կատարմանն ուղեկցող բոլոր հանգամանքները: Գործի նախնական քննությունը և այն իրականացնող մարմինների եզրակացությունները պետք է հիմնվեն համաձայնության բացակայության կանխավարկածի վրա:

182. Դիմողի գործով, սակայն, այդպես չի եղել: Դատարանը գտնում է, որ դիմողի գործով հանցագործության կատարմանն ուղեկցող բոլոր հանգամանքները պաշտոնատար անձանց կողմից չհետազոտելը հետևանք է բռնաբարության «ուղղակի» ապացույցների՝ նրանց կողմից ոչ իրավաչափ շեշտադրման: Կոնկրետ գործի նկատմամբ նրանց վերաբերմունքը եղել է սահմանափակ, և դրա արդյունքում մեծացել է «դիմադրությունը» հանցագործության կատարման որոշիչ տարրերի նշանակության նկատմամբ:

183. Պաշտոնատար անձինք կարող են նաև քննադատվել այն առումով, որ ուշադրություն չեն դարձրել անչափահասների՝ հատկապես խոցելի լինելու հանգամանքին և անչափահասների բռնաբարությանը վերաբերող գործերի քննության յուրահատուկ հոգեբանական առանձնահատկություններին…

184. Բացի դրանից, նրանք գործը քննել են էական ձգձգումներով…

***Ռամսահայը և այլոք ընդդեմ Նիդեռլանդների (Ramsahai and Others v. Netherlands [GC]), 53291/99, 15.05.2007թ.***

329. Ոստիկանների ձեռքերից կրակոցի մնացուկի նմուշներ չվերցնելու, ոստիկան Բրոնսի ծառայողական զենքը և զինամթերքը փորձաքննության չենթարկելու… դեպքի տեսարանը չվերականգնելու և Մորավիա Ռամսահային գնդակով պատճառված վերքի պատշաճ լուսանկարի բացակայության… փաստերին որևէ բացատրություն չի տրվել:

330. Ավելին, ոստիկաններ Բրոնսը և Բալստրան դեպքից հետո չեն պահվել իրարից մեկուսի ու չեն հարցաքննվել գրեթե երեք օր… Չնայած, ինչպես արդեն նշվել է, չկա որևէ ապացույց առ այն, որ նրանք գաղտնի համաձայնության են եկել միմյանց կամ Ամստերդամի/Ամստելլանդի ոստիկանական ուժերի իրենց գործընկերների հետ, այնուամենայնիվ, միայն այն փաստը, որ չեն ձեռնարկվել նման համաձայնության վտանգի նվազեցմանն ուղղված համապատասխան քայլեր, հանդիսանում է նախնական քննության պատշաճության ապահովման էական թերություն…

332. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում, ինչը դրսևորվել է նրանում, որ Մորավիա Ռամսահայի մահվան հանգամանքների քննությունը եղել է ոչ պատշաճ…

338. Չնայած ընդունելի է, որ մինչ անկախ քննիչների ժամանելը նախաքննությանը տեղական ոստիկանությանը չներգրավելը կարող էր հանգեցնել կարևոր ապացույցների կորստի կամ ոչնչացման, այնուամենայնիվ, Կառավարությունը չի մատնանշել որևէ կոնկրետ հանգամանք, որը սույն գործով հանգեցրել է տեղական ոստիկանական ուժերի անհապաղ գործելու անհրաժեշտության. բացառություն է հանդիսանում տեղանքի շրջափակումը…

339. …Ի լրումն դրա, ինչպես Արդարադատության նախարարը նշել է Պառլամենտին ուղղված իր գրության մեջ, Պետական քննչական գործակալությունը կարող է դեպքի վայրում հայտնվել ոչ ավելի, քան մեկուկես ժամվա ընթացքում: Այս լույսի ներքո, տասնհինգուկես ժամվա ուշացումն անընդունելի է:

340. Ինչ վերաբերում է Պետական քննչական գործակալության ներգրավումից հետո Ամստերդամի/Ամստելլանդի ոստիկանական ուժերի կողմից նախաքննության իրականացմանը, ապա Դատարանը գտնում է, որ հետագայում գործակալության ներգրավումը բավարար չէր անկախության պահանջի կատարումն ապահովված համարելու համար…

347. Ոստիկանական արձանագրությունների և քրեական գործի նյութերի բացահայտումը կամ հրապարակումը կարող էր կապված լինել նուրբ հարցերի հետ, և դրա հրապարակումը կարող էր նախադատելի դառնալ մասնավոր անձանց համար կամ այլ գործերով իրականացվող նախաքննություններով: Ուստի 2-րդ հոդվածի պարտադիր պահանջ չի կարող համարվել մերձավոր ազգականներին նախա-

քննության ընթացքին հետևել թույլատրելը, քանի դեռ այն չի ավարտվել: Հանրության և տուժողի հարազատների ներգրավումը կարող է ապահովվել վարույթի այլ փուլերում…

348. Դատարանը գտնում է, որ 2-րդ հոդվածը քննչական մարմիններին չի պարտավորեցնում նախաքննության ընթացքում բավարարել քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ տուժողի հարազատների ցանկացած պահանջը:

349. Պալատը գտել է, որ դիմողների համար նախաքննությամբ ձեռք բերված տեղեկությունների մատչելիությունն ապահովվել է այն չափով, որ դա բավարար է եղել ոստիկան Բրոնսի դեմ հետապնդում չհարուցելու մասին որոշումը վիճարկելու նպատակով հարուցված վարույթին նրանց արդյունավետ մասնակցությունն ապահովելու համար…

353. 2-րդ հոդվածի իմաստով չի պահանջվում, որ մահվան ելքով գործի քննության բոլոր փուլերը լինեն հրապարակային… անհրաժեշտ է հետազոտել այն հանգամանքը, թե նախնական քննության կամ դրա արդյունքների հաշվետվության նկատմամբ գործնականորեն և տեսականորեն առկա է արդյոք հանրության բավականաչափ հետաքրքրություն, ինչը հնարավորություն կտա պարզել իշխանությունների կողմից իրավունքի գերակայության պահպանման նկատմամբ հասարակության վստահության առկայությունը և կանխել անօրինական գործողությունների կապակցությամբ գաղտնի համաձայնության կամ հանդուրժողականության ցանկացած դրսևորում: Այս կապակցությամբ պետք է ընդունել, որ հասարակության հետաքրքրության աստիճանը կարող է տարբերվել ըստ գործերի:

## 2. Անկողմնակալ լինելու պարտականության բացակայությունը

***Դակտարաան ընդդեմ Լիտվայի (Daktaras v. Lithuania), 42095/98, 10.10.2000թ.***

44. …սույն գործով վիճարկվող հայտարարությունները դատախազի կողմից կատարվել են ոչ թե քրեական դատավարությունների ենթատեքստից դուրս՝ որպես մամլո ասուլիսի մաս, այլ այդ դատավարությունների նախնական քննության փուլում գործի քննությունը կարճելու մասին դիմողի պահանջը մերժելու վերաբերյալ պատճառաբանված որոշման կայացման լույսի ներքո:

Դատարանը հետագայում նշում է, որ իր որոշման մեջ պնդելով, որ դիմողի մեղքը «ապացուցվել է» գործում առկա ապացույցներով, դատախազը կիրառել է այն նույն եզրույթը, որը կիրառվել է դիմողի կողմից, ով գործի վարույթը կարճելու վերաբերյալ իր պահանջի մեջ նշել է, որ իր մեղքը չի «ապացուցվում» գործում առկա ապացույցներով: Թեև «ապացուցված է» եզրույթի կիրառումն անհաջող է, Դատարանը, անդրադառնալով այն ենթատեքստին, որում բառը կիրառվել է,

գտնում է, որ երկուստեք՝ դիմողը և դատախազը նկատի են ունեցել ոչ թե այն, որ դիմողի մեղքը հաստատվել է դատախազի որոշման հիմքում չդրված ապացույցով, այլ այն, որ գործի նյութերում առկա են բավարար ապացույցներ գործը դատական քննության ուղարկելու համար:

45. Այս հանգամանքներում Դատարանը եզրակացնում է, որ դատախազի՝ 01.10.1996թ. որոշման մեջ նշված դրույթները չեն խախտում անմեղության կանխավարկածը:

***Պրիբկեն ընդդեմ Իտալիայի (Priebke v. Italy), 48799/99, 05.04.2001թ.***

1. …Իր հայտարարության մեջ դիմողը մասնավորապես մատնանշում է այնպիսի հանգամանքներ, որոնք ապացուցում են իրեն անօրինական կարգով հետաքննությանը մասնակից դարձնելու փաստը:

...որ 1996թ. մայիսի 10-ի դատական նիստի ժամանակ դատախազության ներկայացուցիչը հրապարակայնորեն հայտարարել է դիմադրությանն իր մասնակցության մասին՝ միաժամանակ ցուցաբերելով լիակատար անտարբերություն հակառակորդի ճամբարում կռվողների նկատմամբ:

b) ...Դատարանը հիշեցնում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված անկախության և անաչառության երաշխիքները վերաբերում են միայն տվյալ քրեական գործը քննող դատական ատյանին և դա չի կիրառվում դատախազության ներկայացուցչի նկատմամբ, որը հանդիսանում է մրցակցային դատավարության կողմերից մեկը: Ցանկացած դեպքում, Դատարանը գտնում է, որ առաջինի հայտարարությունները սահմանափակվում են միայն նացիոնալ-սոցիալիզմի դեմ ուղղված պայքարի արժեքներին հղումներ կատարելով:

### 3. Մամուլում հրապարակված տեղեկությունները

***Կրաքսին ընդդեմ Իտալիայի (Craxi v. Italy), 34896/97, 05.12.2002թ.***

105. Ինչ վերաբերում է դիմողի այն փաստարկներին, որոնց համաձայն՝ դատախազությունը կամավոր կերպով և պարբերաբար մամուլին հաղորդել է գաղտնի համարվող գործերի մասին, Դատարանը գտնում է, որ շահագրգիռ անձը չի ներկայացնում այնպիսի արժանահավատ փաստեր, որ անհրաժեշտ է դատախազության ներկայացուցչին պատասխանատվության ենթարկելու համար, կամ որը թույլ կտար կարծելու, որ ներկայացուցիչը դիմողի բարի համբավը վնասելու նպատակով թերացել է իր պարտականությունների կատարման մեջ:

***Կարակասը և Յեսիլիմակն ընդդեմ Թուրքիայի (Karakaş and Yeşilımak v. Turkey), 43925/98, 28.06.2005թ.***

50. Խոսքի ազատությունը, որը երաշխավորված է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով, ներառում է տեղեկատվություն ստանալու և տարածելու ազատությունը: 6-րդ հոդվածի 2-րդ մասը չի արգելում իշխանության ներկայացուցիչներին հասարակությանը տեղեկացնել քրեական վարույթի ընթացքի վերաբերյալ, սակայն այն պահանջում է, որ դա կատարվի զգուշավորությամբ և շրջահայացորեն, որպեսզի չխախտվի անմեղության կանխավարկածը…

52. Դատարանը նշում է, որ սույն գործով ոստիկանությունը մամլո ասուլիս կազմակերպել է քրեական դատավարության ընթացքից անկախ, որի ժամանակ լրագրողներին կալանավորված անձանց վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրվել և թույլատրվել է լուսանկարահանում կատարել:

53. ...Իրավամբ, մամլո ասուլիսից հետո երկու թերթում հրապարակվել են երկու դիմողների անունները և լուսանկարները և նշվել, որ նրանք ձերբակալվել են ոստիկանության կողմից որպես Դև-Սոլի անդամներ՝ ցույցի նախապատրաստության ժամանակ, սակայն Դատարանը հիմնավորված չի համարում այն, որ ոստիկանությունը պնդել է, որ դիմողները մեղավոր են եղել այն հանցագործության կատարման մեջ, որի համար նրանք ձերբակալվել են, կամ որ մամլո ասուլիսը նախադատելի է եղել իրավասու դատական մարմնի կողմից գործի հանգամանքների գնահատման համար:

54. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ սույն գործով անձի անմեղության կանխավարկածը չի խախտվել:

***Y.B.-ն և այլոք ընդդեմ Թուրքիայի (Y. B. and Others v. Turkey), 48173/99 և 48319/99, 28.10.2004թ.***

49. Համաձայն ոստիկանության կողմից կազմված և մամուլի ներկայացուցիչներին տրամադրված՝ տեղի ունեցած մամլո ասուլիսի բովանդակության՝ դիմողները ներկայացվել էին որպես անօրինական կազմակերպության անդամներ, որը հայտնի է որպես MLKP: Նույնիսկ նույն տեղեկատվության համաձայն պաշտոնական հաղորդագրության մեջ հաստատվում է հարցաքննված անձանց կողմից Իզմիրի շրջանի տարբեր վայրերում հանցագործություններ կատարելու մասին տեղեկատվությունը: Դատարանի կարծիքով՝ այս երկու փաստերը կարող են մեկնաբանվել որպես այն հանգամանքի հաստատում, որ դիմողները կատարել են ոստիկանության կողմից առաջադրվող հանցագործությունները:

50. Ընդհանուր առմամբ անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանում չի հանդիսանում ոստիկանության վերաբերմունքն այնքանով, որքանով այն բացահայտում է դիմողներին ներկայացվող մեղադրանքների նախնական գնահատականը և տրամադրում է նաև նրանց բացահայտումը դյուրացնող նյութական միջոցներ:

Տեղի ունեցած մամուլի ասուլիսը նպատակ ուներ, մի կողմից, հասարակությանը թույլ տալ մտածելու դիմողների մեղավորության մասին, իսկ, մյուս կողմից՝ հնարավորություն տալ իրավասու դատավորներին առկա փաստերի գնահատմամբ դատական որոշում կայացնել:

***Խուզհինը և այլոք ընդդեմ Ռուսաստանի (Khuzhin and Others v. Russia), 13470/02, 23.10.2008թ.***

95. ...Դատարանը նշում է, որ դիմողների գործի քննության նշանակված օրվանից մի քանի օր առաջ Պետական հեռուստաալիքով հեռարձակվել է հարցազրույց, որին մասնակցել են դիմողի գործը քննող քննիչը, քաղաքային դատախազը և շրջանային դատախազության հատկապես կարևոր գործերի բաժնի պետը: Մասնակիցները մանրամասն քննարկել են դիմողների գործը, որոշ մեջբերումներ են արվել նաև հաղորումը վարողի և տուժողի կողմից: Հետագայում հաղորդումը երկու անգամ հեռարձակվել է գործի դատական քննության ընթացքում և մեկ անգամ՝ վերաքննության կարգով լսումից մի քանի օր առաջ:

96. Ինչ վերաբերում է հեռուստահաղորդման բովանդակությանը, ապա դատարանը նշում է, որ դատախազության բոլոր երեք ներկայացուցիչները դիմողներին մեղսագրված արարքները ոակել են որպես, նրանց կողմից կատարված «հանցագործություն»... Նրանց հայտարարությունները չեն սահմանափակվել գործի քննության փուլի կամ դիմողներին ներկայացված կասկածի վերաբերյալ նկարագրություններով, նրանք արարքը ներկայացրել են որպես արդեն կատարված փաստ, առանց որակելու այն հանգամանքը կամ վերապահում անելու այն մասին, որ դիմողները ներգրավված են եղել հանցանքների կատարման մեջ, նրանք չեն նշել նաև, որ դիմողներն իրենց մեղավոր չեն ճանաչել: Ի լրումն դրա, քաղաքային դատախազը՝ պրն Զինտերեկովը, վկայակոչել է դիմողների հանցավոր անցյալը՝ ներկայացնելով նրանց որպես արմատավորված հանցագործներ և նշել, որ «հանցագործությունը» հանդիսացել է նրանց «անձնական հատկանիշների»՝ «դաժանության և անհիմաստ գազանության» արդյունք: Եզրափակիչ հայտարարության մեջ նա նաև նշել է, որ միակ հարցը, որը դատարանը պետք է լուծի, կապված է պատժի ժամկետի հետ՝ դրանով իսկ ցույց տալով, որ դիմողների դատապարտումը դատական վարույթի միակ հնարավոր ելքն է... Դատարանը նշում է, որ իշխանության ներկայացուցիչների վերոնշյալ հայտարարությունները հանդիսացել են դիմողների մեղքի հաստատում և նախադատելի են եղել իրավասու դատական մարմինների համար: Հաշվի առնելով այն, որ այդ պաշտոնատար անձինք զբաղեցրել են բարձր դիրք քաղաքային և շրջանային դատախազություններում՝ նրանք պետք է ցուցաբերեին որոշակի զգուշավորություն դիմողների դեմ հարուցված և դեռևս չավարտված վարույթի նկարագրության ժամանակ բառեր ընտրելիս: Ինչևէ, քննարկելով դատախազների հայտարարությունների բովան-

դակությունը՝ Դատարանը գտավ, որ նրանց հայտարարություններից շատերը թերևս դրդել են հասարակությանը հավատալ, որ դիմողները մեղավոր են՝ նախքան դրա ապացուցումն օրենքով սահմանված կարգով: Հետևաբար, Դատարանը գտնում է, որ առկա է դիմողների անմեղության կանխավարկածի խախտում:

### 4. Պաշտոնատար անձանց քննադատությունը

***Լեսնիկն ընդդեմ Սլովակիայի (Lešník v. Slovakia), 35640/97, 11.03.2003թ.***

57. Չնայած որ հանրային մեղադրողի մասնագիտական և անհատական որակների վերաբերյալ դիմողի հայտարարությունները կարող են գնահատվել որպես արժեքավոր դատողություններ, որոնք ապացուցման կարիք չունեն, Դատարանը նշում է, որ վերոնշյալ նամակները նույնպես պարունակել են անօրինական և վիրավորական վարքագիծ դրսևորելու վերաբերյալ վերջինիս ուղղված մեղադրանքներ: Այսպիսով, դիմողը պնդել է, որ հանրային մեղադրողն ապօրինաբար հարաժարվել է պաշտպանել պաշտոնապես առաջադրված քրեական մեղադրանքը, չարաշահել է իր լիազորությունները՝ այդպիսով ներգրավված լինելով կաշառակերության և դիմողի հեռախոսային խոսակցությունները վերահսկելու գործում: Այս պնդումները, Դատարանի կարծիքով, հանդիսանում են փաստի հաստատում...

58. Այնուամենայնիվ, ներպետական դատարանները գործով բոլոր ապացույցները հետազոտելուց հետո գտել են, որ դիմողի կողմից գործի հանգամանքների վերոնշյալ շարադրումը հիմնավորված չի եղել: Դատարանում չի ներկայացվել որևէ հանգամանք, որը ցույց կտար, որ այս դատողությունը հակասել է գործի հանգամանքներին կամ անօրինական է եղել...

59. Այդ մեղադրանքներն ունեցել են լուրջ բնույթ և բազմիցս կրկնվել են: Դրանք կարող էին վիրավորել հանրային մեղադրողին՝ ազդելով նրա կողմից իր պարտականությունների կատարման վրա, ինչպես նաև, սույն դեպքում, երբ նամակը ուղարկվել է Գլխավոր դատախազություն, վնաս պատճառել նրա հեղինակությանը:

60. Ակնհայտ է, որ դիմողի պնդումները նպատակ են հետապնդել պատասխանատու պաշտոնատար անձանցից փոխհատուցում ստանալ Պ.-ի գործողությունների համար, որոնք նա դիտում է սխալ կամ անօրինական... Դատարանը նշում է, որ, համենայնդեպս, դիմողը զրկված չի եղել նման փոխհատուցում ստանալու համար անհրաժեշտ համապատասխան միջոցներ կիրառելու հնարավորությունից...

63. Թեև դիմողի նկատմամբ նշանակված պատիժը՝ չորս ամիս ժամկետով ազատազրկումը, որը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան մեկ տարի ժամկետով, ինքնին անկարևոր չէ,... այն գտնվում է կիրառելի սանդղակի նվազագույն չափի վրա...

65. Հետևաբար, չի եղել Կոնվենցայի 10-րդ հոդվածի խախտում:

***Ժյուլի և Սառլ Լիբերասիոնն ընդդեմ Ֆրանսիայի (July and Sarl Liberation v. France), 20893/03, 14.02.2007թ.***

65. Իրականում դատարանը գտնում է, որ դիմողները դատապարտվել են անօրինական հոդվածի հրապարակման նախորդ օրը կազմակերպված մամլո ասուլիսի ընթացքը և դրա բովանդակությունը բացահայտող հոդվածի հրապարակման համար, քաղաքացիական հայցվորի կարծիքով՝ մամուլով հրապարակվող քրեական նախաքննությունը վերաբերում էր մահվան պատճառներին և նպաստող պայմաններին, որը կատարվել է կասկածելի հանգամանքներում՝ Dijbouti-ում գործող ֆրանսիացի մագիստրատի կողմից: Նա նշում է, որ այդ մամլո ասուլիսի հիմնական նպատակն է եղել հասարակությանը տեղեկացնել քաղաքացիական հայցվորներից մեկի՝ մահացածի կնոջ կողմից արդարադատության նախարարին ներկայացված դատական իշխանությունների կողմից իրականացվող հսկողության վերաբերյալ դիմումը, որը պարունակում էր այդ ամբողջ տեղեկատվությունը:

68. Դատարանը նշում է, որ դատապարտելու համար Վերսալի վերաքննիչ դատարանը պետք է հաստատեր այն փաստը, համաձայն որի՝ հրապարակված երկու վիճելի հոդվածները վնաս են հասցրել գործը քննող երկու դատավորների պատվին և արժանապատվությանը՝ նրանց անհիմն մեղադրելով անաչառ վկայի հարցաքննության ժամանակ կողմնակալության և անհավանական քննություն իրականացնելու մեջ, սակայն այս մեղադրանքներն ըստ 1881թ. հուլիսի 29-ի օրենքի 29, 30 31-րդ հոդվածների իմաստների՝ համարվել են զրպարտություններ:

70. Բացի դրանից, Դատարանը բացահայտել է, որ վերաքննիչ դատարանի դատավորները, հաշվի չառնելով փաստի ինքնական ընդունումը, մեղադրում են լրագրողին ասուլիսի շրջանակներում տվյալ նյութը չհրապարակելու համար և գտնում են, որ նա ընտրել է ավելի դյուրին ճանապարհը, այսինքն՝ մամուլի միջոցով, և այս պարագայում նա պարտավոր էր դրա վերաբերյալ դիմել դատարան տվյալ անձին պատասխանատվության ենթարկելու համար, սակայն Դատարանը նշում է, որ ներպետական դատական ատյաններին նման իրավունք վերապահված չէ, որպեսզի վերջիններս մամուլին մատնանշեն այն հատուկ մեխանիզմները, որոնք լրագրողների կողմից պետք է հաշվի առնվեն տեղեկատվության փոխանցման ժամանակ, բացի դրանից, 10-րդ հոդվածով պաշտպանվում են նաև տարածված տեղեկատվության և գաղափարների բովանդակությունը և դրանց տարածման եղանակները:

71. Մյուս կողմից, վերաքննիչ դատարանի դատավորները գտել են, որ խմբագիրն ընտրելով ասուլիսի հետ որևէ ընդհանրություն չունեցող հոդվածի հրապարակումը՝ կարող էր չիմանալ, որ հոդվածի

որոշ կողմեր կարող են իրեն մեղադրել դրա համար: Այն փաստը, որ լրագրողներին ստիպում են կանոնավոր կերպով և ձևականորեն ընդհանուր բովանդակությունից հանել որոշ տվյալներ, որոնք կարող են վնասել երրորդ անձանց, վնաս հասցնեն նրանց պատվին, ինչպես նաև տեղեկատվություն տարածել այն դեպքերի, կարծիքների և մտքերի վերաբերյալ, որոնք դեռևս ընթացքի մեջ են: Այս առումով Վերսալի վերաքննիչ դատարանի հիմնավորումները Դատարանի համար համոզիչ չեն:

Դատարանը գտնում է, որ պետական ծառայողին այդպիսի մեղադրանք ներկայացնելու համար լրագրողը և դիմողները պետք է հատուկ միջոցներ ձեռնարկեն և ներկայացնեն ավելի արժանահավատ ապացույցներ:

72. Դատարանի համար այս հիմնավորումները համոզիչ չեն: Իրականում Դատարանը գտնում է, որ վիճելի հոդվածը 2000թ. մարտի 13-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսի հաշվետվությունն է, որը լրատվության միջոցներով արդեն հրապարակվել էր և հայտնի էր հանրությանը:

73. Կիրառված նախազգուշական միջոցների հիման վրա Դատարանը հայտարարում է, որ տվյալ հոդվածը շարադրված է պայմանականորեն պարզ տրամաբանությամբ և դրանում օգտագործվում է մի շարք փակագծեր՝ խուսափելու համար բոլոր այն շփոթից, որը կարող է առաջանալ հասարակության մեջ խոսքերի հեղինակի և լրագրողի վերլուծության հետևանքով: Այդ նպատակով յուրաքանչյուր անգամ ընթերցողի համար նշվում է երրորդ անձանց անունները, ինչը, ինչպես վերաքննիչ դատարանի դեպքում էր, կարող է լինել դատապարտելի ինչպես լրագրողի, այնպես էլ դիմողների համար: Բացի դրանից, հոդվածը չի բացահայտում վերոնշյալ պետական պաշտոնյայի անձնական դիտավորությունը, որն էլ ապացուցվեց գործի ըստ էության քննության ժամանակ:

74. Բացի դրանից, գործում ներգրավված անձինք պետական պաշտոնյաներ են: Արդյունքում, պարզված չէ նրանք որպես քաղաքական գործիչներ կամավոր կերպով հսկողություն իրականացրել նրանց գործողությունների և կանխակալ վարմունքի վրա: Եվ այդ ժամանակից սկսած նրանք վերջիններիս հետ պետք է վարվեին որպես հավասարների: ...այնուամենայնիվ, ինչպես այս գործում, այնպես էլ ընդհանրապես պետական պաշտոնյաներին՝ իրենց գործունեության հետ կապված քննադատության սահմանները շատ ավելի լայն են, քան սովորական անհատներինը: Դատարանն ուսումնասիրելով այն հիմնավորումները, որոնք հաշվի առնելով վճռաբեկ դատարանը մերժել է դիմողների բողոքը, արժանահավատ և բավարար չեն, քանի որ դրանով խախտվում է վերոնշյալ սկզբունքը: Իրականում մեղադրվող անձինք երկուսն էլ, որոնք պատկանում են պետության կարևորագույն մարմիններին, կարող էին անել անձնական բնույթի քննադա-

տություն թույլատրելի սահմաններում, այլ ոչ թե միայն շատ ընդհանրական և իրականությանը չհամապատասխանող քննադատություն:

75. Վերջում մնում է քննարկել միայն վերաքննիչ դատարանի կողմից առաջ քաշված այն հիմնավորումը, որը վերաբերում է մամուլի ասուլիսին մասնակցած երրորդ անձանցից մեկի խոսքերի աղավաղմանը: Սա խոսում է դիմողների անբարեխղճության մասին: Եթե նույնիսկ այդ եզրույթն ասուլիսի ժամանակ օգտագործվել է տեղին, միևնույն է, Դատարանի կարծիքով այն հստակորեն չի ձևակերպել, իսկ վերաքննիչ դատարանը գտնում է, որ խոսքերի հեղինակը չի ցանկացել ունեցել մատնել իր գործընկերոջը: Դատարանը գտնում է, որ եթե նույնիսկ դա երկար ժամանակ օգտագործվել է առօրյա խոսակցության մեջ, միևնույն է, հրապարակվել է ասուլիսի մասնակիցներից մեկի կողմից՝ հոդվածի տեսքով և դա անձամբ լրագրողի կողմից չի հաստատվել:

76. Ամեն դեպքում, Դատարանը գտնում է, որ դիմողները հրապարակելով հոդվածը՝ չեն դիմել չափազանցված կամ դրդիչ միջոցների, ինչը չնայած թույլատրվում է ժողովրդավարական հասարակության մեջ՝ ազատ լրագրողական գործունեության պայմաններում և, հետևաբար, չեն անցել թույլատրելի սահմանները: Փաստորեն, Դատարանը ներկայացված վիճելի դրույթներում չի տեսնում բացահայտ վիրավորական արտահայտություն տվյալ պաշտոնատար անձանց նկատմամբ: Մասնավորապես, ինչ վերաբերում է անհավանական որակմանը, ըստ Դատարանի՝ այս առումով պետական դատարանի կողմից բարի կամքի դրսևորման բացակայության մասին հիմնավորումները ներդաշնակ չեն ազատ արտահայտման իրավունքի սկզբունքի և մամուլի՝ որպես չորրորդ իշխանության, դերի հետ:

77. Հաշվի առնելով վերոնշյալը և գործի համատեքստում առկա վիճելի արտահայտությունները՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի շրջանակներում, կարելի է եզրակացնել, որ զրպարտության համար դիմողի դատապարտումը համաչափ չէ և չի բխում ժողովրդավարական հասարակության պահանջներից:

Արդյունքում՝ խախտվել են տվյալ դրույթի պահանջները:

## II. ՉԵՐԲԱԿԱԼՈՒՄ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄ

### 1. Իրավական հիմքը

***Ռանիներն ընդդեմ Ֆինլանդիայի (Raninen v. Finland), 20972/92, 16.12.1997թ.***

46. …Օմբուդսմենի տեսակետի համաձայն հիմք չի եղել անհանգստանալու, որ նա փախչելու փորձ կկատարի. ոչ էլ նախքան միջոցի կիրառումը նրան հարցրել են, թե նա պնդում է, արդյոք, այն, որ հրաժարվում է զինվորական ծառայությունից... Դրանից հետևում է, և

դա անժխտելի է, որ դիմողի՝ 1992թ. հունիսի 18-ի ձերբակալումը և կալանավորումը, որոնք իրականացվել են ռազմական ոստիկանության կողմից նրան բանտից Փորի զորանոց տեղափոխելիս՝ եղել են ներպետական օրենսդրության խախտմամբ…

Հետևաբար, այս միջոցների կիրառմամբ նրան ազատությունից զրկելը չի եղել «օրինական»՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով, և վերջինիս պահանջները սույն գործով խախտվել են:

***Բրոգանը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (Brogan and Others v. United Kingdom), 11209/84, 11234/84, 11266/84 և 11386/84, 29.11.1998թ.***

53. ...Այն փաստը, որ դիմողները ոչ մեղադրվել և ոչ էլ դատարան են տարվել՝ չի նշանակում, որ նրանց կալանավորման նպատակը չի համապատասխանում 5-րդ հոդվածի 1-ին մասի (c) կետի պահանջներին... Ինչպես Կառավարությունը և Հանձնաժողովը նշել են, նման նպատակի առկայությունը պետք է քննարկվի դրա նվաճումներից անկախ և 5-րդ հոդվածի 1-ին մասի (c) կետը... չի ենթադրում, որ ոստիկանությունը պետք է ունենա բավարար ապացույց մեղադրանք առաջադրելու համար այն ժամանակ, երբ անձը ձերբակալվում է կամ գտնվում է կալանքի տակ:

Նման ապացույցը, հաշվի առնելով ենթադրյալ հանցագործությունների բնույթը, կարող է հնարավոր չլինի ձեռք բերել կամ դատարան ներկայացնել՝ առանց այլ անձանց կյանքը վտանգելու: Հիմքեր չկան կարծելու, որ ոստիկանությունը բարեխղճորեն չի կատարել նախնական քննությունը կամ որ դիմողների կալանավորումը նպատակ չի հետապնդել նպաստելու նախնական քննության իրականացմանը՝ հաստատելով կամ ժխտելով այն կասկածը, որը հիմք է հանդիսացել նրանց կալանավորման համար... Եթե հնարավոր լիներ, ոստիկանությունը, ենթադրվում է, մեղադրանք կառաջադրեր և դիմողները կներկայացվեին իրավասու դատական իշխանության ներկայացուցիչներին:

Հետևաբար, նրանց ձերբակալումը և կալանավորումը պետք է կատարված լինեին ապահովելու համար 1-ին մասի (c) կետով սահմանված նպատակի իրականացումը...

***Օջալան ընդդեմ Թուրքիայի (Ocalan v. Turkey [GC]), 46221/99, 12.05.2005թ.***

90. Անկախ այն բանից, թե ձերբակալումը հանգեցրել է Պետության ներպետական օրենսդրության խախտման, որի համաձայն՝ փախստականը պետք է ապաստան ստանա (այս հարցը Դատարանի կողմից պետք է քննության առնվի, եթե ընդունող պետությունը Կոնվենցիայի մասնակից է հանդիսանում), Դատարանը պահանջում է միաձայն եզրակացությունների տեսքով ապացույց այն մասին, որ այն Պետության իշխանությունները, որին անձը փոխանցվել է, գործել

են արտատարածքայնության սկզբունքով՝ ընդունող պետության ինքնիշխանությանը չհամապատասխանող, և հետևաբար՝ միջազգային իրավունքին հակասող կերպով… Միայն այն դեպքում, եթե պահպանվել են ընդունող պետության ինքնիշխանությունը և միջազգային իրավունքը, ապացուցման ծանրությունը կընկնի պատասխանող Կառավարության վրա...

98. Դիմողը չի ներկայացրել որևէ ապացույց, որը հնարավորություն կտար միաձայն եզրահանգելու... որ Թուրքիան չի հարգել Քենիայի ինքնիշխանությունը կամ սույն գործով չի պահպանել միջազգային իրավունքի նորմերը...

99. Հետևաբար, դիմողի՝ 1999թ. փետրվարի 15-ի ձերբակալումը համապատասխանել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված «օրենքով նախատեսված ընթացակարգին»: Հետևաբար, չի եղել այդ պահանջի խախտում:

***Էմիրուլլահ Կարագյոզն ընդդեմ Թուրքիայի (Emrullah Karagöz v. Turkey), 78027/01, 08.11.2005թ.***

59. …Դատարանը նշում է, որ դիմողի փոխադրումը ոստիկանության հսկողության ներքո այն բանից հետո, երբ նա նախնական կալանքի է վերցվել, հանդիսանում է արդյունավետ դատական վերահսկողության խուսափում: Դատարանը գտնում է, որ կալանքի տակ պահվող անձին կիրառելի օրենսդրության շրջանցմամբ ոստիկաններին հանձնելը տեղի է ունեցել այն ժամանակահատվածում, որը ոստիկանությունում կալանավորման ժամկետի մեջ է մտել: Ահա թե ինչ է տեղի ունեցել դիմողի գործով, երբ նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելուց հետո նա մի քանի ժամ հարցաքննվել է: Ավելին, ոստիկանների հսկողության ներքո նրա կալանավորումն առանց ակնհայտ պատճառների տևել է մինչև 2001թ. դեկտեմբերի 12-ը: Սա ինքնին պետք է դիտվի որպես 5-րդ հոդվածի 1-ին մասի (c) կետով նախատեսված օրինականության պահանջի խախտում, քանի որ բոլոր երաշխիքները, և հատկապես պաշտպանության իրավունքը, որոնք պետք է ապահովված լինեին հարցաքննության ժամանակ, արդյունավետ կերպով չեն տրամադրվել:

60. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

Տե՛ս նաև ստորև՝ **B.I.2.b**

### 2. Հիմնավոր կասկածի պահանջը

*ա. Որոշ ապացույցներ, որոնք չեն պահանջվում*

***Ֆեռարի-Բրավոն ընդդեմ Իտալիայի (Ferrari-Bravo v. Italy (dec.)), 9627/81, 14.03.1984թ., DR 37, 15***

3. ...Հանձնաժողովը շեշտում է, որ ձերբակալումը կամ կալանավորումն արդարացված կարող են համարվել միայն այն դեպքում, երբ ապացուցված են մեղսագրվող արարքի իրական լինելը և դրա հանցավոր բնույթը, քանի որ դա հանդիսանում է նախնական քննության նպատակը, որին, ենթադրվում է, պետք է նպաստի կալանավորումը:

***Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (Murray v. United Kingdom), 14310/88, 28.10.1994թ.***

55. ...5-րդ հոդվածի 1-ին մասի (c) կետի իմաստով կալանավորման ընթացքում հարցաքննության օբյեկտը... պետք է աջակցի քրեական գործով նախնական քննությանը՝ ձերբակալումը հիմնավորող իրական կասկածը հիմնավորելու կամ վերացնելու ձևով: Այսպիսով, այն փաստերը, որոնք հանգեցրել են կասկածի առաջացմանը, չպետք է լինեն նույն մակարդակի վրա, ինչ այն փաստերը, որոնք անհրաժեշտ են մեղադրանք առաջադրելը կամ դատապարտումը հիմնավորելու համար, որոնք արդեն քրեական գործով նախնական քննության հաջորդ փուլերն են կազմում:

*բ. Բավարար հիմք*

***Ֆոքսը, Քեմփբելլը և Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Fox, Campbell and Hartley v. United Kingdom), 12244/86, 12245/86, 12383/86, 30.08.1990թ.***

32. …«հիմնավոր կասկածի» առկայությունը ենթադրում է այնպիսի փաստերի կամ տեղեկությունների գոյություն, որոնք օբյեկտիվ դիտորդին կհամոզեն, որ տվյալ անձը կարող է այդ հանցագործությունը կատարած լինել: Այն հարցը, թե ինչ ասել է «հիմնավոր»՝ կախված է գործի բոլոր հանգամանքներից...

35. ...Այն փաստը, որ և՛ պրն. Ֆոքսը, և՛ տիկին Քեմփբելլը նախկինում դատապարտված են եղել ԻՀԲ-ի կողմից կազմակերպված ահաբեկչական գործողություններ կատարելու համար…, թեև կարող է ամրապնդել կասկածն առ այն, որ դա նրանց կապում է ահաբեկչության տիպի հանցագործությունների հանձնաժողովի հետ, սակայն չի կարող ձևավորել բացառիկ հիմք այն կասկածի համար, որը կհիմնավորի նրանց ձերբակալումը 1986թ.-ին՝ մոտ յոթ տարի անց:

Այն փաստը, որ բոլոր դիմողներն իրենց կալանավորման ընթացքում հարցաքննվել են կոնկրետ ահաբեկչական գործողությունների առնչությամբ, ընդամենը հաստատում է այն, որ ձերբակալող պաշտոնատար անձինք իրականում կասկածել են, որ նրանք ներգրավված են եղել այդ արարքների կատարման մեջ, սակայն այն չի կարող համոզել օբյեկտիվ դիտորդի, որ դիմողները կատարել են այդ արարքները:

Վերոնշյալ տարրերն ինքնին բավարար չեն եզրահանգելու, որ եղել է «հիմնավոր կասկած»...

***Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (Murray v. United Kingdom), 14310/88, 28.10.1994թ.***

51. ...Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի (c) կետը… չպետք է կիրառվի այնպես, որ անհամաչափորեն խոչընդոտի կազմակերպված ահաբեկչությանը Պայմանավորվող պետության ոստիկանության ներկայացուցիչների կողմից հակազդելու միջոցառումների իրականացմանը...: Դրանից բխում է, որ Պայմանավորվող Պետություններից չի կարող պահանջվել կասկածվող ահաբեկչի ձերբակալման համար հիմք հանդիսացած կասկածի հիմնավորվածության ապացուցում՝ բացահայտելով տրամադրվող տեղեկատվության գաղտնի աղբյուրները կամ նույնիսկ փաստերը, որոնք կարող են հանգեցնել նման աղբյուրների կամ նրանց ինքնությունների բացահայտմանը:

Այնուամենայնիվ, Դատարանը պետք է համոզվի, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի (c) կետով նախատեսված երաշխիքների էությունը... պահպանվել է: Հետևաբար, Պատասխանող պետությունը պետք է ներկայացնի որոշակի փաստեր կամ տեղեկություն, որը Դատարանին կհամոզի, որ ձերբակալված անձի կողմից ենթադրյալ հանցագործությունը կատարելու վերաբերյալ առկա է եղել հիմնավոր կասկած...

***Կ.-Ֆ.-ը ընդդեմ Գերմանիայի (K.-F. v. Germany), 25629/94, 27.11.1997թ.***

58. Սույն գործով տիկին Ս.-ն՝ տանտիրուհին, տեղեկացրել է ոստիկանությանը, որ պրն և տիկին Կ.-Ֆ.-ն վարձակալել են իր բնակարանը՝ առանց իրենց՝ որպես վարձակալների պարտականությունները կատարելու մտադրության և ցանկացել են փախչել՝ առանց իրենց պարտքը վճարելու... Սկզբնական հարցումների արդյունքում պարզվել է, որ պրն և տիկին Կ.-Ֆ.-ների հասցեի փոխարեն նշված է եղել միայն աբոնենտային փոստարկղը, և որ պրն Կ.-Ֆ.-ն նախկինում հետախուզման մեջ է եղել խարդախության համար..., ոստիկանությունը զույգին ձերբակալել է 1991թ. հուլիսի 4-ին, ժամը 21:45-ին և նրանց ոստիկանություն է տարել նրանց ինքնությունը պարզելու համար... Ժամը 23:30-ին կազմված արձանագրության մեջ ոստիկանները նշել են, որ նրանք կասկածում են, որ պրն և տիկին Կ.-Ֆ.-ները խարդախություն են կատարել, և որ վտանգ կա, որ նրանք կխուսափեն արդարադատությունից:

59. Քննարկելով այդ հանգամանքները՝ Դատարանը կարող է սկզբունքորեն հիմք ընդունել Կոբլենզի Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները, որոնց... համաձայն՝ ոստիկանների կասկածը՝ խարդախության և պրն Կ.-Ֆ.-ի՝ արդարադատությունից խուսափելու վերաբերյալ եղել են հիմնավորված: Հետևաբար, դիմողը կալանավորվել է 5-րդ հոդվածի 1-ին մասի (c) կետի իմաստով հանցանքի կատարման առումով հիմնավոր կասկածի առկայությամբ:

***Ուլոչն ընդդեմ Լեհաստանի (Wloch v. Poland), 27785/95, 19.10.2000թ.***

109. Ինչևէ, ի լրումն դրա փաստական կողմի, 5-րդ հոդվածի 1-ին մասի (c) կետի իմաստով «հիմնավոր կասկածի» առկայությունը պահանջում է, որ հիմք ընդունվող փաստերը հնարավոր լինի որակել դիտել որպես Քրեական օրենսգրքում քրեական վարքագիծը սահմանող բաժիններից մեկի տակ ընկնող: Այսպիսով, չի կարող «հիմնավոր կասկած» լինել, եթե կալանավորված անձին մեղսագրվող արարքների կատարման պահին դրանք չեն հանդիսացել հանցագործություն...

115. ...քանի որ դիմողի կալանավորումը բացառապես հիմնված է եղել երեխաների առևտրի հետ կապված հանցագործությանը նրա ենթադրյալ մասնակցության վերաբերյալ կասկածի վրա, ապա նման կալանավորման օրինականությունը, քննարկելով ներպետական օրենսդրության մեկնաբանությունում առկա հակասությունները, կարող է կասկածելի լինել: Ինչևէ, կալանավորումը հիմնված է եղել նաև այն կասկածի վրա, որ նա որդեգրման գործընթացին ներգրավված անձանց դրդել է տալ սուտ ցուցմունք՝ նպատակ ունենալով մոլորության մեջ գցել դատարաններին:

***Սթեփյուլիքն ընդդեմ Մոլդովայի (Stepuleac v. Moldova), 8207/06, 06.11.2007թ.***

70. ...միակ հիմքը, որը նշվել է մեղադրողի կողմից դիմողին ձերբակալելիս և նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ դատարան միջնորդություն ներկայացնելիս, եղել է այն, որ (Գ.Ն.) ուղղակիորեն մատնացույց է արել նրան՝ որպես հանցանքը կատարողի... Ինչևէ, ...գանգատում, որը ներկայացվել է Գ.Ն.-ի կողմից, ուղղակիորեն չի նշվել ոչ դիմողի անունը, ոչ ենթադրություն այն մասին, որ դիմողի կազմակերպության բոլոր աշխատակիցները ներգրավված են եղել հանցագործության կատարմանը... Քրեական գործով նախնական քննություն սկսելու վերաբերյալ դատախազի որոշման մեջ նշված է եղել դիմողի անունը... Պարզ չէ, սակայն, թե ինչու է նախնական քննության հենց սկզբից և նախքան նոր ապացույցների ձեռքբերումը նրա անունը ներառվել այդ որոշման մեջ: Անհրաժեշտ է նշել, որ դիմողը երբևէ չի մեղադրվել իր կազմակերպությանը պատկանող անշարժ գույքով անօրինական գործողություններ կատարելու մեջ, ինչով կարող էր բացատրվել նրա՝ որպես Տանտալի տնօրենի, սակայն ոչ որպես ներգաշորթության հանցակցի ձերբակալումը...

72. ...ներպետական դատարանը, կալանավորման հարցը քննարկելիս..., գտել է, որ Գ.Ն.-ի բողոքի մի տեսակետը վիրավորական է եղել... Սա պետք է կասկած հարուցի Գ.Ն.-ի ազնվության հանդեպ: Կոնֆլիկտը, որը նա ունեցել է կազմակերպության վարչակազմի հետ... կարող է պատճառ հանդիսանալ նրա շարժառիթները կասկա-

ծի տակ առնելու համար: Ինչևէ, հաստատելով այս տեղեկությունը, որը հեշտությամբ ձեռք է բերվել օրենքով այն տրամադրելու իրավասություն ունեցող անձանցից և, մասնավորապես՝ գործին ներգրավված շատ դատախազներից, պարզվեց, որ անձը դատախազի կողմից ձերբակալվել է մասամբ նաև Գ.Ն.-ի ենթադրյալ առևանգման փաստի հիման վրա: Սա հիմնավորում է դիմողի բողոքն առ այն, որ նախնական քննությունն իրականացնող մարմիններն իրականում չեն ստուգել փաստերը՝ որոշելու համար, թե առկա է, արդյոք, հիմնավոր կասկած այն մասին, որ անձը հանցանք է կատարել, այլ նրան ձերբակալել են՝ ելնելով անձնական շահերից...

73. Վերոգրյալի լույսի ներքո կարելի է մասնավորեցնել, որ դատախազի որոշմամբ դիմողի անունը կասկածյալների ցուցակում ներառելը՝ առանց տուժողի հայտարարության կամ նրան մատնանշող որևէ այլ ապացույցի..., ինչպես նաև հիմնական փաստերի իրական քննության ժամանակ դատախազի կողմից բողոքի հիմնավորվածությունը ստուգված չլինելու արդյունքում Դատարանը եզրակացնում է, որ իրեն տրամադրված տեղեկատվությունը չի «համոզում անկախ դիտորդի, որ տվյալ անձն է կատարել այդ հանցանքը»:

74. Հետևաբար, դիմողի առաջին ձերբակալման կապակցությամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի խախտում...

76. ...Եթե դիմողն իրականում հանցանք է կատարել և ցանկացել է ճնշում գործադրել տուժողի կամ վկաների նկատմամբ կամ թաքցնել ապացույցները, ապա նա դա կարող էր անել մինչև 2005թ. դեկտեմբերը, Դատարան չի ներկայացվել որևէ ապացույց առ այն, որ դիմողի կողմից կատարվել են նման գործողություններ: Հետևաբար, բացակայել է ձերբակալման անհրաժեշտությունը՝ կապված շարունակվող հանցագործության դադարեցման հետ և, գործին ներգրավված նախնական քննություն իրականացնող 24 մարմինները բավականաչափ ժամանակ են ունեցել ստուգելու, թե բողոքները *prima facie* լավ հիմնավորված են, թե՝ ոչ: Այդ ստուգման փոխարեն դիմողը ձերբակալվել է նախնական քննությունն սկսելու օրը...

77. Առավել մտահոգիչ է այն, որ ենթադրյալ երկու տուժողների հայտարարություններից բխում է, որ բողոքներից մեկը կեղծ է եղել և նախաքննական մարմինը չի ճշտել, թե նա իսկապես նման բողոք ներկայացրել է, թե՝ ոչ, մինչդեռ երկրորդ բողոքը ոստիկան Ո.-ի՝ դիմողի դեմ առաջին բողոքը գրանցած անձի, ուղղակի ազդեցության արդյունքում է ներկայացվել... Արդյունքում, երկու բողոքներով հնարավոր չի եղել ստուգել, որ առկա է եղել դիմողի կողմից հանցանք կատարելու վերաբերյալ հիմնավոր կասկած, և նրա ձերբակալման այլ հիմնավորում չի ներկայացվել...

78. Դատարանը տեղյակ է մտափոխվելու կամ հարկադրված լինելու դեպքում տուժողի կողմից իր բողոքը հետ վերցնելու հնարավորության մասին: Ինչևէ, անկախ տուժողի ստորագրությունից, բողոքը

կարող է հաստատվել օբյեկտիվ ապացույցներով, և գործի նյութերում չկա որևէ հիմնավորում այն մասին, որ ներպետական դատարանում անձը՝ բողոքը չստորագրելու վերաբերյալ սուտ տեղեկություն է տվել: Իսկապես, եթե պարզվեր, որ տուժողն իրականում ստորագրել է բողոքը, սակայն հետագայում այն հարկադրաբար հետ է վերցրել, ներպետական դատարանը լուրջ պատճառներ կունենար դիմողի ազատ արձակման խնդրանքը մերժելու համար: Նման վերաբերմունք դատարանի կողմից չի արտահայտվել...

79. Վերոգրյալը, ինչպես նաև առանց պատճառի դիմողի անունը կասկածյալների ցուցակում ներառելն, իրականացվել են նրա առաջին ձերբակալության կապակցությամբ..., մտահոգիչ տպավորություն է ստեղծում, որ դիմողը դիտավորյալ թիրախ է դարձվել...

80. Անկախ այն հանգամանքից, թե դիմողը ձերբակալվել է ապօրինաբար կամ գործի հանգամանքների ոչ պատշաճ քննության կամ *bona fide* սխալի արդյունքում, Դատարանը ոչ՛ գործի, ո՛չ առաջին ձերբակալության նյութերում չի տեսնում դիմողի կողմից հանցանքի կատարման վերաբերյալ հիմնավոր կասկածը հաստատող որևէ ապացույց:

81. Հետևաբար, նաև դիմողի երկրորդ ձերբակալման մասով տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

***Կանձիովն ընդդեմ Բուլղարիայի (Kandzhov v. Bulgaria), 68294/01, 06.11.2004թ.***

60. ...Դատարանը նշում է, որ դիմողի գործողությունները բաղկացած են եղել Արդարադատության նախարարին պաշտոնանկ անելու համար ստորագրություններ հավաքելուց և նրան «ծայրահեղ հիմար» անվանող երկու պաստառ ցուցադրելուց: Դիմողին առաջադրված քրեական մեղադրանքները քննելիս Գերագույն վճռաբեկ դատարանը հատկապես նշել է, որ այս գործողություններն իրականացվել են խաղաղ եղանակով, չեն խանգարել անցորդներին և հազիվ թե կարողանային դրդել այլ անձանց բռնություն գործադրել: Այս հիմքով, այն եզրակացրել է, որ դրանք չեն պարունակում խուլիգանության հիմնական տարրերը և այդ պատճառով Փլևենի շրջանային դատարանի կողմից դիմողին դատապարտելը «որևէ կերպ հիմնավորված չէ», և այս կապակցությամբ դատարանը բլանկետային ձևակերպումներ է կիրառել... Ոչ էլ դիմողին ձերբակալելու և կալանավորելու վերաբերյալ Ներքին գործերի նախարարության՝ 1997թ.ի Օրենքի 70(1) բաժնի հիման վրա տրված թույլտվության մեջ, որն առանց դատարանի կողմից վերանայվելու, իրականացվել է 1974թ. Քրեական Դատավարության Օրենսգրքի §3-ի 152ա հոդվածի հիման վրա, չի պարունակվում որևէ հիմք, որը պաշտոնատար անձանց հիմնավոր կերպով կհամոզեր, որ նրա վարքագիծը համապատասխանում է խուլիգանությանը, որի մեկնաբանությունը կատարվել է Գերագույն դատարանի 1974թ. որոշման մեջ:

### 3. Հանգամանքները և ուժի կիրառումը

*ա. Ընտանիքի անդամների ներկայությամբ*

***Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (Murray v. United Kingdom), 14310/88, 28.10.1994թ.***

92. Ազգային դատարանները սահմանել են, որ տիկին Մյուրեյը բարեխղճորեն կասկածվել է ահաբեկչության հետ կապված հանցագործություն կատարելու մեջ… Դատարանը համաձայն է, որ սույն գործով սկզբունքորեն եղել է ինչպես 1978թ. օրենքի 14-րդ բաժնով նախատեսված լիազորությունների կիրառման, այնպես էլ տիկին Մյուրեյին ձերբակալելու նպատակով Մյուրեյների ընտանիքին պատկանող բնակարան մուտք գործելու և խուզարկելու անհրաժեշտություն:

Բացի դրանից, պետք է ընդունել, որ նման ձերբակալությունները Հյուսիսային Իռլանդիայում իրականացվում են «ծայրահեղ լարվածության պայմաններում»...

Այս օրինական դատողությունները պարզում և արդարացնում են դիմողների բնակարան մուտք գործելու և խուզարկության իրականացման ձևերը: Դատարանը չի գտնում, որ դիմողներից որևէ մեկի նկատմամբ իշխանությունների ձեռնարկված միջոցառումները եղել են հետապնդվող նպատակին անհամապատասխան:

93. Չի կարելի ասել, որ իրավասու մարմինները՝ գրանցելով և պահպանելով ձերբակալված անձի կամ նույնիսկ ձերբակալման ժամանակ ներկա գտնվող այլ անձանց վերաբերյալ տվյալները, դուրս են եկել ահաբեկչական հանցագործությունների քննության սահմաններից: Ինչ վերաբերում է բնակարանի խուզարկության կամ Զինված ուժերի հավաքատեղիում տիկին Մյուրեյի գտնվելու ժամանակ ստացված տվյալներին, ապա չի կարելի ասել, որ դրանք առնչություն չունեն ձերբակալման և հարցաքննության ընթացակարգի հետ…

***Էրդողան Յագիսն ընդդեմ Թուրքիայի (Erdoğan Yağiz v. Turkey), 27473/02, 06.03.2007թ.***

34. Դատարանը գտնում է, որ դիմողը չի ենթարկվել ֆիզիկական բռնության, այլ ենթարկվել է անմարդկայլն և նվաստացուցիչ վերաբերմունքի, որի արդյունքում ստիպված է եղել երեք օր նստած մնալ աթոռին, նրան նաև վիրավորել և ձեռնաշղթաներով ներկայացրել են հասարակության մեջ, աշխատանքի և բնակության վայրում, ինչպես նաև ընտանիքի մոտ:

46. Հաշվի չառնելով ներշնչված վախի զգացումը՝ որպես անվտանգության առումով մեծ ռիսկ, տվյալ գործում չկա որևէ այլ փաստ, համաձայն որի դիմողն իր կամ այլ անձանց համար վտանգ էր ներկայացնում, կամ որ դիմողն անցյալում կատարել է հանցավոր արարքներ, ինքնասպանության փորձեր կամ բռնություններ այլ ան-

ծանց նկատմամբ: Դատարանն իր կողմից կատարված հետազոտություններում մասնավորապես կարևորում է այն փաստը, որ Կառավարությունը չի ներկայացնում որևէ բացատրություն, որը կհիմնավորի ձեռնաշղթաներ կրելու անհրաժեշտությունը:

47. Դատարանը չի տեսնում որևէ հանգամանք, որը թույլ կտա հիմնավորել դիմողին խուզարկության և ձերբակալման ժամանակ ձեռնաշղթաներով ներկայացնելու անհրաժեշտությունը: Արդյունքում, այն գտնում է, որ գործի բնույթից ելնելով՝ ձեռնաշղթայված դիմողի ներկայացումը նպատակ էր հետապնդում ստեղծել վախի, տագնապի զգացում՝ նրան ստորացնելու, նրա մեջ հոգեկան դիմադրությունը ճնշելու և կոտրելու համար:

*բ. Ուժի կիրառում*

*i. Սահմանազանցող*

***Դալանն ընդդեմ Թուրքիայի (Dalan v. Turkey), 38585/97, 07.06.2005թ.***

25. 1995թ. օգոստոսի 17-ի բժշկական քննության ժամանակ տվյալ գործում չի վիճարկվել դիմողի մարմնի վրա վնասվածքների առկայությունը: Դրա արդյունքում չի պարզվել, թե երբ և ինչպես են այդ վնասվածքները հասցվել:

26. Սրա վերաբերյալ Կառավարությունը փորձել է իրավիճակը պարզաբանել նրանով, որ դիմողի ձերբակալման ժամանակ տեղի է ունեցել վիճաբանություն և, հիմնվելով կազմված արձանագրության վրա՝ հաստատում է այն, որ տվյալ դեպքում ֆիզիկական ուժի կիրառումն անհրաժեշտ էր նաև շահագրգիռ անձի վարքագծի վերաբերյալ դատարանի տեղեկացված լինելու առումով:

Նման հիմնավորումը չի առաջացնում հետևանքներ այնքանով, որքանով դրանք չեն հիմնվում բժշկական փաստերի վրա, որ իշխանությունները վիճահարույց ձերբակալումից հետո պարտավոր էին անմիջապես ձեռք բերել և պարզել՝ արդյոք դա տեղի է ունեցել այնպես, ինչպես Կառավարությունը հիմնավորել էր:

27. Դատարանը, այնուամենայնիվ, երկար ժամանակ չի տրամադրում այս հարցին: Քանի որ ամեն դեպքում վնասվածքների քանակը և ծանրությունը, որը հայտնաբերվեց դիմողի վրա ձերբակալումից 12 օր հետո, հիմք էին հանդիսանում պարզելու համար կիրառված ուժը համաչափ է եղել ութ ոստիկանների կողմից երեք կնոջ ձերբակալելու համար, որոնք նրանց համար որոշակի սպառնալիք չէին ներկայացնում:

Հակիրճ՝ Դատարանը չի տեսնում որևէ ծանրակշիռ փաստարկ, որը պաշտպանվող պետությանը կարող էր ազատել պատասխանատվությունից երրորդ հոդվածի առումով, այն պատճառաբանությամբ,

որ օրիորդ Դալանը վնասվածքներ է հասցրել ոստիկանների ձեռքերին նրան պատժի ենթարկելու պահին:

***Նաչովան և այլոք ընդդեմ Բուլղարիայի (Nachova and others v. Bulgaria [GC]), 43577/98 և 43579/98, 06.07.2005թ.***

105. …փոխարինող կարգավորումների համաձայն՝ կարելի է լավ զինված պաշտոնատար անձանց խումբ ուղարկել երկու մարդու ձերբակալելու համար, եթե ի սկզբանե բացակայել է որևէ սպառնալիք, իսկ դրա առկայության դեպքում՝ կյանքի դեմ ուղղված որևէ սպառնալիքի նվազեցման համար նախատեսվում է պարզ զգուշացում: Կարճ ասած, գործողության ծրագրման և վերահսկման ձևը, ցավոք, չի նախատեսում կյանքի իրավունքի առաջնայնության պահպանումը...

106. …Մարդը ո՛չ զինված է եղել, ո՛չ վտանգ է ներկայացրել ձերբակալող պաշտոնատար անձանց կամ երրորդ անձանց համար. մի փաստ, որի վերաբերյալ ձերբակալող պաշտոնատար անձինք պետք է տեղյակ լինեին: Բացի դրանից, Լեյսուրա գյուղում այդ մարդկանց հանդիպելու ժամանակ պաշտոնատար անձինք կամ գոնե Մայոր Գ.-ն պետք է նկատեին, որ նրանք զինված չեն և սպառնալիքի որևէ նշան ցույց չեն տալիս…

107. Նկատի ունենալով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ կյանքին վտանգ սպառնացող որևէ ուժի կիրառում սույն գործով՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով, արգելված է եղել՝ անկախ պրն Անգելովի և պրն Ժետկովի փախուստի վտանգի առկայությունից: Ինչպես նշվել է վերը, կյանքի համար վտանգավոր ուժի կիրառումը չի կարող դիտվել որպես «բացարձակապես անհրաժեշտ», եթե ձերբակալվող անձը կյանքի կամ առողջության համար վտանգավոր որևէ սպառնալիք չի ներկայացնում և չի կասկածվում բռնի հանցագործության կատարման մեջ:

***Ուիեյսերն ընդդեմ Ավստրիայի (Wieser v. Austria), 2293/03, 22.02.2007թ.***

40. Սույն գործով Դատարանն առաջին հերթին նշում է, որ դիմողին ոչ թե պարզապես հարկադրել են հանել հագուստը, այլ նրան մերկացրել են ոստիկաններն այն ժամանակ, երբ գտնվել է անօգնական վիճակում: Անգամ մերժելով դիմողի հետագա հայտարարություններն այն մասին, որ նրա աչքերն այդ ժամանակ կապված են եղել, ներպետական դատարանն նույնիսկ չի արձանագրել այդ փաստը, Դատարանը գտնում է, որ այս գործողությունը հանդիսացել է այնքան նախահարձակ և արժանապատվությունը նվաստացնող միջոց, որ չպետք է իրականացվեր առանց ծայրահեղ անհրաժեշտության: Ինչևէ, նման փաստարկ չի ներկայացվել ցույց տալու համար, որ քննության ժամանակ անձին մերկացնելը՝ անվտանգության նկատառումներից ելնելով, եղել է անհրաժեշտ և արդարացված: Դատարանը նշում է, որ որևէ փաստարկ չի ներկայացվել հիմնավորելու համար դի-

մողի նկատմամբ նման միջոցի կիրառումը, ով զննման է ենթարկվել զենքի և ոչ թե թմրամիջոցների առնչությամբ, պետք է կատարվեր սովորական զննմամբ առանց դիմողին ամբողջությամբ մերկացնելու, չհայտնաբերվող, այլ փոքր առարկայի հայտնաբերման նպատակով:

41. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ սույն գործով դիմողի բնակարան մուտք գործելը և զննության ժամանակ նրա մերկացումը հանդիսանում են ոչ արդարացի վերաբերմունք, որը բավականին խիստ է և Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով կարող է բնութագրվել որպես «նահանջող»:

***Ֆահրիյե Ցալիսկան ընդդեմ Թուրքիայի (Fahriye Çalişkan v. Turkey), 40516/98, 02.10.2007թ.***

42. Տվյալ գործում նման վարքագիծն արդյունք էր բանավոր նախահարձակման կամ դիմողի կողմից հասցված ապտակի, թե՝ ոչ, դեռևս վերջնականորեն հաստատված չէ: Այստեղ կարևոր է պարզել, թե կոմիսար Ս.Չ.-ի կողմից կիրառված ուժը համաչափ և անհրաժեշտ էր, հաշվի առնելով, որ այս տեսանկյունից Դատարանը հատուկ կարևորում է այն վնասները, որոնք պատճառվել են, և այն հանգամանքները, որոնց պարագայում դրանք հասցվել են:

43. Այս համատեքստում Դատարանին մնում է եզրակացնել, որ Ս.Չ. կոմիսարը դիմողին կարգի բերելու համար է այդպես վարվել, սխալմամբ ավելորդ լարվածություն ստեղծելով դեպքի պահին: Սա նշանակում է, որ, այնուամենայնիվ, ինչ վերաբերում էր կնոջը ապա նրան գտել են կոմիսարիատում, որտեղ նա հրավիրվել էր ընդհանուր խնդրի առնչությամբ: Դատարանը վեճի էությունը ըմբռնելու համար հետազոտել է այն ճշմարիտ հանգամանքները, որոնք դրդել են նրան ձեռնամարտի բռնվել կոմիսարի հետ, և տվյալ գործում չկա որևէ նշում այն մասին, որ նա կարող էր այդչափ դիտավորություն ունենալ բռնություն կիրառելու համար:

Ամեն դեպքում, իր ենթականերով շրջապատված կոմիսարից ստանալով ապտակ՝ ստիպված էր այլ միջոցներով հակազդել, որը դիմողին հասցրել էր 5 օրյա ժամանակավոր անաշխատունակության:

Սա համարվում է նվաստացնող վերաբերմունք, որը ներշնչել է վախի և անհամաչափ խոցելիության զգացում, ինչը, հետևաբար, չէր կարող համապատասխանել անհրաժեշտ ուժի կիրառմանը:

44. Այսպիսով, տվյալ գործում առկա է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

*ii. Չսահմանազանցող*

***Ռանինենն ընդդեմ Ֆինլանդիայի (Raninen v. Finland), 20972/92, 16.12.1997թ.***

56. …եթե ձեռնաշղթաները կիրառվում են օրինական ձերբակալության կամ կալանավորման ժամանակ և հիմնավոր անհրաժեշ-

տության բացակայության դեպքում չեն ուղեկցվում ուժի կիրառմամբ կամ հրապարակային ցուցադրմամբ, ապա դա, որպես կանոն, Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով խնդիր չի առաջացնում: Այս կապակցությամբ կարևորվում է, օրինակ, այն, թե կա, արդյոք, պատճառ ենթադրելու, որ տվյալ անձը կդիմադրի ձերբակալվելիս կամ կխոչընդոտի արդարադատության իրականացմանը, կվնասի կամ կվերացնի կամ կթաքցնի գործով առկա ապացույցները:

***Սկավուցո Հագերն ընդդեմ Շվեյցարիայի (Scavuzzo-Hager v. Switzerland), 41773/98, 07.02.2006թ.***

61. Եթե նույնիսկ ենթադրենք, որ Պ.-ի և ոստիկանության երկու գործակալների միջև կռվին հարևանի միջամտության պատճառով Պ-ի առողջությանը ծանր վնաս է պատճառվել, դատարանը գտնում է, որ պաշտպանվող պետությանը միջազգային պատասխանատվության ենթարկելու համար պետք էր նաև, որ ոստիկանները տվյալ դեպքում նախատեսած լինեին Պ.-ի խոցելի վիճակը, որը պահանջում է խիստ զգուշավորություն ձերբակալման ժամանակ կիրառվելիք միջոցների ընտրության հարցում:

62. Իրականում Դատարանին զարմացնում է այն, որ երկու ոստիկանները չեն հարցաքննվել այս հարցի շուրջ: Որոշ ժամանակ անց 1997թ. հունվարի 21-ին Ցյուրիխի համալսարանի կողմից կատարված բժշկական փորձաքննությունից պարզորոշ հետևում է, որ երկու ոստիկանները չէին կարող նախատեսել Պ.-ի խոցելությունը, և որ նրա վրա արտաքին չնչին ազդեցությունը կարող է առաջացնել էական բարդություններ:

63. Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դատարանը, գտնելով որ չկա ոչ մի հիմնավորում բժշկական եզրակացությունը հաշվի առնելու համար, հայտարարում է, որ այն փաստարկը, համաձայն որի Պ.-ի մահը կապված է եղել ոստիկանների կողմից ուժի կիրառման հետ, հիմնավորված չէ:

### 4. Պատճառաբանելու պարտականությունը

*ա. Բավարար տեղեկություն*

***Ֆոքսը, Քեմփբելը և Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Fox, Campbell and Hartley v. United Kingdom), 12244/86, 12245/86, 12383/86, 30.08.1990թ.***

41. Պրն Ֆոքսի, տիկին Քեմփեբլլի և պրն Հարթլիի կալանավորման ժամանակ պարզապես ասվել է, որ նրանք ձերբակալվում են 1978թ. օրենքի 11 (1)-րդ բաժնի ուժով, ահաբեկչության մեջ կասկածվելու հիմքով... Վերոնշյալում առկա չեն եղել ձերբակալման իրավական հիմքի չափանիշները, և այն 5-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով բավարար չի եղել...

Ինչևէ, ձերբակալումից հետո բոլոր դիմողները ոստիկանության կողմից հարցաքննվել են քրեորեն պատժելի որոշ արարքների կատարման և արգելված կազմակերպությանն անդամակցելու կասկածների վերաբերյալ... Հիմք չկա ենթադրելու, որ այս հարցաքննությունները չեն իրականացվել այնպես, որ դիմողները կարողանային հասկանալ, թե ինչու են ձերբակալվել: Ահաբեկչության մեջ նրանց կասկածելու պատճառները նրանց ուշադրությանն են ներկայացվել հարցաքննության ընթացքում:

***Դիկմին ընդդեմ Թուրքիայի (Dıkme v. Turkey), 20869/92, 11.07.2000թ.***

55. ...առաջին դիմողը... հայտարարել է, որ այն պաշտոնատար անձինք, ովքեր սկսել են հարցաքննությունը, եղել են «Հակա-ԴԱ-Սոլ» խմբի անդամ... և հարցաքննության առաջին մասի ավարտից հետո՝ մոտավորապես ժամը 19-ին, գաղտնի ծառայության անդամն սպառնացել է իրեն՝ ասելով «Դու պատկանում ես Դևրիմիցի Սոլին, և եթե մեզ անհրաժեշտ տեղեկություն չտաս, քեզ այստեղից դուրս կբերեն «ոտքերով դեպի առաջ»»…

56. Դատարանի կարծիքով, այդ հայտարարությունը ճիշտ և հստակ պատկերացում է տալիս առաջին դիմողի առնչությամբ առկա կասկածի մասին: Հետևաբար, քննարկելով տվյալ կազմակերպության հակաիրավական բնույթը և իր ինքնությունը թաքցնելու և ոստիկանությունից խուսափելու նրա պատճառները (նրա քույրը սպանվել էր ոստիկանության հետ տեղի ունեցած բախման ժամանակ...), Դատարանը գտնում է, որ պրն Դիկմին կարող էր այդ փուլում հասկանալ, որ կասկածվում է ԴԱ-Սոլի կողմից իրականացվող արգելված արարքների կատարմանը մասնակցություն ունենալու մեջ...

***Հ.Բ.-ն ընդդեմ Շվեյցարիայի (H. B. v. Switzerland), 26899/95, 05.04.2001թ.***

48. …անմիջապես իր ձերբակալության պահին՝ 1993թ. մայիսի 12-ին, դիմողը գրավոր տեղեկացվել է, որ կասկածվում է տարբեր հանցանքներ կատարելու մեջ: Ի լրումն դրա... դիմողը քննիչ դատավորի կողմից բանավոր տեղեկացվել է այն մեղադրանքների մասին, որոնք ներկայացվել են Բ ընկերությանը, և, իհարկե, նա եղել է լավատեղյակ այդ ընկերության նկատմամբ մեղադրողների հետաքրքրության մասին: Բոլոր այս տեղեկությունները դիմողին հնարավորություն են տվել իր ձերբակալման օրը ձեռագիր բողոք ներկայացնել Սոլոթուրնի կանտոնի Վերաքննիչ դատարան...

49. Հիշեցնելով, որ դիմողը հանդիսացել է Բ ընկերության կառավարչության անդամ և գործադիր տնօրեն, իրազեկ է եղել ընկերության ֆինանսական վիճակի մասին, Դատարանը գտնում է, որ իր ձերբակալման ժամանակ դիմողը պատշաճ տեղեկացված է եղել «իր ձերբակալման իրավական և փաստական հիմքերի մասին, այնպես

որ, ի վիճակի է եղել դատական կարգով վիճարկելու դրանց օրինականությունը»...

*բ. Անհապաղ*

***Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (Murray v. United Kingdom), 14310/88, 28.10.1994թ.***

76. ...բացի ձերբակալման՝ օրենքով նախատեսված ձևական հիմքերից, ձերբակալող պաշտոնատար անձը՝ Քորփորալ Դ.-ն, հայտնել է տիկին Մյուրեյին, թե նրա ձերբակալությունը 1978թ. օրենքի որ բաժնի հիման վրա է իրականացվել... Ձերբակալման իրավական հիմքերի այս նվազագույն պահանջների նշումը 5-րդ հոդվածի 2-րդ մասի նպատակների իմաստով բավարար է...

77. ...Դատարանի կարծիքով, տիկին Մյուրեյի համար պետք է ակնհայտ լիներ, որ նա հարցաքննվում է ԱՄՆ-ում իր եղբայրների կողմից Պրովիժոնալ ԻՀԲ-ի համար զենք գնելու նպատակով գումար հավաքելու գործում իր հնարավոր ներգրավվածությունը պարզելու նպատակով: Ինչպես նշվել է քննիչ դատավորի կողմից՝ «երբևէ չի եղել որևէ հարցաքննություն նրա կողմից գումար հավաքելու վերաբերյալ», սակայն, ինչպես ազգային դատարաններն են նշել, դա տեղի է ունեցել տիկին Մյուրեյի՝ իր անունը տալուց բացի որևէ հարցի պատասխանելուց ընդհանրապես հրաժարվելու պատճառով... Դատարանը, հետևաբար, գտնում է, որ նրա ձերբակալման հիմքերը հարցաքննության ընթացքում բավարար չափով ներկայացվել են նրա ուշադրությանը:

78. Տիկին Մյուրեյը ձերբակալվել է իր տանը՝ ժամը 7-ին, և հարցաքննվել է Բանակի կենտրոնում նույն օրը՝ 8:20-ից մինչև 9:35... Սույն գործի իմաստով՝ ժամանակի այս տևողությունը սահմանափակ լինելու պատճառով չի կարող գնահատվել որպես 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված անհապաղության հասկացության մեջ չտեղավորվող...

***Դիկմին ընդդեմ Թուրքիայի (Dıkme v. Turkey), 20869/92, 11.07.2000թ.***

56.…Յուրաքանչյուր դեպքում, հարցաքննության ինտենսիվությունը և հաճախականությունը նույնպես ենթադրում են, որ սկզբնական փուլում, որը (սկսվել էր 7.30-ի ձերբակալությունից մի քանի ժամ հետո և) տևել է մինչև կամ 19.00, կամ քիչ ավելի, պրն Դիկմին կարող էր հասկանալ, թե ինչում է կասկածվում… Ժամանակի սահմանափակությամբ պայմանավորված՝ 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված անհապաղությունը... պահպանվել է, քանի որ առաջին դիմողը թաքցնելով իր ինքնությունը՝ որոշ չափով նպաստել է քննարկվող ժամանակահատվածի երկարացմանը:

## 5. Առաջին անգամ դատավորի մոտ տարվելը

*ա. «Դատավոր» հասկացությունը*

***Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի** (Nikolova v. Bulgaria [GC]), 31195/95, 25.03.1999թ.*

49. ...Որպեսզի «պաշտոնատար անձը» (5-րդ հոդվածի 3-րդ մասի) իմաստով լինի «դատական իշխանությամբ» օժտված..., նա պետք է բավարարի կոնկրետ պահանջներ՝ կապված կալանավորված անձին ազատությունից ապօրինի կամ ոչ արդարացի զրկելուց պաշտպանելու երաշխիքների հետ...

Այսպիսով, «պաշտոնատար անձը» պետք է լինի անկախ մեղադրանքի և դատավարության այլ կողմերից: Այս կապակցությամբ կալանավորման վերաբերյալ որոշման կայացման օբյեկտիվ ժամանակային արտահայտումը կարևոր է. եթե պարզվում է, որ քրեական դատավարության հետագա փուլերում «պաշտոնատար անձը» կարող է հանդես գալ որպես մեղադրանքը պաշտպանող պաշտոնատար անձ, նրա անկախությունը և անկողմնակալությունը կարող է կասկածի տակ առնվել... «Պաշտոնատար անձը» պետք է լսի իր մոտ բերված անձին և իրավական չափանիշների վկայակոչմամբ հանգի այն եզրակացությանը մասին, թե կալանավորումը եղել է արդարացի, թե՝ ոչ: Ե-թե պարզվի, որ այն արդարացի չի եղել, «պաշտոնատար անձը» պետք է իրավասություն ունենա կայացնելու կալանավորին ազատ արձակելու վերաբերյալ կատարման համար պարտադիր որոշում...

50. ...1995թ. հոկտեմբերի 24-ի ձերբակալությունից հետո դիմողը տարվել է քննիչի մոտ, ով լիազորված չի եղել նրա կալանավորման վերաբերյալ կատարման համար պարտադիր որոշում կայացնել և դատավարական անկախություն չի ունեցել դատախազից: Ավելին, չի եղել որևէ իրավական խոչընդոտ՝ կապված դիմողի գործով նրա՝ որպես դատախազ մասնակցելու հետ... Քննիչը, հետևաբար, չի կարող դիտվել որպես Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով «դատական իշխանություն իրականացնելու լիազորություն ունեցող պաշտոնատար անձ»: Դիմողին չի լսել նաև դատախազը: Ամեն դեպքում, դատախազը, ով հետագայում կարող էր հանդես գալ որպես տիկին Նիկոլովայի դեմ հարուցված քրեական վարույթի կողմ..., 5-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով չի եղել բավականաչափ անկախ և անկողմնակալ...

***Հ.Բ.-ն ընդդեմ Շվեյցարիայի** (H. B. v. Switzerland), 26899/95, 05.04.2001թ.*

62. ...Դատարանը նշում է, որ երբ քննիչ դատավորը որոշում է կայացրել դիմողի ձերբակալության և կալանավորման վերաբերյալ, պարզվել է, որ եթե նրա գործն ուղարկվել է Շրջանային դատարան՝ ըստ էության քննելու համար, և քննիչ դատավորը, ով թույլատրել էր

նրա կալանավորումը, պետք է «մասնակցեր հետագա քրեական դատավարությանը՝ որպես մեղադրանքի կողմի ներկայացուցիչ»...

64. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում այն հիմքով, որ դիմողը չի տարվել «օրենքով սահմանված կարգով դատական իշխանություն իրականացնող անձի մոտ»:

*բ. Ժամկետները*

*i. Սահմանազանցող*

***Բրոգանը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (Brogan and Others v. United Kingdom), 11209/84, 11234/84, 11266/84 և 11386/84, 29.11.1988թ.***

59. Անգլերեն "promptly" և ֆրանսերեն "aussitôt" բառերով արտահայտվող պարտականությունը հստակորեն տարբերվում է 3-րդ մասի երկրորդ կետով սահմանված նվազ խիստ պահանջից… («ողջամիտ ժամկետ»/"reasonable time"/"délai raisonnable") և նույնիսկ 5-րդ հոդվածի 4-րդ մասից... («արագորեն»/"speedily"/"à bref délai") …

62. Ինչպես նշվել է վերը..., «անհապաղություն» հասկացության սահմանների ճկունությունը մեկնաբանության և կիրառության ժամանակ շատ սահմանափակ է: Դատարանի կարծիքով, նույնիսկ ազատությունից զրկելու չորս ժամկետներից ամենակարճը, այն է՝ ոստիկանությունում պրն Մաքֆադդենի՝ չորս օր վեց ժամ տևողությամբ ձերբակալությունը..., դուրս է գալիս 5-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին կետով նախատեսված ժամկետային խիստ սահմանափակումներից...: Սույն գործի առանձնահատուկ հատկանիշների վկայակոչումը՝ ի հիմնավորումն առանց դատավորի կամ դատական իշխանություն իրականացնող այլ պաշտոնատար անձի մոտ տանելու կալանավորման այսքան երկար ժամանակահատվածը, հանդիսանում է «անհապաղ» բառի անթույլատրելի լայն մեկնաբանություն: Նման մեկնաբանությունը կարող է հանգեցնել 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված... դատավարական երաշխիքների լուրջ թուլացման, վնաս պատճառել անձին և հանգեցնել այս դրույթով պաշտպանվող իրավունքի բուն էության խախտման:

Այսպիսով, Դատարանը պետք է եզրակացնի, որ դիմողներից ոչ մեկը ո՛չ «անհապաղ» տարվել է դատական իշխանություն իրականացնող պաշտոնատար անձի մոտ, ո՛չ՝ «անհապաղ» ազատ է արձակվել: Անկասկած, դիմողների ձերբակալությունը և կալանավորումը բխել են ահաբեկչությունից ամբողջ հասարակությունը պաշտպանելու իրավաչափ նպատակից, սակայն դա ինքնին բավարար չէ հավաստելու համար դրա համապատասխանությունը 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին...

***Կոստերն ընդդեմ Նիդեռլանդների (Koster v. Netherlands), 12843/87, 28.11.1991թ.***

23. Կառավարությունը պարզաբանել է, որ քննարկվող ժամանակային բացթողումները կապված են եղել հանգստյան օրերի հետ, որոնք համընկել են տվյալ ժամանակահատվածի տևողության և երկամյա գործողությունների հետ, որոնց կատարմանը ներգրավված են եղել դատարանի զինվորական անդամները:

25. …Դատարանը նշում է, որ քննարկվող գործողությունները չեն արդարացնում վարույթի ցանկացած ձգձգում. դրանք կատարվել են ժամանակային ընդմիջումներով և, հետևաբար, կանխատեսելի են եղել, դրանք որևէ կերպ չեն խոչընդոտել Զինվորական դատարանի կողմից անհրաժեշտության դեպքում նիստ հրավիրել շաբաթ կամ կիրակի օրը՝ ապահովելու համար Կոնվենցիայի պահանջների իրականացումը:

Հետևաբար, անգամ հաշվի առնելով զինվորական կյանքի և արդարադատության պահանջները..., դիմողին դատական իշխանությունների մոտ տանելը չի համապատասխանել 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված անհապաղության պահանջին...

***Ակսոյն ընդդեմ Թուրքիայի (Aksoy v. Turkey), 21987/93, 18.12.1996թ.***

77. Բրաննիգանի և ՄաքԲրայդի դատավճիռներում… Դատարանը գտել է, որ Միացյալ Թագավորության Կառավարությունը չի անցել գնահատման սահմանը՝ նվազեցնելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածով սահմանված իրենց պարտականությունները… այն ծավալով, որպեսզի ահաբեկչության հետ կապված հանցագործությունների մեջ կասկածվող անձանց մինչև յոթ օր ժամկետով թույլատրվի առանց դատական վերահսկողության պահել անազատության մեջ…

78. Թեև Դատարանը կարծում է,... որ ահաբեկչության հետ կապված հանցագործությունների քննությունն, անկասկած, որոշակի խնդիրներ է առաջացնում պաշտոնատար անձանց համար, սակայն չի կարելի ասել, որ սույն գործով անհրաժեշտ է եղել կասկածյալին քառասուն օր պահել անազատության մեջ՝ առանց դատական վերահսկողության իրավունքի տրամադրման: Այս ժամանակահատվածը չափազանց երկար է, և դիմողը թողնվել է խոցելի վիճակում ոչ միայն իր ազատության իրավունքի իրականացման անօրինական խոչընդոտման, այլ նաև նրա նկատմամբ խոշտանգումների կիրառման տեսանկյունից... Ավելին, Կառավարությունը Դատարանում չի ներկայացրել մանրամասն պատճառաբանություն այն մասին, թե ինչու Հարավարևմտյան Թուրքիայում ահաբեկչության դեմ պայքարի իրականացման շրջանակներում չի իրականացվել դատական վերահսկողություն...

82. Վերոնշյալ՝ Բրաննիգանի և ՄաքԲրայդի դատավճիռներում… Դատարանը բավարարվել է նրանով, որ Հյուսիսային Իռլանդիայում

կատարված գործողությունների ժամանակ ապահովվել են արդյունավետ երաշխիքներ, որոնք հանդիսացել են ինքնիրավ վարքագծից և ինկոմունիկադո կալանավորումից պաշտպանվելու կարևոր միջոցներ: Օրինակ՝ հաբես կորպուս ընթացակարգի միջոցով ապահովվել է ձերբակալության և կալանավորման օրինականության ստուգումը, ձերբակալությունից հետո քառասունութ ժամվա ընթացքում ապահովվել է պաշտպանի հետ տեսակցելու բացարձակ և օրինական իրավունքը և կալանավորված անձինք հնարավորություն են ունեցել տեղեկացնել բարեկամներին կամ ընկերներին իրենց կալանավորման մասին և բժշկի դիմել…

83. Ի հակառակն դրան, Դատարանը գտնում է, որ սույն գործով ոչ բավարար երաշխիքներ են տրամադրվել դիմողին, ով գտնվել է երկարատև կալանքի տակ: Մասնավորապես, փաստաբանի, բժշկի, բարեկամի կամ ընկերոջը դիմելը մերժելը և կալանավորման օրինականությունը ստուգելու համար դատարան դիմելու իրական հնարավորության բացակայությունը նշանակում է, որ նա ամբողջությամբ թողնվել է իրեն անազատության մեջ պահող անձանց հայեցողությանը:

***Հարկմանն ընդդեմ էստոնիայի (Harkmann v. Estonia), 2192/03, 11.07.2006թ.***

38. ...դիմողը, ի տարբերություն իր փաստաբանի, նախընտրել է ներկա չգտնվել Շրջանային դատարանում իր ձերբակալման հարցի քննությանը: Այս փաստն ինքնին չի ենթադրում, որ խախտվել է 5-րդ հոդվածի 3-րդ մասը, Կոնվենցիայից չի բխում, որ դատական վարույթից խուսափող անձը պետք է ներկա գտնվի իր ձերբակալման հարցի դատական քննությանը... Սակայն Դատարանը գտնում է, որ չնայած 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ նրան լսված լինելու հնարավորություն տալու պաշտոնատար անձանց պարտականությանը, դիմողը դատարանում ներկա գտնվելու հնարավորություն չի ունեցել անձնական պատճառներով, որոնք խոչընդոտել են նրա կալանավորումը 2002թ. հոկտեմբերի 2-ի ձերբակալությունից հետո:

39. Դատարանը նշում է, որ դիմողը ազատ է արձակվել 2002թ. հոկտեմբերի 17-ին, նրա նկատմամբ հարուցված քրեական գործի քննությունից հետո՝ նախքան նրա կալանավորման օրինականության հարցի քննարկումը: Մինչ այդ նա հիսուն օր պահվել է կալանավայրում: Դատարանը գտնում է, որ նման ժամանակահատվածը չի համապատասխանում 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված «անհապաղության» պահանջին...

***Կանձհովն ընդդեմ Բուլղարիայի (Kandzhov v. Bulgaria), 68294/01, 06.11.2004թ.***

65. ...5-րդ հոդվածի 3-րդ մասը պահանջում է, որ ձերբակալված անձն անհապաղ տարվի դատավորի կամ դատական իշխանություն

իրականացնող պաշտոնատար անձի մոտ՝ պարզելու համար, թե նրա նկատմամբ ցուցաբերվել է, արդյոք, վատ վերաբերմունք, կամ նվազագույնի հասցնելու նրա անձնական ազատությանը ցանկացած անօրինական միջամտություն: Քանի որ անհապաղությունը պետք է գնահատվի յուրաքանչյուր գործի առանձնահատկություններից ելնելով..., 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված այս հստակ ժամանակահատվածը թույլատրում է նեղ մեկնաբանություն, հակառակ դեպքում տեղի կունենա դատավարական երաշխիքների լուրջ խախտում՝ ի վնաս անհատի և ի խախտումն այս դրույթով սահմանվող իրավունքի բուն էության...

66. ...դիմողը տարվել է դատավորի մոտ իր ձերբակալումից երեք օր և քսաներեք ժամ հետո... Այս հանգամանքներում դա չի կարող դիտվել անհապաղ: Նա ձերբակալվել է ոչ մեծ ծանրության և ոչ բռնի հանցագործության մեղադրանքով: Նա արդեն գտնվել էր անազատության մեջ քսանչորս ժամ, երբ ոստիկանությունն առաջարկություն էր ներկայացրել դատախազին անձին կալանավորելու համար իրավասու դատարան դիմելու վերաբերյալ: Իրականացնելով իր իրավունքը...՝ դատախազը կարգադրել է դիմողին կալանավորել յոթանասուներկու ժամով՝ առանց պատճառաբանության և սահմանափակվելով այն մասին ստանդարտ ձևակերպումներով, որ առկա է նրա փախուստի կամ նոր հանցանք կատարելու վտանգ: Դրանից չի բխում, որ դիմողի կալանավորման ժամկետը երկարացնելիս դատախազը ձեռնարկել է նրան դատավորի մոտ անհապաղ տանելու՝ վերոնշյալ պահանջով սահմանված անհրաժեշտ միջոցներ... Դրա փոխարեն, գործն ուղարկվել է Փլևենի Շրջանային դատարան վերջին պահին, երբ յոթանասուներկու ժամն արդեն լրանում էր... Դատարանը որևէ բարդություն կամ բացառիկ հանգամանքներ չի տեսնում, որոնք խոչընդոտել են իշխանություններին դիմողին դատավորի մոտ հնարավորինս արագ տանելուն... Սա հատկապես կարևորվում է՝ հաշվի առնելով նրա ազատության սահմանափակման ոչ հստակ օրենսդրական հիմքերը:

67. Հետևաբար, տեղի չի ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում:

*ii. Չսահմանազանցող*

***Ռիգոպուլոսն ընդդեմ Իսպանիայի (Rigopoulos v. Spain, 37388/97 (dec.)), 12.01.1999թ.***

Դատարանը նշում է... որ դիմողը է տասնվեց օր գտնվել է կալանքի տակ, քանի որ նրա հրամանատարության տակ գտնվող նավը Ատլանտյան օվկիանոսի բաց ծովերում նավարկել է ավելի քան 5.500 կմ՝ Իսպանիայի տարածքից դեպի Լաս Փալմաս, որն անցնելու համար անհրաժեշտ է եղել ոչ պակաս, քան տասնվեց օր: Այդ կապակցությամբ դիմողն ընդունել է այն, որ անձնակազմի որոշ անդամների

դիմադրության պատճառով Արխանգելոսը չի կարողացել ծով դուրս գալ ուղևորների՝ նավ բարձրանալուց հետո քառասուներեք ժամվա ընթացքում: Այդ հետաձգումը, այնուամենայնիվ, չի կարող վերագրվել Իսպանիայի իշխանություններին: Ի վերջո, բոլոր այդ հանգամանքներն են խոչընդոտել դիմողին ավելի շուտ դատական իշխանություն իրականացնող մարմնի մոտ տանելուն: Քննարկելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ օբյեկտիվորեն անհնարին է եղել դիմողին ավելի շուտ տանել գործը քննող դատավորի մոտ: Այս կապակցությամբ Դատարանը նշում է, որ Լաս Փալմաս ժամանելուն պես դիմողն օդային ուղիով տեղափոխվել է Մադրիդ, ուստի նա դատական իշխանություն իրականացնող մարմնի մոտ է տարվել հաջորդ օրը: Դատարանն անիրական է համարում դիմողի ենթադրությունն այն մասին, որ Իսպանիայի իշխանություններն աջակցություն են խնդրել Բրիտանիայի իշխանություններից՝ Արխանգելոսը Սուրբ Հելենիե կղզու ուղղությամբ շեղելու համար, որը մոտավորապես 890 ծովային մղոն (մոտավորապես 1.600 կմ) հեռու է գտնվել այն վայրից, որտեղից նավը նավարկել է:

Այսպիսով, Դատարանը, քննարկելով սույն գործի բոլոր բացառիկ հանգամանքները, գտնում է, որ այն ժամանակահատվածը, որն ընկած է դիմողին կալանավորելու և նրան գործը քննող դատավորի մոտ տանելու միջև, չի խախտում 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված անհապաղության պահանջը:

*գ. Լսումները*

***Դե Ջոնգը, Բալջեթը և Վան Դեն Բրինկն ընդդեմ Նիդեռլանդների (De Jong, Baljet and Van Den Brink v. Netherlands), 8805/79, 8806/79 և 9242/81, 22.05.1984թ.***

51. …3-րդ կետը... («պետք է անհապաղ տարվի»), անհրաժեշտ է ընկալել դրա օբյեկտի և նպատակի լույսի ներքո՝ պահպանելով պարտադիր «դատավարական պահանջները». «դատավորը» կամ դատական իշխանություն իրականացնող «պաշտոնատար անձը» պետք է իրականում լսի կալանավորված անձին և կայացնի համապատասխան որոշում...

***Մամեդովան ընդդեմ Ռուսաստանի (Mamedova v. Russia), 7064/05, 01.06.2006թ.***

81. Տարօրինակ է նաև այն, որ 2005թ. փետրվարի 22-ի որոշման մեջ շրջանային դատարանը նշել է, որ չի պահանջվում, որ դատարանը լսի կողմերի կարծիքը կալանքի ժամկետը երկարացնելու անհրաժեշտությունը հիմնավորող՝ դատախազի ներկայացրած նյութերի վերաբերյալ: Այս կապակցությամբ դատարանը հիշեցնում է, որ 5-րդ - հոդվածի 3-րդ մասը պարտավորեցնում է «պաշտոնատար անձանց» լսել կասկածյալին, հետազոտել նախնական կալանքի վերաբերյալ

բոլոր փաստերը և կալանքի մասին որոշման մեջ շարադրել այդ որոշման համար հիմք հանդիսացած փաստերը… Ուստի՝ առանց դիմողի դիրքորոշումը լսելու, առանց դատախազի կողմից ներկայացված նյութերը մեկնաբանելու հնարավորություն տալու և ազատ արձակելը հիմնավորող՝ դիմողի բերած փաստարկները հաշվի առնելու՝ նրա կալանքի ժամկետի երկարացումն անհամատեղելի է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված երաշխիքների հետ:

*դ. Որոշման էության հնքնաբերաբար քննության անհրաժեշտությունը*

***Թ.Վ.-ն ընդդեմ Մալթայի (T. W. v. Malta), 25644/94 [GC], 25.04.1999թ.***

43. Ի լրումն անհապաղ տարվելուն, կալանավորման նկատմամբ դատական վերահսկողությունը պետք է լինի հնքնաբերաբար... Այն չի կարող իրականացվել՝ հիմնվելով կալանավորված անձի նախկին դիմումի վրա: Նման պահանջը ոչ միայն կփոխի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված երաշխիքը, երաշխիք, որը տարբերվում է 5-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվածից՝ դատարանի կողմից կալանավորման օրինականության նկատմամբ վերահսկողության վարույթի սահմանման իրավունքը նախատեսող երաշխիքից... Դա կարող է նույնիսկ հակասել 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված նպատակներին, որոնք կոչված են պաշտպանելու անձին անօրինական կալանավորումից՝ ամրագրելով, որ ազատության սահմանափակման հետ կապված ակտն անկախ դատական քննության առարկա է հանդիսանում... Կալանավորման անհապաղ դատական վերանայումը նույնպես հանդիսանում է կարևոր երաշխիք կալանքի վերցված անձի նկատմամբ վատ վերաբերմունք դրսևորելու դեմ... Ավելին, ձերբակալված անձինք, ովքեր նման վերաբերմունքի զոհ են դարձել, կարող են ունակ չլինել կալանավորման դատական վերանայման դիմում ներկայացնել...

*ե. Ազատ արձակելու իրավասության անհրաժեշտությունը*

***Թ.Վ.-ն ընդդեմ Մալթայի (T. W. v. Malta), 25644/94 [GC], 25.04.1999թ.***

48. …Դատարանը գտնում է, որ դիմողին 1994թ. հոկտեմբերի 7-ին մագիստրատներին ներկայացնելը չի համապատասխանում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասին, քանի որ մագիստրատներն իրավասու չեն եղել նրան ազատ արձակելուն: Հետևաբար, տեղի է ունեցել այդ պահանջի խախտում:

***Մաքքեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (McKay v. United Kingdom [GC]), 543/03, 03.10.2006թ.***

31. 5-րդ հոդվածի 3-րդ մասը՝ որպես այս երաշխիքներով նախատեսված սահմանների մաս, կառուցվածքային առումով վերաբերում է երկու տարբեր հարցի՝ ձերբակալությանը հաջորդող վաղ փուլերին, որոնց ընթացքում անձը գտնվում է իշխանության ներկայացուցիչների տրամադրության տակ, և քրեական դատարանում գործի դեռևս չավարտված վերջնական քննությանը, որի ընթացքում կասկածյալը կարող է որևէ պայմանով կամ առանց դրա կալանավորվել կամ ազատ արձակվել: Ավարտի այս երկու ձևն էլ ենթադրում են հստակ իրավունքների առկայություն և տրամաբանորեն կամ ժամանակային առումով կապված չեն...

48. Դատարանը կրկնում է, դիմողը ձերբակալվել է 2001թ. հունվարի 6-ին ժամը 22-ին՝ բենզալցակայանում գողություն կատարելու կասկածանքով: Նրան մեղադրանք է առաջադրվել հաջորդ օրը ժամը 12.37-ին: 2001թ. հունվարի 8-ին ժամը 10-ին դիմողն առաջին անգամ տարվել է մագիստրատների դատարան, որը կալանավորումն անփոփոխ է թողել: Անկասկած, մագիստրատներն ունեցել են իրավասություն քննելու ձերբակալության կամ կալանավորման օրինականությունը և հիմնավոր կասկածի առկայությունը, և ավելին, այն իրավասու էր ազատ արձակելու մասին որոշում կայացնել, եթե այդ պահանջները պահպանված չլինեին: Վերոնշյալը նախատեսում է բավարար երաշխիքներ իշխանության ներկայացուցիչների կողմից իրենց լիազորությունների չարաշահման դեմ և 5-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին կետին համապատասխանության վերաբերյալ, քանի որ իրականացվել է անհապաղ, ինքնաբերաբար և դատական իշխանություն իրականացնելու իրավասություն ունեցող մարմնի կողմից:

49. Չավարտված վարույթով ազատ արձակելու հարցը հանդիսացել է առանձին և տարբերվող երևույթ է, որը տրամաբանորեն է դարձել գործին առնչություն ունեցող միայն այն բանից հետո, երբ սահմանվել են կալանավորման օրինական և կոնվենցիոն հիմքերը: Դիմողի գործով դա կատարվել է 24 ժամ հետո՝ 2001թ. հունվարի 9-ին, Բարձրագույն դատարանի կողմից, որը որոշում է կայացրել նրան ազատ արձակելու մասին: Հնարավոր չարաշահման կամ ինքնիրավչության վերաբերյալ որևէ տարր չի բխում այն փաստից, որ դա եղել է այլ դատարան կամ դատավոր, կամ նրանից, որ գործի քննությունը հիմնված է եղել նրա դիմումի վրա: Դիմողի փաստաբանն այդ բողոքը ներկայացրել է առանց որևէ խոչընդոտի կամ դժվարության...

51. Հետևաբար, տեղի չի ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում:

### 6. Կալանավորումը պատճառաբանելու պարտականությունը

***Քուրտն ընդդեմ Թուրքիայի (Kurt v. Turkey), 24276/94, 25.05.1998թ.***

123. Պետք է շեշտել նաև այն, որ Կոնվենցիայի հեղինակներն ամրագրել են անձի պաշտպանությունն ազատության ապօրինի սահմանափակումներից՝ նախատեսելով իրավունքներ, որոնք պետք է նվազեցնեն ազատության ապօրինի սահմանափակումները՝ թույլատրելով անկախ դատական քննության իրականացումը և ապահովելով պաշտոնատար անձանց պատասխանատվությունն անձին ազատությունից զրկելու համար... Կարևորվում է ինչպես անձանց ֆիզիկական ազատությունը, այնպես էլ նրանց անձնական անվտանգությունը, քանի որ համապատասխան երաշխիքների բացակայության պայմաններում այն կարող է հանգեցնել օրենքի գերակայության խաթարման և զրկել կալանավորին իրավական պաշտպանության տարրական ձևերից:

124. ...անձի չհիմնավորված կալանավորումը հանդիսանում է այս երաշխիքների ամբողջական ժխտում և 5-րդ հոդվածի լուրջ խախտում: Ենթադրվում է, որ անձի նկատմամբ հսկողության իրականացումը դրված է պաշտոնատար անձանց վրա, ովքեր պարտավոր են տեղյակ լինել նրանց գտնվելու վայրի մասին: Այս պատճառով, 5-րդ հոդվածը պետք է դիտվի որպես պաշտոնատար անձանց կողմից արդյունավետ միջոցների կիրառում պահանջող, որոնք կնվազեցնեն անձի փախուստի ռիսկը և կապահովեն վիճարկվող հարցի արագ և արդյունավետ քննությունը, որի հիման վրա անձը կալանավորվել է, և այդ ժամանակից ի վեր անհայտացել է:

125. Հակառակ վերոգրյալին՝ Դատարանը կրկնում է, որ Հանձնաժողովի որոշման համաձայն՝ Ուզեուիր Քուրտը բռնվել է զինվորների և գյուղի պահակախմբի կողմից 1993թ. նոյեմբերի 25-ի առավոտյան: Այդ ժամանակ նրա կալանավորումը չի արձանագրվել և չի իրականացվել որևէ պաշտոնական հետաքննություն նրա հետագա գտնվելու վայրը կամ ճակատագիրը պարզելու համար: Այդ փաստն ինքնին պետք է դիտվի լուրջ խախտում, քանի որ նշված հոդվածը սահմանում է նրանց պատասխանատվությունն ազատության սահմանափակման համար՝ նպատակ ունենալով թաքցնել նրանց ներգրավվածությունը հանցանքի կատարման մեջ, ծածկել նրանց հետքերը և խուսափել կալանավորի ճակատագրի համար պատասխանատվությունից: Դատարանի կարծիքով, անձին ազատությունից զրկելու արձանագրության մեջ այնպիսի տվյալների բացակայությունը, ինչպիսիք են՝ ամսաթիվը, ժամը և տեղը, կալանավորվողի անունը, ինչպես նաև կալանավորման պատճառները և այն իրականացնող անձի անունը, պետք է դիտվի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի նպատակներին չհամապատասխանող:

## 7. Պայմանները և վատ վերաբերմունքը

***Թոմազիի ընդդեմ Ֆրանսիայի (Tomasi v. France), 12850/87, 27.08.1992թ.***

115. Դատարանի... կարծիքով բավարար է հետևել, որպեսզի բժշկական հավաստագրերը և զեկուցագրերը կազմվեն պրակտիկ բժիշկների անկախության պայմաններում, և դրանցով սահմանվի պրն Թոմազիին հասցված հարվածների բազմաթիվությունը և ուժգնությունը. նշվածներն այն երկու տարրերն են, որոնք բավականաչափ լուրջ են նման վերաբերմունքն անմարդկային և նվաստացնող ներկայացնելու համար: Նախնական քննության պահանջները և հանցավորության դեմ պայքարում առկա անժխտելի դժվարությունները՝ կապված մասնավորապես ահաբեկչության հետ, չեն կարող հանգեցնել անձանց ֆիզիկական անձեռնմխելիության պաշտպանության վրա դրվող սահմանափակումների...

116. Հետևաբար, այս առումով եղել է 3-րդ հոդվածի խախտում…

***Էլսին և այլոք ընդդեմ Թուրքիայի (Elci and Others v. Turkey), 23145/93, 13.11.2003թ.***

641. Դատարանը գտնում է, որ վստահելի և ամբողջական են դիմողների ցուցմունքներն իրենց կալանավորման սարսափելի պայմանների՝ ցրտի, մթության և խոնավության, ոչ պատշաճ անկողնու, սննդի և հիգիենային պարագաների վերաբերյալ, ինչպես հայտարարություններում նշվում է նաև... նրանց վիրավորել, ստորացրել, ծեծել և սարսափեցրել են՝ պարտադրելով ստորագրել իրենց առջև դրվող յուրաքանչյուր փաստաթուղթ: Բացի դրանից, Դատարանն ընդունում է, որ այնպիսի առանցքային պահերի, ինչպիսիք եղել են պրն Գուվենի հետ հարցաքննությունները և առերեսումները, դիմողների աչքերը կապված են եղել:

646. …Դատարանը գտնում է, որ դիմողները... 1993թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների իրենց կալանավորման ընթացքում տառապել են ոստիկանների կողմից գործադրված ֆիզիկական և հոգեկան բռնություններից: Նման վատ վերաբերմունքի արդյունքում նրանց պատճառվել է ցավ և տառապանք, որը եղել է հատկապես լուրջ և դաժան և դրանով խախտվել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի: Հետևաբար, այն պետք է դիտվի որպես խոշտանգում՝ այդ հոդվածի իմաստով:

***Սկավուցո Հագերն ընդդեմ Շվեյցարիայի (Scavuzzo-Hager v. Switzerland), 41773/98, 07.02.2006թ.***

67. …Դատարանի համար համոզիչ չէին դիմողների հիմնավորումները: Հիշեցնենք, որ երկու ոստիկաններն անմիջապես կանչել էին շտապ օգնություն և Պ.-ին տեղափոխել ավելի անվտանգ վայր: Դատարանը կասկածում է, որ նրանք կարող էին սպասել այդպիսի

իրավիճակում, որպեսզի համապատասխան ծառայության աշխատակիցներն այլ միջոցներ ձեռնարկեին:

68. Բացի դրանից, Դատարանը հավաքելով ֆեդերալ դատարանի կողմից պահանջված դատաբժշկական փորձաքննության եզրակացությունները, համաձայն որի վերակենդանացումը դժվար է եղել ոչ մասնագետների համար և հաջողության հասնելու հավանականությունը շատ քիչ է եղել, միևնույն, է դա չէր կարող հիմք հանդիսանալ Պ-ի մահվան համար: Դրանից տրամաբանորեն հետևում է, որ մենք տվյալ գործում չենք տեսնում այնպիսի իրավիճակ, որի պարագայում պետության կատարած դրական գործողությունները, անկասկած, նվազեցնում են մահվան անմիջական և իրական վտանգը:

69. Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Դատարանը գտնում է, որ ոստիկանները չեն թերացել Պ.-ի կյանքը պաշտպանելիս:

Այս առումով չկա Կոնվենցիայի 2-րդ հոդվածի դրույթների խախտում:

### 8. Արտաքին շփումները

***Սադակն ընդդեմ Թուրքիայի (Sadak v. Turkey), 25142/94 և 27099/95, 08.04.2004թ.***

39. Դիմողը բողոքարկում է, որ Կոնվենցիայի երրորդ հոդվածի առումով նա իր ձերբակալման 11 օրերի ընթացքում որևէ կապ չի ունեցել արտաքին աշխարհի հետ:

45. Դատարանը չի բացառում ձերբակալման չափազանց երկար ժամկետը, որի ընթացքում ձերբակալվածը եղել է շատ խիստ պայմաններում և նրա նկատմամբ ցուցաբերվել է երրորդ հոդվածի դրույթներին հակասող վերաբերմունք:

46. Իրականում Դատարանը գտնելով, որ դիմողը ձերբակալման ընթացքում ոչ թե գտնվել է հոգեկան մեկուսացման մեջ, այլ՝ պարզապես սոցիալական մեկուսացման մեջ: Ճիշտ է այն, որ նա ձերբակալման ընթացքում չի կարողացել շփում ունենալ արտաքին աշխարհի հետ, սակայն նա շփվել է այլ ձերբակալված անձանց և ձերբակալման վայրի աշխատակիցների հետ: Բացառելով դիմողի ցանկացած հարցաքննություն, այս ձերբակալումը դիտվում է որպես երկարացված ոտնձգություն, որի մասին մագիստրատը չի տեղեկացվել:

47. Ոտնձգության այս ժամկետը չափազանց երկար չէր, որպեսզի անդրադառնար դիմողի անձի վրա: Արդյունքում, Դատարանը գտնում է, որ միայն դիմողի ձերբակալումը չի կարող համարվել ոտնձգություն, այլ անհրաժեշտ են նաև այլ հանգամանքներ, որպեսզի այն դիտվի անմարդկայինն և նվաստացնող վերաբերմունք՝ երրորդ հոդվածի իմաստով:

Հետևաբար, այս առումով չկա տվյալ դրույթի խախտում:

## III. ԿԱԼԱՆՔ

### 1. Իրավական հիմքերը

***Ժեսիուսն ընդդեմ Լիտվայի** (Jėčius v. Lithuania), 34578/97, 31.07.2000թ.*

62. …Դատարանը կրկնում է, որ կալանավորումը կարգավորող հստակ կանոնների բացակայության պատճառով անձին առանց իրավական հիմքի կալանքի տակ պահելու պրակտիկան, որը հանգեցրել է անորոշ ժամկետով, առանց դատական վերահսկողության նրա ազատության սահմանափակման, չի համապատասխանում իրավական որոշակիության և անօրինականություններից պաշտպանության սկզբունքին, որոնք կարմիր թելով անցնում են Կոնվենցիայի և օրենքի գերակայության պահանջների միջով...

***Բոիցենկոն ընդդեմ Մոլդովայի** (Boicenco v. Moldova), 41088/05, 11.07.2006թ.*

151. Կառավարությունը վկայակոչել է Քրեական դատավարության օրենսգրքի մի քանի բաժիններ, որոնք, նրա կարծիքով, 2005թ. հուլիսի 23-ի կալանավորման թույլտվության ժամկետի ավարտից հետո ձևավորել են դիմողի կալանավորման իրավական հիմքը …

152. Վերլուծելով այս բաժինները՝ Դատարանը նշում է, որ դրանցից ոչ մեկը հնարավորություն չէր տալիս առանց կալանավորման թույլտվության կալանավորել դիմողին: Ավելին, նույնիսկ ենթադրելով, որ Կառավարության կողմից վկայակոչված դրույթներից որևէ մեկը նախատեսում է կալանավորման նման հնարավորություն, դա կհակասեր Սահմանադրության 25-րդ հոդվածին, որը հստակորեն սահմանում է, որ կալանավորումը հնարավոր է միայն թույլտվության հիմքով և չի կարող տևել 30 օրից ավելի: Սա հաստատվում է Քրեական դատավարության օրենսգրքի 177-րդ բաժնի դրույթներով… որոնք կրկնում են Սահմանադրության 25-րդ հոդվածի դրույթներն այն մասին, որ կալանավորումը կարող է իրականացվել միայն դատարանի կարգադրության հիման վրա:

153. Վերոգրյալից հետևում է, որ դիմողի կալանավորումը նրա՝ 2005թ. հուլիսի 23-ի կալանավորման թույլտվության ժամկետի ավարտից հետո, հիմնված չի եղել իրավական դրույթների վրա:

***Գուսինսկին ընդդեմ Ռուսաստանի** (Gusinskiy v. Russia), 70276/01, 19.05.2004թ.*

66. Ինչ վերաբերում է համաներմանը, Դատարանը կրկնում է, որ կալանավորման «օրինականությունը» ըստ էության նշանակում է համապատասխանություն ազգային իրավունքին...

67. Կառավարությունն ընդունել է, որ Համաներման ակտի հիման վրա գործը քննող պաշտոնատար անձը պետք է դադարեցներ

դիմողի դեմ հարուցված վարույթն, այն պահին, երբ իմացել էր, որ դիմողը ղեկավարել է Ազգերի ընկերության կարգը: Թեև Կառավարությունը պնդել է, որ գործը քննող պաշտոնատար անձն այդ փաստի մասին առաջին անգամ իմացել է 2000թ. հունիսի 16-ին, այն չի ժխտել, որ գործը քննող պաշտոնատար անձը համաներում շնորհելու վերաբերյալ տեղեկությունը մուտքագրել է 1999թ. նոյեմբերի 2-ի և 2000թ. հունիսի 14-ի հարցաքննությունների արձանագրություններում: Հետևաբար, Դատարանը գտնում է, որ մինչև 2000թ. հունիսի 13-ը պաշտոնատար անձինք գիտեին կամ ենթադրվում է, որ պետք է իմանային, որ դիմողի դեմ հարուցված քրեական վարույթը պետք է կարճվի:

68. Դատարանը համաձայն է դիմողի հետ, որ ոչ ռացիոնալ կլիներ Համաներման ակտը մեկնաբանել որպես կալանավորումն անփոփոխ թողնելը թույլատրող այն անձի նկատմամբ, որի դեմ հարուցված բոլոր քրեական վարույթները պետք է կարճվեն: Այսպիսով, տեղի է ունեցել ազգային իրավունքի խախտում:

69. Հետևաբար, այս կապակցությամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտում:

**2. Իրավաչափությունը**

*ա. Անհրաժեշտության դեպքում քննարկելու պարտականությունը*

***Լետելյեն ընդդեմ Ֆրանսիայի (Letellier v. France), 12369/86, 26.06.1991թ.***

35. Առաջին հերթին ազգային դատական իշխանությունները պետք է ստուգեին, թե սույն գործով կասկածյալի կալանավորումը չի գերազանցել, արդյոք, ողջամիտ ժամկետը: Այս նպատակով նրանք պետք է քննարկեին հասարակական շահի իրական պահանջի առկայությունը, վիճարկող բոլոր փաստերը, որոնք, հաշվի առնելով անմեղության կանխավարկածի սկզբունքը, կհիմնավորեին անձնական ազատության իրավունքի սահմանափակումը և վերոնշյալ փաստերն ազատ արձակման դիմումի վերաբերյալ որոշման հիմքում դնելը:

*բ. Հանցանքի հստակ ապացուցված լինելու անհրաժեշտության բացակայությունը*

***Ֆեռարի-Բրավոն ընդդեմ Իտալիայի (Ferrari-Bravo v. Italy), 9627/81, 14.03.1984թ., DR 37, 15***

Տե՛ս վերը՝ **II.2**

*գ. Հատուկ հիմնավորման անհրաժեշտությունը*

***Բոիցենկոն ընդդեմ Մոլդովայի (Boicenco v. Moldova), 41088/05, 11.07.2006թ.***

143. Սույն գործով Դատարանը նշում է, որ ինչպես առաջին ատյանի, այնպես էլ Վերաքննիչ դատարանները, թույլատրելով դիմողի կալանավորումը և դրա երկարացումը, հիմք են ընդունել գործով կիրառման ենթակա օրենքը՝ առանց ցույց տալու, թե ինչու դրանք կարող են դիտվել որպես հիմնավորում այն պնդման, որ դիմողը կարող է խոչընդոտել վարույթին, փախուստի դիմել կամ նոր հանցանք կատարել…

144. …Դատարանը գտնում է, որ այն պատճառները, որոնց վրա իրենց որոշումներում հիմնվել են Բուիուկանիի Շրջանային և Չիսինաուի Վերաքննիչ դատարանները, և որոնք վերաբերել են դիմողի կալանավորմանը և դրա երկարացմանը, չեն եղել «հիմնավոր և բավարար»:

145. Հետևաբար, այս կապակցությամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում:

***Մամեդովան ընդդեմ Ռուսաստանի (Mamedova v. Russia), 7064/05, 01.06.2006թ.***

80. Այնուհետև, Դատարանը նկատում է, որ դիմողի կալանքի ժամկետը երկարացնելու մասին որոշումներում հաշվի չի առնվել նրա անձնական վիճակը: Որոշումների մեծ մասում ներպետական դատարաններն օգտագործել են միևնույն համառոտ բանաձևը և ստանդարտ ձևակերպումը: Իսկ մարզային դատարանի՝ 2005թ. հուլիսի 19-ի և օգոստոսի 2-ի որոշումներում դիմողի կալանքի ժամկետի երկարացման ոչ մի հիմք չի մատնանշվել: Դրանցում միայն նշվել է, որ «դիմողը պետք է մնա կալանքի տակ»: Ավելի զարմանալի է այն, որ մինչ այդ ժամանակը դիմողն արդեն կալանքի տակ էր պահվել մեկ տարի, նախնական քննությունն ավարտվել էր և գործն ուղարկվել դատարան:

***Հուսեյն Էսենն ընդդեմ Թուրքիայի (Hüseyın Esen v. Turkey), 49048/99, 08.08.2006թ.***

77. Նույնիսկ Դատարանի կարծիքով այսպիսի ապացույցների ամբողջությունը կարող է դիտվել որպես մեղավորությունը հաստատող փաստեր, և ընդհանրապես այս հանգամանքները կարող են լինել արժանահավատ, բայց միայն դրանք բավարար չեն այսքան երկար ժամանակ վիճահարույց կերպով կալանքի տակ պահելը հիմնավորելու համար...

***Բիկովն ընդդեմ Ռուսաստանի (Bykov v. Russia [GC]), 4378/02, 10.03.2009թ.***

65. ...դիմողը նախքան իր գործի դատական քննությունը և դրանից հետո կալանքի տակ է եղել մեկ տարի ութ ամիս և 15 օր: Այս ժամանակահատվածում դատարանները մոտ տասն անգամ քննել են դիմողի՝ իրեն ազատ արձակելու վերաբերյալ դիմումը, յուրաքանչյուր անգամ մերժելով այն մեղադրանքի ծանրության, նրա փախուստի, արդարադատության իրականացմանը խոչընդոտելու և վկաների վրա ներգործություն ունենալու հավանականության հիմքով: Ինչևէ, դատական որոշումները միայն թվարկել են այս հիմքերը և դրանք չեն պատճառաբանել հիմնավոր և բավարար փաստերով: Դատարանը նաև նշում է, որ տարբեր ժամանակներում դատարանի պատճառաբանությունը չի փոփոխվել՝ արտացոլելու համար զարգացող իրավիճակը և ստուգելու, թե այս հիմքերն արդյոք շարունակել են առկա լինել վարույթի հետագա փուլերում: Ավելին, 2001թ. սեպտեմբերի 7-ից սկսած՝ դիմողի կալանավորումը երկարացնելու վերաբերյալ որոշումներում չի նշվել որևէ ժամկետային սահմանափակում՝ այդպիսով ենթադրելով, որ նա կալանքի տակ է մնալու մինչև դատաքննության ավարտը:

66. Քննարկելով Կառավարության փաստարկն այն մասին, որ գործի հանգամանքները և դիմողի անձն ակնհայտորեն արդարացրել են նրա կալանավորումը՝ Դատարանը չի գտնում, որ սա ինքնին ազատել է դատարաններին այս եզրակացությանը հանգելու համար անհրաժեշտ պատճառների վերհանման պարտականությունից, դա վերաբերում է նաև հետագա փուլերում կայացված որոշումներին: Դատարանը կրկնում է, որ իրականում կարող է առկա լինեին անձի կալանավորումը հիմնավորող հանգամանքներ, սակայն դրանք չեն հիշատակվել ներպետական որոշումներում, և Դատարանի խնդիրը չէ պարզել դրանց առկայությունը և այդպիսով կատարել ազգային իշխանությունների դերը, ովքեր պետք է կանոնակարգեին դիմողի կալանավորումը...

67. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ իշխանությունները չեն ներկայացրել հիմնավոր և բավարար պատճառներ անավարտ վարույթով դիմողի կալանավորումը մեկ տարի ութ ամիս և տասնհինգ օր անփոփոխ թողնելը հիմնավորելու համար:

*դ.Հանցանքի ծանրության և հնարավոր պատժի բավարար չլինելը*

***Մամեդովան ընդդեմ Ռուսաստանի (Mamedova v. Russia), 7064/05, 01.06.2006թ.***

74. Հետազոտելով դիմողի կալանքի երկարացման օրինականությունը և հիմնավորվածությունը՝ շրջանային և մարզային դատարանները համառորեն վկայակոչել են մեղադրանքի ծավալը՝ որպես դիմողի կողմից փախուստի դիմելու, ճշմարտության բացահայտմանը խոչընդոտելու կամ նոր հանցանք կատարելու հավանական հնարավորության գնահատման հիմնական չափանիշ: Այդուհանդերձ, Դա-

տարանը բազմիցս նշել է, որ թեև անձին սպառնացող պատժի խստությունը հանդիսանում է փախուստի դիմելու կամ նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելու կարևոր տարր, ազատությունից զրկելը երկարաձգելու անհրաժեշտությունը չի կարող գնահատվել բացառապես վերացական տեսանկյունից՝ հաշվի առնելով միայն հանցագործության ծանրությունը: Կալանքի ժամկետը չի կարող երկարացվել նաև ազատությունից զրկելու հետ կապված պատժի նշանակում կանխատեսելու պատճառով… Դա հատկապես ճշմարիտ է այնպիսի գործերով, ինչպիսին տվյալ գործն է, երբ փաստերի իրավական որակումը և, այդպիսով՝ սպասվող պատիժը, որոշել է մեղադրանքի կողմը՝ առանց այն հարցի նկատմամբ դատական վերահսկողության, թե հավաքված ապացույցներն առաջացրե՞լ են, արդյոք, հիմնավոր կասկած առ այն, որ դիմողը կատարել է մեղսագրվող հանցագործությունը, թե՝ ոչ…

*ե. Հիմնավոր կասկած*

***Լաբիտան ընդդեմ Իտալիայի (Labita v. Italy [GC]), 26772/95, 06.04.2000թ.***

159. …Թեև կասկածյալը կարող է իրավաչափորեն կալանավորվել վարույթի սկզբում *pentiti*-ի առկայության հայտարարության հիման վրա, սակայն նման հայտարարությունը, անխուսափելիորեն, ժամանակի ընթացքում դառնում է նվազ հիմնավոր, հատկապես, եթե նոր ապացույց ձեռք չի բերվել նախնական քննության ընթացքում:

160. Սույն գործով Դատարանը նշում է, որ ինչպես Տրափանիի Շրջանային և Պալերմոյի Վերաքննիչ դատարանները նշել են դիմողի արդարացման որոշումներում, չի ներկայացվել որևէ ապացույց, որը կհիմնավորեր իր լսածը վերարտադրող Բ.Ֆ.-ի ցուցմունքը: Ի հակառակն դրան, Բ.Ֆ.-ի հիմնական, թեև անուղղակի տեղեկատվության աղբյուրը, որը մահացել էր 1989թ., լսել էր դա մեկ այլ անձից, որն սպանվել էր նախքան հարցաքննվելը: Բացի դրանից, Բ.Ֆ.-ի հայտարարություններն արդեն հերքվել են նախնական քննության ընթացքում մեկ այլ *pentiti*-ի կողմից, որն ասել է, որ իրենք դիմողին չեն ճանաչում...

161. Այս հանգամանքներում շատ անհերքելի պատճառներ անհրաժեշտ կլինեին դիմողի երկարատև կալանավորումը (երկու տարի և յոթ ամիս) 5-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով հիմնավոր դիտելու համար:

***Պունզելթն ընդդեմ Չեխիայի Հանրապետության (Punzelt v. Czech Republic), 31315/96, 25.04.2000թ.***

74. Դատարանը նշում է, որ դիմողին ներկայացված մեղադրանքները հիմնված են եղել այն փաստի վրա, որ նա 891.412 և 682.139 գերմանական մարկ (DEM) արժողությամբ երկու չեկ, որպես երաշ-

խավորություն, դեպոզիտ է թողել երկու հանրախանութների վաճառքի վերաբերյալ բանակցությունների ժամանակ, և որ անշարժ գույք վաճառողը չի կարողացել դրամի փոխանակել չեկերը, քանի որ դրանք ապահովված են եղել: Այս հանգամանքներում Դատարանը գտնում է, որ առկա է եղել հիմնավոր կասկած այն մասին, որ դիմողը կատարել է հանցագործություն:

***Ն.Ս.-ն ընդդեմ Իտալիայի (N.C. v. Italy), 24952/94, 11.01.2001թ.***

47. Դիմողը չի վիճարկում այն, որ իշխանություններն իրենց տրամադրության տակ ունեցել են որոշ փաստեր, որոնք ենթադրել են նրա պատասխանատվությունը, սակայն ներկայացրել է փաստական տվյալներ ի հիմնավորումն այն բանի, որ իր մեղքի հիմնավորումները կարող էին հեշտությամբ ժխտվել, եթե փաստերն ավելի մանրամասն ուսումնասիրվեին: Դատարանը գտնում է, որ ամեն դեպքում իր խնդիրը չէ որոշել, թե այս փաստերը, որոնք վերաբերում են մեղադրանքի էությանը, պետք է, արդյոք, իշխանությունների կողմից կալանքի թույլտվության հիմնավորման ժամանակ իմացվեին և ուսումնասիրվեին ավելի խորությամբ: Նրա խնդիրն է ուսումնասիրել, թե այն փաստերը, որոնցով որոշման կայացման ժամանակ ղեկավարվել են իշխանությունները, ողջամտորեն բավարար եղել են հավաստելու համար, որ նա հանցագործություն է կատարել: Դատարանն ուսումնասիրել է այս փաստերը և չի հայտնաբերել դրանց հիման վրա իշխանությունների կողմից արված որևէ ակնհայտ չպատճառաբանված կամ աննօրինական եզրակացություն: Այսպիսով, երևում է, որ չկա կասկածի պատճառ առ այն, որ այն փաստերը, որոնք իշխանությունները քննարկել են այդ ժամանակ, բավարար են եղել հավաստելու, որ դիմողը հանցագործություն է կատարել:

**Այս հարցը չի ներառվել Մեծ պալատի 2002թ. դեկտեմբերի 18-ի դատավճռում:*

*զ. Թաքնվելու վտանգը*

***Վ.-ն ընդդեմ Շվեյցարիայի (W. v. Switzerland), 14379/88, 26.01.1993թ.***

33. Դատարանը նշում է, որ թաքնվելու վտանգը չի կարող գնահատվել բացառապես հնարավոր պատժի խստության լույսի ներքո. այն պետք է որոշվի մի շարք այլ հարակից գործոնների վկայակոչմամբ, որոնք կարող են կամ հաստատել թաքնվելու վտանգի առկայությունը, կամ դա ներկայացնել այնքան թույլ գործոն, որը չի կարող հիմնավորել նախնական կալանավորումը… Այս ենթատեքստում պետք է դիտարկվեն, մասնավորապես, քրեական դատավարության մեջ ներգրավված անձի բնավորությունը, նրա բարոյականությունը, ունեցվածքը, կապերն այն Պետության հետ, որտեղ նրան մեղադրանք է առաջադրվել և նրա միջազգային կապերը…

Իրենց հանգամանորեն պատճառաբանված որոշումներում Բերնեսիի դատարանները հիմնվել են դիմողի իրավիճակի առանձնահատուկ բնութագրերի վրա. իր նստավայրը Շվեյցարիայից Մոնտե Կառլո տեղափոխելուց հետո նա հաճախ այցելել է Գերմանիա, Անգլիա, Միացյալ Նահանգներ և Անգուիլլայի կղզի (որտեղ ենթադրվում է, որ նա բանկ ունի). այսպիսով նա հաստատել է բազմաթիվ սերտ հարաբերություններ օտարերկրյա պետությունների հետ: Բացի դրանից, տարբեր առիթներով նա նշել է, որ ցանկանում է գնալ և ապրել Միացյալ Նահանգներում: Առկա են հստակ նշումներ այն մասին, որ նա իր երկրից դուրս իր տրամադրության տակ դեռևս ունի մեծ ֆոնդեր և մի քանի տարբեր անձնագրեր: Լինելով միայնակ մարդ, որը շփումների կարիք չունի՝ նա որևէ դժվարություն չի ունենա գաղտնի ապրել Շվեյցարիայից դուրս:

Դաշնային դատարանը... ընդունել է, որ թաքնվելու վտանգը նվազում է կալանավորման ժամկետի երկարացման հետ մեկտեղ... Ինչևէ, այն գտնում է, որ պետական մեղադրանքի կողմի նշած գործոնները որևէ իրական կասկած չեն թողնում Վ.-ի թաքնվելու մտադրության վերաբերյալ և կարող են իրավաչափորեն բավարար լինել ցույց տալու համար, որ նման վտանգը դեռ առկա է:

Դատարանը չունի պատճառ այլ եզրակացության հանգելու համար:

***Ի. Ա.-ն ընդդեմ Ֆրանսիայի (I. A. v. France), 28213/95, 23.09.1998թ.***

105. ...իրավասու դատարանները նշել են, որ ազատ արձակվելու դեպքում առկա է եղել դիմողի թաքնվելու վտանգը... հիմնված առավելապես Լիբանանի հետ դիմողի կապերի, որոշ դեպքերում՝ նրա «վարքագծի»... և այն պատժի վրա, որը նրա նկատմամբ կարող էր նշանակվել...

Սրանք անժխտելի հանգամանքներ են, որոնք ենթադրում են փախուստի վտանգի առկայություն, և գործում առկա ապացույցները ցույց են տալիս սույն գործին իրենց վերաբերելիությունը: Այնուամենայնիվ, Դատարանը նշում է քննարկվող որոշման այս կետի պատճառաբանության համակարգված լինելը: Ապա այն նշում է, որ թեև նման վտանգը ժամանակի հետ անխուսափելիորեն նվազում է..., սակայն դատական իշխանությունները չեն նշել, թե սույն գործով ինչն է պատճառ հանդիսացել ենթադրելու, որ այն առկա է ավելի քան հինգ տարի:

***Պունզելթն ընդդեմ Չեխիայի Հանրապետության (Punzelt v. Czech Republic), 31315/96, 25.04.2000թ.***

76. Ինչ վերաբերում է դիմողի թաքնվելու վտանգին՝ Չեխիայի դատարանները մասնավորապես նշում են, որ դիմողն ավելի վաղ Գերմանիայում թաքնվել է քրեական վարույթից, որ նա ունի բազմա-

թիվ գործնական կապեր արտասահմանի հետ և որ նրան համեմատաբար խիստ պատիժ է սպառնում: Դատարանի կարծիքով, այս հիմնավորումը «բավարար» և «հիմնավորված» է և դա ծանրակշիռ է դարձնում դիմողի դեմ ներկայացված փաստարկները:

***Մամեդովան ընդդեմ Ռուսաստանի (Mamedova v. Russia), 7064/05, 01.06.2006թ.***

76. Դիմողի կողմից փախուստի դիմելու հավանականությունը ներպետական դատարանները գնահատել են՝ վկայակոչելով այն փաստը, որ նրա հանցակիցը փախուստի է դիմել: Եվրոպական դատարանի կարծիքով՝ հանցակցի վարքագիծը չի կարող որոշիչ փաստարկ լինել անազատության մեջ գտնվող անձի կողմից փախուստի դիմելու վտանգը գնահատելու համար: Նման գնահատականը պետք է հիմնված լինի կալանավորին վերաբերող հանգամանքների վրա: Տվյալ գործով ներպետական դատարանները չեն մատնանշել դիմողի բնավորության կամ պահվածքի որևէ դրսևորում, որը կարող էր արդարացնել նրանց եզրահանգումն այն մասին, որ դիմողը ներկայացրել է փախուստի դիմելու շարունակական վտանգ: Մյուս կողմից, դիմողը բազմիցս վկայակոչել է այնպիսի փաստեր, որոնք նվազեցրել են փախուստի դիմելու վտանգը: Այդուհանդերձ, ներպետական դատարանները որևէ ուշադրություն չեն դարձրել դիմողի այն փաստարկներին, որ նա հանցավոր անցյալ չի ունեցել, Վլադիմիրում ունեցել է մշտական բնակության վայր և աշխատանք, կայուն կյանք, երկու անչափահաս երեխաներ, և որ նրա հայրը ծանր հիվանդ է եղել: Նրանք հաշվի չեն առել այն փաստը, որ դիմողը փախուստի դիմելու հնարավորություն է ունեցել իր բնակարանը խուզարկելուց հետո, սակայն նա շարունակել է մնալ քննիչի տրամադրության տակ: Նման հանգամանքներում Դատարանը գտնում է, որ փախուստի դիմելու վտանգն այս գործով հիմնավորված չէ:

***Ալեքսանդր Մակարովն ընդդեմ Ռուսաստանի (Aleksandr Makarov v. Russia), 15217/07, 12.03.2009թ.***

125. Իր՝ 2007թ. փետրվարի 5-ի որոշման մեջ Խորհրդային Շրջանային դատարանն առաջին անգամ հիմնվել է Տոմսկի շրջանային ՖՍԲ-ի ստորաբաժանման կողմից ներկայացված տեղեկատվության վրա և եզրակացրել, որ դիմողը ծրագրում է փախչել օգտագործելով իր կապերը վաճառել իր ունեցվածքը և գնել օտարերկրյա արժույթ… Յուրաքանչյուր հաջորդ կալանավորման որոշման մեջ դատական իշխանությունները հիմնվել են առավելապես դիմողի հնարավոր փախուստի վերաբերյալ ՖՍԲ-ի տրամադրած տեղեկության վրա…

126. Դատարանը, ինչևէ, չի կարող անտեսել այն փաստը, որ ՖՍԲ-ի պաշտոնատար անձանց տրամադրած տեղեկությունը հիմնավորված չի եղել որևէ ապացույցով (առուծախի պայմանագրի պատճեններ, պետական արտոնագրեր, որոնք կփաստեին սեփականատի-

րոջ փոփոխությունը, բանկային փաստաթուղթ, որը կհաստատեր արժույթի գնումը և այլն): Դատարանն ընդունում է, որ դիմողի կալանավորումն անփոփոխ թողնելը կարող է ի սկզբանե կարճ ժամանակով թույլատրված լինել ՖՍԲ-ի պաշտոնատար անձանց կողմից տրամադրված տեղեկությունն ստուգելու և, ի հիմնավորումն դրա՝ ապացույցներ ներկայացնելու համար դատախազական մարմիններին ժամանակ տալու նպատակով: Ինչևէ, տեղեկությունը, առանց դրա հավաստիությունը հիմնավորող ապացույցների, ժամանակի ընթացքում անխուսափելիորեն դառնում է նվազ հիմնավոր, հատկապես, երբ դիմողն անընդհատ վիճարկում է իր փախուստի հավանականությունը՝ պնդելով, որ առկա չէ իր փախուստի վտանգը, որ որևէ գույք չի վաճառվել կամ արտարժույթ չի գնվել, և վկայակոչելով իր տարիքը, վատառողջ լինելը, ճանապարհորդելու համար պատշաճ անձնագրի կամ բժշկական ապահովագրության բացակայությունը և այն փաստը, որ նա Տոմսկի տարածաշրջանից դուրս չունի որևէ բարեկամ կամ սեփականություն…

127. …ներպետական իշխանությունները պարտավոր էին առավել մանրամասն վերլուծել դիմողի անձնական վիճակը և նշել կալանքի տակ նրան պահելու առանձնահատուկ պատճառներ՝ հիմնվելով ապացուցողական փաստերի վրա… Դատարանը չի գտնում, որ սույն գործով ներպետական դատարանները կատարել են իրենց այդ պարտականությունը: Դատարանի համար լուրջ քննարկման առարկա է հանդիսացել այն, որ դիմողի կալանավորման հիմքերի վերաբերյալ կողմերի փաստարկների գնահատման ժամանակ ներպետական իշխանությունները դրսևորել են ընտրովի և ոչ հետևողական մոտեցում: Ենթադրելով, որ դիմողի փաստարկները սուբյեկտիվ են և ուշադրություն չդարձնելով այն հիմնավոր փաստերի վրա, որոնք նվազեցնում են նրա թաքնվելու վտանգը՝ դատարանները քննադատության չեն ենթարկել և չեն ստուգել ՖՍԲ-ի պաշտոնատար անձանցից ստացված տեղեկության արժանահավատությունը:

128. Հետևաբար, Դատարանը կրկնում է, որ դատական իշխանություններն ի հիմնավորումն այն բանի, որ նա կարող է թաքնվել, նույնպես վկայակոչել են այն փաստը, որ դիմողն ունեցել է մի քանի բնակության վայր Տոմսկի տարածաշրջանում: Այս կապակցությամբ Դատարանը կրկնում է, որ որոշակի բնակության վայրի բացակայությունը չի մեծացնում թաքնվելու վտանգը… Ապա դատարանը նշում է, որ իշխանությունները չեն մատնանշել որևէ այլ հանգամանք, որը թույլ կտար ենթադրել որ, ազատ արձակվելու դեպքում դիմողը կթաքնվի… Հետևաբար, դատարանը գտնում է, որ նման վտանգի առկայությունը հիմնավորված չէր:

*է. Արդարադատության իրականացմանը խոչընդոտելու վտանգը*

***Լետելյեն ընդդեմ Ֆրանսիայի (Letellier v. France), 12369/86, 26.06.1991թ.***

39. Դատարանն ընդունում է, որ վկաների նկատմամբ ճնշում գործադրելու իրական վտանգն ի սկզբանե կարող է առկա լինել, սակայն հաշվի է առնում այն, որ ժամանակի ընթացքում այն նվազում և իրականում վերանում է:

***Վ.-ն ընդդեմ Շվեյցարիայի (W. v. Switzerland), 14379/88, 26.01.1993թ.***

36. Ցույց տալու համար, որ հանցավոր համաձայնության իրական վտանգն առկա է և շարունակում է առկա լինել դատական քննության սկզբում, պետական մեղադրանքի պալատն ըստ էության վկայակոչել է գործի բացառիկ ծավալը, բռնագրավված փաստաթղթերի արտակարգ քանակը և նրանց դիտավորյալ խճճված վիճակը և հարցաքննության ենթակա վկաների բազմաթիվությունը՝ ներառյալ արտերկրում գտնվող վկաները: Երկրորդ փաստարկը հիմնված է դիմողի անձի վրա, որի վարքագիծը երկուստեք՝ ձերբակալումից առաջ և հետո, արտացոլում է նրա պատասխանատվությունը հիմնավորող բոլոր ապացույցները համակարգված ձևով, օրինակ՝ կեղծելով կամ հաշիվները խեղաթյուրելով, վերացնելու մտադրությունը: Պետական մեղադրանքի պալատի համաձայն՝ առկա են եղել նաև առանձնահատուկ հանգամանքներ, որոնք հիմնավորել են անհանգստությունն առ այն, որ նա կարող է չարաշահել իր վերականգնված ազատությունը՝ կատարելով այնպիսի գործողություններ, ինչպիսիք են՝ ապացույց հանդիսացող առարկաների վերացումը, որոնք դեռևս թաքցված են, բայց որոնց հնարավոր առկայությունը բխում է այլ փաստաթղթերից, ներկայացված կեղծ ապացույցներից կամ այլ վկաների հետ համաձայնության գալուց, նշված գործողությունների իրականացմանը կաջակցեին նրա կողմից կառավարվող վաթսուն ընկերությունների ամբողջական ցանցը և այդ ընկերությունների աշխատակիցները, ովքեր գտնվում են նրա ենթակայության տակ: Վերջապես, պետական մեղադրանքի պալատը վկայակոչել է կատարված և իրականում քննության առարկա հանդիսացած հանցագործության քննության երկարաձգումը Գերմանիայում 1987թ. ապրիլին...

...ազգային իշխանություններն իրավասու են եղել վկայակոչելու գործի հանգամանքները՝ որպես հիմնավորում սույն գործով հանցավոր համաձայնության մտավախության հիմքով կալանքի կիրառման համար:

***Ի. Ա.-ն ընդդեմ Ֆրանսիայի (I. A. v. France), 28213/95, 23.09.1998թ.***

110. …Դատարանը գտնում է, որ դժվար է հասկանալ, թե ինչպես նման վտանգը (վկաների նկատմամբ ճնշում գործադրելը և ապացույցները ոչնչացնելը) կարող է փոփոխվել նման ձևով: Այնուամենայնիվ, այն ընդունում է, որ ինչպես իրավասու դատական իշխանությունները նշել են, դա ակնհայտ է դիմողի անձից և նախնական քննության ընթացքում նրա վարքագծից: Ինչևէ, թեև նրանք այդպիսով սկզբում հիմնավորել են դիմողի կալանքը, սակայն այդ հանգամանքները հետզհետե կորցրել են իրենց հիմնավորվածությունը, քանի որ մի քանի վկա գործով հարցաքննվել է և նախնական քննությունը շարունակվել է:

Ճիշտ է, որ 1993թ. մայիսի 4-ի գողությունից հետո Ի.Ա.-ի տանը կատարված խուզարկության արդյունքում պարզվել է, որ այն կատարվել է նրա կարգադրությամբ, կոնկրետ փաստաթղթերի ոչնչացման նպատակով...: Հասկանալի է, որ նման դեպքը կարող է նախնական քննության մարմինների մոտ առաջացնել մտավախություն այն մասին, որ ազատ արձակվելու դեպքում մեղադրյալը կարող է փորձել թաքցնել մյուս ապացույցները: Ինչևէ, գործի նյութերից երևում է, որ վարույթի այն փուլում, որում գողությունը տեղի է ունեցել, ապացույցների մեծ մասն արդեն հավաքված է եղել, ավելին, 1994թ. հոկտեմբերի 24-ին գործը քննող դատավորը կարգադրել է վերացնել դիմողի տան վրա դրված արգելանքը...

***Մամեդովան ընդդեմ Ռուսաստանի (Mamedova v. Russia), 7064/05, 01.06.2006թ.***

79. Դիմողի կալանքի ժամկետի երկարացման այլ հիմքն այն էր, որ ներպետական դատարանները գտել էին, որ դիմողը կարող է ոչնչացնել ապացույցները, խոչընդոտել արդարադատության իրականացմանը կամ կատարել նոր հանցանք: Դատարանն ընդունում է, որ նախնական քննության սկզբնական փուլերում դիմողի կողմից արդարադատության իրականացմանը խոչընդոտելը կարող էր հիմնավորել կալանքի տակ պահելը: Այդուհանդերձ, ապացույցները հավաքելուց հետո այդ հիմքը դարձել է ոչ պատշաճ:

***Կոցորն ընդդեմ Լեհաստանի (Kauczor v. Poland), 45219/06, 03.02.2009թ.***

46. Իշխանությունները գտնում են, որ դիմողի նկատմամբ նշանակված խիստ պատժի հավանականությունը հանգեցնում է այն կանխավարկածի ձևավորմանը, որ դիմողը կխոչընդոտի վարույթի իրականացմանը: Ինչևէ, Դատարանը կրկնում է, որ թեև հնարավոր պատժի խստությունը կարևոր տարր է փախուստի կամ նոր հանցանք կատարելու վտանգի գնահատման ժամանակ, սակայն մեղադրանքի

խստությունն ինքնին չի կարող արդարացնել երկարաժամկետ նախնական կալանքը…

Ավելին, Դատարանը գտնում է, որ դիմողի կողմից ապացույցները կեղծելու վտանգը իշխանությունների կողմից նրա նախնական կալանքը երկարացնելու մասին որոշում կայացնելիս բավարար չափով չի հիմնավորվել: Դատարանը նշում է, որ Կառավարությունը հիմնվել է այն կանխավարկածի վրա, որ դիմողը խոչընդոտելու է վարույթը և կեղծելու է ապացույցները, որովհետև իրեն մեղավոր չի ճանաչել առաջադրված մեղադրանքներում: Քանի որ ներպետական դատարանները անբարենպաստ հետևանքները բխեցրել են այն փաստից, որ դիմողն իրեն մեղավոր չի ճանաչել, Դատարանը գտնում է, որ նրանց պատճառաբանությունները ակնհայտորեն չեն համապատասխանում անմեղության կանխավարկածին և չեն կարող դիտվել որպես դիմողի ազատության սահմանափակման իրավական հիմք…

47. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Դատարանը եզրակացնում է, որ ներպետական իշխանությունների կողմից նշված հիմքերը չեն կարող ամբողջությամբ հիմնավորել դիմողի կալանավորումը…

***Ալեքսանդր Մակարովն ընդդեմ Ռուսաստանի (Aleksandr Makarov v. Russia), 15217/07, 12.03.2009թ.***

129. …Դատարանը գտնում է, որ ներպետական դատարաններն արդարադատության իրականացմանը խոչընդոտելու համար պատասխանատվությունը պայմանավորել են նրա՝ որպես Տոմսկի քաղաքապետի կարգավիճակով և այն փաստով, որ քրեական գործով վկաների մեծ մասը հանդիսացել են Տոմսկի քաղաքապետարանի նախկին աշխատակիցներ: Ներպետական դատարանները նաև մատնանշել են այն սպառնալիքները, որոնցով դիմողի բարեկամները և մերձավորները իբրև ահաբեկել են տուժողներին և վկաներին:

130. …Դատարանն ուշադրություն է դարձնում այն բանի վրա, որ դիմողի աշխատանքային կարգավիճակը ներպետական դատարանների համար կարևոր հանգամանք է հանդիսացել ասելու, որ առկա է վկաների վրա ազդելու վտանգ: Միաժամանակ, իր ուշադրությունից չի վրիպում այն փաստը, որ դիմողը ձերբակալումից անմիջապես հետո ազատվել է Տոմսկի քաղաքապետի իր պաշտոնից և նրան ազատ արձակելը չի կարող հանգեցնել այդ կարգավիճակում վերականգնվելուն: Հետևաբար, Դատարանն ընդունում է կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման հիմքում դրված այդ փաստի արժանահավատության վերաբերյալ կասկածները: Բացի դրանից, Դատարանը կրկնում է, որ ներպետական դատարանների կողմից նրա պաշտոնի վկայակոչումը բավարար չէ ցույց տալու համար, որ առկա է և դիմողի կալանավորման ամբողջ ժամանակաընթացքում շարունակում է առկա լինել հանցավոր համաձայնության գալու իրական վտանգ: Նրանք պետք է վերլուծեին գործի հետ կապված այլ հանգամանքներ, ինչպիսիք են՝ նախնական կամ դատական քննությունների ընթացքը,

դիմողի անձը, նրա վարքագիծը ձերբակալումից առաջ ու հետո և այլ առանձնահատուկ հատկանիշներ, որոնք կհիմնավորեին մտավախությունն առ այն, որ նա կարող է չարաշահել իր վերականգնված ազատությունը՝ կատարելով գործողություններ՝ ուղղված ապացույցների կեղծմանը կամ վերացմանը կամ վկաների վրա ներգործելուն…

131. Այս կապակցությամբ Դատարանը նշում է, որ 2007թ. դեկտեմբերի 3-ին Տոմսկի Շրջանային դատարանն առաջին անգամ հիմնավորել է իր եզրակացությունը հանցավոր համաձայնության գալու վտանգի վերաբերյալ՝ վկայակոչելով դիմողի բարեկամների կողմից վկաների վրա ներգործելու փորձերի մասին պնդումները... որոշման տեքստը..., դիմողի բարեկամների և մերձավորների կողմից վկաներին ուղղված սպառնալիքների վերաբերյալ լոկ վկայակոչումներից բացի Շրջանային դատարանը չի մատնանշել որևէ առանձնահատուկ փաստ, որը կարդարացներ դիմողի կալանավորումն այդ հիմքով:

132. Ինչևէ, Դատարանն արտառոց է համարում այն, որ հիմնվելով կոնկրետ տեղեկության վրա՝ ներպետական դատարանները դիմողին հնարավորություն չեն տվել վիճարկել այն, օրինակ, հարցաքննելով այդ վկաներին…, կամ, նրան տրամադրելով վերջիններիս պահանջների կամ ցուցմունքների պատճենները: Ստացվում է… որ դիմողն անգամ չի ծանուցվել վկաների վրա ներգործություն ունենալու վերաբերյալ դատախազության կողմից ներկայացված փաստարկի բնույթի և էության մասին: Ավելին, Դատարանն արտառոց է համարում այն, որ տեղեկացված լինելով վկաների ահաբեկման, անհանգստացման և նրանցից վրեժ լուծելու սպառնալիքների մասին՝ դատախազությունը քրեական վարույթ չի հարուցել կամ գոնե նախնական քննություն չի սկսել այդ մեղադրանքների հիմքով: Դատարանը գտնում է… որ ներպետական իշխանությունները որևէ միջոցառում չեն ձեռնարկել դիմողի կամ նրա բարեկամների և մերձավորների դեմ, նրանց նկատմամբ երբևէ որևէ քննություն չի իրականացվել և նույնիսկ չեն հարցաքննվել վկաների վրա ներգործելու փորձերի վերաբերյալ: Հետևաբար, Դատարանը համոզված չէ, որ ներպետական իշխանությունների պնդումներն այն մասին, որ դիմողը կարող է խաթարել արդարադատության ընթացքը, ունի բավարար փաստական հիմք:

133. Բացի դրանից, Դատարանը նշում է, որ դիմողի գործով նախաքննությունն ավարտվել է 2007թ. օգոստոսի վերջին… Նա շարունակել է մնալ կալանքի տակ լրացուցիչ տասնութ ամիս, որոնց ընթացքում իրականացվել է գործի դատական քննությունը: Այսպիսով, ստացվում է, որ ներպետական իշխանություններն ունեցել են բավարար ժամանակ վկաներից այնպիսի եղանակով ցուցմունք վերցնելու համար, որ բացառվեր որևէ կասկած նրանց անկեղծության վերաբերյալ և վերանար այդ հիմքով դիմողի ազատության սահմանափակման անհրաժեշտությունը… Այդ պատճառով Դատարանը գտնում է, որ պատշաճ չգործելու հետևանքով ներպետական իշխանություններն

իրավասու չեն եղել գործի հանգամանքները քննարկել որպես արդարացում հանցավոր համաձայնության գալու վտանգը դիմողի կալանավորման հիմք դիտելու համար:

*ը. Նոր հանցագործությունների կատարման վտանգը*

***Մյուլերն ընդդեմ Ֆրանսիայի (Muller v. France), 21802/93, 17.03.1997թ.***

44. Ինչ վերաբերում է նոր հանցանքի կատարման վտանգին, ապա անձի անցյալի վկայակոչումը չի կարող բավարար լինել անձի ազատ արձակման մերժումն արդարացնելու համար...

***Ն.Ս.-ն ընդդեմ Իտալիայի (N.C. v. Italy), 24952/94, 11.01.2001թ.***

48. Դատարանը նշում է, որ Նախնական քննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատավորն իր՝ 1993թ. նոյեմբերի 2-ի որոշումը մեղքի վերաբերյալ ապացույցներից բացի, հիմնավորել է նաև այն փաստով, որ դիմողը պահպանել է X ընկերության տեխնիկական տնօրենի իր պաշտոնը և հնարավորություն ունի կատարել այլ նմանատիպ հանցագործություններ...

49. Ինչ վերաբերում է 1993թ. նոյեմբերի 13-ի որոշմանը, Դատարանը նշում է, որ Բրինդիսիի Շրջանային դատարանը կրկին հիմնվել է մեղքի վերաբերյալ լուրջ ապացույցների առկայության և դիմողի կողմից նոր հանցանքի կատարման վտանգի առկայության վրա՝ վկայակոչելով այն, թե «ինչպես է նրան հաջողվել ոչ իրավաչափ եղանակով ստանալ տնտեսական արդյունքներ»: Դատարանը գտնում է, որ չնայած հակիրճությանը, այս որոշումը պահպանել է C.P.P.-ի 274 (c) հոդվածի պահանջներն այն մասին, որ «գործի մասնավոր եղանակավորումներ» պետք է հաշվի առնվեն կանխարգելիչ միջոցների թույլտվության ժամանակ:

50. Վերը հիշատակվածի լույսի ներքո Դատարանը չի գտնում, որ անօրինական են ազգային իշխանությունների այն եզրակացությունները, որ եղել է իրական վտանգ առ այն, որ դիմողը կարող է նոր հանցանք կատարել:

**Այս հարցը չի ներառվել Մեծ պալատի 2002թ. դեկտեմբերի 18-ի որոշման մեջ:*

***Ալեքսանդր Մակարովն ընդդեմ Ռուսաստանի (Aleksandr Makarov v. Russia), 15217/07, 12.03.2009թ.***

134. Կալանավորման վերաբերյալ որոշումների մեծ մասում ներպետական դատարանները որպես կալանավորումն անփոփոխ թողնելու արդարացման հիմք մեջբերել են դիմողի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը: Այս կապակցությամբ Դատարանը նշում է, որ դատական իշխանությունները չեն հիշատակել որևէ առանձնահատուկ փաստ, որը կհիմնավորեր նրանց կար-

ծիքն այն մասին, որ առկա է դիմողի կողմից նոր հանցանք կատարելու վտանգ: Բացի դրանից, Դատարանը չի կիսում ազգային իշխանությունների այն տեսակետը, որ այն իրավիճակում, երբ դիմողին առաջադրված բոլոր մեղադրանքները կապված են եղել որպես Տոմսկի քաղաքապետ նրա իրականացրած գործառույթների հետ, և նա հեռացվել է այդ պաշտոնից, ապա առկա է լուրջ վտանգ, որ դիմողը կարող է նոր հանցանքներ կատարել:

*թ. Հասարակական կարգի խախտման սպառնալիքը և կալանավորի պաշտպանությունը*

***Ի. Ա.-ն ընդդեմ Ֆրանսիայի (I. A. v. France), 28213/95, 23.09.1998թ.***

104. ...Դատարանն ընդունում է, որ առանձին հանցագործությունների ծանրության և դրանց նկատմամբ հասարակության արձագանքի պատճառով կարող են հանգեցնել հասարակական հուզումների, և դա կարող է որոշ ժամանակով արդարացնել նախնական կալանքը: Բացառիկ հանգամանքներում այս գործոնը կարող է դիտվել որպես Կոնվենցիայի նպատակներից բխող, եթե ներպետական իրավունքը ճանաչում է... հանցագործության պատճառով հասարակական կարգի խախտման հնարավորությունը: Ինչևէ, այս հանգամանքը կարող է դիտվել որպես հիմնավոր և բավարար միայն այն դեպքում, եթե առկա են այնպիսի փաստեր, որոնք ցույց են տալիս, որ դիմողին ազատ արձակելը կարող է իրականում խախտել հասարակական կարգը: Ի լրումն դրա, կալանավորումը կշարունակի լինել իրավաչափ միայն այն դեպքում, երբ հասարակական կարգն իրականում շարունակի սպառնալիքի տակ գտնվել. դրա շարունակվելը չի կարող կիրառվել կանխորոշելու համար ազատազրկման հետ կապված պատժի նշանակումը...

Սույն գործով չեն ապահովվել նշված պայմանները, քանի որ նշված որոշումներից նրանք, որոնք ձգտում են որոշ չափով հիմնավորել այս հիմքերի առկայությունը, ընդամենը վերացականորեն վկայակոչում են քննարկվող հանցագործության բնույթը, այն հանգամանքները, որոնցում դա կատարվել է և, հազվադեպ՝ տուժողի ընտանիքի արձագանքը...

108. Դատարանն ընդունում է, որ որոշ դեպքերում կալանավորման ժամկետի երկարացումը պայմանավորված է նախնական քննության փուլ ներգրավված անձի անվտանգությամբ: Ինչևէ, դա այդպես կարող է լինել բացառիկ հանգամանքներում՝ կապված քննարկվող հանցագործության բնույթի, դրա կատարման հանգամանքների և իրադրության հետ...

Այս հիմքը... ժամանակ առ ժամանակ մեջբերվել է դատական իշխանությունների կողմից այնպես, որ կարծես դիմողին սպառնացող վտանգը պարբերաբար անհայտանում և հայտնվում է:

Ավելին, մի քանի որոշումներով վկայակոչվել են այնպիսի հանգամանքներ, որոնք կարող են պարզաբանել, թե ինչու է անհրաժեշտ եղել պաշտպանել դիմողին՝ հղում կատարելով «տուժողի ընտանիքի վրեժի» կամ «ռեպրեսալիաների» վտանգին... կամ դիմողի արտահայտած «վախին»՝ «բարբարոս և անարդար (լիբանանական) սովորույթներից»... Մինչդեռ նրանք պետք է մատնանշեին, թե ինչու է նման անհրաժեշտություն եղել, եթե բոլոր տուժողների ընտանիքներն ապրել են Լիբանանում:

***Ալեքսանդր Մակարովն ընդդեմ Ռուսաստանի (Aleksandr Makarov v. Russia), 15217/07, 12.03.2009թ.***

136. Դատարանն արդեն տարբեր առիթներով ընդունել է, որ որոշ հանցագործություններ առանձնապես ծանր լինելու և դրանց նկատմամբ հասարակական արձագանքի պատճառով կարող են հասարակական հուզումների ալիք բարձրացնել, ինչի հիման վրա գոնե ժամանակավորապես կարդարացվի նախնական կալանքը: Հետևաբար, բացառիկ հանգամանքներում այս գործոնը, Կոնվենցիայի նպատակներից ելնելով, կարող է հաշվի առնվել, եթե ներպետական օրենսդրությունը ճանաչում է հանցագործության պատճառով հասարակական կարգի խախտման հասկացությունը: Ինչևէ, այս հիմքը կարող է դիտվել որպես հիմնավոր և բավարար, եթե միայն այն հիմնված է այնպիսի փաստերի վրա, որոնք ցույց են տալիս, որ մեղադրյալին ազատ արձակելը կարող է իրականում խախտել հասարակական կարգը: Ի լրումն դրա, կալանավորումը կշարունակի լինել իրավաչափ, եթե միայն հասարակական կարգն իրականում մնա վտանգի տակ. դրա շարունակական բնույթը չի կարող կիրառվել կանխորոշելու համար ազատազրկման հետ կապված պատժի կիրառումը…

137. Սույն գործով այս պայմաններն ապահովված չեն: Հաշվի չառնելով այն, որ ռուսական օրենսդրությունը մեղադրյալին կալանավորելու թույլատրելի հիմքերի շարքում չի նախատեսում հասարակական անհանգստություն առաջացնելու հնարավորությունը՝ Դատարանը նշում է, որ Կառավարությունը հիմնվել է հասարակական կարգի ենթադրյալ վտանգի վրա՝ ելնելով բացարձակ վերացական տեսակետից և հիմնվելով միայն դիմողի կողմից կատարված ենթադրյալ հանցանքների ծանրության վրա: Նա չի ներկայացրել որևէ ապացույց կամ մատնանշել որևէ օրինակ, որը ցույց կտար, որ դիմողին ազատ արձակելը կարող էր իրական վտանգ սպառնալ հասարակական կարգին:

*ժ. Ազատ արձակման հարցի քննարկման ինքնաբերաբար բացառումը*

***Կաբալերոն ընդդեմ Միացյալ Թագավորության (Caballero v. United Kingdom [GC]), 32819/96, 08.02.2000թ.***

18. Դիմողը հայտարարել է, որ չավարտված վարույթով գրավի ինքնաբերաբար բացառումը, որը նախատեսված է Քրեական արդարադատության և հասարակական կարգի 1994թ. օրենքի («1994թ. Օրենք») 25-րդ բաժնով, հանդիսանում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում...

20. ...Դատարանին ուղղված իր մեմորանդումում Կառավարությունն ընդունել է, որ տեղի է ունեցել նշված պահանջների խախտում:

21. Դատարանն ընդունել է Կառավարության զղջումն առ այն, որ սույն գործով եղել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում... որի հետևանքով հնարավորություն է ստեղծվել 41-րդ հոդվածով դիմողի բողոքն արդարացիորեն բավարարելու վերաբերյալ վճիռ կայացնելու համար...

***Բոիցենկոն ընդդեմ Մոլդովայի (Boicenco v. Moldova), 41088/05, 11.07.2006թ.***

135. ...Մոլդովայի քրեական դատավարության օրենսգրքի 191-րդ բաժնի համաձայն՝ չավարտված վարույթով ազատ արձակվելու հնարավորությունն առկա է միջազգային այն հանցագործությունների վերաբերյալ գործերով, որոնցով նախատեսված ազատազրկման ձևով պատիժը չի գերազանցում 10 տարին: Սույն գործով դիմողը մեղադրվել է նման հանցագործության մեջ...

138. Հետևաբար, Դատարանը եզրակացնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում այն իմաստով, որ Քրեական դատավարության օրենսգրքի 191-րդ բաժինը դիմողին հնարավորություն չի տալիս չավարտված վարույթով ազատ արձակվել:

**3. Կալանավորի առողջական վիճակը հաշվի առնելու պարտականությունը**

***Բոննեչոքսն ընդդեմ Շվեյցարիայի (Bonnechaux v. Switzerland), 8224/78, 05.12.1979թ., DR 18, 100 [DH (80) 1]***

88. Հանձնաժողովը չի կարող բացառել այն հնարավորությունը, որ շաքարախտով և սիրտ-անոթային խանգարմամբ տառապող 74-ամյա մարդու՝ 35 ամիս տևած կալանավորումը կոնկրետ հանգամանքներում կարող է հանգեցնել 3-րդ հոդվածի հետ կապված խնդիրների...

Հանձնաժողովը չունի որևէ տեղեկություն, որը հնարավորություն կտար պարսավել այն պայմանները, որոնցում կալանավորված անձը պահվել է, կամ կասկածի տակ առնել այն, որ նա օգտվել է բժշկական օգնությունից՝ ելնելով իր առողջական վիճակից:

***Սակոպուլոսն ընդդեմ Հունաստանի (Sakkopoulos v. Greece), 61828/00, 15.01.2004թ.***

40. Տվյալ գործից հետևում է, դիմողի առողջական վիճակը, անկասկած, մտահոգիչ էր: Կորիդալոսի բանտ տեղափոխվելուց առաջ նա տառապում էր սրտի անբավարարությունից և շաքարախտից, և նա տեղափոխվել էր հիվանդանոց: Սակայն գործում չկա որևէ փաստարկ, համաձայն որի դիմողի առողջական վիճակը ձերբակալման ժամանակ սրտի նոպայի արդյունքում վատթարացել է, որի համար կարող են մեղադրվել քրեակատարողական հիմնարկի աշխատակիցները:

41. Դատարանը գտնում է, որ 9 ամիս 19 օր նախնական կալանքի ընթացքում դիմողն ավելի շատ մնացել է քաղաքային հիվանդանոցում, քան Կորիդալոսի բանտի դիսպանսերում: Բժիշկների կողմից տրված բժշկական տեղեկանքները փաստում են այն մասին, որ դիմողը կանոնավոր կերպով գտնվել է բժշկական և դեղատնային հսկողության տակ և ընդունել է իր առողջությանն անհրաժեշտ սնունդ՝ մասնավորապես դիսպանսերի սրտաբանը հավաստել է, որ դիմողն իրենց մոտ է տեղափոխվել կայուն վիճակով և նրա գլիկեմյան չափվել է առավոտյան և երեկոյան, և նա ունեցել է շաքարախտով տառապողների համար սահմանված սննդի ռեժիմ:

## 4. Այլընտրանքային միջոցների կիրառումը

*ա. Գրավ*

***Լետելյեն ընդդեմ Ֆրանսիայի (Letellier v. France), 12369/86, 26.06.1991թ.***

46. Եթե կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման միակ պատճառը հանդիսանում է մեղադրյալի թաքնվելու և այդպիսով դատարան ներկայանալուց խուսափելու մտավախությունը, ապա նա պետք է ազատ արձակվի, եթե կարողանա, օրինակ, գրավի ավանդադրմամբ, ներկայացնել համապատասխան երաշխիքներ, որոնք կհավաստեն նրա դատարան ներկայանալը...

Դատարանը նշում է... որ պաշտոնական մեղադրանքի բաժինների կողմից այդ հանգամանքը չի հաստատվել և սույն գործով վերոնշյալ դեպքն առկա չէ:

***Մամեդովան ընդդեմ Ռուսաստանի (Mamedova v. Russia), 7064/05, 01.06.2006թ.***

78. Տվյալ գործում դիմողի կալանքի ողջ ընթացքում իշխանությունները չեն քննարկել ավելի մեղմ խափանման միջոցներով նրա ներկայանալն ապահովելու հնարավորությունը, չնայած որ դիմողի փաստաբանները բազմիցս միջնորդել են նրան ազատ արձակել գրավով կամ քաղաքից չբացակայելու մասին ստորագրությամբ՝ «խափանման միջոցներով», որոնք հստակորեն նախատեսված են Ռուսաստանի օրենսդրությամբ և կոչված են ապահովելու քրեական գոր-

ծի պատշաճ քննությունը…Ներպետական դատարաններն իրենց որոշումներում չեն բացատրել նաև, թե ազատությունից զրկելու հետ չկապված այլ միջոցներ ինչու չէին կարող ապահովել դատական քննության պատշաճ ընթացքը: Այս բացթողումն առավել ևս անբացատրելի է դառնում այն փաստը հաշվի առնելով, որ քրեական դատավարության նոր օրենսգիրքը դատարաններին հստակորեն առաջարկում է կիրառել ավելի մեղմ ներպետական միջոցներ՝ որպես կալանավորման այլընտրանքներ…

***Բոննեչոքսն ընդդեմ Շվեյցարիայի (Bonnechaux v. Switzerland), 8224/78, 05.12.1979թ., DR 18, 100 [DH (80) 1]***

74. ...Քանի որ գրավի գումարը պետք է որոշվի՝ հաշվի առնելով առաջին հերթին կասկածյալի ունեցվածքը…, վերջինս չի կարող նշել, որ իր կալանավորումը երկարացվել է չափազանց մեծ գրավ պահանջելու հետևանքով, եթե նա չի ներկայացրել իր ունեցվածքի չափը որոշելու համար անհրաժեշտ տեղեկություն: Այլ կերպ ասած, կասկածյալը, ում վերաբերյալ դատական իշխանություններն իրենք են հայտարարել գրավ կիրառելու մասին, պետք է անկեղծորեն ներկայացնի իր ունեցվածքի վերաբերյալ բավարար տեղեկություն, որն անհրաժեշտության դեպքում կարող է ստուգվել, որպեսզի իշխանությունները կարողանան որոշել գրավի գումարը…

***Վ.-ն ընդդեմ Շվեյցարիայի (W. v. Switzerland), 14379/88, 26.01.1993թ.***

33. …գործի հանգամանքները և դիմողի անձի բնութագիրը գործը քննող դատարաններին իրավունք են տվել մերժել իր անվտանգությունը երաշխավորելու նրա՝ 1988թ. մայիսի 18-ի առաջարկը (մի բան, որ նա կարճ ժամանակ առաջ՝ փետրվարի 1-ին դեռևս մերժում էր անել): Երկուստեք՝ գումարը (30.000 շվեյցարական ֆրանկ) և դրամի անհայտ ծագումը նշանակում է, որ այն չի հանդիսացել պատշաճ երաշխիք առ այն, որ դիմողն այն չկորցնելու համար չի որոշի թաքնվել…

Ի վերջո, այն փաստը, որ մեկ անգամ դատապարտվելուց հետո դիմողը կալանավայր է վերադարձվել հեռանալուց հետո մի քանի անգամ, չի կարող հետադարձության կարգով օրինական ուժից զրկել դատարանների տեսակետը:

***Պունզելթն ընդդեմ Չեխիայի Հանրապետության (Punzelt v. Czech Republic), 31315/96, 25.04.2000թ.***

85. Դատարանը գտնում է, որ տվյալ ժամանակահատվածում Չեխիայի դատարանները մերժել են դիմողի առաջարկը վճարել 15.000.000 չեխական կրոն (CZK), քանի որ նրանք դա չեն դիտել դիմողի կողմից դատաքննությանը ներկայանալու բավարար երաշխիք: Մի դեպքում Քաղաքային դատարանը արտահայտել է դիմողի ազատ

արձակումը քննարկելու իր պատրաստակամությունը՝ նկատի ունենալով նրա առողջական խնդիրները, եթե նա վճարի 30.000.000 չեխական կրոնի չափով գրավ: Իր որոշման մեջ Քաղաքային Դատարանը մատնանշել է, որ դիմողը ներկայացրել է երկու չապահովված չեկ՝ 28.400.000 չեխական կրոն ընդհանուր արժողությամբ, որ նախքան իր ձերբակալումը նա ցանկացել է գնել երկու հանրախանութ՝ 338.856.000 և 236.000.000 չեխական կրոն արժողությամբ, և որ նա պարտավորվել է վճարել դրանց համար մաս-մաս՝ առաջին անգամ վճարելով 150.000.000 չեխական կրոն:

86. Քննարկելով գործի մասնավոր հանգամանքները՝ Դատարանը գտնում է, որ ո՛չ գրավով ազատ արձակելու կրկնվող մերժումները, ո՛չ երաշխիքի վերջնական՝ 30.000.000 չեխական կրոն գումարը, որը սահմանվել է՝ ելնելով դիմողի ֆինանսական վիճակից, չեն խախտում դիմողի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավունքը…

***Իվանչուկն ընդդեմ Լեհաստանի (Iwańczuk v. Poland), 25196/94, 15.11.2001թ.***

69. Դատարանը նշում է, որ դիմողն անհապաղ կատարել է իր ունեցվածքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություն ներկայացնելու իր պարտականությունը: Դատարանները փոփոխել են միայն ավանդադրման ենթակա գրավի իրական գումարի չափը: Հիմնական դժվարությունը, թերևս, կապված է եղել գրավի ձևի որոշման հետ, այսինքն՝ այն պետք է ավանդադրվի քղթադրամով, Պետական արժեթղթով, թե՝ դիմողի գույքային ունեցվածքի գրավադրմամբ: Պետք է ուշադրություն դարձվի այն հանգամանքի վրա, որ իշխանությունները կոնկրետ դեպքում մերժել են գույքի գրավադրմամբ գրավի ավանդադրումը՝ առանց պարզելու դիմողի իրավունքը տվյալ գույքի նկատմամբ: Սա, Դատարանի կարծիքով, ենթադրում է, որ իշխանությունները պետք է լռությամբ ընդունեին գրավը, որը, դիմողի կողմից դատաքննությանը չներկայանալու դեպքում, կհանգեցներ գույքի վրա կալանք դնելուն ուղղված գործողությունների իրականացմանը: Վերոնշյալը Դատարանի կարծիքով, ինքնին չի կարող դիտվել որպես բավարար հիմք կալանքի տակ պահելու ժամկետը չորս ամսով երկարացնելու համար այն դեպքում, երբ արդեն դատական իշխանություն իրականացնող անձի կողմից վերջինս ճանաչվել է ոչ անհրաժեշտ:

70. Հիմք ընդունելով այն փաստը, որ գրավի վճարման չափի ու ձևի հետ կապված վարույթները տևել են չորս ամիս և տասնչորս օր, և դիմողն այս ժամանակահատվածի ընթացքում գտնվել է կալանքի տակ այն դեպքում, երբ որոշում է կայացվել այն մասին, որ նրա հետագա կալանավորումն անհրաժեշտ չէ, և որ որևէ պատշաճ հիմնավորում չի ներկայացվել իշխանությունների կողմից արդարացնելու համար որոշման հետագա փոփոխությունները՝ կապված գրավի ավանդադրման ձևի հետ, Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում:

***Մանգուրասն ընդդեմ Իսպանիայի (Mangouras v. Spain), 12050/04, 08.01.2009թ.***

38. Դատարանը նշում է, որ դիմողը 83 ժամ ազատությունից զրկված է եղել և ազատվել է երեք մլն եվրո բանկային պարտամուրհակի տեսքով ավանդի վճարում կատարելով, որը համապատասխանում է պահանջվող գրավի գումարի չափին:

39. Դատարանը քննարկման առարկա է դարձրել գրավի գումարի չափը: Այն պարզում է, սակայն, որ այդ գումարը վճարվել է London Steamship Owners Mutuel Insurance ընկերակցության կողմից, որը հանդիսանում է Prestige նավատիրոջ ապահովագրողը, ինչպես նաև դիմողի աշխատողը և որը, համաձայն կողմերի միջև կնքված պայմանագրի՝ քաղաքացիական պատասխանատվություն է կրում նավի կողմից շրջական միջավայրն ազտոտելու դեպքում: Արդյունքում, գրավը բավարարվել է՝ հաշվի առնելով ապահովագրողի և նավատիրոջ միջև առկա պայմանագրահիրավաբանական հարաբերությունները:

40. Սակայն գրավի գումարը վճարելուց հետո դիմողը վերադարձել է Հունաստան, որտեղ կանոնավոր կերպով ներկայացել է կոմիսարին: Այդ օրվանից գործի նախաքննությունը գտնվել է Corcubion թիվ մեկ քննիչի վարույթում... այս համակարգը թույլ է տալիս իսպանական իշխանություններին տեղյակ լինել դիմողի մշտական բնակության վայրի մասին: Ցանկացած դեպքում Դատարանն ուշադրություն է դարձնում այն փաստին, որ տվյալ դեպքում գրավի սահմանման հիմնական նպատակն է եղել ապահովել դիմողի մասնակցությունը դատավարությանը, որը մինչ օրս շարունակվում է...

42. Դատարանը գտնում է, որ պետք է հաշվի առնել գործի այն փաստական հանգամանքները՝ իմանալու համար կատարված հանցանքի առանձնահատկությունները՝ պատասխանատվության առումով, որը հատուկ է ծովային իրավունքին, մասնավորապես ծովային շրջակա միջավայրին ուղղված ոտնձգությունների առումով: Այս գործը տարբերվում է մյուսներից, որոնցում նա բողոքարկում էր նախնական կալանքի ժամկետը: Այս առումով Դատարանը կարծում է, որ նման տեսակի պատահարների ծանրությունը թույլ է տալիս ներպետական դատական ատյանին որոշելու բնական աղետի ժամանակ պատասխանատվությունը, արդյունքում արդարացված է գրավի չափի մեծությունը, որով այն ցանկանում էր ապահովել դիմողի ներկայությունը դատավարությանը:

43. Այնուամենայնիվ, Դատարանը գտնում է, որ դիմողի՝ ազատությունից զրկված լինելու ժամկետը շատ ավելի կարճատև է, քան Դատարանի կողմից քննված այլ գործերում առկա ժամկետներն են, այստեղ չնայած դիմողը չի կատարել ծովային շրջակա միջավայրին ուղղված իրավախախտումը, որը ներկայացվում է, բայց դիմողին ներբակալվածների պահելու վայր տեղափոխելով՝ տրվել է հնարավո-

րություն ազատվել կալանքից սահմանված գրավը վճարելու դեպքում:

44. Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում, որ պետական իշխանությունները բավարար չափով հիմնավորում են դիմողի կողմից վճարման ենթակա գրավի չափի համամասնությունը, և հաշվի են առնվել նրա մարդկային հանգամանքները, մասնավորապես՝ նավատիրոջ վարձու աշխատողի կարգավիճակը, որն իր հերթին ապահովագրված էր նման տեսակի հնարավոր դեպքերից: Նա գտնում է, որ այս պարագայում գրավի չափը, չնայած մեծ լինելուն, համաչափ է՝ հաշվի առնելով պաշտպանվող իրավական շահը, տվյալ իրավախախտման ծանրությունը և շրջակա միջավայրի համար աղետալի հետևանքները, որոնք առաջացել են բեռնատար նավի շրջվելուց:

*բ. Բնակավայրը չփոխելու պահանջը*

***Ցիանսիմինոն ընդդեմ Իտալիայի (Ciancimino v. Italy), 12541/86, 27.05.1991թ., DR 70, 103***

2. …Հանձնաժողովը գտնում է, որ հաշվի առնելով հանցավոր կազմակերպությունների կողմից «հասարակական կարգին» սպառնացող վտանգի հատկապես լուրջ բնույթը և մաֆիային պատկանելու մեջ կասկածվող անձանց կողմից կատարվող հանցագործությունների կանխման կարևորությունը՝ բնակավայրը չփոխելու պահանջը, վերոնշյալ նպատակներին հասնելու համար, սկզբունքորեն կարող է դիտվել որպես ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ:

Սույն գործով Հանձնաժողովը նշում է, որ դիմողի «վտանգավորությունը» գնահատվել է դատական վարույթների ընթացքում, որոնք դեռևս չեն ավարտվել… և այդ վարույթներում պաշտպանության իրավունքն ամբողջությամբ պահպանվել է: Ապա այն նշում է, որ քննարկվող գործում այնպիսի միջոցների կիրառումը, որոնք տարբեր վարույթների առարկաներ են, նույնպես կապված է դիմողի դեմ հարուցված վարույթի հետ, ում առաջադրվել են տարբեր մեղադրանքներ երեք տարբեր քրեական գործերով:

Այսպիսով, Հանձնաժողովը գտնում է, որ դիմողի գործով առկա չէ անհամապատասխանություն հետապնդված նպատակի և կիրառված միջոցների միջև: Դրանից բխում է, որ Կոնվենցիայի 4-րդ արձանագրության 2-րդ հոդվածի ելակետերից դիտարկելու դեպքում դիմողի բողոքն ակնհայտորեն անհիմն է…

*գ. Տնային կալանք*

***Մանսինին ընդդեմ Իտալիայի (Mancini v. Italy), 44955/98, 02.08.2001թ.***

17. ...իրենց հետևանքների և կիրառման ձևի առումով երկուստեք՝ կալանավորումը և տնային կալանքը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի (c) կետի իմաստով դասվում են դիմողի ազատությունը սահմանափակող միջոցների թվին: Հետևաբար, սույն գործը վերաբերում է ազատազրկման վայրում կալանքի տակ պահելու հետաձգումն ավելի մեղմ խափանման միջոցով փոխարինելուն...

19. ...Թեև ճիշտ է, որ որոշակի հանգամանքներում մեկ հոգեբուժական հիվանդանոցից մեկ այլը տեղափոխելը կարող է հանգեցնել հիվանդին պահելու պայմանների ակնհայտ բարելավման, փաստը մնում է փաստ, որ նման տեղափոխությունը որևէ կերպ չի հանգեցնում դիմողի նկատմամբ կիրառված ազատության սահմանափակման հետ կապված միջոցի փոփոխության: Նույնը չի կարելի ասել ազատազրկման վայրում կալանավորումը տնային կալանքով փոխարինելու մասին, քանի որ սա հանգեցնում է կալանավորման վայրի փոփոխության՝ պետական հիմնարկից անձնական բնակարանի: Ի տարբերություն տնային կալանքի, ազատազրկման վայրում կալանքը պահանջում է անհատի ինտեգրում մի ամբողջական կազմակերպության մեջ, դրա այլ անդամների հետ գործողությունների և միջոցների կիսում և իշխանությունների կողմից խիստ հսկողություն նրա առօրյա կյանքի նկատմամբ:

*դ. Ստիկանության հսկողությանը հանձնելը*

***Ռայմոնդոն ընդդեմ Իտալիայի (Raimondo v. Italy), 12954/87, 22.02.1994թ.***

39. ...Հիմք ընդունելով մաֆիայի կողմից «ժողովրդավարական հասարակությանը» սպառնացող վտանգը՝ միջոցը (հատուկ ոստիկանական հսկողությունը) անհրաժեշտ էր «հասարակական կարգի պահպանության համար» և «հանցագործությունների կանխման համար»: Այն մասնավորապես համաչափ էր հետապնդված նպատակին մինչ այն պահը, երբ Կատանզարոյի Վերաքննիչ դատարանը 1986թ. հուլիսի 4-ին որոշեց վերացնել այն...

…Եթե անգամ նա ընդունի, որ դռնփակ դատական նիստում կայացված այս որոշումը մինչ գրանցումը չունի իրավական ուժ, Դատարանը գտնում է, որ դժվար է հասկանալ, թե ինչու է մոտ հինգ ամիս անհրաժեշտ եղել սահմանելու համար այն որոշման հիմքերը, որն ուժի մեջ է մտնում անմիջապես և վերաբերում է այնպիսի հիմնարար իրավունքի, ինչպիսին է դիմողի ազատությունը և, մասնավորապես՝ նրա ցանկացած ժամանակ գնալու և գալու ազատությունը. բացի դրանից, վերջինս տասնութ օր տեղեկացված չի եղել որոշման վերացման մասին:

40. Դատարանը եզրակացնում է, որ 1986թ. դեկտեմբերի 2-20-ը քննարկվող միջամտությունը ոչ օրենքով նախատեսված է եղել, ոչ էլ՝

անհրաժեշտ: Հետևաբար, տեղի է ունեցել 4-րդ արձանագրության 2-րդ հոդվածի խախտում…

*ե. Անձնագրի հանձնում*

***Շմիդն ընդդեմ Ավստրիայի (Scmid v. Austria), 10670/83, 09.07.1985թ., DR 44, 195***

2. …Ապա դիմողը հայտարարել է Կոնվենցիայի 4-րդ արձանագրության 2-րդ հոդվածի խախտման մասին, քանի որ հանձնման շարունակվող պայմանները, որոնք կիրառվել են անգամ դիմողի կալանքից ազատ արձակվելուց հետո, և 1984թ. հունիսի 12-ի որոշումը խոչընդոտել են նրա՝ երկրից հեռանալուն, և քանի որ նրանք մերժումը ներառել են նրա ճանապարհորդական փաստաթղթերի մեջ, դա խոչընդոտել է նրա տեղաշարժին երկրի ներսում… Հանձնաժողովը գտնում է, որ 4-րդ արձանագրության 2-րդ հոդվածի 3-րդ մասով թույլատրված սահմանափակումները սույն գործով պետք է մեկնաբանվեն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին նախադասության լույսի ներքո: Դիմողն ազատ է արձակվել չավարտված վարույթով, և «դատաքննությանը ներկայանալու երաշխիքները» ներկայացված են եղել: Հանձնաժողովը գտնում է, որ չկա որևէ հիմնավորում առ այն, թե ինչու այդ երաշխիքները պետք է սահմանափակվեն դրամական խափանման միջոցներով: Ապա այն գտնում է, որ այս պայմաններում հանձնման պահանջները, որքանով դրանք սահմանափակում են դիմողի՝ բնակավայր ընտրելու իրավունքը, երկրի ներսում և արտասահմանում տեղաշարժվելու նրա ազատությունը, եղել են «օրենքին համապատասխան և… անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում … հանցագործությունների կանխման համար…»: Այսպիսով, պահպանվել են 4-րդ արձանագրության 2-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

**5. Վերահսկողությունն օրինականության նկատմամբ**

*ա. Առկայությունը*

***Ռ.Մ.Դ.-ն ընդդեմ Շվեյցարիայի (R.M.D. v. Switzerland), 19800/92, 26.09.1997թ.***

52. Սույն գործով չի վիճարկվում, որ պրն Ռ.Մ.Դ.-ն կարող էր ազատ արձակման դիմում ներկայացնել յուրաքանչյուր կանտոնում: Անկախ նրանից, թե որ կանտոնում է նա կալանավորվել, վարույթն անպայման պետք է բավարարի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները: Խնդիրը նրանում չէ, որ այդ ընթացակարգերը կիրառելի չեն յուրաքանչյուր կանտոնի համար, այլ այն, որ դրանք ոչ արդյունավետ են եղել դիմողի իրավիճակում: Հետևողականորեն տեղափոխվելով մի կանտոնից մյուսը՝ նա, հաշվի առնելով կանտոնների

դատարանների ընդդատության սահմանափակումները, հնարավորություն չի ունեցել դատարանից վերցնել իր կալանավորման որոշումը, ինչի իրավասությունը նա, 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, ունեցել է:

53. Այդ իրավիճակը բացատրվում է Շվեյցարիայի Համադաշնային կառուցվածքի հիմքում, որում յուրաքանչյուր կանտոն ունի իր քրեական դատավարության օրենսգիրքը…

54. …Դատարանը գտնում է, որ այդ հանգամանքները չեն կարող արդարացնել դիմողի՝ 5-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավունքների խախտումները: Ինչպես սույն դեպքում, կալանավորված անձը շարունակաբար տեղափոխվել է մի կանտոնից մյուսը, և Պետության պարտականությունն է եղել իր դատական համակարգն այնպես կազմակերպել, որ հնարավորություն տրվի դատարաններին կատարելու այդ հոդվածի պահանջները:

***Կոնիգն ընդդեմ Սլովակիայի (König v. Slovakia), 39753/98, 20.01.2004թ.***

20. Սույն գործով Կոսիցի Շրջանային դատարանը դիմողին դատապարտել է երկու հանցագործությունների համար և նրա նկատմամբ նշանակել որոշակի ժամկետով ազատազրկում: Ինչևէ, Տարածաշրջանային դատարանը չի... գործել ազատ արձակման պահանջի հիման վրա, որը դիմողը ներկայացրել է նախքան դատավճռի կայացումը: Այդ պահանջի հետ կապված որևէ որոշման բացակայության պատճառով դիմողը շարունակաբար ձևականորեն պահվել է կալանքի տակ այն որոշման ուժով, որը կայացվել է այլ հիմքով՝ նախքան Շրջանային դատարանի կողմից դատավճռի կայացումը:

21. Այս հանգամանքներում չի կարելի ասել, որ 5-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված վերահսկողությունը ներառված է եղել Կոսիցի Շրջանային դատարանի դատավճռում դրա կայացման պահին՝ 1997թ. փետրվարի 24-ին: Նման վերահսկողություն իրականացվել է միայն 1997թ. հուլիսի 2-ին, երբ Գերագույն Դատարանը մերժել է դիմողի բողոքը և Շրջանային դատարանի դատավճիռն այդպիսով դարձել է վերջնական...

***Օջալանն ընդդեմ Թուրքիայի (Öcalan v. Turkey [GC]), 46221/99, 12.05.2005թ.***

70. Ինչ վերաբերում է այն առանձնահատուկ իրավիճակին, որում դիմողը հայտնվել է ոստիկանությունում կալանավորված լինելու ժամանակ, Դատարանը չի գտնում որևէ պատճառ չհամաձայնելու Պալատի այն կարծիքին, որ գործի հանգամանքների պատճառով դիմողի համար անհնարին է եղել արդյունավետ կերպով դիմել Կառավարության կողմից նշված ընթացակարգերին: Իր դատավճռում Պալատը դա պատճառաբանել է հետևյալ կերպ….

«...Առաջին հերթին, այն պայմանները, որոնցում դիմողը պահվել է, և հատկապես այն փաստը, որ նա պահվել է բացարձակ մեկուսացման մեջ, զրկել են նրան այդ ընթացակարգերին ինքնուրույն դիմելու հնարավորությունից: Նա չի ունեցել իրավական գիտելիքներ և ոստիկանությունում կալանավորված լինելու ժամանակ չի ունեցել փաստաբանի դիմելու հնարավորություն: Բացի դրանից, ինչպես Դատարանը նշել է վերը..., 5-րդ հոդվածի 4-րդ մասում նշված վարույթները պետք է իրենց բնույթով դատական լինեն: Հիմնավորված չէ ակնկալել, որ նման պայմաններում դիմողն առանց իր փաստաբանի կարող է վիճարկել կալանավորման օրինականությունը և տևողությունը:

...Երկրորդ, ինչ վերաբերում է այն ենթադրությանը, որ դիմողի կամ նրա մերձավոր ազգականների կողմից վարձված փաստաբանը կարող է վիճարկել կալանավորումն առանց նրա հետ խորհրդակցելու, Դատարանը գտնում է, որ դիմողի իրավական թիմի այն անդամի գործողությունները, ով իրավասու էր ներկայացնել նրան, խոչընդոտվել են ոստիկանության կողմից... Այլ փաստաբանները, ովքեր վարձվել էին դիմողի ընտանիքի կողմից, գտել են, որ անհնար է կապվել նրա հետ ոստիկանությունում կալանավորված ժամանակ: Ավելին, ելնելով նրա ձերբակալման ոչ սովորական հանգամանքներից, դիմողը հանդիսացել է Նայրոբիում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ ուղղակի տեղեկատվության հիմնական աղբյուր, որոնք դատավարության տեսանկյունից կարևոր են եղել նրա ձերբակալման օրինականությունը վիճարկելու նպատակներից ելնելով:

...Վերջապես, ելնելով բացառապես այն ժամանակահատվածի երկարատևությունից, որի ընթացքում դիմողը ոստիկանությունում կալանավորված է եղել, Դատարանը հաշվի է առնում նրան ներկայացված մեղադրանքի լրջությունը և այն փաստը, որ ոստիկանությունում կալանավորված լինելու ընթացքը չի գերազանցել ներպետական օրենսդրությամբ թույլատրված ժամանակահատվածը: Դա նշանակում է, որ այդ հանգամանքներում, այդ դեպքի վերաբերյալ շրջանային դատավորին ուղղված դիմումը քիչ հավանականություն ուներ հաջողության հասնելու»:

***Ասենովն ընդդեմ Բուլղարիայի (Asenov v. Bulgaria), 42026/98, 15.07.2007թ.***

75. Դատարանը հաստատում է, որ երկու անգամ՝ 1997թ. սեպտեմբերի 30-ին և 1998թ. փետրվարի 3-ին շրջանային դատարանը մերժել է դիմողին կալանքից ազատելու միջնորդությունն այն պատճառաբանությամբ, որ շահագրգիռ անձը՝ մնալով ձերբակալված, ձևական առումով չէր գտնվում կալանքի տակ, այլ կրում էր գրավի պարտականություն:

76. Դատարանը բացահայտում է, որ առաջին անգամ մերժվել է այն պատճառաբանությամբ, որ դատավարության ժամանակ կիրառվող իրավական դրույթները հնարավորություն չեն տալիս նախնական քննության ընթացքում դիմել դատական պաշտպանության՝ կալանքի առումով, եթե չի վճարվել պահանջվող գրավի գումարը: Ինչ վերաբերում է երկրորդ դեպքին, ապա ներպետական իրավունքից հետևում է... դատարանը, որի վարույթում գտնվում էր գործը, ուներ համապատասխան իրավասություն այն բավարարելու, մինչդեռ դիմողի դեպքում այն հրաժարվել է դրա կատարումից:

78. Նկատի ունենալով տվյալ գործի հանգամանքները՝ դժվար է հաստատել այն փաստը, որ դիմողը զրկված է եղել Կոնվենցիայի 5-րդ

հոդվածի 4-րդ կետով երաշխավորված՝ դատարան դիմելու իրավունքից:

*բ. Արագությունը*

***Լետելյեն ընդդեմ Ֆրանսիայի (Letellier v. France), 12369/86, 26.06.1991թ.***

56. Դատարանը որոշակի կասկածներ ունի ազատ արձակման վերաբերյալ երկրորդ դիմումի քննության ընդհանուր տևողության վերաբերյալ, մասնավորապես նախքան պետական մեղադրանքի այն բաժինները, որոնք կոչված էին կարգավորելու նախորդ որոշումը, կբեկանվեին Վճռաբեկ դատարանում. սակայն պետք է հիշեցնել, որ դիմողը պահպանել է նոր դիմում ներկայացնելու իրավունքը: Իսկապես, 1986թ. փետրվարի 14-ից մինչ 1987թ. օգոստոսի 5-ը նա ներկայացրել է վեց այլ դիմում, որոնք քննարկվել են ութից քսան օր ժամկետում…

57. Հետևաբար, 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում տեղի չի ունեցել:

***Բարանովսկին ընդդեմ Լեհաստանի (Baranowski v. Poland), 28358/95, 28.03.2000թ.***

71. Այդ կապակցությամբ Դատարանը գտնում է, որ ազատ արձակելու վերաբերյալ առաջին դիմումի հետ կապված վարույթը տևել է մոտավորապես հինգ ամիս՝ 1994թ. փետրվարի 7-ից հուլիսի 5-ը: Երկրորդի վերաբերյալ վարույթն սկսվել է 1994թ. մարտի 28-ին և տևել է երեք ամսից քիչ ավելի:

72. Դատարանն ընդունում է, որ դիմողին ազատ արձակելու հարցի քննության մեջ ներառված բժշկական միջոցառումների ամբողջությունը հանդիսանում է այն գործոնը, որը կարող է հաշվի առնվել 5-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված «արագության» պահանջի հետ դրա համապատասխանությունը գնահատելիս: Դա չի նշանակում, սակայն, որ անգամ բացառիկ բժշկական փաստաթղթերի ամբողջությունն, ազատում է ազգային իշխանություններին այս դրույթով նախատեսված պարտականություններից…

73. Այդ իմաստով, Դատարանը գտնում է, որ Լոձի Շրջանային դատարանին անհրաժեշտ էր վեց ամիս՝ սրտաբանից արձանագրություն և մոտավորապես մեկ ամիս նյարդաբանից և հոգեբույժից ցուցմունք ստանալու համար: Ապա դատարանին անհրաժեշտ էր ևս մեկ ամիս ստանալու համար այլ՝ չպարզված ապացույց... Համապատասխան որոշումների միջև այդ՝ բավական երկար ընդմիջումները ցույց են տալիս, որ վարույթի ընթացքում ապացույցների ձեռքբերումը չի կատարվել «առանձնահատուկ ջանասիրությամբ», ինչպես վկայակոչվել է Կառավարության կողմից իր հուշագրում: Դատարանը, սակայն, չի բավարարվում Կառավարության այն փաստարկով, որ

բժշկական բնույթի ապացույց ստանալու անհրաժեշտությամբ կարող է բացատրվել ամբողջ վարույթի երկարատևությունը: Հետևաբար, այն գտնում է, որ այս վարույթները չեն կատարվել «արագ», ինչպես պահանջվում է 5-րդ հոդվածի 4-րդ մասով:

***Մամեդովան ընդդեմ Ռուսաստանի (Mamedova v. Russia), 7064/05, 01.06.2006թ.***

96. Դատարանը նկատում է, որ ներպետական դատարաններին պահանջվել է երեսունվեց, քսանվեց, երեսունվեց և քսանինն օր կալանքի մասին որոշման դեմ դիմողի բերած բողոքները քննելու համար… Ոչինչ չի հաստատում, որ դիմողը, ներկայացնելով բողոքները, հանդիսացել է դրանց քննության հետաձգման պատճառ: Դատարանը գտնում է, որ այս չորս ժամանակահատվածները չեն կարող համարվել 5-րդ հոդվածի 4-րդ կետի «արագության» պահանջը բավարարող՝ հատկապես հաշվի առնելով այն, որ դրանց ընդհանուր տևողության պատճառ են հանդիսացել իշխանությունները…

97. Ուստի տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում:

*գ. Վերանայման սահմանները*

***Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի (Nikolova v. Bulgaria [GC]), 31195/95, 25.03.1999թ.***

61. Պլովդիվի Շրջանային դատարանն իր կալանավորման ժամկետի երկարացման դեմ դիմողի բողոքի քննության ժամանակ ակնհայտորեն հիմք է ընդունել Գերագույն դատարանի այդ ժամանակվա դատական նախադեպերը և սահմանափակել է գործի քննության իր սահմանները՝ հանգեցնելով վերջինս այն հարցի պարզաբանմանը, թե արդյոք նախաքննական մարմինը և դատախազը դիմողին մեղադրել են Քրեական օրենսգրքի իմաստով «դիտավորությամբ կատարված ծանր հանցագործության մեջ», և արդյոք նրա առողջական վիճակը թույլ է տալիս նրան ազատ արձակել…

Թեև Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասը կալանավորման դեմ ներկայացված բողոքը քննող դատավորի վրա պարտականություն չի դնում անդրադառնալ բողոքաբերի կողմից ներկայացված բողոքի յուրաքանչյուր փաստարկի, սակայն դրա երաշխիքները կզրկվեն իրենց իմաստից, եթե դատավորը, հիմնվելով ներպետական օրենսդրության և պրակտիկայի վրա, կալանավորված անձի կողմից ներկայացված և Կոնվենցիայի իմաստով ազատության սահմանափակման «օրինականության» առկայության համար անհրաժեշտ պայմանների գոյության վերաբերյալ կասկած հարուցող կոնկրետ փաստերը դիտի գործին վերաբերող կամ ուշադրություն չդարձնի դրանց վրա: Դիմողն իր՝ 1995թ. նոյեմբերի 14-ի բողոքում նշել է նման կոնկրետ փաստեր, որոնք չեն եղել անարժանահավատ կամ չհիմնա-

վորված: Այս հանգամանքները հաշվի չառնելով՝ Շրջանային դատարանը խախտել է դատական վերահսկողության՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված սահմանների և բնույթի վերաբերյալ պահանջը:

***Գրոսլիսն ընդդեմ Լիտվայի (Grauslys v. Lithuania), 36743/97, 10.10.2000թ.***

54. …Դատարանը գտնում է, որ ներպետական դատարանների որոշումները, որոնք վկայակոչվել են Կառավարության կողմից, չեն պարունակում որևէ հղում 1996թ. հոկտեմբերի 9-ի իր կալանավորման անօրինականության վերաբերյալ դիմողի բազմաթիվ բողոքներին... Անգամ դիմողին ազատ արձակելու վերաբերյալ իր որոշման մեջ Շրջանային դատարանը, այդ ժամանակ գործող Քրեական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավական արգելքի պատճառաբանությամբ, հրաժարվել է քննության առնել դիմողի պնդումներն այն մասին, որ խախտվել են ներպետական օրենսդրությունը և Կոնվենցիան, և չի նշել դիմողին ազատ արձակելու որևէ պատճառ... Ազատ արձակման վերաբերյալ որոշումն, այսպիսով, կարող է մեկնաբանվել որպես հաստատում այն բանի, որ դիմողին կալանքի տակ պահելու օրինականության հարցը բաց է քննարկման համար, սակայն չի սահմանվել համապատասխան դատական պատասխան 5-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով...

*դ. Պարբերականությունը*

***Հերցեգֆալվին ընդդեմ Ավստրիայի (Herczegfalvy v. Austria), 10533/83, 24.09.1992թ.***

75. …Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի վերաբերյալ Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն… Կոնվենցիայի պահանջները բավարարելու համար նման վերահսկողությունը պետք է համապատասխանի երկուստեք՝ ազգային օրենսդրության բովանդակային և դատավարական պահանջներին, և ավելին՝ իրականացվի 5-րդ հոդվածի նպատակներին համապատասխան…՝ անձին անօրինականությունից պաշտպանելու համար: Վերջին պայմանը նշանակում է, որ ոչ միայն իրավասու դատարանները պետք է որոշում կայացնեն «արագ»… այլ նաև նրանց որոշումների միջև ընկած ժամանակահատվածը պետք է լինի ողջամիտ...

77. Սույն գործով Քրեական օրենսգրքի 25 (3)-րդ հոդվածի ուժով կայացված երեք որոշումների միջև ժամկետը եղել է համապատասխանաբար՝ տասնհինգ ամիս (06.11.1980 – 08.02.1982), երկու տարի (08.02.1982 – 16.02.1984) և իննամիս (16.02.1984 – 14.11.1984): Առաջին երկու որոշումները չեն կարող դիտվել որպես ողջամիտ ժամանակահատվածի ընդմիջմամբ կայացված, հատկապես, քանի որ

այդ ժամանակ պրն Հերցեգֆալվիի կողմից ներկայացված՝ ազատ արձակման բազմաթիվ պահանջներ թողնվել են անպատասխան…

78. Հակիրճ՝ տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում...

***Էգմեզն ընդդեմ Կիպրոսի** (Egmez v. Cyprus), 30873/96, 21.12. 2000թ.*

94. Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասը պահանջում է դատական բնույթ ունեցող վարույթի իրականացում այնպիսի երաշխիքների պահպանմամբ, որոնք համապատասխանում են ազատության իրավունքի քննարկվող սահմանափակմանը… Չի բացառվում, որ դատարանի կողմից ինքնաբերաբար, ժամանակ առ ժամանակ կալանավորման օրինականության վերանայման համակարգը կարող է հավաստել դրա համապատասխանությունը 5-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին…

95. Դատարանը նշում է, որ Լառնակայի հիվանդանոցում 1995թ. հոկտեմբերի 8-ի լսումից հետո դիմողի կալանավորումը վերանայվել է երկու անգամ՝ 1995թ. հոկտեմբերի 16-ին և, ի լրումն դրա՝ 1995թ. հոկտեմբերի 20-ին՝ ժամանակավորապես ազատ արձակելու վերաբերյալ դիմումի հետ կապված: Դիմողը երկու դեպքում էլ օրինական կերպով ներկայացված է եղել: Դրանից բխում է, որ տեղի չի ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում:

*ե. Գործին ծանոթանալու հնարավորությունը*

***Նիդբալան ընդդեմ Լեհաստանի** (Niedbala v. Poland), 27915/95, 04.07.2000թ.*

67. ...Դատարանը նշում է, որ չի վիճարկվում այն, որ այդ ժամանակ գործող օրենքը իրավունք չի վերապահել ո՛չ դիմողին, ո՛չ նրա փաստաբանին ներկա գտնվել դատարանի նիստին: Ավելին, վիճարկվող դրույթը չի պահանջում, որ դիմողին կալանավորելու վերաբերյալ դատախազի միջնորդության մասին տեղեկացվեն դիմողը կամ նրա փաստաբանը: Հետևաբար, դիմողը հնարավորություն չի ունեցել իր կարծիքն արտահայտել այդ փաստարկների վերաբերյալ՝ վիճարկելու համար դատախազի կողմից վկայակոչված պատճառները, որոնք ներկայացվել են նրա կալանավորումը հիմնավորելու նպատակով: Վերջապես, Դատարանը նշում է, որ Քրեական դատավարության օրենքի վիճարկվող դրույթների իմաստով՝ դատախազին իրավասություն է վերապահվել ներկա գտնվել դիմողի կալանավորման օրինականության քննության վերաբերյալ ցանկացած դատական նիստի, և սա այն մեկ դեպքն է, երբ դատախազը ներկա է գտնվել:

68. Հետևաբար, վերոգրյալ դատողությունների լույսի ներքո Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում:

*զ. Դատախազի միջնորդության մասին չծանուցելը*

***Իլիջկովն ընդդեմ Բուլղարիայի (Ilijkov v. Bulgaria), 33977/96, 26.07.2001թ.***

103. …Կալանավորման դեմ ներկայացված բողոքը քննող դատարանը պետք է ապահովի դատական վարույթի երաշխիքների առկայությունը: Այսինքն՝ վարույթները պետք է լինեն մրցակցային և պետք է համապատասխանաբար ապահովեն մեղադրանքի և պաշտպանության կողմերի «զենքերի հավասարությունը»…

104. Սույն գործով ակնհայտ է, որ Գերագույն դատարանում վարույթի ընթացքում կողմերը չեն գործել հավասար պայմաններում: Որպես ներպետական օրենսդրության և ձևավորված պրակտիկայի դրսևորում, որը դեռևս գործում է, մեղադրող կողմը օգտվում է դատավորին այնպիսի փաստարկներ ներկայացնելու առավելությունից, որոնց վերաբերյալ դիմողը չի տեղեկացվել: Հետևաբար, վարույթները մրցակցային չեն:

***Օսվաթն ընդդեմ Հունգարիայի (Osváth v. Hungary), 20723/02, 05.07.2005թ.***

18. Դատարանը գտնում է, որ դիմողի նախնական կալանքը բազմաթիվ անգամ երկարացվել է նախքան նրան մեղադրանքի կողմի հարուցած միջնորդության պատճենը հանձնելը: Դատարանը գտնում է, եթե անգամ դիմողը հնարավորություն ունենար անձամբ ներկայանալու կամ ներկայացված լինելու իր կալանավորմանը վերաբերող դատական լսմանը, նրան ընձեռված հնարավորությունները բավարար չէին լինի դատախազի միջնորդության դեմ պատշաճ պատասխան ներկայացնելու համար: Ավելին, Դատարանը նշում է, որ դիմողը հնարավորություն չի ունեցել անձամբ ներկայանալու կամ ներկայացված լինելու Գերագույն դատարանում, որը դռնփակ դատական նիստում որոշում էր կայացրել դիմողի կալանավորումը երկարացնելու վերաբերյալ:

Այս հանգամանքներում Դատարանը բավարարում է դիմողի այն պահանջը, որ ինքը չի օգտվել իսկապես մրցակցային վարույթի առավելություններից…

*է. Գործի քննությանը նախապատրաստվելու պատշաճ հնարավորություն*

***Սամոիլան և Սիոնկան ընդդեմ Ռումինիայի (Samoila and Cionca v. Romania), 33065/03, 04.03.2008***

76. Այս հանգամանքների հիման և առանց աշխատանքային գործունեության մեջ գտնվող փաստաբանների կողմից իրենց պարտականությունների կատարման մասին կարծիք արտահայտելու՝ Դա-

տարանը եզրակացնում է, որ դիմողները դատարանում արդյունավետ դատական պաշտպանությունից չեն օգտվել:

77. Ինչ վերաբերում է դատական ծանուցագրերի հանձնման ժամկետներին և դիմողների փաստաբանների՝ դատարան ներկայանալու հնարավորությանը, Դատարանը նշում է, որ յոթ ծանուցագրերից չորսն ուղարկվել է դիմողներին դատական նիստի նախորդ օրը կամ հենց նույն օրը: Այս հանգամանքներում հաշվի առնելով այն փաստը, որ Օրադեայի և Բուխարեստի միջև հեռավորությունը 600 կիլոմետր է, Դատարանը գտնում է, որ փաստաբանների՝ այդ դատական նիստին ժամանակին ներկա գտնվելու հնարավորությունը գործնականում հավասար է զրոյի:

78. Բացի դրանից, Դատարանը նշում է, որ համաձայն Կառավարության կողմից տրված տեղեկատվության՝ դիմողները շաբաթական մեկ անգամ վարել են հեռախոսային խոսակցություններ, որոնք լսվել են բանտի վարչական ծառայությունների կողմից, որն էլ անխուսափելիորեն պատճառ է հանդիսացել տեղեկատվության ուշ փոխանցման համար: Ինչ վերաբերում է 2003թ. սեպտեմբերի 2-ի, 3-ի, հոկտեմբերի 3-ի դատական նիստերի մասին ծանուցագրերին, որոնք դիմողներին է ուղարկվել չորս, ութ և տասն օր առաջ, Դատարանը գտնում է, որ այդ մասին փաստաբաններին տեղեկացնելը և դատական նիստին վերջիններիս մասնակցելու հնարավորությունը եղել է խիստ սահմանափակ:

79. Մնացած առումներով Դատարանը նշում է, որ երբ դիմողները ցանկություն են հայտնել ներկա գտնվել դատարանի դատական նիստերին, դատախազ Ի.Մ-ն առարկել է այն պատճառաբանությամբ, որ նրանք պարտավոր էին ներկա գտնվել Վերաքննիչ դատարանի մյուս դատական նիստերին:

Արդյունքում, կալանքից ազատելու կամ կալանքի ժամկետը երկարացնելու հարցը լուծելու նպատակով հրավիրված դատական նիստին դիմողների մասնակցությունը չապահովելով վերջիններիս զրկել են այն փաստերի վերաբերյալ իրենց առարկությունները ներկայացնելու հնարավորությունից, որոնք ներկայացնում էր դատախազը կալանքի տակ պահելը հիմնավորելու համար:

81. Հետևաբար, այս կապակցությամբ առկա է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթների խախտում:

*ը. Պաշտպանի մասնակցությունը*

***Ուլոչն ընդդեմ Լեհաստանի (Wloch v. Poland), 27785/95, 19.10.2000թ.***

129. Առաջին հերթին Դատարանը նշում է, որ տվյալ ժամանակահատվածում գործող Քրեական դատավարության օրենսգրքի համաձայն կալանավորման ժամկետի երկարացման վերաբերյալ որոշումը կայացվում է պետական մեղադրողի կողմից: Կալանավորման որոշ-

ման դեմ բողոք ներկայացվում է դատարան: Օրենքն իրավունք չի վերապահում անձամբ դիմողին կամ նրա փաստաբանին ներկա գտնվել դատարանի նիստին, որը նշանակվում է նման բողոքարկման հետևանքով: Դատարանը նշում է, որ թեև սույն գործով Կրակովի Շրջանային դատարանի 1994թ. հոկտեմբերի 4-ի վարույթի ընթացքում այդ դատարանը, ակնհայտ բացառությունների միջոցով, թույլ է տվել դիմողի փաստաբանին ներկա գտնվել նիստին, սակայն Կառավարությունը չի նշել այդ որոշման իրավական հիմքը: Դիմողի ներկայացուցիչներին թույլ է տրվել դիմել դատարան, և դրանից հետո նրանք դուրս են հրավիրվել դատարանի դահլիճից: Այդպիսով, նիստին ներկա դատախազին հնարավորություն է տրվել նրանց բացակայությամբ ներկայացնել նոր փաստարկներ՝ ի հիմնավորումն կալանավորման որոշման, մինչդեռ ոչ դիմողը, ոչ նրա փաստաբանները հնարավորություն չեն ունեցել ծանոթանալ դրանց, այդ հիմքով ներկայացնել առարկություններ կամ մեկնաբանել դրանք...

131. Այս հանգամանքներում, Դատարանն այն տեսակետն է պաշտպանում, որ այն վարույթները, որոնցում քննվել է կալանավորման որոշման դեմ դիմողի բողոքը, չեն համապատասխանում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին: Թեև վարույթները կարող են դիտվել որպես «արագ»՝ այս դրույթի իմաստով, սակայն դրանք չեն համապատասխանում «ազատության սահմանափակման գործերի վարույթներով կիրառվող հիմնարար սկզբունքներին»:

***Սելեջևսկին ընդդեմ Լեհաստանի (Celejewski v. Poland), 17584/04, 04.05.2006թ.***

45. ...Դիմողը հաստատում է, որ դատարանը կալանավորման որոշումը կայացրել է դատական նիստի ընթացքում, իր ներկայությամբ, ինչպես պահանջվել է տվյալ ժամանակահատվածում գործող օրենքով...

46. Դատարանը նշում է, որ նախնական կալանքի ժամկետի երկարացմանը վերաբերող վարույթներում դատարանները ևս պարտավոր են Քրեական դատավարության օրենսգրքի 249-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով կալանավորված անձի փաստաբանին տեղեկացնել այն դատական նիստի օրվա և ժամի մասին, որում կայացվելու է կալանավորման ժամկետի երկարացման վերաբերյալ որոշումը կամ քննարկվելու է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ երկարացնելու մասին որոշման դեմ բերված բողոքը.. Պաշտպանն իրավունք ունի ներկա գտնվելու նման նիստի: Այս կապակցությամբ Դատարանը նշում է, որ սույն գործով չկա որևէ ապացույց առ այն, որ դատարանները շեղվել են սովորական վարույթի կարգից, և որ դիմողի փաստաբանը պատշաճ կերպով չի կանչվել դատական նիստին: Ավելին, դիմողը չի ներկայացրել որևէ փաստարկ այն մասին, որ իր պաշտպանությունը, նախքան դատարանի կողմից

պաշտպանի նշանակումը կամ ցանկացած այլ փուլում, եղել է ոչ պատշաճ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ այն վարույթները, որոնցում քննվել է կալանավորման ժամկետի երկարացման հարցը, բավարարել են 5-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները...

***Ֆոդեյլն ընդդեմ Իտալիայի (Fodale v. Italy), 70148/01, 01.06.2006թ.***

43. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետական մեղադրողի գրասենյակի կողմից ներկայացված բողոքի լսումը նշանակել է 2000թ. փետրվարի 15-ին: Սակայն, ներկայանալու վերաբերյալ որևէ ծանուցագիր չի տրվել դիմողին կամ նրա փաստաբանին: Այսպիսով, պատասխանողը չի կարողացել դատական լսման ժամանակ ներկայացնել գրավոր հայտարարություն կամ բանավոր փաստարկ ի պատասխան պետական մեղադրողի գրասենյակի պնդումների: Ի հակառակն դրա՝ այդ գրասենյակի ներկայացուցիչը դա կարող էր անել Վճռաբեկ դատարանում:

44. Այս հանգամանքներում, Դատարանը չի կարող ասել, որ մրցակցային վարույթի և զենքերի հավասարության վերաբերյալ պահանջները պահպանվել են:

45. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում:

*թ. Մեղադրյալի մասնակցությունը*

***Գրոզինիսն ընդդեմ Լիտվայի (Grauzinis v. Lithuania), 37975/97, 10.10.2000թ.***

34. Դատարանը գտնում է, քանի որ կալանավորման ժամկետը երկարացնելու հետ կապված՝ 1997թ. հուլիսի 3-ի և 17-ի լսումների ժամանակ քննարկվելու էր դիմողի համար կարևոր՝ նրա ազատության, ինչպես նաև տարբեր որոշումների կայացման միջև ընկած ժամանակահատվածի խախտումների, կալանքի տակ պահելու հիմքերի վերագնահատման հարցը, ապա դիմողի ներկայությունը դրանց անհրաժեշտ էր, որպեսզի նա կարողանար բավարար տեղեկություն և ցուցումներ տալ իր պաշտպանին:

Բացի դրանից, ընդհանուր առմամբ այս և հետագա վարույթները չեն տրամադրել դիմողին իր կալանավորման օրինականության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն, ինչպես դա պահանջվում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասով:

Այս հանգամանքներում, Դատարանը եզրակացնում է, որ դիմողին չեն տրամադրվել ազատության իրավունքի քննարկվող սահմանափակմանը համապատասխան երաշխիքներ:

***Մամեդովան ընդդեմ Ռուսաստանի (Mamedova v. Russia), 7064/05, 01.06.2006թ.***

91. ...Կարևորություն տալով բողոքի քննության առաջինը լինելու, վերադաս դատարանի կողմից դիմողի անձը գնահատելու հանգամանքներին և նրա՝ իր կալանքի որոշակի պայմանների հիման վրա ազատ արձակվելու մասին միջնորդելու մտադրությանը՝ դիմողի մասնակցությունն անհրաժեշտ է եղել բավարար տեղեկություններ տրամադրելու և իր պաշտպանին համապատասխան ցուցումներ տալու համար…

92. Հաշվի առնելով վերը նշվածը՝ Դատարանը գտնում է, որ 2004թ. օգոստոսի 10-ի դատական նիստին ներկա գտնվելու մասին միջնորդությունը մերժելը դիմողին զրկել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված՝ իր կալանքի օրինականության նկատմամբ արդյունավետ վերահսկողությունից:

*ժ. Հասարակական լսումների անհրաժեշտ չլինելը*

***Ռեինփրեխթն ընդդեմ Ավստրիայի (Reinprecht v. Austria), 67175/01, 15.11.2005թ.***

39. Բացի դրանից, պետք է հիշեցնել, որ 5-րդ հոդվածի 4-րդ մասը և 6-րդ հոդվածը, չնայած դրանց միջև առկա կապին, հետապնդում են տարբեր նպատակներ: 5-րդ հոդվածի 4-րդ մասը նպատակ է հետապնդում պաշտպանել անօրինական կալանավորումից՝ երաշխավորելով յուրաքանչյուր կալանավորման օրինականության նկատմամբ անհապաղ վերահսկողություն... Այն դեպքերում, երբ նախնական կալանքը տեղավորվում է 5-րդ հոդվածի 1-ին մասի (c) կետի շրջանակներում, վերահսկողությունը, ի թիվս այլոց, պետք է որոշի, թե արդյոք կալանավորի նկատմամբ առկա է հիմնավոր կասկած, թե՝ ոչ: 6-րդ հոդվածը գործ ունի «քրեական մեղադրանքի սահմանման հետ» և նպատակ է հետապնդում երաշխավորելու որպեսզի այն վարույթը, որը պետք է պատասխանի այն հարցին, թե մեղադրյալը մեղավոր է իրեն ներկայացված մեղադրանքում, թե՝ ոչ, լինի «արդար և հրապարակային»:

40. Նպատակների այս տարբերությունից պարզվում է, թե ինչու է 5-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում ավելի ճկուն դատավարական պահանջներ, քան 6-րդ հոդվածը, և ավելի խիստ պահանջներ է ներկայացնում անհապաղության նկատմամբ:

Ի լրումն դրա, որոշակի ճշմարտություն կա Կառավարության այն փաստարկի մեջ, որ հասարակական լսումների (հրապարակայնության) պահանջը կարող է բացասական ազդեցություն ունենալ անհապաղության վրա: Նախնական կալանքի օրինականության հետ կապված լսումները, գործնականում, հաճախ պետք է իրականացվեն տվյալ բանտում: Կամ պետք է ապահովվի հասարակության արդյունավետ մասնակցությունը բանտերում իրականացվող լսումներին,

կամ կալանավորներին դատարանների շենք տեղափոխելը, հասարակական լսումների իրականացումն ապահովելու համար, կարող է իրականում պահանջվել այնպիսի միջոցառումների ձեռնարկում, որոնք կհակասեն անհապաղության պահանջին: Առավել ևս, որ այնպիսի գործով, ինչպիսին սա է, անհրաժեշտ է կարճատև ընդմիջումներով իրականացնել կրկնվող վերանայումները:

41. Հետևաբար՝ Դատարանը գտնում է, որ 5-րդ հոդվածի 4-րդ մասը թեև պահանջում է լսումներ, որոնք անհրաժեշտ են նախնական կալանքի օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար, այն, որպես ընդհանուր կանոն, չի նշում, որ դրանք պետք է լինեն հասարակական: Այն չի բացառում, որ որոշակի հանգամանքներում հասարակական լսումները կարող են անհրաժեշտ լինել: Սակայն նման հանգամանքներ սույն գործով առկա չեն եղել: Դիմողի նախնական կալանքի օրինականության նկատմամբ վերահսկողության ընթացքում որևէ այլ սխալի բացթողում չի եղել:

*ի. Պատշաճ դատական լսման պայմանները*

***Ռամիշվիլին և Կոխրեիձեն ընդդեմ Վրաստանի (Ramishvili and Kokhreidze v. Georgia), 1704/06, 27.01.2009թ.***

129. ...դիմողները գտնվել են ամբաստանյալների՝ ճաղավանդակով պատված նստարանին, որը տեղադրված էր դատարանի դահլիճի հեռու անկյունում, բացարձակ անկարգ վիճակում և շրջապատված պահակախմբով: Նրանք հազիվ կարողանում էին հաղորդակցվել իրենց փաստաբանների հետ, չէին կարողանում պատշաճ լսել դատախազին և դատավորին և մի կերպ կարողանում էին իրենց հայտարարությունները լսելի դարձնել դահլիճում առկա աղմուկի պատճառով: Դատական նիստին մասնակցելու փոխարեն դիմողները կանգնել էին իրենց նստարանների վրա, որոնք գտնվում էին ճաղավանդակի հետևում, և կախվելով երկաթյա ճաղերից՝ գոռում էին: Հաղորդակցությունը դատարանի դահլիճում միշտ ընդհատվել է լրագրողների մեկնաբանություններով, բջջային հեռախոսների անդադար զանգերով, մարդկանց բարձրաձայն քննարկումներով, անպարկեշտ արտահայտություններով և այլն, իսկ դատավորը կամ չէր ցանկանում, կամ չէր կարողանում կարգուկանոն հաստատել:

130. ...դիմողների փաստաբանները պաշտպանական ճառերով հանդես գալիս կուրացվել են տեսախցիկների լուսարձակումներով և հալոգենային տեսախցիկների լույսերով: Նրանց հայտարարությունները եղել են հազիվ լսելի: Ի հակառակ դրան, շնորհիվ այն բանի, որ դատախազի աթոռն անմիջականորեն շատ մոտ է գտնվել դատավորին, նրանց միջև առկա երկխոսությունը հանգիստ է ընթացել և ոչ մի բան չի խոչընդոտել դրա լսելիությանը…

131. Դատարանը գտնում է, որ նման քաոսային պայմաններում իրականացված բանավոր լսումները հազիվ թե հանգեցնեին պատ-

շաճ դատական քննության: Դատարանը չի ընդունում Կառավարության փաստարկն այն մասին, որ գրավոր դիմումների հնարավորությունը կարող է մեղմացնել դատարանի դահլիճում առկա վերոնշյալ խառնաշփոթը: Այն նշում է, որ բանավոր լսումները կարող են ստեղծել այնպիսի պայմաններ, որ բանավոր պահանջները և դատարանի դահլիճում կողմերի և դատավորի միջև տեսա-ձայնային շփումները ընթանան պատշաճ, շարժուն և ոչ անանդորր:

132. Դատարանը կրկնում է, որ դիմողին ամբաստանյալների նստարանին պահելը, որը գտնվում է երկաթյա վանդակի նմանվող խցում, և դատարանի դահլիճում «հատուկ ծառայությունների» ներկայությունը վնաս է պատճառում կենտրոնացման նրանց իրավունքին, որն անհրաժեշտ է նրանց արդյունավետ պաշտպանության համար... հասարակական լսումների ընթացքում նման նվաստացումը և հարկադրանքի չհիմնավորված խիստ միջոցների կիրառումը խախտել են ամբողջ պետության տարածքում կիրառման ենթակա անմեղության կանխավարկածը, որպիսի սկզբունքի պաշտպանությունը շատ կարևորվում է քրեական դատավարության յուրաքանչյուր փուլում՝ ներառյալ չավարտված վարույթով կալանավորման օրինականության հետ կապված վարույթները...

134. ...դատական լսումը նախագահող դատավորի անձնական կարգավիճակը… Դատարանի կարծիքով, չի կարելի ասել, որ զուրկ է եղել ազդեցությունից: Այսպիսով, Դատարանը չի կարող խուսափել այն դատողությունից, որ դատավորը դատական լսման ընթացքում ակնհայտորեն օգնություն է ցույց տվել դատախազին՝ կամ ուղղակիորեն պատասխանելով պաշտպանական կողմի հարցերին, կամ վերաձևակերպելով այդ հարցերը դատախազի համար ավելի հարմար ձևով…

135. Ինչ վերաբերում է «անկախությանը», ապա այն, անկասկած, խախտվել է բազմաթիվ գաղտնի գործակալների և անգամ «հատուկ ծառայությունների» կողմից, որոնք ներկա են եղել 2005թ. սեպտեմբերի 2-ի դատական լսմանը: Չի կարելի ասել, որ դատարանին հնարավորություն է տրվել անկախ լինել այն պայմաններում, երբ Կառավարության գործակալները դատարանի դահլիճում իրավիճակն ավելի են վերահսկել, քան գործը լսող դատավորը, և երբ վերջինիս խորհրդակցական սենյակ, որը պետք է լիներ գաղտնի և անձեռնմխելի, հեշտությամբ մուտք են գործել օտար անձինք...

136. Վերոգրյալ հանգամանքները բավարար են Դատարանի համար եզրակացնելու, որ դատական վերահսկողությունը… զուրկ է եղել արդար դատական քննության հիմնարար պահանջներից: Վերահսկողությունը, այսպիսով, իրականացվել է դիմողների՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավունքների խախտմամբ:

*լ. Ազատ արձակվելու իրավունքի անհրաժեշտությունը*

***Մինյաթն ընդդեմ Շվեյցարիայի (Minjat v. Switzerland), 38223/97, 28.10.2003թ.***

50. Դիմողը գտել է, որ ֆեդերալ դատարանը գործը կրկին համայնքային իշխանությունների քննությանն ուղարկելով՝ սխալ է մեկնաբանել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ պարբերությունը: Իր կարծիքով՝ իրականում այստեղ բողոքարկվում է 1997թ. հուլիսի 1-ի հրամանի պատճառաբանական մասը, և ֆեդերալ դատարանն՝ իր 1997թ. հուլիսի 23-ի դատավճռով պարտավոր էր ոչ միայն չեղյալ համարել վերոնշյալ հրամանը, այլ նաև հաստատել անօրինական ձերբակալման փաստը և կարգադրել, որպեսզի իրեն անմիջապես ազատ արձակեն:

51. Կառավարությունը հաստատել է, որ դիմողին Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին պարբերության իմաստով օրինական ճանապարհով զրկել են ազատությունից 1997թ. հուլիսի 4–29-ը և Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ նախատեսված վնասի փաստը հիմնավորված չէ և ֆեդերալ դատարանին ուղղված ազատման պահանջը վերջինիս կողմից հաշվի չի առնվել:

52. Դատարանը հիշեցնում է, որ 5-րդ հոդվածի 1-ին և 4-րդ պարբերություններում օգտագործվող օրինականության հասկացությունն ունի երկու դեպքում էլ միևնույն իմաստը:

53. Հաշվի առնելով 5-րդ հոդվածի 1-ին պարբերության իմաստով դիմողին նախնական կալանքի տակ օրինական կերպով պահելու վերաբերյալ արված եզրակացությունը՝ Դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ պարբերության դրույթների խախտում տեղի չի ունեցել:

## 6. Պայմանները

*ա. Որակը*

***Ի.Ի.-ն ընդդեմ Բուլղարիայի (I. I. v. Bulgaria), 44082/98, 09.06.2005թ.***

72. Անդրադառնալով սույն գործի առանձնահատուկ հանգամանքներին՝ Դատարանը նշում է, որ դիմողը երեք ամիս կալանավորված է եղել վեց քառակուսի մետր տարածքով խցում, որում, հավանաբար, գտնվել է երեք կամ չորս կալանավոր:

73. Դատարանը նշում է, որ այն սանիտարական պայմանները, որոնցում պահվել է դիմողը, բավարար չեն եղել: Խուցը մութ է եղել, վատ է օդափոխվել և, հավանաբար, խոնավ է եղել... Այն պայմանները, որոնցում կալանավորները պետք է զուգարան գնային և իրենց անձնական հիգիենայի կարիքները հոգային, նույնպես անընդունելի են եղել...

74. Նաև, քանի որ դուրս գալու կամ խցից դուրս գործելու հնարավորություն չի եղել, դիմողն ստիպված է եղել իր գրեթե ամբողջ ժամանակն անցկացնել պատուհան չունեցող և մեկ էլեկտրական լամպով լուսավորվող խցում, բացառությամբ օրվա մեջ երկու կամ երեք անգամ սանիտարական կարիքների համար այցերի կամ այն ժամանակի, որի ընթացքում նա խնդրանքներ է գրել իրավասու պաշտոնատար անձանց, և նրան թույլատրվել է գտնվել միջանցքում...

75. Բացի դրանից, կալանավորին՝ իր կարիքները դույլի մեջ, այլ կալանավորների ներկայությամբ հոգալուն, ինչպես նաև այլ կալանավորների կողմից այդ նույն դույլի օգտագործմանը ներկա գտնվելուն հարկադրելը եղել է նվաստացնող... և չի կարող հիմնավորված համարվել, բացառությամբ այն առանձնահատուկ դեպքերի, երբ հիգիենիկ կարիքների համար դուրս գալու հնարավորության ընձեռումը կհանգեցնի անվտանգության իրական և լուրջ սպառնալիքի: Սակայն նման սպառնալիքներ Կառավարության կողմից չեն վկայակոչվել՝որպես Շումենի Շրջանային քննչական ծառայությունում քննարկվող ժամանակահատվածում կալանավորված անձանց՝ զուգարան գնալու հնարավորության սահմանափակման հիմք:

76. Քննարկելով դիմողի առողջության վրա կալանավորման պայմանների ազդեցությունը՝ Դատարանը նշում է, որ նրա մաշկային հիվանդությունը (փսորիաս), որն ակնհայտորեն պահանջում է հիգիենիկ պայմաններ և արևի լույս, խիստ վատթարացել է նրա կալանավորման ընթացքում և ակնհայտ է, թե ինչու է նրա մոտ նույնիսկ սկսել զարգանալ փսորիատիկ հոդաբորբ... Իրավամբ, 1998թ. մարտի կեսերին նրան թույլատրվել է խորհրդակցել մաշկաբանի հետ և դրանից հետո նրան պարբերաբար ներարկումներ են կատարել..., սակայն Դատարանը զարմացած է այն փաստի վրա, որ նրան, առանց որևէ իրավական հիմքի, չի թույլատրվել անհրաժեշտության դեպքում օգտագործել դեղամիջոցներ փսորիասի դեմ …

79. Եզրակացնելով և քննարկելով դիմողին պահելու չարդարացված խիստ ռեժիմի ամբողջական արդյունքը, այն նյութական պայմանները, որոնցում նա պահվել է և այդ պայմանների ու ռեժիմի ազդեցությունը դիմողի առողջության վրա, Դատարանը գտնում է, որ դիմողի կալանավորման պայմանները հանգեցրել են Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված՝ անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի:

***Մոիսեևն ընդդեմ Ռուսաստանի (Moiseyev v. Russia), 62936/00, 09.10.2008թ.***

135. ...դիմողն ավելի քան հարյուր հիսուն անգամ տեղափոխվել է չափորոշիչներին համապատասխանող բանտային ֆուրգոններով, որոնք երբեմն լցված են եղել իրենց տարողությունից ավելի: Քանի որ նա պետք է մի քանի ժամ կանգնած մնար փակ տարածության մեջ, ապա այս սահմանափակ պայմանները նրան կարող էին ուժեղ ֆիզի-

կական տառապանք պատճառել: Նրա տառապանքն ուժգնանում էր պատշաճ օդափոխության և լուսավորության բացակայության և անտանելի շոգի հետևանքով: Քննարկելով տեղափոխման այս պայմանների՝ դիմողի վրա ունեցած ամբողջական ազդեցությունը, Դատարանը գտնում է, որ պահելու վայրից դատարանի դահլիճ և հակառակը տեղափոխելու պայմանները հանգեցրել են Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով «անմարդկային» վերաբերմունքի: Դատարանի գնահատականը վերաբերում է նաև նրան, որ դիմողը նման վերաբերմունքի արժանացել է իր գործով վարույթի կամ կալանավորման ժամկետը երկարացնելու վերաբերյալ դատական քննության ընթացքում, այսինքն՝ այն ժամանակ, երբ նրան անհրաժեշտ է եղել կենտրոնանալ և ուշադիր լինել…

140. Դատարանը գտնում է, որ ավելի քան հարյուր հիսուն օր դիմողը կալանավորված է եղել հսկվող խցում, որը տեղակայված է եղել Մոսկվայի Քաղաքային դատարանի տարածքում: Թեև այս խցում նրա կալանավորումը սահմանափակված էր մի քանի ժամով, այն է՝ նախքան դատական նիստը, դրանից հետո և դատական նիստերի միջև ընկած ժամանակահատվածում, սակայն շատ դեպքերում նա չի կանչվել դատական նիստի և ամբողջ օրն անցկացրել է այդ խցում:

141. ...Դատարանը… նշում է, որ հսկվող խցերը նախատեսված են կարճաժամկետ կալանավորման համար: Ուստի դրանք շատ փոքր տարածք ունեն, ոչ ավելի, քան երկու քառակուսի մետր, ինչպես նաև չունեն պայմաններ, որոնք անհրաժեշտ են երկարաժամկետ կալանավորման համար: Խուցը չունի պատուհան և բնական լույսի ու օդի թափանցման հնարավորություն: Դրա կահավորանքը սահմանափակվում է նստարանով, այնտեղ չկա սեղան, աթոռ կամ որևէ այլ կահույք: Դատարանը հատկապես կարևորում է այն, որ խցում չկա զուգարան և կալանավորները կարող են իրենց բնական կարիքները հոգալ խցի հսկիչների թույլտվությամբ: Բացի դրանից, չկա սննդի մատակարարման որևէ կարգավորում, որը կալանավորին հնարավորություն կտար կանոնավոր կերպով բավարար և պիտանի սնունդ և ջուր ընդունել: Դատարանը գտնում է, որ անընդունելի է անձին պահել այնպիսի պայմաններում, որոնց պարագայում չեն կարող բավարարվել նրա հիմնական պահանջները…

142. Դիմողը գտնվել է այս սահմանափակ պայմաններում օրվա մեջ մի քանի, իսկ երբեմն՝ ութից տասը ժամ: Թեև նրա կալանավորումը հսկվող տարածքում չի կրել շարունակական բնույթ, Դատարանը չի կարող հաշվի չառնել այն փաստը, որ այն փոխարինվել է ազատազրկման վայրում նրա կալանավորմամբ և այնպիսի պայմաններում փոխադրմամբ, որոնք Դատարանն արդեն դիտել է անմարդկային և նվաստացնող: Այս հանգամանքներում, Մոսկվայի Քաղաքային դատարանի տարածքում գտնվող, չափազանց փոքր, առանց սննդի, ջրի և ազատորեն զուգարան գնալու հնարավորությունից զուրկ

հսկվող խցում դիմողին պահելու արդյունքում նրան պատճառվել է ֆիզիկական տառապանք և հոգեկան քայքայում:

143. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ հաշվի առնելով Մոսկվայի Քաղաքային դատարանի հսկվող տարածքում դիմողի կալանավորման պայմանները:

*բ. Ազատազրկման դատապարտված անձանցից անջատ պահելը*

***Փերսն ընդդեմ Հունաստանի (Peers v. Greece), 28524/95, 19.04.2001թ.***

76. Դիմողը վիճարկել է, որ հակառակ այն բանի, որ ինքը հանդիսանում է կալանավորված անձ, նա պահվել է նույն ռեժիմում, ինչ դատապարտյալները: Նա նշել է, որ Կորիդալոսի բանտի պաշտոնատար անձինք չեն նախատեսել կալանավորված անձանց պահելու հատուկ ռեժիմ, ինչը հանգեցրել է անմեղության կանխավարկածի խախտման...

78. Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիան չի նախատեսում բանտերում դատապարտյալների և մեղադրյալների նկատմամբ տարբեր վերաբերմունք նախատեսող որևէ հոդված: Չի կարելի ասել, որ 6-րդ հոդվածի 2-րդ մասը խախտվել է դիմողի կողմից նշված հիմքով:

Հետևաբար, տեղի չի ունեցել Կոնվենցայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում:

*գ. Խիստ մեկուսացման ռեժիմ*

***Վան դեր Վենն ընդդեմ Նիդեռլանդների (Van der Ven v. Netherlands), 50901/99, 04.02.2003թ.***

54. Անկասկած, ԵԲԻ-ում (EBI) կալանավորված լինելու ընթացքում դիմողը ենթարկվել է չափազանց խիստ անվտանգության միջոցների: Դատարանը գտնում է, որ դիմողի սոցիալական կապերը խիստ սահմանափակ են եղել, հաշվի առնելով այն փաստը, որ նրան հնարավորություն չի ընձեռվել միաժամանակ տեսակցելու երեքից ավելի մերձավոր ազգականների հետ, որ բանտի աշխատակիցների հետ նրա ուղղակի շփումները սահմանափակված են եղել, և որ ամիսը մեկ իր ընտանիքի անդամների հետ նա կարող էր տեսակցել միայն ապակե միջնորմի հետևից: Սակայն,... Դատարանը չի կարող ասել, որ դիմողը ենթարկվել է զգայալի կամ ամբողջական մեկուսացման...:

55. Դիմողը պահվել է ԵԲԻ-ում, քանի որ նվազ խիստ ռեժիմի պայմաններում նրան պահելու դեպքում շատ մեծ է եղել նրա փախուստի հնարավորությունը, և, եթե նա փախչեր, նա կարող էր հասարակությանը ենթարկել լուրջ վտանգի՝ կատարելով բռնի ծանր հանցանքներ...

58. ...ԵԲԻ-ի կալանավայրի կանոնների համաձայն՝ «բաց» այցելություններից, այն է՝ հիվանդանոց, ատմնաբուժարան կամ վարսա-

վիրանոց այցելելուց առաջ և հետո դիմողը պետք է ենթարկվի մերկացման հետ զուգորդված անձնական զննության: Ի լրումն դրա, երեք և կես տարվա ընթացքում խցերի ամենշաբաթյա ստուգման ժամանակ նա նաև պարտավոր է եղել ենթարկվել մերկացման հետ զուգորդված անձնական զննության, ներառյալ անալ զննությունը... մերկացմամբ զուգորդվող՝ այս շաբաթական զննություններն իրականացվել են ընթացիկ կարգով և հիմնված չեն եղել որևէ կոնկրետ ապահովման միջոցի կիրառման անհրաժեշտության կամ դիմողի վարքագծի վրա:

ԵԲԻ-ում կիրառվող՝ մերկացման հետ զուգորդված անձնական զննման ժամանակ դիմողը պարտավոր էր մերկանալ բանտի անձնակազմի ներկայությամբ, զննման ընթացքում պետք է ստուգվեր նաև նրա ուղիղ աղիքը, ինչը պահանջում էր, որ նա անհարմար դիրքեր ընդուներ...

62. Դատարանը գտնում է, որ այն իրավիճակում, երբ դիմողն արդեն ենթարկվել է բազմաթիվ միջոցներով ստուգման, և բացակայել է անվտանգության ապահովման անհրաժեշտությունը, ամեն շաբաթյա մերկացման ենթարկվելը, որոնք դիմողի նկատմամբ կիրառվել են մոտավորապես երեք և կես տարվա ընթացքում, նվաստացրել է նրա մարդկային արժանապատվությունը և կարող էր հանգեցնել նրա մոտ ցավի և նվաստացման զգացումի ձևավորման, ինչը կարող էր վիրավորել և ստորացնել նրան: Դիմողն ինքը հոգեբույժի հետ հանդիպման ժամանակ նշել է, որ խուսափել է վարսավիրի մոտ գնալուց՝ մերկացման հետ զուգորդված անձնական զննության չենթարկվելու համար...

63. Հետևաբար, Դատարանը եզրակացնում է, որ մերկացմամբ զուգորդված անձնական ընթացիկ զննությունը և ԵԲԻ-ում անվտանգության այլ խիստ միջոցները հանգեցրել են անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի՝ խախտելով Կոնվենցիայի 3-րդ հոդվածը: Այսպիսով, տեղի է ունեցել նշված դրույթի խախտում:

*դ. Հաղորդակցությունների վերահսկողությունը*

***Հերցեգֆալվին ընդդեմ Ավստրիայի (Herczegfalvy v. Austria), 24.09.1992թ.***

91. Այս չափազանց անհստակ ձևակերպված դրույթները չեն առանձնացնում դիսկրեցիոն լիազորությունների իրականացման սահմանները կամ պայմանները, որոնք դրված են վիճարկվող միջոցների կիրառման հիմքում: Սակայն նման առանձնահատկություններ անհրաժեշտ են հոգեբուժական հաստատություններում կալանավորման հարցի հետ կապված, քանի որ նման հաստատություններում կալանավորված անձինք հաճախ գտնվում են բժիշկների իրավասության ներքո, այնպես որ նամակագրությունը հանդիսանում է արտաքին աշխարհի հետ նրանց հաղորդակցության միակ միջոցը:

Հայտնի է, որ ինչպես նախկինում նշվել է Դատարանի կողմից, հազիվ թե հնարավոր է մշակել այնպիսի օրենք, որը կներառի հնարավոր բոլոր դեպքերը... Այդ պատճառով, թույլատրված սահմանափակումների բնույթի, նպատակի, տևողության և ծավալի կամ դրանց նկատմամբ վերահսկողության միջոցների վերաբերյալ որևէ մանրամասնության բացակայության պայմաններում, վերոնշյալ դրույթները չեն նախատեսում անօրինականությունից պաշտպանության նվազագույն այն աստիճանը, որը ժողովրդավարական հասարակությունում երաշխավորված է օրենքի գերակայությամբ... Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

***Լաբիտան ընդդեմ Իտալիայի** (Labita v. Italy) [GC], 26772/95, 06.04.2000թ.*

175. Դիմողը վիճարկել է այն, որ Պիանոսա բանտի պաշտոնատար անձինք վերահսկել են իր ընտանիքի և փաստաբանի հետ նամակագրությունը...

181. Այս ժամանակահատվածում վերահսկողությունը հիմնված էր Արդարադատության նախարարի կարգադրության վրա, որը համապատասխանել է 1975թ. թիվ 354 օրենքի 41-րդ բաժնին...

182. Դատարանը նշում է, որ Իտալիայի Սահմանադրական դատարանը, հիմնվելով Սահմանադրության 15-րդ հոդվածի վրա, գտել է, որ Արդարադատության նախարարը որևէ իրավասություն չունի բանտարկված անձանց նամակագրության հետ կապված միջոցներ ձեռնարկելու և, հետևաբար, նա գործել է Իտալիայի օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների ահմանազանցմամբ *(ultra vires)*... Հետևաբար, դիմողի նամակագրության վերահսկողությունն այդ ժամանակահատվածում եղել է անօրինական՝ ներպետական օրենսդրության իմաստով, և, հետևաբար, «չի համապատասխանել օրենքին»՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի իմաստով:

*ե. Ընտանիքի հետ շփվելու հնարավորությունը*

***Լավենցն ընդդեմ Լատվիայի** (Lavents v. Latvia), 58442/00, 28.11.2002*

142. Սույն գործով Դատարանն ապացուցում է, որ դիմողի կնոջը և աղջկան երեք տարբեր անգամներ չի թույլատրվել այցելել նրան, որից ամենաերկարը տևել է 1998թ. սեպտեմբերի 25-ից մինչև 2000թ. ապրիլի 20-ը, այսինքն՝ մեկ տարի յոթ ամիս: Ավելին, այս արգելքը կրել է բացարձակ բնույթ: Այս առումով Կառավարությունը տեղեկացրել է, որ դիմողի կինը մեկ անգամ ստացել է այցելության թույլտվություն, բայց չի օգտագործել այդ հնարավորությունը: Դատարանը գտնում է, որ ներկայացված փաստարկը տվյալ գործում չի պաշտպանվել որևէ մեկի կողմից: Մասնավորապես, գործից պարզ է դառնում, որ ոչ գործը քննող դատարանը, ոչ էլ բանտի վարչակազմը չեն

ներկայացրել այս առումով որևէ հիմնավորում: Բացի դրանից, դատարանը գտնում է, որ 1998թ. սեպտեմբերի 25-ի՝ կրկին ձերբակալվելուց առաջ, դիմողը 11 ամիս անցկացրել է տանը, որտեղ իր շփումներն ընտանիքի հետ եղել են անսահմանափակ, դրանից բացի, դիմողն այդ շփումները չի օգտագործել այլ անձանց հետ համաձայնություններ ձեռք բերելու կամ գործի քննությանը խոչընդոտելու նպատակով: Այս հանգամանքներում, Դատարանի համար համոզիչ չէ այն, որ իրենց առջև դրված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է եղել տվյալ միջոցի կիրառումը: Այս միջոցն անհրաժեշտ չէր ժողովրդավարական հասարակության մեջ, ինչպես մենք այն տեսնում ենք Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասում:

***Պլոսկին ընդդեմ Լեհաստանի (Ploski v. Poland), 26761/95, 12.11.2002թ.***

37. Դատարանը նաև նշում է, որ, հավանաբար, դիմողին ներկայացված մեղադրանքները չեն վերաբերել բռնի հանցագործություններին և այդ պատճառով նա ազատ է արձակվել դեռևս 1996թ. փետրվարին... Հետևաբար, դիմողը չի կարող դիտվել որպես բանտարկյալ, որը չունի բանտից ազատ արձակվելու որևէ հնարավորություն: Դատարանը տեղյակ է ֆինանսական և տրամաբանական բնույթի խնդիրների մասին, որոնք կարող են առաջանալ պահակախմբի ուղեկցության դեպքում, ինչպես նաև ոստիկանների ու բանտապահների սակավաթիվության հանգամանքի մասին: Սակայն, հաշվի առնելով կարևորվող երևույթի լրջությունը, այն է՝ անձին իր ծնողների հուղարկավորությանը մասնակցելու իրավունքից զրկելը, Դատարանն այն կարծիքն է արտահայտում, որ պատասխանող պետությունը կարող էր մերժել նրա ներկայությունը, եթե միայն առկա լինեին անհաղթահարելի պատճառներ, և եթե որևէ այլընտրանքային լուծում, օրինակ՝ պահակախմբի ուղեկցությամբ մասնակցություն, հնարավոր չլիներ գտնել…

39. Դատարանը եզրակացնում է, որ սույն գործի մասնավոր հանգամանքներում, և չնայած պատասխանող պետությանը ընձեռված գնահատման սահմաններին, դիմողի՝ ծնողների հուղարկավորությանը մասնակցելու համար նրան բաց թողնելը մերժելը չի հանդիսացել «ժողովրդավարական հասարակության համար ընդունելի», քանի որ դա չի համապատասխանել հասարակական պահանջներին և համաչափ չի եղել հետապնդվող իրավաչափ նպատակներին: Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

***Վան դեր Վենն ընդդեմ Նիդեռլանդների (Van der Ven v. Netherlands), 50901/99, 04.02.2003թ.***

65. ...Նա նաև վիճարկել է այն պայմանները, որոնցում նա գտնվել է իր ընտանիքի անդամների այցելությունների ժամանակ. ապակե միջնորմ, առանց ֆիզիկական շփման հնարավորության, բա-

ցառությամբ ամսվա ընթացքում մեկ անգամ թույլատրվող մեկ ձեռքսեղմման հնարավորության, որը նա պահել էր իր ընտանիքի անդամների համար...

71. ...Սույն գործում անվտանգության միջոցները ձեռնարկվել են փախուստները կանխելու նպատակով... ԵԲԻ-ում անվտանգությունն առավել կենտրոնացված է այն դեպքերի համար և վայրերում, երբ և որտեղ բանտարկված անձինք կարող են ձեռք բերել կամ պահել առարկաներ, որոնք կարող են օգնել նրանց փախչել, կամ կարող են ձեռք բերել կամ փոխանակել փախուստի հետ կապված տեղեկություն: Այս հարկադրանքի միջոցների սահմաններում, դիմողին հնարավորություն է տրվել այցելուներ ընդունել յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ, ինչպես նաև հաղորդակցվել ԵԲԻ-ում պահվող այլ, սակայն սահմանափակ թվով անձանց հետ, մասնակցել խմբերի աշխատանքներին:

72. Սույն գործի հանգամանքներում, Դատարանը գտնում է, որ սահմանափակումները՝ կապված անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի հետ, չեն հակասել օրինական նպատակներին՝ հասնելու ժողովրդավարական հասարակությունում ընդունված պահանջներին:

Հետևաբար, տեղի չի ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

***Կուցերան ընդդեմ Սլովակիայի (Kucera v. Slovakia), 48666/99, 17.07.2007թ.***

129. ...Դատարանը նշում է, որ դիմողին առաջին անգամ թույլատրվել է իր կնոջ հետ տեսակցել 1999թ. հունվարի 29-ին: Նրան 13 ամիս հանդիպել չթույլատրելը, որոնց ընթացքում դիմողը գտնվել է կալանքի տակ, անկասկած, հանգեցրել է դիմողի անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքին լուրջ միջամտության:

130. Ակնհայտ է, որ առկա է եղել օրինական անհրաժեշտություն կանխելու դիմողի կողմից նախնական քննությանը խոչընդոտելը, օրինակ՝ կանխելով դիմողի և նրա հետ որպես մեղադրյալ ներգրավված անձանց, այդ թվում՝ նրա կնոջ միջև տեղեկության փոխանակումը, հատկապես գործին վերաբերող հանգամանքների նախնական քննության ընթացքում: Դատարանը, սակայն, համոզված չէ, որ այդ նպատակին հասնելու համար վիճարկվող միջամտությունը եղել է պարտադիր: Մասնավորապես, չկա որևէ նշում այն մասին, որ դիմողին իր կնոջ հետ տեսակցել, այդ թվում այցելության հատուկ միջոցառումների կիրառմամբ, օրինակ՝ իշխանության ներկայացուցչի ներկայությամբ, թույլատրելը կվտանգի քրեական գործով նախնական քննության ընթացքը:

131. Նաև խնդրահարույց է այն, թե առկա են եղել հիմնավոր ու բավարար հիմքեր դիմողին իր կնոջ հետ նման երկար ժամանակ

հանդիպել չքուլլատրելու համար: Մասնավորապես, 1998թ. մայիսի 6-ին դիմողի և նրա կնոջ փաստաբանը խնդրել է նրանց տեսակցության հնարավորություն ընձեռել՝ թեկուզ նախնական քննության մարմնի ներկայությամբ: Խնդրագրում մեջ վկայակոչվել է նաև այն, որ իր կնոջից երկարաժամկետ բաժանումը դիմողին տառապանք է պատճառել, ինչպես նաև այն, որ քննարկվող հանցագործությունների նախնական քննությունը գրեթե ավարտվել է: Նմանապես, 1998թ. երկրորդ կեսին դիմողն ազատ արձակման իր խնդրագրում նշել է, որ այդ ժամանակ նախնական քննություն իրականացվել է բացառապես այն հանցագործություններով, որոնք նրա և նրա կնոջ հետ կապ չեն ունեցել:

132. Դատարանն ուսումնասիրել է այն փաստը, որ դիմողը փորձել է 1998թ. հունվարի 19-ին իր կնոջը բանտից գաղտնի նամակ ուղարկել... Այս դեպքում այն չունի որևէ կարևորություն, քանի որ տեղի է ունեցել վարույթի վաղ փուլերում և չի հաստատվել, որ այդ նամակը նպատակ է հետապնդել միջամտելու նախնական քննությանը:

133. Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ քննարկվող միջամտությունը չի կարող դիտվել որպես «ժողովրդավարական հասարակության համար անհրաժեշտ»:

134. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում՝ հաշվի առնելով դիմողին՝ իր կնոջ հետ տեսակցելն արգելելը:

*գ. Վտանգի տակ գտնվող անձանց հսկողությունը*

***Թանրիբիլիրն ընդդեմ Թուրքիայի (Tanribilir v. Turkey), 21422/93, 16.11.2000թ.***

77. Դատարանը գտնում է, որ ոստիկանները չեն կարող մեղադրվել այնպիսի հատուկ միջոցների կիրառման մեջ, ինչպիսիք են դիմողի մենախցի առաջ 24-ժամյա հսկողության իրականացումը կամ նրան անձնական խուզարկության ենթարկելը:

78. Ինչպես երևում է համապատասխան ոստիկանների կողմից տրված ցուցմունքներից՝ իրականությանը համապատասխանում է այն փաստը, որ ձերբակալման վայրում կանոնավոր կերպով իրականացվել է հսկողություն, բայց ոչ մի հսկիչ կանոնավոր կերպով չի գտնվել շենքում:

Ինչպես երևում է Հանձնաժողովի ներկայացուցիչների կողմից հավաքված՝ ոստիկանների վկայություններից՝ դեպքի օրվա երեկոյան որևէ սպա պետք է գտնվեր ձերբակալված անձանց պահելու վայրում՝ անհրաժեշտ հսկողություն իրականացնելու համար:

79. Սակայն Դատարանը գտնում է, որ գործում առկա չէ որևէ ապացուցողական փաստ, որ ոստիկանները տվյալ դեպքում կարող էին նախատեսել Ա.Տ.-ի կողմից ինքնասպանության փորձ կատարելու

հնարավորությունը, ուստի դրան համապատասխան որևէ սպա պետք է ամբողջ ժամանակ գտնվեր Ա.Տ.-ի մենախցի մոտ:

80. Վերոնշյալ հիմնավորումներից ելնելով Դատարանը գտնում է, որ այս կապակցությամբ տեղի չի ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի դրույթի խախտում:

*է. Պաշտպանությունը մյուս կալանավորներից*

***Փոլ և Օդրի էդվարդսներն ընդդեմ Միացյալ Թագավորության (Paul and Audrey Edwards v. United Kingdom), 46477/99, 14.03.2002թ.***

60. Դատարանը բավարարված է նրանով, որ այն տեղեկությունը, որի համաձայն Ռիչարդ Լինֆորդը տառապել է բռնության դրսևորումներ ունեցող հոգեկան հիվանդությամբ, որը բավական լուրջ է եղել նրա կալանավորման պայմանները որոշելու համար, և դա, զուգորդված ձերբակալությունից առաջ և հետո նրա դրսևորած անհնարին և բռնի վարքագծով, ցույց է տվել, որ նա այլոց, սույն գործի հանգամանքներում՝ Քրիստոֆեր էդվարդսի համար իրական և լուրջ վտանգ է ներկայացրել, երբ տեղավորվել է նրա բանտախցում:

61. Ինչ վերաբերում է այն միջոցներին, որոնք ակնկալվում է, որ կօգնեին խուսափել այդ վտանգից, ապա Դատարանը գտնում է, որ Ռիչարդ Լինֆորդի բժշկական պատմությանը վերաբերող տեղեկությունը և ենթադրյալ վտանգը պետք է կալանավայրի աշխատակիցների ուշադրությունը գրավեին, քանի որ նրանք էին պատասխանատու որոշել, թե որտեղ տեղավորել նրան՝ առողջապահական կենտրոնում, թե՝ այլ բանտարկյալների հետ ընդհանուր մասում: Նման բան տեղի չի ունեցել:...

62. ...ակնհայտ է, որ նոր բերված անձանց զննման գործընթացը պետք է հնարավորություն տար բացահայտելու այն բանտարկյալներին, ովքեր, իրենց կամ այլ անձանց բարօրության անհրաժեշտությունից ելնելով, պետք է գտնվեն բժշկական հսկողության տակ: Բանտի ընդունող անձնակազմի կողմից տրամադրված տեղեկության թերությունը սույն գործով զուգորդվել է կարճատև և մակերեսային հետազոտությամբ, որն իրականացվել է առողջական վիճակի զննություն իրականացնող անձի կողմից, ով գործի քննությամբ ճանաչվել է ոչ պատշաճ որակավորում ունեցող և գործել է բժշկի բացակայությամբ, ում նա պետք է դիմեր բարդության կամ խնդիր առաջանալու դեպքում:

63. ...միևչդեռ Դատարանը ցավում է այն փաստի համար, որ խցում տեղադրված կանչի կոճակը փչացած է եղել, և գտնում է, որ իշխանությունների տիրապետած տեղեկությունը հաշվի առնելով նրանք ի սկզբանե չպետք է Ռիչարդ Լինֆորդին տեղավորեին Քրիստոֆեր էդվարդսի խցում:

***Կուդլան ընդդեմ Լեհաստանի (Kudla v. Poland) [GC], 30210/96, 26.10.2000թ.***

95. Դատարանն ի սկզբանե գտնում է, որ սույն գործով չի վիճարկվել այն, որ երկուստեք՝ 1993թ. հոկտեմբերի 4-ից մինչև 1996թ. հոկտեմբերի 29-ը տևած կալանավորումից առաջ և հետո դիմողը տառապել է քրոնիկ դեպրեսիայով և երկու անգամ փորձել է բանտում ինքնասպանություն գործել: Նրա վիճակը նաև ախտորոշվել է որպես անձնային կամ նյարդային խախտում և իրավիճակային դեպրեսիվ ազդեցություն…

96. …բժշկական տվյալների համաձայն՝… իր կալանավորման ընթացքում դիմողը պարբերաբար խնդրել և ստացել է բժշկական օգնություն: Նա հետազոտվել է տարբեր բնագավառների բժիշկների կողմից և հաճախ հոգեբուժական օգնություն է ստացել…

1994թ. իր ինքնասպանության փորձից շատ կարճ ժամանակ անց՝ 1994թ. մարտի 9-ից մայիսի 26-ը, դիմողը ենթարկվել է հոգեբուժական հետազոտության Ուրոքլավի բանտային հիվանդանոցում, ինչը, սակայն, Դատարանում հետազոտված ապացույցների լույսի ներքո չի հանդիսանում իշխանությունների կողմից թույլ տրված տեսանելի թերացումների արդյունք կամ դրա հետ կապված երևույթ... Ավելի ուշ... նա ենթարկվել է ևս երկու հետազոտությունների՝ 1994թ. նոյեմբերի 9-ին և դեկտեմբերի 7-ին...

***Պոպովն ընդդեմ Ռուսաստանի (Popov v. Russia), 26853/04, 13.07.2006թ.***

210. Դատարանը նշում է, որ 1994թ. հեռացրել են դիմողի միզապարկի քաղցկեղային ուռուցքը և նա ենթարկվել է քիմիական թերապիայի:

211. Դատարանը գտնում է, որ դիմողի առողջական խնդիրների նշված բնույթից, նրա վիճակից ելնելով նրան անհրաժեշտ էր մասնագիտացված բժշկական հսկողություն քաղցկեղի հնարավոր կրկնման հնարավորությունը ժամանակին ախտորոշելու և բուժելու համար... դիմողին անհրաժեշտ նվազագույն բժշկական հսկողությունը ներառել է միզբան-ուռուցքաբանի և ցիստոսկոպիստի մոտ գոնե տարին մեկ անգամ հետազոտությունը...

212. …2003թ. հունվարի 23-ից մարտի 21-ն ընկած ժամանակահատվածում դիմողը գտնվել է բժշկական բաժանմունքում և պարբերաբար հետազոտվել է բաժանմունքի վիրաբուժական մասի գլխավոր բժշկի կողմից: Նրա նկատմամբ նշանակվել է ուռո-օնկոլոգիական և ցիստոսկոպիական հետազոտություն: Հետազոտությունը նշանակվել է բազմաթիվ անգամ, սակայն չի իրականացվել, քանի որ դիմողը պետք է մասնակցեր դատական նիստերի, որոնք համընկնում էին բժշկի նշանակած օրերի հետ: Դիմողն ազատ է արձակվել 2003թ.

մարտի 21-ին՝ առանց բժշկական հետազոտության անցկացման... Շատ դեպքերում, կալանավայրի բժիշկը հեռախոսով խորհրդակցել է դիմողի միզաբան-ուռուցքաբան բժիշկ Մ.-ի հետ: Սակայն, բժիշկ Մ.-ի՝ 2004թ. սեպտեմբերի 9-ի հայտարարության համաձայն՝ նրան դիմողի առողջության վերաբերյալ բավարար տեղեկություն չի տրվել: Մասնավորապես, նա չի տեղեկացվել ուլտրաձայնային սկանով հայտնաբերված նեոպլազմի վերաբերյալ: Դատարանի կարծիքով, այն փաստը, որ դիմողի առողջությանը վերաբերող տեղեկությունը հայտնել են բժիշկ Մ.-ին, բավարար չէր նրա կողմից դիմողին ճիշտ ախտորոշում տալու և նրան համապատասխան բուժում նշանակելու համար:

213. Հետևաբար, իր կալանավորման մեկ տարի ինն ամսվա ընթացքում դիմողը չի անցել ոչ միզաբան-ուռուցքաբանի մոտ հետազոտություն, ոչ ցիստոսկոպիա: ...Դատարանը գտնում է, որ SIZO 77/1 կալանավայրում դիմողը չի ստացել իր վիճակին համապատասխանող բժշկական օգնություն:

***Չիեսիակն ընդդեմ Լեհաստանի (Dzieciak v. Poland), 77766/01, 09.12.2008թ.***

101. ...չորս տարի տևած նախնական կալանքի ընթացքում դիմողին ցույց տրված բժշկական օգնության որակն ու քանակը վտանգ են սպառնացել նրա կյանքին և առողջությանը: Մասնավորապես, պետության իշխանական տարբեր համակարգերի միջև համագործակցության և համակարգվածության բացակայությունը, դիմողին նշանակված երկու վիրահատություններին չենթարկելը, գործը քննող դատարանին դիմողի առողջության վերաբերյալ պատշաճ և օպերատիվ տեղեկություն չտրամադրելը, նրա կյանքի վերջին օրերին նրան բժիշկ չտրամադրելը և նրա՝ կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելիս նրա առողջական վիճակը հաշվի չառնելը հանգեցրել են ոչ պատշաճ բժշկական օգնություն տրամադրելուն և կալանավորված անձանց կյանքի իրավունքն ապահովելու՝ Պետության պարտականության խախտմանը:

Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում՝ հաշվի առնելով Լեհաստանի իշխանությունների կողմից դիմողի կյանքի իրավունքը չապահովելը:

***Ալեքսանյանն ընդդեմ Ռուսաստանի (Aleksanyan v. Russia), 46468/06, 22.12.2008թ.***

156. ...2007թ. հոկտեմբերի վերջից, կարելի է ասել, դիմողի առողջական վիճակից ելնելով անհրաժեշտ էր նրան տեղափոխել ՁԻԱՀ-ի բուժման մասնագիտացված հիվանդանոց: Բանտի հիվանդանոցը նման դեպքերում պատշաճ կառույց չէ:

157. Վերջապես, Դատարանը գտնում է, որ որևէ լուրջ գործնական բարդություններ չէին առաջանա դիմողին անմիջապես մասնագիտացված բժշկական հաստատություն տեղափոխելիս: Նման հաս-

տատություն է հանդիսացել Մոսկվայի ՁԻԱՀ-ի կենտրոնը... տեղակայված նույն քաղաքում և պատրաստ դիմողին ստացիոնար բուժման ընդունելու: Ակնհայտ է, որ դիմողն ի վիճակի է եղել վճարելու բուժման հետ կապված ծախսերի մեծ մասը: Բացի դրանից, հաշվի առնելով դիմողի առողջական վիճակը և դրսևորած վարքագիծը՝ Դատարանը գտնում է, որ անվտանգության առումով այն սպառնալիքը, որ նա կարող էր ներկայացնել, եղել է աննշան՝ նրա առողջական վիճակին սպառնացող վտանգի համեմատ... Համենայնդեպս, անվտանգության միջոցառումները, որոնք կալանավայրի աշխատակիցների կողմից ձեռնարկվել էին թիվ 60 հիվանդանոցում, խիստ բարդ չեն եղել:

158. ...Դատարանը գտնում է, որ ներպետական իշխանությունները չեն ապահովել դիմողի բավարար բժշկական խնամքը՝ հավաստելու համար, որ նա չի տառապել Կոնվենցիայի 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքից՝ նախքան 2008թ. փետրվարի 8-ին նրան կալանավայրից դուրս գտնվող արյունաբանության հիվանդանոց տեղափոխելը: Սա ոտնահարել է նրա արժանապատվությունը և հանգեցրել, մասնավորապես, լուրջ բարդությունների՝ պատճառելով տառապանք, որը անխուսափելիորեն կապված է նրա բանտարկության և հիվանդության հետ և հանգեցրել է անմարդկային ու նվաստացնող վերաբերմունքի: Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

***Կապրիկովսկին ընդդեմ Լեհաստանի (Kaprykowski v. Poland), 23052/05, 03.02.2009թ.***

71. ... ի վերջո դիմողն ունեցել է երեք լուրջ առողջական խնդիր, այն է՝ էպիլեպսիա, էնցեֆալոպաթիա և թուլամտություն, որոնք պահանջել են պարբերական բժշկական խնամք: Նա տառապել է հաճախակի էպիլեպտիկ ընկնավորություններով, որոնք երբեմն օրվա մեջ մի քանի անգամ են կրկնվել...

72. ...Պատժախցում նրա գտնվելու ժամանակ մի քանի բժշկի կողմից բարձրացվել է այն հարցը, որ նա պետք է հատուկ հոգեբուժական և նյարդաբանական բուժում ստանա և պետք է մշտական բժշկական հսկողության տակ գտնվի... Դեռևս 2001թ. Բիալյստոկի Շրջանային դատարանի կողմից նշանակված դատական բժիշկներն այն կարծիքն են հայտնել, որ պատժական համակարգն այլևս չի կարող դիմողի համար անհրաժեշտ պայմաններ ապահովել, և նրանք նշել են, որ դիմողին անհրաժեշտ է գլխուղեղային վիրահատության ենթարկել... 2007թ. մայիսի 9-ին, երբ դիմողն ազատ է արձակվել Ցզարնի բանտային հիվանդանոցից, բժիշկներն առաջարկել են նրան պահել 24-ժամյա բժշկական հսկողության տակ... Վերոգրյալի լույսի ներքո Դատարանը համոզված է, որ դիմողին անհրաժեշտ է եղել մշտական բժշկական հսկողություն, որի բացակայության դեպքում նրա առողջությանը լուրջ վտանգ կսպառնա:

73. ...պետք է նշել, որ դիմողը հաճախակի ունեցել է էպիլեպտիկ ընկնավորություններ, և երբ նա տեղավորվել է Պոզնանի կալանավայրի ընդհանուր մասում, նա կարող էր հույսը դնել միայն իր հետ պահվող անձանց անմիջական օգնության վրա, իսկ հնարավորության դեպքում՝ նաև կալանավայրի բժշկի օգնության վրա, ով չէր մասնագիտացել նյարդաբանությամբ: Ի լրումն դրա, իր անձնային փոփոխությունների և թուլամտության պատճառով դիմողն ի վիճակի չի եղել ինքնուրույն որոշումներ կայացնել կամ առօրյա ընթացիկ կարիքները հոգալ: Սա պետք է նրա հանդեպ լուրջ անհանգստություն առաջացներ, քանի որ մյուս բանտարկյալների համեմատ նա հայտնվել էր նվազ արժանապատիվ վիճակում:

74. Այն փաստը, որ 2005թ. հունիսի 24-ից հուլիսի 12-ը դիմողը գտնվել է Պոզնանի կալանավայրի հիվանդանոցում, որևէ կերպ չի ազդել այս հանգամանքի վրա, քանի որ վերջինս մասնագիտացված չէր նյարդաբանական խախտումների բուժման մեջ և, բացի դրանից, դիմողի բուժումը շատ կարճ է տևել:

Բացի դրանից, դիմողին 2007թ. մայիսի 9-ից նոյեմբերի 30-ը Պոզնանի կալանավայրի ընդհանուր բաժնի խցում պահելը՝ առանց 24-ժամյա բժշկական հսկողության, ուղղակի հակասում է այն բժիշկների եզրակացություններին, ովքեր նախորդ ամիսներին հետազոտել էին դիմողին Ցզարնի բանտային հիվանդանոցում: Այն փաստը, որ այդ ժամանակաընթացքում դիմողը տասնութ անգամ կալանավայրի բժշկական կազմի օգնությանն է դիմել, որևէ հետևանք չի կարող ունենալ, քանի որ նրան տրամադրված բժշկական օգնությունը եղել է ընդհանուր բնույթի, բժիշկներից որևէ մեկ նյարդաբան չի եղել:

Վերջապես, Դատարանը զարմացած է Կառավարության այն փաստարկից, որ դիմողի կալանավորման պայմանները պատշաճ են եղել, քանի որ նա գտնվում էր մի բանտախցում այնպիսի բանտարկյալների հետ, ովքեր գիտեին ինչպես նրան պետք է բժշկական, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև առաջին բժշկական օգնություն ցույց տալ: Դատարանը հավանության չի արժանացնում այն իրավիճակը, երբ կալանավայրի անձնակազմն իրեն ազատված է համարում առավել խոցելի կալանավորների անվտանգությունն ու խնամքը ապահովելու իր պարտականությունից՝ պարտավորեցնելով վերջիններիս հետ մի խցում գտնվող անձանց առօրյա օգնություն ցույց տալ այդ կալանավորներին:

75. Վերջապես, Դատարանն ուշադրություն է դարձնում նաև սույն գործի երեք կարևոր հանգամանքների վրա:

*Նախևառաջ*, այն ժամանակահատվածը, որի ընթացքում դիմողը կարող էր օգնություն խնդրել միայն բանտի առողջապահական համակարգից, տևել է ավելի քան չորս տարի... Դատարանն անհանգստացած է այն փաստով, որ դիմողն այդ ժամանակահատվածի մեծ մասը կալանավորված է եղել ընդհանուր կարգով կամ, լավագույն դեպքում՝ բանտային հիվանդանոցի ներքին ինֆեկցիոն մասում: Նա

կալանավորվել է Գդանսկի կալանավայրի մասնագիտացված նյարդաբանական հիվանդանոցում ընդամենը երկու անգամ:

*Երկրորդ*, դիմողը հաճախ երկարաժամկետ փոխադրումների է ենթարկվել և մոտ տասնութ անգամ տարբեր կալանավայրեր է փոխադրվել... միջավայրի նման հաճախակի փոփոխությունները պետք է որ բացասական ազդեցություն ունենային դիմողի վրա, ով տվյալ ժամանակահատվածում հանդիսացել է թույլ հոգեկան վիճակում գտնվող անձ:

*Երրորդ*, ... տվյալ ժամանակահատվածում դիմողն ընդունել է որոշակի ոչ սովորական դեղամիջոցներ, որոնք նշանակվել էին Գդանսկի կալանավայրի նյարդաբան մասնագետի կողմից, սակայն 2005թ. հունիսին Պոզնանի կալանավայրի հիվանդանոցի բժիշկների կողմից, ովքեր նյարդաբաններ չեն հանդիսացել, նրա բուժումը փոխարինվել էր սովորական դեղամիջոցներով բուժման: Դատարանը նաև նշում է, որ երբ 2005թ. հոկտեմբերին դիմողը վերջապես փոխադրվել է Գդանսկի կալանավայրի հիվանդանոցի նյարդաբանական բաժանմունք, նրան միանգամից նշանակել են նախորդ դեղամիջոցները:

Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիան չի երաշխավորում այնպիսի բժշկական օգնություն ստանալու իրավունք, որը կգերազանցի հասարակության համար ընդհանրապես հասանելի բժշկական օգնությունը... Սակայն, ընդունելով դիմողի հայտարարությունն այն մասին, որ... սովորական դեղամիջոցներով բուժման անցնելուց հետո նրա առօրյա ընկնավորությունների թիվն ավելացել, իսկ հետևանքները՝ ավելի դաժան էին դարձել... և հանգեցրել էին դիմողի մոտ ցավի և ֆիզիկական տառապանքի առաջացման:

76. Դատարանի կարծիքով, Պոզնանի կալանավայրում պատշաճ բժշկական միջամտության բացակայությունը և դիմողին նույն բանտախցում գտնվող անձանցից կախվածության և ավելի ևսեմ վիճակի մեջ դնելը հանդիսացել են նրա արժանապատվության ոտնահարում և հանգեցրել են, մասնավորապես, լուրջ բարդությունների, որոնք, ազատության անխուսափելի սահմանափակումների հետ մեկտեղ, նրան ցավ և տառապանք են պատճառել:

77. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ դիմողի հետագա կալանավորումը՝ առանց պատշաճ բժշկական միջամտության և օգնության, հանդիսացել է անմարդկային և նվաստացնող վերաբերմունք, որն հանգեցրել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման:

*թ. Քվեարկելու իրավունքը*

***Լաբիտան ընդդեմ Իտալիայի** (Labita v. Italy) [GC], 26772/95, 06.04.2000թ.*

202. Դատարանը գտնում է, որ այն անձինք, ովքեր ենթարկվել են հատուկ ոստիկանական հսկողության, ինքնաբերաբար հանվում են

ընտրողների ցուցակներից, քանի որ զրկվել են իրենց քաղաքացիական իրավունքներից «հասարակության համար վտանգ ներկայացնելու» պատճառով, կամ, ինչպես սույն գործում է, կասկածվում են մաֆիային պատկանելու մեջ... Կառավարությունը նշել է այն վտանգը, որ անձինք, ովքեր «կասկածվում են Մաֆիային պատկանելու մեջ» կարող են իրենց ձայնի իրավունքն օգտագործել հօգուտ մաֆիայի այլ անդամների:

203. Դատարանը կասկած չունի առ այն, որ մաֆիային անդամակցելու մեջ կասկածվող անձին քվեարկելու իրավունքից զրկելն իրավաչափ նպատակ է հետապնդում: Այն գտնում է, սակայն, որ թեև հատուկ ոստիկանական հսկողության միջոցներ սույն գործով վարույթի ընթացքում կիրառվել են դիմողի նկատմամբ մինչև դատական քննության ավարտը և մինչև նրա արդարացումը՝ այն հիմքով, որ «դիմողը հանցանք չի կատարել»: Դատարանը չի ընդունում Կառավարության արտահայտած այն տեսակետը, որ դիմողի մեղքը չի հերքվել դատաքննության ընթացքում: Այս հայտարարությունը հակասում է Տրապանիի Շրջանային դատարանի... և Պալերմոյի Վերաքննիչ դատարանի... դատավճիռների իմաստին... Երբ նրա անունը հանվել է ընտրողների ցուցակից՝ չի եղել որևէ ապացույց, որով կհիմնավորվեր դիմողի՝ մաֆիային պատկանելու «կասկածը»...

Այս հանգամանքներում, Դատարանը չի կարող կիրառված միջոցները համաչափ դիտել:

*ժ. Վատ վերաբերմունքը կալանավայրի աշխատակիցների կողմից*

***Սաթիկը և այլոք ընդդեմ Թուրքիայի (Satik and others v. Turkey), 31866/96, 10.10.2000թ.***

56. ...Դիմողները վիճարկել են այն, որ իրենք դաժանաբար և անօրինական ծեծի են ենթարկվել Պետության ներկայացուցիչների կողմից: Կառավարության պնդմամբ՝ դիմողների վկայվածքներն առաջացել են ընկնելու արդյունքում, որը նրանք սադրել են իրենց բողոքի ցույցի ընթացքում:

57. ...Կառավարությունը չի նշել որևէ հանգամանք, որը կժխտեր այն կանխավարկածը, որ դիմողները դիտավորյալ ծեծի են ենթարկվել բողոքի ակցիային ներգրավվելու պատճառով: Մասնավորապես, Կառավարության կողմից չի արտահայտվել այն ենթադրությունը, որ ոստիկանների միջամտությունը պայմանավորված է եղել զանգվածային անկարգություններ կամ Բուկայի բանտի ներքին անվտանգության նկատմամբ կազմակերպված ոտնձգությունը ճնշելու անհրաժեշտությամբ...

61. Իշխանությունների համոզիչ բացատրության բացակայության պայմաններում, Դատարանը պետք է պարզի, թե դիմողները ենթարկվել են ծեծի և նրանց վնաս պատճառվել է, ինչպես դա պնդում

են: Այն վերաբերմունքը, որին նրանք ենթարկվել են, հանգեցրել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման:

### 7. Տևողությունը

*ա. Դիտարկման անհրաժեշտությունը*

***Մամեդովան ընդդեմ Ռուսաստանի** (Mamedova v. Russia), 7064/05, 01.06.2006թ.*

82. Ի վերջո, Դատարանը գտնում է, որ դատավարությունների ոչ մի փուլում ներպետական դատարանները չեն քննարկել այն, թե դիմողի կալանավորումը գերազանցել է «ողջամիտ ժամկետը»: Նման վերլուծությունը պետք է հատկապես ակնհայտ լիներ ներպետական որոշումներում, քանի որ դիմողն անց էր կացրել բազմաթիվ ամիսներ կալանքի տակ, սակայն ողջամիտ ժամկետի ստուգում երբևէ չի իրականացվել:

*բ. Ժամանակահատվածը որոշելը*

***Ն.-ն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության** (N. v. Federal Republic of Germany), 9132/80, 16.12.1982թ., DR 31, 154*

11. ...Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում նշված ժամկետը որոշելիս անհրաժեշտ է քննարկել ոչ միայն 1977թ. հուլիսի 28-ի՝ դիմողի ձերբակալությունից հետո ընկած ժամանակահատվածը, այլ նաև այն փաստը, որ դիմողը նույն գործով վարույթի ընթացքում ավելի վաղ պահվել է կալանքի տակ... Առաջին ատյանի դատարանի դատավճռի հրապարակման ժամանակ՝ 1978թ. հունվարի 13-ին, դիմողը կալանքի տակ է գտնվել արդեն 11 ամիս: Հանձնաժողովը գտնում է, որ սա այն վերջնական ժամկետն է, որը պետք է քննարկվի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով...

12. ...Այս ժամկետից հետո դիմողը ներպետական օրենսդրության իմաստով շարունակում է դիտվել կալանքի տակ պահվող անձ, սակայն Կոնվենցիայի իմաստով նրա կալանավորումը վերաբերում է 5-րդ հոդվածի 1-ին մասի (a) կետին, որը սահմանում է իրավասու դատարանի կողմից դատապարտված անձի օրինական կալանավորումը...

*գ. Ոչ անողջամիտ*

***Վ.-ն ընդդեմ Շվեյցարիայի** (W. v. Switzerland), 14379/88, 26.01.1993թ.*

42. ...Դաշնային դատարանը... դիմողի՝ բանտում գտնված ժամանակահատվածը երբևէ չի դիտել որպես սահմանազանցող: Այն գտել է, որ դիմողն ի սկզբանե պատասխանատու է եղել նախնական

քննության դանդաղ ընթացքի համար, մասնավորապես՝ լուրջ դժվարություններ են առաջացել նրա կազմակերպությունների ֆինանսական վիճակի վերականգնման ժամանակ, որն առաջացել է դրանց հաշիվների վիճակի պատճառով: Այն նշում է, որ վիճակն ավելի է բարդացել, երբ նա որոշել է մերժել որևէ հայտարարություն անելը՝ այդպիսով ձգձգելով վարույթի ընթացքը...

... Դատարանը... նշում է, որ կալանքի տակ գտնվող կասկածյալի՝ իր գործը որոշակի արագությամբ քննելու իրավունքը չպետք է խոչընդոտի դատարանների կողմից քննության պատշաճ իրականացմանը... Դատարանը չի գտնում որևէ ժամանակահատված, որի ընթացքում նախնական քննություն իրականացնող մարմինները չեն իրականացրել քննությունը պատշաճ արագությամբ, կամ եղել են ձգձգումներ՝ կապված սուբյեկտների կամ միջոցների անբավարարության հետ: Հետևաբար, ակնհայտ է, որ քննարկվող կալանավորման տևողությունը կապված է գործի բացառիկ բարդության և դիմողի վարքագծի հետ: Երաշխավորված է, որ նա չի պարտավորեցվել համագործակցել իշխանությունների հետ, սակայն պարտավոր է կրել իր վերաբերմունքի հետևանքները, որոնք կարող են ազդել նախնական քննության ընթացքի վրա:

***Վան դեր Թանգն ընդդեմ Իսպանիայի (Van der Tang v. Spain), 19382/92, 13.07.1995թ.***

58. ...Դիմողի կալանավորման ընդհանուր տևողությունը եղել է երեք տարի մեկ ամիս և քսանյոթ օր....

76. Դիմողի փախուստի վտանգն առկա է եղել նրա կալանավորման ամբողջ ընթացքում, որի երկարաձգված տևողությունը բացառապես Աուդենսիա Նասիոնալի գործից մաս անջատելու հետևանքն էր, չի հանդիսացել Իսպանիայի իշխանությունների առանձնահատուկ ջանասիրության բացակայության հետևանք:

Հետևաբար, Դատարանը գտնում է, որ սույն գործի հանգամանքներից չի բխում, որ տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում...

***Կոնտրադան ընդդեմ Իտալիայի (Contrada v. Italy), 27143/95, 24.08.1998թ.***

67. ...Սույն գործով, բացառությամբ պրն Կոնտրադայի բջջային հեռախոսների տվյալների հետ կապված ուսումնասիրությունների, որոնք կարող էին և պետք է ավելի շուտ իրականացվեին, ինչպես նաև գործը քննող դատարանի կողմից 1995թ. մարտի 31-ին վկայակոչված՝ գերծանրաբեռնվածությունը..., Դատարանը չի գտնում որևէ պատճառ քննադատելու իրավասու պաշտոնատար անձանց վարքագիծը վարույթի ընթացքում, հատկապես, երբ չավարտված վարույթով նախնական կալանքը երկարացվել է, գործը քննող դատավորն առա-

ջարկել է ավելացնել նիստերի թիվը, սակայն պաշտպանության կողմը մերժել է դա...

Բացի այդ, թեև նախնական քննության ընթացքում կիրառված այնպիսի միջոցներ, ինչպիսիք են վկաներին լսելը և առերեսումները, քրեական գործերով չեն հանդիսանում բացառիկ, չպետք է մոռանալ, որ մաֆիայի ենթադրյալ անդամների գործերով վարույթները, ինչպիսին է սույն գործը, որը հարուցվել է պետական մարմինների կազմից նշված կազմակերպությանն օժանդակելու մեջ կասկածվող անձի նկատմամբ, բավականին խոցելի և բարդ վարույթներ են: Ունենալով խիստ աստիճանակարգային կառուցվածք և շատ խիստ ներքին կանոնադրություն, ինչպես նաև ահաբեկման լուրջ լծակներ, որոնք հիմնված են լռության օրենքի և կազմակերպության անդամների բացահայտման դժվարության վրա, մաֆիան իրենից ներկայացնում է ընդդիմադիր հանցագործ ուժ, որն ունակ է ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդել հասարակական կյանքի վրա և ներթափանցել տարբեր կառույցներ: Ահա այդ պատճառով էլ, այն է՝ հնարավորություն տալ «կազմակերպությանը» խարխլվելու նախկին «անդամների» կողմից տրված տեղեկության միջոցով, անհրաժեշտ են մանրամասն ուսումնասիրություններ:

68. Վերոգրյալի լույսի ներքո, Դատարանը գտնում է, որ իշխանությունները, որոնք քննել են գործը, այս կալանավորումը համարել են հիմնավոր և բավարար հիմքերով և վարույթն իրականացրել են առանց ձգձգումների: Հետևաբար, տեղի չի ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում:

***Ն.Ս.-ն ընդդեմ Իտալիայի (N.C. v. Italy), 24952/94, 11.01.2001թ.***

60. …դիմողի կողմից վիճարկվող կալանավորման ժամկետը տևել է մեկ և կես ամիս, որից երկու շաբաթը դիմողը գտնվել է տնային կալանքի տակ: Դատարանը գտնում է, որ, ի լրումն դիմողի դեմ հարուցված գործի անժխտելիության, Շրջանային դատարանի կողմից վկայակոչված հիմնական պատճառները վերաբերում են հանցագործության ծանրությանը և բնույթին, ինչպես նաև կրկին հանցանք կատարելու վտանգին: Դատարանը գտնում է, որ այս պատճառները երկուստեք եղել են հիմնավոր և բավարար: Այն նաև գտնում է, որ կալանավորումն անհիմն չի երկարաձգվել վարույթի իրականացմանը համապատասխան:

Հետևաբար, Դատարանը գտնում է, որ վիճարկվող կալանավորման տևողությունը չի գերազանցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետը:

**Այս հարցը չի ներառվել Մեծ պալատի 2002թ. դեկտեմբերի 18-ի դատավճռում:*

***Չրահիդին ընդդեմ Գերմանիայի (Chraidi v. Germany), 65655/01, 26.10.2006թ.***

45. …Դատարանը գտնում է, որ իրավասու ներպետական դատարանները դիմողի գործով վարույթի ընթացքում գործել են անհրաժեշտ, առանձնահատուկ ջանասիրությամբ:

46. Դատարանը նշում է, որ նախորդ գործերով գտել է, որ հինգ տարի ժամկետը գերազանցող կալանավորումը խախտում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասը...

47. Սույն գործով իրականացվել է համակարգված նախնական և դատական քննություն, որը վերաբերել է երեք անձի մահ և ավելի քան հարյուր անձի վնասվածք պատճառած՝ միջազգային ահաբեկչություն կոչվող ծանր հանցագործությանը: 1996թ. Լիբանանից իրականացված հանձնումից հետո դիմողը գտնվել է Գերմանիայում բացառապես մեկ նպատակով՝ կատարած հանցանքների համար կանգնել դատարանի առաջ:

49. Այս բացառիկ հանգամանքներում, Դատարանը եզրակացնում է, որ դիմողի կալանավորման տևողությունը (5 տարի և մոտավորապես 6 ամիս) կարող է դիտվել ողջամիտ: Հետևաբար, տեղի չի ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում:

*դ. Անողջամիտ*

***Մյուլլերն ընդդեմ Ֆրանսիայի** (Muller v. France), 21802/93, 17.03.1997թ.*

48. ...Քանի դեռ վարույթների տարբեր փուլերի ամբողջությունն անհրաժեշտ է արդարադատության պատշաճ իրականացման համար, դատավորների հետագա փոփոխությունները, առաջինը՝ նախնական քննությունն սկսվելուց մեկ տարի անց, մյուս երկուսը՝ դրա ընթացքի հաջորդ երկու տարիների ընթացքում, հանգեցրել են գործի քննության դանդաղեցմանը. այս հանգամանքը ճանաչվել է ներպետական դատարանների կողմից… Դատական իշխանությունները չեն գործել համապատասխան արագությամբ, թեև դիմողը գործի քննության հենց սկզբից ընդունել է իր կողմից հանցանքի կատարումը … և դրանից հետո որևէ դիմում չի ներկայացրել, որը կարող էր դանդաղեցնել դրա ընթացքը: Պրն Մյուլլերի չավարտված վարույթով նախնական կալանքի տևողությունը, այսպիսով, գերազանցել է 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված «ողջամիտ ժամկետը»…

***Լաբիտան ընդդեմ Իտալիայի** (Labita v. Italy) [GC], 26772/95, 06.04.2000թ.*

163. Դատարանը գտնում է, որ համանման որոշումներում նշված հիմքերը եղել են պատճառաբանված, ի սկզբանե՝ նաև շատ ընդհանուր: Դատական իշխանությունները բանտարկյալներին դիտել են որպես մեկ ամբողջություն և զուտ վերացական հղում են կատարել հանցագործության բնույթին: Նրանք չեն նշել որևէ հանգամանք, որը կարող է ցույց տալ, որ նշված սպառնալիքները իրականում առկա են

եղել, և չեն կիավաստեր, որ դիմողը, ով հանցավոր անցյալ չունի և ում դերակատարությունը մաֆիայի նման կազմակերպությունում, կարելի է ասել՝ չնչին է եղել (դատախազը նրա համար երեք տարի ազատազրկում է խնդրել): Հաշվի չի առնվել այն փաստը, որ դիմողին առաջադրված մեղադրանքները հիմնված են եղել այնպիսի ապացույցների վրա, որոնք ժամանակի ընթացքում ավելի շատ թուլացել, քան ուժեղացել են:

164. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ վիճարկվող որոշումները բավարար չեն արդարացնելու դիմողի՝ երկու տարի և յոթ ամիս ժամկետով կալանավորումը:

165. Հակիրճ՝ սույն կալանավորումը խախտել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասը:

***Պունզելթն ընդդեմ Չեխիայի Հանրապետության (Punzelt v. Czech Republic), 31315/96, 25.04.2000թ.***

78. Ինչ վերաբերում է ներպետական իշխանությունների կողմից վարույթի իրականացմանը, ապա Դատարանը մասնավորապես նշում է, որ ավելի քան ութ ամիս է անցել պետական մեղադրանքի առաջադրման և 1994թ. հունիսի 28-ին Քաղաքային դատարանում դատական նիստի նշանակման միջև: Այս ժամանակահատվածը չի հանդիսանում սահմանազանցող, քանի որ այդ ժամանակաընթացքում Քաղաքային դատարանը պետք է լուծեր մի քանի ապացույցների ձեռքբերման հետ կապված դիմողի միջնորդությունների հարցը, չնայած այն հանգամանքին, որ նախնական քննության ավարտին նա դիտավորյալ հայտարարել է, որ այս կապակցությամբ չունի այլ միջնորդություններ:

79. Սակայն Քաղաքային դատարանը հետագայում երեք այլ նիստեր է հետաձգել՝ այլ ապացույցներ ձեռք բերելու համար: Արդյունքում, այն հրապարակել է իր առաջին դատավճիռը վեցամսյա հետաձգումից հետո:

80. Դրա արդյունքում Վճռաբեկ դատարանը բեկանել է 1995թ. հունվարի 10-ի դատավճիռն այն հիմքով, որ Քաղաքային դատարանը չի բացահայտել և քննարկել գործին վերաբերող բոլոր հանգամանքները, այն սխալ է կիրառել օրենքը և դատավճիռը հստակ չի եղել: Չնայած Գերագույն դատարանի միջամտությանը՝ կապված վարույթն արագացնելու հետ, Քաղաքային դատարանը չի հրապարակել իր երկրորդ դատավճիռը մինչև 1996թ. հունվարի 16-ը, այսինքն՝ առաջին դատավճռի բեկանումից տասն ամիս անց:

81. Այս հանգամանքներում, Դատարանը գտնում է, որ այդ «առանձնահատուկ ջանասիրությունը» չի ցուցաբերվել վարույթների իրականացման ընթացքում:

82. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում՝ կապված դիմողի կալանավորման ժամկետի տևողության հետ:

***Ադամիակն ընդդեմ Լեհաստանի (Adamiak v. Poland), 20758/03, 19.12.2006թ.***

33. Դատարանը գտնում է, որ պետական մարմինների կողմից կալանքի ժամկետի երկարացումը հիմնավորված է՝ հաշվի առնելով կատարված հանցանքի բնույթը, նշանակվելիք խիստ պատիժը, գործի բարդությունը, հանցագործի՝ փախուստի դիմելու վտանգը, ինչպես նաև արդարադատության իրականացմանը խոչընդոտելու հանգամանքները:

34. Դատարանը գտնում է, որ այս հիմնավորումները կարող էին հիմք հանդիսանալ օրինական ձերբակալման համար: Սակայն ժամանակի ընթացքում սրանք անխուսափելիորեն դառնում են ոչ ծանրակշիռ և միայն արժանահավատ ապացույցները կարող են համոզել Դատարանին ազատազրկման այսպիսի երկար ժամկետը 5-րդ հոդվածի 3-րդ պարբերության իմաստով հիմնավորելու համար:

35. Դատարանն այս գործում չի բացահայտում այլ տեսակի հիմնավորում, և հաստատում է, որ ներպետական դատական ատյանները մերժել են դիմողի՝ ազատ արձակելու վերաբերյալ միջնորդությունները, որի արդյունքում վերոնշյալ հիմնավորումներով երկարացվել է կալանքի ժամկետը:

36. Դատարանը գտնում է, որ ամբողջ դատավարության ընթացքում դատավորներն իրենց որոշումները հիմնավորել են գործի բարդությամբ, նշելով, որ այն պայմանավորված է շահագրգիռ անձին մեղսագրվող հանցանքի բնույթով և տվյալ արարքի համար նշանակվող խիստ պատժով: Այս տեսանկյունից՝ Դատարանը հիշեցնում է, որ դատական պրակտիկան այդպիսի ծանր հանցագործությանը կասկածյալի մասնակցությունը և նշանակվելիք խիստ պատիժը չէր կարող հիմնավորել այսքան երկարատև նախնական կալանքի տակ պահելու փաստը:

37. Մյուս կողմից, Դատարանը հիմնավոր է համարում տևական և բարդ հետաքննության անցկացումը՝ հաշվի առնելով, որ գործին ներգրավված է մի ամբողջ կազմակերպված հանցավոր խումբ: Վերոնշյալը չէր կարող հիմնավորել անձին 5 տարի նախնական կալանքի տակ պահելու փաստը:

38. Արդյունքում, Դատարանը գտնում է, որ դատարանների կողմից իրենց որոշումներում ներկայացված հիմնավորումները բավարար չէին, որպեսզի հիմնավորվեր այդքան ժամանակ դիմողին կալանքի տակ պահելու փաստը:

39. Այս կապակցությամբ առկա է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ պարբերության դրույթի խախտում:

*ե. Ժամկետն ավարտվելուց հետո ազատ արձակելը*

***Գիուլիա Մանցոնին ընդդեմ Իտալիայի (Giulia Manzoni v. Italy), 01.07.1997թ.***

23. Տիկին Մանցոնին փաստարկել է, որ ինքն անօրինական կալանքի տակ է գտնվել յոթ ժամ՝ Հռոմի Շրջանային դատարանում վարույթի ավարտի (11.45) և կալանավայրից ազատ արձակվելու (18:45) միջև ընկած ժամանակահատվածում:

24. Կառավարությունը նշելով, որ դիմողը 11:45-ից հետո այլևս չի համարվել կալանքի տակ գտնվող, փաստարկել է, որ քննարկվող ժամանակահատվածը եղել է բավականին բնականոն՝ հաշվի առնելով այն, որ նա տարվել է կալանավայր (մոտավորապես դատարանից մեկ ժամվա հեռավորության վրա) մոտ 13:30-ին, իսկ արձանագրությունը վարչակազմի կողմից նրան է հանձնվել 15:10-ին՝ տեղեկացնելով ոստիկանությանը, որ նա ենթակա է ազատ արձակման և սպասում է հաստատումն նրա, որ դրա վերաբերյալ առարկություններ չկան, նրան վերադարձվել է նրա անձնական գույքը, քննարկվել են հաշիվների հետ կապված հարցեր և 18:30-ին վերցվել է նրա հասցեն՝ ծանուցումներն ուղարկելու անհրաժեշտությունից ելնելով: Բոլոր այս միջոցներն անխուսափելիորեն կիրառվել են որոշակի ժամանակահատվածում:

25. …Դատարանը… միայն նշում է, որ տիկին Մանզոնին տարվել է Ռեբիբիտայի բանտ դատական քննության ավարտից ավելի քան մեկուկես ժամ հետո և նիստի արձանագրությունը տրվել է նրան անմիջապես նրա ժամանումից հետո. այս վարույթը պետք է դիտվի որպես Հռոմի Շրջանային դատարանի դատավճռի իրականացման առաջին քայլ: Հայտնի է, որ Կառավարության կողմից նշված վարչական ընթացակարգը կարող է իրականացվել ավելի արագ, սակայն դա հիմք չէ ասելու, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի խախտում. որոշ հետաձգումներ՝ կապված դիմողին ազատ արձակելու մասին որոշման հետ, եղել են անխուսափելի, թեև պետք է հնարավորինս քիչ լինեին: Հետևաբար, տեղի չի ունեցել 5-րդ հոդվածի 1-ին մասի (c) կետի խախտում...

***Լաբիտան ընդդեմ Իտալիայի (Labita v. Italy) [GC], 26772/95, 06.04.2000թ.***

172. …սույն գործով դիմողին ազատ արձակելու ձգձգումները միայն մասամբ են պայմանավորված եղել անհրաժեշտ վարչական ընթացակարգի իրականացմամբ: Դիմողին ազատ արձակելու լրացուցիչ ձգձգումները, որոնք տեղի են ունեցել 1993թ. նոյեմբերի 13-ի ժ. 00:25-ից մինչև առավոտ, պայմանավորված են եղել գրանցող աշխատակցի բացակայությամբ: Միայն վերջինիս վերադառնալուց հետո է հնարավոր եղել ճշտել, թե առկա են, արդյոք, այլ պատճառներ դիմողին կալանքի տակ պահելու համար և իրականացնել ազատ արձակման հետ կապված այլ վարչական ընթացակարգեր…

173. Այս հանգամանքներում, Թերմինի Իմերսի բանտ վերադառնալուց հետո դիմողի կալանքի շարունակվելը չի հանդիսացել նրա

ազատ արձակման կարգի առաջին քայլը և, հետևաբար, չի համապատասխանում 5-րդ հոդվածի 1-ին մասի (c) կամ որևէ այլ կետին:

174. Հետևաբար, այդ կապակցությամբ տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

***Դեգերլին և այլոք ընդդեմ Թուրքիայի (Değerli and Others v. Turkey), 18242/02, 05.02.2008***

22. Տվյալ գործով Դատարանը նշում է, որ դիմողներին ազատ արձակելու որոշումը կայացվել է 2001թ. հուլիսի 3-ին և հենց նույն օրը ժամը՝ 17:50 ուղարկվել է այն հաստատություն, որտեղ գտնվում էին շահագրգիռ անձինք: Բայց վերջիններս ազատ են արձակվել միայն հաջորդ օրը՝ 18:50- 23:35-ն ընկած ժամանակահատվածում:

Դատարանը հաստատում է, որ բանտի պատասխանատուի կողմից կատարված գործողությունները՝ ժամային առումով, ամրագրում չի ստացել: Կառավարության տեղեկացմամբ դիմողների ազատ արձակումը չի ուշացվել և կատարվել է ժամանակին:

25. Նա գտնում է, որ ազատ արձակման ենթակա ձերբակալվածների թիվը չի կարող հիմնավորել դրա ուշացումը: Պայմանադիր պետությունները, իրենց իրավասության տակ գտնվող անձանց ազատության իրավունքն ապահովելու նպատակով, պարտավոր են ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան քրեակատարողական հիմնարկների աշխատակազմին ի կատար ածել առանց ժամկետի ազատ արձակման մասին որոշումները, ներառյալ այն դեպքերը, երբ գործ ունենք մեծ թվով ձերբակալվածների ազատ արձակման հետ:

26. Վերոնշյալը հաշվի առնելով՝ Դատարանը գտնում է, որ ազատ արձակման մասին ընդունված որոշմանը հաջորդած ժամերին դիմողներին նախնական կալանքի տակ պահելը հակասում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի դրույթներին, և այս առումով սխալ է հիմնվել առաջին պարբերության մեջ թույլատրված նպատակների վրա:

27. Այս առումով առկա է տվյալ դրույթի խախտում:

*գ. Նշանակված պատժի հետ հաշվակցելը*

***Պ.Լ.-ն ընդդեմ Ֆրանսիայի (P.L. v. France), 21503/93, 02.04.1997թ.***

26. Կառավարությունը տեղեկացրել է Դատարանին այն մասին, որ 1997թ. հունվարի 27-ի հրամանագրով Ֆրանսիայի Հանրապետության Նախագահը դիմողին ներում է շնորհել, որի հիման վրա հանվել է նրա պատժի մի մասը (մեկ տարի և տասնութ օր), որը համապատասխանում է նրա կալանքի տակ գտնվելու ժամկետին… Այն նշել է, որ ներումը «դիմումի էությունը Կոնվենցիայի ինստիտուտներին շատ հստակ է համապատասխանեցված», և, համապատասխա-

նաբար, խնդրել է սույն գործը հանել Դատարանում առկա դիմումների ցանկից...

27. Դատարանը գտնում է, որ Կառավորությունը և դիմողը չեն հասել «հաշտության համաձայնության»՝ 49-րդ կանոնի 2-րդ կետի իմաստով, սակայն դիմողը հայտարարել է, որ ինքը «դատավարական գործողություններ չի իրականացնում (se désiste)»:

Դատարանը նշում է, որ 1997թ. հունվարի 27-ի ներումը Ֆրանսիայի իշխանություններին դիմողի խնդրանքի արդյունք է: Նրա կալանավորումը մեկ տարի և տասնութ օրով կրճատվելու էր, ճիշտ այնպես, ինչպես նրա նկատմամբ նշանակված պատժից հանվել է նրա կալանավորման ժամանակահատվածը... Այս դեպքում, վերոնշյալ հանգամանքները կարող են դիտվել որպես «համաձայնություն կամ կամքի այլ դրսևորումներ, որոնք կոչված են լուծելու խնդիրը»՝ 49-րդ կանոնի 2-րդ կետի իմաստով: Բացի դրանից, այս պարագայում չկա պետական քաղաքականությամբ պայմանավորված որևէ հիմք, թե ինչու այս գործը չպետք է հանվի ցանկից (49-րդ կանոնի 2-րդ և 4-րդ կետեր): Սույն գործը, հետևաբար, պետք է հանվի ցանկից:

***Լաբիտան ընդդեմ Իտալիայի (Labita v. Italy) [GC], 26772/95, 06.04.2000թ.***

143. Սույն գործով, Պալերմոյի Վերաքննիչ դատարանը 1998թ. հունվարի 20-ի որոշմամբ, որը գրանցվել է 1998թ. հունվարի 23-ին, ընդունվել է դիմողի հայցն անարդար կալանավորման համար փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ, դատարանի որոշումը հիմնվել է Քրեական դատավարության օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասի վրա, որը նախատեսում է փոխհատուցման իրավունք «յուրաքանչյուրին, ով արդարացվել է վերջնական դատական ակտով»...: Կալանավորումը ենթադրվում է, որ եղել է «անարդար»՝ արդարացման արդյունքում, և 314-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով որոշումը չի հանգեցնում նրան, որ կալանավորումը դիտվի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող: Թեև ճիշտ է, որ չավարտված վարույթով դիմողի կալանավորման տևողությունը հաշվի է առնվել փոխհատուցման ընդհանուր գումարում, սակայն դատավճռում չկա որևէ նշում՝ ուղղակի նշված կամ ենթադրվող, որ տեղի է ունեցել սահմանազանցում:

144. Հետևաբար՝ Դատարանը գտնում է, որ անկախ կալանքի տակ գտնված ժամանակահատվածի համար փոխհատուցման վճարումից, դիմողը կարող է պնդել, որ Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով շարունակում է մնալ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտման «զոհ»...

***Չրահիդին ընդդեմ Գերմանիայի (Chraidi v. Germany), 65655/01, 26.10.2006թ.***

25. …թեև Կոնվենցիան Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենսդրության անբաժան մասն է կազմում... և, հետևաբար, որևէ բան չի խոչընդոտել Շրջանային դատարանին համապատասխանաբար նշելու, որ դիմողի կալանավորման տևողությունը խախտել է Կոնվենցիան՝ կամ ուղղակիորեն, կամ ըստ էության, վերջին դատարանն ընդունել է, որ կիրառված կալանավորումը տևել է «արտառոց» երկար... Բացի դրանից, Դատարանը բավարարված չէ նրանով, որ դիմողին տրամադրվել է պատշաճ փոխհատուցում կատարված խախտման համար, քանի որ Շրջանային դատարանը չի հստակեցրել, թե ինչ ծավալով է դիմողի ազատազրկումը կրճատվել՝ հաշվի առնելով կալանավորման տևողությունը...

26. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ Շրջանային դատարանի հայտարարությունը, որը վերաբերում է դիմողի կալանավորման արտառոց տևողությանը, չի զրկել վերջինիս տուժողի՝ Կոնվենցիայի 34-րդ հոդվածով սահմանված կարգավիճակից…

## IV. ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՀԱՎԱՔԵԼԸ

### 1. Խուզարկություն և առգրավում

*ա. Խուզարկություն*

***Ֆանկին ընդդեմ Ֆրանսիայի (Funke v. France), 10828/84, 25.02.1993թ.***

56. …Դատարանը... ընդունում է այն, որ նրանք կարող են անհրաժեշտ համարել այնպիսի միջոցների կիրառման համար դատարան դիմելը, ինչպիսիք են բնակարանի խուզարկությունը և առգրավումը, որոնք նպատակ են հետապնդում ձեռք բերել իրեղեն ապացույցներ տարադրամային կարգավորման հանցագործությունների վերաբերյալ, և համապատասխանաբար ապացուցել նրանց մեղքը: Այնուամենայնիվ, գործին վերաբերող օրենսդրությունը և պրակտիկան պետք է ապահովեն պատշաճ և արդյունավետ պաշտպանություն հնարավոր չարաշահումներից...

57. Սույն գործով դա այդպես չէ: Նշված ժամանակահատվածում... մաքսային մարմիններն օժտված են եղել բավականաչափ լայն լիազորություններով. մասնավորապես, նրանք ունեցել են բացառիկ իրավասություն գնահատելու ստուգումների նպատակահարմարությունը, քանակը, տևողությունը և սանդղակը: Բացի դրանից, դատական վերահսկողության որևէ պահանջի բացակայության պայմաններում օրենքով ամրագրված սահմանափակումները և պայմանները, որոնք շեշտադրվել են Կառավարության կողմից... հետապնդվող իրավաչափ նպատակին խիստ համապատասխանելու համար եղել

են շատ թույլ և դիմողի իրավունքներին միջամտության համար սողանցքներով լի:

***Լ.Մ.-ն ընդդեմ Իտալիայի (L.M. v. Italy), 60033/00, 08.02.2005թ.***

32. Դատարանը...գտնում է, որ խուզարկության արդյունքում կազմված արձանագրության վավերականությանը վերաբերող պահանջները, մասնավորապես, սահմանվում են ներպետական իրավունքով, որի միջոցով դատախազությունը հսկողություն է իրականացնում ոստիկանության օրինական գործունեության նկատմամբ: Նման վավերացման ոչ լրիվությունը և չհիմնավորվածությունն ապացուցում է, որ իրավասու մարմինները վիճահարույց խուզարկությունը չեն իրականացրել օրենքով սահմանված կարգի պահպանմամբ:

33. Սրանից հետևում է, որ խուզարկության ժամանակ դատավարության օրինական պահանջները չեն պահպանվել և արդյունքում այս առումով առկա է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

***Ռոեմենը և Շմիդտն ընդդեմ Լյուքսեմբուրգի (Roemen and Schmit v. Luxembourg), 51772/99, 25.02.2003թ.***

47. …Այդ միջոցները կոչված են եղել հավաստելու Գրանցման և պետական սեփականության դեպարտամենտի պաշտոնատար անձանց ինքնությունը, ովքեր աշխատել են նախարարի նկատմամբ հարկային տուգանք նշանակելու գործի վրա... այլ կերպ ասած՝ լրագրողների աղբյուրը...

56. …դիմողի բնակության և աշխատանքի վայրում կատարված խուզարկությունից տարբերվող միջոցները (օրինակ՝ Գրանցման և պետական սեփականության դեպարտամենտի պաշտոնատար անձանց հարցաքննությունը) պետք է գործը քննող դատավորին հնարավորություն ընձեռեն հայտնաբերել հանցանք կատարած անձին՝ վկայակոչելով պետական մեղադրողի հայտարարությունը: Կառավարությունը չի կարողացել ամբողջությամբ ցույց տալ, որ ներպետական իշխանություններն ի վիճակի չեն եղել նախևառաջ հաստատել, որ տեղի է ունեցել մասնագիտական գաղտնիքի խախտում, և, հետևաբար, ձեռք բերված տեղեկության հետազոտությունն իրականացվել է առանց դիմողի բնակության և աշխատանքի վայրի խուզարկության...

60. Հետևաբար նա գտնում է, որ կիրառված միջոցները պետք է դիտվեն որպես անհամաչափ, և դրանք խախտել են առաջին դիմողի արտահայտվելու իրավունքը, որը երաշխավորված է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով...

***Բակն ընդդեմ Գերմանիայի (Buck v. Germany), 41604/98, 28.04.2005թ.***

47. Ինչ վերաբերում է խուզարկության և առգրավման թույլտվության համաչափությանը գործի մասնավոր հանգամանքներում հետապնդվող օրինական նպատակներին, ապա Դատարանը, քննարկե-

լով իր նախադեպային իրավունքում ձևավորված չափանիշները, առաջին հերթին գտնում է, որ հանցագործությունը, որի կապակցությամբ խուզարկությունը և առգրավումը թույլատրվել են, դասվում է ճանապարհային երթևեկության կանոնների խախտման թվին: Նման կանոնի խախտումը հանդիսանում է ոչ էական հանցագործություն, որն օժտված է նվազ կարևորությամբ և Գերմանիայի օրենսդրությամբ ներառված չէ քրեական հանցագործությունների շարքում... Ի լրումն դրա, սույն գործով հատկապես կարևորվում է այն, որ դատապարտվել է մի անձ, ով նախկինում ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար չի դատապարտվել:

48. Դրանից բացի, Դատարանը նշում է, որ անգամ եթե քննարկվող խախտումը կատարվել է դիմողին պատկանող կազմակերպության մեքենայով, ապա այն վարույթը, որով իրականացվել են խուզարկությունը և առգրավումը, հարուցված է եղել ոչ թե դիմողի, այլ նրա որդու դեմ, որը հանդես է եկել որպես երրորդ կողմ:

51. Վերջապես... Դատարանը գտնում է, որ դիմողի աշխատանքի և բնակության վայրերում կատարված խուզարկության ժամանակ հանրության ներկայացուցչի առկայությունը 10.000 բնակիչ ունեցող քաղաքում կարող էր անբարենպաստ ազդեցություն ունենալ ինչպես նրա անձնական, այնպես էլ նրան պատկանող և նրա կողմից կառավարվող կազմակերպության հեղինակության վրա: Այս կապակցությամբ պետք է մերժվի այն, որ դիմողն ինքնին չի կասկածվել իրավախախտման կամ հանցագործության մեջ:

52. ...Քննարկելով սույն գործի առանձնահատուկ հանգամանքները, մասնավորապես այն փաստը, որ քննարկվող խուզարկությունը և առգրավումը թույլատրվել են կարգավորման նվազ խախտմամբ՝ ենթադրաբար երրորդ անձի կողմից կատարված և դիմողի բնակարանի անձեռնմխելիությունը ներառող, Դատարանը եզրակացնում է, որ միջամտությունը չի կարող հետապնդվող օրինական նպատակներին համաչափ համարվել:

***Հ.Մ.-ն ընդդեմ Թուրքիայի (H. M. v. Turkey), 34494/97, 08.08.2006թ.***

28. Այս գործում Դատարանը պարզում է, որ 1996 թվականի մարտի 15-ին դիմողը բողոք է ներկայացրել Կարսիյակայի դատախազությանը, որում մատնանշել է այն փաստը, համաձայն որի՝ իր բնակարանն ապօրինաբար խուզարկվել է ոստիկանների կողմից: Որպես նշված խոսքերի ապացույց՝ նա բերել է իր կնոջ և երեխաների տված ցուցմունքները:

Հաշվի առնելով շահագրգիռ անձի անցյալը, ով իր իրականացրած արհմիութենական գործունեության համար բազմիցս ենթարկվել է քրեական հետապնդման և դրա համար մեղադրել ոստիկանության ծառայողներին: Մենք կարող ենք նկատի ունենալ, որ դատախազը, ով, անկասկած, իրավիճակի վերաբերյալ ուներ տեղեկատվություն,

հարցաքննել է շահագրգիռ անձին այդ փաստի առիթով՝ պարզելու համար, թե արդյոք վտանգ չկա, որ նա կդառնա տվյալ շորթման թիրախ:

Ամեն դեպքում, բավարար է այն, որ դատախազը հավաքել է դիմողի ընտանիքի անդամների ցուցմունքները՝ պարզելու համար պաշտպանության նպատակով ներկայացված հիմնավորումների արժանահավատությունը, գիտենալով, որ դրանք դատարանի համար կարող են լինեն անհրաժեշտ, արժանահավատ և բավարար:

29. Բացի դրանից, նման պարզաբանում տեղի չի ունեցել և տվյալ գործում առկա կասկածը չի փարատվել հինգ օր տևած և դատախազի հանձնարարությամբ ավարտված նախաքննության ընթացքում: Անվերապահորեն ընդունելով ոստիկանության տրամադրած տեղեկատվությունը՝ մագիստրատը եզրակացրել է, որ հակառակ շահագրգիռ անձի պահանջի, պետության ոչ մի ոստիկան ներգրավված չի եղել այդ միջադեպին:

Սակայն նման եզրակացությունը ենթակա չէ ուսումնասիրման, քանի որ հոդված ութով նախատեսված է պարտադիր նախաքննություն... արգելված արարքի պատճառած վնասն անպայման չէ լինի պաշտպանված տուժողի կողմից գնահատման միջոցով:

Դրանից հետևում է, որ դիմելով Կարսիյակայի դատախազությանը, որն իրավասու էր ուսումնասիրելու բողոքում առկա հանգամանքները, և այդ ուսումնասիրությունը պետք է փաստերը բացահայտելու և դրանից հետո իրական մեղավորներին բացահայտելու համար:

30. Այսպիսով, Դատարանը գտնում է, որ դիմողն իր բնակարանի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության բացակայության արդյունքում կարող է դիտվել որպես տուժող:

***Իմակաևան ընդդեմ Ռուսաստանի (Imakayeva v. Russia), 7615/02, 09.11.2006թ.***

187. Դատարանը նշում է, որ խուզարկության ընթացքում դիմողին խուզարկության որևէ թույլտվություն չի ներկայացվել և որևէ բան չի ասվել առ այն, թե ինչ է փնտրվում : Բացի դրանից, պարզ է, որ նման թույլտվություն ընդհանրապես չի տրվել, անգամ նախքան խուզարկությունը կամ դրանից հետո՝ գնահատելով անվտանգության աշխատակիցների՝ գործողությունները որպես անհապաղ գործողություններ: Կառավարությունը չի կարողացել ներկայացնել որևէ մանրամասնություն խուզարկության պատճառների վերաբերյալ, վկայակոչել այն օրինականացնող որևէ փաստաթուղթ կամ ցույց տալ այս գործողության դատավարական կարևորությունը: Կառավարությունը չի կարողացել նաև մանրամասներ ներկայացնել Իմակայևայի տնից առգրավված առարկաների վերաբերյալ, քանի որ դրանք արդեն ոչնչացվել էին: Այսպիսով, ստացվում է, որ որևէ արձանագրություն կամ այս առարկաների նկարագրություն չի կատարվել: Ձինվորական պաշտոնատար անձի կողմից կազմված ընդունման ակտը, որում

նշված չէ այն կազմող անձի իրական անունը կամ աստիճանը կամ այն պետական մարմնի անունը, որը նա ներկայացնում է, և որում նշված է միայն «մի պայուսակ փաստաթուղթ և մի տուփ մագնիսական կրիչներ»..., հանդիսանում է խուզարկության հետ կապված միակ փաստաթուղթը:

188. Կառավարության հղումն Ահաբեկչության դեմ պայքարի մասին օրենքին չի կարող փոխարինել խուզարկության անհատական թույլտվությանը, որոշել դրա առարկան և շրջանակները և լինել իրավական պահանջներին համապատասխան՝ անգամ դրանից առաջ կամ հետո: Այս օրենքի պահանջները չեն կարող մեկնաբանվել այնպես, որ հանգեցնեն անձնական իրավունքների սահմանափակմանն անորոշ ժամանակով և անվտանգության աշխատակիցների գործողությունների սահմանները ոչ հստակ նշելուն: Սույն գործով այս դրույթների բողոքարկումն ավելի խնդրահարույց է դառնում այն պարագայում, երբ Կառավարությունը չի բացատրում ոչ դիմողին և ոչ էլ Դատարանին, թե ինչ հակաահաբեկչական գործողություններ են կատարվել 2002թ. հունիսի 2-ին Նովիե Ատագիում, որ գործակալությունն է իրականացրել այն, որոնք էին դրա նպատակները և այլն: Ավելին, Դատարանն ընդգծում է, որ այդ դեպքից մոտ երկու տարի հետո պետական իշխանության տարբեր մարմիններ հերքել են երբևէ նման գործողության կատարված լինելը: Դատարանը կրկին զարմացած է նման անպատասխանատվությունից և սույն գործով տեղի ունեցած դեպքին ներգրավված պաշտոնատար անձանց կողմից իրենց անմիջական պատասխանատվությունը չընդունելուց:

189. Այսպիսով, Դատարանը գտնում է, որ խուզարկության և առգրավման գործողությունները սույն գործով կատարվել են առանց որևէ թույլտվության կամ ապահովման միջոցի: Այս հանգամանքներում, Դատարանը եզրակացնում է, որ քննարկվող միջամտությունը չի եղել «օրենքի հիման վրա» և տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

***Սմիռնովն ընդդեմ Ռուսաստանի (Smirnov v. Russia), 71362/01, 07.06.2007թ.***

46. ...դիմողն անձամբ չի մեղադրվել կամ կասկածվել որևէ հանցագործության կամ հակաօրինական գործողության կատարման մեջ: Սակայն դիմողը ներկայացրել է փաստաթղթեր, որոնք վկայում են, որ նա տարբեր ժամանակներում թիվ 7806 քրեական գործով ներկայացրել է չորս անձի, ինչի կապակցությամբ էլ խուզարկությունը թույլատրվել է: Այս հանգամանքներում, սա հատկապես կարևոր է Դատարանի համար, երբ դիմողի բնակարանի խուզարկության թույլտվությունը տրվել է՝ մասնագիտական գաղտնիքի ուժով պահպանվող նյութերի առնչությամբ առանց որևէ ապահովման միջոցի տրամադրման:

47. Խուզարկության թույլտվությունը տրվել է խիստ կարճ ժամկետում, վերաբերել է առանց բացառության «բոլոր առարկաներին և

փաստաթղթերին, որոնք (թիվ 7806) քրեական գործով քննության համար հետաքրքրություն են ներկայացնում», առանց որևէ սահմանափակման: Թույլտվությունը չի բովանդակել որևէ տեղեկություն ընթացիկ քննության վերաբերյալ, խուզարկության նպատակների կամ այն պատճառների մասին, որոնք թույլ են տալիս ասել, որ դիմողի բնակարանի խուզարկությունը պետք է կատարվի… Միայն այն բանից հետո, երբ ոստիկանությունը մուտք է գործել դիմողի բնակարան, նրան առաջարկվել է ներկայացնել «փաստաթղթեր, որոնք կապված են Տ. հասարակական կազմակերպության և Ռ. դաշնային արդյունաբերական ընկերության հետ»: Ինչևէ, ոչ թույլտվությունը, ոչ ոստիկանության բանավոր հայտարարությունը չեն մատնանշում, թե ինչու երկու մասնավոր կազմակերպությունների, որոնցում դիմողը որևէ պաշտոն չի զբաղեցնում, գործարարական գործունեությանը վերաբերող փաստաթղթերը պետք է հայտնաբերվեին դիմողի բնակարանում... *ex post factum* դատական վերահսկողությունը որևէ կերպ չի լրացրել խուզարկության թույլտվություն տալու չհիմնավորվածության պատճառով առաջացած բացը: Օկտյաբրսկի դատարանը սահմանափակվել է այն դատողությամբ, որ թույլտվությունը եղել է հիմնավորված՝ նշված չորս փաստաթղթերի և այլ չպարզաբանված նյութերի վկայակոչմամբ և առանց դրանց բովանդակությունը նկարագրելու... Դատարանը չի մատնանշել որևէ կապ իր կողմից վկայակոչված նյութերի և խուզարկության արդյունքում հայտնաբերված չորս փաստաթղթերից երկուսի միջև: Դատարանը գտնում է, որ ներպետական իշխանությունները չեն կատարել իրենց պարտականությունները և չեն նշել «հիմնավոր և բավարար» պատճառ խուզարկության իրականացման համար:

48. Ինչ վերաբերում է խուզարկության կատարման ձևին, Դատարանը գտնում է, որ խուզարկության թույլտվության տրման խիստ կարճ ժամկետի պատճառով ոստիկանությանը տրվել է անսահմանափակ հայեցողություն որոշելու, թե որ փաստաթղթերն են եղել քրեական գործով նախնական քննության համար «հետաքրքրություն ներկայացնող». սա հանգեցրել է տարածական որոնմանը և առգրավմանը: Առգրավված նյութերը չեն սահմանափակվել երկու մասնավոր կազմակերպությունների գործարարական գործունեության հետ կապված նյութերով: Ոստիկանությունը առգրավել է նաև դիմողի անձնական համակարգիչը, նրա համակարգչի կենտրոնական տարրը և այլ նյութեր՝ ներառյալ գործի հետ կապ չունեցող քաղաքացիական վարույթով նրա վստահորդի անձնական տվյալները և մեկ այլ գործով հուշագրի նախագիծ: Ինչպես վերը նշվեց, չի տրամադրվել որևէ ապահովման միջոց մասնագիտական գաղտնիքը պահպանելու համար, ինչպիսին է, օրինակ, փաստաբան-վստահորդ փոխհարաբերությամբ պաշտպանվող փաստաթղթերը վերացնելու արգելքը կամ խուզարկության վերահսկողությունը անկախ դիտորդի կողմից, ով ունակ է, քննչական խմբից անկախ, սահմանել, թե որ փաստաթուղթն է անձեռնմխելի մասնագիտական գաղտնիքի ուժով...Ինչ վերաբերում է

որոնված և առգրավված նյութերին, Դատարանը գտնում է, որ խուզարկությունը ոտնձգել է մասնագիտական գաղտնիքի դեմ այն պատճառով, որ եղել է հետապնդվող իրավական նպատակին անհամաչափ...

49. ...Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

***Կուցերան ընդդեմ Սլովակիայի (Kucera v. Slovakia), 48666/99, 17.07.2007թ.***

119. Դատարանը, քննարկելով ներգրավված ոստիկանների քիվը, այն փաստը, որ նրանցից չորսը պատկանել են հատուկ ծառայության միավորի և բացահայտ կրել են ինքնաճիգներ և դիմակներ, և նշելով, որ նրանք եկել են դիմողի բնակարան արևածագին, եզրակացնում է, որ դիմողին քիչ հնարավորություն էր մնացել որոշելու նրանց բնակարան թողնել, թե՝ ոչ: Դժվար է ընդունել, որ այդ հանգամանքներում, դիմողն ազատ համաձայնություն է տվել և եղել է տեղեկացված: Հետևաբար, տեղի է ունեցել նրա բնակարանի անձեռնմխելիության իրավունքի խախտում...

120.... Դատարանը գտնում է, որ միջամտությունը այս հանգամանքներում պետք է դիտվի անհամապատասխան հետևյալ պատճառաբանությամբ:

121. Մասնավորապես...ոստիկանությունը եկել է դիմողի դռան մոտ նրան և նրա կնոջը մեղադրանք առաջադրելու և նրանց քննիչի մոտ հարցաքննության տանելու համար: Չկա որևէ նշում այն մասին, որ այդ հանձնարարության կատարման համար պահանջվել է ոստիկանության՝ բնակարան մուտք գործելը... Վիճարկվող միջոցը պետք է դիտվի անհամապատասխան այս հանգամանքներում:

122. Բացի դրանից, իշխանության չարաշահման և անձի արժանապատվության ոտնահարման հավանականությունը մեծ է այնպիսի իրավիճակում, ինչպիսին սույն գործով ստեղծվածն է, երբ դիմողն իր բնակարանի դռան մոտ առավոտ կանուխ տեսել է հատուկ պատրաստություն անցած, բազմաթիվ դիմակավոր ոստիկանների: Դատարանի կարծիքով, ապահովման միջոցները պետք է կիրառվեն հնարավոր չարաշահումներից խուսափելու նպատակով և հաստատելու համար Կոնվենցիայի 8–րդ հոդվածով նախատեսված իրավունքների արդյունավետ պաշտպանությունը: Նման ապահովման միջոցները պետք է ներառեն կարգավորիչ միջոցներ, որոնք կսահմանեին երկուստեք հատուկ միջոցների կիրառումն այն իրավիճակում, երբ սովորական ոստիկանական միջամտությունը չի կարող դիտվել որպես անվտանգ և բավարար, և, ի լրումն դրա, կնախատեսեին դատավարական երաշխիքներ, որոնք կհաստատեին, որ, օրինակ, գործողության կատարման ընթացքում անկողմնակալ անձի ներկայությունը կամ սեփականատիրոջ պարզ, գրավոր համաձայնությունն՝ ստացումը որպես մուտք գործելու նրա թույլտվության նախապայման: Դատարանը

նշում է, որ այդ կապակցությամբ որոշակի երաշխիքներ ներառված են 1993թ. Ոստիկանության կորպուսի մասին օրենքում... Ինչևէ, այդ երաշխիքները չեն կանխել վիճարկվող իրավիճակի առաջացումը:

123. Հիմք ընդունելով վերոգրյալ դատողությունները՝ Դատարանը բավարար չի գտնում այն, որ քննարկվող գործողությունը եղել է դիմողի բնակարանի անձեռնմխելիության իրավունքի պահպանմանը համապատասխան:

***Փեևն ընդդեմ Բուլղարիայի (Peev v. Bulgaria), 64209/01, 26.07.2007թ.***

37. ...նախկինում այն կարծիքն էր գերիշխում, որ ազատ մասնագիտություն ունեցող անձանց գործարար կենտրոններում և գրասենյակներում կատարված խուզարկությունները միաժամանակ խախտում են այդ անձանց անձնական կյանքի և բնակարանի անձեռնմխելիության իրավունքները... Սույն գործով քննարկման առարկա է այն, թե դիմողի գրասենյակում կատարված խուզարկությունը, որը տեղակայված է եղել պետական մարմնի շենքում, ևս դասվում է նման միջամտությունների շարքին, թե՝ ոչ:

39. ...սույն գործով առկա իրավիճակը պետք է... գնահատվի «անձնական կյանքի ողջամիտ պահանջներից ելնելով»: Դատարանի կարծիքով, դիմողը պետք է ունենար նման պահանջի իրավունք, եթե ոչ իր ամբողջ գրասենյակի, ապա գոնե իր աշխատասեղանի և իր պահարանի նկատմամբ: Դա պայմանավորված է դրանցում պահվող անձնական առարկաների բազմաթիվությամբ… Բացի դրանից, նման պայմանավորվածությունը ենթադրվում է գործատու-աշխատող փոխհարաբերության սովորույթով, և սույն գործի մասնավոր հանգամանքներում չկա որևէ բան, ինչպիսին է, օրինակ, հատուկ կարգավորումը կամ պետական քաղաքականությունը, որը կխոչընդոտեր աշխատողների կողմից անձնական փաստաթղթերը և գույքն իրենց սեղանների վրա կամ պահարաններում պահելը, որը թույլ կտար ենթադրել, որ դիմողի պահանջը եղել է չերաշխավորված կամ չպատճառաբանված: Այն փաստը, որ նա աշխատանքի է ընդունվել պետական մարմնում և նրա գրասենյակը տեղադրվել է կառավարության թույլտվությամբ, ինքնին չի փոխարինում այս եզրակացությանը, հատկապես հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմողը հանդիսացել է դատախազությունում աշխատող քրեագետ-փորձագետ և ոչ թե դատախազ… Հետևաբար, խուզարկությունը, որն իրականացվել է դիմողի աշխատասեղանի վրա և պահարանում, պետք է դիտվի նրա անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը խախտող միջամտություն:

40. Նման եզրակացություն անելով՝ Դատարանն անհրաժեշտ չի համարում պարզել, թե խուզարկությունը հանդիսանում է, արդյոք, դիմողի բնակարանի անձեռնմխելիությունը խախտող միջամտություն...

44. ...Դատարանը չի ձգտում վիճարկել այն, որ տվյալ ժամանակահատվածում կամ ներպետական իրավունքում, կամ դատախազության ներքին կանոններում եղել է որևէ դրույթ, որը կկարգավորեր այն իրավիճակը, երբ դատախազությունը կարող է կամ որպես գործատու, կամ այլ կերպ իր աշխատակիցների գրասենյակներում խուզարկություն կատարել քրեական գործի քննության ենթատեքստից դուրս: Միջամտությունը, հետևաբար, չի եղել «օրենքի հիման վրա», ինչպես պահանջվում է 8-րդ հոդվածի 2-րդ մասով:

***Անդրեն և այլոք ընդդեմ Ֆրանսիայի (Andre and Other v. France), 18603/03, 24.07.2008թ.***

42. Հետևաբար, եթե նույնիսկ ներքին օրենսդրությամբ սահմանվում է փաստաբանական գրասենյակում խուզարկության կամ այնտեղ այցելության հնարավորությունը, միևնույնն է, դրա համար պետք է իմպերատիվ ձևով նախատեսվեն հատուկ երաշխիքներ: Նույնիսկ Կոնվենցիայով չի արգելվում փաստաբանների վրա դնել որոշակի պարտավորություններ, որոնք պարտադիր են վերջիններիս կողմից իրենց հաճախորդների հետ հարաբերություններում: Այստեղից հետևում է, որ տվյալ գործում արժանահավատ ապացույցների առկայությունը կվկայի փաստաբանի կողմից հանցագործությանը մասնակից լինելու փաստը ... դրանով իսկ պայքարելով արատավոր պրակտիկայի դեմ: Կարևոր հրամայական է այնպիսի միջոցների կիրառումը, որը արդարադատության իրականացման գործում կարևոր տեղ կզբաղեցներ, ինչպես նաև ամբաստանյալների և դատարանների միջև միջնորդի դեր կատարող փաստաբաններին թույլ կտա որակել որպես արդարադատությանն օժանդակող անձնակազմ:

43. Տվյալ գործում Դատարանը գտնում է, որ բնակարան այցելությունն ուղեկցվել է դատավարության հատուկ երաշխիքներով, և այն իրականացվել է Փաստաբանների կոլեգիայի նախագահի ներկայությամբ:

44. Բնակարան այցելության թույլտվությունը տված դատավորը բացակայել է, իսկ Փաստաբանների կոլեգիայի նախագահի ներկայությունը և վերջինիս կողմից ներկայացված առարկությունները չեն խոչընդոտել իրավաբանական գրասենյակում առկա բոլոր փաստաթղթերի արդյունավետ ուսումնասիրմանը, ինչպես նաև դրանց առգրավմանը:

45. Ինչ վերաբերում է դիմողներից առաջինի կողմից ձեռագիր գրված փաստաթղթերի առգրավմանը, ապա Դատարանը չի գտնում, որ հաստատված չէ այն փաստը, որ դրանք փաստաբանի անձնական փաստաթղթերն էին և պարունակում էին աշխատանքային գաղտնիք. վերոնշյալ փաստը պաշտպանում էր նաև Փաստաբանների կոլեգիայի նախագահը:

46. Բացի դրանից, Դատարանը գտնում է, որ բնակարանի խուզարկության թույլտվությունը պարունակում էր լայն իմաստ: Այդ որոշ-

ման համաձայն պետք է կատարվեր համապատասխան խուզարկություն և անհրաժեշտ առգրավումներ, որը պայմանավորված էր որոշակի վայրերում, մասնավորապես՝ դիմողների աշխատավայրերում, ենթադրվող խարդախության վերաբերյալ փաստաթղթեր և նյութերի կրիչներ կամ այլ ապացույցներ ձեռք բերելու անհրաժեշտությամբ: Այսպիսով, դատական կարգադրիչները և ծառայողներն օժտված են եղել լայն իրավասություններով:

47. Դատարանը գտնում է, որ բնակարանի խուզարկության հիմնական նպատակն էր դիմողների մոտ հայտնաբերել այնպիսի ապացույցներ, որոնք անհրաժեշտ էին հաստատելու համար խարդախության փաստը, և դրանք օգտագործել նրանց դեմ: Այս ամենը պայմանավորված էր նրանով, որ նշված փաստաբանները համարվում էին խարդախության մեջ կասկածվող կազմակերպության փաստաբաններ: Ոչ մի վայրկյան դիմողները չեն կասկածվել կամ մեղադրվել հանցագործություն կատարելու կամ իրենց հաճախորդների կողմից կատարած խարդախությանը մասնակցելու մեջ:

48. Դատարանն այս պարագայում գտնում է, որ դիմողների հաճախորդ կազմակերպության նկատմամբ իրականացվող հարկային հսկողության շրջանակներում տնօրինությունն ուշադրության կենտրոնում էր պահում վերջիններիս, քանի որ նրանք ունեին դժվարություններ: Այստեղ, մի կողմից, իրականացվում էր հարկային հսկողություն, իսկ, մյուս կողմից՝ փորձ էր կատարվում հայտնաբերել սոցիալական, իրավաբանական, հաշվապահական փաստաթղթեր, որոնք կհաստատեին հաճախորդ կազմակերպության կողմից խարդախությունը կատարելու փաստը:

49. Վերոնշյալը հաշվի առնելով՝ Դատարանը գտնում է, որ դիմողների բնակարաններում իրականացված խուզարկությունները և առգրավումները՝ գործի բնույթից ելնելով չեն համապատասխանում վերոնշյալ նպատակին:

Հետևաբար, այս առումով առկա է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

***Ալեքսանյանն ընդդեմ Ռուսաստանի (Aleksanyan v. Russia), 46468/06, 22.12.2008թ.***

217. Դատարանն ուշադրություն է դարձնում այն հանգամանքի վրա, որ «(խուզարկության) մանրամասն պատճառաբանությունը կարող է դժվար հասանելի լինել անհապաղություն պահանջող իրավիճակներում»… Ինչևէ, Դատարանը նշում է, որ խուզարկությունների ժամանակ Յուկոսի գործարարական գործողությունների վերաբերյալ պաշտոնական քննությունը շարունակվում էր արդեն մոտ երեք տարի: Քննության հենց սկզբից իշխանությունները պետք է իմացած լինեին, որ դիմողը հանդիսացել է Յուկոսի իրավաբանական վարչության պետը 1998–1999թթ., երբ ենթադրյալ հանցագործությունները կատարվել են, և պետք է տիրապետած լիներ քննարկվող դեպքերին

վերաբերող որոշակի փաստաթղթերի, էլեկտրոնային նյութերի և այլ ապացույցների: Բացի այդ, խուզարկության պատշաճ հիմնավորման բացակայությունը և դրա անորոշությունը չեն կարող բացատրվել իրավիճակի հրատապությամբ:

218. Դատարանը եզրակացնում է, որ 2006թ. ապրիլի 4-ի և 5-ի՝ լուրջ թերացումներով կատարված խուզարկությունները ինքնին բավարար են եզրակացնելու, որ դիմողի բնակարաններում կատարված խուզարկությունները կատարվել են Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտմամբ:

*բ. Առգրավում*

***Ռայմոնդոն ընդդեմ Իտալիայի (Raimondo v. Italy), 12954/87, 22.02.1994թ.***

24. Պրն Ռայմոնդոն բողոքարկել է տասնվեց անշարժ և վեց շարժական գույքի՝ 1985թ. մայիսի 13-ի առգրավումը…

27. …Դատարանը գտնում է, որ առգրավումը կատարվել է 1965թ. օրենքի 2-րդ բաժնի հիման վրա... և նպատակ չի հետապնդել դիմողին զրկել իր տիրապետության տակ գտնվող գույքից, այլ միայն կանխարգելել դրա օգտագործումը...

… 1965թ. օրենքի 2-րդ բաժնի հիման վրա կատարված խուզարկությունը հանդիսանում է բացառապես ապահովման միջոց և կոչված է հաստատելու, որ սեփականությունը կարող է լինել անօրինական գործողությունների արդյունք, որն ստացվել է հասարակության շահերի խախտմամբ, հետևաբար, անհրաժեշտության դեպքում այն կարող է առգրավվել: Նման միջոցի կիրառումն արդարացված է հասարակական շահով և, հիմք ընդունելով մաֆիայի նման «կազմակերպության» վտանգավոր տնտեսական ուժը, չի կարելի ասել, որ այս փուլում դրա իրականացումը եղել է հետապնդված նպատակին անհամապատասխան:

Հետևաբար, այս հիմքով տեղի չի ունեցել 1-ին արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

***Պանտելեյեկոն ընդդեմ Ուկրաինայի (Panteleyenko v. Ukraine), 11901/02, 29.06.2006թ.***

51. …քննության համար անհրաժեշտ ապացույցներն ընտրելու փոխարեն նրանք գրասենյակից առգրավել են բոլոր փաստաթղթերը և դիմողին պատկանող որոշ անձնական իրեր, որոնք իրոք չեն վերաբերել քրեական գործին...

53. Այս հանգամանքներում, Դատարանը եզրակացնում է, որ քննարկվող միջամտությունը չի ներկայացվել որպես «օրենքի հիման վրա կատարված» և, հետևաբար, այս հիմքով տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում:

*գ. Ուժի կիրառումը*

***Յալլոն ընդդեմ Գերմանիայի (Jalloh v. Germany [GC]), 54810/00, 11.07.2006թ.***

77. …սույն գործով, նախքան վիճարկվող միջոցի թույլատրումը և կատարումը, պարզվել է, որ փողոցում թմրամիջոց վաճառող անձը, ում նկատմամբ այն պետք է կիրառվեր, թմրամիջոցները պահում է իր բերանում և, հետևաբար, չի կարող թմրամիջոց առաջարկել մեծ թվով անձանց... Դատարանն ընդունում է, որ նախնական քննություն իրականացնող մարմինների համար կարևոր է եղել պարզել վաճառքի հանված թմրամիջոցի քանակն ու որակը: Ինչևէ, դա բավարար չէ ասելու համար, որ փսխում առաջացնող նյութերի հարկադրաբար օգտագործումը՝ ապացույց ստանալու նպատակով, սույն գործով չի եղել անհրաժեշտ: Մեղադրանքը պաշտպանող պաշտոնատար անձինք պետք է սպասեին մինչև թմրամիջոցը օրգանիզմից դուրս կգար բնական ճանապարհով: Այս կապակցությամբ կարևոր է նշել, որ Եվրոպայի Խորհրդի անդամ շատ պետություններում այս մեթոդը կիրառվում է թմրամիջոցների հետ կապված հանցագործություններ քննելիս...

82. Քննարկելով գործի բոլոր հանգամանքները՝ Դատարանը գտնում է, որ վիճարկվող միջոցը դաժանության նվազագույն չափի է և չի տեղավորվում 3-րդ հոդվածի սահմաններում: Իշխանությունները դիմողին, նրա կամքին հակառակ, ենթարկել են նրա ֆիզիկական և հոգեկան ամբողջականության հետ կապված դաժան միջամտության: Նրանք պարտադրել են նրան փսխել ոչ թե թերապևտիկ պատճառներով, այլ ապացույց ձեռք բերելու նպատակով, որը նրանք կարող էին ստանալ նվազ միջամտության եղանակով: Վիճարկվող միջոցների կիրառման ձևերը կարող էին դիմողի մոտ առաջացնել վախի, ցավի և նվաստացման զգացումներ և վիրավորել ու նվաստացնել նրան: Բացի դրանից, այդ գործողությունը վտանգ է ներկայացրել դիմողի առողջության համար, քանի որ նախքան այդ պատշաճ անամնեզ չի կատարվել: Թեև ոչ նպատակադրված, սակայն միջամտությունը կատարվել է այնպես, որ դիողին պատճառվել է ֆիզիկական և հոգեկան տառապանք: Այսպիսով, նա ենթարկվել է 3-րդ հոդվածի իմաստով անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի:

***Կիգանն ընդդեմ Միացյալ Թագավորության (Keegan v. United Kingdom), 28867/03, 18.07.2006թ.***

32. …ոստիկանությունը թույլտվություն է ստացել հաշտարար դատավորից՝ երդմամբ տեղեկություն տալով, որ առկա են հիմքեր հավատալու, որ գողոնը գտնվում է գողության մեջ կասկածվող անձանցից մեկի կողմից օգտագործվողհասցեում… Եթե այս համոզվածությունը ճիշտ լիներ, Դատարանը չէր կասկածի, որ մուտքը բնականաորան եղել է արդարացված:

34. …Դատարանը չի կարող համաձայնել, որ կրած վնասների փոխհատուցում պահանջելու սահմանափակումն անհրաժեշտ է պաշտպանելու ոստիկանության ուղղակի դիտավորությամբ կատարված հանցանքների վերաբերյալ գործերով հանցագործության քննության իրենց կենսական գործառույթն իրականացնելիս: Բնակարանի և անձնական կյանքի խախտմամբ ուղեկցվող լիազորությունների իրականացումը պետք է սահմանափակվի անձի՝ 8-րդ հոդվածով երաշխավորված և անվտանգությանն ու բարօրությանը վերաբերող անհատական ոլորտի վրա նման միջոցների ազդեցությունը նվազեցնելու ողջամիտ պարտականություններով …Այն դեպքում, երբ հասցեի և քննվող հանցագործության միջև կապը հաստատելու համար հիմնական քայլեր արդյունավետորեն չեն ձեռնարկվում, ապա դրա արդյունքում ոստիկանության գործողությունները, որոնք դիմողին լուրջ վախ և տագնապ են պատճառել, չեն կարող դիտվել որպես համաչափ:

35. …այս դատողությունը չի ենթադրում, որ ցանկացած որևէ խուզարկություն, որը հաջողությամբ չի ավարտվել, խախտում է հավասարակշռությունը, այդպիսին կարող է լինել միայն հիմնավորված և մատչելի կանխարգելիչ միջոցառումներ չիրականացնելու դեպքում:

36. Հետևաբար, Դատարանը եզրակացնում է, որ սույն գործով հավասարակշռությունը պատշաճ կերպով չի պահպանվել և տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

*դ. Սեփականությունը վնասելը*

***Սելցուկը և Ասկերն ընդդեմ Թուրքիայի (Selçuk and Asker v. Turkey), 23184/94 և 23185/94, 24.04.1998թ.***

77. …Այն հիշեցնում է, որ տիկին Սելցուկը և պրն Ասկերն այդ ժամանակ եղել են համապատասխանաբար 54 և 60 տարեկան և ողջ կյանքն ապրել են Իսլամկոյ գյուղում… Նրանց տները և գույքի մեծ մասը ոչնչացվել է անվտանգության աշխատակիցների կողմից, որոնք զրկել են դիմողներին իրենց ապրուստից և հարկադրել են լքել իրենց գյուղը: Պարզ է դառնում, որ գործողությունը նախապատրաստվել և իրականացվել է արհամարհանքով և առանց դիմողների զգացմունքները հարգելու: Նրանք նախապատրաստված չեն եղել. նրանք ստիպված են եղել կանգնել և նայել, թե ինչպես են վառվում իրենց տները. Պրն Ասկերի և տիկին Սելցոկի անվտանգությունն ապահովող համապատասխան կանխարգելիչ միջոցառումներ չեն իրականացվել. տիկին Սելցուկի առարկություններն անտեսվել են, և դրանց հետագայում որևէ գնահատական չի տրվել:

78. Հիշեցնելով մասնավորապես դիմողների տների ոչնչացման ձևը… և նրանց անձնական հանգամանքները՝ պարզ է դառնում, որ նրանց պատճառված տառապանքը բավարար է անվտանգության աշ-

խատակիցների գործողությունները 3-րդ հոդվածի իմաստով անմարդկային վերաբերմունք դիտելու համար…

86. ...Կասկած չկա առ այն, որ այս գործողությունները, բացի այն, որ հանգեցրել են 3-րդ հոդվածի խախտման, հանդիսացել են հատկապես անձնական և ընտանեկան կյանքի և բնակարանի անձեռնմխելիության իրավունքի և իրենց գույքը խաղաղ տնօրինելու իրավունքի լուրջ և չհիմնավորված խախտում:

87. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ առկա է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի և 1-ին արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

### 2. Անձնական քննումը՝ ներառյալ հերձումը

***Իքսն ընդդեմ Նիդեռլանդների (X v. Netherlands), 8239/78, 04.12.1978թ., DR 16, 184***

Հանձնաժողովը ողջամիտ է համարում այն, որ իշխանությունները՝ ի կատարումն իրենց պարտականությունների, պետք է կարողանան ձեռնարկել որոշակի միջոցառումներ, որոնք կազդեն հանցագործության մեջ կասկածվող անձի վրա: Պարզ է դառնում, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի c կետը նման դեպքերում թույլ է տալիս անգամ կալանավորում: Հետևաբար, *a fortiori,* այն կհանդուրժի այնպիսի նվազ ներգործություն, ինչպիսին է արյան հետազոտությունը...

Հանձնաժողովը նշում է, որ տարբեր երաշխիքներ են նախատեսված արյան հետազոտության ինքնիրավ և ոչ պատշաճ գործածման դեմ... արյան հետազոտություն կատարելու թույլտվություն կարող է տրվել Գլխավոր դատախազի, նրա տեղակալի կամ այդ անելու իրավասություն ունեցող ոստիկանության այլ պաշտոնատար անձի կողմից: Այս օրենսդրությանը կից թույլատրող որոշումը նույնպես պայման է դնում առ այն, որ արյան հետազոտությունը կարող է իրականացվել միայն նշանակված բժշկի կողմից, որը կարող է… բժշկական բնույթի բացառիկ հանգամանքների առկայության դեպքում մերժել հետազոտության իրականացումը...

Հանձնաժողովն այսպիսով գտնում է, որ այս հարցի հետ կապված Նիդեռլանդների օրենսդրությունը կրում է հասարակության պաշտպանության և, մասնավորապես, ճանապարհների անվտանգության և այլ անձանց առողջության պաշտպանության ցանկության և անհրաժեշտության ազդեցությունը: Այսպիսով, թեև արյան հարկադրական հետազոտությունը կարող է թվալ 8-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտում, սակայն այն անհրաժեշտ է նույն հոդվածի 2-րդ մասի իմաստով այլ անձանց իրավունքների պաշտպանության համար:

***Դևրիմ Թուրանն ընդդեմ Թուրքիայի (Devrim Turan v. Turkey), 879/02, 02.03.2006թ.***

19. Սույն գործով Դատարանը գտնում է, որ դիմողը գինեկոլոգիական հետազոտության համար տարվել է Տոկատ Մատերնիտի հիվանդանոց իր ծերբակալման առաջին և վերջին օրը...

20. ...գինեկոլոգիական հետազոտության համար հիվանդանոց տարվելը դիմողին կարող էր հոգեկան տառապանք պատճառել: Ինչևէ, ինչպես նշվում է Դատարանի նախադեպային իրավունքում..., կալանավորված անձանց բժշկական հետազոտությունը դատական բժշկի կողմից՝ կարող է հանդիսանալ լուրջ երաշխիք սեռական ոտնձգության կամ վատ վերաբերմունքի վերաբերյալ սուտ մատնության դեմ: Բացի դրանից, պարզ է, որ երբ դիմողը մերժում է գինեկոլոգիական հետազոտության ենթարկվել, նրա նկատմամբ չի կարող ուժ կիրառվել, և բժիշկները նշված հետազոտությունը չեն կարող իրականացնել:

21. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ միայն այն փաստը, որ դիմողը գինեկոլոգիական հետազոտության նպատակով տարվել է հիվանդանոց իր ծերբակալման առաջին և վերջին օրը, չի հասնում դաժանության նվազագույն սահմանին, որը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով հանգեցնում է նվաստացնող վերաբերմունքի:

***Ակփինարը և Ալթունն ընդդեմ Թուրքիայի (Akpinar and Altun v. Turkey), 56760/00, 27.02.2007թ.***

76. ...անվիճելի է այն, որ Սեյութ Կուլեսկցիի և Դոգան Ալթունի ականջներն ամբողջությամբ կամ մասամբ կտրվել են նախքան նրանց մարմինները դիմողներին վերադարձնելը:

78. ...մարմինների անդամահատումը կատարվել է այն ժամանակ, երբ դրանք գտնվել են Պետության անվտանգության ուժերի մոտ:

81. ...Դատարանն այն եզրակացության է հանգում, որ Սեյութ Կուլեսկցիի և Դոգան Ալթունի ականջները կտրվել են նրանց մահից հետո:

82. Բացի դրանից, Դատարանը Կոնվենցիայի 3-րդ հոդվածը երբեք չի կիրառել դիակն անարգելու կապակցությամբ: Սույն Պալատը համաձայնում է այս մոտեցմանը՝ գտնելով, որ մարդկային որակը մահվանից հետո վերանում է և, հետևաբար, վատ վերաբերմունքի արգելքն այլևս չի տարածվում դիակների վրա, որպիսիք հանդիսացել են Սեյութ Կուլեսկցին և Դոգան Ալթունը, անկախ կատարված գործողության դաժանությունից:

83. Դրանից հետևում է, որ այս կապակցությամբ 3-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

### 3. Հոգեբուժական հետազոտությունը

***Բոտկան և Պայան ընդդեմ Ավստրիայի (Botka and Paya v. Austria), 15882/89, 29.03.1993թ., DR 74, 48***

3. …Հանձնաժողովը գտնում է, որ փորձագետ Ս.-ն առաջին դիմողի հոգեկան առողջության վերաբերյալ կարծիքը նախապատրաստել էր պրն Ռ.-ի դեմ հարուցված քրեական վարույթի շրջանակներում, որը կասկածվում էր առաջին դիմողի, ինչպես նաև իր եղբոր նկատմամբ խարդախություն կատարելու մեջ: Պրն Ռ.-ի դեմ մեղադրանքների թվում բարձրացվել էր նաև դիմողի հոգեկան առողջության հարցը:

Հանձնաժողովը նշում է, որ քննարկվող կարծիքի նախապատրաստումը չի պահանջել բժիշկ Ս.-ի կողմից առաջին դիմողի որևէ մասնավոր հետազոտություն: Մասնավորապես, երբ 1988թ. հոկտեմբերին բժիշկ Ս.-ին որպես փորձագետ նշանակելուց հետո առաջին դիմողը մերժել է հետազոտության ենթարկվել, որևէ այլ, օրինակ՝ հարկադրական միջոց չի կիրառվել… Դրանից բացի, բժիշկ Ս.-ն մասնակցել է գործը քննող դատավորի կողմից առաջին դիմողի՝ 1989թ. փետրվարի 1-ի հարցաքննությանը, որի ընթացքում դիմողը չի հրաժարվել և կամովին պատասխանել է փորձագետի հարցերին: Ավելին, փորձագետը 1989թ. ապրիլին հայտնած իր կարծիքում չի մատնանշել առաջին դիմողի կողմից իրավական ընթացակարգին մասնակցելու հնարավորությանը խոչընդոտող որևէ բացասական հանգամանք:

Այս մասնավոր հանգամանքներում, Հանձնաժողովը գտնում է, որ փորձագետ Ս.-ի նշանակումն առաջին դիմողի հոգեկան առողջության վերաբերյալ փորձագիտական եզրակացություն նախապատրաստելու համար, չի հանդիսանում Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով դիմողի անձնական կյանքի իրավունքի խախտում:

***Ուորվան ընդդեմ Լեհաստանի (Worwa v. Poland), 26624/95, 27.11.2003թ.***

82. Դատարանն ընդգծում է, որ հանցագործության մեջ մեղադրվող անձի հոգեկան առողջության վերաբերյալ հոգեբուժական եզրակացություն տալու պահանջն անհրաժեշտ միջոց է, որը կոչված է պաշտպանելու այն անձանց, ովքեր կարող են հանցանք կատարել՝ առանց իրենց հոգեկան կարողությունների ամբողջական տիրապետման: Ինչևէ, պետական իշխանություններից պահանջվում է նման միջոցներ կիրառել՝ առանց խախտելու արդարացի հավասարակշռությունը, որը պետք է պահպանվի անձի իրավունքների, մասնավորապես՝ անձնական կյանքի անձեռնմխելիության, և արդարադատության պատշաճ իրականացման միջև:

83. Սույն գործով Դատարանը գտնում է, որ այդ հավասարակշռությունը չի պահպանվել: Դատական իշխանության ներկայացուցիչները մեկ դատարանի տարածքային ընդդատության ներքո բազմիցս կարճ ընդմիջումներով դիմողից պահանջել են ենթարկվել հոգեբուժական հետազոտության և, ի լրումն դրա՝ նշված հետազոտություններին ենթարկվելու համար նրա գնացած վայրերից նա մի քանի ան-

գամ ուղարկվել է տուն՝ այն պատճառաբանությամբ, որ դատարանի այդ պահանջներում հետազոտության որևէ օր չի նշանակվել...

84. ...Դատարանը, չնայած բազմաթիվ վեճերին, որոնցում դիմողը ներգրավված է եղել, եզրակացնում է, որ դատական իշխանությունները չեն գործել հավուր պատշաճի: Դիմողի անձնական կյանքի իրավունքի խախտումը, հետևաբար, արդարացված չի եղել:

### 4. Մեղադրյալի մասնակցությամբ դեպքի տեղի զննություն կատարելը

***Դեմիրեյն ընդդեմ Թուրքիայի (Demiray v. Turkey), 27308/95, 21.11.2000թ.***

46. ...Դատարանը նշում է, որ իշխանություններն իրոք պետք է գնահատեին քննարկության առարկա զինվորական գաղտնարանի քննարկվող տարածք մուտք գործելու հնարավոր ռիսկերը՝ հաշվի առնելով Հարավարևելյան Թուրքիայում իրավիճակի անկայունությունը: Կառավարության կողմից ներկայացված ուրվագծային քարտեզի համաձայն Ահմետ Դեմիրեյը պայթյունի ժամանակ գտնվել է զինվորական գաղտնարանի տարածքից 1 մ հեռավորության վրա, մինչդեռ նրան ուղեկցող երկու ոստիկանները գտնվել են 30 մ, իսկ երրորդը՝ 50 մ հեռավորության վրա՝ ձևավորելով հավասարասրուն եռանկյուն, որի կենտրոնում եղել է զինվորական գաղտնարանը... Կառավարության կողմից նման ընթացակարգի պատճառների վերաբերյալ բացատրության բացակայության, ինչպես նաև Ահմետ Դեմիրեյի պաշտպանության համար այլ միջոցներ ձեռնարկված չլինելու պայմաններում, ինչն անխուսափելիորեն հանգեցրել է լուրջ խնդիրների, Դատարանը կարող է միայն եզրակացնել, որ իրավասու պաշտոնատար անձինք չեն ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք, ողջամտորեն դատելու դեպքում, պետք է պաշտպանեին դիմողի ամուսնուն սպառնացող վտանգից:

47. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ մահվան հարցում Պետության պատասխանատվությունն առկա է: Հետևաբար, այս կապակցությամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում:

### 5. Հաղորդակցությունների վերահսկողությունը

***Լուդին ընդդեմ Շվեյցարիայի (Lüdi v. Switzerland), 12433/86, 15.06.1992թ.***

38. Դատարանը նշում է, որ 1984թ. մարտի 15-ին դիմողի գործով նախնական քննություն սկսելիս Լոֆենի Շրջանային դատարանի՝ գործը քննող դատավորը նույնպես թույլատրել է վերահսկել նրա հեռախոսային խոսակցությունները...

39. Անկասկած, հեռախոսային լսումները հանդիսացել են միջամտություն պրն Լուդիի անձնական կյանքին և հաղորդակցությանը:

Նման միջամտությունը չի կարող համարվել Կոնվենցիայի խախտում, եթե այն կատարվում է 8-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների պահպանմամբ... Քննարկվող միջոցի իրականացումը հիմնված է եղել Բեռնի Քրեական դատավարության օրենսգրքի 171b և 171c հոդվածների վրա, որոնց համաձայն՝ …անգամ նախնական քննության փուլում, եթե առկա է հիմնավոր պատճառ ենթադրելու, որ կատարվելու են քրեական հանցանքներ: Բացի դրանից, այն նպատակ է հետապնդում «կանխել հանցագործությունները», և Դատարանը չի կասկածում, որ այն անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակության համար:

***Կոփն ընդդեմ Շվեյցարիայի (Kopp v. Switzerland), 23224/94, 25.03.1998թ.***

73. Ինչևէ, Դատարանը սույն գործով նկատում է հակասությունը փաստաբանի՝ որպես գործով երրորդ կողմի, վերահսկողության ժամանակ մասնագիտական առավելությունների պաշտպանության վերաբերյալ օրենքի տեքստի և պրակտիկայի միջև: Եթե անգամ նախադեպային իրավունքով ձևավորվել է հաճախ կիրառվող այն սկզբունքը, որի համաձայն իրավաբանական մասնագիտության առավելությունը տարածվում է միայն փաստաբանի և նրա վստահորդների միջև հարաբերությունների վրա, օրենքը հստակորեն չի սահմանում այն, թե ինչպես, ինչ հանգամանքներում և ում կողմից պետք է իրականացվի տարբերակումը դատավարության կողմի տված ցուցումների համաձայն փաստաբանի աշխատանքի և փաստաբանության հետ չկապված վարքագծի միջև:

74. Նախևառաջ, փաստորեն, զարմանք է պատճառում այն, որ այս գործողության կատարումը պետք է իրականացվի Փոստային գրասենյակի իրավաբանական բաժնի պաշտոնատար անձի կողմից, որը հանդիսանում է մեղադրանքի կողմ, առանց անկախ դատավորի կողմից վերահսկողություն իրականացնելու, սա վերաբերում է հատկապես փաստաբանի և նրա վստահորդի միջև խորհրդապահական հարաբերությունների գաղտնի ոլորտին, որն անմիջականորեն առնչվում է պաշտպանության իրավունքին:

75. Հակիրճ՝ շվեյցարական իրավունքը, գրված, թե չգրված, հստակ չի մատնանշում այս կապակցությամբ իշխանությունների գործողությունների սահմաններն ու ձևերը: Հետևաբար, պրն Կոփը՝ որպես փաստաբան, չի ունեցել ժողովրդավարական հասարակությունում օրենքի գերակայությամբ պահանջվող պաշտպանության նվազագույն հնարավորություն:

Հետևաբար, տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում:

**6. Տեսա-ձայնագրում**

***Փ.Գ.-ն և Ջ. Հ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (P.G. and J.H. v. United Kingdom), 44787/98, 25.09.2001թ.***

38. Քանի որ տվյալ ժամանակ չի եղել գաղտնագրման սարքերի կիրառումը կարգավորող ներպետական օրենք..., սույն գործով միջամտությունը չի եղել «օրենքի հիման վրա», ինչպես դա պահանջվում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, և, հետևաբար, տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում...

62. ...Դա նշանակում է, որ որևէ նյութական տարբերություն չի առաջանում այն ժամանակ, երբ ձայնագրող սարքը կիրառվում է առանց անձի իմացության կամ համաձայնության, ոստիկանության թույլտվության հիման վրա: Հիմնաքարային այն սկզբունքը, որ ներպետական իրավունքը պետք է նախատեսի պաշտպանություն գաղտնագրման սարքերի օգտագործման ժամանակ ինքնիրավչությունից և չարաշահումից, այս իրավիճակում արդարացված է թվում:

***Փերին ընդդեմ Միացյալ Թագավորության (Perry v. United Kingdom), 63737/00, 17.07.2003թ.***

47. ...Դատավորը գտնում է, որ առկա են թերություններ, որոնք վերաբերում են ոստիկանության կողմից Քրեական դատավարության օրենգրքի D.2.11, D.2.15 և D.2.16 պարագրաֆների կիրառմանը (նույնացման համար տեսաժապավենը վերցնելու և օգտագործելու վերաբերյալ), որն ակնհայտորեն վերաբերում է նրանց կողմից նկարահանում կատարելու համար դիմողի համաձայնությունը չստանալուն, նրան այդ մասին չտեղեկացնելուն և առերեսման ժամանակ դա օգտագործելուն, և այդ կապակցությամբ նրա իրավունքները պարզաբանելուն (մասնավորապես, դիտել տեսագրությունը, ժխտել դրա բովանդակությունը և պահանջել, որ տեսագրությունը վկաների դիտելու ընթացքում ներկա լինի իր փաստաբանը): Ներպետական դատարանների այս դատողությունների լույսի ներքո, Դատարանը չի կարող, սակայն, եզրակացնել, որ դիմողի գործով իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ներպետական օրենսդրության պահանջներին:

***Վան Վոնդելն ընդդեմ Նիդեռլանդների (Van Vondel v. Netherlands), 38258/03, 25.10.2007թ.***

41. ...դիմողը բողոքարկել է իր անձնական կյանքի իրավունքի խախտումը՝ այն կապակցությամբ, որ իր բազմաթիվ (հեռախոսային) խոսակցությունները պրն Ռ.-ի հետ ձայնագրվել են վերջինիս կողմից, ձայնագրող սարքի միջոցով, որը տրվել է պրն Ռ.-ին Ազգային ոստիկանության ներքին քննությունների վարչության կողմից, նրան նաև Ազգային ոստիկանության ներքին քննությունների վարչության կող-

մից ցուցումներ են տրվել դիմողի հետ վարվող խոսակցությունների բովանդակության վերաբերյալ…

53. Թեև Դատարանը հասկանում է այն անձի փաստացի դժվարությունները, ում նախաքննական մարմինները չեն հավատում, կամ ով վախենում է, որ չեն հավատա, և կարիք է առաջանում հաստատելու այդ մարմիններին տրվող հաշվետվությունները, այդ պատճառով նման անձը կարող է կարիք ունենալ տեխնիկական աջակցություն ստանալու այս իշխանություններից, չի կարելի ասել, որ իշխանությունների կողմից նման աջակցություն նախատեսող դրույթը չի առաջնորդվում ինքնիրավ գործողությունների դեմ իրավական երաշխիքներ նախատեսող կանոններով: Նա այն կարծիքի է, որ բողոքարկվող միջամտության կապակցությամբ դիմողին չի տրամադրվել պաշտպանության նվազագույն հնարավորություն, որը նա պետք է ունենար օրենքի գերակայությունն ընդունող ժողովրդավարական հասարակությունում:

54. Վերոգրյալի լույսի ներքո, Դատարանը գտնում է, որ այս դեպքում միջամտությունը չի եղել «օրենքի հիման վրա»: Այս կարծիքը Դատարանի համար բավարար է ասելու, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

***Բիկովն ընդդեմ Ռուսաստանի** (Bykov v. Russia) [GC], 4378/02, 10.03.2009թ.*

77. …Կառավարությունը վիճարկել է, որ հեռախոսային խոսակցությունների վերաբերյալ առկա կարգավորումները չեն տարածվում ռադիոընդունիչ սարքերի վրա և չեն կարող անալոգիայով կիրառվել դրանց նկատմամբ: Ի հակառակն դրան, այն կարևորել է այդ երկուսի միջև առկա տարբերությունները՝ նշելով, որ ռադիոընդունիչ սարքերի կիրառման համար դատարանի թույլտվությունը չի պահանջվում այն պատճառով, որ այս տեխնոլոգիան առկա կարգավորումների սահմաններից դուրս է: Այսպիսով, Կառավարությունը գտել է, որ Օպերատիվ-հետախուզական գործողությունների մասին օրենքի 8-րդ բաժնում չներառված լսման տեխնոլոգիայի կիրառումը չի հանդիսանում այդ օրենքով սահմանված պահանջների առարկա:

78. Դատարանը պնդում է, որ այն ժամանակ, երբ հաղորդակցությունների լսումը կատարվում է ոստիկանական քննության նպատակների համար, «օրենքը պետք է բավականաչափ հստակ լինի քաղաքացիներին համապատասխան ցուցումներ տալու համար այն հանգամանքների և պայմանների վերաբերյալ, որոնցում պետական մարմինները լիազորված են դիմել անձնական կյանքին և հաղորդակցության գաղտնիությանը վերաբերող այս գաղտնի և վտանգավոր միջամտությունը»…

79. Դատարանի կարծիքով՝ այս սկզբունքները հավասարապես վերաբերում են ռադիոընդունիչ սարքերի կիրառմանը, որոնք իրենց

միջամտիչ բնույթով և աստիճանով փաստորեն նման են հեռախոսային լսումներին:

80. Սույն գործով դիմողին տրամադրվել է նվազ պաշտպանություն այն վարույթով, որի ընթացքում թույլատրվել և իրականացվել է միջամտություն Վ.-ի հետ նրա հաղորդակցություններին: Մասնավորապես, միջամտությունը թույլատրելու հետ կապված իշխանությունների օրինական հայեցողությունը պայմանավորված չի եղել որևէ հանգամանքով, և դրա իրականացման սահմաններն ու ձևերը հստակեցված չեն եղել. որևէ այլ առանձնահատուկ պաշտպանության միջոց չի նախատեսվել: Պաշտպանությունն ապահովող առանձնահատուկ կարգավորումների բացակայության պայմաններում Դատարանը չի բավարարվում նրանով, որ, ինչպես վիճարկվել է Կառավարության կողմից, «օպերատիվ փորձարարությունը» դատական կարգով անօրինական ճանաչելու և դրա արդյունքները որպես անօրինական ճանապարհով ձեռք բերված ապացույց անթույլատրելի ճանաչելու՝ դիմողի հնարավորությունը բացառվում է վերոնշյալ պատճառներով:

81. Դրանից բխում է, որ «օպերատիվ փորձարարություններում» առանձնահատուկ և մանրամասն կարգավորումների բացակայությունը չի ապահովել համապատասխան պաշտպանություն հնարավոր տարբեր չարաշահումներից: Հետևաբար, դրա կիրառումը եղել է ինքնիրավ և չի համապատասխանել օրինականության պահանջներին:

82. Դատարանը եզրակացնում է, որ դիմողի անձնական կյանքին միջամտությունը չի եղել «օրենքին համապատասխան», ինչպես դա պահանջվում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասով:

### 7. Գաղտնի գործակալներ

***Լուդին ընդդեմ Շվեյցարիայի (Lüdi v. Switzerland), 12433/86, 15.06.1992թ.***

40. …սույն գործով գաղտնի գործակալների օգտագործումն առանձին կամ հեռախոսային խոսակցությունների լսումների հետ մեկտեղ, 8-րդ հոդվածի իմաստով չի ազդել անձնական կյանքի վրա... Թոնիի գործողություններն իրականացվել են 5 կգ կոկաինի հետ կապված գործարքի շրջանակներում: Կանտոնների իշխանությունները, որոնք զգուշացվել էին Գերմանիայի ոստիկանության կողմից, ընտրել են երդում տված ոստիկանների՝ ներգրավելու համար թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող անձանց մեծ ցանցի մեջ, որոնք, ենթադրվում է, որ պատրաստվում էին նշված քանակի թմրամիջոցը տարածել Շվեյցարիայում: Գործողության նպատակն է եղել իրացնողներին ձերբակալել թմրամիջոցների հանձնման պահին: Թոնին այդ պատճառով կապվել է դիմողի հետ, ով ասել էր, որ պատրաստ է նրան 200.000 շվեյցարական ֆրանկով 2 կգ կոկաին վաճառել... պրն Լուդին պետք է տեղյակ լիներ, որ ներգրավված է Թմրամիջոցների մասին օրենքի 19-րդ հոդվածով պատժելի համարվող հան-

ցագործության մեջ, և, հետևաբար, նա կարող էր առնչվել գաղտնի գործակալ հանդիսացող ոստիկանության աշխատակիցների հետ, որոնց նպատակը, փաստորեն, նրանց մերկացումն էր լինելու:

***Տեիքսեիրա դե Կաստրոն ընդդեմ Պորտուգալիայի (Teixeira de Castro v. Portugal), 25829/94,09.06.1998թ.***

37. Առաջին հերթին Դատարանը նշում է, որ սույն վեճը տարբերվում է Լուդին ընդդեմ Շվեյցարիայի գործից… որում ոստիկանը երդում էր տվել, գործը քննող դատավորը անտեղյակ չէր նրա առաքելությունից և Շվեյցարիայի իշխանությունները, տեղեկացված լինելով Գերմանիայի ոստիկանության կողմից, սկսել էին նախնական քննություն: Ոստիկանների դերը սահմանափակվում էր գաղտնի գործակալի լիազորությունների իրականացմամբ:

38. Սույն գործով... Կառավարությունը չի պնդել, որ ոստիկանների միջամտությունն իրականացվել է որպես թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի մաս, որը վերահսկվում էր դատավորի կողմից: Դա չի նշանակում, որ իրավասու պաշտոնատար անձինք ունեցել են լուրջ հիմնավորում առ այն, որ պրն Տեիքսեիրա դե Կաստրոն թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ է զբաղվում. առավել ևս, նա չունի հանցավոր անցյալ և նրա վերաբերյալ որևէ նախնական քննություն չի սկսվել: Իհարկե, նա հայտնի չի եղել ոստիկաններին, ովքեր սկսել են համագործակցել նրա հետ Վ.Ս.-ի և Ֆ.Օ.-ի միջոցով...:

Բացի դրանից, թմրամիջոցներ դիմողի տանը չեն գտնվել. նա դրանք ձեռք է բերել երրորդ անձից, ով, իր հերթին, դրանք ձեռք էր բերել մեկ այլ անձից... Գերագույն դատարանի դատավճռում ևս... չի նշվել, որ ձերբակալման պահին դիմողի մոտ եղել է ավելի շատ թմրամիջոց, քան ոստիկանության աշխատակիցները խնդրել էին, հետևաբար, այն գերազանցել է ոստիկանության սադրած հանցագործության չափը: Չկա որևէ ապացույց ի հիմնավորումն Կառավարության այն փաստարկի, որ դիմողին դրդել է հանցանք կատարել: Այս հանգամանքներից անխուսափելիորեն բխում է, որ երկու ոստիկանները չեն սահմանափակվել պրն Տեիքսեիրա դե Կաստրոյի հանցավոր գործողությունների պասիվ քննությամբ, այլ այնպիսի վարքագիծ են դրսևորել, որը դրդել է հանցանքի կատարման: Վերջապես, Դատարանը նշում է, որ ներպետական դատարաններն իրենց որոշումներում գտել են, որ դիմողը դատապարտվել է հիմնականում երկու ոստիկանների ցուցմունքների հիման վրա:

39. Բոլոր այս հանգամանքների լույսի ներքո, Դատարանը եզրակացնում է, որ երկու ոստիկանների գործողությունները չեն համապատասխանել գաղտնի գործակալների գործողություններին, քանի որ նրանք դրդել են հանցանքի կատարման, և ոչինչ թույլ չի տալիս ենթադրել, որ առանց նրանց միջամտության այն կկատարվեր: Այդ միջամտությունը և դրա կիրառումը վիճարկվող քրեական վարույթնե-

րում՝ նշանակում է, որ ի սկզբանե դիմողն իսպառ զրկված է եղել արդար դատաքննության իրավունքից: Հետևաբար, տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

***Կալաբրոն ընդդեմ Իտալիայի (Calabro v. Italy) (dec.), 59895/00, 21.03.2002թ.***

2. …Դատարանը նշում է, սակայն, որ սույն գործը տարբերվում է Տեիքսեիրա դե Կաստրոյի գործից… Սույն գործով… գաղտնի գործակալին հայտնի է դարձել միայն այն, որ նախապատրաստվում է մեծ քանակությամբ թմրամիջոցներ ներմուծում և վաճառք… ապա դիմողը սեփական ցանկությամբ հեռաձայնել է Ջուրգենին, նրան որոշակի գումար է վճարել և կազմակերպել հանդիպում ներմուծված 46 կգ կոկաին ընդունելու համար: Դա կատարելիս նա ցույց է տվել, որ ներգրավված է թմրամիջոցների միջազգային ապօրինի շրջանառության մեջ:

Բացի դրանից, ինչպես Դատարանն արդեն նշել է, գաղտնի գործակալների ցուցմունքները չեն հանդիսացել դիմողի դատապարտման վճռորոշ գործոն... Ի լրումն դրա, դիմողին հնարավորություն է տրվել Միլանի Քրեական դատարանում վարույթի ընթացքում հարցաքննել այլ ոստիկանների, ովքեր մասնակցել են գործով նախնական քննությանը, և պարզաբանել ոստիկանական գործողության բնույթը, որը հանգեցրել է նրա ձերբակալմանը և նրա նկատմամբ վարույթների իրականացմանը:

Այս հանգամանքներում չի կարելի եզրակացնել, որ Ջուրգենն իր գործողություններով դրդել է հանցանքի կատարումը, կամ որ հակառակ դեպքում հանցանքը չէր կատարվելու: Հետևաբար, Դատարանը գտնում է, որ Ջուրգենը չի սահմանազանցել իր՝ որպես գաղտնի գործակալի, գործառույթների իրականացումը.. և, հետևաբար, դիմողը չի զրկվել արդար դատաքննության իրավունքից:

***Ռամանաուսկասն ընդդեմ Լիտվայի (Ramanauskas v. Lithuania) [GC], 74420/01, 05.02.2008թ.***

63. ...Ներպետական իշխանությունները չեն կարող ազատվել ոստիկանների գործողությունների համար պատասխանատվությունից՝ ուղղակիորեն փաստարկելով այն, որ ոստիկաններն իրենց պարտականությունների իրականացման ժամանակ գործել են որպես «մասնավոր անձ»: Հատկապես կարևոր է այն, որ իշխանությունները պետք է ստանձնեն պատասխանատվությունը, քանի որ գործողության սկզբնական փուլը… իրականացվել է իրավական որևէ սահմանափակման կամ դատական վերահսկողության բացակայության պայմաններում: Բացի դրանից, օրինականացնելով այդ մոդելի կիրառումը և ազատագրելով Ա.Ջ.-ին քրեական պատասխանատվության բոլոր ձևերից՝ իշխանություններն *ex post facto* օրինականացրել են նախնական քննության փուլը և կիրառել դրա արդյունքները:

64. Դրանից բացի, որևէ բավարար բացատրություն չի ներկայացվել առ այն, թե ինչ պատճառներ կամ անձնական դրդապատճառներ կարող էին ստիպել Ա.Զ.-ին սեփական ցանկությամբ հեռաձայնել դիմողին՝ առանց նրա վերադասների ուշադրությունը դրա վրա հրավիրելու, կամ ինչու նրա նկատմամբ նախնական քննության փուլում մեղադրանք չի ներկայացվել…

65. Դրանից հետևում է, որ Լիտվայի իշխանությունները՝ Կոնվենցիայի իմաստով պատասխանատու են եղել Ա.Զ.-ի և Վ.Ս.-ի գործողությունների համար նախքան մոդելի օրինականացումը…

67. Հաստատելու համար, որ Ա.Զ.-ն և Վ.Ս.-ն սահմանափակվել են «հանցագործության՝ տարրական պասիվ ձևով քննությամբ», Դատարանը պետք է անդրադառնա հետևյալ հարցերին: Նախևառաջ, չկա որևէ ապացույց առ այն, որ դիմողը նախկինում հանցանք է կատարել, խոսքը վերաբերում է մասնավորապես, կոռուպցիոն հանցագործություններին: Երկրորդ, ինչպես ցույց է տրված հեռախոսային հաղորդակցությունների լսումների վերծանումներում՝ դիմողի և Ա.Զ.-ի բոլոր հանդիպումները կայացել են վերջինի նախաձեռնությամբ ...թեև կապը հաստատվել է Ա.Զ.-ի և Վ.Ս.-ի նախաձեռնությամբ, սակայն դիմողին ակնհայտորեն դրդել են հանցագործության, թեև առկա չէ որևէ ապացույց, բացառությամբ ասեկոսեների, ենթադրելու, որ նա նման վարքագիծ դրսևորելու նպատակ է ունեցել:

68. Այս դատողությունները բավարար են Դատարանի համար եզրակացնելու, որ քննարկվող անձանց գործողություններն անցել են հանցավոր վարքագծի միայն պասիվ գործադրման սահմանները:

***Միլինիենն ընդդեմ Լիտվայի (Miliniene v. Lithuania), 74355/01, 24.06.2008թ.***

37. ...Ապացույցներ չկան առ այն, որ դիմողը նախկինում կատարել է որևէ, մասնավորապես՝ կոռուպցիոն բնույթի հանցանք: Ինչևէ, սույն գործում նախաձեռնությունը պատկանել է Ս.Ս.-ին՝ գաղտի անձի, ով, հասկանալով, որ դիմողը կաշառք կպահանջի իր գործով ցանկալի արդյունքի հասնելու համար, բողոք է ներկայացրել ոստիկանություն: Այնուհետև ոստիկանությունը գործին ներգրավել է Հանրային մեղադրանքի ներկայացուցչին, ով սանկցավորել է գործի նախնական քննությունը և հետևել դրա հետագա ընթացքին քրեական վարքագծի կեղծման մոդելի շրջանակներում՝ Ս.Ս.-ին կասկածյալի դեմ ցուցմունք տալու դիմաց անձեռնմխելիություն տրամադրելով:

38. Ինչ վերաբերում է նրան, որ Ս.Ս.-ն ունեցել է ոստիկանության օժանդակությունը դիմողին բավականաչափ մեծ ֆինանսական բավարարում առաջարկելու համար և նրան տրամադրվել են տեխնիկական միջոցներ՝ իրենց խոսակցությունը ձայնագրելու համար, ապա պարզ է, որ այս կապակցությամբ ոստիկանությունն ազդել է դեպքերի ընթացքի վրա: Սակայն Դատարանը չի գտնում, որ ոստիկանության դերը եղել է ոչ իրավաչափ՝ հաշվի առնելով հանցագործությունների

վերաբերյալ հայտարարությունները ստուգելու և իրավական և ժողովրդավարական պետության վրա դատական ոլորտի կոռուպցիայի քայքայիչ ազդեցությունը կանխելու նրանց պարտականությունը: Դատարանը չի գտնում նաև, որ ոստիկանությունը վճռորոշ դեր է ունեցել: Որոշիչ է եղել Ս.Ս.-ի և դիմողի վարքագիծը: Այս կապակցությամբ, Դատարանը գտնում է, որ կարելի է ասել, որ ոստիկանությունն առավելապես «միացել» է, քան կանխորոշել հանցագործությունը: Նրանց վարքագիծը, այսպիսով, գտնվում է գաղտնի ծառայության շրջանակներում այնքանով, որքանով սադրիչների *(agents provocateurs)* ծառայությունը, և կարող է որոշ առումով խախտել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը…

### 8. Տեղեկություն տալու պարտականությունը

***Ֆանկին ընդդեմ Ֆրանսիայի (Funke v. France), 10828/84, 25.02.1993թ.***

44. Դատարանը նշում է, որ պրն Ֆանկիի կալանավորումն իրականացվել է սովորույթի ուժով, որոշակի փաստաթղթեր ձեռք բերելու համար, որոնք, նրանց կարծիքով, պետք է առկա լինեին, թեև նրանց կարծիքը փաստերով հաստատված չէր: Չկարողանալով կամ չցանկանալով նրանց նկատմամբ այլ միջոցներ կիրառել՝ նրանք փորձել են դիմողին ստիպել ներկայացնել ապացույցներ իր կողմից ենթադրաբար կատարված հանցագործությունների վերաբերյալ: Սովորութային իրավունքի առանձնահատուկ գծերը... չեն կարող արդարացնել Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ «ներկայացված քրեական մեղադրանքի» այնպիսի խախտումը, որը կապված է... լռություն պահպանելու և իրեն մեղադրելուն չաջակցելու հետ:

***Զեթն ընդդեմ Ֆինլանդիայի (Z v. Finland), 22009/93, 25.02.1997թ.***

102. …Նպատակը նրա բժշկական խորհրդատուներից ճշտելն էր բացառապես այն, թե երբ էր Իքսը տեղեկացել կամ հիմքեր ձեռք բերել կասկածելու իր ՄԻԱՎ վարակի վերաբերյալ: Նրանց ցուցմունքները տվյալ ժամանակահատվածում կարող էին որոշիչ լինել այն հարցի պարզաբանման համար, թե արդյոք Իքսը մեղավոր է եղել միայն սեռական, թե, ի լրումն դրանց՝ առավել ծանր հանցագործությունների մեջ, ինչպիսիք են սպանության փորձը և դրա հետ կապված երկու հանցանքները, որոնք կատարվել են նախքան 1992թ. մարտի19-ը, երբ ՄԻԱՎ վարակի թեստի դրական արդյունքների մասին նրան հայտնի է դարձել...

103. …Ֆինլանդիայի օրենսդրության համաձայն՝ դիմողի բժշկական խորհրդատուներին կարող է պարտադրվել առանց նրա՝ ստացված տեղեկատվության հիման վրա տրված համաձայնության, նրա

վերաբերյալ տեղեկություն տալ շատ սահմանափակ դեպքերում, մասնավորապես՝ կապված այնպիսի ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերով նախնական քննություն կատարելու և մեղադրանք առաջադրելու հետ, որոնց համար նախատեսվում է առնվազն վեց տարի ժամկետով ազատազրկում... Քանի որ նրանք հրաժարվել են հարցաքննվել ոստիկանության աշխատակիցների կողմից, վերջիններս թույլտվություն են խնդրել դատական մարմնից՝ Քաղաքային դատարանից, նրանց որպես վկա հարցաքննելու համար... Հարցաքննությունը տեղի է ունեցել Քաղաքային դատարանում՝ փակ դատական քննության շրջանակներում, որը նախապես կարգադրել էր, որ դրա նյութերը, ներառյալ վկաների ցուցմունքների արձանագրությունները, պետք է գաղտնի պահվեն... Վարույթին ներգրավված անձինք պարտավոր էին գաղտնի պահել այդ տեղեկությունը: Այս կապակցությամբ նրանց պարտականությունների խախտումը կարող է հանգեցնել Ֆինլանդիայի իրավունքով նախատեսված պատասխանատվության...

Միջամտությունը դիմողի անձնական և ընտանեկան կյանքին, որը տեղի է ունեցել վիճարկվող կարգավորումների արդյունքում, այսպիսով, ենթարկվել է լուրջ սահմանափակումների և օժտված է եղել չարաշահումների դեմ արդյունավետ և պատշաճ երաշխիքներով...

105. ...Դատարանը գտնում է, որ տարբեր կարգավորումները, որոնց հիման վրա դիմողի բժշկական խորհրդատուները պետք է ապացույցներ ներկայացնեն, պայմանավորած են հիմնավոր և բավարար այն պատճառներով, որոնք կապված են հետապնդվող նպատակների իրավաչափության գերակա պահանջով: Դատարանը նաև բավարարված է նրանով, որ առկա է եղել հիմնավոր համաչափություն այս միջոցների և հետապնդվող նպատակների միջև: Հետևաբար, 8-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել...

***Սերվեսն ընդդեմ Ֆրանսիայի (Serves v. France), 20225/92, 20.10.1997թ.***

47. ...Հասկանալի է, որ դիմողը պետք է վախենար այն բանից, որ իր ցուցմունքների մի մասը, որը տալու համար նա կանչվել էր գործը քննող դատավորի մոտ, կարող էին ինքնախոստովանական լինել: Այսպիսով, ընդունելի է այն, որ նա մերժել է դատավորի տված հարցերին պատասխանել, որոնք կարող էին նրան այդ ուղղությամբ ուղղորդել:

Դիմողի ստորագրած հարցաքննությունների արձանագրություններից պարզ է, որ նա ի սկզբանե հրաժարվել է երդվել: Մինչդեռ երդումը ձևական արարողություն է, որի ընթացքում դիմողը պարտավորվել է գործը քննող դատավորին հայտնել Քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածով սահմանված՝ «ամբողջ ճշմարտությունը և ոչինչ բացի ճշմարտությունից»: Վկայի՝ երդվելու պարտականությունը և դա չկատարելու համար նախատեսված պատասխանատվությունը, որը ենթադրում է հարկադրանքի կիրառում, նպատակ է հետապնդում հաստատել, որ դատավորի ներկայությամբ տրված բոլոր ցուցմունքները ճշմարիտ են և ոչ թե վկաներին ցուցմունք տալու պարտադրանք:

Այլ կերպ ասած՝ պրն Սերվեսի վրա դրված տուգանքները չեն հանդիսացել այնպիսի միջոցներ, որոնք կարող էին հարկադրել նրան ինքնախոստովանական ցուցմունք տալ, քանի որ դրանք նշանակվել են նախքան նման վտանգի առաջացումը:

***Տիրադո Օրտիզը և Լոզանո Մարտինն ընդդեմ Իսպանիայի (Tirado Ortiz and Lozano Martin v. Spain) (dec.), 43486/98, 22.06.1999թ.***

2. …Դատարանը գտնում է, որ Իսպանիայի օրենսդրության պահանջներն այս ոլորտում պայմանավորված են հարաբերությունների բնույթով և նպատակ են հետապնդում պաշտպանել հասարակությանը, առավելապես՝ ապահովել ճանապարհատրանսպորտային անվտանգությունը և այլ անձանց պաշտպանությունը:

Այսպես, թեև հարբածության աստիճանի հարկադիր ստուգումը կարող է կապված լինել, Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով, դիմողի անձնական կյանքի իրավունքի խախտման հետ, այն նաև կարող է դիտվել որպես հանցագործությունների կանխման և այլ անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության ապահովման անհրաժեշտություն: Դրանից բխում է, որ բողոքի այս մասը պետք է մերժվի, քանի որ այն ակնհայտորեն անհիմն է…

***Վեհն ընդդեմ Ավստրիայի (Weh v. Austria), 38544/97, 08.04.2004թ.***

54. Որևէ բան չի վկայում այն մասին, որ դիմողը «ըստ էության վնաս է պատճառել», ինչը հնարավորություն կտար նրան 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով «մեղադրել» թույլատրված արագության գերազանցման հետ կապված հանցագործության մեջ… Դա ուղղակի նրա՝ որպես գրանցված մեքենայի սեփականատիրոջ պարտականությունն էր և նրանից պահանջվել է տեղեկություն տրամադրել: Բացի դրանից, նրանից պահանջվել է հաստատել մի պարզ հանգամանք, մասնավորապես, թե ով է հանդիսացել նրա մեքենայի վարորդը, ինչն ինքնին ինքնախոստովանություն չէ:

55. Ի լրումն դրա, թեև սա ինքնին վճռորոշ հանգամանք չէ, Դատարանը նշում է, որ դիմողը չի հրաժարվել տեղեկություն տրամա-

դրել, բայց ազատել է իրեն՝ տեղեկացնելով պաշտոնատար անձանց, որ տվյալ ժամանակահատվածում իր մեքենան վարել է երրորդ անձ: Նրա նկատմամբ նշանակվել է պատիժ Տրանսպորտային միջոցների մասին օրենքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով՝ հաշվի առնելով միայն այն հանգամանքը, որ նա հայտնել է ոչ ճիշտ տեղեկություն, քանի որ չի նշել այդ անձի լրիվ հասցեն: Ոչ ներպետական վարույթներում, ոչ էլ Դատարանում նա չի պնդել, որ հանցագործության կատարման պահին վարել է մեքենան:

56. Դատարանը... գտնում է, որ սույն գործով Տրանսպորտային միջոցների մասին օրենքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված՝ իր մեքենայի վարորդին բացահայտելու՝ դիմողի պարտականության և թույլատրված արագության գերազանցման համար նրա դեմ հարուցված քրեական վարույթների միջև կապը ոչ անմիջական է և ենթադրյալ: Ինչևէ, այս քրեական վարույթների միջև բավական հստակ կապի բացակայությամբ տեղեկություն ձեռք բերելու նպատակով հարկադրանքի միջոցների կիրառումը (տուգանքի նշանակումը) խնդիր չի առաջացնում՝ կապված դիմողի՝ լռություն պահպանելու և ինքնախոստովանական ցուցմունք չտալու իրավունքի հետ:

***Օ'Հալորան և Ֆրանսիզն ընդդեմ Միացյալ Թագավորության (O'Halloran and Francis v. United Kingdom) [GC], 15809/02 և 25624/02, 29.06.2007թ.***

57. ...հարկադրանքը կիրառվել է ճանապարհային երթևեկության մասին օրենքի 172-րդ բաժնի հիմքով, որը սահմանում է տրանսպորտային միջոցների գրանցված սեփականատերերի պարտականությունը որոշակի հանգամանքներում տրանսպորտային միջոցը վարած անձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու մասին:... Նրանք, ովքեր նախընտրում են ունենալ և վարել մարդատար մեքենաներ, պետք է ստանձնեն որոշակի պատասխանատվություն և պարտականություններ՝ կապված մարդատար մեքենաների շահագործման կարգավորման ռեժիմի և Միացյալ Թագավորության իրավական շրջանակների սահմաններում, այս պատասխանատվությունը ներառում է նաև պարտականություն ճանապարհատրանսպորտային հանցագործության ենթադրյալ կատարման կասկածի առկայության դեպքում տեղեկացնելու իշխանություններին այդ իրավիճակում վարորդի անձի վերաբերյալ:

58. Սույն գործերով կիրառված հարկադրանքի մյուս կողմը հանդիսանում են սահմանափակ հարցումները, որոնք ոստիկանությունն իրավասու էր իրականացնել: 172-րդ բաժնի 2-րդ մասի (a) կետը կիրառվում է միայն այն դեպքում երբ ենթադրվում է, որ տրանսպորտային միջոցի վարորդը կատարել է դրա հետ կապված հանցանք, և իրավասություն է վերապահում ոստիկանին պահանջելու միայն «վարորդի ինքնությանը վերաբերող տեղեկություն»... Բացի դրանից... 172-րդ բաժինը չի թույլատրում երկարածգված հարցաքննություն

այն փաստերի վերաբերյալ, որոնք ենթադրաբար հանգեցրել են քրեական հանցագործությունների, և պատասխանելուց հրաժարվելու համար նախատեսվող պատիժը «մեղմ է և ազատազրկման հետ կապված չէ»:

59. ...Այն դեպքերում, երբ կիրառվում են 1988թ. օրենքի 172-րդ բաժնով նախատեսված հարկադրանքի միջոցները, Դատարանը, հիմք ընդունելով 172-րդ բաժնի 4-րդ մասը, նշում է, որ 172-րդ բաժնի 2-րդ մասի (a) կետի իմաստով որևէ հանցանք կատարված չի դիտվի, եթե տրանսպորտային միջոցի սեփականատերը ցույց տա, որ ինքը չի իմացել և պատշաճ ջանադրություն դրսևորելով չէր կարող իմանալ, թե ով է հանդիսացել տրանսպորտային միջոցի վարորդը: Հանցագործությունը, այսպիսով, խիստ պարտավորեցնող չէ, և անարժանահավատ թույլտվությունների վտանգն անշշան է:

60. Ինչ վերաբերում է ցուցմունքների օգտագործմանը, ապա պրն Օ'Հալորանի ցուցմունքներն այն մասին, որ նա հանդիսացել է իր մեքենայի վարորդը, որպես ապացույց թույլատրելի է եղել Ճանապարհային երթևեկության մասին օրենքի փաստի ուժով..., և նա օրենքով սահմանված կարգով դատապարտվել է արագության սահմանազանցման համար... Դատախազությանը մնում էր միայն սովորական վարույթի ընթացքում, հիմնավոր կասկածի բացակայության պայմաններում ապացուցել հանցանքի կատարումը՝ ներառյալ պաշտպանությունն անարժանահավատ ապացույցների կամ այլ ոչ պատշաճ միջոցների կիրառումից (սակայն սա չի ներառել 172-րդ բաժնի հիման վրա տրված ցուցմունքների թույլատրելիությունը), և մեղադրյալը կարող էր միայն ցուցմունք տալ կամ ցանկության դեպքում վկա հրավիրել: Կրկին... վարորդի անձն արագության գերազանցման հետ կապված հանցագործության մի տարրն է միայն, և չի ծագում որևէ հարց՝ կապված հիմնական վարույթներով դատապարտման հետ, քանի որ տեղեկությունը ձեռք էր բերվել միայն 172-րդ հոդվածի 2-րդ բաժնի (a) կետի հիման վրա:

61. Քանի որ պրն Ֆրանցիսը հրաժարվել է ցուցմունք տալ, այն չի կարող կիրառվել հիմնական վարույթներում, և, իհարկե, հիմնական վարույթները երբևէ դրան չեն ձգտել: Քրեական վարույթի ընթացքում այդ ցուցմունքների օգտագործման հարցը չի ծագել, քանի որ նրա՝ ցուցմունք տալուց հրաժարվելը որպես ապացույց չի օգտագործվել. այն ինքնին հանցագործություն է հանդիսացել...

62. Քննարկելով գործի բոլոր հանգամանքները, ներառյալ քննարկվող կարգավորման ռեժիմի առանձնահատուկ բնույթը և 1988թ. Ճանապարհային երթևեկության մասին օրենքի 172-րդ բաժնի իմաստով խնդրված տեղեկության սահմանափակ բնույթը, Դատարանը գտնում է, որ լռություն պահպանելու և իրենց դեմ ցուցմունք չտալու՝ դիմողների իրավունքների էությունը չի խախտվել:

***Վոսկուիլն ընդդեմ Նիդեռլանդների (Voskuil v. Netherlands), 64752/01, 22.11.2007թ.***

66. ...դիմողին խնդրվել է բացահայտել իր տեղեկատվության աղբյուրը՝ երկու պատճառով. առաջինը, պաշտպանելու համար Ամստերդամի ոստիկանության բարի համբավը և երկրորդ՝ ապահովելու համար մեղադրյալի արդար դատական քննությունը:

67. Այս կապակցությամբ Դատարանն անհրաժեշտ չի գտնում քննարկել, թե արդյոք որևէ պայմանի առկայության դեպքում արդար դատական քննություն ապահովելու՝ Պայմանավորվող կողմի պարտականությունը կարող է արդարացնել լրագրողին՝ իր տեղեկատվության աղբյուրի բացահայտմանը պարտավորեցնելը: Անկախ քրեական դատավարությունում այն տեղեկության հնարավոր կարևորությունից, որը Վերաքննիչ դատարանը փորձում էր ստանալ դիմողից, Վերաքննիչ դատարանին չի խոչընդոտվել քննարկել երեք մեղադրյալներին առաջադրված մեղադրանքի հանգամանքները. այն ակնհայտորեն կարող էր մյուս վկաների ցուցմունքները փոխարինել նրանով, ինչ փորձում էր ստանալ դիմողից... Այսպիսով, վիճարկվող միջամտության պատճառները հիմնավոր չեն:

## 9. Գաղտնիության պահպանման պարտականությունն ապացույցներ հավաքելիս

***Զեթն ընդդեմ Ֆինլանդիայի (Z v. Finland), 22009/93, 25.02.1997թ.***

111. Ինչ վերաբերում է վիճարկվող այն հարցին, որ բժշկական տվյալը հանրությանը հայտնի կդառնա սկսած 2002 թվականից, Դատարանը նշում է, որ գաղտնիության պահպանման պահանջի տասը տարվա ժամկետը չի համապատասխանում դատավարության կողմերի ցանկություններին կամ շահերին, որոնք բոլորն էլ խնդրել են գաղտնիության պահպանման ավելի երկար ժամկետ...

112. Դատարանը համոզված չէ, որ տասը տարի ժամկետ նշանակելով՝ ներպետական դատարանները բավարար չափով ապահովել են դիմողի շահերը: Անհրաժեշտ է հիշել, որ որպես այն բանի արդյունք, որ քննարկվող տեղեկությունը դատավարության ընթացքում ներկայացվել է առանց նրա համաձայնության, նրա՝ անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքներն արդեն լուրջ միջամտության առարկա էին դարձել: Հետագա միջամտությունը, որը տեղի կունենա, եթե բժշկական տեղեկությունը տասը տարի հետո հասանելի դառնա հանրությանը, ապահովված չէ այնպիսի պատճառներով, որոնք կարող են դիտվել բավարար ավելի երկար ժամանակով տեղեկությունը գաղտնի պահելու՝ նրա շահը մերժելու համար: Այդ նյութի՝ նախքան 2002թ. հասանելի դարձնելու կարգադրությունը կիրառման դեպքում կարող է հանգեցնել անհամաչափ միջամտութ-

յան նրա անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությանը՝ խախտելով 8-րդ հոդվածը...

***Պանտելեյենկոն ընդդեմ Ուկրաինայի (Panteleyenko v. Ukraine), 11901/02, 29.06.2006թ.***

57. Սույն գործով ներպետական դատարանը հոգեբուժարանից պահանջել և ստացել է գաղտնի տեղեկություն, որը վերաբերել է դիմողի հոգեկան վիճակի և կիրառված բուժման մասին: Այդ տեղեկությունը հետագայում դատավորի կողմից բացահայտվել է կողմերին և հրապարակային քննությանը ներկա այլ անձանց:

58. Դատարանը գտնում է, որ այդ մանրամասներն անհերքելիորեն իրենցից ներկայացրել են տվյալներ դիմողի «անձնական կյանքի» մասին, և վիճարկվող միջոցները հանգեցրել են քննարկվող հարցի մանրամասների վերաբերյալ տեղեկացված անձանց թվի ավելացմանը: Դատարանի կողմից ձեռնարկված միջոցները, հետևաբար, հանգեցրել են Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված՝ դիմողի իրավունքների խախտման...

61. Անհրաժեշտ է նշել, որ Վերաքննիչ դատարանը, վերանայելով գործը, հանգել է այն եզրակացությանը, որ դիմողի անձնական տեղեկության նկատմամբ առաջին ատյանի դատարանի դատավորների վերաբերմունքը չի համապատասխանել հոգեբուժական տվյալների հավաքման, պահպանման, օգտագործման և տարածման համար սահմանված հատուկ ռեժիմին... Բացի դրանից, դատարանը նշում է, որ քննարկվող մանրամասներն, անկարող լինելով ազդելու դատական քննության արդյունքի վրա (այսինքն՝ պարզելու, թե արդյոք ենթադրվող ցուցմունքը տրվել է և գնահատել, թե արդյոք այն արատավորող է. համեմատել և հակադրել, *Զեթն ընդդեմ Ֆինլանդիայի* որոշմանը...), Նովոզավոդսկի դատարանի՝ տեղեկություն տրամադրելու խնդրանքն ավելորդ էր, քանի որ այդ տեղեկությունը «հարցաքննության, նախնական կամ դատական քննության համար կարևոր չէր», և, այսպիսով, անօրինական՝ ելնելով 2000թ. Հոգեբուժական բժշկական օգնության մասին օրենքի 6-րդ հոդվածի նպատակներից:

62. Հիմք ընդունելով վերոգրյալ պատճառաբանությունը՝ Դատարանը գտնում է, որ այս կապակցությամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

## 10. Ապացույցի պահպանումը նախնական քննության/ մեղադրանքի ավարտից հետո

***Վան դեր Վելդենն ընդդեմ Նիդեռլանդների (Van der Velden v. Netherlands) (dec.), 29514/05, 07.12.2006թ.***

2. ...Ինչ վերաբերում է բջջային նյութի և հետագայում ձևավորված ԴՆԹ պրոֆիլի պահպանությանը, Դատարանը... գտնում է, որ հաշվի առնելով այն կիրառությունը, որը բջջային նյութը ենթադրա-

բար կարող է ապագայում ունենալ, այդ նյութի համակարգային պահպանությունն անցնում է անհատականացնող այնպիսի չեզոք գծերի սահմաններից, ինչպիսիք են մատնահետքերը, և բավականաչափ ինվազիվ են միջամտելու համար Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ անձնական կյանքի անձեռնմխելիությանը...:

Ապա Դատարանը որևէ դժվարություն չի տեսնում գտնելու, որ ԴՆԹ պրոֆիլի կոմպիլյացիան և պահպանումն իրավաչափ նպատակներ են հետապնդել՝ կապված հանցագործությունների կանխման և այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանության հետ: Սա չի փոխարինվում այն փաստով, որ ԴՆԹ-ն որևէ դերակատարություն չի ունեցել դիմողի կողմից կատարված հանցանքների նախնական և դատական քննության ընթացքում: Դատարանն անհիմն չի գտնում այն, որ ԴՆԹ թեստավորում անցնելու պարտականությունը դրվի բոլոր այն անձանց վրա, ովքեր դատապարտվել են որոշակի ծանրության հանցագործությունների համար: Նաև անհիմն չեն ընդհանուր կանոնի բացառությունները, որոնք, այնուամենայնիվ, ընդունվել են որպես անհրաժեշտություն, ձևակերպվեն այնքան նեղ, որ հնարավորություն տան խուսափելու անհստակությունից:

Վերջապես, Դատարանը կարծում է, որ այդ միջոցները կարող են «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ» համարվել: Այս կապակցությամբ այն առաջին հերթին նշում է, որ որևէ կասկած չի կարող լինել այն էական ներդրման առնչությամբ, որ ԴՆԹ նյութերը վերջին տարիներին ունեցել են օրենքի կիրառման մեջ: Երկրորդ, անհրաժեշտ է նշել, որ թեև քննարկվող միջամտությունը համեմատաբար աննշան է եղել, դիմողը կարող էր նաև որոշ առավելություն ձեռք բերել իր ԴՆԹ պրոֆիլներն ազգային տվյալների բազայում ներառելուց, քանի որ նա այդպիսով կարող էր արագորեն հանվել այն անձանց ցուցակից, ովքեր կասկածվում էին այնպիսի հանցագործության մեջ, որոնց քննության ժամանակ անհրաժեշտ են ԴՆԹ պարունակող նյութեր:

***Ս.-ն և Մարփերն ընդդեմ Միացյալ Թագավորության (S. and Marper v. United Kingdom) [GC], 30562/04 և 30566/04, 04.12.2008թ.***

113. Սույն գործով դիմողի մատնահետքերը և բջջի նմուշները վերցվել և ԴՆԹ պրոֆիլները ձեռք են բերվել քրեական դատավարության ընթացքում, որը հարուցվել էր առաջին դիմողի՝ գողության փորձի և երկրորդ դիմողի կողմից իր գործընկերոջը հետապնդելու կասկածի հիման վրա: Տվյալները պահպանվել էին այն օրենսդրության հիման վրա, որը թույլատրում էր դրանց անհատական պահպանությունը՝ հակառակ առաջինին արդարացնելու և երկրորդի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հանգամանքից…

118. ...Նյութը պետք է պահպանել անկախ հանցագործության բնույթից և ծանրության աստիճանից, որում անձն ի սկզբանե կասկածվում էր, կամ կասկածվող հանցագործի տարիքից. մատնահետ-

քերը և նմուշները կարող են վերցվել և պահպանվել ցանկացած տարիքի անձից, ով ձերբակալվել է գրանցվող հանցագործության կապակցությամբ՝ ներառյալ նվազ վտանգավորության կամ ազատազրկում չնախատեսող հանցագործությունները: Պահպանումը ժամանակային սահմանափակում չունի. նյութը պահպանվում է անկախ այն հանցանքի բնույթից կամ ծանրության աստիճանից, որի կատարման մեջ անձը կասկածվում է: Բացի դրանից, գոյություն ունեն բացառապես սահմանափակ հնարավորություններ արդարացված անձի առումով ջնջել այդ տեղեկությունն ազգային տվյալների բազայից կամ ոչնչացնել դրանք.... մասնավորապես, գոյություն չունի պահպանման հիմնավորման՝ որոշակի չափանիշին համապատասխան անկախ վերանայման վերաբերյալ որևէ դրույթ՝ ներառյալ այնպիսի գործոնները, ինչպիսիք են հանցագործության ծանրության աստիճանը, նախկին ձերբակալությունները, դիմողի դեմ առկա կասկածի ուժը և այլ առանձնահատուկ հանգամանքներ...

121. ...Դատարանը... կրկնում է, որ պաշտոնատար անձանց կողմից անձնական տվյալների ամբողջական պահպանումը և համակարգումը թեև կիրառվում է, սակայն պետք է դիտվի որպես ուղղակի ազդեցություն մարդու անձնական կյանքի իրավունքի վրա՝ անկախ այն բանից, թե այդ տվյալը հետագայում ինչպես է օգտագործվել...

122. ...Իրավամբ, դիմողների անձնական տվյալների պահպանումը չի կարող հավասարեցվել կասկածի առկայության հետ: Այնուամենայնիվ, դրանց ձեռքբերումը և այն զգացողությունը, որ նրանց չեն վերաբերվում որպես անմեղ անձանց՝ ավելի է սրվում այն փաստից ելնելով, որ նրանց տվյալները պահպանվում են նույն կերպ, ինչ դատապարտյալների տվյալներն են պահպանվում, մինչդեռ այն անձանց տվյալները, ովքեր երբևէ հանցագործության մեջ չեն կասկածվել, պետք է ոչնչացվեն...

124. ...չդատապարտված անձի տվյալների պահպանումը կարող է հատկապես վտանգավոր լինել անչափահասների վերաբերյալ գործերով, որպիսին հանդիսանում է առաջին դիմողը՝ հաշվի առնելով նրանց հատուկ կարգավիճակը և հասարակության մեջ նրանց զարգացման և ներգրավման կարևորությունը... Դատարանը գտնում է, որ հատկապես ուշադրություն պետք է դարձնել անչափահասների պաշտպանությանը ցանկացած վնասից, որը կարող է առաջանալ արդարացումից հետո պաշտոնատար անձանց կողմից նրանց անձնական տվյալների պահպանման արդյունքում: Դատարանը կիսում է Նուֆֆիլդի խորհրդի տեսակետը՝ կապված երիտասարդների վրա նրանց ԴՆԹ նյութերի չսահմանափակված պահպանության ազդեցության հետ, և նշում է Խորհրդի անհանգստությունն այն առումով, որ կիրառվող քաղաքականությունը կարող է հանգեցնել տվյալների բազայում այն երիտասարդների և էթնիկ փոքրամասնությունների մեծ թվով ներկայացվածությանը, որոնք որևէ հանցագործության համար չեն դատապարտվել...

125. Եզրակացնելով՝ Դատարանը գտնում է, որ հանցագործության մեջ կասկածվող, բայց չդատապարտված անձանց մատնահետքերի, ԴՆԹ պրոֆիլների բջջային օրինակների պահպանության լիազորության ամբողջական և չտարբերակվող բնույթը, ինչպես նշվել է սույն դիմողների գործով, խախտել է արդարացի հավասարակշռությունը հասարակական և անհատական շահերի միջև, և պատասխանող Պետությունն անցել է այս կապակցությամբ բոլոր թույլատրելի սահմանները: Հետևաբար, քննարկվող պահպանումը հանգեցրել է անձնական կյանքի իրավունքին անհամաչափ միջամտության և չի կարող դիտվել անհրաժեշտ ժողովրդավարական հասարակության համար:

## V. ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

### 1. Պաշտպան ունենալու իրավունքը

***Ջոն Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (John Murray v. United Kingdom), 18731/91, 08.02.1996թ.***

66. …Կարգադրության համաձայն՝ ոստիկանության կողմից հարցաքննությունն սկսելու փուլում մեղադրյալը հայտնվել է իր պաշտպանության հետ կապված երկընտրանքի առջև: Եթե նա նախընտրեր լռություն պահպանելը, հակառակ կողմի օգտին արված եզրակացությունները կարող էին իր դեմ օգտագործվել՝ կարգադրության դրույթներին համապատասխան: Մյուս կողմից, եթե մեղադրյալը խախտեր իր լռությունը, կհայտնվեր իր պաշտպանությանը վնաս պատճառելու սպառնալիքի տակ՝ առանց համապատասխանաբար վերացնելու իր դեմ արված եզրակացությունները:

Նման պայմաններում 6-րդ հոդվածում ամրագրված արդարության սկզբունքը... պահանջում է, որ մեղադրյալը պաշտպան ունենալու իրավունք ունենա ոստիկանության կողմից հարցաքննությունն սկսելու սկզբնական փուլում: Ոստիկանությունում հարցաքննվելու առաջին 48 ժամվա ընթացքում պաշտպան ունենալու խնդրանքի մերժումն այն իրավիճակում, երբ պաշտպանության իրավունքներին կարող է անդառնալի վնաս պատճառվել, անկախ նման մերժման արդարացված լինելուց, չի համապատասխանում 6-րդ հոդվածով նախատեսված մեղադրյալի իրավունքներին...

68. Իրավամբ, ինչպես նշվել է Կառավարության կողմից, երբ դիմողը խորհրդակցել է իր պաշտպանի հետ, վերջինս նրան խորհուրդ է տվել շարունակել լռություն պահպանել, և գործի դատական քննության ընթացքում նույնպես դիմողը նախընտրել է ցուցմունք չտալ և սեփական նախաձեռնությամբ վկաներ չհրավիրել: Ինչևէ, Դատարանի խնդիրը չէ դատողություններ անել այն մասին, թե ինչպիսին է եղել դիմողի արձագանքը կամ նրա փաստաբանի խորհուրդը, այլ այն, թե

արդյոք այն պետք է ընդունվեր կամ մերժվեր տվյալ ժամանակահատվածում: Ինչպես ցույց են տալիս հանգամանքները, դիմողի վրա մերժումը, անկասկած, ազդեցություն է ունեցել և հետագայում խոչընդոտ է հանդիսացել պաշտպանության իրավունքի համար: Դատարանը եզրակացնում է, որ ենթադրությունների ձևավորումը չի փոխարինել դրան...

70. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի և դրա հետ կապված 3-րդ մասի (c) կետի խախտում... կապված դիմողին ոստիկանությունում հարցաքննելու առաջին 48 ժամվա ընթացքում պաշտպան տրամադրելու խնդրանքի մերժման հետ:

***Բրեննան ընդդեմ Միացյալ Թագավորության (Brennan v. United Kingdom), 39846/98, 16.10.2001թ.***

47. ...քննարկվող 24 ժամ տևողությամբ ժամանակահատվածից հետո այլևս չի մերժվել դիմողի՝ պաշտպան ունենալու խնդրանքը: Այն փաստը, որ փաստաբանը մինչև հաջորդ օրը չի հանդիպել իր վստահորդին՝ վերաբերելի չէ իշխանությունների կողմից կիրառված որևէ միջոցի...

48. ...Ոստիկանի կողմից 24 ժամ հարցաքննվելու ընթացքում դիմողը որևէ ինքնախոստովանություն չի արել: Առաջին ինքնախոստովանությունները նա արել է 1990թ. հոկտեմբերի 22-ի ցերեկը, երբ արդեն չէր մերժվել փաստաբան ունենալու նրա պահանջը: Սա այն դեպքը չէ, երբ եզրակացություններնը արվել են առաջին 24 ժամվա ընթացքում այն դիմողի կողմից թույլ տված ցուցմունքների և բացթողումների հիման վրա, ինչպես դա տեղի է ունեցել Ջոն Մյուրեյի գործով... Դիմողի բողոքների հիմքում դրված չէ այն, որ նրան պաշտպան տրամադրելը մերժվել է, ինչը հնարավորություն կտար ճիշտ կողմնորոշվել լռելու և ոստիկանության հարցաքննությանը մասնակցելու միջև, այլ այն, որ նա ինքնախոստովանական ցուցմունքներ է տվել հետաձգման ժամկետի ավարտից հետո և նախքան իր փաստաբանի ժամանելը... Հետևաբար, Դատարանը համոզված չէ, որ տվյալ ժամանակահատվածում պաշտպան տրամադրելու պահանջը մերժելը սույն գործի հանգամանքներում կարող է դիտվել որպես դիմողի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կամ 3-րդ մասի (c) կետով նախատեսված իրավունքների խախտում:

***Օջալանն ընդդեմ Թուրքիայի (Öcalan v. Turkey) [GC], 46221/99, 12.05.2005թ.***

131. Մեծ պալատը ոչ մի պատճառ չի տեսնում չհամաձայնելու Պալատի այն դատողություններին, որ ոստիկանությունում կալանավորված լինելու ընթացքում դիմողի՝ պաշտպան չունենալն ազդել է նրա պաշտպանության իրավունքի վրա: Մեծ Պալատը համաձայն է Պալատի այն պատճառաբանությանը, որը կայանում է հետևյալում:

«...Սույն գործով դիմողը հարցաքննվել է անվտանգության աշխատակիցների, հանրային մեղադրողի և Ազգային անվտանգության դատարանի դատավորի կողմից Թուրքիայի ոստիկանությունում գրեթե յոթ օր՝ 1999թ. փետրվարի 16-ից 1999թ. փետրվարի 23-ը, կալանքի տակ պահվելու ընթացքում: Նրան այս ժամանակաընթացքում իրավական օգնություն չի տրամադրվել և նա մի շարք ինքնախոստովանական ցուցմունքներ է տվել, որոնք հետագայում հանդիսացել են մեղադրական եզրակացության և հանրային մեղադրողի ճառի հիմնաքարային տարրերը և նրա դատապարտմանն աջակցող հանգամանք:

...Ինչ վերաբերում է նրան, որ դիմողը հրաժարվել է պաշտպան ունենալու իր իրավունքից, Դատարանը նշում է, որ նրա ձերբակալումից մեկ օր հետո Թուրքիայում նրա փաստաբանը՝ պրն. Ֆերիդուն Սելիկը (ով արդեն օժտված է համապատասխան իրավասությամբ), նրան այցելելու թույլտվություն է խնդրել: Սակայն անվտանգության աշխատակիցները խոչընդոտել են պրն Սելիկի այցելությունը: Ի լրումն դրա, 1999թ. փետրվարի 22-ին տասնվեց փաստաբաններ, որոնք վարձվել էին դիմողի ընտանիքի կողմից, Ազգային անվտանգության դատարանից դիմողին այցելելու թույլտվություն են խնդրել, սակայն նրանց պահանջը պաշտոնատար անձանց կողմից մերժվել է 1999թ. փետրվարի 23-ին:

...Այս հանգամանքներում Դատարանը կարծում է, որ նման երկար ժամանակաընթացքում պաշտպան տրամադրելը մերժելը և այն իրավիճակը, երբ պաշտպանական կողմի իրավունքները կարող են անդառնալիորեն խախտվել, վնաս է պատճառում 6-րդ հոդվածի ուժով մեղադրյալին տրամադրվող պաշտպանության իրավունքին...»:

***Սալդուզն ընդդեմ Թուրքիայի (Salduz v. Turkey) [GC], 36391/02, 27.11.2008թ.***

54. ...Դատարանն ընդգծում է նախնական քննության փուլի կարևորությունը քրեական վարույթի նախապատրաստման ընթացքում, քանի որ այս փուլի ընթացքում ձեռք բերված ապացույցներով են պայմանավորված մեղսագրվող հանցագործության՝ դատարանում քննության շրջանակները... Միաժամանակ, մեղադրյալն առավել խոցելի է քննության հենց այս փուլում, և դրա ազդեցությունը մեծանում է՝ ելնելով այն հանգամանքից, որ քրեական դատավարությունը կարգավորող օրենսդրությունն ավելի համակարգային է դառնում՝ իրենում ներառելով ապացույցների հավաքումն ու կիրառումը կարգավորող դրույթները: Շատ դեպքերում այս խոցելիությունը կարող է պատշաճ ձևով հավասարակշռվել միայն փաստաբանի մասնակցությամբ, ում պարտականությունը, ի թիվս այլոց, հանգում է մեղադրյալի՝ ինքնախոստովանական ցուցմունք չտալու իրավունքի իրականացմանն աջակցելուն: Այս իրավունքն իրավամբ ենթադրում է, որ մեղադրանքի կողմը մեղադրյալի դեմ գործի հարուցումը չպետք է հիմնավորի վերջինիս կամքի նկատմամբ հարկադրանք գործադրելու կամ դրա սահմանափակման հետ կապված մեթոդների կիրառմամբ ձեռք բերված ապացույցներով... Փաստաբանի օգնությանը վաղ դիմելը ընթացակարգային երաշխիք է, որին Դատարանը պետք է անդրադառնա այն հարցի քննության ժամանակ, թե արդյոք վարույթով խախտվել է ինքնախոստովանական ցուցմունք չտալու բուն էությունը... Այս կապակցությամբ Դատարանը նշում է նաև ՍիՓիԹի-ի հանձնարարականնե-

րը…, որոնցում հանձնաժողովը բազմիցս նշել է, որ դիմողի՝ պաշտպան ունենալու իրավունքը հիմնարար երաշխիք է վատ վերաբերմունքի դեմ: Այս իրավունքի իրականացումից ցանկացած բացառություն պետք է խիստ սահմանափակ լինի և դրա բողոքարկումը պետք է հստակ ժամանակային սահմանափակում ունենա: Այս սկզբունքները հատկապես կարևորվում են ծանր հանցագործությունների վերաբերյալ մեղադրանքների առաջադրման դեպքերում, քանի որ դրանք ենթադրում են խիստ պատիժների նշանակում, և այդ պատճառով դրանցով արդար դատաքննության իրավունքի իրականացումը ժողովրդավարական հասարակությունում պետք է հնարավորինս ապահովված լինի:

55. Այս նախապայմաններին հակառակ, Դատարանը գտնում է, որ որպեսզի արդար դատաքննության իրավունքը լինի բավականաչափ «կիրառելի և արդյունավետ»… 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պաշտպան ունենալը, որպես կանոն, պետք է ապահովվի ոստիկանության կողմից կասկածյալի առաջին հարցաքննության պահից, եթե գործի փաստական հանգամանքներով չի հաստատվել, որ առկա են այս իրավունքի սահմանափակման անհաղթահարելի պատճառներ: Թեև անհաղթահարելի պատճառները կարող են արդարացնել պաշտպան ունենալու վերաբերյալ անձի պահանջի մերժումը, սակայն նման սահմանափակումը, անկախ հիմնավորումից, չպետք է խախտի մեղադրյալի՝ 6-րդ հոդվածով նախատեսված իրավունքները… Պաշտպանության իրավունքը կարող է սկզբունքորեն անդառնալիորեն խախտվել, եթե ոստիկանությունում հարցաքննության ընթացքում առանց պաշտպանի մասնակցության տրված ինքնախոստովանական ցուցմունքները դրվեն դատապարտման հիմքում:

***Պանովիցն ընդդեմ Կիպրոսի (Panovits v. Cyprus), 4268/04, 11.12.2008թ.***

67. Դատարանը նշում է, որ տվյալ ժամանակահատվածում դիմողը 17 տարեկան է եղել…

68. …Դատարանը գտնում է, որ, հաշվի առնելով անչափահաս կասկածյալի խոցելիությունը և ուժերի անհավասարակշռությունը, որը հանդիսանում է քրեական վարույթի բնույթի արդյունք, 6-րդ հոդվածով նախատեսված կարևոր իրավունքից նրա հրաժարումը կարող է ընդունվել, եթե միայն այն արտահայտվել է աներկբայորեն և իշխանությունները ձեռնարկել են բոլոր անհրաժեշտ միջոցները համոզվելու համար, որ նա ամբողջությամբ տեղյակ է իր պաշտպանության իրավունքին և կարող է անհրաժեշտության դեպքում ընկալել իր վարքագծի հետևանքները…

70. …դիմողի նկատմամբ իշխանությունների վերաբերմունքը եղել է մեկ որպես անչափահասի, և որպես այդպիսին նրա հորը խնդրել են նրան բացատրել գործի բարդությունը և ներկայացնել նրա դեմ առկա ապացույցները, մեկ որպես խնամակալի բացակայությամբ

հարցաքննվելու և դրա ընթացքում փաստաբան ունենալու իրավունքը պարզաբանելու կարիք չունեցող անձի նկատմամբ վերաբերմունք: Ոչ դիմողը, ոչ նրա հայրը պատշաճ ձևով չեն տեղեկացվել հարցաքննության ընթացքում դիմողի իրավական օգնության իրավունքի մասին: Բացի դրանից, ոչ դիմողի հայրը և ոչ էլ որևէ այլ անձ, որը կարող էր օգնել դիմողին ըմբռնելու վարույթի ընթացքը, չի հրավիրվել նրա հարցաքննությանը: Դիմողին չի բացատրվել, որ նա փաստաբանի հետ կարող է տեսակցել նախքան ոստիկանությունում որևէ բան ասելը կամ ցուցմունքը գրավոր ներկայացնելը:

71. Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է՝ հաշվի առնելով դիմողի տարիքը, քիչ հավանական է, որ նա տեղյակ լիներ, որ ոստիկանությունում ցուցմունք տալիս իրավական օգնության իրավունք ունի: Բացի դրանից, քիչ հավանական է, որ նա փաստաբանի կամ խնամակալի բացակայության պայմաններում կարողանար ողջամտորեն գնահատել սպանության գործով նախնական քննության ընթացքում առանց փաստաբանի հարցաքննվելու հետևանքները…

72. …պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման խոչընդոտները կարող էին հաղթահարվել, եթե ներպետական իշխանությունները, գիտակցելով դիմողի դժվարությունները, համոզված լինեին նրանում, որ նա հասկանում է, որ կարող է անհրաժեշտության դեպքում անվճար փաստաբան ունենալ… Իշխանությունների կողմից դրսևորված պասիվ մոտեցումն այս հանգամանքներում ակնհայտորեն բավարար չի եղել իրականացնելու համար իրենց պարտականությունը՝ կապված դիմողին իրավական օգնություն ստանալու վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությամբ ապահովելու հետ:

73. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ ոստիկանության կողմից հարցաքննվելուց առաջ փաստաբան ունենալու իրավունքի վերաբերյալ դիմողին բավարար տեղեկություն չտալը, հաշվի առնելով հատկապես այն հանգամանքը, որ տվյալ ժամանակահատվածում նա անչափահաս է եղել և նրա հարցաքննությանը ներկա չի գտնվել նրա օրինական ներկայացուցիչը, հանգեցրել է դիմողի պաշտպանության իրավունքի խախտման: Բացի դրանից, Դատարանը գտնում է, որ ոչ դիմողը, ոչ նրա հայրը չեն գործել հօգուտ դիմողի՝ հստակ և աներկբայորեն չպահանջելով նախքան հարցաքննությունն իրավական օգնություն ստանալու իրավունքի իրականացումը:

74. …Դատարանը նշում է, որ ներպետական օրենսդրության համաձայն դիմողին պարզաբանվել է, որ նա պարտավոր չէ որևէ բան ասել, եթե չի ցանկանում, և որ նրա կողմից ասված ցանկացած բան կարող է գրի առնվել և հետագա վարույթներով որպես ապացույց օգտագործվել… Դատարանը գտնում է, որ սույն գործի հանգամանքները, որոնց համաձայն դիմողն անչափահաս է եղել և հարցաքննության է տարվել առանց իր օրինական ներկայացուցչի և առանց տեղեկացվելու, որ իրավունք ունի խնդրել և ստանալ իրավական օգնություն

նախքան հարցաքննությունն սկսվելը, քիչ հավանական է, որ ներպետական օրենսդրության ձևակերպումներում առկա լոկ զգուշացումը կարող է բավարար լինել ապահովելու համար իր իրավունքների բնույթի վերաբերյալ նրա պատկերացումները:

75. Վերջապես, Դատարանը գտնում է, որ թեև դիմողը հաղթանակած է դուրս եկել այն մրցակցային վարույթից, որում նա ներկայացվել է իր ընտրած փաստաբանի կողմից, այն վնասի բնույթը, որը նա կրել է վարույթի նախնական քննության փուլում պատշաճ ընթացակարգի խախտման արդյունքում, չի քննվել հետագա վարույթների ընթացքում, որոնցում նրա խոստովանությունները դիտվել են կամավոր և, հետևաբար, գնահատվել որպես թույլատրելի ապացույցներ:

76. Այս կապակցությամբ Դատարանը նշում է, որ հակառակ այն փաստի, որ դիմողի ինքնակամ հայտարարությունը, որը կատարվել է նրա ձերբակալությունից կարճ ժամանակ անց, վիճարկվել է և հիմնական վարույթի մեջ ձևավորել առանձին վարույթ, և թեև այն չի հանդիսացել միակ ապացույցը, որի վրա հիմնվել է դիմողի դատապարտումը, այնուամենայնիվ այն որոշիչ է եղել դիմողի պաշտպանության հեռանկարների տեսանկյունից և ձևավորել է այն էական տարրը, որի վրա հիմնվել է դատապարտումը: Այս կապակցությամբ որոշիչ է այն, որ Գերագույն դատարանը գտել է, որ առաջին ատյանում վարույթի ընթացքում դիմողն անընդհատ փորձել է ժխտել իր սկզբնական հայտարարությունը, այսինքն՝ այն մոտեցումը, որը մեծ ազդեցություն է ունեցել դատարանի կողմից նրա վստահելիությունը գնահատելու վրա:

77. Վերոգրյալ դատողությունների լույսի ներքո, Դատարանը եզրակացնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (c) կետի խախտում, որը կապված է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ՝ հաշվի առնելով ոստիկանությունում հարցաքննության սկզբնական փուլերում իրավական օգնության բացակայությունը:

***Յարեմենկոն ընդդեմ Ուկրաինայի (Yaremenko v. Ukraine), 32092/02, 12.06.2008թ.***

86. Դատարանը նշում է, որ սույն գործով դիմողի դատապարտումը 1998թ. հանցագործության համար առավելապես հիմնված է եղել իր մեղքի ընդունման վրա, որը նախնական քննություն իրականացնող մարմիններին խոստովանվել փաստաբանի բացակայությամբ, և որից դիմողը հրաժարվել է հենց հաջորդ օրը և հետո՝ 2001թ. մարտից սկսած:

87. Բացի դրանից, Դատարանը, 1998թ. հանցագործության վերաբերյալ դիմողի սկզբնական հարցաքննության հանգամանքները հաշվի առնելով, նշում է, որ պարտադիր ներկայացուցչության հիմքերից մեկը հանցանքի ծանրությունն է, որի կատարման մեջ անձը կասկածվում է, և դրանից բխող ցմահ ազատազրկման հնարավորությու-

նը: Սույն գործով օրենքով լիազորված իշխանության ներկայացուցիչները՝ քննելով անձի դաժան մահը, հարուցել են քրեական վարույթ ոչ թե սպանության, այլ ծանր մարմնական վնասվածքներ պատճառելու հետևանքով մահ պատճառելու համար: Նախորդը եղել է նվազ վտանգավոր հանցագործություն և, հետևաբար, չի պահանջել կասկածյալի համար պարտադիր իրավական ներկայացուցչություն: Ինքնախոստովանական ցուցմունքն ստանալուց անմիջապես հետո, հանցագործության որակումը փոխվել է և դիմողը մեղադրվել է սպանության մեջ:

88. Դատարանն ապշած է այն հանգամանքով, որ իշխանության ներկայացուցիչների կողմից հարուցված վարույթի արդյունքում դիմողը չի օգտվել պարտադիր ներկայացուցչության իրավունքից և գտնվել է այնպիսի իրավիճակում, որում, ինչպես նա նշում է, հարկադրված է եղել հրաժարվել պաշտպան ունենալու իրավունքից և ինքնախոստովանական ցուցմունքներ տալ: Կարելի է, իհարկե, դա ժխտել և ասել, որ սույն գործով դիմողն ունեցել է փաստաբան, չնայած որ հրաժարվել է այլ հանցագործության վերաբերյալ հարցաքննության ընթացքում ներկայացված լինելու իրավունքից: Այս հանգամանքները հիմնավոր կասկած են առաջացնում հանցագործության սկզբնական որակման թաքնված նպատակի առկայության վերաբերյալ: Այն փաստը, որ դիմողն ինքնախոստովանական ցուցմունքներ է տվել առանց փաստաբանի ներկայության, և անմիջապես հրաժարվել է դրանցից և փաստաբանի ներկայությամբ ցույց է տվել իր իրավիճակի խոցելիությունը և պատշաճ իրավական օգնության իրական կարիքը, որը ժխտվել է 2001թ. փետրվարի 1-ին, քննվող հանցագործության որակման վերաբերյալ ոստիկանության քննիչի կողմից իր հայեցողական լիազորությունների իրականացման ձևով:

89. Ինչ վերաբերում է Օ.Խ. փաստաբանի՝ վարույթից հեռացմանը, Կառավարության փաստարկի համաձայն դա իրականացվել է բացառապես դիմողի խնդրանքի հիման վրա, ինչին դժվար է հավատալ, քանի որ հենց դրա մասին չի նշվել վարույթից հեռացնելու մասին որոշման մեջ, սակայն այն դատախազների կողմից վկայակոչվել է որպես փաստաբանին վարույթից հեռացնելու լրացուցիչ հիմք:

90. Դատարանը նշում է՝ այն փաստը, որ երկու այլ փաստաբաններ, որոնք ներկայացրել են դիմողին, նրան տեսել են յուրաքանչյուրը մեկ անգամ՝ հարցաքննության ընթացքում և կարծես հարցաքննության իրականացումից առաջ չեն ընկալել իրենց ծառայության բովանդակային բնույթը: Այն գտնում է, որ վարույթից փաստաբանի հեռացման ձևն ու պատճառները, ինչպես նաև իրավական հիմքերի բացակայության վերաբերյալ հայտարարությունները լուրջ խնդիրներ են հարուցել ամբողջությամբ վերցրած վարույթների արդարության հետ կապված: Դատարանը նաև նշում է, որ փաստաբանը վերադարձվել է վարույթ 2001թ. հունիսին՝ առանց որևէ հիշատակման, որ վարույթից

նրա հեռացման հայտարարված հիմքերը դադարել են գոյություն ունենալ:

91. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի (c) կետի խախտում:

### 2. Լռություն պահպանելու իրավունքը

***Հենին և Մաքգահինեսն ընդդեմ Իռլանդիայի (Heaney and McGuinness v. Ireland), 34720/97, 21.12.2000թ.***

53. …երբ այդ հարցաքննությունների ընթացքում ներկայացվել են 52-րդ բաժնի պահանջները, նրանք պատշաճ ձևով տեղեկացվել են, որ եթե իրենք պատասխանատու չլինեն տվյալ ժամանակահատվածում իրենց գործողությունների համար, նրանց սպառնում է վեցամսյա ազատազրկում...

55. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ «հարկադրանքի աստիճանը», որը կիրառվել է դիմողների նկատմամբ 1939թ. օրենքի 52-րդ բաժնի հիմքով՝ նպատակ ունենալով այդ օրենքի իմաստով հարկադրել նրանց տրամադրել տեղեկություն կապված իրենց դեմ ներկայացված մեղադրանքի հետ, փաստորեն, խախտում է ինքնախոստովանություն չանելու նրանց առավելության և լռելու նրանց իրավունքի բուն էությունը:

58. Դատարանը… գտնում է, որ անվտանգության և հասարակական կարգի վերաբերյալ Կառավարության փաստարկները չեն կարող արդարացնել այնպիսի դրույթը, որը վերացնում է դիմողի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված լռության և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքները:

59. Այն եզրակացնում է, որ, հետևաբար, տեղի է ունեցել դիմողի լռության և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ իրենց դեմ ցուցմունք չտալու իրավունքների խախտում:

Բացի դրանից, այս ենթատեքստում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված իրավունքների և անմեղության կանխավարկածի, որը երաշխավորված է 6-րդ հոդվածի 2-րդ մասով, միջև առկա սերտ կապը հաշվի առնելով…, Դատարանը նաև եզրակացնում է, որ տեղի է ունեցել վերջին դրույթի խախտում:

***Վան Վոնդելն ընդդեմ Նիդեռլանդների (Van Vondel v. Netherlands) (dec.), 38258/03, 23.03.2006թ.***

1. …Ինքնախոստովանական ցուցմունք չտալու իրավունքն առավելապես վերաբերում է քրեական դատավարությունում մեղադրվող անձի՝ լռություն պահպանելու ցանկությունը հարգելուն և քրեական մեղադրանքում կամավոր տրված տեղեկության կիրառմանը: Սակայն ոչ բոլոր միջոցները, որոնք կիրառվել են իշխանության ներկայացուցիչներին տեղեկություն տրամադրելը խրախուսելու նպատակով, պետք է դիտել որպես ոչ պատշաճ հարկադրանքի արդ-

յունք: Այն ինքնին չի արգելում հարկադրական միջոցներ կիրառել՝ անձից ավելի շատ տեղեկություն պահանջելու համար, օրինակ՝ նրանց ֆինանսական միջոցների վերաբերյալ, և անգամ կարող է պատիժ սահմանվել դա չկատարելու համար... կամ սույն գործի իմաստով, հարկադրական միջոցները կարող են կիրառվել անձից պառլամենտական հանձնաժողովի պահանջի հիման վրա տեղեկություն ստանալու համար, քանի որ առանց այդպիսի լիազորությունների նախատեսման նման հանձնաժողովի համար դժվար կլիներ իր գործառույթներն իրականացնել:

...դիմողը մեղադրվել և դատապարտվել է այն բանի համար, որ սուտ մատնություն էր կատարել PEC-ի առաջ: Այլ կերպ ասած, նա ստել էր կամ սուտ մատնություն էր կատարել ինքն իր նկատմամբ՝ PEC-ին տալով ոչ ճշմարտացի տեղեկություն: Սա չի հանդիսանում հարկադրաբար PEC-ի առաջ ինքնախոստովանական ցուցմունք տալու օրինակ՝ կապված նախկինում կատարված հանցանքի հետ. այն ինքնին հանցագործություն է հանդիսանում: Հնարավոր է, որ դիմողն ստել է՝ կանխելու համար բացահայտման ընթացքը, որը, նրա ընկալմամբ, կարող է լինել քրեական և հանգեցնել մեղադրանքի առաջադրման: Սակայն լռելու և ցուցմունք տալուց ազատ լինելու իրավունքը չի կարող մեկնաբանվել որպես քննությունից խուսափելու նպատակ հետապնդող գործողությունների ընդհանուր անձեռնմխելիություն: Այսպիսով, սույն գործը չի վերաբերում հարկադրաբար ստացված տեղեկությունը հետագայում քրեական դատավարությունում կիրառելուն: Հետևաբար, Դատարանը չի գտնում, որ սույն գործի փաստերը բացահայտում են լռության և իր դեմ ցուցմունք տալուց ազատ լինելու իրավունքի որևէ խախտում, կամ որ դիմողի նկատմամբ հարուցված քրեական գործով տեղի է ունեցել որևէ անարդարություն՝ ի հակառակ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի:

***Յարեմենկո ընդդեմ Ուկրաինայի (Yaremenko v. Ukraine), 32092/02, 12.06.2008թ.***

78. Անկախ Կառավարության փաստարկից այն մասին, որ դիմողի լռելու իրավունքը պաշտպանված է ներպետական օրենսդրությամբ, Դատարանը նշում է, որ դիմողի փաստաբանը հեռացվել է գործի վարույթից նախնական քննություն իրականացնող մարմնի կողմից այն բանից հետո, երբ նա խարհուրդ է տվել իր վստահորդին լռել և իր դեմ ցուցմունք չտալ: Այս պատճառը հստակ նշված է նախնական քննություն իրականացնող մարմնի որոշման մեջ: Այն նաև երկու անգամ կրկնվել է փաստաբան Օ.Խ.-ի բողոքին դատախազների պատասխաններում: Այդ պատասխաններից մեկում... նաև նշված էր, որ փաստաբանը խախտել է մասնագիտական էթիկան՝ խորհուրդ տալով իր վստահորդին պնդել իր անմեղությունը և հրաժարվել իր նախկին ինքնախոստովանության մի մասից:

79. Բացի դրանից, Դատարանը կարևորում է այն, որ դիմողը և պրն Ս.-ն մոտ երկու տարի հետո ներկայացրել են բավական մանրամասն ցուցմունքներ, որոնք նախնական քննությունն իրականացնող մարմնի կարծիքով որևէ հակասություն կամ անհամապատասխանություն չեն պարունակում: Դիմողի և նրա հետ մեղադրվող անձի ցուցմունքների համաձայնեցվածությունը կասկած է հարուցում առ այն, որ նրանց բացատրությունները հանգամանորեն համապատասխանեցված են: Ներպետական դատարանները, սակայն, նման մանրամասն ցուցմունքներն իրենց արժանահավատությամբ դիտել են անժխտելի ապացույց և դրել են 1998թ. հանցագործության համար դիմողի դատապարտման հիմքում՝ ուշադրություն չդարձնելով այն հանգամանքին, որ այդ ցուցմունքները նա տվել է փաստաբանի բացակայությամբ, նա դրանցից հրաժարվել է իր ընտրությամբ պաշտպան ունենալուց անմիջապես հետո, և դրանք չեն հաստատվում գործի այլ նյութերով: Այս հանգամանքներում, առկա են լուրջ պատճառներ ենթադրելու, որ դիմողի կողմից ստորագրված հայտարարությունը կազմվել է դիմողի կամքին հակառակ:

80. Վերոգրյալ դատողությունների լույսի ներքո և հաշվի առնելով այն, որ չի կատարվել պատշաճ նախնական քննություն դիմողի այն բողոքի հիման վրա, որ հայտարարությունը կազմվել է անօրինական եղանակով..., Դատարանը գտնում է, որ դատարանում դրա կիրառումը ոտնձգություն է լռելու և ինքնախոստովանական ցուցմունք տալուց ազատ լինելու իր իրավունքի նկատմամբ:

81. Հետևաբար, այս կապակցությամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

Տե՛ս նաև վերը՝ **B.V.1**

### 3. Հարցաքննության ապօրինի մեթոդները

*ա. Խոշտանգում*

***Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի (Selmouni v. France) [GC], 25803/94, 28.07.1999թ.***

102. Դատարանն ընդունում է, որ բազմաթիվ հարվածներ են հասցվել պրն Սելմունիին: Ինչպիսին էլ լինի անձի առողջական վիճակը, կարող է կանխավարկած առաջադրվել այն մասին, որ հարվածների նման ուժգնությունը կարող է էական ցավ պատճառել: Սակայն այդ հարվածները մարմնի վրա հետքեր չեն թողել: Ինչևէ, բժիշկ Գարնիերի 1991թ. դեկտեմբերի 7-ի բժշկական եզրակացությունից երևում է... որ պրն Սելմունիի նկատմամբ կիրառված բռնության հետքերը պատել են նրա ամբողջ մարմինը:

103. Դատարանը նաև նշում է, որ դիմողին մազերից բռնած քարշ են տվել, նրան ստիպել են վազել միջանցքով, որի երկու կողմերում

կանգնած ոստիկանները նրան հրել են, նրան ծնկի են բերել մի երիտասարդ կնոջ առաջ, որին ինչ-որ մեկն ասել է. «Տես ինչ-որ մեկը երգելու է քեզ համար», ապա մի ոստիկան նրա վրա միզելուց հետո նրան ցույց է տվել իր սեռական օրգանը՝ ասելով. «Ծծիր այս», և ապա նրան սպառնացել են զոդման լամպով և ներարկիչով... Վերոնշյալ գործողությունների դաժան բնույթից բացի, Դատարանը պարտավոր է նշել, որ դրանք զարհուրելի և ստորացնող կլինեին յուրաքանչյուր մարդու համար՝ անկախ նրա վիճակից:

104. Վերջապես, Դատարանը նշում է, որ վերոնշյալ իրադարձությունները չեն սահմանափակվել ոստիկանությունում կալանքի տակ գտնվելու որևէ ժամանակահատվածով, որի ընթացքում, ուժեղացած լարվածությունը և ապրումները կարող էին հասցնել նման ավելորդությունների: Հստակորեն հաստատվել է, որ պրն Սելմունին ենթարկվել է կրկնվող և շարունակական բռնության հարցաքննության օրերին...

105. Այս հանգամանքները հաշվի առնելով Դատարանը գտնում է, որ գործադրված ֆիզիկական և հոգեկան դաժանությունը ընդհանուր առմամբ դիմողին պատճառել են, «սաստիկ» ցավ և տառապանք և եղել է առանձնահատուկ լուրջ ու դաժան բնույթ: Նման վերաբերմունքը պետք է համարվի խոշտանգում՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով:

***Էլսին և այլոք ընդդեմ Թուրքիայի (Elci and Others v. Turkey), 23145/93, 13.11.2003թ.***

640. Դատարանը նշում է, որ դիմողները համաձայնեցված բողոքներ են ներկայացրել այն մասին, որ Թահիր Էլսին, Նիյազի Յեմը, Մերալ Դանիսը և Հուսնիյե Օլմեզը վիրավորվել, ծեծի են ենթարկվել, մերկացվել և սառը ջրի հոսանքի տակ են պահվել...

646. Ընդհանուր առմամբ գործի հանգամանքների լույսի ներքո, Դատարանը հիմնավորված է համարում այն, որ դիմողները... տառապել են 1993թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների իրենց կալանավորման ընթացքում ոստիկանների կողմից գործադրված ֆիզիկական և հոգեկան դաժանություններից: Նման վատ վերաբերմունքը նրանց խիստ ցավ և տառապանք է պատճառել և առանձնահատուկ լուրջ ու դաժան բնույթ է ունեցել՝ խախտելով Կոնվենցիայի 3-րդ հոդվածը: Հետևաբար, այն պետք է դիտվի խոշտանգում՝ այդ հոդվածի իմաստով:

***Մենեշևան ընդդեմ Ռուսաստանի (Menesheva v. Russia), 59261/00, 09.03.2006թ.***

48. Դիմողը հայտարարել է, որ 1999թ. փետրվարի 13-ին ձերբակալվել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածին հակասող ձևով: Բացի դրանից, նա բողոքարկել է այն, որ ոստիկանության բաժին տարվելուց հետո ծեծի է ենթարկվել իրեն հարցաքննող ոստիկանների կողմից, և կրկին նույն օրը, այն բանից հետո, երբ մերժել է ոստիկաններին թույլ

տալ խուզարկել իր բնակարանը: Նա բողոքարկել է այն, որ իրեն պատճառվել են այնպիսի վնասվածքներ, ինչպիսիք են կապտուկները և քերծվածքները, և որ ինքն ահաբեկվել է նման վերաբերմունքի սպառնալիքով: Նա նաև բողոքարկել է այն, որ դրանից հետո որևէ բժշկական օգնություն չի ստացել...

59. Վիճարկվող գործողություններն այնպիսին են եղել, որ դիմողին վախ և ցավ են պատճառել, նվաստացրել են նրա մարդկային արժանապատվությունը և խաթարել նրա հոգեկան և ֆիզիկական վիճակը: Յուրաքանչյուր դեպքում, Դատարանը կրկնում է, որ ազատությունից զրկված անձանց նկատմամբ ֆիզիկական ուժի կիրառումը, որը չի հանդիսացել խիստ անհրաժեշտություն նրանց վարքագծի պատճառով, հանդիսանում է մարդկային արժանապատվության նվաստացում և սկզբունքորեն խախտում է 3-րդ հոդվածով սահմանված իրավունքը…

60. …Դեպքերի ընթացքը նույնպես ցույց է տալիս, որ ցավն ու տառապանքը նրան դիտավորյալ են պատճառվել, մասնավորապես նրանից Լ.-ի վերաբերյալ տեղեկություն կորզելու համար…

61. Գնահատելու համար դիմողին պատճառված «ցավը կամ տառապանքը»՝ Դատարանը քննարկել է գործի բոլոր հանգամանքները, ինչպիսիք են, օրինակ, վերաբերմունքի տևողությունը, դրա ֆիզիկական կամ հոգեկան հետևանքները և, որոշ դեպքերում՝ տուժողի սեռը, տարիքը և առողջական վիճակը: ...Դատարանը գտնում է, որ նշված ժամանակահատվածում դիմողը եղել է ընդամենը 19 տարեկան, և լինելով կին մի քանի տղամարդ ոստիկանի շրջապատում, նա գրեթե կամազուրկ է եղել: Բացի դրանից, վատ վերաբերմունքը տևել է մի քանի ժամ, որի ընթացքում նա երկու անգամ ծեծի և ֆիզիկական ու հոգեկան ազդեցության առումով դաժան վերաբերմունքի այլ ձևերի է ենթարկվել:

62. Այս հանգամանքներից ելնելով, Դատարանը եզրակացնում է, որ, ընդհանուր առմամբ քննարկելով սույն գործով դրսևորված վատ վերաբերմունքը և դրա նպատակներն ու խստությունը, այն հանդիսանում է խոշտանգում՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով:

*բ. Անմարդկային և նվաստացնող վերաբերմունք*

***Ռիբիտչն ընդդեմ Ավստրիայի (Ribitsch v. Austria), 18896/91, 04.12.1995թ.***

29. Դիմողը պնդել է, որ վնասվածքները, մասնավորապես՝ իր աջ ձեռքի ափի և երեսի կողմի վնասվածքները, որ առկա են եղել ոստիկանությունում կալանավորումից նրա ազատ արձակվելու ժամանակ..., միայն մեկ անուն ունեն՝ իրեն հարցաքննող ոստիկանների վատ վերաբերմունքի արդյունք, ովքեր անպարկեշտ ձևով վիրավորել են իրեն, բազմիցս ֆիզիկական հաշվեհարդարով սպառնացել՝ ինքնախոստովանություն կորզելու նպատակով...

38. Դատարանը... կրկնում է, որ նախնական քննության պահանջները և հանցավորության դեմ պայքարի անժխտելի դժվարությունները չեն կարող արդարացնել անձի ֆիզիկական ամբողջականության պաշտպանության սահմանափակումները…

39. Սույն գործով պրն Ռիբիտչին հասցված վնասվածքները վկայում են այն մասին, որ նա ենթարկվել է վատ վերաբերմունքի, որը հանգեցրել է երկուստեք՝ անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի:

***Ջագերն ընդդեմ Նիդեռլանդների** (Jager v. Netherlands) (dec.), 39195/98, 14.03.2000թ.*

3. …Դատարանը նշում է, որ սույն գործով դիմողը 1995թ. հունվարի 14-ին և 15-ին մասնակցել է "*Zaanse verhoormethode*"-ի: Հարցաքննության այս տեխնիկային բնորոշ առանձնահատկությունները և դիմողի գործով դրա իրականացման ձևերը նշելուց հետո, Դատարանը գտնում է, որ այն հոգեբանական առումով բարդացված մեթոդ է և, հետևաբար, վիճարկելի է քրեական գործի քննության իմաստով, քանի որ այն ակնհայտորեն նպատակ է հետապնդում կասկածյալի և հարցաքննությունն իրականացնող անձի միջև հոգեբանական ազդեցության միջոցով ստեղծել վստահության մթնոլորտ, հաղորդակցության հնարավորինս օպտիմալ մակարդակ, որի արդյունքում հարցաքննվող անձին, ընկալված վստահության հարաբերությունների հիման վրա, դրդում են վստահել հարցաքննությունն իրականացնող անձին՝ հոգեբանորեն ծանր հիշողություններից ազատվելու նպատակով:

Դատարանը հիմնավորված չի համարում այն, որ այս մեթոդի կիրառումը դիմողին հոգեկան ցավ և տառապանք է պատճառել այնչափ, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով դիտվել անմարդկային վերաբերմունք: Հետևաբար, Դատարանը չի կարող եզրակացնել, որ հարցաքննության այս մեթոդը կամ դրա իրականացման ձևը սույն գործով հասցրել են Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված դաժանության նվազագույն սահմանին:

## VI. ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

### 1. Մեղադրվելու իրավունքի բացակայությունը

***Իքսն ընդդեմ Միացյալ Թագավորության** (X. v. United Kingdom), 8233/78,03.10.1979թ., DR 17, 122*

66. Սույն գործի հետ կապված, Դատախազությունը 1979թ. մարտի 29-ին պարտավորվել է դատական քննություն չպահանջել այն երեք կետերով, որոնք առկա էին Ֆ.-ի մեղադրական եզրակացության մեջ, այն պատճառով, որը դրանք սույն գործով ներկայացվել էին այն

բանից հետո, երբ ամբաստանյալը հայտարարել էր, որ ներկայացված մեղադրանքով նա նախկինում դատապարտված եղել է և այդ կապակցությամբ գործը քննվում է արդեն երկրորդ ատյանի դատարանում: Դիմողի կարծիքով, անկախ Դատախազության ցանկությունից՝ այս մեղադրանքներով դատական քննություն սկսելու կամ չսկսելու հարցի առնչությամբ, նա 6-րդ հոդվածի իմաստով ունի բացարձակ իրավունք հրաժարվել այս մեղադրական եզրակացությամբ առաջադրված մնացած մեղադրանքներից: Դիմողը, այսպիսով, այն տեսակետն է հայտնում, որ անկախ այն հանգամանքից, թե Դատախազությունը ցանկանում է արդյոք այս մեղադրանքներով գործը դատարան ուղարկել, թե՝ ոչ, ինքը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով ունի բացարձակ իրավունք մեղավոր կամ անմեղ ճանաչվելով՝ դադարեցնել այս մեղադրական եզրակացությամբ առաջադրված մեղադրանքը:

67. Ինչևէ, Հանձնաժողովը նախկինում էլ ընդունել է, որ 6-րդ հոդվածի 1-ին մասը չի նախատեսում դիմողի՝ դատարան դիմելու իրավունքն իր դեմ հարուցված քրեական գործի դատական լսումն իր նախընտրած ժամանակ քննելու պահանջով… Հանձնաժողովի կարծիքով, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը չի կարող այնպես մեկնաբանվել, որ Մեղադրանքը տարբերակի ձևականորեն դադարեցվող քրեական վարույթից կամ պարզապես բացառվող մեղադրանքներից…

***Ռ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (R. v. United Kingdom) (dec.), 33506/05, 04.01.2007թ.***

Ինչ վերաբերում է քրեական դատավարությունների դադարեցմանը, ապա Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով չի նախատեսվում մասնավոր արդյունքի իրավունք կամ դրա հետևանքով ձևական դատապարտում կամ արդարացում մեղսագրվող քրեական մեղադրանքով: Առհասարակ, նման վարույթները դադարեցվում են մեղադրյալի պաշտոնական իրազեկմամբ այն մասին, որ նա այլևս չի հետապնդվում այդ մեղադրանքներով, և դա հնարավորություն է տալիս եզրակացնել, որ այդ անձի հետ կապված իրավիճակն այլևս չի կարող դիտվել որպես ըստ էության խախտված... Թեև այն, որպես կանոն, իրականացվում է արդարացմամբ կամ դատապարտմամբ (ներառյալ դատապարտումը բողոքարկման արդյունքում),... սակայն վարույթները կարող են ավարտվել հօգուտ մեղադրյալի կայացվող միակողմանի որոշմամբ, ներառյալ այն դեպքերը, երբ դատախազությունը որոշում է մեղադրանք չառաջադրել կամ գործը քննող դատավորը կարճում է վարույթը՝ առանց դատավճիռ կայացնելու: Որպես կանոն, Դատարանը գտնում է, որ քրեական դատավորությունն ավարտվում է այն ժամանակ, երբ դատախազը տեղեկացրել է մեղադրյալին այն մասին, որ նրա դեմ հարուցված վարույթը դադարեցվել է... և երբ ներպետական դատարանը գտել է, որ մեղադրյալը չպետք է կանգնի դա-

տարանի առաջ՝ իր հոգեկան խանգարման պատճառով..., եթե անգամ երկու գործերով առկա լիներ տեսական հնարավորություն մեղադրյալի դեմ հիմնական մեղադրանքներով վարույթ հարուցել:

Սույն գործով Դատարանը նշում է, որ ոստիկանությունը որոշել է մեղադրանք չառաջադրել, և դիմողը տեղեկացվել է դրա մասին. դրա փոխարեն այն նախազգուշացում է կիրառել դիմողի նկատմամբ այն հանցանքների համար, որոնք նա ենթադրաբար կատարել էր: Սույն գործով խնդրահարույց է դառնում այն հարցը, թե արդյոք քրեական մեղադրանքն այդպիսով բացառվել է, թե՝ փաստորեն դադարեցվել: Այս կապակցությամբ Դատարանը կքննարկի երեք կողմնորոշիչ չափանիշներ պարզելու համար, թե արդյոք տեղի է ունեցել քրեական մեղադրանքի դադարեցում, դրանք են՝ ներպետական օրենսդրությունում այս դեպքի զբաղեցրած տեղը, մեղադրանքի բնույթը և պատիժը, որին անձը պետք է ենթարկվեր... Այն նշում է, որ ինչ վերաբերում է առաջինին, ապա ներպետական օրենսդրության համաձայն նախազգուշացումը քրեական պատիժ չէ: Ինչ վերաբերում է երկրորդին, ապա նախազգուշացման նպատակն առավելապես կանխարգելիչ է և պատժի կամ կանխարգելման նպատակ չի հետապնդում: Վերջապես, որևէ տուգանք կամ ազատության սահմանափակում չի կիրառվել: Սույն գործով դիմողին խնդրել են գրանցվել անչափահաս հանցագործների գրանցամատյանում (ռեգիստրում) հնարավոր միջամտության միջոցների կիրառման նպատակով, որը Դատարանն ըստ դրա բնույթի համարում է կանխարգելիչ... Հետևաբար, Դատարանը գտնում է, որ դիմողին ներկայացված նախազգուշացումը չի ներառում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով քրեական մեղադրանքի դադարեցումը: Այն նաև չի ներառում մեղքի վերաբերյալ որևէ պաշտոնատար անձի հայտարարություն, ինչը կարող է խախտել 6-րդ հոդվածի 2-րդ մասը:

### 2. Մեղքը ենթադրող որոշումների պատճառաբանությունը

***Մարսիանոն ընդդեմ Իտալիայի (Marziano v. Italy), 45313/99, 28.11.2002թ.***

29. Նախնական քննությունների դատավորի կազմած կանխատեսումը, որը, ինչպես նշել է Կառավարությունը, նախատեսված է Դատավարական օրենսգրքի հատուկ մասի 125-րդ հոդվածով, այն հնարավոր արդյունքի մասին, որը կարող էր ունենալ գործի ընթացքը, եթե գործը հանձնված լիներ դատավորին: Դատավորը սահմանափակվել է՝ գտնելով, որ այնպիսի պատճառների առկայության դեպքում, որոնք թույլ են տալիս շահագրգիռ անձին կասկածել վիճարկվող հանցանքի մեջ, այլ փաստերը թույլ էին տալիս կարծել, որ դատարանի առջև մեղադրանքի կողմը հաջողության փոքր հնարավորություն կունենար: Սակայն նա չի սահմանափակվել այն դատական ընթացքի ազդեցությունը հաշվի առնելով, որը կարող էր թողնել X-ի վրա, բայց

միևնույն ժամանակ X-ի մատնանշած որոշ մանրամասների անհիրաական լինելը: Այսպիսով, նրա հայտարարությունների հավաստիությունը կարող է կասկածի տակ դրվել:

30. Այս հանգամանքներից ելնելով, Դատարանը հաստատում է, որ նախնական քննությունների դատավորի, որն իր հերթին տեղյակ էր դիմողի և նրա ամուսնու միջև վեճի մասին, իրավասությունն է իր ներքին համոզմամբ որոշել այն եղանակը, որի միջոցով նա պետք է արտահայտեր իր կարծիքը՝ նկատի ունենալով վեճի… Իհարկե, կարող է ծագել այն հարցը, թե արդյոք բերված վերջնական հիմնավորումները կրում էին այնպիսի բնույթ և այն աստիճանի էին, որ կարող էին մեկնաբանվել որպես մեղադրանքի կազմում: Այնուամենայնիվ, չնայած 1998թ. ապրիլի 17-ի հրամանում տեղ գտած պայմաններին, Դատարանը գտնում է, որ այդ որոշման մեջ նկարագրված է «կասկածանք», իսկ մեղքի առկայությունը հաստատված չէ:

31. Այսպես, պետք է տարանջատում կատարվի այն որոշումների միջև, որոնք տվյալ մարդու մեղավորության զգացում են արտահայտում, և նրանցից, որոնք սահմանափակվում են կասկածանքի արտահայտմամբ: Առաջինները խախտում են անմեղության կանխավարկածի սկզբունքը, իսկ երկրորդը բազմիցս դիտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածին համապատասխան:

32. Այս հանգամանքներից ելնելով, Դատարանը միայն կարող է եզրահանգել, որ խախտվել է անմեղության կանխավարկածի սկզբունքը:

### 3. Արդարացման որոշման վիճարկումը

***Տեջեդոր Գարսիան ընդդեմ Իսպանիայի (Tejedor García v. Spain), 25420/94, 16.12.1997թ.***

29. Դիմողը վիճարկել է այն, որ իր դեմ հարուցված վարույթը եղել է անարդար, քանի որ ներպետական դատարանները բավարարել են հանրային մեղադրողի դիմումն առ այն, որ մերժվի որոշումն այն առումով, որ որևէ այլ գործողություն չի կատարվել 789-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետով սահմանված եռօրյա ժամկետի ավարտից հետո երկու ամսվա ընթացքում…

32. …Թեև հանրային մեղադրողին դիմումի ներկայացման ժամկետը հետաձգվել է մինչև 1990թ. սեպտեմբերի 13-ը, ազգային դատարաններն ուշադրություն չեն դարձրել այն հանգամանքին, որ սույն դեպքի հետ կապված կարևոր փաստը վերաբերում է գործն ստանալու ժամկետին և ընդունել են, որ այդ ժամկետը չի կարող հստակ որոշվել, քանի որ չկա որևէ հանգամանք, որը կփաստեր, թե երբ է այդ որոշումն ուղարկվել հանրային մեղադրողին, և երբ է նա իրականում ստացել այն…

Ինչպես պարզ է դառնում վերոգրյալից, դատարանները, այսպիսով կոչված են մեկնաբանելու 789-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կե-

տը, …այնպիսի հանգամանքներում, որոնցում ընդունման ժամկետը չի կարող հստակ որոշվել:

33. Դատարանի կարծիքով, 789-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետին տրված մեկնաբանությունը, նման հանգամանքներում, ներպետական դատարանների իրավասությունն է: Պետական մեղադրողի դիմումը քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ որոշման կայացումից գրեթե երկու ամիս հետո բավարարելը նշանակում է, որ այն Իսպանիայի օրենքի իմաստով չի հանդիսացել վերջնական: Այս հանգամանքներում ազգային դատարանների մեկնաբանությունները չեն կարող բնութագրվել որպես ինքնիրավ և չպատճառաբանված կամ այնպիսի բնույթ ունեցող, որը կասկած է հարուցում վարույթի արդարացիության վերաբերյալ: Չի կարելի ասել, որ որևէ հարց է առաջանում սույն գործով զենքերի հավասարության հետ կապված:

34. Հետևաբար, տեղի չի ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

# Գ. ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ

## Ի. ԴԱՏԱՐԱՆ

### 1. Եզրութաբանությունը

***Դիդիերն ընդդեմ Ֆրանսիայի (Didier v. France) (dec.), 58188/00, 27.08.2002թ.***

1999թ. հունվարի 27-ին Ֆինանսական շուկաների խորհուրդը (FMB), կիրառելով իր կարգապահական իրավասությունները, որոշում է կայացրել վեց ամսով կասեցնել դիմողի՝ առևտրային գործունեությամբ զբաղվելու արտոնագիրը և նրա նկատմամբ նշանակել 5.000.000 ֆրանսիական ֆրանկ տուգանք:

1999թ. ապրիլի 30-ին դիմողը վարույթ է հարուցել Պետական խորհրդում՝ (*Conseil d'Etat*-ում), խնդրելով քննարկվող որոշումը վերացնել և դրա կատարումը դադարեցնել:

1999թ. դեկտեմբերի 3-ին Պետական խորհուրդը մերժել է դիմողի վարույթը:

3. …Դատարանը կարծում է, որ ըստ դատական պրակտիկայում ձևավորված սկզբունքների և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ «դատարան» հասկացության ինքնուրույն մեկնաբանության լույսի ներքո, FMB-ն պետք է դիտել «դատարան»՝ դրա դրույթների իմաստով, անկախ ներպետական իրավունքում դրա դասակարգումից …Բացի դրանից, այն նշում է, որ 6-րդ հոդվածի իմաստով «դատարան» հասկացությունը համընկնում է 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածի իմաստով այդ հասկացությանը ...Վերջապես, Դատարանը նշում է, որ FMB-ի որոշումները վերանայելիս Պետական խորհուրդն իրավասու էր վերանայել գործի բոլոր հանգամանքները, քանի որ այդ կապակցությամբ այն հանդիսանում է «ամբողջական ընդդատությամբ դատական մարմին», հետևաբար՝ նաև «դատարան»…Այսպիսով, Դատարանը գտնում է, որ դիմողին տրամադրվել է քրեական գործով բողոք բերելու իրավունք՝ 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածի առաջին կետին համապատասխան:

### 2. Օրենքի հիման վրա ստեղծված

***Պոսոխովն ընդդեմ Ռուսաստանի (Posokhov v. Russia), 63486/00, 04.03.2003թ.***

43. Ինչևէ, անկախ Դատավորների նշանակման ակտի պահանջները խախտելու հանգամանքից, որը սահմանում է նշանակման պատահական կարգ և տարվա մեջ երկշաբաթյա ծառայություն, Դատարանը մասնավորապես զարմացած է այն փաստի առնչությամբ, որ Նեկլինովսկիի շրջանային դատարանները՝ դատավորների նշանակ-

ման համար պատասխանատու մարմինը, հաստատել է, որ չունի միևչ 2000թ. փետրվարի 4-ը նշանակված դատավորների ցուցակը: Այսպիսով, կառավարությունը չի ներկայացրել որևէ իրավական հիմք հիմնավորելու համար տիկին Ստրեբլյանսկայայի և տիկին Խովյակովայի մասնակցությունն արդարադատության իրականացմանը դիմողի գործի քննության օրը՝ հիշելով, որ 2000թ. փետրվարի 4-ին ընդունված այդ ցուցակն սկսել է գործել 2000թ. հունիսի 15-ից, այն է՝ Ռոստովի տարածաշրջանային օրենսդիր մարմնի կողմից դրան հավանություն տալուց հետո:

Այս հանգամանքները՝ ամբողջությամբ, Դատարանին թույլ չեն տալիս եզրակացնելու, որ Նեկլինովսկիի շրջանային դատարանը, որը 2000թ. մայիսի 22-ին քննել է դիմողի գործը, կարող է դիտվել որպես «օրենքի հիման վրա ստեղծված դատարան»:

***Ակարդին և այլոք ընդդեմ Իտալիայի** (Accardi and Others v. Italy (dec.)), 30598/02, 20.01.2005թ.*

2. …Ինչպես իրավամբ մատնանշել է Վճռաբեկ դատարանն իր՝ 2002թ.ի փետրվարի 22-ի դատավճռում, X-ի և Y-ի հարցաքննությունն իրականացվել է քննիչ-դատավորի կողմից: Այն փաստը, որ իր քննչական գործողությունների նկատմամբ վերահսկողության իր իրավունքն իրականացնելով՝ նա որոշում է կայացրել երեխաներին որոշակի հարցեր տալու նպատակով վարույթ ներգրավել հոգեբանի, որևէ կերպ չի փոխարինում այդ եզրակացությանը: Ինչ վերաբերում է այն փաստին, որ գործը քննող դատավորը լքել է սենյակը Y-ի հարցաքննության ընթացքում, ապա 1998թ. հոկտեմբերի 16-ի դատական նիստի արձանագրությունը փաստում է, որ այդ տեղաշարժը կատարվել է երեխային հանգստացնելու համար և, ամեն դեպքում, դատավորը շարունակել է հետևել հարցաքննության ընթացքին երկկողմանի հայելու միջոցով:

Վերոնշյալ հանգամանքների լույսի ներքո, Դատարանը չի կարող եզրակացնել, որ Ֆլորենցիայի՝ գործը քննող դատավորը չի հանդիսացել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին իմաստով «օրենքով սահմանված կարգով ստեղծված դատարան»:

***Սոեմին ընդդեմ Բելգիայի** (Coëme v. Belgium), 32492/96, 32547/96, 32548/96, 33209/96 և 33210/96, 22.06.2000թ.*

107. Դատարանը կրկնում է, որ դատական համակարգի կառուցվածքը և քրեական գործերի ընդդատությունը չեն կարող թողնվել դատական իշխանությունների հայեցողությանը, և նշում է, որ նախքան 1998թ. բարեփոխումները Սահմանադրության 103-րդ հոդվածի... պահանջով բացառապես Կառավարության նախարարների վերաբերյալ գործերը կարող են քննվել Վճռաբեկ դատարանում: Հետևաբար, չի եղել որևէ դրույթ, որը, նախարարներից բացի, այլ դիմողների ևս կներառեր Վճռաբեկ դատարանի ընդդատության ներքո այն հանցագոր-

ծությունների վերաբերյալ գործերով, որոնցով նախարարները կանգնել են դատարանի առջև…

Հայտնի է, որ ինչպես Կառավարությունը նշել է, սրա հետ կապված կանոնների բողոքարկումը, որը կիրառվում է Բելգիայում Հանցագործությունների քննության մասին օրենքի 226 և 227-րդ հոդվածներով, եղել է կանխատեսելի իրավական տեսության և դատական պրակտիկայի ուսուցման և, մասնավորապես, Վճռաբեկ դատարանի 1865թ. հուլիսի 12-ի դատավճռի լույսի ներքո, եթե անգամ վերջինս վերաբերում է մենամարտին, և նշում է, որ «մենամարտն անբաժանելի համալիր հանցագործություն է», և որ «վարույթի անբաժանելիությունը հանցագործության անբաժանելիության անհրաժեշտ հետևանք է»... Սույն գործում այս վկայակոչումները չեն կարող արդարացնել եզրակացությունն այն մասին, որ սրա հետ կապված կանոնը հանդիսանում է «օրենքի հիման վրա ձևավորված», հատկապես, քանի որ Վճռաբեկ դատարանը՝ Բելգիայի դատական իշխանության բարձրագույն ատյանը, առանց քննարկվող հարցը Վարչական արդարադատության և վարույթի դատարան ուղարկելու, ինքնուրույն որոշել է, որ երբևէ նախարարի պաշտոն չզբաղեցրած անձանց դատարան կանչելը հանդիսացել է ոչ այնքան Սահմանադրության 103-րդ հոդվածի, որքան Հանցագործությունների քննության մասին օրենքի կամ Դատական օրենսգրքի դրույթների կիրառման արդյունք…

108. Քանի որ սրա հետ կապված կանոնը չի ձևավորվել օրենքի հիման վրա, Դատարանը գտնում է, որ Վճռաբեկ դատարանն այս չորս դիմողների գործով չի հանդիսացել 6-րդ հոդվածի իմաստով «օրենքի հիման վրա» ստեղծված դատարան:

***Լավենցն ընդդեմ Լատվիայի (Lavents v. Latvia), 58442/00, 28.11.2002 115.***

...Նույնիսկ դատարանը գտնում է, որ համաձայն ԿՊԿ-ի 28-րդ հոդվածի դրույթների համաձայն դատավորը չի կարող մասնակցել այն գործի քննությանը...երբ իր մասնակցությամբ ընդունված վճիռը կամ որոշումը ... բեկանվել է: Դատարանը գտնում է, որ այս դրույթը շարադրված է շատ պարզ, որը թույլ է տալիս դատարանի անդամներին համոզիչ կերպով նախատեսել իրենց պարտականությունների շրջանակները և դրանից բխող իրավական հետևանքները: Դրանից հետևում է, որ 1999 թվականի դեկտեմբերի 14-ից սկսած երկու դատավորների կողմից կայացված որոշման բեկանումից հետո այս դատավորները չէին կարող նույն կազմով մասնակցել նույն գործի քննությանը: Այսպիսով, Շրջանային դատարանի կոլեգիան կազմված չէր օրենքին համապատասխան:

116. Սրանից հետևում է, որ այս առումով խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը:

### 3. Անկախությունը

***Սութերն ընդդեմ Շվեյցարիայի (Sutter v. Switzerland), 8209/78, 01.03.1979թ., DR 16, 166***

2. ...Այս դատավորները նշանակվել են Դաշնային խորհրդի, այն է՝ Կառավարության կողմից երեք տարի ժամկետով: Նշանակման այս կարգն ինքնին չի կարող ազդել դատարանի անկախության վրա: Բացի դրանից, դատավորի անկախությունը պարտադիր կերպով չի ենթադրում, որ նա պետք է նշանակվի ցմահ... կամ նա օրենքի ուժով պետք է լինի անփոխարինելի..., այն է՝ առանց իր համաձայնության նրա վրա չի կարող դրվել այլ պարտականություն: Սակայն պարզ է, որ նա պետք է որոշակի ժամանակահատվածի ընթացքում ունենա որոշակի մնայունություն, և որ որպես դատավոր իր պարտականություններն իրականացնելիս նա չպետք է ենթարկվի որևէ իշխանության: Ոչինչ չի վկայում այն մասին, որ այս կերպ նշանակված դատավորները կարող են մերժվել գրասենյակի կողմից: Բացի դրանից, եթե անգամ որպես զինծառայող նրանք գտնվում են համապատասխան միավորների՝ իրենց աստիճանակարգային վերադասների իշխանության ներքո, սակայն այն ժամանակ, երբ հանդես են եկել որպես դատավոր, այս սպաներն ու զինվորներն արդարադատության իրականացման ձևերի համար պատասխանատու չեն որևէ մեկի առջև: Նրանց անկախությունն ընդհանուր գծերով երաշխավորված է Համադաշնության զինվորական կառուցվածքի վերաբերյալ 1907թ. ապրիլի 12-ի օրենքի 183-րդ հոդվածով և պաշտպանված է քննարկումների գաղտնիությամբ:

***Սալովն ընդդեմ Ուկրաինայի (Salov v. Ukraine), 65518/01, 06.09.2005թ.***

80. Դատարանը կրկնում է, որ պարզելու համար, թե դատարանը կարող է 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով համարվել «անկախ», պետք է *inter alia* քննարկվի դրա անդամների նշանակման կարգը և նրանց պաշտոնավարման ժամկետը, արտաքին ճնշումներից պաշտպանվածությունը և այն հարցը, թե դա արդյոք ունի անկախության դրսևորում...

82. Սույն գործով դժվար է թվում անկախության և անկողմնակալության հարցի տարբերակումը, քանի որ դիմողի կողմից ներկայացված փաստարկները, որոնցով վիճարկվում են երկուստեք՝ դատարանի անկախությունը և անկողմնակալությունը, հիմնված են նույն փաստական հանգամանքների վրա...

86. Հաշվի առնելով դատական լսման նկատմամբ արտաքին ճնշման դեմ ոչ բավարար օրենսդրական և ֆինանսական երաշխիքների վերաբերյալ վերոնշյալ դատողությունները, մասնավորապես՝ Շրջանային դատարանի նախագահի կողմից հնարավոր ճնշումների դեմ նման երաշխիքների բացակայությունը, Շրջանային դատարանի

նախագահության կողմից տրված ցուցումների պարտադիր բնույթը և սույն գործով միջանկյալ դատական որոշումների ձևակերպումները, Դատարանը գտնում է, որ դիմողի կասկածները Դոնեցկի Կույբիշևսկիի Շրջանային դատարանի դատավորի անկողմնակալության վերաբերյալ, կարելի է ասել, եղել են օբյեկտիվորեն հիմնավորված:

***Ուիտֆիլդը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (Whitfield and Others v. United Kingdom), 46387/99, 48906/99, 57410/00 և 7419/00, 12.04.2005թ.***

45. Դատարանը գտնում է, որ այդ անձինք գտնվել են Ներքին գործերի նախարարության ենթակայության տակ (որպես ազատազրկման վայրի պաշտոնատար անձ, որը կառավարում և վերահսկում է դիմողի ազատազրկման վայրը), որը դիմողի դեմ մեղադրանք է ներկայացրել, քննել է գործը և պաշտպանել մեղադրանքը, որոշել է դիմողների մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև նրանց նկատմամբ պատիժ է նշանակել: Հետևաբար, չի կարելի ասել, որ եղել է կառուցվածքային անկախություն մեղադրական և պատժական գործառույթներ իրականացնող մարմինների միջև, և Կառավարությունը չի պնդել, որ այդպիսին եղել է:

46. Հետևաբար, Դատարանը գտնում է՝ ակնհայտ է, որ պարոնայք Ուիտֆիլդի, Փեութերի և Գասկինի կողմից իրենց նկատմամբ կայացված դատական ակտի անկախության և անկողմնակալության վերաբերյալ անհանգստությունները եղել են օբյեկտիվորեն հիմնավորված և, հետևաբար, նրանց նկատմամբ կայացված դատական ակտերը եղել են անարդար...

**4. Անկողմնակալություն**

*ա. Նախնական գործողություններ*

***Նորտիերն ընդդեմ Նիդեռլանդների (Nortier v. Netherlands), 13924/88, 24.08.1993թ.***

33. Դատարանը ժխտում է, որ կասկածյալի սուբյեկտիվ անհանգստությունը որոշիչ չէ, սակայն հասկանալի է, բայց գործի մասնավոր հանգամանքներում նրա երկյուղը կարող է դիտվել օբյեկտիվորեն արդարացված...

Ընդամենն այն հանգամանքը, որ Անչափահասների գործերով Մուլենբրոեկի դատավորի կողմից ևս կայացվել են մինչդատական որոշումներ, որոնք ներառում են կալանավորման հետ կապված որոշումներ, չեն կարող դիտվել որպես նրա անկողմնակալության հետ կապված անհանգստության ինքնին հիմնավորում. որպիսի հանգամանքներն այս որոշումների կիրառման ոլորտների և բնույթի առարկաներն են:

34. Չհաշված դիմողի կալանավորման հետ կապված որոշումները, Անչափահասների գործերով Մուլենբրոեկի դատավորը որևէ այլ միջնդատական որոշում չի կայացրել, բացառությամբ դիմողին հոգեբուժական փորձաքննության ենթարկելու վերաբերյալ դատախազի միջնորդության բավարարման, որը չի վիճարկվել վերջինիս կողմից: Նա այլ կերպ չի օգտագործել իր՝ որպես գործը քննող դատավորի իրավասությունները:

35. Ինչ վերաբերում է դիմողի կալանավորման մասին որոշումներին, դրանք կարող են հիմնավորել որոշակի հանգամանքներում դատավորի անկողմնակալության հետ կապված անհանգստությունները... Սույն գործում առկա չէ նման բնույթի որևէ բան... այն հարցերը, որոնց Անչափահասների գործերով Մուլենբրոեկի դատավորը պետք է պատասխաներ այս որոշումների կայացման ժամանակ, չեն համընկնում նրա վերջնական որոշման համար որոշիչ հանդիսացող հարցերի հետ: Գտնելով, որ դիմողի դեմ առկա են եղել «լուրջ ցուցումներ»՝ նրա խնդիրն է եղել միայն ամբողջությամբ հաստատել, որ մեղադրանքի կողմը դիմողին մեղադրանք առաջադրելու առերևույթ հիմքեր է ունեցել... Մեղադրանքը, բացի դրանից, ընդունվել է դիմողի կողմից և այդ փուլում հիմնավորվել այլ ապացույցներով ևս...

37. Այս հանգամանքների իմաստով դիմողի երկյուղն առ այն, որ Մուլենբրոեկի Անչափահասների դատարանն անկողմնակալ չէ, չի կարող դիտարկվել որպես օբյեկտիվորեն հիմնավորված:

***Ֆերանտելին և Սանտանգելոն ընդդեմ Իտալիայի (Ferrantelli and Santangelo v. Italy), 19874/92, 07.08.1996թ.***

59. …Սույն գործով անկողմնակալության բացակայության երկյուղն առաջանում է մի քանի հանգամանքից: Առաջին հերթին, Ս.Պ.-ի նախագահությամբ Կալտանիսետայի Ասիզների դատարանի 1988թ. հունիսի 2-ի դատավճիռը... պարունակում է բազմաթիվ վկայակոչումներ դիմողների և թաքստոցների վրա հարձակումների ժամանակ նրանց համապատասխան վարքագծի վերաբերյալ: Մասնավորապես, նշում է արվել կրկնակի հանցագործության «հանցակիցների» վերաբերյալ և «Գ.Վ.-ի հստակ հայտարարության վերաբերյալ առ այն, որ Գ.Գ.-ն և Սանտանգելոն պատասխանատու են սպանությունների կատարման համար», և հաստատվում է, որ պրն Ֆերանտելին օգնել է խուզարկել թաքստոցները և տեղափոխել կարաբինիերիներին պատկանող նյութերը: Երկրորդ, Կալտանիսետայի Վերաքննիչ դատարանի Անչափահասների բաժնի 1991թ. ապրիլի 6-ի դատավճիռը... որի հիման վրա դատապարտվել են դիմողները, ներառում է բազմաթիվ դուրսգրումներ Ասիզների Վերաքննիչ դատարանի՝ Գ.Գ.-ին վերաբերող որոշումներից: Անչափահասների բաժնում դատավոր Ս.Պ.-ն հանդիսացել է նախագահող և զեկուցող դատավորը:

60. Այս հանգամանքները բավարար են ասելու, որ Կալտանիսետայի Վերաքննիչ դատարանի Անչափահասների բաժնի անկողմնա-

կալության բացակայության առնչությամբ դիմողների երկյուղն օբյեկտիվորեն արդարացված է:

***Պերոտե Պելոն ընդդեմ Իսպանիայի (Perote Pellon v. Spain), 45238/99, 25.07.2002թ.***

51. Արդյունքում, Դատարանը գտնում է, որ տվյալ հանգամանքներում դատական ատյանի անաչառությունը լուրջ կասկածների տեղիք է տալիս՝ այնքանով, որ նրա նախագահը և զեկուցող դատավորը միջամտել են քննչական գործողություններին, մասնավորապես մերժվել է դիմողի՝ մեղադրական եզրակացությանը վերաբերող և նախնական կալանքի ժամկետը երկարացնող որոշումների դեմ բողոքը: Այն գտնում է, որ այս կապակցությամբ դիմողի մտավախությունները կարող են համարվել հիմնավորված…

***Էկեբերգը և այլոք ընդդեմ Նորվեգիայի (Ekeberg and Others v. Norway), 11106/04, 31.07.2007թ.***

34. Առաջին հանգամանքը կապված է նրա հետ, թե Բարձրագույն Դատարանի անկողմնակալությունը կարող է վիճարկվել՝ կապված դատավոր Գ.-ի՝ որպես գործը քննող երեք դատավորներից մեկի, մասնակցության հետ, քանի որ նա ներգրավված է եղել չորրորդ դիմողի կողմից՝ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին Քաղաքային դատարանի որոշման դեմ բերված բողոքը մերժելու վերաբերյալ սկզբնական որոշման կայացմանը :

38. ...Քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի համաձայն՝ պետք է լինի հանգամանորեն հիմնավորված կասկած առ այն, որ նա կատարել է իրեն մեղսագրվող հանցանքը: Ազգային նախադեպային իրավունքի համաձայն՝ առաջին փուլում անձի կալանավորումը բավարար հիմք է հանդիսանում ասելու, որ այս պայմանը պահպանվել է, սակայն խնդիրը, այնուամենայնիվ, կայանում է նրանում, որ Բարձրագույն Դատարանը պետք է ինքնուրույն գնահատական տար: Այսպիսով, կարելի է ամփոփել, որ Բարձրագույն Դատարանն ինքնուրույն գնահատական է տվել այն հարցին, թե արդյոք չորրորդ դիմողի առնչությամբ առկա է հիմնավոր կասկած…

40. Վերոգրյալի լույսի ներքո, Դատարանը գտնում է, որ չորրորդ դիմողն հիմնավոր պատճառ է ունեցել կասկածելու, որ Դատավոր Գ.-ն կարող է նախքան Բարձրագույն դատարանում գործի քննությունը կանխակալ կարծիք ունենալ իր մեղավորության կամ անմեղության մասին…

41. Ինչ վերաբերում է դատավոր Գ.-ի՝ գործի քննությանը հետագա մասնակցությանը, Դատարանը նշում է, որ… սույն գործը քննվել է Բարձրագույն դատարանի կողմից ատենակալների մասնակցությամբ: Ոչ թե դատավոր Գ.-ն, այլ նախագահող դատավորն է գործի բանավոր քննությունից հետո ցուցումներ տվել ատենակալներին նախքան վերջինիս կողմից քննարկումներ սկսելը և մեղավորության վե-

րաբերյալ դատավճռի կայացումը: Պրոֆեսիոնալ դատավորները նախքան դատավճռի կայացումը չեն խորհրդակցել: Ոչինչ չի վկայում այն մասին, որ դատավոր Գ.-ն որևէ կերպ ազդել է ատենակալների քվեարկության վրա՝ չորրորդ դիմողի մեղավորության հետ կապված:

42. Սակայն, եթե, ինչպես սույն դեպքում է, ատենակալների դատավճռով անձը մեղավոր է ճանաչվել, սակայն պրոֆեսիոնալ դատավորները գտնում են, որ անձին մեղավոր ճանաչելու համար բավարար ապացույցներ չկան, վերջիններս կարող են որոշում կայացնել այն մասին, որ գործը պետք է քննվի նորից՝ այլ դատավորների կողմից… Այս կապակցությամբ, պրոֆեսիոնալ դատավորները, ներառյալ դատավոր Գ.-ն, մասնակցություն են ունեցել չորրորդ դիմողի դատապարտմանը: Առանց նրանց կողմից ատենակալների դատավճռի վավերացման՝ նա չէր կարող սույն վարույթի ընթացքում դատապարտվել Բարձրագույն դատարանի կողմից: Եթե անգամ գործնականում պրոֆեսիոնալ դատավորներն իրենց լիազորություններն օգտագործեին բացառապես ատենակալների դատավճիռը մերժելու համար, միևնույն է, նրանց դերակատարությունը դատապարտման վերաբերյալ որոշման կայացման հարցում չի կարող անտեսվել: Դատարանը գտնում է, որ տարբերությունն այն դեպքի, երբ դատավոր Գ.-ն պետք է որոշում կայացնի Քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ, և մեկ այլ դեպքի միջև, երբ նա պետք է որոշում կայացնի ատենակալների դատավճիռը վավերացնելու վերաբերյալ, աննշան է թվում:

43. Ի լրումն դրա, դատավոր Գ.-ն դատապարտմանը մասնակցել է մյուս երկու պրոֆեսիոնալ դատավորների և չորս ատենակալների հետ մեկտեղ:

44. Հակառակ այս նախապայմանների, Դատարանը գտնում է, որ չորրորդ դիմողն ունեցել է օրինական հիմքեր անհանգստանալու, որ իր գործով դատավոր Գ.-ի մասնակցության ուժով Բարձրագույն դատարանն իր հանդեպ անկողմնակալ չի լինի: Այն փաստը, որ ոչ չորրորդ դիմողը, ոչ նրա պաշտպանը երբևէ չեն առարկել Բարձրագույն դատարանում գործի քննությանը դատավոր Գ.-ի մասնակցության դեմ, սույն գործի հանգամանքներում չպետք է նվազեցնի դատավորների օբյեկտիվ անկողմնակալության պահանջից բխող պաշտպանությունը…

45. Ինչ վերաբերում է երկրորդ հանգամանքին, որը կապված է բողոքարկման արդյունքում սկսված վարույթին Վ.-ի՝ որպես ատենակալի մասնակցության հետ, Դատարանը նշում է, որ վարույթն սկսվել է 2003թ.ի փետրվարի 24-ին և 2003թ.ի մարտի 21-ին ատենակալները խորհրդակցել և դատավճիռ են կայացրել: Վարույթի առաջին չորս օրերի ընթացքում… Բարձրագույն դատարանը տեղեկացվել է վերջինիս կողմից 1997թ. հուլիսի 10-ին ոստիկանությունում տրված ցուցմունքի մասին: Այն բանից հետո, երբ այս հանգամանքի մասին հայտարարվել է դատարանում և պաշտպանը իր կարծիքն է հայտնել,

Բարձրագույն դատարանի նախագահը նրան հեռացրել է գործով վարույթի հետագա ընթացքից: Այսպիսով, ատենակալների խմբում նրա մասնակցությունը վարույթի համեմատաբար վաղ փուլում սահմանափակվել և ապա դադարեցվել է:

46. Բացի դրանից, մեղադրանքի կողմը նրա՝1997թ. հուլիսի 10-ի ցուցմունքը գործի համար կարևորություն ներկայացնող հանգամանք չի դիտել և նրան որպես վկա դատարան չի հրավիրել… Գերագույն դատարանը գտել է, որ Բարձրագույն դատարանի նախագահի և Վ.-ի՝ ոստիկանության կողմից գործի քննության անկողմնակալության վերաբերյալ ուսումնասիրությունների կատարման շրջանակներում տրված բացատրությունը որևէ հիմք չի տալիս ասելու, որ նա գործի վերաբերյալ իր սկզբնական տեղեկությունները կիսել է այլ ատենակալների հետ կամ որևէ այլ կերպ ազդել ատենակալների վրա՝ նախքան 2003թ. փետրվարի 28-ին վարույթից հեռացվելը: Ատենակալների ղեկավարի կարծիքով, Վ.-ի հեռացումից հետո ստեղծված իրավիճակը քննարկվել է ատենակալների կողմից, և վերջիններս համաձայնել են, որ առաջին մի քանի օրերի նրա մասնակցությունը որևէ կերպ չի ազդել ատենակալների դատավճռի վրա:

47. Այսպիսով, չի կարելի ասել, որ ատենակալ Վ.-ն ուղղակի կամ անուղղակի ներգրավված է եղել երեք շաբաթ հետո ատենակալների կողմից քննարկված և կայացված դատավճռով դիմողներին մեղսագրվող արարքները հիմնավոր համարելուն…

48. Պետք է նշել նաև, որ ատենակալների անկողմնակալությունն ապահովվել է բազմաթիվ անվտանգության միջոցներով… Դատարանի գործունեության մասին օրենքի դրույթները, որոնք կանոնակարգում են դատավորների անկողմնակալությունը, կիրառվում են նաև ատենակալների նկատմամբ… Նախագահող դատավորը ոչ միայն վարույթի բացման ժամանակ է ատենակալների հետ քննարկել ատենակալների անկողմնակալության վերաբերյալ պահանջը: Ատենակալներին կրկին հիշեցվել է այս պահանջի կարևորության մասին այն ժամանակ, երբ Գերագույն դատարանն անմիջապես կարգադրել է Վ.-ին հեռացնել գործով վարույթից՝ իրավունքից զրկված լինելու հիման վրա… Թեև վարույթի ոչ մի կողմ չի հիմնվել Վ.-ի՝ 1997թ. հուլիսի 10-ին ոստիկանությունում տված ցուցմունքի վրա, նախագահող դատավորը պետք է օրենքի պահանջներին համապատասխան հիշեցներ ատենակալներին հիմնվելու բացառապես դատարանում ներկայացված ցուցմունքների վրա և չքննարկել գործը երրորդ անձանց հետ…

49. Վերոգրյալ հանգամանքների լույսի ներքո, Դատարանը գտնում է, որ սույն դատավարությանը Վ.-ի մասնակցության բնույթը, ժամանակի մեջ տևողությունը և կարճատևությունն ի զորու չէին առաջացնելու դիմողի իրավաչափ կասկած ատենակալների անկողմնակալության վերաբերյալ: Այդ պատճառով Գերագույն դատարանը պարտավոր չի եղել փոփոխել ատենակալներին և նշանակել գործի նոր քննություն ատենակալների այլ կազմի մասնակցությամբ, որը

ձևավորվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ արդար դատարանի պահանջի հիման վրա…

***Լինդոնը, Օտչակովսկի-Լաուրենսը և Ջուլին ընդդեմ Ֆրանսիայի (Lindon, Otchakovsky-Laurens and July v. France) [GC], 21279/02 և 36448/02, 22.10.2007թ.***

77. ...Սույն գործում անկողմնակալության բացակայության կասկածը կապված է ապացույցված այն փաստի հետ, որ Փարիզի Վերաքննիչ դատարանի երեք դատավորներից երկուսը, ովքեր դատապարտել են երրորդ դիմողին զրպարտության համար՝ կապված մերժված միջնորդության հրապարակման հետ, նախկինում՝ առաջին երկու դիմողների գործով, որոշում են կայացրել նովելի երեք վիրավորական մասերի զրպարտող բնույթի վերաբերյալ, որոնք մեջբերվել են միջնորդության մեջ...

78. Դատարանը նշում է, որ եթե նույնիսկ դրանց մեջ կապ լիներ, այս երկու գործերի փաստերը տարբեր են և նույնը չեն նաև «մեղադրյալները». առաջին գործով բարձրացված հարցը հանգում է նրան, թե հրատարակիչը և հեղինակը, հրապարակելով «Ժան-Մարի Լե Պենի դատավարությունից» որոշակի հատվածներ, մեղավոր են, արդյոք, զրպարտության և այդ հանցագործությանը հանցակցելու մեջ. երկրորդ գործով Դատարանը պետք է որոշի, թե լրագրության իմաստով Լիբերասիոն հրատարակչությունն արդյոք կատարել է նույն հանցագործությունը՝ տպագրելով միջնորդության տեքստը, որը վերարտադրում էր այն նույն մասերը և որը ստորագրած անձինք, կրկնելով իրենց հավանությունը, ժխտել են իրենց կողմից զրպարտություն անելու փաստը՝ անկախ հրատարակչի և հեղինակի վերաբերյալ նման որոշման կայացումից... Բացի դրանից, պարզ է, որ առաջին երկու դիմողների վերաբերյալ կայացված դատավճիռը չի բովանդակում որևէ ենթադրություն երրորդ դիմողի մեղքի մասին...

79. Ակնհայտ է, որ երրորդ դիմողի գործով կայացված՝ 2001թ. մարտի 21-ի դատավճռում Փարիզի Վերաքննիչ դատարանը վիճարկվող մասերի զրպարտիչ բնույթի կապակցությամբ անդրադարձել է առաջին երկու դիմողների գործով 2000թ. սեպտեմբերի 13-ին կայացված դատավճռին: Սակայն, Դատարանի կարծիքով սա օբյեկտիվորեն չի փարատում երրորդ դիմողի անհանգստությունն առ այն, որ դատավորներն անկողմնակալ չեն եղել: 2000թ. սեպտեմբերի 13-ին 2000թ. սեպտեմբերի 13-ին Վերաքննիչ դատարանի կայացած առաջին դատավճռի համաձայն՝ առաջին դիմողի գրած և երկրորդի կողմից հրատարակված գրքում առկա են զրպարտիչ բնույթի որոշ մասեր: Այս կապակցությամբ այդ դատավճիռը դարձել է *res judicata*: Վերաքննիչ դատարանի երկրորդ դատավճիռը, որը կայացվել է 2001թ. մարտի 21-ին, սահմանափակված է եղել վիճարկվող այս հարցի քննարկմամբ, հավանություն է տվել այդ գրքին և քննադատել է առաջին երկու դիմողների դատապարտումը, մինչդեռ երրորդ դիմողի բա-

րեխղճության կամ անբարեխղճության հարցը, ով պատասխանատու է եղել միջնորդության հրապարակման համար, բաց է մնացել և առաջին դատավճռով չի որոշվել: Չափազանցություն կլիներ ասել, որ գործը քննող երկու դատավորները, ովքեր հաջողությամբ կայացրել են քննարկվող երկու դատավճիռները, կարող են արատավորել դատարանի օբյեկտիվ անկողմնակալությունը: Իրականում, մինչ այդ տեքստի՝ որպես զրպարտություն բնութագրելը, յուրաքանչյուր այլ դատավոր սահմանափակված պետք է լիներ *res judicata* սկզբունքով, որի համաձայն նրանց մասնակցությունը որևէ ազդեցություն չի կարող ունենալ երկրորդ դատավճռի համապատասխան մասի վրա: Իսկ ինչ վերաբերում է բարեխղճության հանգամանքին, որն ամբողջությամբ տարբերվում է այս երկու գործերով, թեև վերջիններիս միջև առկա է որոշակի կապ, սակայն որևէ ապացույցով չի հաստատվում այն, որ դատավորներն ամեն դեպքում սահմանափակված են եղել առաջին գործով տրված գնահատականներով...

80. Վերջապես, սույն գործն ակնհայտորեն անհամեմատելի է Սան Լեոնարդ Բենդ Քլաբն ընդդեմ Մալթայի (no. 77562/01 ...) գործի հետ, որի դեպքում գործը քննող դատավորները պարտավորեցվել են որոշել, թե իրենց նախկին որոշման մեջ իրենք թույլ են տվել, արդյոք, օրենքի մեկնաբանության կամ կիրառման խախտում, թե՝ ոչ, այլ կերպ ասած, դատել իրենք իրենց և որոշել օրենքի կիրառման իրենց ունակությունը:

81. Հետևաբար, որևէ կասկած, որ երրորդ անձինք կարող են ունենալ երկրորդ գործի քննության ժամանակ Վերաքննիչ դատարանի անկողմնակալության վերաբերյալ, չի կարող դիտվել օբյեկտիվորեն հիմնավորված:

*բ. Անձնական շահ*

***Դեմիկոլին ընդդեմ Մալթայի (Demicoli v. Malta), 13057/87, 27.08.1991թ.***

40. Սույն գործի հանգամանքներում, դիմողի մեղքը որոշելով՝ Ներկայացուցչիների պալատը, անկասկած, դատական գործառույթ է իրականացրել:...

41. Պալատի երկու անդամները, որոնց վարքագիծը Պառլամենտում քննադատվել էր վիճարկվող հոդվածով, և որոնք խախտել էին Պալատի գերակայությունը՝ մասնակցելով մեղադրյալի դեմ հարուցված ամբողջ վարույթին, ներառյալ մեղավորության հաստատումը և (բացառությամբ նրանցից մեկի, ով նախքան այդ մահացել էր) դատապարտումը:

Այդ իսկ պատճառով այս վարույթներով գործը քննող մարմինների անկողմնակալությունը թվում է կասկածելի, և այս կապակցությամբ դիմողի անհանգստությունն արդարացված է եղել...

42. Հետևաբար, տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում...

***Կիպրիանուն ընդդեմ Կիպրոսի (Kyprianou v. Cyprus) [GC] 73797/01, 15.12.2005թ.***

130. ...Դատարանը, համապատասխանաբար, գնահատում է դատավորների վարքագծի մի շարք ասպեկտներ, որոնք ունակ են սուբյեկտիվ գնահատականի հարց բարձրացնել:

Նախևառաջ, դատավորները դիմողի դատապարտման վերաբերյալ իրենց որոշումներում ընդունել են, որ իրենք «որպես մարդ» «խորապես ազդվել են» դիմողի կողմից..., Դատարանի կարծիքով, այս հայտարարությունն ինքնին ցույց է տալիս, որ դատավորներն անձնապես վիրավորվել են դիմողի բառերից և իրենց մասով ցուցաբերել են անձնական շահագրգռվածություն...

Երկրորդ, դատավորների կողմից որոշման մեջ արված հուզական ձևակերպումները վրդովմունքի և հուզմունքի զգացում են առաջացնում, որը հակասում է դատական որոշումներից ակնկալվող անկողմնակալ մոտեցմանը...

Երրորդ, նրանք դատավարական գործողություններ են իրականացրել հինգ օր ժամկետով ազատազրկում նշանակելու համար, որն անմիջապես է կատարվել, և որը նրանք ենթադրել են, որ «միակ համապատասխան պատասխանատվության միջոցն է»: Դատավորների կարծիքով, «ոչ համապատասխան վերաբերմունքը՝ կապված օրինական և քաղաքակիրթ որոշման հետ, որը կայացվում է դատարանների կողմից, նշանակում է դատարանների հեղինակության սասանման ընդունում»...

Չորրորդ, ավելի վաղ դիմողի հետ իրենց խորհրդակցությունների ժամանակ դատավորները կարծիք են հայտնել դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու հետ կապված քրեական հանցագործության մեջ նրա մեղավորության վերաբերյալ... [ապա] նրանք դիմողին տվել են ընտրության հնարավորություն՝ կամ հաստատել իր ասածը և պատճառաբանել, թե ինչու նրա նկատմամբ պատիժ չպետք է նշանակվի, կամ հրաժարվի դրանից: Այսպիսով, նրան փաստորեն առաջարկվել է նվազեցնել «իր վարքագծով պատճառված վնասը» և ոչ թե պաշտպանել իրեն...

131. Թեև Դատարանը չի կասկածում, որ դատավորների հետ վարվել են արդարադատության իրականացման ապահովման և դատարանակազմության ամբողջականության անհրաժեշտությունից ելնելով, և այդ նպատակով նրանք անհրաժեշտ են համարել անմիջապես պարզեցված վարույթ հարուցել, վերոգրյալ դատողությունների հիման վրա այն գտնում է, որ նրանք հաջողության չեն հասել այդ իրավիճակից իրենց դուրս բերելու հարցում:

132. Այս եզրակացությունն ավելի է ամրապնդվում՝ հաշվի առնելով վարույթների իրականացման արագությունը և դատավորների և պրն Կիպրիանուի միջև փոխհարաբերությունների կարճատևությունը:

***Լինդոնը, Օտչակովսկի-Լաուրենսը և Ջուլին ընդդեմ Ֆրանսիայի (Lindon, Otchakovsky-Laurens and July v. France) [GC], 21279/02 և 36448/02, 22.10.2007թ.***

76. ...դատավորի անձնական անկողմնակալությունը ենթադրվում է, եթե հակառակը հիմնավորող ապացույցներ չկան… Երրորդ դիմողն այս կապակցությամբ փաստարկել է, որ Փարիզի Վերաքննիչ դատարանի 2001թ. մարտի 21-ի որոշման մեջ առկա հիմնավորումներն այն մասին, որ «[միջնորդության] հեղինակները որևէ այլ նպատակ չեն հետապնդել, բացի Մեթյու Լինդոնին իրենց աջակցությունը ցուցաբերելը՝ հավանության արժանացնելով, առանց զրպարտության, մի քանի անգամ կրկնելով բոլոր մասերը, որոնք դատարանի կողմից զրպարտիչ են դիտվել, և առանց իրականում կասկածելու այդ նշումների զրպարտիչ բնույթի վերաբերյալ» ցույց է տալիս, որ դիտարկվող երկու դատավորներն անկեղծորեն և անձնապես ազդվել են այդ վիրավորական հոդվածից:

Դատարանը չի կիսում այդ կարծիքը: Նրա կարծիքով, սա ընդամենն այն գործոններից մեկ է, որը Վերաքննիչ դատարանը հաշվի է առել գնահատելու համար, թե դիմողը գործել է, արդյոք, բարեխղճորեն՝ առանց դրա հիման վրա որևէ եզրակացության հանգելու: Իրականում, երրորդ դիմողը չի դատապարտվել այն պատճառով, որ հրատարակել է այն տեքստը, որը հանգեցրել է զրպարտության համար առաջին երկու դիմողների դատապարտման, կամ այն պատճառով, որ այդպիսով օժանդակել է միջնորդագիր ներկայացնողների «իրավախախտմանը», կամ այն պատճառով, որ նա քննադատել է դիտարկվող դատավորներին, այլ նա դատապարտվել է այն բանի համար, որ, առանց պատշաճ նախնական ուսումնասիրության, ցրել է «հատկապես լուրջ պնդումներ» և հանցավոր տարրեր պարունակող տեքստ: Բացի դրանից, Դատարանը չի կարողացել 2001թ. մարտի 21-ի որոշման հիմքում գտնել անգամ թեթև նշում այն մասին, որ այս դատավորները կարող է անձնապես ազդված լինեն այդ վիրավորական հոդվածից: Այսպիսով, չկա որևէ ապացույց առ այն, որ դիտարկվող երկու դատավորները դատավճիռ կայացնելիս անձնական կանխակալ վերաբերմունք են ունեցել:

*գ. Նախադատելի հանգամանքներ*

***Փուլարն ընդդեմ Միացյալ Թագավորության (Pullar v. United Kingdom), 22399/93, 10.06.1996թ.***

37. Դա նշանակում է, որ տրիբունալի անկողմնակալության վերաբերյալ պրն Փուլարի մտավախությունը հիմնված էր այն փաստի

վրա, որ ատենակալներից մեկը՝ պրն Ֆորսիթը, աշխատել է այն կազմակերպությունում, որի հետ մեղադրող կողմի վկա պրն ՄաքԼարենը գործընկեր է եղել: Հասկանալի է, որ նման կապը մեղադրյալի համար որոշ անհանգստության առաջացման պատճառ է հանդիսացել...

39. ...պրն ՄաքԼարենի կազմակերպության կրտսեր աշխատող պրն Ֆորսիթը չէր աշխատել այն նախագծի վրա, որը հիմք էր հանդիսացել պրն Ֆորսիթին մեղադրանք ներկայացնելու համար և ծանուցվել է նիստն սկսվելուց ավելի քան երեք օր առաջ... Այս հանգամանքների ներքո, լրիվ պարզ չէ, թե օբյեկտիվ դիտորդը կարող էր, արդյոք, հետևություն անել այն մասին, որ պրն Ֆորսիթն ավելի շատ հակված էր հավատալ պրն ՄաքԼարենին, քան պաշտպանության կողմի վկաներին:

40. Ի լրումն դրա, պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ տրիբունալը առաջարկել էր մի շարք կարևոր պաշտպանության միջոցներ: Կարևոր է այն, որ պրն Ֆորսիթը եղել է ընդամենը մեկը տասնհինգ ատենակալներից, որոնք բոլորն էլ պատահականորեն ընտրվել էին տեղի բնակչությունից: Պետք է նաև կրկնել, որ շերիֆն ատենակալներին ուղղություն է տվել առ այն, որ նրանք պետք է հանգիստ գնահատական տան իրենց նեջրկայությամբ հարցաքննված բոլոր վկաների վստահելիությանը... և որ բոլոր վկաները նույն կերպ երդում են տալիս:

41. Այս հանգամանքներին հակառակ, պրն Փուլարի մտավախությունն իր գործը քննող տրիբունալի անկողմնակալության վերաբերյալ չի կարող դիտվել որպես օբյեկտիվորեն հիմնավորված:

***Կիպրիանուն ընդդեմ Կիպրոսի (Kyprianou v. Cyprus) [GC], 73797/01, 15.12.2005թ.***

127. Սույն գործը կապված է դատարանի նկատմամբ դրսևորված անհարգալից վերաբերմունքի հետ, որն ուղղված է եղել անձամբ դատավորներին: Նրանք հանդիսացել են դիմողի քննադատության ուղղակի առարկա՝ կապված դատավարության ընթացքում իրենց դրսևորած վարքագծի հետ: Ապա նույն դատավորները որոշում են կայացրել մեղադրել, քննել դիմողի վարքագծից բխող հարցերը, որոշել նրա մեղքը և պատիժ նշանակել սույն գործով՝ կապված ազատազրկման հետ: Նման իրավիճակում տուժողի, վկաների, դատախազի և դատավորի դերերի խախտումն ինքնին ակնհայտորեն կարող է դրդել օբյեկտիվորեն արդարացված անհանգստությունների՝ կապված պատմական այն սկզբունքին դատավարությունների համապատասխանության հետ, որի համաձայն՝ ոչ մեկը չի կարող իր գործով դատավոր լինել և, հետևաբար, նաև դատարանի անկողմնակալության հետ...

128. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ գործի հանգամանքներից ելնելով և քննարկելով դրա կողմից նույնացված գործառնական թերությունները՝ Ասիզների դատարանի անկողմնակալությունը

կարող է կասկած հարուցել: Այսպիսով, այս կապակցությամբ դիմողի անհանգստությունը կարող է օբյեկտիվորեն հիմնավորված դիտվել...

***էլեզին ընդդեմ Գերմանիայի** (Elezi v. Germany), 26771/03, 12.06.2008թ.*

51. Սույն գործի հանգամանքներում, ոչ պրոֆեսիոնալ դատավորների անկողմնակալությունն ապահովված է եղել բավարար երաշխիքներով... Իրենց կողմնապահության վերաբերյալ դիմողի միջնորդությունից հետո ոչ պրոֆեսիոնալ դատավորների արած հայտարարությունից բխում է, որ պալատի նախագահը, նախքան պատճենը տրամադրելը, նրանց պարզաբանել է նախնական քննության էական արդյունքների բնույթը: Նրանք հասկացել են, որ դրանում արտահայտված մեղադրանքի կողմի տեսակետը չի հանդիսացել դիմողի գործով կայացված դատավճռի հիմքը, վերջինս պետք է հիմնված լինի բացառապես հիմնական նիստի ժամանակ հետազոտված ապացույցների վրա: Ապա Դատարանը նշում է, որ ոչ պրոֆեսիոնալ դատավորները մեղադրական եզրակացության նախագծի վիճարկվող մասի վերաբերյալ տեղեկացված են եղել մինչև դիմողի գործով դատական նիստի տասնհինգերորդ օրը, և որ ավելի քան քսան հետագա նիստերն իրականացվել են դրանից հետո, որոնցով ապացույցները ներկայացվել են նախքան Շրջանային դատարանի կողմից դիմողի գործով դատավճռի հրապարակումը: Այս իմաստով պարզ է դառնում, որ ոչ պրոֆեսիոնալ դատավորները դիմողի մեղքի վերաբերյալ իրենց վերջնական գնահատականները տվել են հիմք ընդունելով դատական նիստի ժամանակ ներկայացված ապացույցները և հետազոտված փաստարկները:

52. Ապա Դատարանը գտնում է, որ դիմողը չի վիճարկել Շրջանային դատարանի անկողմնակալությունն այն փաստի պատճառով, որ վերջինս, նույն կազմով, նախկինում դատապարտել է նրա քրոջը՝ որպես հանցակցի:

53. Հետևաբար, ոչ պրոֆեսիոնալ դատավորների անկողմնակալության վերաբերյալ դիմողի անհանգստությունը չի կարող դիտվել օբյեկտիվորեն արդարացված...

*դ. Վարքագիծը դատարանում*

***Իքսն ընդդեմ Միացյալ Թագավորության** (X v. United Kingdom), 5574/72, 21.03.1975թ., DR 3, 10*

6. ...հետևյալ տարրերը կապված են.

ա. գործը քննող դատավորի կողմից 1970թ. սեպտեմբերին արտահայտված տեսակետները... այնքան մերժելի են եղել, որ կասկածներ են առաջացրել նրա անկողմնակալության վերաբերյալ: Սակայն դրանք նվազ ծայրահեղ են եղել, քան նույն դատավորի կողմից Իգրեկի գործով արտահայտված տեսակետները...

բ. Ինչ վերաբերում է ճնշմանը, որը դատավորի վերոնշյալ դատողություններով կարող էր հանգեցնել դիմողի ինքնախոստովանական ցուցմունք տալուն, գործի քննության ընթացքից պարզ է դառնում, որ, ինչպես նշված է համառոտ արձանագրություններում, պաշտպանը փաստորեն չի ահաբեկվել գործը քննող դատավորի կողմից: Ինչպես նշվել է Վերաքննիչ դատարանի կողմից… դատարանում հանդես եկած պաշտպանը «ազնվորեն և ազատորեն ընդունել է, որ չի կարող ասել, որ… Սեպտեմբերին… արված դատողությունները… ազդել են պաշտպանության կողմի փաստաբանի վրա կամ խոչընդոտել են նրա կողմից պաշտպանության հետագա պատշաճ իրականացումը»:

7. Ամբողջությամբ քննարկելով դատական նիստը՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ ի վերջո տեղի չի ունեցել դիմողի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված, անկողմնակալ դատարանի կողմից արդար դատական քննության իրավունքի խախտում:

***Ս.Գ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (C. G. v. United Kingdom), 43373/98, 19.12.2001թ.***

41. Առաջին հերթին Դատարանը գտնում է, որ թեև Ս.-ի և դիմողի ցուցմունքները, որոնք տրվել են [դատավորի] միջամտությունների արդյունքում, անկասկած, գործով ներկայացված ամենակարևոր բանավոր ապացույցներից մեկն է, այն զբաղեցրել է դատական վարույթի միայն մի մասը և տևել է երեք օր: Թեև հետագայում գործը քննող դատավորի այս միջամտությունների մի մասը Վերաքննիչ դատարանը անհիմն է համարել, սակայն մնացածների կիրառումը դիտվել է արդարացված: Դատարանն ընդունում է Վերաքննիչ դատարանի այն գնահատականը, որ թեև դիմողի պաշտպանը եղել է անհանգիստ և շփոթված,... սակայն երբևէ նրա կողմից չի խոչընդոտվել պաշտպանական ռազմավարության իրականացումը, որը նա փորձել է զարգացնել կամ խաչաձև հարցաքննությունների, կամ իր կողմից ներկայացված վկաների միջոցով: Ի լրումն դրա, Դատարանը կարևորում է այն փաստը, որ դիմողի պաշտպանն իրավասու է եղել դիմել ատենակալներին իր վերջին ճառում, որն առանց ընդհատումների տևել է 45 րոպե՝ չհաշված կարճատև ընդհատումները, որոնք հիմնավոր են եղել, և որ դիմողի պաշտպանության էությունը կրկնվել է դատարանի կողմից ամփոփում կատարելիս, թեև խիստ կրճատված ձևով:

42. Այս հանգամանքներում, Դատարանը չի գտնում, որ սույն գործով դատական միջամտությունը թեև եղել է սահմանազանցող և անցանկալի, բայց ամբողջ դատավարությունն անարդար է դարձրել:

*ե. Հայտարարություններ դատարանից դուրս*

***Լավենցն ընդդեմ Լատվիայի (Lavents v. Latvia), 58442/00, 28.11.2002թ.***

119. Դատարանը գտնում է, որ 1999 թվականի նոյեմբերի 4-ի և 5-ի Lauku avize et Respublika թերթերում հրապարակած իր հայտարարություններում, օրիորդ Ստեյներտը քննադատել է պաշտպանության կողմի վարքագիծը դատարանում: Նա գործի խնդրի վերաբերյալ ձևակերպել է իր կանխատեսումները: Իրականում նա պաշտպանել էր այդ կանխատեսումը՝ դեռևս չիմանալով, թե դատարանի դատավճիռը կլինի մեղադրական, թե՝ մասնակի արդարացման, արդյունքում բացառելով ամբողջական արդարացման հնարավորությունը: Ավելին, 1999 թվականի դեկտեմբերի 7-ի Kommersant Baltik-ում հրատարակած իր հայտարարություններում... նա իր զարմանքն է արտահայտել այն առիթով, որ դիմողը պնդել է իրեն անմեղ ճանաչել մեղադրանքի բոլոր կետերով և նրա վրա ներգործել են, որպեսզի նա ապացուցի իր անմեղությունը: Դատարանը նման հայտարարությունները դիմողի համար չի դիտում որպես բացասական գնահատական, դրանք ուղղակի կարևոր են գործի լուծման համար, որոնք խոսում են մեղադրյալի մեղավորության մասին: Դատարանը գտնում է, որ օրիորդ Ստեյներտի մատնանշած հիմնավորումների շրջանակներում նրա հայտարարությունները չեն կարող ոչ մի դեպքում համարվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան: Այսպիսով, դիմողն ունի ավելի ծանրակշիռ հիմնավորումներ դատավորի անկողմնակալության առումով:

127. ...Դատարանը գտնում է, որ նման հիմնավորումները խոսում են դիմողի մեղավորության մասին: Այնուամենայնիվ, Դատարանը կարող է իր մտահոգությունը հայտնել այն փաստի վերաբերյալ, որ վերջին ասուլիսի ժամանակ օրիորդ Ստեյներտն ստիպել է մեղադրյալին դատարանին ապացուցել իր անմեղությունը: Նման մատնանշումը հակասում է անմեղության կանխավարկածի սկզբունքին, որը համարվում է ժողովրդավարական պետության կարևորագույն սկզբունքներից մեկը:

*զ. Մամուլում տեղ գտած հրապարակումների ազդեցությունը*

***Փափոնն ընդդեմ Ֆրանսիայի (Papon v. France) (dec.), 54210/00, 15.11.2001թ.***

6. …Դատարանը նշում է, որ դիմողի գործով վարույթն իր փաստական հիմքերն ունի (Վիշի ռեժիմի ներքո Ֆրանսիայի իշխանությունների վարքագծի գնահատումը), որոնք երկար ժամանակ եղել են լուրջ տարածայնությունների առարկա, և չէր կարող ակնկալվել, որ գործի քննությունը կիրականացվի հանգիստ մթնոլորտում: Դատարանի կարծիքով, սակայն, դիմողը ցույց չի տվել, որ լրատվամիջոցներով իր դեմ քարոզ է իրականացվել այնպիսի չարությամբ, որ ազդել է կամ կարող էր ազդել ատենակալների կարծիքի և Ասիզների դատարանի դատողությունների արդյունքի վրա:

Հակառակ դրան, այս քննարկումների ինն ամիս տևողությունը և Ասիզների դատարանի կողմից կայացված դատավճիռը ենթադրում է, որ ատենակալները քվեարկել են իրենց համոզմունքներին և խղճին, ինչպես նաև հիմնավոր կասկածի առկայությունը հաշվի առնելով՝ իրենց երդմանը համապատասխան: Դատարանը նաև գտնում է, որ պետք է հաշվի առնվեր այն փաստը, որ դիմողն արդարացվել է իր դեմ առաջադրված այնպիսի լուրջ մեղադրանքից, ինչպիսին է սպանությանն օժանդակությունը և դրդչությունը...:

Բացի դրանից, Դատարանը գտնում է, որ դիմողն ինքը նաև հեռախոսային զրույցներ է ունեցել, օրինակ՝ 1996թ. դեկտեմբերին, Ասիզների դատարանի կողմից նրա նկատմամբ դատավճռի կայացումից հետո..., և որ դեռ 1993թ. նրա փաստաբանը հրապարակել էր փորձագետի եզրակացությունը, որը 1987թ. մերժվել էր Վճռաբեկ դատարանի կողմից:

***Կրաքսին ընդդեմ Իտալիայի (Craxi v. Italy), 34896/97, 05.12.2002թ.***

103. Դատարանը համարում է, որ ժողովրդավարական հասարակության մեջ անխուսափելի է այն, որ մամուլը երբեմն կատարում է շատ խիստ մեկնաբանություններ վիճահարույց գործերի վերաբերյալ, որը, ըստ դիմողի, հարցականի տակ է դնում բարձր պաշտոնյաների բարոյականությունը և գործարար ու քաղաքական աշխարհի միջև հարաբերությունները:

104. Ավելին, պետք է նշել, որ գործը քննող դատարանն ամբողջովին կազմված է եղել պրոֆեսիոնալ դատավորներից: Ի տարբերություն երդվյալ ատենակալների, վերջիններս ունեն համապատասխան կրթություն և աշխատանքային փորձ, որը նրանց թույլ է տալիս բացառել բոլոր տեսակի արտաքին ճնշումները դատավարության վրա: Մյուս կողմից, դիմողին դատապարտել են մրցակցային դատավարության արդյունքում, որի ընթացքում շահագրգիռ անձը հնարավորություն է ունեցել համապատասխան իրավասու դատական ատյանին ներկայացնել փաստարկներ, որոնք արդյունավետ կլինեն իր պաշտպանության համար: Գործում չկա ոչ մի փաստ, որը թույլ կտա մտածել, որ ներպետական օրենքի մեկնաբանության կամ կողմերի ներկայացրած փաստերի և ապացույցների գնահատման ժամանակ գործն ըստ էության քննող դատավորների համար հիմք են հանդիսացել մամուլում զետեղված հիմնավորումները:

*է. Այլ անձանց ազդեցությունը*

***Փափոնն ընդդեմ Ֆրանսիայի (Papon v. France) (dec.), 54210/00, 15.11.2001թ.***

6. …Դատարանը կրկնում է, որ ոչ քաղաքացիական կողմի վարքագիծը, ոչ կայացվելիք որոշման վրա ազդելու համար նրանց կող-

մից կիրառվող տակտիկան կամ ռազմավարությունը կարող է Պետության պատասխանատվությունն առաջացնել, եթե չի հաստատվել, որ վերջինս չի ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ կարգավորելու համար իրավիճակը, ինչը, հավանաբար, կարող է խարխլել դատարանների հեղինակությունը և անկողմնակալությունը: Դատարանը նշում է, որ սույն գործով հանրային մեղադրողը կարգապահական վարույթ է հարուցել փաստաբանի դեմ, ով բացահայտում է արել: Այն փաստը, որ նա անհրաժեշտ չի համարել Քրեական օրենսգրքի 434-16-րդ հոդվածի հիմքով մեղադրանքներ առաջադրել, Դատարանի համար որոշիչ հանգամանք չի հանդիսանում, քանի որ դիմողն ինքը կարող էր մեղադրանք առաջադրել, և, իհարկե, հետագայում այդպես էլ վարվել է՝ 1998թ. մարտի 5-ին քաղաքացիական կողմի դիմումի հետ մեկտեղ բողոք ներկայացնելով:

***Ֆարհին ընդդեմ Ֆրանսիայի (Farhi v. France), 17070/05, 16.01.2007թ.***

27. Դատարանը նշում է, որ սույն գործով դիմողի պաշտպանը խնդրել է պաշտոնապես նշել դատախազի և որոշ ատենակալների միջև իր կողմից անօրինական դիտվող փոխհարաբերության դրսևորումները...

28. …Նախագահող և մյուս դատավորները լսել են դիմողի և քաղաքացիական կողմի պաշտպաններին, գլխավոր պաշտպանին և ապա՝ մեղադրյալին: Սակայն Կառավարությունը չի նշել, թե ինչպես է այդ նիստը նպաստել փոխհարաբերության բովանդակության սահմանմանը կամ այդ ատենակալների որոշմանը: Ներպետական դատարանի պարտականությունն էր կիրառել իր իրավասության տակ գտնվող բոլոր այս միջոցները՝ փարատելու համար ցանկացած կասկած՝ կապված հայտարարվող երևույթների առկա լինելու և բնույթի հետ:

29. Դատարանը մասնավորապես գտնում է, որ միայն ատենակալներին լսելն է, որ կարող էր լույս սփռել նշված փոխհարաբերությունների բնույթի և նրանց կարծիքի վրա դրանց հնարավոր ազդեցության վրա:

### 5. Զինվորական դատարաններ

*ա. Քաղաքացիական բնակչության վերաբերյալ գործերի քննությունը*

***Էրգին ընդդեմ Թուրքիայի (Ergin v. Turkey), 47533/99, 04.05 2006թ.***

47. Զինվորական արդարադատության իրավասությունը չպետք է տարածվի քաղաքացիական բնակչության վրա, եթե չկան անվիճելի

պատճառներ նման իրավիճակն արդարացնելու համար, և եթե առկա են հստակ և կանխատեսելի իրավական հիմքեր: Նման պատճառների առկայությունը պետք է հիմնավորվի յուրաքանչյուր գործով: Բավարար չէ ներպետական օրենսդրության մեջ միայն հանցագործությունների որոշակի կատեգորիաների քննությունը վերացականորեն (*in abstracto*) զինվորական դատարանների իրավասությանը վերապահելը:

54. ...Դատարանը գտնում է՝ հասկանալի է, որ դիմողը՝ բացառապես զինվորական սպաներից կազմված դատարանի առջև կանգնած քաղաքացին, ով մեղադրվում է զինվորական ծառայության դեմ ուղղված քարոզարշավի հետ կապված հանցագործությունների մեջ, պետք է անհանգստանա բանակին պատկանող դատավորների առաջ կանգնելիս, ովքեր կարող են նույնացվել դատավարության կողմի հետ: Հետևաբար, դիմողը կարող էր իրավաչափ կասկածներ ունենալ առ այն, որ Բարձրագույն կազմի դատարանը կարող է չափազանց ազդված լինել մասնավոր դատողություններից: Դիմողի կասկածներն այդ դատարանի անկախության և անկողմնակալության վերաբերյալ կարող են, հետևաբար, դիտվել որպես օբյեկտիվորեն հիմնավորված...

*բ. Ծառայող անձնակազմի վերաբերյալ գործերի քննությունը*

***Ֆինդլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Findlay v. United Kingdom), 22107/93, 25.02.1997թ.***

75. ...Ուշադրության է արժանի այն, որ զինվորական դատարանի բոլոր անդամները, որոնք նշանակվել էին նրանց հրավիրած սպայի կողմից, ենթակա էին նրան: Նրանցից շատերը, ներառյալ նախագահը, ուղղակի և գտնվել են անմիջականորեն նրա հրամանատարության ներքո... Բացի դրանից, հրավիրող սպան իրավասու էր, իհարկե, որոշակի հանգամանքներում, լուծարել զինվորական դատարանը՝ կամ դատական քննությունից առաջ, կամ դրա ընթացքում...

76. Դատարանի անկախության և անկողմնակալության վերաբերյալ վստահությունը պահպանելու իմաստով կարևորվում են դրանց արտաքին դրսևորումները: Քանի որ զինվորական դատարանի բոլոր անդամները, որոնք որոշում են կայացրել պրն Ֆինդլեյի գործով, ենթակա են եղել հրավիրող սպային և նրա հրամանատարության ներքո են գործել, ուստի պրն Ֆինդլեյի կասկածները՝ կապված դատարանի անկախության և անկողմնակալության հետ, եղել են օբյեկտիվորեն հիմնավորված...

77. Ի լրումն դրա, Դատարանը կարևորում է այն, որ հրավիրող սպան գործել է նաև որպես «հաստատող սպա»: Այսպիսով, զինվորական դատարանի որոշումը՝ նախքան դրա վավերացումը, չի գործել, և նա իրավասու էր փոփոխել նշանակված պատիժը... Սա հակասում է այն կայուն սկզբունքին, որ պարտականություն սահմանող որոշում

կայացնելու իրավասությունը, որի կայացումը չի կարող վերապահվել ոչ դատական մարմնի, բխում է «դատարանի» էությունից և կարող է դիտվել նաև որպես 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված «անկախության» տարր...

***Կուպերն ընդդեմ Միացյալ Թագավորության (Cooper v. United Kingdom) [GC], 48843/99, 16.12.2003թ.***

117. Դատավոր-պաշտպանը, ով օրենքով սահմանված կարգով իրավաբանի որակում ունեցող քաղաքացի է, որը նշանակվում է Գլխավոր դատավոր-պաշտպանի աշխատակազմից (նույնպես քաղաքացի) Լորդ Կանցլերի կողմից և Գլխավոր պաշտպանի կողմից՝ դրա կազմից նշանակումներ են կատարվում յուրաքանչյուր զինվորական դատարան, որը նշանակվում է Գլխավոր դատավոր-պաշտպանի կողմից... գտնում է, որ հիմքեր չկան այդպես գործելու...

Դատավոր-պաշտպանը պատասխանատու է զինվորական դատարանի կողմից արդար և օրինական վարքագիծ դրսևորելու համար և նրա կարգադրությունները ապացույցների և իրավունքի բոլոր հարցերի վերաբերյալ պարտադիր են և պետք է հայտարարվեն դռնբաց դատական նիստի ժամանակ: Դատավոր-պաշտպանը չի քվեարկում ատենակալների դատավճռի համար, և հետագայում այդ դատավճիռը չի քննարկում զինվորական դատարանի այլ անդամների հետ: Սակայն վերջինս ամփոփում է ապացույցները և նախապես ուղղություն է տալիս զինվորական դատարանի այլ անդամներին, և նա կարող է չհամաձայնել ատենակալների դատավճռին, եթե գտնում է, որ այն «խախտել է օրենքը», որի գործով նա նախագահին և սովորական անդամներին հայտնել է դռնբաց դատական նիստում, որից ելնելով այդ անդամները հեռացել են դատավճիռը նորից քննարկելու համար: Դատավոր-պաշտպանը մյուս անդամների հետ հեռանում է նրանց խորհուրդ տալու, խորհրդակցելու և պատժի վերաբերյալ քվեարկելու համար...

Նման հանգամանքներում Դատարանը գտնում է, որ զինվորական դատարանում այդպիսի որակավորում և դատավարության ընթացքում նման կարևոր դերակատարություն ունեցող քաղաքացիների ներկայությունը ոչ միայն կարևոր ապահովման միջոց է, այլ նաև հանդիսանում է զինվորական դատարանում վարույթի անկախության ամենակարևոր երաշխիքներից մեկը...

***Իրֆան Բայրակն ընդդեմ Թուրքիայի (Irfan Bayrak v. Turkey), 39429/98, 03.05.2007թ.***

35. Տվյալ դեպքում նա հաստատել է, որ կարգապահական դատարանի բոլոր անդամները պաշտոնատար անձինք են, որոնք չունեն մագիստրատի կարգավիճակ, ինչպես նաև համապատասխան իրավաբանական կրթություն: Նրանք նշանակվում են զինվորական կազմակերպության հրամանատարի կամ զինվորական հաստատության

ղեկավարի կողմից, որի շրջանակներում էլ գործում է դատարանը: Այս բոլոր դատավորները գտնվում են զինվորական աստիճանակարգության ներքո: Դատարանը նշում է, որ տվյալ գործով ինչպես վերաքննիչ, այնպես էլ առաջին ատյանի դատարանի անդամներն իրենց մասնագիտության առումով պաշտոնատար անձինք չեն: Իրենց՝ որպես դատավորի, գործառույթների իրականացման ժամանակ նրանք կախման մեջ են գտնվում բարձրագույն իշխանությունից և չունեն անհրաժեշտ հատուկ երաշխիքներ, որոնք կբացառեն զինվորական աստիճանակարգության ազդեցությունն իրենց գործունեության վրա:

36. Բացի դրանից, Դատարանը նշում է, որ զորագնդի գնդապետը, ով դիմողին մեղադրում էր երկու անգամ..., համարվում էր պաշտոնատար անձանց աստիճանակարգում ամենաբարձրը և նրա նստավայրը զինվորական կարգապահական դատարանն էր:

37. Ինչ վերաբերում էր դատավորների լիազորությունների ժամկետին առնչվող երաշխիքներին, ապա Դատարանը գտնում է, որ զինվորական կարգապահական դատարանի անդամների լիազորությունների ժամկետը 1 տարի է: Այն հիշեցնում է, որ պետության անվտանգության ապահովման ընթացքում տվյալ դատարանի դատավորների լիազորությունների ժամկետը կարող է լինել 4 տարի:

38. Դատարանը հիշեցնում է, որ ընդհանուր առմամբ մենք պետք է վստահորեն նկատի ունենանք, որ դատավորների լիազորությունների ժամկետը համարվում է նրանց անկախության ապահովման անմիջական երաշխիք, և լիազորությունների այս կարճ ժամկետը չի ենթադրում անկախության բացակայություն, այլ դրա համար անհրաժեշտ է այլ հանգամանքների առկայություն ևս:

39. Տվյալ գործում մենք կարող ենք միայն հաստատել, որ անկախության այլ անհրաժեշտ հանգամանքներն առկա են:

40. Վերոնշյալ հիմնավորումներից ելնելով՝ Դատարանը գտնում է, որ դիմողի մտահոգությունները և կասկածները՝ կապված զինվորական կարգապահական դատարանի անկողմնակալության և անկախության հետ, օբյեկտիվորեն հիմնավորված են:

*գ. Ազգային անվտանգության և արտակարգ դրության դատարաններ*

***Արափ Յալգինը և այլոք ընդդեմ Թուրքիայի** (Arap Yalgin and Others v. Turkey), 33370/96, 25.09.2001թ.*

46. Դատարանն այս կապակցությամբ գտնում է, որ սույն գործի նման գործերով, որոնցով Դատարանի անդամների կազմում ներգրավվել են անձինք, ովքեր գտնվել են ենթակայության ներքո իրենց պարտականությունների իրականացման և ծառայության կազմակերպման իմաստով, դատավարության կողմերից մեկը՝ մեղադրյալները, կարող է ունենալ իրավաչափ կասկածներ այս անձանց անկախության առումով: Նման իրավիճակը լրջորեն ազդում է ժողովրդա-

վարական հասարակությունում դատարանի նկատմամբ ունեցած վստահության վրա... Ի լրումն դրա, Դատարանը մեծ կարևորություն է տալիս այն փաստին, որ քաղաքացիները պետք է կանգնեին, թեկուզ՝ մասամբ, զինված ուժերի ներկայացուցիչներ ներառող դատարանի առաջ...

47. Վերոգրյալի լույսի ներքո, Դատարանը գտնում է, որ դիմողները, որոնց առաջադրված մեղադրանքը՝ կապված Երկրի սահմանադրական կարգի խարխլման հետ, քննվել է Զինվորական իրավունքի դատարանում, կարող էին իրավաչափ պատճառներ ունենալ անհանգստանալու երկու զինվորական դատավոր և ռազմական դրության ժամանակ երկիրը կառավարող սպայի հրամանատարության ներքո գործող մեկ սպա ներառող կազմի կողմից իրենց գործի քննության համար: Այն փաստը, որ երկու քաղաքացի դատավորները, որոնց անկախությունը և անկողմնակալությունը կասկածի տակ չի առնվում, հավանության չեն արժանացրել այն, որ դատարանն այս կապակցությամբ որևէ տարբերակում չի արել...

48. Եզրակացնելով՝ Դատարանը նշում է, որ դիմողների կասկածը՝ կապված Զինվորական իրավունքի դատարանի անկախության և անկողմնակալության բացակայության հետ, կարող է դիտվել օբյեկտիվորեն արդարացված:

### 6. Փոփոխություն դատարանի կազմում

***Բարբերան, Մեսեգուե և Ջաբարդո ընդդեմ Իսպանիայի (Barberà, Messegué and Jabardo v. Spain), 10590/83, 06.12.1988թ.***

71. Լսումների նույն օրը պրն դե լա Կոնչան՝ Աուդենցիա նասիոնալի Քրեական բաժնի առաջին մասը նախագահող դատավորը, պետք է հեռանար, քանի որ նրա փեսան հիվանդացել էր, և 1981թ. հոկտեմբերի 27-ի որոշման մեջ նշված դատավորներից մեկը՝... պրն Ինֆանտը նույնպես չէր կարողացել որպես դատավոր հանդես գալ, քանի որ նա այլևս դատարանի այդ բաժնի անդամ չէր հանդիսանում: Նրանց փոխարինելէին պրն Պերեզ Լեմուրը՝ երրորդ մասը նախագահող դատավորը, և պրն Բերմուդեզ դե լա Ֆուենտեն՝ առաջին մասի անդամը...

72. Ոչ դիմողները և ոչ էլ նրանց պաշտպանները չէին ծանուցվել այս փոփոխությունների մասին, հատկապես նախագահող դատավորի փոփոխության մասին... Հայտնի է, որ պրն Պերեզ Լեմուրը պրն Բարնուեվոյի և պրն Բերմուդեզ դե լա Ֆուենտեի հետ մեկտեղ 1981թ. դեկտեմբերի 18-ին կայացրել են բացառապես դատավարական որոշում..., սակայն պաշտպանները չեն կարողացել դրա հիման վրա եզրակացություններ անել այն մասին, որ նա ևս գործը քննող դատարանի կազմում է լինելու՝ հիշելով, մասնավորապես, նախապատրաստական նիստին պրն դե լա Կոնչայի հետ իրենց հանդիպումը... Այդ պատճառով նրանք անակնկալի են եկել: Նրանք հիմնավոր կասկած

կարող էին ունենալ առ այն, որ նախագահող նոր դատավորը ծանոթ չէր ակնհայտ բարդ գործին, որում նախնական քննության նյութերը, որոնք հատկապես կարևոր էին վերջնական արդյունքի համար, կազմվում էին մոտ 1.600 էջ: Սա այսպես է, եթե նույնիսկ պրն Բարնուեվոն՝ զեկուցող դատավորը…, իր զբաղեցրած տեղում մնար ամբողջ դատավարության ընթացքում. պրն Պերեզ Լեմուրը մասնակցություն չունենար 1982թ. հունվարի 11-ին կայացած նախնական նիստին. գործով վարույթը փաստորեն ընթանար առանց ապացույցների ամբողջական հետազոտման. քննարկումները պետք է իրականացվեին լսումից անմիջապես հետո, կամ ամենաուշը հաջորդ օրը…և Աուդիենցիա նասիոնալը պետք է, և այդպես էլ արել է, իր որոշումը կայացներ եռօրյա ժամկետում….

***Մոիսեևն ընդդեմ Ռուսաստանի (Moiseyev v. Russia), 62936/00, 09.10.2008թ.***

176. Դատարանը կրկնում է, որ ներպետական դատարանների խնդիրն է այնպես իրականացնել իրենց դատավարական գործողությունները, որպեսզի երաշխավորվի արդարադատության արդյունավետ իրականացումը: Գործը որոշակի դատավորի կամ դատարանի մակագրելը նման հարցերի լուծման համար ստեղծված ներպետական իշխանությունների գնահատման սահմաններում է: Առկա են բազմաթիվ գործոններ, ինչպիսիք են, օրինակ, հասանելի ռեսուրսները, դատավորների որակավորումը, շահերի բախումը, կողմերի համար դատական լսման վայրի հասանելիությունը և այլն, որոնք իշխանությունները պետք է հաշվի առնեն գործը մակագրելիս: Թեև Դատարանի խնդիրը չէ գնահատել այն, թե արդյոք առկա են եղել բավարար հիմքեր ներպետական իշխանությունների կողմից գործը կոնկրետ դատավորի կամ դատարանի (վերա)մակագրելու համար, Դատարանը պետք է բավարարված լինի նրանով, որ նման (վերա)մակագրումը համատեղելի լինի 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ, և, մասնավորապես՝ օբյեկտիվ անկախության և անկողմնակալության պահանջների հետ…

177. Ռուսաստանի օրենսդրությունում չկա որևէ դրույթ, որը կկարգավորեր գործերի բաշխումը համապատասխան իրավասություն ունեցող դատարանի դատավորների միջև: Դատավորի կարգավիճակի մասին օրենքի 6.2-րդ բաժնի համաձայն՝ գործերի բաշխման նակտմամբ վերահսկողությունը պետք է իրականացվի դատարանի Նախագահի կողմից՝ դաշնային օրենքով նախատեսված կարգով… Սակայն նման օրենք առայսօր չի ընդունվել, և որպես ընդհանուր կանոն դատարան մուտք եղած գործերը բաշխվում են դատարանների նախագահների կողմից՝ սեփական հայեցողությամբ:

178. Այն բանից հետո, երբ գործը մակագրվել և վարույթն սկսվել է, օրենքը պահանջում է, որ գործը մնա նույն դատարանի ընդդատության տակ մինչև վերջնական որոշման կայացումը: Այս սկզբունքը

հայտնի է որպես դատարանի ընդդատության անփոփոխելիություն… և այն հնարավորություն է տալիս դատավորին, որն այլևս չի կարող մասնակցել վարույթին, մեկ այլ դատավորով փոխարինել: Այն կիրառվում է ինչպես պրոֆեսիոնալ, այնպես էլ ոչ պրոֆեսիոնալ դատավորների նկատմամբ…

179. ...դիմողի գործով գործը քննող դատավորները փոփոխվել են տասնմեկ անգամ: Գործով փոփոխվել է չորս նախագահ: Նախագահող դատավորների յուրաքանչյուր փոխարինմանը հաջորդել է երկու ոչ պրոֆեսիոնալ դատավորների փոխարինումը: Ի լրումն դրա, մի դեպքում փոխարինող ոչ պրոֆեսիոնալ դատավորը կանչվել է մասնակցելու վարույթներին, մեկ այլ դեպքում՝ նոր ոչ պրոֆեսիոնալ դատավոր պետք է նշանակվեր, որպեսզի փոխարիներ վարույթից հեռացված մեկի: Դատավարությունները նորից են սկսվել յուրաքանչյուր անգամ, երբ նոր անդամները միացել են կազմին:

180. Կառավարությունը չի պարզաբանել, թե ինչպես են դատարանի կազմի այս չափազանց շատ փոփոխությունները, ինչն ակնհայտ է դառնում Դատարան մուտքագրված ռուսական այլ քրեական գործերի հետ համեմատելիս, կարող էին համաձայնեցվել դատարանի ընդդատության անփոփոխելիության հետ, որի հիմնարար կարևորությունը նրանք շեշտադրում են: Սա Դատարանի համար չափազանց կարևոր է ոչ միայն այն պատճառով, որ նման փոփոխությունները համեմատաբար հաճախ են տեղի ունեցել, այլ այն պատճառով, որ դրանց մասին հայտնի է դարձել երկու դեպքում…

182. Նաև Դատարանը գտնում է, որ թեև մուտքագրվող գործերը դատավորների միջև վերաբաշխելու հետ մեկտեղ չավարտված վարույթով քրեական գործերը այլ նախագահող դատավորի վերամակագրելու լիազորությունը, որպես կանոն, կիրառվել է դատարանի նախագահի կողմից… օրենքը որոշակիության որևէ աստիճանով չի սահմանում այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում վերանշանակումը կարող է տեղի ունենալ: Կանխատեսելիության բացակայությունը… Մոսկվայի Քաղաքային դատարանի նախագահին տվել է անսահմանափակ հայեցողություն դիմողի գործով դատավորների տեղափոխման և վերանշանակման հետ կապված: Այս կապակցությամբ Դատարանն ընդգծում է, որ որևէ դատավարական երաշխիք չի ներկայացվել ինքնիրավ հայեցողության դրսևորման դեմ... Այսպիսով, այն չի պահանջում, որ կողմերը տեղեկացվեն գործով կատարվող վերանշանակումների վերաբերյալ կամ նրանց հնարավորություն տրվի կարծիք արտահայտել դրա վերաբերյալ… Բացի դրանից, կազմի անդամների տեղափոխությունները չեն իրականացվել որևէ դատավարական որոշման հիման վրա, որը կարող էր դատական ստուգման ենթարկվել ավելի բարձր դատարանի կողմից: Դատարանը գտնում է, որ օրենքի տեքստում որևէ դատավարական երաշխիքի բացակայությունը գործը քննող կազմի անդամներին արտաքին ճնշումների նկատմամբ խոցելի է դարձրել:

184. Ինչ վերաբերում է վերոգրյալ դատողություններին, Դատարանը գտնում է, որ դիմողի գործով Ռուսաստանի քրեական օրենսդրությունը չի ապահովել այնպիսի երաշխիքներ, որոնք բավարար կլինեին բացառելու համար որևէ օբյեկտիվ կասկած իրենց դատական պարտականություններն իրականացնելիս դատավորների վրա ոչ պատշաճ ճնշումների բացակայության վերաբերյալ… Այս հանգամանքներում դիմողի կասկածները գործը քննող դատարանի անկախության և անկողմնակալության վերաբերյալ, կարելի է ասել, եղել են օբյեկտիվորեն արդարացված՝ հաշվի առնելով նրա քրեական գործը քննող կազմի կրկնվող և հաճախակի փոփոխությունները, որոնք իրականացվել են անորոշ պատճառներով և չեն սահմանափակվել դատավարական երաշխիքներով:

185. Հետևաբար, դատարանի անկախության և անկողմնակալության բացակայության կապակցությամբ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

### 7. Դատարանի դահլիճը

***Սթենֆորդն ընդդեմ Միացյալ Թագավորության (Stanford v. United Kingdom), 16757/90, 23.02.1994թ.***

29. Նաև դիմողը պնդել է, որ Կառավարությունն է կրում դատարանի դահլիճում վատ լսելիության համար պատասխանատվությունը: Թեև սա Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով հարցի բարձրացման հանգամանք է, փորձագետի եզրակացությունները, որոնք կատարվել են երկուստեք՝ դիմողի բողոքարկումից առաջ և հետո, ցույց են տալիս, որ անկախ ապակե պատուհանի պատճառով ձայնի նվազագույն կորստից, դատարանի դահլիճում ձայնի լսելիությունը բավարար է եղել…

30. Վերջապես, պետք է կրկնել, որ դիմողը ներկայացված է եղել փաստաբանի և պաշտպանի կողմից, ովքեր դատավարության ընթացքում որևէ դժվարություն չեն ունեցել, և ովքեր անգամ հնարավորություն են ունեցել դիմողի հետ քննարկել ապացույցի հետ կապված ցանկացած հանգամանք, որը դեռևս չէր նշվել վկայի ցուցմունքում: Բացի դրանից, դատական նիստի արձանագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նա արհեստավարժ կերպով պաշտպանվել է իր փաստաբանի կողմից, և որ գործը քննող դատավորն ատենակալների համար գործն ամփոփել է արդարացիորեն և ամբողջականորեն արտացոլել է դատարանում ներկայացված ապացույցները:

31. Ի լրումն դրա, Վերաքննիչ դատարանին, որը քննել է գործը… չէր կարող այդ հանգամանքներում հիմնավորված պահանջ ներկայացվել շտկելու գործի քննության ժամանակ թույլ տրված թերությունները, որոնց վերաբերյալ գործը քննող դատավորը նշում չի կատարել…

32. Վերոգրյալի լույսի ներքո, Դատարանը եզրակացնում է, որ Միացյալ Թագավորությունը դիմողին արդար դատական քննություն տրամադրելիս խախտում թույլ չի տվել:

### 8. Վարչական պատիժների վերանայումը

***Կանադին ընդդեմ Սլովակիայի (Čanády v. Slovakia), 53371/99, 16.11.2004թ.***

32. Սույն գործով դիմողը տուգանվել է 1990թ. Ոչ մեծ ծանրության հանցագործությունների մասին օրենքով սահմանված կարգով՝ Լիպտովսկի Միուլասի զինվորական ակադեմիայի ռեկտորի կողմից, որտեղ նա աշխատել է: Այս որոշումը վերանայվել է Պաշտպանության նախարարության կողմից: Այսպիսով, քննարկվող որոշումները կայացվել են այնպիսի վարչական մարմինների կողմից, որոնք... օժտված չեն եղել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով անկախ և անկողմնակալ դատարանի հատկանիշներով: Քանի որ 1990թ. Ոչ մեծ ծանրության հանցագործությունների մասին օրենքի 83(1)-րդ բաժնի և Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 248(2)(f)-րդ հոդվածի դրույթները, որոնք գործել են տվյալ ժամանակահատվածում, կանխել են նման որոշումն ընդհանուր իրավասության դատարանի կողմից քննելը, և հաշվի առնելով, որ Սահմանադրական դատարանը չի շտկել վիճարկվող իրավիճակը, Դատարանը եզրակացնում է, որ դատարանի կողմից դիմողի՝ իր գործի քննության իրավունքը խախտվել է:

## II. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐ

### 1. Բովանդակությունը

***Բարբերան, Մեսեգուե և Ջաբարդո ընդդեմ Իսպանիայի (Barberà, Messegué and Jabardo v. Spain), 10590/83, 06.12.1988թ.***

78. … Ի լրումն դրա, 6-րդ հոդվածի առարկան և նշանակությունը …, ինչպես նաև 3-րդ մասի որոշ կետերի ձևակերպումները…, ցույց են տալիս, որ հանցագործության մեջ մեղադրվող անձը «իրավունք ունի մասնակցել նիստին և իրավունք ունի, որ իր գործը լսվի» «տրիբունալի» կողմից իր ներկայությամբ… Դատարանը եզրակացնում է… որ բոլոր ապացույցները, սկզբունքորեն, պետք է ներկայացվեն մեղադրյալի մասնակցությամբ տեղի ունեցող հասարակական լսման ժամանակ՝ նպատակ ունենալով ապահովել մրցակցային փաստարկների ներկայացումը: Պետք է պարզվի, թե արդյոք սա կատարվել է նշված գործում…

89 Հիմք ընդունելով… առաջին հերթին, այն հանգամանքը, որ ապացույցների շատ կարևոր մասեր բավարար չափով չեն ներկա-

յացվել և քննակվել դիմողների ներկայությամբ և հասարակության աչալուրջ հսկողության ներքո իրականացված վարույթի ընթացքում, Դատարանը եզրակացնում է, որ քննարկվող վարույթները՝ ամբողջությամբ վերցրած, չեն բավարարում արդարության և հասարակական լսումների վերաբերյալ պահանջները: Հետևաբար, տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում…

***Ռիեպանն ընդդեմ Ավստրիայի (Riepan v. Austria), 35115/97, 14.11.2000թ.***

29. …Դատարանը գտնում է, որ վարույթը համարվում է հրապարակայնության պահանջները պահպանած, եթե միայն հասարակությանը հնարավորություն է ընձեռված տեղեկություն ստանալ դրա ժամանակի և տեղի վերաբերյալ, և եթե այդ վայրը հասարակության համար դյուրին հասանելի է: Շատ դեպքերում այս պայմանները կպահպանվեն այն պարզ պատճառով, որ եթե լսումն իրականացվի սովորական դատարանի դահլիճում, որը բավականաչափ մեծ է և դրանում դիտորդները կկարողանան տեղավորվել: Սակայն Դատարանը գտնում է, որ սովորական դատարանի դահլիճից դուրս վարույթի իրականացումը, խոսքը վերաբերում է, մասնավորապես, այնպիսի վայրի, ինչպիսին կալանավայրն է, որտեղ սովորական հրապարակային, սկզբունքորեն, տեղ չունի, լուրջ խոչընդոտներ է առաջացնում դրա հասարակական բնույթի համար: Նման գործերով Պետությունը պարտավոր է փոխարինող միջոցներ իրականացնել՝ համոզվելու համար, որ հասարակությունը և լրատվության միջոցները պատշաճ կերպով տեղեկացվել են լսման տեղի վերաբերյալ և արդյունավետ մասնակցության հնարավորություն են ստացել:

30. …Դատարանը նշում է, որ լսումները ներառված են եղել Ստեուրի Շրջանային դատարանի մեկ շաբաթվա լսումների ցուցակում, ինչը, անկասկած, նշում է պարունակել այն մասին, որ լսումները տեղի են ունենալու Գարսթեն բանտում… Այս ցուցակն ուղարկվել էր լրատվության միջոցներին, իսկ հասարակությունն այդ մասին տեղեկացվել էր Շրջանային դատարանի գրասենյակից և հայտարարությունների տախտակից: Սակայն այս ընդհանուր ծանուցումից բացի, որևէ այլ մասնավոր միջոցառում չէր իրականացվել, ինչպիսին է, օրինակ, Շրջանային դատարանի հայտարարությունների տախտակին փակցված առանձին տեղեկությունն այն մասին, թե ինչպես հասնել Գարսթեն բանտ, ինչպես նաև հստակ նշում այն մասին, թե որոնք են մասնակցության պայմանները: Բացի դրանից, լսման իրականացման մյուս պայմանները հազիվ թե խրախուսեին հասարակության մասնակցությունը. այն իրականացվել է վաղ առավոտյան, մի սենյակում, որը լսարան ընդունելու համար չափազանց փոքր չէր, սակայն սովորական դատարանի դահլիճի նման կահավորված չի եղել:

31. Այսպիսով, Դատարանը գտնում է, որ Ստեուրի Շրջանային դատարանը չի ձեռնարկել համապատասխան փոխարինող միջոցմ-

ներ՝ հավասարակշռելու համար այն վնասակար ազդեցությունը, որը դիմողի գործի հրապարակայնության վրա ունեցել է Գարսթեն բանտի փակ տարածքում անցկացված լսումը:

Հետևաբար, 1996թ.ի հունվարի 29-ի լսումները չեն կատարվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ հրապարակայնության պահանջներին համապատասխան...

***Կրաքսին ընդդեմ Իտալիայի (Craxi v. Italy) (No 2), 25337/94, 17.07.2003թ.***

57. 1995թ. սեպտեմբերի 29-ին կայացած լսման ժամանակ հեռախոսային խոսակցությունների լսման բովանդակությունը հրապարակելը և մամուլի համար դրա բացահայտելը հանգեցրել են դիմողի՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքի խախտմանը...

60. Դատարանը նշում է, որ դիմողը պարսավում է, մասնավորապես, այն հանգամանքը, որ 1995թ. սեպտեմբերի 29-ին մամուլը հրապարակել է Համմամետում լսված իր հեռախոսային որոշ խոսակցությունների բովանդակությունը:

66. Դատարանը գտնում է, որ սույն գործով մամուլում հրապարակված խոսակցությունների մի մասը խիստ անձնական բնույթ ուներ: Դրանք վերաբերում էին փաստաբանի, նախկին գործընկերոջ, քաղաքական կողմնակցի և պրն Բերլուսկոնիի կնոջ հետ դիմողի և նրա կնոջ փոխհարաբերություններին: Դրանց բովանդակությունը չնչին կապ ուներ կամ, կարելի է ասել, ընդհանրապես կապված չէր դիմողին առաջադրված քրեական մեղադրանքների հետ...

67. Դատարանի կարծիքով, մամուլում դրանց հրապարակումը կապված չէ սոցիալական անհրաժեշտությամբ: Հետևաբար, Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքների խախտումները չեն համապատասխանում այն իրավաչափ նպատակներին, որոնք պետք է հետապնդվեն, և, հետևաբար, այս դրույթի երկրորդ մասի իմաստով «անհրաժեշտ չեն եղել ժողովրդավարական հասարակությունում»...

***Ստեֆանելին ընդդեմ Սան Մարինոյի (Stefanelli v. San Marino), 35396/97, 08.02.2000թ.***

20. Սույն գործով լսումները, որոնց ժամանակ վկաները ցուցմունքներ են տվել, անցկացվել են առաջին ատյանի դատարանում, և, ինչպես Կառավարությունն է նշել, դիմողի պահանջի դեպքում կարող են վերաքննության կարգով բողոքարկվել: Այնուամենայնիվ, Դատարանը գտնում է, որ բանավոր քննությունը կատարվել է ոչ թե գործով որոշում կայացնելու իրավասություն ունեցող... այլ գործը քննող դատավորի առաջ,... ով կոչված էր գործով նախնական քննություն իրականացնել: Գործով որոշում կայացնելու իրավասություն ունեցող դատավորի առաջ վարույթն իրականացվել է առանց հասարակական

լսման՝ ինչպես առաջին ատյանում, այնպես էլ վերաքննիչ դատարանում:

21. Թեև Կառավարությունը չի հիմնվել այս դրույթի վրա, Դատարանը նշում է, որ 6-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասության իմաստով մամուլը և հասարակությունը որոշ հանգամանքներում կարող են բացառվել գործով վարույթից: Դատարանը նշում է, որ այն փաստը, որ որևէ լսում չի իրականացվել, հանդիսացել է ոչ թե դատավորի որոշման, այլ գործող օրենքի կիրառման արդյունք: Սակայն քննարկելով գործի հանգամանքները և դիմողի պնդած բացթողումները, Դատարանն այն կարծիքն է արտահայտում, որ ամբողջ հանգամանքներից ոչ մեկն այդ դրույթներում ամրագրված հանգամանքների նկատմամբ կիրառելի չէ:

22. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, քանի որ գործը քննող և վերաքննիչ դատարանների կողմից դիմողի գործը չի քննվել հրապարակավ:

### 2. Սահմանափակումներ, որոնք ներառում են հրաժարումը

***Էռնստը և այլոք ընդդեմ Բելգիայի (Ernst and Others v. Belgium), 33400/96, 15.07.2003թ.***

67. Իրականում Բելգիայում նախաքննությունը կրում է գաղտնի բնույթ: Դա հիմնավորվում է հետևյալով: Մի կողմից, դա համարվում է կարևոր երաշխիք բոլոր անմեղ համարվող անձանց անձնական կյանքի և հոգեկան անձեռնմխելիության առումով, մյուս կողմից՝ ապահովվում է իրականացվող նախաքննության արդյունավետությունը: Հետևաբար, երբ դատական ատյանը որոշում է կայացնում որպես նախաքննության մարմին, ապա դատական նիստը, որպես կանոն, անցկացվում է դռնփակ և որոշումը չի հրապարակվում դռնբաց: Այս պարագայում չի երևում, որ դիմողները պահանջել են դրա հրապարակում կամ չեն բողոքարկել դռնփակ դատական նիստի անցկացման դեմ:

68. Դատարանը գտնում է, որ նախաքննության գաղտնիությունը պայմանավորված է հետևյալով: Նախ՝ դրանով պաշտպանվում է դատավարության մասնակիցների անձնական կյանքի անձեռնմխելիությունը և որը 6-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ մասի իմաստով բխում է արդարադատության շահերից:

Բացի դրանից, այն բացահայտել է, որ դիմողների գործն ամբողջական քննությունից հետո բողոքարկվել է վերաքննիչ դատարանում, որը համարվում է դատական որոշում կայացնող դատական ատյան, ամբաստանյալները և դիմողները որպես քաղաքացիական հայցվորներ ունեին ամբողջ դատավարության հրապարակայնության իրավունք: Այն հիշեցնում է, որ այս առումով եթե 6-րդ հոդվածն ուժի մեջ է մտել գործն ըստ էության քննելուց առաջ, ապա դրա կիրառման ձևե-

րը նախաքննության ընթացքում կախված էր կոնկրետ հանգամանքներից և դատավարության առանձնահատկություններից:

Ընդհանրացնելով՝ դատարանը գտնում է, որ տվյալ գործի դռնփակ քննության անցկացման թույլտվությունը՝ դատաքննության հրապարակման առումով, չի խախտում 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների պահանջները:

***Հերմին ընդդեմ Իտալիայի (Hermi v. Italy) [GC], 18114/02, 18.10.2006թ.***

78. Սակայն Դատարանը գտնում է, որ նիստերը հրապարակային չեն եղել պարզեցված քննության կիրառման արդյունքում, որը կիրառվել է դիմողի կամավոր խնդրանքի հիման վրա: Պարզեցված քննությունն անվիճելի առավելություններ է նախատեսում մեղադրյալի համար. դատապարտման դեպքում նրա պատիժն էականորեն նվազեցվում է, և դատախազությունը չի կարող պատժի հետ կապված բողոք ներկայացնել… Մյուս կողմից, պարզեցված վարույթը հանգեցնում է ներպետական օրենսդրությամբ նախատեսված դատավարական երաշխիքների նվազեցման, դա վերաբերում է, մասնավորապես, լսումների հասարակական բնույթին և Գլխավոր դատախազի գրասենյակի կողմից գործում չներառված ապացույցներ ձեռք բերելու խնդրանք ներկայացնելու հնարավորությանը:

79. Դատարանը գտնում է, որ դիմողը, ով իր ընտրությամբ երկու պաշտպան է ունեցել, անկասկած, ունակ է եղել հասկանալու պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ իր խնդրանքի հետևանքները: Բացի դրանից, չի երևում, որ այս վեճը հասարակական շահի հետ որևէ առնչություն է ունեցել՝ այդպիսով խոչընդոտելով վերոնշյալ դատավարական երաշխիքներից հրաժարվելուն…

80. ...Իտալիայի օրենսդրության մեջ պարզեցված վարույթի ամրագրումն ուղղված է բացառապես քրեական դատավարության պարզեցմանը և արագացմանը…

81. Վերոգրյալ դատողությունների լույսի ներքո, այն փաստը, որ առաջին և երկրորդ ատյաններում գործի քննությունն անցկացվել է դռնփակ և, հետևաբար՝ առանց հասարակության ներկայացուցիչների մասնակցության, չի կարող դիտվել որպես Կոնվենցիայի խախտում…

***Մ.-ն ընդդեմ Ֆրանսիայի (M. v. France), 10147/82, 04.10.1984թ., DR 40***

166. Դիմողն *inter alia* վիճարկել է, որ Ասիզների դատարանում նախագահող դատավորը, իրականացնելով իր հայեցողության իրավունքը, թույլատրել է, որ գործի նյութերի որոշ փաստաթղթեր ցուցադրվեն դատարանի դահլիճի հեռուստացույցների փակ ցանցով: Նա վիճարկել է, որ հակասելով քննության բանավորության սկզբունքին, այն նախ խախտել է իր գործը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին համապատասխան քննելու իր

իրավունքը… Վճռաբեկ դատարանի 1982թ. ապրիլի 21-ի դատավճռից պարզ է դառնում, որ Ասիզների դատարանն այդ ընթացակարգը կիրառել է հանցագործության վայրի քարտեզը և լուսանկարները միաժամանակ ատենակալներին, դատավորներին, գլխավոր պաշտպանին, վնասների հատուցում պահանջող կողմերին և նրանց փաստաբաններին, ինչպես նաև մեղադրյալին և նրա պաշտպանին ցույց տալու համար:

Թեև դիմողը վիճարկել է այդպիսի վարույթը, որի ժամանակ գործի նյութերը հրապարակվել են և այդպիսով կարող էին ազդել ընդհանուր սրահում գտնվող անձանց և ատենակալների կարծիքի վրա, դրա տարածման մասին տեղեկությունից Հանձնաժողովի համար ակներև չէ, թե ինչպես է այդ գործընթացը վնաս պատճառել վարույթի օրինականությանը և, այդպիսով, նաև՝ արդարությանը, հատկապես, քանի որ փաստաթղթերը եղել են գործի նյութերում, և պաշտպանության կողմը պարտավոր էր դրանց մասին տեղյակ լինել:

### 3. Տեղեկացում դատավճռի վերաբերյալ

***Սուտերն ընդդեմ Շվեյցարիայի (Sutter v. Switzerland), 8209/78, 22.02.1984թ.***

31. 1889թ. օրենքի 197-րդ բաժնի համաձայն՝ Վճռաբեկ զինվորական դատարանի 1977թ. հոկտեմբերի 21-ին կայացրած դատավճիռը տրամադրվել է կողմերին, սակայն չի հրապարակվել դռնբաց դատական նիստում...

34. …յուրաքանչյուր ոք, ում համար դա հետաքրքրություն է ներկայացնում, կարող է ծանոթանալ Զինվորական վճռաբեկ դատարանի դատավճռի ամբողջական տեքստին կամ ձեռք բերել դրա պատճենը. բացի դրանից, այնպիսի կարևոր դատավճիռները, ինչպիսին է Սուտերի գործով կայացված որոշումը, հետագայում հրատարակվում են պաշտոնական ժողովածուներում: Դրա դատական պրակտիկան, հետևաբար, որոշ դեպքերում բաց է հասարակական վերահսկողության համար:

Ինչ վերաբերում է Զինվորական վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով քննարկված հարցերին և վերջինիս որոշմանը, որի արդյունքում Վերաքննիչ դատարանի որոշումը վերջնական էր դարձել և ոչինչ չէր փոփոխվել պրն Սուտերի վերաբերյալ դրա հետևություններում, 6-րդ հոդվածի 1-ին մասի տառացի մեկնաբանությունը..., որը վերաբերում է դատավճռի կայացմանը, շատ կոշտ է թվում և ոչ անհրաժեշտ 6-րդ հոդվածի նպատակներին հասնելու համար...

Այսպիսով, Դատարանը համաձայն է Կառավարության և Հանձնաժողովի մեծամասնության հետ՝ եզրակացնելով, որ Կոնվենցիան չի պահանջում դատավարության վերջին փուլում կայացված դատավճռի բարձրաձայն հրապարակում:

***Քեմփբելը և Ֆելն ընդդեմ Միացյալ Թագավորության (Campbell and Fell v. United Kingdom), 7819/77 և 7878/77, 28.06.1984թ.***

89. …դիմողը վիճարկել է այն փաստը, որ Դիտորդների Խորհուրդը չի հրապարակել իր գործով կայացված որոշումը...

91. Այլ գործերով Դատարանն ասել է, որ պարտադիր չէ տառացի մեկնաբանել «հրապարակայնորեն» բառը. յուրաքանչյուր գործով «դատավճռի» հրապարակման ձևը, որը կատարվել է պատասխանող Պետության ներպետական օրենսդրությանը համապատասխան, պետք է գնահատվի քննարկվող վարույթների առանձնահատուկ գծերի լույսի ներքո՝ վկայակոչելով 6-րդ հոդվածի 1-ին մասի նպատակը... այս գործով, մասնավորապես, անհրաժեշտ է համոզվել, որ առկա է եղել արդարադատության իրականացման նկատմամբ հասարակական վերահսկողություն՝ արդար դատական քննության ապահովմամբ...

92. Սակայն սույն գործով պարզ չէ, թե ինչ քայլեր են ձեռնարկվել Դիտորդների Խորհրդի որոշումը հրապարակային դարձնելու համար: Հետևաբար, այս կապակցությամբ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

***Լամաննա ընդդեմ Ավստրիայի (Lamanna v. Austria), 28923/95, 10.07.2001թ.***

33. Սույն գործով Զալցբուրգի Շրջանային դատարանի 1994թ. հոկտեմբերի 10-ի որոշումը, որը թեև կայացվել էր դիմողի կողմից ներկայացված հատուցման պահանջի դռնբաց դատական նիստից հետո, չէր հրապարակվել, քանի որ հիմնված էր նրա արդարացման վերջնական որոշման վրա: Դրա փոխարեն այն տրամադրվել էր գրավոր՝ 1994թ. նոյեմբերի 4-ին: Լինցի Վերաքննիչ դատարանի 1995թ. փետրվարի 1-ի որոշումը, որն ամփոփում էր Շրջանային դատարանի որոշումը և, հիմնավորելով վերջինիս կողմից 1969թ. օրենքի 2-րդ բաժնի 1-ին մասի (b) կետի կիրառումը, դատարանի որոշումը ճանաչել է վերջնական, ի սկզբանե տրամադրվել է գրավոր և հասարակությանը չի ներկայացվել այլ կերպ: Սակայն Գերագույն դատարանի՝ 2000թ. նոյեմբերի 9-ի դատավճռից հետո այն հրապարակվել է 2001թ. փետրվարի 9-ին:

34. Քննարկելով ընդհանուր առմամբ հատուցման վարույթները, ինչպես նաև դրանց առանձնահատուկ գծերը, Դատարանը գտնում է, որ 6-րդ հոդվածի 1-ին մասի նպատակները, հատկապես դատարանի որոշումը հասարակության վերահսկողության առարկա դարձնելը, այդպիսով հասարակությանը հնարավորություն տալով հասկանալ, թե ինչպիսին է սովորաբար դատարանների մոտեցումը կալանավորման համար փոխհատուցման հայցերին, սույն գործով ապահովվել է վերաքննիչ դատարանի որոշման հրապարակման միջոցով:

Հետևաբար, տեղի չի ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

Տե՛ս նաև ստորև՝ **C.XI.5**

### 4. Տեղեկացում սահմանափակումների վերաբերյալ

***Զեթն ընդդեմ Ֆինլանդիայի (Z v. Finland), 22009/93, 25.02.1997թ.***

113. Ի վերջո, Դատարանը պետք է քննարկի այն, թե առկա են եղել, արդյոք, հիմնավոր պատճառներ արդարացնելու համար Վերաքննիչ դատարանի դատավճռում դիմողի անձը և նրա՝ ՄԻԱՎ վարակակիր լինելու փաստը բացահայտելը, ինչի արդյունքում այն հայտնի էր դարձել մամուլին...

Ֆինլանդիայի համապատասխան օրենսդրության համաձայն Վերաքննիչ դատարանը պետք է ողջամտություն ցուցաբերեր՝ առաջին հերթին դատավճռում չհիշատակելով որևէ անուն, որը թույլ կտար անհատականացնել դիմողին և, երկրորդ՝ որոշ ժամանակով ամբողջական պատճառաբանությունը գաղտնի պահելով, դրա փոխարեն հրապարակեր պատճառաբանությունների կրճատված տարբերակը, այն է՝ ներածական մասը և կիրառված օրենքի նշումը...

Անկախ այն բանից, թե դիմողն արդյոք անձամբ խնդրել էր Վերաքննիչ Դատարանին չհիշատակել իր անձը և իր առողջական վիճակը, նրա փաստաբանը տեղեկացրել էր դատարանին գաղտնիության պահպանման վերաբերյալ պահանջ՝ տասը տարի այն պահպանելու նրա ցանկության մասին... Սրանից ակնհայտորեն բխում է, որ նա դեմ կլիներ քննարկվող տեղեկության վերաբերյալ հասարակության իրազեկելուն:

Այս հանգամանքներում... Դատարանը չի գտնում, որ վիճարկվող հրապարակումը որևէ հիմնավոր պատճառով անհրաժեշտ է եղել: Հետևաբար, քննարկվող տեղեկության հրապարակումը հանգեցրել է դիմողի՝ 8-րդ հոդվածով երաշխավորված անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը...

***Ուորմն ընդդեմ Ավստրիայի (Worm v. Austria), 22714/93, 29.08.1997թ.***

52. Վերաքննիչ դատարանի դատավճիռն ուղղված չի եղել պրն Անդրոշի դատավարության ընթացքի վերաբերյալ հասարակությանն օբյեկտիվորեն տեղեկացնելու վերաբերյալ դիմողի իրավունքի սահմանափակմանը: Նրա քննադատությունը, ըստ էության, ուղղված է եղել այն անցանկալի գնահատականին, որ դիմողը տվել է նախկին նախարարի կողմից գործի քննության ընթացքում տրված պատասխանին, որը հանդիսանում է Մամուլի մասին օրենքի 23-րդ բաժնի իմաստով տրված ցուցմունքի տարր...

54. Անդրադառնալով Պետության գնահատման սահմանին՝ Վերաքննիչ դատարանի համար սկզբունքային էր որոշել այն հավանականությունը, որ ոչ պրոֆեսիոնալ դատավորներն ի վերջո կարդալու էին հոդվածը, քանի որ այն պետք է պարզեր, թե ինչ հանցավոր մտադրություն էր ունեցել դիմողը դա տպագրելով... այն փաստը, որ

ներպետական օրենսդրությունը, ինչպես դա մեկնաբանվել է Վիեննայի Վերաքննիչ դատարանի կողմից, չի պահանջում, որպեսզի ապացուցվի մասնավոր վարույթի վրա դրա իրական ազդեցության արդյունքների առկայությունը... չի նվազեցնում պաշտպանության նպատակով արդարադատության մարմինների միջամտության հիմնավորումը...

57. Հաշվի առնելով տուգանքի չափը և այն փաստը, որ հրատարակող կազմակերպությունը պարտավորեցվել է ինչպես համատեղ, այնպես էլ առանձին մասնակցել դրա վճարմանը..., նշանակված պատիժը չի կարող դիտվել որպես հետապնդվող օրինական նպատակին անհամաչափ:

58. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ ներպետական դատարաններն իրավասու էին դիմողի դատապարտումը և պատիժը դիտել «ժողովրդավարական հասարակությունում համար անհրաժեշտ»՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով պահպանելու համար երկուստեք արդարադատության հեղինակությունը և անկողմնակալությունը:

***Նյուս Վերլագս ԳմՀՏ-ն և ՔօԿԳ-ն ընդդեմ Ավստրիայի (News Verlags GmnH & CoKG v. Austria), 31457/96, 11.01.2000թ.***

58. Դատարանն ընդունում է, որ կարող են լինել հիմնավոր պատճառներ հենց կասկածյալի նկարը հրատարակելու համար՝ հիմնված քննարկվող հանցագործության բնույթի և գործի մասնավոր հանգամանքների վրա... Սակայն այդ կապակցությամբ որևէ պատճառ Վիեննայի Վերաքննիչ դատարանի կողմից չէր ներկայացվել:

59. Իրավամբ... սահմանված արգելքները որևէ կերպ չեն սահմանափակել դիմողի կազմակերպության իրավունքը հրատարակելու Բ.-ի դեմ հարուցված քրեական գործի վերաբերյալ մեկնաբանություններ: Սակայն դրանք սահմանափակել են դիմողի կազմակերպության ընտրությունը՝ կապված իր զեկույցների ներկայացման հետ, մինչդեռ անվիճելի է, որ մյուս լրատվամիջոցներն ազատ են եղել շարունակելու տպագրել Բ.-ի նկարները նրա դեմ հարուցված քրեական վարույթի ընթացքում: Անդրադառնալով այս հանգամանքներին և ներպետական դատարանների կարծիքին առ այն, որ դիմողի կազմակերպության կողմից օգտագործված նկարները չէ, որ խախտել են Բ.-ի իրավունքները, այլ դրանց համադրությունը տեքստի հետ, Դատարանը գտնում է, որ Բ.-ի նկարները տպագրելու բացարձակ արգելքն ավելին է եղել, քան անհրաժեշտ էր զրպարտությունից կամ անմեղության կանխավարկածի խախտումից Բ.-ին պաշտպանելու համար: Այսպիսով, հիմնավոր կապ չկա Վիեննայի Վերաքննիչ դատարանի կողմից սահմանված արգելքների և հետապնդված իրավաչափ նպատակների համաչափության միջև:

60. Այս դատողություններից բխում է, որ միջամտությունը դիմողի կազմակերպության ազատ արտահայտվելու իրավունքին «անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում»:

***Դաբրովսկին ընդդեմ Լեհաստանի (Dabrowski v. Poland), 18235/02, 19.12.2006թ.***

33. …Երեք հոդվածներում դիմողը զեկուցել է տեղական պաշտոնյայի նկատմամբ հարուցված՝ դեռևս չավարտված վարույթների և Օստրոդայի Շրջանային դատարանի հետագա դատավճռի վերաբերյալ: Դատարանը գտնում է, որ հոդվածների բովանդակությունը և տոնը՝ ամբողջությամբ, արդարացիորեն հավասարակշռված են եղել...

34. Դատարանը նաև համաձայն է, որ դիմողների հայտարարությունների մի մասը եղել են արժեքավոր դատողություններ հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ, որոնք, չի կարելի ասել, որ զուրկ են եղել որևէ փաստական հիմքից: Բացի դրանից, դիմողի հայտարարությունները չեն հանդիսացել անցանկալի անձնական ոտնձգություններ այդ պաշտոնյայի նկատմամբ: Անհրաժեշտ է նաև նշել, որ քննարկվող հայտարարությունների նպատակը հանդիսացել է քննադատվող անձի մեղքի հաստատումը կամ նվաստացումը:

35. …ներպետական դատարանները… չեն անդրադարձել այն հարցին, որ դիմողը, որպես լրագրող, պարտավոր էր տեղեկություն և դատողություններ ներկայացնել քաղաքական հարցերի և հասարակական հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի վերաբերյալ, և դրա իրականացման ժամանակ նա հնարավորություն ուներ դիմելու որոշ աստիճանի չափազանցության: Նաև Դատարանը նշում է, որ ո՛չ առաջին ատյանի, ո՛չ վերաքննիչ դատարանը հաշվի չեն առել այն փաստը, որ պրն Լուբազևսկին, լինելով պաշտոնատար անձ, պետք է քննադատության նկատմամբ ավելի բարձր աստիճանի հանդուրժողականություն ցուցաբերեր: Եզրակացնելով՝ Դատարանն այն կարծիքն է հայտնում, որ ներպետական դատարանների կողմից ներկայացված պատճառները չեն կարող դիտվել որպես հիմնավոր և բավարար արդարացնելու համար քննարկվող միջամտությունը:

36. …չնայած որ դիմողի նկատմամբ նշանակված պատիժը համեմատաբար մեղմ է եղել (1,000 PLN տուգանք և ծախսերի հատուցում՝ 300 PLN չափով, որը հավասար է մոտավորապես 330 EUR-ի), և թեև նրա նկատմամբ հարուցված վարույթները պայմանականորեն դադարեցվել են, այնուամենայնիվ, ներպետական դատարանները գտել են, որ դիմողը կատարել է զրպարտության հետ կապված քրեական հանցանք: Դրա արդյունքում դիմողը դատվածություն է ձեռք բերել: Բացի դրանից, դատարանի կողմից չլուծված է մնացել վարույթների վերաբացման հարցը՝ նրա նկատմամբ նշանակված փորձաշրջանի ցանկացած պահին, եթե օրենքով սահմանված հանգամանքները դա կպահանջեն...

37. Բացի դրանից, քանի որ պատիժը չի կանխել դիմողի կողմից իր կարծիքը հայտնելը, նրա դատապարտումը, այնուամենայնիվ, հանգեցրել է որոշակի վերահսկողության սահմանման, որը կարող էր խոչընդոտել ապագայում նրա կողմից նման քննադատության իրականացմանը: Նման դատապարտումը կարող էր հետ պահել լրագրողներին հասարակության կյանքի վրա ազդեցություն ունեցող հարցերի հրապարակային քննարկումներին աջակցելուց: Նույն կերպ այն իրավասու է խոչընդոտել մամուլի կողմից տեղեկատվություն տարածելու իր իրավասություններն իրականացնելուն և որպես հասարակական հսկողություն իրականացնող հանդես գալուն...

Հիմք ընդունելով վերոգրյալ դատողությունները՝ դիմողի դատապարտումը անհամաչափ է եղել հետապնդված օրինական նպատակին՝ կապված մասնավորապես մամուլի ազատության ապահովման և պահպանման՝ ժողովրդավարական հասարակության շահի հետ:

***Դուպուիսը և այլոք ընդդեմ Ֆրանսիայի (Dupuis and Others v. France), 1914/02, 07.06.2007թ.***

44. ...Իրավաչափ է, որ առանձնահատուկ պաշտպանություն տրամադրվի գործի դատական քննության գաղտնիությանը՝ հաշվի առնելով քրեական դատավարությունում կարևորվող ինչպես արդարադատության իրականացումը, այնպես էլ նախնական քննության մեջ ներգրավված անձի անմեղության կանխավարկածի ապահովումը: Սակայն սույն գործի հանգամանքներում Դատարանը գտնում է, որ 1996թ. հունվարին, այսինքն՝ այն ժամանակ, երբ հանցագործության առարկա գիրքը հրատարակվել է, արդեն առկա է եղել լրատվական բավականին մեծ ցանց, այսպես կոչված, «Էլիզեի գաղտնալսումները» գործի վերաբերյալ, արդեն հանրահայտ էր, որ Գ.Մ.-ն ներգրավվել էր նախնական քննությանը մի գործով, որը հարուցվել էր մոտ երեք տարի առաջ և որն ի վերջո հանգեցրել էր նրա դատապարտմանը և նրա նկատմամբ 2005թ. նոյեմբերի 9-ին, այսինքն՝ գրքի հրատարակումից մոտ ինը տարի և իննն ամիս հետո ազատազրկման հետ կապված պայմանական պատիժ նշանակելուն: Բացի դրանից, Կառավարությունը ցույց չի տվել, թե ինչպես սույն գործի հանգամանքներում գաղտնի տեղեկության բացահայտումը կարող էր բացասաբար անդրադառնալ Գ.Մ.-ի անմեղության կանխավարկածի վրա կամ գրքի հրատարակումից մոտ տասը տարի անց ազդել նրա նկատմամբ պատիժ նշանակելու վրա: Իրականում վիճարկվող գրքի հրատարակումից հետո և դատական քննության ընթացքում Գ.Մ.-ի գործը հաճախ մեկնաբանվել է բազմաթիվ հոդվածներում: Այս հանգամանքներում դրա գաղտնիության հետ կապված տեղեկության պաշտպանությունը չի հանդիսացել գերակա պահանջ:

45. Այս կապակցությամբ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ թեև դիմողների՝ վերլուծության հետ կապված հանցագործության համար դատապարտումը հիմնված է եղել նախաքննության

նյութերից կազմված ամբողջ փաստաթղթերի վերարտադրության և օգտագործման վրա և որը համապատասխանաբար դիտվել է որպես նախնական քննության գաղտնիության և մասնագիտական գաղտնիքի խախտում, սակայն այդ դատապարտումն անխուսափելիորեն վերաբերել է տեղեկության բացահայտմանը: Չլուծված է մնում այն հարցը, սակայն, թե արդյոք եղել է որևէ անհրաժեշտություն կանխել այն տեղեկության բացահայտումը, որն արդեն թերևս մասամբ հասանելի է եղել հասարակությանը… և արդեն պետք է որ հայտի լիներ շատ մարդկանց… կապված գործի փաստերի և քննարկվող հեռախոսային խոսակցությունների լսման շատ զոհերի վերաբերյալ մամուլում տրված լուսաբանման հետ:

46. Նաև Դատարանը գտնում է, որ ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ է լուրջ հոգածություն ցուցաբերել նախաքննության գաղտնիության կամ մասնագիտական գաղտնիքի խախտմամբ ձեռք բերված տեղեկություն օգտագործած լրագրողներին պատժելու անհրաժեշտության գնահատման նկատմամբ այն ժամանակ, երբ այդ լրագրողներն աջակցել են նման կարևոր հասարակական քննարկումներ անցկացնելուն և այդպիսով իրականացրել են ժողովրդավարության «հսկիչի» իրենց պարտականությունը: 10-րդ - հոդվածը պաշտպանում է լրագրողների իրավունքները տարածելու հասարակական հետաքրքրություն ներկայացնող նման տեղեկություն, եթե նրանք գործել են բարեխիղճ և պատշաճ փաստական հիմնավորմամբ և լրագրության էթիկային համապատասխան տրամադրել են «արժանահավատ և հստակ» տեղեկություն… Սույն գործով, դիմողների անվիճելի փաստարկներից երևում է, որ նրանք գործել են իրենց՝ որպես լրագրողների մասնագիտությունը կանոնակարգող չափանիշներին համապատասխան, քանի որ վիճարկվող հրատարակումը կապված է եղել ոչ միայն քննարկվող առարկայի, այլ նաև տրամադրվող տեղեկության արժանահավատության հետ՝ կապված դրա հստակության և արժանահավատության հիմնավորման համար ներկայացված ապացույցների հետ…

48. Դատարանը... նշում է, որ երկու հեղինակներից յուրաքանչյուրի նկատմամբ նշանակվել է 762.25 եվրո տուգանք, և համապարտության կարգով նրանք պարտավորեցվել են վճարել 7.622.50 եվրո՝ որպես Գ.Մ.-ին պատճառված վնասի հատուցում: Ի լրումն դրա, դիմող ընկերությունը ճանաչվել է քաղաքացիական պատասխանող: Սակայն որևէ կարգադրություն գրքի ոչնչացման կամ առգրավման վերաբերյալ չի եղել և դրա հրատարակությունը չի արգելվել… Այսպիսով, տուգանքի չափը, թեև ենթադրաբար արդարացիորեն էր որոշվել և վնասների փոխհատուցումը լրացնում էր այն, սակայն գործի հանգամանքներից ելնելով՝ դրանք չի կարելի դիտել արդարացված… Ավելին, ինչպես Դատարանը բազմիցս նշել է, արտահայտվելու ազատությաը միջամտությունը կարող է «ճնշող ազդեցություն» ունենալ

այդ ազատության իրականացման վրա…, ազդեցություն, որը կարող է ժխտվել տուգանքի համեմատաբար չափավոր բնույթով:

49. Եզրակացնելով՝ Դատարանը գտնում է, որ դիմողների նկատմամբ կայացված դատավճիռն անհամաչափ միջամտություն է նրանց արտահայտվելու իրավունքին և, հետևաբար, այն, որպես այդպիսին, անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում:

## III. ԱՊԱՑՈՒՅՑՄԱՆ ՕԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ

### 1. Կասկածյալը շահում է հիմնավոր կասկածից

***Կապեոն ընդդեմ Բելգիայի (Capeau v. Belgium), 42914/98, 13.01.2005թ.***

25. …Այդ կապակցությամբ Դատարանը գտնում է, որ քրեական գործերով ապացույց ձեռք բերելու ամբողջ գործընթացը պետք է քննարկվի 6-րդ հոդվածի 2-րդ մասի լույսի ներքո և պահանջի, *inter alia*, որ ապացուցման բեռը դրվի դատախազության վրա... Հետևաբար, Չհիմնավորված նախնական կալանքի վերաքննության հանձնաժողովի պատճառաբանություններն անհամապատասխան են եղել անմեղության կանխավարկածի պահպանմանը:

### 2. Կանխավարկածները և ծանրության տեղափոխումը

***Սալաբիակուն ընդդեմ Ֆրանսիայի (Salabiaku v. France), 10519/83, 07.10.1988թ.***

30. …Պարզ է... որ դիտարկվող դատարանները զգույշ են եղել և խուսափել են ինքնաբերաբար դիմել Մաքսային օրենսգրքի 392-րդ - հոդվածի 1-ին մասում ամրագրված կանխավարկածին: Ինչպես Վճռաբեկ դատարանն է նշել 1983թ. փետրվարի 21-ի իր դատավճռում, նրանք իրականացրել են գնահատման իրենց իրավունքը՝ «կողմերի (իրենց) ներկայացրած ապացույցների հիման վրա»: Նրանք եզրակացություններ են արել «կանխավարկածի տիրապետման փաստից, որը հետագայում չի ժխտվել որևէ ապացույցով՝ կապված այնպիսի դեպքի հետ, որի համար պատասխանատվությունը չէր կարող դրվել հանցանք կատարած անձի վրա կամ որից նա անկարող կլիներ խուսափել»… Բացի դրանից, ինչպես Կառավարությունն է նշել, ներպետական դատարանները գործի հանգամանքներում հայտնաբերել են որոշ «դիտավորության տարրեր», եթե անգամ նրանք ըստ օրենքի պարտավոր չեն եղել այդ անել դիմողին դատապարտելու համար:

Դրանից բխում է, որ այս փուլում Ֆրանսիայի դատարանները չեն կիրառել Մաքսային օրենսգրքի 392-րդ հոդվածի 1-ին մասն այդ կերպ, ինչը հակասել է անմեղության կանխավարկածին:

***Ֆամ Հոանգն ընդդեմ Ֆրանսիայի (Pham Hoang v. France), 13191/87, 25.09.1992թ.***

34. …Պրն Ֆամ Հոանգը… կարող էր փորձել ցույց տալու, որ «գործել է անհրաժեշտությունից ելնելով կամ անխուսափելի սխալի արդյունքում»… Նրա պատասխանատվության կանխավարկածն անժխտելի չէ…:

35. Բացի դրանից, իր դատավճռում... Վերաքննիչ դատարանը չի մեջբերել իր որոշման պատճառաբանություններում Մաքսային օրենսգրքի վիճարկվող դրույթներից մեկն այն ժամանակ, երբ որոշել է մեղադրյալի մեղքի հարցը, եթե անգամ այն ըստ էության որպես հիմք է ընդունել 399-րդ և 409-րդ հոդվածները և դատողություն արել այն մասին, որ նա ունեցել է «շահ մաքսատուրքերը վճարելուց խուսափելու հարցում» և մեղավոր է մաքսային հանցանք կատարելու փորձի մեջ... Դատարանը վեր է հանել դիմողի ձերբակալության հանգամանքները և հաշվի առել փաստերի ամբողջությունը...

36. Հետևաբար, պարզ է դառնում, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ կերպով կշռադատել է ներկայացված ապացույցները, հանգամանորեն գնահատել դրանք և մեղավորության վերաբերյալ իր դատողությունները հիմնել է դրանց վրա: Այն ձեռնպահ է մնացել Մաքսային օրենսգրքի համապատասխան դրույթների հիման վրա ձևավորված ցանկացած կանխավարկածի վրա ինքնաբերաբար հիմնվելուց և չի կիրառել դրանք Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի հետ անհամատեղելի ձևով...:

***Ջոն Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (John Murray v. United Kingdom), 18731/91, 08.02.1996թ.***

54. Դատարանի կարծիքով, ինչ վերաբերում է դիմողի դեմ ներկայացված ապացույցների կշռին... ապա նրա՝ տանը գտնվելու հանգամանքն ապացուցելու նպատակով ձերբակալման, ոստիկանությունում կամ դատարանում հարցաքննության ժամանակ նրա լռություն պահպանելը վկայակոչելը հանդիսացել է հասարակական նշանակություն ունեցող հարց և այս հանգամանքներում չէր կարող դիտվել անարդար կամ չհիմնավորված: ...բազմաթիվ պետություններում, որտեղ ապացույցները ենթակա են ազատ գնահատման, դատարանները գործով ձեռք բերված ապացույցների գնահատման ժամանակ կարող են անդրադառնալ գործին վերաբերող բոլոր հանգամանքներին՝ ներառյալ մեղադրյալի վարքագծին կամ պաշտպանության եղանակին: Այն գտնում է, որ եզրակացություններ անելիս՝ Կարգադրության իմաստով տարբերակիչ հանգամանք է հանդիսանում այն, որ, ի լրումն վերոնշյալ առանձնահատուկ երաշխիքների, այն սահմանում է նաև, ինչպես նշվել է Հանձնաժողովի կողմից, «ֆորմալ համակարգ, որը նպատակ է հետապնդում թույլատրել, որ ողջամիտ ենթադրություները լուրջ դերակատարություն ունենալն ապացույցների գնահատման ժամանակ»:

Հակառակ այս հանգամանքների, չի կարելի ասել, որ դիմողի վարքագիծը թույլ է տվել հիմնավոր եզրակացություններ անել այն մասին, որ դրանով դատախազությունից պաշտպանության կողմի վրա է դրել ապացուցման ծանրությունը՝ այդպիսով խախտելով անմեղության կանխավարկածի սկզբունքը:

56. …Անմիջապես ձերբակալությունից հետո դիմողը Կարգադրության դրույթներին համապատասխան նախազգուշացվել է, սակայն նախընտրել է լռություն պահպանել: Դատարանը... գտնում է, որ որևէ նշում չկա այն մասին, որ դիմողը չի հասկացել նախքան իր փաստաբանին հանդիպելը ոստիկանի կողմից իրեն արված նախազգուշացման կարևորությունը: Այս հանգամանքներում այն փաստը, որ իր կալանավորման առաջին 48 ժամվա ընթացքում մերժվել է դիմողի՝ փաստաբան ունենալը, չի բխում վերոնշյալ դատողությունից առ այն, որ եզրակացությունները չեն եղել անարդար կամ չհիմնավորված...

Այնուամենայնիվ, փաստաբան ունենալու իրավունքից հրաժարվելու հարցը ազդեցություն է ունեցել պաշտպանության իրավունքի վրա, որը պահանջել է առանձին քննություն... (տե՛ս վերը՝ **B.V.1**)

***Ռադիո Ֆրենսն ընդդեմ Ֆրանսիայի (Radio France v. France), 53984/00, 30.03.2004թ.***

24. …Հետևաբար, ինչպես Կառավարությունը նշել էր, հրատարակչության տնօրենի արարքի հանցավորությունը բացառող հանգամանք է այն, որ նա հիմնավորի հանցավոր արարք կատարած անձի բարեխղճությունը, կամ ապացուցի, որ դրանց բովանդակությունը նախքան հաղորդումը պարզ չէր. դիմողները նման փաստարկներ ներպետական դատարաններում ներկայացրել են:

Հիմք ընդունելով դա և հաշվի առնելով կարևորվող հանգամանքը, այն է՝ մամուլի միջոցով և հրապարակիչ տնօրենի կողմից նախնական վերահսկողության իրականացման պայմաններում զրպարտության կամ վիրավորական արտահայտությունների և արարքների մեղսագրման արդյունավետ կանխման անհրաժեշտությունը, Դատարանը գտնում է, որ 1982թ. օրենքի 93-3 բաժնի հիման վրա սահմանված պատասխանատու լինելու կանխավարկածը գործում է «ողջամիտ սահմանների» չափանիշի ներքո:

Ոչինչ չի լրացնում այն, որ ներպետական դատարանները լուրջ ուշադրություն են դարձրել դիմողների փաստարկներին՝ կապված երրորդ դիմողի բարեխղճության և պատասխանատվությունից ազատող այն հանգամանքի հետ, որ վիրավորական հայտարարություններն ի սկզբանե նախատեսված չեն եղել, ուստի Դատարանը եզրակացնում է, որ սույն գործով նրանք չեն կիրառել 1982թ. օրենքի 93-3 բաժինն այնպես, որ խախտվի անմեղության կանխավարկածը:

***Ֆոլկն ընդդեմ Նիդեռլանդների (Falk v. Netherlands) (dec.) 66273/01, 19.10.2004թ.***

Սույն գործով գնահատելով, թե արդյոք ուշադրություն է դարձվել համաչափության այս սկզբունքին, Դատարանը հասկացել է, որ վիճարկվող պատասխանատվության կանոնը կիրառվել է (մեքենայի գրանցված սեփականատիրոջ նկատմամբ) ապահովելու համար անվտանգ ճանապարհային երթևեկությունը, քանի որ տեխնիկական կամ այլ միջոցներով քննվող ճանապարհատրանսպորտային հանցանքը, որը կատարվել է մի վարորդի կողմից, ում ինքնությունը տվյալ ժամանակահատվածում չի կարող պարզվել, չի մնալու անպատիժ, քանի որ պատշաճ կերպով պահպանվում է այն կանոնը, որ նման հանցանքների կատարման մեջ մեղադրելու և պատժելու ոչ պատշաճ բեռը չի դրվելու ներպետական դատական իշխանության ներկայացուցիչների վրա: Նաև այն նշում է, որ... տվյալ անձը չի մնացել առանց պաշտպանության որևէ միջոցի՝ կապված օրենքի 8-րդ հոդվածի վրա հիմնված փաստարկներ ներկայացնելու հետ, կամ վիճարկելու, որ տվյալ ժամանակահատվածում ոստիկանությունն իրական հնարավորություն է ունեցել կանգնեցնել մեքենան և պարզել վարորդի ինքնությունը:

…Դատարանը չի կարող գտնել, որ օրենքի 5-րդ հոդվածը, որը պարտավորեցնում է մեքենայի գրանցված սեփականատիրոջը գնահատել մեկ այլ անձի իր մեքենան օգտագործել թույլ տալու հետ կապված պատասխանատվությունը, չի համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասին: Դատարանը, հետևաբար, այն կարծիքն է հայտնում, որ ներպետական իշխանությունները՝ սույն գործով դիմողի նկատմամբ տուգանք նշանակելով, չեն խախտել անմեղության կանխավարկածը:

***Գրեյսոնը և Բարնհամն ընդդեմ Միացյալ Թագավորության (Grayson and Barnham v. United Kingdom), 19955/05 և 15085/06, 23.09.2007թ.***

37. *Ֆիլիպսն ընդդեմ Միացյալ Թագավորության* (թիվ 41087/98 ...) վճռում Դատարանը նշել է, որ 1994թ. օրենքի հիման վրա առգրավում կատարելու կարգադրություն անելը նման է պատժի նշանակման գործընթացին: 6-րդ հոդվածի 1-ին մասը, որը վերաբերում է ամբողջ դատավարությանը և կիրառելի է «…ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ», հետևաբար, ներառում է նաև այն վարույթները, որոնց ընթացքում պատիժ է նշանակվում…

38. Դատարանը կրկնում է, որ 1994թ. օրենքի հիման վրա հարուցված վարույթի առաջին փուլի ընթացքում դատախազության վրա էր դրված, ելնելով հավանականությունների հավասարակշռությունից, պարզել, թե դիմողը ծախսել, թե ստացել էր որոշակի գումար հանցագործությունն սկսելուն նախորդած վեց տարիների ընթացքում: Պատիժ նշանակող դատարանին խնդրվել է, օրենքի 4-րդ բաժնի իմաստով, գնահատել, որ այս դրամական փոխանցումները կամ

ծախսերն առաջացել են թմրամիջոցների ապօրինի շրջանառությունից: Ծանրությունն ապա փոխանցվել էր պաշտպանության կողմին՝ կրկին ելնելով հավանականությունների հավասարակշռությունից, ցույց տալու, որ գումարն օրինական ծագում ունի…

42. Դատարանի խնդիրն է 1994թ. օրենքի հիման վրա առգրավման կարգադրություն տալու վարույթը ներառող գործով պարզել, թե այն եղանակը, որով սույն գործով արվել են օրենքի վրա հիմնված ենթադրությունները, խախտել է, արդյոք, 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված արդար դատական քննության հիմնարար սկզբունքը ... Դատարանի խնդիրն է հավաստել, թե ամբողջությամբ վերցրած դատավարությունները, ներառյալ ապացույցների ձեռքբերման եղանակները, արդար են եղել...

45. Այս վարույթների ընթացքում պաշտպանության իրավունքն ապահովվել է այդ համակարգում ներառված երաշխիքներով: Այսպիսով, յուրաքանչյուր գործով դատարանի կողմից ենթադրությունն արվել է այնպիսի դատավարական ընթացակարգով, որը ներառել է հասարակական լսումները, մեղադրանքի կողմի տեսակետի հրապարակման առաջարկումը և դիմողի՝ փաստաթղթեր և բանավոր ցուցմունքներ ներկայացնելու հնարավորությունը... Յուրաքանչյուր դիմող ներկայացվել էր իր ընտրած փաստաբանի կողմից: Դատախազության վրա էր դրված ապացուցման ծանրությունը, որ դիմողը քննության առարկա ունեցվածքը ձեռք էր բերել տվյալ ժամանակահատվածում: Թեև դատարանն օրենքով սահմանված կարգով պարտավոր էր ենթադրել, որ այդ ունեցվածքը ձեռք էր բերվել թմրամիջոցների ապօրինի շրջանառության արդյունքում, այդ ենթադրությունը կարող էր ժխտվել, եթե դիմողն ապացուցեր, որ ունեցվածքը ձեռք է բերվել օրինական ճանապարհով: Բացի դրանից, դատավորի հայեցողությանն էր թողնվել ենթադրության վրա չհիմնվելը, եթե նա գտնի, որ դրա վրա հիմնվելը կարող է արդարադատության իրականացումից հրաժարվելու լուրջ վտանգ առաջացնել...

46. ...Դատարանը չի գտնում, որ յուրաքանչյուր գործով, 6-րդ հոդվածով սահմանված արդար դատական քննության հասկացությանն սկզբունքորեն կամ գործնականում անհամապատասխան է եղել դիմողի վրա դնել այն գումարի և ունեցվածքի ծագման աղբյուրի օրինականության ապացուցման ծանրությունը, որը նա տիրապետել է հանցագործությանը նախորդող տարիների ընթացքում՝ հաշվի առնելով այն, որ նա նախկինում դատապարտված է եղել թմրամիջոցների հետ կապված հանցագործության համար:

Հիմք ընդունելով վերոգրյալ երաշխիքների առկայությունը՝ նրա վրա դրված ծանրությունը չի գերազանցել ողջամիտ սահմանները:

47. Վարույթի երկրորդ փուլը ներառել է դիմողին հասանելի իրացվելիք ունեցվածքի հաշվարկը: Այս փուլում օրենսդրությունը չի պահանջում, որ պատիժը նշանակող դատարանը ենթադրություններ անի հանցավոր անցյալի վերաբերյալ. դրա փոխարեն այն պետք է

գնահատի դիմողի միջոցները կարգադրություն անելու ժամանակ:... այս փուլում ապացուցման ծանրությունն ընկնում է մեղադրյալի վրա, և նա պետք է քաղաքացիական չափանիշներին համապատասխան ցույց տա, որ այն գումարը, որը պետք է իրացված լիներ, պակաս է եղել այն գումարից, որը գնահատվել է որպես եկամուտ:

48. Սույն գործով դիմողներից յուրաքանչյուրը նախընտրել է բանավոր ցուցմունքներ տալ իր՝ գումարի փոխարկման ենթակա ունեցվածքի վերաբերյալ: Կրկին, նրանք առավելություն են ունեցել՝ կապված վերոնշյալ երաշխիքների հետ: Նրանք օրենքով սահմանված կարգով ներկայացվել են և դատավորների մանրամասն որոշումներով տեղեկացվել, թե ինչ հաշվարկի արդյունքում է եկամուտների չափը որոշվել: Յուրաքանչյուր դիմողի հնարավորություն է տրվել ներկայացնել իր ֆինանսական վիճակը և նկարագրել, թե ինչ է տեղի ունեցել այն ունեցվածքի հետ, որը դատավորը եկամուտների չափը որոշելիս հաշվի է առել:...

49. Դատարանը համաձայն է... որ քրեական դատավարությունում արդար դատական քննության գաղափարի հետ անհամատեղելի չի եղել այն, որ յուրաքանչյուր դիմող պարտավորեցվել է իր առկա ֆինանսական վիճակի մասին արժանահավատ տեղեկություն տրամադրել: Յուրաքանչյուր դեպքում ապացուցվել է, որ դիմողները ներգրավված են եղել թմրամիջոցների երկարատև և եկամտաբեր ապօրինի շրջանառության մեջ, ուստի անիմաստ էր ակնկալել, որ նրանք կբացատրեին, թե ինչ է պատահել այն ամբողջ գումարի հետ, որ, ինչպես ցույց է տրվել դատախազի կողմից, նրանք տիրապետել են, ավելի անիմաստ էր դատավարության առաջին փուլում ակնկալել, որ նրանք ցույց կտան այդ գումարի կամ ունեցվածքի ծագման աղբյուրի օրինականությունը: Դիմողները տեղյակ են եղել նման հանգամանքների մասին և նրանցից յուրաքանչյուրի վրա դրված պարտականությունների կատարումը դժվար չէր լինի, եթե նրանց ֆինանսական գործունեության վերաբերյալ հաշիվները ճշմարիտ լինեին:

50. Հետևաբար, յուրաքանչյուր դիմողի կապակցությամբ տեղի չի ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

### 3. Ինքնախոստովանության արգելքը

***Սաունդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Saunders v. United Kingdom), 19187/91, 17.12.1996թ.***

74. ...Հասարակական շահը չի կարող վկայակոչվել արդարացնելու համար ոչ դատական քննության ընթացքում կիրառված հարկադրանքի միջոցների արդյունքում ձեռք բերված պատասխանները դատական քննության ընթացքում անձին մեղսագրելու համար: Այս կապակցությամբ ուշադրության է արժանի այն, որ համապատասխան օրենսդրության իմաստով հարկադրանքի կիրառման արդյունքում Առանձնապես մեծ չափերի խարդախությունների դեմ պայքարի

բյուրոյի կողմից ձեռք բերված ցուցմունքներն անձի նկատմամբ հետագայում հարուցված վարույթի ընթացքում, որպես կանոն, չեն կարող դիտվել որպես ապացույց: Բացի դրանից, այն փաստը, որ քրեական դատավարությունում հետագայում կիրառվել են դիմողի այն ցուցմունքները, որոնք նա տվել է նախքան իրեն մեղադրանք առաջադրելը, չի խոչընդոտում իրավունքի խախտման առկայությունը սահմանելուն:

75. …բազմաթիվ դատավարական երաշխիքները, որոնք վկայակոչվել են պատասխանող Կառավարության կողմից... սույն գործով չեն կարող ապահովել այդպիսի պաշտպանություն, քանի որ չեն իրականացվել կանխելու համար հետագայում հարուցված քրեական դատավարության ընթացքում այդ ապացույցների օգտագործումը:

76. Հետևաբար, սույն գործով տեղի է ունեցել անձի՝ իր դեմ ցուցմունք չտալու իրավունքի խախտում:

***Տիրադո Օրտիզը և Լոզանո Մարտինն ընդդեմ Իսպանիայի (Tirado Ortiz and Lozano Martin v. Spain) (dec.), 43486/98, 22.06.1999թ.***

1. Դիմողները փաստարկել են այն, որ իրենց դատապարտումը՝ կապված շնչառության ստուգման իրականացմանը մասնակցելու վերաբերյալ կարգադրության կատարումը մերժելու հետ, խախտել է քրեական հանցագործության մեջ մեղադրվող անձի կողմից իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը... Իր դեմ ցուցմունք չտալու իրավունքն առաջին հերթին վերաբերում է մեղադրվող անձի՝ լռություն պահպանելու կամքը հարգելու հետ... այն չի տարածվում քրեական դատավարությունում այնպիսի նյութերի օգտագործման վրա, որոնք կարող են ստացվել մեղադրյալից հարկադրանքի կիրառման միջոցով, որոնք, սակայն, պետք է իրականացվեն անկախ կասկածյալի կամքից *inter alia* այնպիսի փաստաթղթերի հիման վրա, որոնք կարգադրությանը համապատասխան թույլատրում են վերցնել շնչառության, արյան և մեզի նմուշներ, ինչպես նաև մարմնական նյութեր ԴՆԹ հետազոտություններ իրականացնելու համար... Սույն գործով Դատարանը նշում է, որ խնդրո առարկա իրավական դրույթները հիմնված են համանման սկզբունքի վրա:

Դատարանը նաև նշում է, որ ոստիկանները խնդրել են շնչառության ստուգումներ իրականացնել, քանի որ նրանք կասկածել են, որ դիմողները հանցանք են կատարել: Ավելին, տարբեր երաշխիքներ են ներկայացվել ստուգման արդյունքների ինքնիրավ և ոչ պատշաճ կիրառման դեմ: Բացի դրանից, հարբածության աստիճանի ստուգումները Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ճանապարհատրանսպորտային օրենսդրության համաձայն հաճախ են կիրառվում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ քննարկվող իրավական դրույթները, որոնք վիճարկվել են դիմողների գործով, չեն բացահայտում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի որևէ խախտման առկայություն:

## IV. ՎԿԱՆԵՐ

### 1. Լսելու պարտականություն

***Կրաքսին ընդդեմ Իտալիայի (Craxi v. Italy), 34896/97, 05.12.2002թ.***

83. Բացի դրանից, քանի որ դիմողը հաստատում է, որ պ. Ժաչինի Բատագալիան պաշտպանության կողմի վկա էր, Դատարանը գտնում է, որ պ. Կրաքսին չի մատնանշել այն հանգամանքները, որոնց մասին նա պետք է վկայություն տար: Փաստորեն, նա չի ցույց տվել, որ այդ վկայի հարցաքննումն անհրաժեշտ է եղել ճշմարտությունը պարզելու համար, և որ նրան հարցաքննելու մասին բողոքի մերժումը խախտել է դիմողի պաշտպանության իրավունքները

***Պոպովն ընդդեմ Ռուսաստանի (Popov v. Russia), 26853/04, 13.07.2006թ.***

184. Դատարանը նշում է, որ դիմողը խնդրել է իրեն թույլատրել դատարան կանչել մի քանի վկա, ովքեր, ըստ նրա, կարող են հաստատել իր այլուրեքությունը… Սակայն դատարանը մերժել է վկաների ցուցմունքներն այն հիմքով, որ լինելով դիմողի բարեկամները՝ նրանք փորձել են օգնել նրան…

185. Դատարանը նաև նշում է, որ մերժելով տիկին Ռ.-ին և պրն Խ.-ին [ովքեր բարեկամներ չեն հանդիսացել] հարցաքննելը՝ գործը քննող դատարանը չի քննարկել այն հարցը, որ նրանց ցուցմունքները կարող են կարևոր լինել գործի քննության համար: Սակայն, ելնելով այն փաստից, որ պաշտպանության նախորդ միջնորդությունները՝ կապված նրանց հարցաքննության հետ, բավարարվել են և նրանց ինչպես նախնական, այնպես էլ դատական քննության ընթացքում ֆորմալ առումով շատ ժամանակ է տրվել, դրանից բխում է, որ ներպետական իշխանությունները համաձայնել են, որ նրանց ցուցմունքները վերաբերել են գործին:

188. ...Հաշվի առնելով այն, որ դիմողի դատապարտումը հիմնված է եղել նրա դեմ տրված հակասական ցուցմունքների վրա՝ Դատարանը գտնում է, որ ներպետական դատարանների կողմից պաշտպանության վկաների հարցաքննությունը մերժելը՝ առանց վկայակոչելու նրանց ցուցմունքների վերաբերելիությունը, հանգեցրել է պաշտպանության իրավունքի սահմանափակման, ինչը համատեղելի չէ 6-րդ հոդվածում ամրագրված երաշխիքների հետ…

### 2. Անաչառություն

***Դուրսոնն ընդդեմ Նիդեռլանդների (Doorson v. Netherlands), 20524/92, 26.03.1996թ.***

71. ...Թեև, ինչպես դիմողը նշել է, որևէ ենթադրություն չկա առ այն, որ Y.15-ի և Y.16-ի վրա դիմողի կողմից երբևէ ազդեցություն չի գործադրվել, նրանց անանունությունը պահպանելու վերաբերյալ որոշումն ինքնին չի կարող դիտվել որպես անհիմն: Ուշադրության է արժանի այն փաստը, որ, ինչպես նշել են ներպետական դատարանները և չի վիճարկվել դիմողի կողմից, թմրամիջոցների ապօրինի իրացմամբ զբաղվող անձինք հաճախ դիմել են անօրինական ազդեցության կամ փաստացի բռնությունների իրենց դեմ ցուցմունք տված անձանց... Բացի դրանից, վկաների արած հայտարարությունները, որոնք վերաբերել են գործը քննող դատավորին, ցույց են տալիս, որ նրանցից մեկի նկատմամբ նախկինում ակնհայտորեն ազդեցություն է ունեցել թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող մի անձ, ում դեմ նա ցուցմունք է տվել, իսկ մյուսին վնաս է պատճառվել...

Ընդհանուր առմամբ, առկա է եղել հիմնավոր պատճառ Y.15-ի և Y.16-ի անանունությունը պահպանելու համար...

***Կրասնիկին ընդդեմ Չեխիայի Հանրապետության (Krasniki v. Czech Republic), 51277/99, 28.02.2006թ.***

81. Դատարանը նշում է՝ որ ակնհայտ է, որ նախնական քննություն իրականացնող մարմինը հաշվի է առել թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող անձանց շրջապատը, ովքեր, ինչպես Կառավարությունն էր նշել, հաճախ սպառնացել և իրական բռնություն են կիրառել թմրամոլների և իրենց դեմ ցուցմունք տվող անձանց նկատմամբ: Վերջիններս այդպիսով կարող էին վախենալ թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող անձանց բռնություններից և անձնապես վնասվելու վտանգի տակ գտնվել: Սակայն 1997թ. հուլիսի 11-ի վկաների հարցաքննության կամ դատական նիստի արձանագրությունից չի երևում... թե ինչպես են նախնական քննությունն իրականացնող անձը և գործը քննող դատավորը գնահատել վկաների անհանգստությունը ոստիկանության կողմից դիմողի հետ առերես հարցաքննվելիս կամ այն ժամանակ, երբ «Յան Նովոտնին» հարցաքննվում էր դատարանում:

82. Նման կերպ չի վարվել նաև Շրջանային դատարանը, երբ քննել է վկաների անանունության անհրաժեշտության լրջության և հիմնավորվածության տրամադրման հարցը, և որոշում է կայացրել օգտագործել դիմողի դեմ ներկայացված ապացույցները և դրանցում ներառել անանուն վկաների տված ցուցմունքները... Այս կապակցությամբ, հղում կատարելով Արդարադատության նախարարության կողմից օրենքի խախտման հիմքով ի շահ դիմողի բերված բողոքի հիմքերին՝..., Կառավարության կողմից ներկայացված հակառակ փաստերը Դատարանին չեն համոզում:

83. Այս հանգամանքների լույսի ներքո, Դատարանը չի կարող բավարարվել նրանով, որ վկաների անանունության պահպանման

հետ կապված շահը կարող է արդարացնել դիմողի իրավունքների՝ նման կերպով սահմանափակումը...

### 3. Խաչաձև հարցաքննություն

***Լուդին ընդդեմ Շվեյցարիայի (Lüdi v. Switzerland), 12433/86, 15.06.1992թ.***

42. ...Դիմողը պնդել է, որ իր դատապարտումը նախևառաջ հիմնված է եղել գաղտնի գործակալների զեկույցների և գործակալի հետ իր հեռախոսային խոսակցությունների վերծանումների վրա, թեև դատավարության որևէ փուլում նա հնարավորություն չի ունեցել հարցեր տալ կամ հարցաքննել նրան...

49. ...ոչ գործը քննող դատավորը, ոչ գործը քննող դատարանները չեն կարողացել կամ ցանկացել որպես վկա լսել Թոնիին [գաղտնի գործակալը] կամ առերեսում անել, որը հնարավորություն կտար Թոնիի հայտարարությունները համադրել պրն Լուդիի պնդումների հետ. դրանից բացի, ոչ պրն Լուդին, ոչ նրա պաշտպանը դատավարության ընթացքում հնարավորություն չեն ունեցել հարցեր տալ նրան և կասկած արտահայտել նրա վստահելիության նկատմամբ: Թեև դա հնարավոր կլիներ անել այնպես, որ թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ գործով հաշվի առնվեն ոստիկանության պաշտոնատար անձանց օրինական շահերը՝ կապված իրենց գործակալի անանունության պահպանման հետ, որպեսզի կարողանան պաշտպանել նրան և ապագայում նրա ծառայություններից օգտվել...

50. Հակիրճ՝ պաշտպանության իրավունքները սահմանափակվել են այնպիսի եղանակով, որ դիմողը չի կարողացել օգտվել արդար դատական քննության իրավունքից: Հետևաբար, տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 3-րդ մասի (d) կետի և դրա հետ կապված՝ 1-ին մասի խախտում...

***Դուրսոնն ընդդեմ Նիդեռլանդների (Doorson v. Netherlands), 20524/92, 26.03.1996թ.***

73. Սույն գործով անանուն վկաները վերաքննիչ փուլում պաշտպանի ներկայությամբ հարցաքննվել են գործը քննող դատավորի կողմից, ով իրազեկ է եղել նրանց ինքնությանը, թեև պաշտպանության կողմը դրա մասին տեղյակ չի եղել: 1990թ. նոյեմբերի 19-ին կազմված՝ իր դատողությունների վերաբերյալ պաշտոնական արձանագրության մեջ նա նշել է այն հանգամանքները, որոնց հիման վրա Վերաքննիչ դատարանը կարող էր եզրակացություններ անել նրանց ցուցմունքների արժանահավատության վերաբերյալ... Պաշտպանը, ոչ միայն ներկա է գտնվել, այլ նաև նրան հնարավորություն է ընձեռվել վկաներին պաշտպանության կողմի համար հետաքրքրություն ներկայացնող ցանկացած հարց տալ, բացառությամբ այն հարցերի,

որոնք կարող էին հանգեցնել նրանց ինքնության բացահայտմանը, և նշված բոլոր հարցերին պատասխան է տրվել...

74. Թեև դիմողի համար շատ ցանկալի կարող է լինել վկաների հարցաքննությանը ներկա գտնվելը, սակայն Դատարանը, կշռադատելով, գտնում է, որ Ամստերդամի Վերաքննիչ դատարանը պետք է հաշվի առներ այն, որ վկաների անվտանգության ապահովումն այս առումով գերակշռել է դիմողի շահերը: Առավել հաճախ Կոնվենցիան՝ ելնելով 6-րդ հոդվածի 3-րդ մասի (d) կետից..., չի բացառում մեղադրյալի և նրա պաշտպանի նույնացումը...

75. Ի լրումն դրա, թեև, որպես կանոն, ցանկալի է, որ վկաներն անձամբ ճանաչեն ծանր հանցագործության մեջ մեղադրվող անձին, եթե որևէ կասկած կա նրա ինքնության առումով, սակայն պետք է նշել, որ սույն գործով Y.15-ը և Y.16-ը ճանաչել են դիմողին լուսանկարով, ինչը նա անձամբ հաստատել է, որ իրեն նման է..., դրանից բացի, երկուսն էլ նկարագրել են նրա արտաքինը և հագուստը...

Վերոգրյալ դատողություններից բխում է, որ «հավասարակշռման» սույն վարույթի հանգամանքներում, որն իրականացվել է դատական իշխանության ներկայացուցիչների կողմից Y.15 և Y.16 վկաներից ցուցմունքներ ստանալու համար, պետք է դիտվեն բավարար պաշտպանության կողմին անանուն վկաների ցուցմունքները վիճարկելու իրավասություն ընձեռելու և վերջիններիս ցուցմունքների արժանահավատության նկատմամբ կասկած հարուցելու առումով, ինչը նա իրականացրել է դռնբաց դատական նիստում, ի թիվս այլոց, ուշադրության արժանացնելով այն փաստը, որ երկուսն էլ թմրամոլ են...

76. Վերջապես, անհրաժեշտ է կրկնել, որ անգամ այն ժամանակ, երբ «հավասարակշռող» վարույթները բավարար են հատուցելու համար այն խոչընդոտները, որոնց պայմաններում պաշտպանության կողմը գործել է, դատապարտումը չպետք է բացառապես կամ վճռորոշ կերպով հիմնված լինի անանուն ցուցմունքների վրա: Դա, սակայն, առկա չէ սույն գործով. ակնհայտ է, որ ազգային դատարանը մեղքի վերաբերյալ իր դատողությունը բացառապես կամ որոշիչ կերպով հիմնավորել է Y.15-ի և Y.16-ի ցուցմունքներով...

Բացի դրանից, վկաներից ցուցմունքներ ստանալն այն պայմաններում, որոնցում պաշտպանության կողմի իրավունքները չեն կարող ապահովվել Կոնվենցիայով սովորաբար պահանջվող չափով, պետք է իրականացվի չափազանց զգուշորեն: Դատարանը բավարարված է նրանով, որ նշվածն իրականացվել է դիմողի դատապարտմանը հանգեցրած քրեական վարույթներով, քանի որ Վերաքննիչ դատարանի դատավճռի պատճառաբանական մասում արտացոլված է, որ Y.15-ի և Y.16-ի ցուցմունքները գնահատվել են «անհրաժեշտ շրջահայացությամբ և զգուշությամբ»...

***Վան Մեհելենը և այլոք ընդդեմ Նիդեռլանդների (Van Mehelen and Others v. Netherlands), 21363/93, 21364/93, 21427/93 և 2056/93, 23.04.1997թ.***

59. Սույն գործով ոստիկանության դիտարկվող աշխատակիցները գործը քննող դատավորի հետ մեկտեղ գտնվել են այլ սենյակում, որից մեղադրյալները և անգամ նրանց փաստաբանները հեռացվել են: Բոլոր շփումները եղել են ձայնային կապի միջոցով: Պաշտպանությունն այսպիսով ոչ միայն անտեղյակ է եղել ոստիկանության կողմից ներկայացված վկաների ինքնությանը, այլ նաև նրանց չի թույլատրվել գնահատել նրանց վարքագիծն անմիջական հարցաքննության ժամանակ և այդպիսով պարզել նրանց վստահելիությունը...

60. Դատարանը բավարարված չէ այն բացատրությամբ, թե ինչու է անհրաժեշտ եղել նման ծայրահեղորեն սահմանափակել մեղադրյալների՝ իրենց դեմ ուղղված ցուցմունքներն իրենց ներկայությամբ տալու իրավունքը, կամ ինչու նվազ հեռահար միջոցներ չեն կիրառվել: Այլ տեղեկության բացակայության պայմաններում Դատարանը չի կարող գտնել, որ ոստիկանության օպերատիվ կարիքները նախատեսում են բավարար հիմնավորում...

61. Դատարանը համոզված չէ, որ Վերաքննիչ դատարանը բավարար ջանասիրություն է ցուցաբերել գնահատելու ոստիկանների և նրանց ընտանիքների դեմ իրականացված ճնշամիջոցները դրանց կիրառման ժամանակ: Դատարանի դատավճռից չի երևում, որ այն փորձել է պարզել այն հարցը, թե դիմողները գտնվել են, արդյոք, այն վիճակում, որ նման սպառնալիքներ անեն կամ դրդեն այլոց անել դա հօգուտ իրենց: Նրա որոշումը հիմնված է եղել բացառապես կատարված հանցանքների ծանրության վրա...:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ պրն Էնգելենը, քաղաքացի վկան, ով դատավարության սկզբնական փուլերում ցուցմունքներ է տվել և դիմողներից մեկին ներկայացրել որպես հանցագործներից մեկը, օժտված չի եղել անանունությամբ և չի վիճարկել այն, որ նրան երբևէ սպառնացել են:

62. Իրավամբ... անանուն ոստիկանները հարցաքննվել են գործը քննող դատավորի կողմից, ով անձամբ հավաստել է նրանց ինքնությունը և շատ մանրամասն պաշտոնական զեկույց է ներկայացրել իր կողմից հայտնաբերված հանգամանքների վերաբերյալ, իր կարծիքն է հայտնել նրանց վստահելիության և արժանահավատության կապակցությամբ, ինչպես նաև անանուն մնալու նրանց պատճառների մասին:

Սակայն այս միջոցները չեն կարող դիտվել որպես պատշաճ փոխարինում պաշտպանության կողմից վկաներին իրենց ներկայությամբ հարցաքննելու և իրենց դատավճիռը կայացնելու՝ ելնելով նրանց վարքագծից և արժանահավատությունից: Այսպիսով, չի կարելի ասել, որ այն սահմանափակումները, որոնց պայմաններում պաշտ-

պանության կողմը գործել է, հավասարակշռվել են վերոնշյալ ընթացակարգերով:

***Ֆերանտելին և Սանտանգելոն ընդդեմ Իտալիայի (Ferrantelli and Santangelo v. Italy), 19874/92, 07.08.1996թ.***

52. Այս փուլում թեև դատական իշխանությունները չեն կազմակերպել, ինչպես նախընտրելի կլիներ, առերեսում բոլոր մեղադրյալների միջև Գ.Վ.-ի ողբերգական մահվանը նախորդող տասներկու ամիսների ընթացքում, սակայն նրանք չեն կարող պատասխանատու լինել ավելի ուշ տեղի ունեցածի համար: Բացի դրանից, 1991թ. ապրիլի 6-ի իր դատավճռում Կալտանիսետայի Վերաքննիչ դատարանի Անչափահասների գործերով բաժինը մանրամասն հետազոտել է մեղադրանքի կողմի ցուցմունքները և գտել, որ դրանք հաստատվում են մի շարք այլ ապացույցներով, ինչպիսիք են, օրինակ, այն, որ բոլոր մեղադրյալները մեկը մյուսին ենթադրող ցուցմունքներ են տվել, ինչպես նաև այն փաստը, որ դիմողներն օգնել են Գ.Վ.-ին գնել և տեղափոխել գազի երկու բալոնները, որոնք օգտագործվել են թաքստոցների վրա հարձակում իրականացնելու ժամանակ, և դիմողներից յուրաքանչյուրի համոզիչ այլուրեքության բացակայությունը...

***Լուկան ընդդեմ Իտալիայի (Luca v. Italy), 33354/96, 27.02.2001թ.***

40. ...որոշակի հանգամանքներում կարող է անհրաժեշտ լինել վկայակոչել նախնական քննության փուլում տրված գրավոր ցուցմունքները (մասնավորապես այն, որ վկան հրաժարվում է հրապարակավ կրկնել իր ցուցմունքը՝ երկյուղելով իր անվտանգության համար, ինչը մաֆիանման կազմակերպությունների դեմ հարուցված գործերով այդքան էլ հազվադեպ հանդիպող երևույթ չէ): Եթե մեղադրյալին տրվել է համապատասխան և պատշաճ հնարավորություն վիճարկել այդ ցուցմունքը կամ այն տալու պահին, կամ ավելի ուշ, ապա դրա ընդունումն ինքնին չի կարող դիտվել 6-րդ հոդվածի 1-ին մասին և 3-րդ մասի (d) կետին հակասող: Դրա արդյունքում հնարավոր է լինում պարզել, թե դատապարտումն արդյոք միայն կամ որոշիչ չափով հիմնված է այն անձի ցուցմունքների վրա, ում մեղադրյալը հնարավորություն չի ունեցել հարցաքննել կամ նախնական, կամ դատական քննության ընթացքում, և արդյոք պաշտպանության կողմի իրավունքները խախտվել են 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների հետ անհամատեղելի ձևով…

41. Այդ կապակցությամբ, այն փաստը, որ ցուցմունքները տրվել են հանցակցի, ինչպես դա սույն գործով էր, կամ վկայի կողմից, որևէ նշանակություն չունի… Այսպիսով, եթե ցուցմունքը կարող է որպես նյութական հիմք ծառայել դատապարտման համար, ապա, անկախ այն բանից, թե տրվել է ուղղակի իմաստով վկայի, թե՝ հանցակցի կողմից, այն հանդիսանում է մեղադրական ապացույց, որի վրա տա-

րածվում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի (d) կետով նախատեսված երաշխիքները…

42. Վերոգրյալի լույսի ներքո, Վճռաբեկ դատարանի կողմից իր՝ 1995թ. հոկտեմբերի 19-ի դատավճռում տրված պատճառաբանությունը՝ կապված Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (d) կետի հիմքով բերված բողոքը մերժելու հետ… պատշաճ չէ: Մասնավորապես, այն փաստը, որ տվյալ ժամանակահատվածում գործող ներպետական օրենսդրության համաձայն… դատարանը կարող է նախքան դատական քննությունը տրված ցուցմունքը թույլատրելի ապացույց ճանաչել, եթե հանցակիցը հրաժարվում է ցուցմունք տալ, չի կարող դիմողին զրկել 6-րդ հոդվածի 3-րդ մասի (d) կետով նախատեսված իրավունքից, որը թույլ է տալիս նրան մրցակցային դատավարության ընթացքում հետազոտել իր դեմ բերված ցանկացած նյութական ապացույց:

43. Սույն գործով Դատարանը նշում է, որ ներպետական դատարանները դիմողին դատապարտել են միայն Ն.-ի կողմից դատարանում տրված ցուցմունքների հիման վրա և ո՛չ դիմողին, ո՛չ նրա փաստաբանին վարույթի որևէ փուլում հնարավորություն չի տրվել հարցաքննել նրան:

44. Այդ հանգամանքներում, Դատարանը բավարարված չէ նրանով, որ դիմողին տրվել է համապատասխան և պատշաճ հնարավորություն վիճարկելու այն ցուցմունքները, որի վրա հիմնվել է իր դատապարտումը:

45. Հետևաբար, մերժվել է դիմողին արդար դատական քննություն տրամադրելը:

***Պ.Ս.-ն ընդդեմ Գերմանիայի (P.S. v. Germany), 33900/96, 20.12.2001թ.***

26. Դատարանը նշում է, որ դատավարությունների որևէ փուլում Ս.-ն (ութ տարեկան աղջիկ) չի հարցաքննվել դատավորի կողմից և ոչ էլ դիմողին է հնարավորություն տրվել ուղղակի հարցաքննության միջոցով գնահատել այս վկայի վարքագիծը և այդպիսով ստուգել նրա արժանահավատությունը...

27. Առաջին ատյանի, այն է՝ Շրջանային դատարանն իր՝ 1994թ. հունվարի 10-ի որոշման մեջ հիմնվել է Ս.-ի մոր ցուցմունքի վրա, ով ցուցմունք էր տվել դեպքի կապակցությամբ իր դստեր վերաբերմունքի և 1993թ. ապրիլի 29-ին նրա դրսևորած վարքագծի, ինչպես նաև ընդհանուր առմամբ նրա բնավորության վերաբերյալ, և այն ոստիկանի կապակցությամբ, ով հարցաքննել էր աղջկան 1993թ. ապրիլին՝ հանցագործությունից կարճ ժամանակ անց:

Շրջանային դատարանը որոշել էր չլսել Ս.-ին՝ ապահովելու համար նրա անձնական զարգացումը, քանի որ, ըստ նրա մայրիկի, նա ճնշվում է այդ դեպքի մասին հիշելիս և նրան լուրջ տառապանք կպատճառվի, եթե հիշեցվի այդ մասին:

28. …Սակայն Շրջանային դատարանի կողմից իր՝ 1994թ. հունվարի 10-ի դատավճռում տրված պատճառաբանությունը՝ ի հիմնավորումն Ս.-ի հարցաքննության և փորձագետի կարծիքն ստանալու վերաբերյալ դիմողի խնդրանքի մերժման, բավականին անորոշ է և ենթադրական և, հետևաբար, չի կարող հիմնավորված լինել…

30. Ի վերջո, աղջկա տված ցուցմունքը հանդիսացել է քննարկվող հանցագործության վերաբերյալ միակ ուղղակի ապացույցը, և ներպետական դատարանները դիմողի մեղքի վերաբերյալ իրենց տեսակետների հիմքում որպես վճռորոշ հանգամանք դրել են Ս.-ի ցուցմունքները...

31. Այս հանգամանքներում, այս ապացույցների օգտագործումը պաշտպանության կողմի իրավունքների վրա այնպիսի սահմանափակումներ է դրել, որ չի կարելի ասել, որ դիմողի նկատմամբ արդար դատական քննություն է իրականացվել:

***Բիրուտիսը և այլոք ընդդեմ Լիտվայի (Birutis and Others v. Lithuania), 47698/99 և 48115/99, 28.03.2002թ.***

31. Դատարանը գտնում է, որ երրորդ դիմողը դատապարտվել է միայն անանուն վկայի ցուցմունքի հիման վրա... Քանի որ Կոնվենցիան արդյունավետ կերպով արգելում է, որ դատապարտումը հիմնված լինի միայն անանուն վկայի ցուցմունքի վրա..., երրորդ դիմողի պաշտպանության և արդար դատական քննության իրավունքն այս կապակցությամբ խախտվել է:

32. …առաջին և երկրորդ դիմողների դատապարտումը հիմնված չի եղել միայն կամ առավելապես անանուն վկայի տված ցուցմունքի վրա: Այսպիսով, գործը քննող դատարանի կողմից հաշվի առնված անանուն ցուցմունքների թիվն արդյունավետորեն ցույց է տալիս, որ քննարկվող ցուցմունքները եղել են այն հանգամանքների թվում, որոնց վրա հիմնվել է դիմողների դատապարտումը...

34. Սակայն հակառակ այն պնդումների, որ անանուն ցուցմունքների արժանահավատության հարցը բաց է մնացել, առաջին և երկրորդ դիմողներին կամ նրանց ներկայացուցիչներին հնարավորություն չի տրվել հարցաքննելու անանուն վկաներին: Ոչ էլ դատարաններն իրենք են օրենքով սահմանված հնարավորություն ունեցել... սեփական նախաձեռնությամբ հետազոտելու այն եղանակները և հանգամանքները, որոնցում անանուն ցուցմունքները ձեռք են բերվել: Փաստորեն, քննարկվող ցուցմունքներն ընթերցվել են գործը քննող դատարանում, քանի որ դրանք արձանագրվել էին նախնական քննություն իրականացնող մարմինների կողմից: Գործը քննող դատարանը նաև վկայակոչել է անանուն ցուցմունքները՝ հիմնավորելու համար առաջին և երկրորդ դիմողների դատապարտումը: Նման հանգամանքներում առաջին և երկրորդ դիմողների պաշտպանության իրավունքի սահմանափակումները չեն հավասարակշռվել ներպետական դատական իշխանությունների կողմից պահպանված ընթացակարգե-

րով: Դատարանների կողմից անանուն վկաներին չհարցաքննելը և անանուն ցուցմունքների ձեռքբերման ժամանակ դրսևորված վարքագծի եղանակները և պայմանները չհետազոտելն անընդունելի է՝ ելնելով առաջին և երկրորդ դիմողների պաշտպանության և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի (d) կետով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի ապահովման տեսանկյունից: Հետևաբար, այս կապակցությամբ տեղի է ունեցել այդ հոդվածի խախտում:

***Ս.Ն.-ն ընդդեմ Շվեյցարիայի (S.N. v. Sweden), 34209/96, 02.07.2002թ.***

52. Չի կարելի նաև ասել, որ մերժվել է դիմողին տրամադրել 6-րդ հոդվածի 3-րդ մասի (d) կետով նախատեսված նրա իրավունքը՝ այն հիմքով, որ նա ունակ չի եղել հետազոտել Մ.-ի (երեխայի) կողմից տրված ցուցմունքն առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանում գործի քննության ժամանակ: Անդրադառնալով սեռական հանցագործությունների վերաբերյալ գործերով հարուցված քրեական դատավարության առանձնահատկություններին…՝ այս դրույթները չեն կարող մեկնաբանվել որպես պահանջ, որ բոլոր ատյաններում պետք է իրականացվեն ուղղակի հարցաքննություններ, խաչաձև կամ այլ հարցաքննություններ դիմողի կամ նրա պաշտպանի կողմից: Դատարանը գտնում է, որ ոստիկանությունում իրականացված առաջին հարցաքննության տեսագրումը ցուցադրվել է դատական քննության և վերաքննիչ վարույթի ընթացքում և երկրորդ հարցաքննության արձանագրությունն ընթերցվել է Շրջանային դատարանում, իսկ այդ հարցաքննության ձայնագրությունը լսվել է Վերաքննիչ Դատարանում: Սույն գործի հանգամանքներում, այս միջոցները պետք է դիտվեն բավարար՝ դիմողին Մ.-ի ցուցմունքները և նրա արժանահավատությունը քրեական դատավարության ընթացքում վիճարկելու հնարավորություն տալու տեսանկյունից: Իհարկե, այդ վիճարկման արդյունքում Վերաքննիչ դատարանը նվազեցրել է դիմողի պատիժը, քանի որ այն գտել է, որ նրան առաջադրված մեղադրանքների մի մասը ապացուցված չէ:

53. ...Դատարանը հաշվի էր առել այն փաստը, որ Մ.-ի կողմից տրված տեղեկության մի մասը անորոշ և ոչ հստակ է եղել և չի պարունակել մանրամասներ: Դատարանը նաև հաշվի է առել ոստիկանությունում հարցաքննության ժամանակ նրան առաջադրված հարցերի մի մասի ուղղորդող բնույթը: Այս հանգամանքներից ելնելով Դատարանը բավարարված է այն առումով, որ Մ.-ի ցուցմունքների գնահատմանն անհրաժեշտ ուշադրություն է դարձվել:

54. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ դիմողի դեմ հարուցված քրեական վարույթը՝ ամբողջությամբ վերցրած, չի կարող դիտվել անարդար:

***Հուլկի Գանեսն ընդդեմ Թուրքիայի (Hulki Gunes v. Turkey), 28490/95, 19.06.2003թ.***

90. Նաև Դատարանը նշում է, որ նախնական քննության ընթացքում դիմողին չի տրամադրվել փաստաբան, որի ժամանակ ձեռք են բերվել այնպիսի հիմնական ապացույցներ, ինչպիսիք են առերեսման ձայնագրությունը և նրա ինքնախոստովանական ցուցմունքը: Այդ կապակցությամբ շատ կարևոր է, որ մեղադրանքի կողմի վկաները հարցաքննվեն գործը քննող դատարանի կողմից, քանի որ այդ դատարանը միայն կարող էր անմիջական առնչության արդյունքում արդյունավետ գնահատական տալ նրանց վարքագծի և դեպքի վերաբերյալ նրանց տեսակետի արժանահավատության կապակցությամբ:

***Ալ-Խավաջան և Տահերին ընդդեմ Միացյալ Թագավորության (Al-Khawaja and Tahery v. United Kingdom), 26766/05 և 22228/06, 20.01.2009թ.***

41. Հետազոտելով պրն Ալ-Խավաջայի գործի հանգամանքները՝ Դատարանը գտնում է, որ Կառավարության կողմից վկայակոչված հավասարակշռող հանգամանք է այն, որ միայն Ս.Տ.-ի ցուցմունքը չէ, որ դիմողին ստիպել է ցուցմունք տալ, այլ առկա է եղել անհամապատասխանություն Ս.Տ.-ի և մյուս վկաների ցուցմունքների միջև, որը կարող էր վերհանվել այդ վկաների հետ խաչաձև հարցաքննության արդյունքում, ինչպես նաև այն փաստը, որ նրա արժանահավատությունը կարող էր վիճարկվել պաշտպանության կողմից և ատենակալների հիշեցումն այն մասին, որ նրանք ո՛չ տեսել են Ս.Տ.-ին, ո՛չ լսել նրա ցուցմունքը, և որ նա չի մասնակցել խաչաձև հարցաքննությանը:

42. Քննարկելով այս հանգամանքները՝ Դատարանը չի գտնում, որ նրանցից որևէ մեկը՝ առանձին վերցրած կամ բոլորի հետ, կարող է հավասարակշռել Ս.Տ.-ի ցուցմունքը որպես ապացույց ընդունելու արդյունքում պաշտպանությանը պատճառված վնասը: Ճիշտ է, որ անգամ առանց Ս.Տ.-ի ցուցմունքի դիմողը կարող էր ցուցմունք տալ որպես իր պաշտպանության դրսևորում այլ հաշվով, երկրորդ հաշվով: Սակայն, եթե Ս.Տ.-ի ցուցմունքը չընդունվեր, հնարավոր է, որ դիմողը մեղադրվեր միայն երկրորդ հաշվով և պարտավորված կլիներ ցուցմունք տալ այդ իմաստով: Ինչ վերաբերում է Ս.Տ.-ի ցուցմունքների և երկու վկաների տված բացատրությունների հակասությանը, ապա Դատարանը գտնում է, որ դրանք իրենց բնույթով նվազ կարևոր են: Միայն մեկ անգամ է նման հակասությունը պաշտպանության կողմից հիմք ընդունվել, դա վերաբերել է մասնավորապես այն փաստին, որ հարձակում գործելու վերաբերյալ պնդման մեջ Ս.Տ.-ն ասել է, որ դիմողը դիպչել էր նրա վզին և բերանին, մինչդեռ մեկ այլ վկայի կողմից տրված ցուցմունքի մեջ նշվում է, որ նա ինքն է դիպչել իր երեսին դիմողի դրդմամբ: Թեև պաշտպանության կողմի համար ուղղակի հնարավորություն է եղել փորձել վիճարկել Ս.Տ.-ի արժանահավատությունը, սակայն դժվար է տեսնել, թե ինչ հիմքով նրանք կարող էին

դա անել, հատկապես, որ նրա բացատրությունը մեծամասամբ համապատասխանում էր այլ տուժողների բացատրություններին, և որոնց կապակցությամբ դատարանը գտել էր, որ հանցավոր համաձայնությունը որևէ կերպ ապացուցված չէ: Հանցավոր համաձայնության բացակայությունը կարող է կարևոր գործոն հանդիսանալ ներպետական օրենսդրությունում, սակայն սույն գործի հանգամանքներում այն չի կարող դիտվել որպես հավասարակշռող գործոն՝ 6-րդ հոդվածի 1-ին մասի և 6-րդ հոդվածի 3-րդ մասի (d) կետի նպատակների իմաստով: Հանցավոր համաձայնության բացակայությունը չի փոխարինում Դատարանի այն եզրակացությանը, որ մեկ անգամ ձեռք բերված ցուցմունքի բովանդակությունը դատարանում այնպիսի ապացույց է հանդիսացել, որ դիմողը չի կարողացել արդյունավետ կերպով վիճարկել: Ինչ վերաբերում է դատավորի կողմից ատենակալներին նախազգուշացնելուն, ապա Վերաքննիչ դատարանի կողմից սա դիտվել է որպես ոչ բավարար: Թեև այն այդպիսին չէր, սակայն Դատարանը համոզված չէ, որ ավելի պատշաճ կերպով ուղղություն տալը կարող է արդյունավետ կերպով հավասարակշռել չհետազոտված այն ցուցմունքի հետևանքը, որը հանդիսացել է դիմողի դեմ ներկայացված միակ ապացույցը:

43. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ պրն Ալ-Խավաջայի առումով առկա է եղել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի և դրա հետ զուգակցված 6-րդ հոդվածի 3-րդ մասի (d) կետի խախտում...

44. Վերադառնալով պրն Տահերի գործին՝ Դատարանն առաջին հերթին նշում է, որ թեև վկա Տ.-ն բացակայել է, սակայն նա անանուն չի եղել: Եվ թեև գործը քննող դատավորը գտել է, որ Տ.-ն իրական երկյուղ է կրում ցուցմունք տալուց, սակայն որևէ փորձ չի արվել նրա ինքնությունը թաքցնելու համար. նրա մասին գիտեր ոչ միայն դիմողը, այլ նաև հանցանքի կատարման վայրում գտնված մյուս բոլոր անձինք: Այնուամենայնիվ, Դատարանն ընդունում է, որ գործը քննող դատավորը տեղեկացված է եղել այն մասին, որ Տ.-ն կրել է իրական երկյուղ, և դա է հանդիսացելնրա ցուցմունքները որպես ապացույց թույլատրելու պատճառը:

45. Սույն գործով Կառավարությունը հիմնվել է հավասարակշռով հետևյալ սկզբունքային գործոնների վրա՝ գործը քննող դատավորի կողմից քննարկվել է այլընտրանքային միջոցների կիրառման հնարավորությունը, դիմողը կարող էր վիճարկել կամ ժխտել ցուցմունքն իր կողմից տրված ցուցմունքով կամ այլ վկաներ հրավիրելով, գործը քննող դատավորը նախազգուշացրել էր ատենակալներին, որ անհրաժեշտ է զգուշությամբ գնահատել բացակայող վկայի կողմից տրված ցուցմունքը, և դատավորը ասել էր ատենակալներին, որ դիմողը պատասխանատու չէ Տ.-ի երկյուղի համար:

46. Դատարանը չի գտնում, որ այս գործոնները՝ առանձին-առանձին կամ համակցության մեջ, կարող են հավաստել դատավարության արդարացիությունը կամ հավասարակշռել պաշտպանութ-

յան կողմի լուրջ խոչընդոտները, որոնք առաջացել էին Տ.-ի ցուցմունքն ընդունելու արդյունքում: Ներպետական դատարանների համար ընդունելի է բացակա կամ անանուն վկաների խնդիր առաջանալու դեպքում քննարկել այլընտրանքային միջոցների կիրառման հարցը, որոնք նվազ խիստ կլինեն պաշտպանության իրավունքների նկատմամբ, քան այդ վկաների ցուցմունքները որպես ապացույց թույլատրելը: Սակայն այն փաստը, որ այլընտրանքային միջոցներն ընդունելի չեն կարող դիտվել, չի ազատում ներպետական դատարաններին 6-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի (d) կետի խախտման բացակայության մեջ համոզվելու պարտականությունից այն դեպքում, երբ նրանք թույլատրում են այդ վկաների ցուցմունքները հրապարակել:

Իհարկե, նվազ խիստ միջոցի կիրառման մերժումը մեծ պատասխանատվություն է նախատեսում՝ կապված պաշտպանության իրավունքի ապահովման հետ: Ինչ վերաբերում է դիմողի՝ այլ վկաներ հրավիրելու միջոցով այդ ցուցմունքին՝ հակափաստարկ բերելու հնարավորությանը, ապա խնդիրը կայանում է նրանում, որ, բացի Տ.-ից, չի եղել այլ վկա, ով կարող էր կամ ցանկանում էր ցուցմունք տալ իր տեսածի մասին: Այս հանգամանքներում Դատարանը չի ընդունում, որ Տ.-ի ցուցմունքները կարող էին արդյունավետ կերպով ժխտվել: Դատարանն ընդունում է, որ դիմողն ինքն է ցուցմունք տվել և ժխտել մեղադրանքը, թեև դա անելու որոշումը պետք է որ կապված լիներ Տ.-ի ցուցմունքը որպես ապացույց թույլատրելու հետ: Մեղադրյալի՝ ի պաշտպանություն իրեն ցուցմունք տալու իրավունքը չի կարելի ասել, որ հավասարակշռում է իր դեմ ցուցմունք տված՝ մեղադրանքի կողմի միակ ականատես վկային տեսնելու, հարցաքննելու և խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայությանը:

47. Ի վերջո, ինչ վերաբերում է ատենակալներին ուղղված դատավորի նախազգուշացմանը՝ Դատարանը գտնում է, որ այն եղել է երկուստեք՝ ամբողջական և պատշաճ ձևակերպված... Սակայն այնպիսի վկայի բացակայության պայմաններում, ինչպիսին Տ.-ն էր, Դատարանը չի գտնում, որ նման նախազգուշացումը, ներառյալ հիշեցումն առ այն, որ այդ բացակայության համար պատասխանատու չէ դիմողը, լինելով հստակ արտահայտված, կարող էր բավարար լինել լրացնելու այն հանգամանքը, որ վկայի չլսված ցուցմունքը եղել է դիմողի դեմ միակ ուղղակի ապացույցը:

48. Դատարանը, հետևաբար, գտնում է, որ պրն Տահերիի առումով առկա է եղել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի և դրա հետ զուգակցված 6-րդ հոդվածի 3-րդ մասի (d) կետի խախտում:

### 4. Արժանահավատություն

***Կորնելիսն ընդդեմ Նիդեռլանդների (Cornelis v. Netherlands) (dec.), 994/03, 25.05.2004թ.***

Սույն գործով հանրային մեղադրողի ծառայությունը պրն Զ-ի հետ համաձայնություն է ձեռք բերել և նրանից ստացված ցուցմունքներն օգտագործվել են դիմողի դեմ ներկայացված ապացույցների հետ: Դատարանը գտնում է, որ դիմողը և ներպետական դատարաններն ի սկզբանե տեղյակ են եղել այս համաձայնությանը և բազմակողմանիորեն հարցաքննել են պրն Զ-ին՝ նրա վստահելիությունը և արժանահավատությունն ստուգելու փոխարեն: Բացի դրանից, ներպետական դատարանները ցույց են տվել, որ իրենք լավատեղյակ են եղել այն վտանգին, բարդություններին և թակարդներին, որոնք խոչընդոտում են քրեական գործերով վկաների հետ համաձայնության գալուն: Դիմողի գործով կայացված դատավճռում նշվել է, որ համաձայնությունների բոլոր տեսակետները բազմակողմանիորեն և զգուշությամբ ուսումնասիրվել են՝ պատշաճ ուշադրություն դարձնելով պաշտպանության կողմից բարձրացված բազմաթիվ առարկություններին:

Հետևաբար, Դատարանը եզրակացնում է, որ չի կարելի ասել, որ դիմողի դատապարտումը հիմնված է եղել այնպիսի ապացույցի վրա, որի կապակցությամբ նա չի կարողացել կամ բավականաչափ չի իրականացրել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իր պաշտպանության իրավունքը:

***Դուրսոնն ընդդեմ Նիդեռլանդների (Doorson v. Netherlands), 26.03.1996թ.***

77. Վկա Ն.-ն ոստիկանությունում դիմողին մեղադրող հայտարարություն է արել, սակայն հրաժարվել է դրանից, երբ թե՛ Շրջանային դատարանում և թե՛ Վերաքննիչ դատարանում երդման ներքո դռնբաց դատական քննության ընթացքում դիմողի ներկայությամբ հարցաքննվել է: Վերաքննիչ դատարանը, այնուամենայնիվ, որոշել է որոշ արժանահավատություն հաղորդել Ն.-ի՝ ոստիկանությունում արված հայտարարությանը:

78. …Կոնվենցիայի իմաստով՝ Դատարանի խնդիրը չէ պարզել, թե վկաների հայտարարությունները որպես ապացույց ճիշտ են ընդունվել, թե՝ ոչ. սա ներպետական դատարանների խնդիրն է, Եվրոպական դատարանը պետք է որոշի, թե արդյոք վարույթը՝ ամբողջությամբ վերցրած, ներառյալ ապացույցների ստացումը, եղել է արդար: Դատարանը չի կարող վերացականորեն ասել, որ դռնբաց դատական քննության ընթացքում երդման ներքո վկայի կողմից տրված ցուցմունքը միշտ ավելի արժանահավատ է, քան նույն վկայի կողմից քրեական դատավարության ընթացքում այլ պայմաններում տրված ցուցմունքը, եթե անգամ դրանց միջև առկա է հակասություն:

Հետևաբար, Դատարանը չի գտնում, որ Վերաքննիչ դատարանում տրված ցուցմունքները, ինչպես նաև Ն.-ի կողմից տրված ցուցմունքները՝ առանձին վերցրած, կամ վիճարկվող այլ հանգամանքների հետ մեկտեղ, հանգեցրել են դիմողի գործով անարդար վարույթի:

***Հոշիլդն ընդդեմ Դանիայի (Hauschildt v. Denmark), 10486/83, 09.10.1986թ., DR 49, 86***

3. … d. …Այս բողոքի հետ կապված Հանձնաժողովը կրկնում է, որ երբ վկային լսել են Վերաքննիչ դատարանում, Քաղաքային դատարանում՝ նրա տված ցուցմունքներն առաջին անգամ են ընթերցվել և վկային հարց է տրվել, թե արդյոք պնդում է իր ցուցմունքները: Նաև շարունակվել է վկաներին լսելը, որի ընթացքում պաշտպանը, դատախազը և դատավորը կարող էին լրացուցիչ հարցեր տալ՝ պարզաբանելու համար իրավիճակը: Հանձնաժողովը, որպես կանոն, գտնում է, որ վկայի ցուցմունքների արժեքը կարող է նվազել, եթե նրան մանրամասն հիշեցվի ստորադաս ատյանում տրված ցուցմունքը: Սակայն այն նշում է, որ կողմերին հնարավորություն է տրվել հարցեր ներկայացնել վկաներին՝ ավելի շատ տեղեկություն ստանալու կամ նրանց ցուցմունքի ճշմարտացիությունը պարզելու համար: Այս հանգամանքներում, Հանձնաժողովը գտնում է, որ կիրառված մեթոդն այնպիսի բնույթ չի ունեցել, որ կարողանար հանգեցնել վարույթի անարդարությանը և, հետևաբար, տեղի չի ունեցել Կոնվենցիայի խախտում:

**5. Սուտ ցուցմունք տալը**

***Իքսը և Իգրեկն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության (X. and Y. v. Federal Republic of Germany), 8744/79, 02.03.1983թ., DR 32, 141***

Դատարան կամ գործը քննող դատավորի մոտ ներկայացած վկաները ձևական և խիստ պարտականություն են կրում ճշմարտությունն ասելու համար: Սույն գործով պարզ է, որ վկա Դ.-ն ճշմարտությունը չի ասել ապրիլի 26-ին ցուցմունք տալուց: Սա հետագայում հանգեցրել է սուտ ցուցմունք տալու համար նրա դատապարտմանը, ինչը քննարկման ենթակա չէ: Քանի որ վկաները գործը քննող դատավորի մոտ տարբեր ցուցմունքներ են տվել, ապրիլի 26-ի նրա հայտարարությունը լուրջ կասկած է առաջացրել: Այս հանգամանքներում, մեղադրող կողմը, Գերմանիայի օրենսդրությանը համապատասխան, կրել է գործի քննության պարտականությունը: Այն ժամանակ, երբ նրանք որոշել են անհապաղ ձերբակալել վկա Դ.-ին, նրանք դա արել են այն ակնկալիքով, որպեսզի ցույց տան, որ դատարանում սուտ ցուցմունք տալը չի կարող անպատիժ մնալ: Սակայն, քանի որ այդ առումով առկա է եղել խիստ հստակ կասկած, որը հետագայում ճշտվել է, Հանձնաժողովը չի գտնում, որ այս գործողությունը խոչընդոտել է դիմողների գործի արդար քննությանը: Իրավիճակն այլ կլինի, եթե մեղադրանքի կողմը դիմի նման միջոցի՝ առանց հիմնավոր պատճառների, վկաների նկատմամբ ճնշում գործադրելու նպատակով: Սակայն հնարավոր ճնշումները հետևանք են բացառապես ոչ ճշմարիտ ցուցմունքներ տալու, այն պետք է ընդհանուր, առմամբ, դիտվի որ-

պես քրեական դատավարության ընդհանուր պաշտպանության տարր: Հանձնաժողովն այն պարագայում պետք է հաշվի առնի այն, որ հասարակության պաշտպանությանն ուղղված քրեական արդարադատության համակարգը, որպես կանոն, ենթադրում է, որ վկաների՝ ճշմարտությունն ասելու պարտականության իրականացումն ապահովվում է բարեխղճորեն:

## V. ՓՈՐՁԱԳԵՏ ՎԿԱՆԵՐ

### 1. Անկողմնակալություն

***Բոնիշն ընդդեմ Ավստրիայի (Bönisch v. Austria), 8658/79, 06.05.1985թ.***

32. Հասկանալի է, որ հատկապես մեղադրյալը կարող է կասկածի տակ դնել փորձագետի չեզոքությունն այն դեպքում, երբ նրա զեկույցը, փաստորեն, արագացրել է մեղադրանքի առաջադրումը: Սույն գործով առկա հանգամանքները թույլ են տալիս ենթադրել, որ տնօրենն առավելապես հանդիսացել է մեղադրյալի դեմ ցուցմունք տվող վկա: Սկզբունքորեն, դատական նիստի ժամանակ նրա հարցաքննությունը չի խոչընդոտվել Կոնվենցիայով, սակայն զենքերի հավասարության սկզբունքը, որը բնորոշ է արդար դատական քննության գաղափարին... պահանջում է հավասար վերաբերմունք ինչպես տնօրենի, այնպես էլ պաշտպանության կողմից կամ այլ կերպ հրավիրման ենթակա անձանց լսումների նկատմամբ:

33. Դատարանը գտնում է... որ նման հավասար վերաբերմունք չի ցուցաբերվել քննարկվող երկու վարույթների ընթացքում:

Առաջին հերթին, Ինստիտուտի տնօրենը, Ավստրիայի օրենսդրությանը համապատասխան, Շրջանային դատարանի կողմից նշանակվել է որպես «փորձագետ»՝ այդ օրենքի ուժով, այդպիսով, նրան ձևականորեն տրվել է դատարանում չեզոքության և անկողմնակալության գործառույթների իրականացման հնարավորություն: Այդ պատճառով նրա հայտարարությունները պետք է ավելի մեծ կշիռ ունենան, քան «փորձագետ վկաներինը», որոնք, ինչպես առաջին վարույթի դեպքում էր, հրավիրվել էին մեղադրյալի կողմից..., և նրա չեզոքությունը և անկողմնակալությունը սույն գործի մասնավոր հանգամանքներում, դեռևս կարող է կասկածների տեղիք տալ...

***Բրանդստետերն ընդդեմ Ավստրիայի (Brandstetter v. Austria), 11170/84, 12876/87; 13468/87, 28.08.1991թ.***

44. Այն փաստը, որ պրն Բանդիոնը եղել է Գյուղատնտեսական ինստիտուտի աշխատակազմի անդամ, որն սկսել է մեղադրական գործընթացը, կարող է պրն Բրանդստետերի մոտ կասկածներ առաջացնել: Նման կասկածները կարող են որոշակի կարևորություն ունե-

նալ, սակայն չեն կարող որոշիչ լինել: Որոշիչ են այն կասկածները, որոնցից առաջացած խնդիրները կարող են օբյեկտիվորեն հիմնավորված լինել...

Նման օբյեկտիվ հիմնավորվածություն այս պարագայում առկա չէ. Դատարանի կարծիքով, այն փաստը, որ փորձագետն այն նույն հնստիտուտում կամ լաբորատորիայում, որի կարծիքի վրա հիմնված է մեղադրանքը, աշխատում է որպես փորձագետ, ինքնին չի հիմնավորում կասկածն առ այն, որ նա չի կարողանա գործել պատշաճ չեզոքությամբ: Այլ մոտեցումը շատ դեպքերում անընդունելի սահմանափակումներ են դնում դատարանի կողմից փորձագետի խորհուրդն ստանալու նրա հնարավորության վրա: Բացի դրանից, Դատարանը նշում է, որ գործի նյութերից չի երևում, որ պաշտպանության կողմը որևէ առարկություն է ներկայացրել 1983թ. հոկտեմբերի 4-ին կայացած առաջին դատական նիստում, երբ Շրջանային դատարանի կողմից պրն Բանդիոնը նշանակվել է, կամ 1983թ. նոյեմբերի 22-ին կայացած երկրորդ դատական նիստում, երբ պրն Բանդիոնը բանավոր հայտարարություն է արել և նրան խնդրել են զեկույց ներկայացնել: Առարկություններ չեն եղել մինչև 1984թ. փետրվարի 14-ը, այսինքն, մինչ այն պահը, երբ պրն. Բանդիոնը պրն. Բրանդստետերի համար անբարենպաստ զեկույց է ներկայացրել: Նշված ժամանակ է վերջինիս փաստաբանը փորձագետին մեղադրել Գյուղատնտեսական ինստիտուտի հետ ունեցած սերտ կապերի ունենալու մեջ...

45. Միայն այն փաստը, որ պրն Բանդիոնը հանդիսացել է Գյուղատնտեսական ինստիտուտի աշխատակազմի անդամ, չի արդարացնում նրան՝ որպես մեղադրանքի կողմի վկա դիտելու համար: Գործի այլ նյութերում ևս չեն բացահայտվել նրան այս կերպ վարվելու այլ հիմքեր: Իրավամբ, որոշ դեպքերում պրն Բանդիոնն գերազանցել է իր գործառույթների հետ կապված պարտականությունները՝ իր զեկույցում անդրադառնալով այնպիսի հարցերի, որոնք վերաբերում էին ապացույցների գնահատմանը, սակայն սա հիմք չէ եզրահանգելու, որ քննարկվող դատավարությունում նրա զբաղեցրած դիրքը նման է մեղադրանքի կողմի վկաների դիրքին:

Հետևաբար, այլ փորձագետ նշանակելու վերաբերյալ պաշտպանության կողմի խնդրանքը Շրջանային դատարանի կողմից մերժելը... չի կարող դիտվել որպես զենքերի հավասարության սկզբունքի խախտում:

### 2. Հնարավորությունների հավասարություն/պաշտպան - փորձաքննություն

***Բոնիշն ընդդեմ Ավստրիայի (Bönisch v. Austria), 8658/79, 06.05.1985թ.***

33. …Ի լրումն դրա, տարբեր հանգամանքներ ցույց են տալիս տնօրենի ունեցած գերակա դիրքը:

Որպես «փորձագետ» իր լիազորություններն իրականացնելիս նա կարող է ներկա գտնվել լսումներին, դատարանի թույլտվությամբ հարցեր տալ մեղադրյալին և վկաներին և տվյալ պահին կարծիք հայտնել նրանց ցուցմունքների վերաբերյալ...

Հավասար վերաբերմունքի բացակայությունը հատկապես ակնհայտ է եղել առաջին վարույթներով դատարանի կողմից նշանակված փորձագետի և պաշտպանության կողմի «փորձագետ-վկաների» համապատասխան տեսակետների միջև առկա տարբերություններում: Որպես ընդամենը վկա՝ պրն Պրանդլին չի թույլատրվել ներկայանալ Շրջանային դատարան մինչև ցուցմունք տալը դատարան կանչվելը. ցուցմունք տալու ժամանակ նա հարցաքննվել է երկուստեք՝ դատավորի և փորձագետի կողմից. դրանից հետո նա զբաղեցրել է իր տեղը հանրային սրահում... Ինստիտուտի տնօրենը, մյուս կողմից, կիրառել է Ավստրիայի օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասությունը: Իհարկե, նա ուղղակիորեն հարցաքննել է պրն Պրանդլին և մեղադրյալին:

34. Ի լրումն դրա, քանի որ դիմողը փորձառու էր իր գործում, քիչ հավանական էր պաշտպանության կողմի միջնորդությամբ այլ փորձագետի նշանակումը...

Եթե իրավասու դատարանը պարզաբանման կարիք է ունեցել՝ կապված Ինստիտուտի կարծիքի հետ, այն առաջին հերթին պետք է լսեր Ինստիտուտի աշխատակազմի անդամին.... Դատարանը չի կարող դիմել այլ փորձագետի, բացառությամբ Քրեական դատավարության օրենսգրքի 125 և 126-րդ հոդվածներով վկայակոչված չնախատեսված հանգամանքների ..., որոնցից ոչ մեկը սույն գործով առկա չի եղել:

35. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում...

***Գ.Բ.-ն ընդդեմ Ֆրանսիայի (G.B. v. France), 44069/98, 02.10.2001թ.***

68. Դատարանի կարծիքով, միայն այն փաստը, որ Ասիզների դատարանին դիմելիս փորձագետն արտահայտել է իր գրավոր հայտարարությունում արտահայտածից տարբերվող կարծիք, ինքնին չի հանդիսանում արդար դատական քննության սկզբունքի խախտում... Նմանապես, արդար դատական քննությունը չի պահանջում, որ ազգային դատարանները, պաշտպանության կողմի պահանջի դեպքում, պետք է նշանակեն այլ փորձագետ անգամ այն դեպքում, երբ պաշտպանության կողմից նշանակված փորձագետի կարծիքը հիմնավորում է մեղադրող կողմի տեսակետը... Համապատասխանաբար, երկրորդ կարծիքի ձեռքբերման մերժումը չի կարող ինքնին անարդար դիտվել:

69. Դատարանը նշում է, սակայն, որ սույն գործով փորձագետը դատարանին դիմելիս ոչ միայն տարբերվող կարծիք է հայտնել, այլև գրավոր զեկույցում նա ամբողջությամբ փոխել է իր կարծիքը

միևնույն լսման ընթացքում... Այն նաև նշում է, որ երկրորդ կարծիքի համար դիմողի կողմից ներկայացված դիմումին հաջորդել է այս «կտրուկ փոփոխությունը», որի արդյունքում փորձագետն արագ հետազոտել է նոր ապացույցը՝ դիմողի հանդեպ ընդունելով չափազանց անցանկալի դիրք: Թեև դժվար է հաստատ ասել, թե փորձագետի կարծիքը ինչ ազդեցություն կարող է ունենալ ատենակալների գնահատականի վրա, Դատարանը գտնում է, որ խիստ բարձր է հավանականությունը, որ նման անկանխատեսելի փոփոխությունը կարող է անխուսափելիորեն փորձագետի կարծիքին հաղորդել որոշակի կշիռ:

70. Քննարկելով այս մասնավոր հանգամանքները, մասնավորապես՝ փորձագետի կտրուկ փոփոխությունը՝ համակցված երկրորդ կարծիք ստանալու վերաբերյալ դիմումի մերժման հետ, Դատարանը գտնում է, որ արդար դատական քննության պահանջները խախտվել են և պաշտպանության իրավունքները չեն ապահովվել: Հետևաբար, տեղի է ունեցել, միասին վերցրած, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի (b) կետի խախտում:

***Ակարդին և այլոք ընդդեմ Իտալիայի (Accardi and Others v. Italy) (dec.), 30598/02, 20.01.2005թ.***

Ինչ վերաբերում է հոգեբանի զեկույց չպահանջելուն կամ դատական նիստի ընթացքում պաշտպանության կողմի փորձագետ վկաներին հարցաքննելուն, ապա Դատարանը նշում է, որ ներպետական դատարանները տրամաբանական և պատշաճ փաստարկների հիման վրա եզրակացրել են, որ նման քննչական գործողությունները որևէ կապ չունեն վարույթի հետ: Ֆլորենցիայի Վերաքննիչ դատարանը բարձրացրել է այն հարցը, որ X-ը և Y-ը երկար ժամանակ գտնվել են սոցիալական ծառայությունների դեպարտամենտի կողմից վարձված հոգեբանների հսկողության տակ և առկա չի եղել որևէ հիմք կասկածի տակ առնելու իրենց գործողությունների համար պատասխան տալու՝ երեխաների կարողությունը: Բացի դրանից, երեխաների հարցաքննությունն իրականացվել է երեխաների հոգեբանության մասնագետի՝ տիկին Բ.-ի ներկայությամբ:

Հետևաբար, Դատարանը չի կարող եզրակացնել, որ պաշտպանության իրավունքները խախտվել են այն չափով, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատական քննության սկզբունքի խախտում:

### 3. Խաչաձև հարցաքննություն

***Կոտինն ընդդեմ Բելգիայի (Cottin v. Belgium), 48386/99, 02.06.2005թ.***

32. Դիմողը բողոքում է, որ իրեն խոչընդոտել են մասնակցելու 1997թ. ապրիլի 4-ին իրականացված փորձաքննությանը, մինչդեռ Պ.Հ.-ն, որն այստեղ ընկերակցում էր իր ավագ եղբորն ու քննարկվող

դատավարության կողմ էր հանդիսանում, հնարավորություն է ունեցել ներկա գտնվելու անձնական բժշկական խորհրդին: Այնուամենայնիվ, որևիցե տեխնիկական բարդություն խոչընդոտ չի հանդիսացել, որպեսզի դիմողը մասնակցի վերը նշված փորձաքննության նախապատրաստմանը, որն իրականացվել է դատական նիստի ընթացքում, և Դ.Հ.-ի քաղաքացիական հայցի քննությանն ու ապացույցների հետազոտմանը: Արդյունքում, դիմողը հնարավորություն չի ունեցել թե՛ անձամբ, թե՛ իր փաստաբանի կամ բժշկական խորհրդի միջոցով, հերքելու փարձաքննության արդյունքները՝ փորձագետի կողմից լսված անձանց հետ առերես հարցաքննության ձևով, կամ բացատրություններ տալու քննված ապացույցների ու հավաքված տեղեկատվության վերաբերյալ, ինչպես նաև պահանջելու իրականացնել լրացուցիչ փորձաքննություն: Այդպիսի պայմաններում, դիմողը չի կարողացել արդյունավետորեն լսելի դարձնել իր ձայնը մինչ քննարկվող փորձաքննության արձանագրության հաստատումը: Հայցում կամ դատական նիստերի ժամանակ փորձաքննության արձանագրության վիճարկման անուղղակի հնարավորությունը չի կարող դիտարկվել փորձաքննությանը մասնակցելու իրավունքին համարժեք: Այսպիսով, դիմողը չի ունեցել էական ապացույցն արդյունավետ կերպով մեկնաբանելու հնարավորություն, և լրացուցիչ փորձաքննություն պահանջելու պահանջն այս պարագայում ոչինչ չէր կարող փոխել և վերականգնել եղածը: Իրականում, ստեղծված իրավիճակում բելգիական իրավունքի տվյալ ժամանակաշրջանում նոր փորձաքննությունը ևս եղել է միակողմանի:

***Բալսիտե-Լիդեիկիենեն ընդդեմ Լիտվայի (Balsyte-Lideikiene v. Lithuania), 72596/01, 04.11.2008թ.***

63. Սույն գործով Դատարանը նշում է, որ 6-րդ հոդվածի 3-րդ մասի (d) կետը վերաբերում է վկաներին և ոչ թե փորձագետներին: Սակայն Դատարանը կրկնում է, որ 3-րդ մասում ամրագրված երաշխիքները, ի թիվս այլոց, հանդիսանում են 1-ին մասում ամրագրված արդար դատական քննության հիմնական տարրեր… Սույն գործի հանգամանքներում, Դատարանը, ուսեևնալով համապատասխան մոտեցում 3-րդ մասի երաշխիքների նկատմամբ, ներառյալ (d) կետում ձևակերպվածները, գտնում է, որ պետք է քննարկի դիմողի՝ 1-ին մասով նախատեսված ընդհանուր կարգով ներկայացված բողոքները…

64. ...մինչդատական փուլի ընթացքում փորձագետների կողմից ներկայացված եզրակացությունները որոշիչ տեղ են զբաղեցնում դիմողի դեմ հարուցված վարույթում: Հետևաբար, անհրաժեշտ է որոշել, թե դիմողն արդյոք ցանկություն է հայտնել փորձագետին հարցաքննել դռնբաց դատական նիստում, եթե՝ այո, ապա արդյոք նրան նման հնարավորություն ընձեռվել է:

65. Հիմք ընդունելով իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը՝ Դատարանն ուշադրություն է դարձնում դիմողի կողմից 2001թ.

մարտի 12-ին ներկայացված գրավոր խնդրանքը, որը Վիլնյուսի Երկրորդ շրջանային դատարանն ստացել է հաջորդ օրը, և որով դիմողը խնդրել է դատարանին հետաձգել նիստը, քանի որ փորձագետներն արդեն հերթական՝ երրորդ անգամ չէին ներկայացել դատարան… Դիմողը խնդրել է դատարանին պարզել փորձագետների բացակայության պատճառները և պատժել նրանց: Բացի դրանից, իր բողոքում դիմողը վկայակոչել է առաջին ատյանի դատարանի նիստին փորձագետների ներկայությունն ապահովելու վերաբերյալ իր խնդրանքը և նրանց հրավիրելու դատարանի մերժումը: Սակայն Գերագույն վարչական դատարանը մերժել է դիմողի խնդրանքը, քանի որ նրա գործում առկա որևէ հանգամանք չի վկայում այն մասին, որ նրա կողմից փորձագետներին չհարցաքննելը խախտել է որևէ դատավարական նորմ:

66. Վերլուծելով ներկայացված բոլոր նյութերը՝ Դատարանը գտնում է, որ ո՛չ միջնորդատական փուլում, ո՛չ դատական քննության ընթացքում դիմողին հնարավորություն չի տրվել հարցաքննել փորձագետներին, որոնց կարծիքը բովանդակում էր որոշակի հակասություններ, պարզելու համար, թե նրանք ենթակա են, արդյոք, հսկողության կամ կրում են որևէ պատասխանատվություն իրենց եզրակացությունների նկատմամբ կասկածների առկայության դեպքում: Հիմնվելով նման գործերով նախադեպային իրավունքի վրա՝ Դատարանը եզրակացնում է, որ սույն գործով դռնբաց դատական նիստում փորձագետներին հարցաքննելու վերաբերյալդիմողի խնդրանքի մերժումը չի համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

## VI. ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆ

### 1. Թույլատրելիության դեպքերը պետք է մանրամասն ուսումնասիրվեն

***Հուլկի Գանեսն ընդդեմ Թուրքիայի (Hulki Gunes v. Turkey), 28490/95, 19.06.2003թ.***

91. Դատարանը նշում է, որ այն պայմանները, որոնցում դիմողը պահվել է ոստիկանությունում կալանքի տակ եղած ժամանակ, խախտվել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածը: Այդ կապակցությամբ Դատարանը գտնում է, որ Թուրքիայի օրենսդրությունը չի վերաբերում հարցաքննության ընթացքում ձեռք բերված ինքնախոստովանական ցուցմունքին, մինչդեռ դատարանում մերժում է որևէ եզրակացություն, որը կարող է որոշիչ լինել պաշտպանության հեռանկարների համար... Թեև նրա խնդիրը չէ վերացականորեն պարզել քրեական իրավունքում ապացույցի թույլատրելիության հարցը, Դատարանը ցավալի է համարում այն, որ սույն գործով Ազգային անվտանգության դա-

տարանը չի պարզել այդ հարցը՝ նախքան գործի հանգամանքները հետազոտելը: Նման նախնական քննությունն ներպետական դատարաններին հնարավորություն է տվել քննադատելու մեղադրական ապացույցների ձեռքբերման անօրինական մեթոդները:

## 2. Խոշտանգումների և անմարդկային ու նվաստացնող վերաբերմունքի կիրառումը

***Ջալոհն ընդդեմ Գերմանիայի (Jalloh v. Germany) [GC], 54810/00, 11.07.2006թ.***

105. …քրեական վարույթներով 3-րդ հոդվածի խախտմամբ ձեռք բերված ապացույցների կիրառումը լուրջ խնդիրներ է առաջացնում նման վարույթների արդարության կապակցությամբ: Դատարանը սույն գործով չի գտել, որ դիմողը ենթարկվել է խոշտանգումների: Դատարանի կարծիքով, մեղադրական ապացույցները, անկախ նրանից, թե դա տրվել է ինքնախոստովանության, թե՝ իրեղեն ապացույցի ձևով, որոնք ստացվել են բռնության կամ դաժանության կամ որպես խոշտանգում բնութագրման ենթակա վերաբերմունքի այլ ձևերի արդյունքում, երբևէ չեն կարող դիտվել որպես տուժողի մեղքի ապացույց՝ անկախ դրանց ապացուցողական արժեքից: Յուրաքանչյուր այլ եզրակացություն կծառայի միայն բարոյական պարսավանքի ենթակա վարքագծի անուղղակի օրինականացմանը, որը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հեղինակներն օրենքից դուրս են դիտել, կամ, ինչպես դա այնքան լավ նշված է ԱՄՆ Գերագույն դատարանի՝ Ռոչինի գործով որոշման մեջ..., «օրենքի ծածկին դաժանություն հաղորդող»: Այս կապակցությամբ այն նշում է, որ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 15-րդ հոդվածն ամրագրում է, որ ցուցմունքները, որոնք տրվել են խոշտանգումների արդյունքում, չպետք է կիրառվեն որպես ապացույց այդ խոշտանգումների զոհերի դեմ հարուցված վարույթների ընթացքում:

106. Այն վերաբերմունքը, որին դիմողն արժանացել էր, չէր կարող բնորոշվել որպես խոշտանգում, քանի որ ուներ 3-րդ հոդվածով սահմանված արգելքի ծավալում ներառվող դաժանության նվազագույն աստիճան: Չի կարող բացառվել, որ սույն գործի մասնավոր հանգամանքներում խոշտանգման չհանգեցրած վատ վերաբերմունքի դիտավորյալ գործողությունների միջոցով ստացված ապացույցների կիրառումը կհանգեցնի տուժողի դեմ հարուցված վարույթի անարդարության՝ անկախ նրա կողմից ենթադրաբար կատարված հանցագործության ծանրությունից, ապացույցին տրված արժեքից և դիմողի կողմից դրա թույլատրելիությունը և իր վարույթով դրա կիրառումը վիճարկելու տուժողի հնարավորություններից:

107. Սույն գործով հիմնական հարցը, որը կայանում է նրանում, թե արդյոք որպես անմարդկային և նվաստացնող վերաբերմունք

որակված գործողության միջոցով ձեռք բերված ապացույցի կիրառումն ինքնաբերաբար հանգեցրել է վարույթի անարդարության, չլուծված է մնում: Դատարանը նշում է, որ եթե անգամ իշխանությունները նպատակ չեն ունեցել դիմողին ցավ ու տառապանք պատճառել, ապացույցը ձեռք է բերվել այնպիսի միջոցով, որը խախտել է Կոնվենցիայով երաշխավորված էական իրավունքներից մեկը: Բացի դրանից, կողմերը համաձայնել են, որ վիճարկվող միջոցով ստացված թմրամիջոցները հանդիսացել են դիմողի դատապարտումն ապահովող որոշիչ տարր: Իրավամբ, ինչպես արդարացիորեն չի վիճարկվել, դիմողին հնարավորություն է տրվել, որից նա օգտվել է, վիճարկելու այն թմրամիջոցների օգտագործումը, որոնք ձեռք էին բերվել վիճարկվող միջոցով: Սակայն ներպետական դատարանների կողմից այդ ապացույցը հանելու վերաբերյալ որևէ հայեցողություն չի դրսևորվել, քանի որ նրանք հարկադրաբար որոշումներ առաջացնելը դիտել են ներպետական օրենսդրությամբ սահմանված միջոց: Բացի դրանից, հասարակական շահը՝ կապված դիմողի դատապարտումն ապահովելու հետ, չի կարող այն կշիռն ունենալ, որ երաշխավորի նման ապացույցի կիրառման թույլատրելիությունը վարույթի ընթացքում: Ինչպես նշվել է վերը, միջոցը կիրառվել էր փողոցում համեմատաբար փոքր ծավալով թմրամիջոցների վաճառքով զբաղվող անձի նկատմամբ, ով վերջնականապես պայմանականորեն դատապարտվել էր վեց ամիս ժամկետով ազատազրկման և նրա նկատմամբ փորձաշրջան էր սահմանվել:

108. Այս հանգամանքներից ելնելով՝ Դատարանը գտնում է, որ թմրամիջոցների վերաբերյալ ապացույցները ձեռք են բերվել հարկադրաբար դիմողի մոտ որոշումներ առաջացնելու միջոցով, ինչը հանգեցրել է ամբողջությամբ վերցրած նրա նկատմամբ անարդար վարույթի:

***Հարությունյանն ընդդեմ Հայաստանի (Harutyunyan v. Armenia), 36549/03, 28.06.2007թ.***

64. Սույն գործով Դատարանը նշում է, որ դիմողը հարկադրված է եղել խոստովանական ցուցմունքներ տալ, իսկ վկաներ Տ.-ն և Ա.-ն հարկադրված են եղել տալ ցուցմունքներ, որոնք ապացուցում են դիմողի մեղքը... Դատարանը վկայակոչում և համաձայնում է Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի եզրակացություններին..., որը դատապարտեց ոստիկանության աշխատակիցների արարքը՝ դրանք որակելով որպես խոշտանգման հատկանիշներ պարունակող...: Ավելին, Կառավարությունն իր պնդումներում նույնպես դիմողի և վկաներ Տ.-ի և Ա.-ի նկատմամբ ցուցաբերված վատ վերաբերմունքը որպես խոշտանգում է բնութագրել...: Եթե նույնիսկ Դատարանի իրավասությունից դուրս է *ratione temporis* դիմողի և վկաներ Տ.-ի ու Ա.-ի նկատմամբ վատ վերաբերմունքի հանգամանքների վերաբերյալ 3-րդ հոդվածի համատեքստում ուսումնասիրութ-

յուն կատարելը, այնուամենայնիվ, այն զրկված չէ վերոնշյալ որակումը հաշվի առնելու հնարավորությունից, որպեսզի որոշի 6-րդ հոդվածի երաշխիքներին համապատասխանությունը: Դատարանն այնուհետև անում է այն եզրակացությունը, որ նման վերաբերմունքի հետևանքով ձեռք բերված ցուցմունքները, փաստորեն, ներպետական դատարաններում օգտագործվել էին որպես ապացույց՝ դիմողի դեմ քրեական դատավարությունում… Ավելին, դա կատարվել էր անտեսելով այն փաստը, որ վատ վերաբերմունքի ցուցաբերման փաստն արդեն հաստատված էր զուգահեռ ընթացող վարույթում, որը հարուցվել էր ոստիկանության դիտարկվող աշխատակիցների նկատմամբ:

65. Այս կապակցությամբ Դատարանը մեջբերում է, որ ներպետական դատարանները արդարացրել են խոստովանական ցուցմունքի օգտագործումն այն փաստերով, որ դիմողը խոստովանել էր քննիչին, այլ ոչ թե ոստիկանության աշխատակիցներին, որոնք նրա նկատմամբ վատ վերաբերմունք էին ցուցաբերել, որ վկա Տ.-ն հաստատել էր իր նախկին ցուցմունքները 1999թ. օգոստոսի 11-ի առերեսման ժամանակ և այն փաստով, որ երկու վկաներն էլ Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանում համաձնման ցուցմունքներ էին տվել 1999թ. հոկտեմբերի 26-ի դատալսման ժամանակ: Նման հիմնավորումը, սակայն, համոզիչ չէ Դատարանի համար: Նախևառաջ, Դատարանի կարծիքով առկա են համոզիչ ապացույցներ առ այն, որ անձը ենթարկվել է վատ վերաբերմունքի, ինչպես նաև հոգեբանական ճնշումների և սպառնալիքների: Այն փաստը, որ դիմողը խոստովանել կամ իր հետագա ցուցմունքներում հաստատել է ճնշման տակ տրված իր խոստովանությունը ոչ թե նշված վատ վերաբերմունքի ցուցաբերման համար պատասխանատու, այլ մեկ այլ մարմնի, չպետք է մեխանիկորեն հանգեցնի այն եզրակացությանը, որ նման խոստովանությունը կամ հետագա ցուցմունքները չեն հանդիսացել նրա նկատմամբ ցուցաբերված վատ վերաբերմունքի հետևանք և նրա հետագա ապրումների առումով հնարավոր երկյուղ: Երկրորդ. նման արդարացումն ակնհայտորեն հակասում է այն եզրահանգումներին, որոնք շարադրվել են ոստիկանության՝ խոշտանգումներ կիրառած աշխատակիցների նկատմամբ կայացված մեղադրական դատավճռում, համաձայն որի՝ «սպառնալով շարունակել խոշտանգումները՝ ոստիկանության աշխատակիցներն ստիպել են դիմողին խոստովանել»…: Ի վերջո, կային բավարար ապացույցներ առ այն, որ վկաներ Տ.-ն և Ա.-ն ենթարկվել են հետագայում խոշտանգումների ենթարկվելու և իրենցից վրեժ լուծելու շարունակական սպառնալիքների 1999թ. ընթացքում և 2000թ. սկզբին… Ավելին, այն փաստը, որ նրանք դեռևս զինվորական ծառայության մեջ էին, անկասկած, կարող էր նրանց ավելի վախեցնել և ազդեցություն ունենալ ցուցմունքների վրա: Սա հաստատում է այն փաստով, որ զորացրվելուց հետո նրանց ցուցմունքների բնույթն էականորեն փոխվել էր: Հետևաբար, այդ շրջանում տրված ցուցմունքնե-

րի արժանահավատությունը պետք է կասկածի տակ առնվի և, հետևաբար, այդ ցուցմունքները չպետք է վկայակոչվեին խոշտանգումների ազդեցության հետևանքով տրված ցուցմունքների արժանահավատության հիմնավորման համար:

66. Վերոնշյալ վերլուծության հիման վրա Դատարանը եզրահանգում է, որ անկախ նրանից, թե ինչ ազդեցություն են ունեցել խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքները դիմողի քրեական վարույթի արդյունքի վրա, նման ապացույցի օգտագործումն ամբողջ դատավարությունը դարձնում է անարդար…

### 3. Ինքնախոստովանության արգելքին հակառակ

***Ալանն ընդդեմ Միացյալ Թագավորության (Allan v. United Kingdom), 48539/99, 05.11.2002թ.***

52. Սույն գործով Դատարանը նշում է, որ իր ձերբակալումից հետո ոստիկանությունում կատարված հարցաքննության ժամանակ դիմողն իր փաստաբանի խորհրդով օգտվել է լռություն պահպանելու իր իրավունքից: Հ.-ն, ով երկար ժամանակ հանդիսացել էր ոստիկանությանը տեղեկություններ հայտնող գործակալ, տեղավորվել էր Սթրեթֆորդի ոստիկանության բաժնի այն խցում, որտեղ պահվում էր դիմողը, այնուհետև տեղավորվել է դիմողի հետ նույն կալանավայրում, դիմողից՝ կասկածվող հանցագործության հետ նրա առնչությունը հաստատող տեղեկություն կորզելու հատուկ նպատակով: Դիմողի գործով ներկայացված ապացույցները ցույց են տալիս, որ ոստիկանությունը ցուցումներ է տվել Հ.-ին՝ «հնարավորինս ճշելու նրան»: Հակառակ *Խանի* որոշման մեջ արտահայտված դիրքորոշմանը, խոստովանությունները, որոնք իբրև դիմողն արել էր Հ.-ին, և որոնք հանդիսացել են դատարանում նրա դեմ ներկայացված հիմնական կամ որոշիչ ապացույց, չեն հանդիսացել դիմողի ցանկությամբ տրված, ինքնաբուխ կամ կամավոր ցուցմունքներ, այլ ձեռք են բերվել Հ.-ի համառ հարցաքննությունների արդյունքում և, ոստիկանության խնդրանքով, Հ.-ն որպես դրանց աղբյուր՝ ներկայացրել էր այն ցուցմունքները, որոնք իրականում սպանության վերաբերյալ հարկադրված զրույցներ են եղել և կարող էին Ոստիկանության ֆորմալ հարցաքննության ժամանակ կիրառվող երաշխիքներից, ներառյալ փաստաբանի ներկայությունից և սովորաբար արվող զգուշացումից զուրկ հարցաքննությանը հավասարազոր դիտվել: Թեև ճիշտ է, որ դիմողի և Հ.-ի միջև որևէ հատուկ կապ չի եղել և ուղղակի հարկադրանքի գործադրման փաստեր չեն հայտնաբերվել, սակայն Դատարանը գտնում է, որ դիմողը ենթարկվել է հոգեբանական ճնշումների, որոնք հանդիսացել են ոտնձգություն դիմողի կողմից Հ.-ին ենթադրաբար արված բացահայտումների «կամավորության» նկատմամբ. նա սպանության գործով կասկածյալ է եղել, գտնվել է կալանքի և սպանության վերաբերյալ կատարվող հարցաքննությունների ժամանակ ոստիկանների ուղղակի

ճնշման տակ, և կարող էր զգայուն լինել իրեն վստահող Հ.-ի համոզումների հանդեպ, ում հետ նա մի քանի շաբաթ նույն խցում էր գտնվել: Այդ հանգամանքներում, տեղեկությունը, որն ստացվել էր այս ճանապարհով՝ Հ.-ի միջոցով, պետք է դիտվի որպես դիմողի կամքին հակառակ ձեռք բերված, իսկ գործի քննության ժամանակ դրա կիրառումը՝ ոտնձգություն դիմողի՝ լռություն պահպանելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքի նկատմամբ:

***Պ.Գ.-ն և Ջ.Հ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (P.G. and J.H. v. United Kingdom), 44787/98, 25.09.2001թ.***

80. Քանի որ դիմողները վիճարկել են համեմատման համար ձայնի նմուշները վերցնելու այն գաղտնի ձևը, որը խախտել է ինքնախոստովանությունից հրաժարվելու նրանց իրավունքը, Դատարանը գտնում է, որ ձայնի նմուշները, որոնք չեն ներառում որևէ մեղադրող հայտարարություն, կարող են դիտվել որպես արյան, մազի կամ ֆիզիկական կամ նպատակային նմուշներ, ինչը կիրառվում է դատաբժշկական փորձաքննության ժամանակ, և որոնց վրա չի տարածվում ինքնախոստովանությունից հրաժարվելու իրավունքը...

81. Այս հանգամանքներում, Դատարանը գտնում է, որ դիմողների գործով գաղտնի ձայնագրված նյութերի կիրառումը չի հակասում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արդարության պահանջներին:

***Յալոն ընդդեմ Գերմանիայի (Jalloh v. Germany) [GC], 54810/00, 11.07.2006թ.***

113. Դատարանի կարծիքով, սույն գործով քննարկվող ապացույցը, մասնավորապես՝ դիմողի օրգանում թաքցված թմրամիջոցները, որոնք ձեռք էին բերվել հարկադրաբար որձկումներ առաջացնելու միջոցով, կարող են դիտվել որպես նմուշներ, որոնք ստացվել են կասկածյալի ազատ կամքի բացակայության պայմաններում, և որոնց կիրառումը քրեական դատավարությունում չի արգելվում: Սակայն առկա են մի քանի տարրեր, որոնք տարբերում են սույն գործը *Սաունդերսի* որոշման մեջ թվարկված օրինակներից: Առաջին, ինչ վերաբերում է *Ֆանկին և Ջ.Բ.-ն ընդդեմ Շվեյցարիայի* վճիռներին՝ հարկադրական որձկումները կիրառվել են դիմողի կամքին հակառակ՝ իրեղեն ապացույցներ ձեռք բերելու համար: Հետևաբար, ֆիզիկական նմուշները, որոնք թվարկված են *Սաունդերսի* գործով, վերաբերում են այն նյութերին, որոնք ձեռք են բերվել դատաբժշկական փորձաքննություն իրականացնելու համար, օրինակ՝ թմրամիջոցի կամ ալկոհոլի առկայությունը պարզելու համար:

114. Երկրորդ, սույն գործով կիրառված հարկադրանքն էականորեն տաբերվում է հարկադրանքի այն աստիճանից, որը սովորաբար պահանջվում է *Սաունդերսի* գործով նշված նմուշներն ստանալու համար: Նման նյութեր ստանալու համար մեղադրյալին խնդրվում է հան-

գիստ հանդուրժել իր ֆիզիկական ամբողջականության նկատմամբ փոքր միջամտությունը (օրինակ՝ արյուն, մազ կամ մարմնական հյուսվածք վերցնելու դեպքում): Եթե անգամ անհրաժեշտ է մեղադրյալի ակտիվ մասնակցություն, *Սաունդերսի* որոշումից երևում է, որ խոսքը վերաբերում է այնպիսի նյութերին, որոնք ստացվում են մարմնի բնականոն կենսագործունեության արդյունքում (ինչպիսիք են, օրինակ՝ շնչի, մեզի կամ ձայնի նմուշները): Հակառակ դրան, սույն գործով ապացույցներ ձեռք բերելու նպատակով դիմողին որձկալ հարկադրելու համար անհրաժեշտ էր նրա քթի մեջ հարկադրաբար խողովակ տեղադրել և այդ նյութն այնպես ներարկել, որ խթաներ նրա օրգանիզմում հիվանդագին հակազդեցության առաջացումը: Ինչպես նշվել է վերը, այս գործընթացը դիմողի կյանքի համար անվտանգ չէր:

115. Երրորդ, սույն գործով ապացույցները ձեռք են բերվել այնպիսի եղանակով, որը խախտել է 3-րդ հոդվածը: Դիմողի գործով կիրառված ընթացակարգը խստիվ հակասում է, օրինակ, շնչի հետազոտմանը կամ արյան նմուշ վերցնելու կարգին: Վերջիններիս նման գործընթացները, եթե չկան բացառիկ հանգամանքներ, չեն պարունակում դաժանության այնպիսի աստիճան, որը կխախտեր 3-րդ հոդվածը: Բացի դրանից, թեև դրանք միջամտություն են կասկածյալի անձնական կյանքի անձեռնմխելիությանը, այս ընթացակարգերի իրականացումը, որպես կանոն, արդարացվում է 8-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով՝ որպես քրեական հանցագործությունների կանխման համար անհրաժեշտ միջոցներ (տ՛ես, *inter alia*, *Տիրադո Օրտիզի և Լոզանո Մարտինի վճիռները*...):

116. Հետևաբար, ինքնախոստովանական ցուցմունք չտալու իրավունքը սույն գործով կիրառելի է:

117. Պարզելու համար, թե արդյոք խախտվել է իր դեմ ցուցմունք չտալու՝ դիմողի իրավունքը, Դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հանգամանքներին. ապացույցը ձեռք բերելու համար կիրառված հարկադրանքի բնույթը և աստիճանը. քննարկվող հանցագործության բացահայտման և պատժման նկատմամբ հանրային շահի կշիռը. վարույթի ընթացքում անհրաժեշտ երաշխիքների առկայությունը. նման կերպ ձեռք բերված նյութերի կիրառումը:

118. Ինչ վերաբերում է սույն գործով ապացույցի ձեռքբերման նպատակով կիրառված հարկադրանքի բնույթին և աստիճանին, Դատարանը կրկնում է, որ դիմողին թմրամիջոցները որձկալ հարկադրելն ակնհայտորեն հանդիսացել է միջամտություն նրա հոգեկան և ֆիզիկական ամբողջականությանը...

119. Ինչ վերաբերում է դիմողի դատապարտումն ապահովելու նպատակով ապացույցի կիրառման նկատմամբ հանրային շահի կշռին, Դատարանը գտնում է, որ, ինչպես նշվել է վերը, վիճարկվող միջոցը կիրառվել էր փողոցում համեմատաբար փոքր ծավալով թմրամիջոցների վաճառքով զբաղվող անձի նկատմամբ, ով վերջնա-

կանապես պայմանականորեն դատապարտվել էր վեց ամիս ժամկետով ազատազրկման, և նրա նկատմամբ փորձաշրջան էր սահմանվել: Սույն գործի հանգամանքներում դիմողի դատապարտումն ապահովելու վերաբերյալ հանրային շահի առկայությունը չի կարող արդարացնել նման խիստ միջամտությունը նրա ֆիզիկական և հոգեկան ամբողջականությանը:

120. Վերադառնալով դատավարության ընթացքում անհրաժեշտ երաշխիքների առկայությանը՝ Դատարանը գտնում է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 81a-րդ բաժինը սահմանում է, որ ֆիզիկական միջամտությունները պետք է կատարվեն *lege artis* բժշկի կողմից՝ հիվանդանոցում, և միայն այն դեպքում, եթե այն վտանգ չի սպառնում մեղադրյալի առողջությանը: Թեև կարելի է ասել, որ ներպետական օրենսդրությունը, որպես կանոն, նախատեսում է երաշխիքներ՝ ուղղված ինքնիրավչության և միջոցների ոչ պատշաճ կիրառման դեմ, դիմողը, հիմնվելով լռություն պահպանելու իր իրավունքի վրա, հրաժարվել է նախնական բժշկական հետազոտությունից: Նա կարողացել է հաղորդակցվել միայն կոտրված անգլերենով, ինչը նշանակում է, որ նա ենթարկվել է ամբողջական ստուգման, առանց այդ ընթացակարգին դիմանալու իր ֆիզիկական կարողության:

121. Ինչ վերաբերում է ձեռք բերված ապացույցների կիրառմանը, Դատարանը կրկնում է, որ որձկում առաջացնելու արդյունքում ձեռք բերված թմրամիջոցները հանդիսացել են որոշիչ ապացույց թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ նրան մեղադրելու և դատապարտելու համար: Իրոք, դիմողին տրամադրվել է, և նա օգտվել է, այս ապացույցն իր գործով վարույթի ընթացքում կիրառելու դեմ առարկելու հնարավորություն: Սակայն, ինչպես նշվել է վերը, որևէ հնարավոր հայեցողություն այդ ապացույցը հանելու վերաբերյալ չի դրսևորվել, քանի որ ներպետական դատարանները հարկադրաբար որձկումներ առաջացնելը դիտել են ներպետական օրենսդրությամբ սահմանված միջոց:

122. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ դիմողի գործով հարկադրաբար որձկումներ առաջացնելու միջոցով ձեռք բերված ապացույցների կիրառումը թույլ տալը խախտում է իր դեմ ցուցմունք չտալու նրա իրավունքը և, հետևաբար ընդհանուր առմամբ, հանգեցնում, նրա նկատմամբ հարուցված վարույթի անարդարության:

***Բիկովն ընդդեմ Ռուսաստանի** (Bykov v. Russia) [GC], 4378/02, 10.03.2009թ.*

99. ...Դիմողը վիճարկել է, որ ոստիկանությունը գաղտնալսելով Վ.-ի հետ, ով գործել է նրանց ցուցումներով, իր խոսակցությունը, սահմանազանցել է թույլատրելի վարքագիծը: Նա վիճարկել է, որ իր դատապարտումն արդար դատական քննության գաղափարի հետ անհամատեղելի խաբեության և ծուղակը գցելու հետևանք է …

102. Դատարանը նշում է, որ սույն գործով դիմողի վրա ճնշում չի գործադրվել Վ.-ին իր «հյուրերի տանն» ընդունելու, նրա հետ խոսելու կամ Վ.-ի կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ մեկնաբանություններ անելու համար… դիմողը եղել է ազատության մեջ, իր բնակարանում, իր թիկնապահների և այլ ծառայող անձնակազմի ներկայությամբ, և ոչ թե կալանքի տակ: Վ.-ի հետ նրա հարաբերությունները, որոնք հիմնված են եղել վերջինիս՝ դիմողի ենթակայության ներքո գտնվելու վրա, նրա վրա որևէ հատուկ վարքագիծ դրսևորելու պարտականություն չեն դրել: Այլ կերպ ասած, դիմողն ազատ էր Վ.-ին հանդիպելու, նրա հետ խոսելու կամ դա անելուց հրաժարվելու հարցում: Դրանից բխում է, որ նա ցանկություն է ունեցել շարունակել Վ.-ի հետ սկսած խոսակցությունը, քանի որ դրա առարկան նրան անձնապես հետաքրքրում էր: Այսպիսով, Դատարանը համոզված չէ, որ ապացույցի ձեռքբերումը կապված է եղել հարկադրանքի կամ ճնշման տարրերի հետ…

103. Դատարանն անդրադառնում է նաև այն փաստին, որ իրենց գնահատականները տալու ժամանակ ներպետական դատարաններն ուղղակիորեն չեն հիմնվել Վ.-ի հետ դիմողի խոսակցության ձայնագրության կամ դրա արձանագրության վրա, և չեն խնդրել մեկնաբանել որոշակի պնդումներ, որոնք դիմողն արել է այդ խոսակցության ընթացքում: Դրա փոխարեն, նրանք հետազոտել են փորձագետի եզրակացությունը, որը հիմնավորում էր Վ.-ի հետ նրա կապը և այն ձևը, որով նա ներգրավվել էր խոսակցության մեջ: Բացի դրանից, գործի քննության ընթացքում ձայնագրությունը չի դիտվել որպես ակնհայտ ինքնախոստովանություն կամ թույլատրելի տեղեկություն, որը կարող է դրվել մեղքի հաստատման հիմքում. այն սահմանափակ դերակատարություն է ունեցել դատարանի կողմից գնահատված ապացույցների բարդ ծավալում:

104. Հետազոտելով այն երաշխիքները, որոնք զուգորդել են քննարկվող ապացույցի թույլատրելիության և արժանահավատության, վիճարկվող հարկադրանքի բնույթի և աստիճանի, ինչպես նաև գաղտնի օպերացիայի արդյունքում ստացված նյութի կիրառման գնահատմանը, Դատարանը գտնում է, որ դիմողի գործով վարույթը՝ ընդհանուր առմամբ, չի հակասում արդար դատական քննության պահանջին:

Տ՛ես նաև վերը՝ **B.IV.8**, **B.V.2** և **C.III.3**

### 4. Հանցագործության կատարման սադրումն այն բացահայտելու նպատակով և դրդչությունը

***Էդվարդսը և Լյուիսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Edwards and Lewis v. United Kingdom) [GC], 39647/98 և 40461/98, 27.10.2004թ.***

46. Պալատի՝ 2003թ. հուլիսի 22-ի դատավճռի «Օրենքի» մասի համաձայն՝ (պարբերությունների սկզբնական համարակալումը բաց է թողնված):

…Կառավարությունը, որը խնդրել է սույն գործն ուղարկել Մեծ պալատ, այլևս չի ցանկանում հետևել այս ուղղորդմանը և հաստատել է, որ իրենք քվեարկել են Մեծ պալատի օգտին միայն այն պատճառով, որ հավանության արժանանա Պալատի 2003թ. հուլիսի 22-ի վճիռը: Դիմողներն ընդունել են Պալատի վճիռը և չեն առարկել Կառավարության կողմից առաջարկված ընթացակարգի դեմ:

Քննարկելով սույն գործի շրջանակներում բարձրացված հարցերը Պալատի վճռի լույսի ներքո՝ Մեծ պալատը որևէ պատճառ չի տեսնում հրաժարվելու Պալատի կարծիքից: Հետևաբար, այն եզրակացնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում՝ կապված Պալատի կողմից մանրամասն ուսումնասիրված պատճառների հետ:

Սույն գործով, սակայն, պարզ է դառնում, որ չբացահայտված ապացույցները վերաբերել են կամ կարող էին վերաբերել գործը քննող դատավորի հայեցողությանը թողնված վիճելի հարցերին: Յուրաքանչյուր դիմող վիճարկել է, որ իրեն ոստիկանության գաղտնի աշխատակիցները կամ գործակալները դրդել են հանցանք կատարել, և խնդրել է գործը քննող դատավորին որոշում կայացնել դրա հետ կապված մեղադրական ապացույցները բացառելու մասին: Պարզելու համար, թե մեղադրյալները եղել են, արդյոք, ոստիկանության ոչ պատշաճ դրդչության զոհ, գործը քննող դատավորը պետք է հետազոտի մի շարք հանգամանքներ՝ ներառյալ ոստիկանության այդ օպերացիայի պատճառները, հանցագործության կատարման մեջ ոստիկանության մասնակցության բնույթն ու աստիճանը և ոստիկանության կողմից կիրառված խթանման կամ ճնշման (տե՛ս վերը՝ կետ 30): Արդյոք պաշտպանության կողմը կարողացել է համոզել դատավորին, որ ոստիկանությունը գործել է ոչ պատշաճ և դրա արդյունքում մեղադրանքը պետք է դադարեցվի: Քննարկվող դիմումները, հետևաբար, պետք է վճռորոշ նշանակություն ունենան դիմողների գործի քննության համար, և ապացույցի՝ հասարակական շահով պայմանավորված առավելությունը վերաբերել է այդ դիմումների հետ կապված փաստերին:

Հակառակ դրան, դիմողներին չի թույլատրվել հետազոտել այդ ապացույցը: Հետևաբար, պաշտպանության կողմի ներկայացուցիչների համար հնարավոր չի եղել դատավորի առաջ ամբողջությամբ վիճարկել սադրանքի գործը: Բացի դրանից, յուրաքանչյուր դեպքում դատավորը, ով արդեն մերժել էր պաշտպանության կողմի հայտարարությունները՝ կապված սադրանքի հետ, արդեն տեսել էր մեղադրանքի կողմի ապացույցները, որոնք վերաբերում էին դատական վիճարկման առարկային... Անգլիայի օրենսդրության համաձայն՝ այն դեպքում, երբ հասարակական շահով պայմանավորված առավելություն ունեցող ապացույցը պետք է գտնվի դատախազության և ոչ թե մեղադրյալի տիրապետության ներքո, գործը քննող դատավորը պետք է որոշում կայացնի հօգուտ այդ ապացույցի չբացահայտման...

Այս հանգամանքներում Դատարանը չի գտնում, որ վարույթը, որն ուղղված էր ապացույցների և սադրանքի բացահայտմանը, իրականացվել է մրցակցային դատավարության և զենքերի հավասարության պահանջներին համապատասխան և ընդգրկել է պատշաճ երաշխիքներ՝ ուղղված մեղադրյալի շահերի պաշտպանությանը: Դրանից բխում է, որ սույն գործով տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

47. Ինչպես նշվել է... վերը, Կառավարությունը, որը խնդրել է սույն գործն ուղարկել Մեծ պալատ, այլևս չի ցանկանում հետևել այս ուղղորդմանը և հաստատել է, որ իրենք քվեարկել են վերջինիս օգտին միայն այն պատճառով, որ հավանության արժանանա Պալատի 2003թ. հուլիսի 22-ի վճիռը: Դիմողներն ընդունել են վերջինիս վճիռը և չեն առարկել Կառավարության կողմից առաջարկված ընթացակարգի դեմ:

48. Քննարկելով սույն գործի շրջանակներում բարձրացված հարցերը Պալատի վճռի լույսի ներքո՝ Մեծ պալատը որևէ պատճառ չի տեսնում հրաժարվելու նրա կարծիքից: Հետևաբար, այն եզրակացնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում՝ կապված Պալատի կողմից մանրամասն ուսումնասիրված պատճառների հետ:

***Խուդոբինն ընդդեմ Ռուսաստանի (Khudobin v. Russia), 59696/00, 26.10.2006թ.***

133. ...դիմողն առաջարկել է «բացահայտման նպատակով հանցագործության կատարման սադրանքի պաշտպանություն», որը պահանջում է գործը քննող դատարանի կողմից վերահսկողության իրականացում, հատկապես, եթե գործում առկա են որոշակի *prima facie* ապացույցներ նման սադրանքի վերաբերյալ...

137. Հետևաբար, թեև սույն գործով ներպետական դատարանը պատճառներ է ունեցել կասկածելու, որ կատարվել է սադրանք, այն չի վերլուծել համապատասխան փաստական և իրավական տարրեր, որոնք կարող էին օգնել տարբերակել սադրանքը քննչական գործողության այլ օրինական ձևերից: Դրանից հետևում է, որ վարույթները, որոնք հանգեցրել են դիմողի դատապարտմանը, չեն եղել «արդար»: Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

***Ռամանաուսկասն ընդդեմ Լիտվայի (Ramanauskas v. Lithuania) [GC], 74420/01, 05.02.2008թ.***

69. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջը պահպանված կլինի միայն այն դեպքում, եթե դիմողն ունակ լինի իր գործով վարույթի ընթացքում կամ առարկության ձևով, կամ այլ կերպ արդյունավետորեն բարձրացնել դրդչության հարցը: Հետևաբար, այս նպատակների համար դա բավական չէ... որպես կանոն, երաշխիքները պետք է պահպանվեն այնպես, ինչպես զենքերի հավասարությունը կամ պաշտպանության իրավունքը:

70.Մեղադրանքի կողմը պետք է ապացուցեր, որ առկա չի եղել դրդչություն՝ պայմանով, որ մեղադրյալի պնդումներն ամբողջությամբ անհավանական չեն: Որևէ նման ապացույցի բացակայության պայմաններում դատական իշխանությունների խնդիրն է ուսումնասիրել գործի հանգամանքները և ձեռնարկել անհրաժեշտ քայլեր բացահայ-

տելու ճշմարտությունը և պարզելու, թե արդյոք առկա է եղել դրդչություն: Եթե նրանք հայտնաբերեն, որ առկա է եղել, ապա պարտավոր են Կոնվենցիային համապատասխան եզրակացություններ անել…

71. Դատարանը գտնում է, որ վարույթի ընթացքում դիմողը պնդել է, որ նրան դրդել են հանցագործություն կատարել: Հետևաբար, ներպետական իշխանությունները և դատարաններն ի վերջո պետք է իրականացնեին բազմակողմանի քննություն... կապված այն բանի հետ, թե արդյոք դատախազական մարմիններն անցել են քրեական վարքագծի ձևացման մոդելի սահմանները…, մյուս կողմից՝ արդյոք նրանք դրդել են քրեական արարքի կատարման, թե՝ ոչ: Այդ նպատակով նրանք պետք է պարզեին այն մասնավոր պատճառները, թե ինչու են այդ գործողությունները կատարվել, հանցագործության կատարման մեջ ոստիկանության ներգրավվածության չափը և դիմողի նկատմամբ կիրառված ցանկացած դրդչության կամ ճնշման բնույթը: Սա հատկապես կարևորվում է՝ հաշվի առնելով այն փաստը, որ Վ.Ս.-ն, ով իրականում դիմողին էր ներկայացրել Ա.Զ.-ին և ով կարևոր դեր էր ունեցել կաշառք տալուն հանգեցրած դեպքերի զարգացման գործում, երբևէ գործով որպես վկա չէր հրավիրվել, քանի որ հնարավոր չէր եղել նրան գտնել: Նշված կետերից յուրաքանչյուրի վերաբերյալ դիմողը պետք է իր դիրքորոշումն արտահայտելու հնարավորություն ունենար:

72. Սակայն ներպետական իշխանությունները ժխտել են, որ ոստիկանության կողմից դրդչություն է կատարվել, և դատարանների մակարդակով որևէ քայլ չի ձեռնարկվել այդ կապակցությամբ դիմողի պնդումները լրջորեն ուսումնասիրելու համար: Ավելին, նրանք չեն փորձել պարզել սույն գործով կողմնակիցների դերը պարզելու համար, ներառյալ՝ նախնական քննության փուլում Ա.Զ.-ի դրսևորած անհատական նախաձեռնությունը՝ հակառակ այն փաստի, որ դիմողի դատապարտումը հիմնված է եղել նրա կողմից վիճարկված՝ ոստիկանության դրդչության արդյունքում ձեռք բերված ապացույցների վրա:

Իհարկե, Գերագույն դատարանը գտել է, որ ապացույցների ծավալից նման ապացույցը հանելու անհրաժեշտություն չկա, քանի որ այն հիմնավորում է դիմողի մեղքը, ով ինքն էլ դա ընդունել էր: Քանի որ նրա մեղքն ապացուցված էր, ապա կարևոր չէր դառնում այն հարցը, թե արդյոք հանցանքի կատարման վերաբերյալ նրա մտադրության վրա արտաքին ազդեցություն եղել է, թե՝ ոչ: Սակայն դրդչության արդյունքում հանցանքի կատարման վերաբերյալ խոստովանությունը չի կարող բացառել դրդչության կամ դրա հետևանքների առկայությունը:

73. Եզրակացնելով... Դատարանը գտնում է,... որ Ա.Զ.-ի և Վ.Ս.-ի գործողությունները դիմողի կողմից այն հանցանքի կատարման դրդչության արդյունք են հանդիսացել, որի համար նա դատապարտվել է, և չկա որևէ նշում այն մասին, որ առանց նրանց միջամտության էլ հանցագործությունը կկատարվեր: Նման միջամտության և վիճարկ-

վող քրեական դատավարություններում դրա կիրառման սահմաններում դիմողի գործը զուրկ է եղել Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդարության պահանջից:

***Միլինիեն ընդդեմ Լիտվայի** (Miliniene v. Lithuania), 74355/01, 24.06.2008թ.*

39. ...Դատարանը նշում է, որ դիմողը կարող էր ներպետական դատարաններ ներկայացնել հանցագործության բացահայտման նպատակով կատարված սադրանքի արդյունքում ձեռք բերված հստակ փաստարկներ... որոնց Գերագույն դատարանի կողմից հիմնավոր պատասխաններ են տրվել, մասնավորապես, ներկայացված վճռաբեկ բողոքը մերժելու մասին որոշման մեջ... Ինչպես արդեն նշել է Դատարանը՝ իրոք առկա են եղել հիմնավոր պատճառներ ոստիկանության հետ Տ.Շ.-ի հաղորդակցվելուց հետո նախնական քննություն սկսելու համար: Հիմնավորվել է, որ Տ.Շ.-ն որևէ հատուկ կապ չի ունեցել դիմողի հետ, որից հնարավոր լիներ հետևություն անել, որ նա չի ունեցել դիմողին մեղադրելու թաքնված դրդապատճառ... Այդ ձևն օրենքով սահմանված կարգով նախաձեռնվել և իրականացվել է: Բացի դրանից, այն պատշաճ կերպով վերահսկվել է դատախազության կողմից, եթե անգամ դատարանի կողմից վերահսկողության իրականացումն մեծապես կհամապատասխաներ նախնական քննության նման փակ համակարգին:

41. Վերոնշյալ դատողությունների լույսի ներքո, Դատարանը գտնում է, որ տեղի չի ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

Տ՛ես նաև վերը՝ **B.IV.7**

### 5. Սեփականության իրավունքի խախտումը

*ա. Ապօրինի խուզարկություններն ու առգրավումները*

***Միահլն ընդդեմ Ֆրանսիայի** (Miailhe v. France) (No 2), 26.09.1996թ.*

38. ...Ըստ էության, դիմողը նշել է, որ ինքն ի սկզբանե հանդիսացել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտման հետևանքների զոհ... որոնք Դատարանը գտել է Միահլի (թիվ 1) դատավճռում. մեղադրանքի կողմի ներկայացուցիչները նրա դատապարտումը դիտել են անարդար՝ հիմնվելով բացառապես հարկային վճարումները հավաստող այնպիսի փաստաթղթերի վրա, որոնք առգրավվել էին Կոնվենցիային հակասող հանգամանքներում:

43. Դատարանի խնդիրը չէ կարծիք հայտնել այն մասին, որ ներպետական դատարաններն են հիմնականում պարտավոր լուծել

ապացույցի թույլատրելիության հարցը... Այն պետք է, այնուամենայնիվ, բավարարվի նրանով, որ ամբողջությամբ վերցրած դատավարությունները եղել են արդար՝ հաշվի առնելով հնարավոր անճշտությունները, որոնք առկա են եղել նախքան գործը դատարան ուղարկելը, նաև վերաքննության կարգով բողոքարկելը և ստուգելը, որ դատարանները կարող էին շտկել դրանք, եթե այդպիսիք առկա լինեին...

44. Դատարանը նշում է, որ սույն գործով ընդհանուր իրավասության դատարանները, գործելով իրենց իրավասության սահմաններում, քննարկել են պրն Միաիլի կողմից արված առարկությունների չնչինությունը և մերժել են դրանք:

Բացի դրանից, նրանց որոշումներից պարզ է դառնում, որ նրանք հարկային պարտավորությունների կատարման վայրի հարցի կապակցությամբ իրենց կարգավորումների հիմքում դրել են բացառապես գործում առկա փաստաթղթերը, որոնք կողմերը ներկայացրել են որպես իրենց փաստարկների հիմնավորումներ, այդպիսով հավաստելով, որ ապահովվել է դիմողի արդար դատական քննության իրավունքը...

46. Հետևաբար, քննարկվող վարույթները՝ ամբողջությամբ վերցրած, արդար են եղել: Հետևաբար, տեղի չի ունեցել 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում…

*բ. Գաղտնալսող սարքերի կիրառումը*

***Կանն ընդդեմ Միացյալ Թագավորության (Khan v. United Kingdom), 35394/97, 12.05.2000թ.***

36. Վերջում Դատարանը նշել է նաև, որ ի հակադրություն Շենկի գործում քննության առնված իրավիճակի, գաղտնալսման սարքի տեղադրումը և դիմողի խոսակցության ձայնագրությունն անօրինական չէին՝ ներպետական օրենսդրությանը հակասելու իմաստով… Ավելին, ինչպես նշվել է հետագայում, ոչ մի փաստարկ չի եղել առ այն, որ սարքը տեղադրելով՝ ոստիկանությունը գործել է Ներքին գործերի վարչության ուղեցույցներին անհամապատասխան: Ի հավելումն, ինչպես գտել է Լորդերի պալատը, Բ.-ի հետ խոսակցության ընթացքում դիմողի խոստովանությունը տեղի է ունեցել կամավոր, ոչ մի մոլորություն չի եղել և դիմողին ոչինչ և ոչ ոք չի դրդել կատարելու նման խոստովանություն: «Անօրինականությունը», որին վերաբերում է սույն գանգատը, վերաբերում է բացառապես այն փաստին, որ չի եղել ոչ մի օրենսդրական հիմք դիմողի՝ անձնական կյանքը հարգելու իրավունքին միջամտելու համար, և, համապատասխանաբար, նման միջամտությունը չի եղել «ըստ օրենքի», ինչպես այդ արտահայտությունը մեկնաբանված է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետում:

37. Այնուհետև Դատարանը նշում է, որ սույն գործում վիճարկվող նյութը, ըստ էության, միակ ապացույցն էր դիմողի դեմ, և որ դիմողին մեղավոր ճանաչելը հիմնվել է նրա վրա, որ դատավորը որոշել է ըն-

դունելի համարել ապացույցը: Այնուամենայնիվ, քննվող նյութից զատ այլ ապացույցի գոյության պատշաճությունը կախված է գործի հանգամանքներից: Այսպիսի հանգամանքներում, երբ ձայնագրությունը համարվել է շատ լուրջ ապացույց, և երբ վտանգ չի եղել, որ այն կլինի անհուսալի, օժանդակ ապացույցի կարիքը համապատասխանաբար քիչ է զգացվել…

38. Սույն գործի գլխավոր հարցն այն է, թե արդյո՞ք դատաքննությունը՝ ամբողջությամբ վերցրած, արդար է եղել: Հատկապես անդրադառնալով վիճարկվող ձայնագրության թույլատրելիությանը՝ Դատարանը նկատել է, որ ինչպես և Շենկի գործում, դիմողը միանգամայն բավարար հնարավորություն է ունեցել վիճարկելու ձայնագրության թե՛ վավերականությունը, թե՛ օգտագործումը: Նա չի վիճարկել դրա վավերականությունը, բայց վիճարկել է դրա օգտագործումը "*voir dire*"-ի ընթացքում, և կրկին Վերաքննիչ դատարանում և Լորդերի պալատում: Դատարանը նշում է, որ արդարադատության յուրաքանչյուր մակարդակում ներպետական դատարանները գնահատել են ապացույցի թույլատրման ազդեցությունը դատաքննության արդարացիության վրա՝ դիմելով ՈՔՀՄ-ի 78-րդ բաժնին, և դատարանները, այլ հարցերի թվում, քննարկել են հսկողության ոչ օրենսդրական հիմքերը: Այն փաստը, որ ցանկացած մակարդակում դիմողը հաջողության չի հասել, ոչինչ չի փոխում…

39. Դատարանը կարող է ավելացնել՝ պարզ է, որ եթե ներպետական դատարանների կարծիքը լիներ այն, որ ապացույցի թույլատրելիությունը կառաջացներ էական անարդարացիության հարց, նրանք իրավասու էին բացառելու այն՝ ՈՔՀՄ-ի 78-րդ բաժնի համաձայն:

40. Այս հանգամանքներում Դատարանը գտնում է, որ դիմողի դատաքննության ժամանակ գաղտնաբար ձայնագրված նյութի օգտագործումը չի հակասում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված արդարության պահանջներին:

***Բիկովն ընդդեմ Ռուսաստանի (Bykov v. Russia) [GC], 4378/02, 10.03.2009թ.***

95. …Դատարանը կրկնում է, որ եթե ապացույցի արժանահավատությունը վիճարկվում է, ապա արդար դատական քննության պայմաններում ապացույցի թույլատրելիության հարցի պարզումն առավել կարևոր է դառնում… Սույն գործում, դիմողը կարող էր վիճարկել գաղտնի օպերացիան և դրա միջոցով ձեռք բերված յուրաքանչյուր ապացույցն առաջին ատյանի դատարանում իրականացված մրցակցային դատավարության ընթացքում և իր վերաքննիչ բողոքի հիմնավորումներում: Վիճարկման հիմքեր հանդիսացել են ապացույցների ձեռքբերման գործընթացի ենթադրյալ անօրինականությունը և խաբեությունը, ինչպես նաև ձայնագրված խոսակցության արձանագրման ենթադրյալ սխալը: Այս կետերից յուրաքանչյուրն ուղղված է եղել դատարաններին և մերժվել է պատճառաբանված որոշմամբ: Դատա-

րանը նշում է, որ դիմողը չի վիճարկել ապացույցի թույլատրելիության վերաբերյալ դատարանների որոշման կայացման ընթացակարգը:

98. ...Դատարանն ընդունում է, որ գաղտնի օպերացիայի միջոցով ձեռք բերված ապացույցը դիմողի դատապարտման հիմքում դրված միակ ապացույցը չէ, այն հիմնավորվում է այլ անվիճելի ապացույցներով: Որևէ կերպ չի հիմնավորվել այն եզրակացությունը, որ դիմողի պաշտպանության իրավունքը՝ ներկայացված ապացույցի կապակցությամբ, պատշաճ կերպով չի ապահովվել կամ ներպետական դատարանների կողմից դրա գնահատումն ինքնիրավ է եղել:

*գ. Տեսագրող սարքերի կիրառումը*

***Փերին ընդդեմ Միացյալ Թագավորության** (Perry v. United Kingdom) (dec.), 63737/00, 26.09.2002թ.*

2. ...Այս գործը որոշ նմանություն ունի Շենկի գործի հետ, որով ապացույցները ձեռք էին բերվել ներպետական օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի խախտմամբ, սակայն սույն գործով խախտվել է ԵԽԽՎ օրենսդրությունը... Դիմողը պնդում է, որ սույն գործով ընթացակարգի ակնհայտ խախտումը հանգեցրել է դրա արդյունքում ձեռք բերված ապացույցների անարդար օգտագործման: Մասնավորապես, քանի որ նա չի տեղեկացվել իրականացվող նկարահանումների մասին, ուստի հնարավորություն չի ունեցել համաձայնելու առերեսման իրականացմանը կամ առարկություն ներկայացնելու կոմպիլյացիային (բանաքաղությանը) կամավոր մասնակցող անձանց դեմ: Դատարանը գտնում է, որ դիմողին արդեն հնարավորություն տրվել էր մասնակցելու համաձայնեցված առերեսմանը, և նա հրաժարվել է դրանից: Այն նաև կրկնում է, որ գործը քննող դատավորը հանգամանորեն ուսումնասիրել է նկարահանման գործընթացը և գտել է, որ նույնացման համար այդ տեսանյութի օգտագործումն անարդար չի եղել, քանի որ կամավոր կերպով մասնակցած անձինք եղել են համեմատման համար պատշաճ, և, փաստորեն, պահանջված ութից ավելին: Թեև դիմողի փաստաբանը վկաներին ֆիլմի ցուցադրման ժամանակ ներկա չի եղել, սակայն տեսագրությունը ցույց է տալիս, վկաներին տեսագրության ցուցադրման գործընթացը և, ինչպես դիմողը, այնպես էլ դատարանը կարող էին տեսնել՝ արդյոք վկաները նույնացրել են դիմողին, թե՝ ոչ: Դատարանը նաև նշում է, որ ինչպես Շենկի գործով էր, այս նյութը դիմողի դեմ ներկայացված միակ ապացույցը չէր:

Շենկի և Խանի գործերի հանգամանքներում կարևորվել է թույլատրելիության որոշման և արժանահավատության ստուգման կապակցությամբ արդար դատական քննության առկայությունը: Դատարանն այս կապակցությամբ մերժում է դիմողի փաստաբանի բողոքը՝ կապված տեսագրության *voir dire* թույլատրելիության հետ, որը, փաս-

տորեն, կրկնվել էր դատավորի փոփոխության պատճառով: Նա կարող էր առաջադրել փաստարկներ՝ այն որպես անարժանահավատ, անարդար կամ դաժան եղանակով ձեռք բերված ապացույց չքննելատրելու վերաբերյալ: Երկրորդ դատավորը պատշաճ կերպով իրականացված քննության արդյունքում ընդունել է այդ ապացույցը և դիմողին մնացել է միայն այդ ապացույցն ատենակալների առաջ վիճարկելու հնարավորությունը: Դատարանը գտնում է, որ դատավորի բարեխիղճ եզրափակիչ խոսքով ատենակալների հայեցողությանն ապացույցների կշռի հարցի որոշումը թողնելն անարդար չի եղել: Բացի դրանից, դատավորի մոտեցումը վերանայվել է Վերաքննիչ դատարանի կողմից, որը գտել է, որ նա հաշվի է առել գործին վերաբերող բոլոր հանգամանքները և նրա կարգավորումը և եզրափակիչ խոսքը չեն կարող դիտվել որպես խախտում: Դատավարության յուրաքանչյուր փուլում դիմողին հնարավորություն է տրվել վիճարկել տեսագրության վրա հիմնված նույնացնող ապացույցների արժանահավատությունը և որակը...

Սույն գործի հանգամանքներում Դատարանը բավարարված է նրանով, որ դիմողի գործի քննությունը և վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից ելնելով: Այն գտնում է, որ գործի քննության ժամանակ առանց պատշաճ իրավական հիմքի կամ անօրինական եղանակներով ձեռք բերված նյութերի օգտագործումը, որպես կանոն, խախտում է 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված արդարության չափանիշը, որտեղ պատշաճ դատավարական երաշխիքները գտնվում են իրենց տեղում և նյութի բնույթը և աղբյուրը չի փչացվել, օրինակ, ճնշման, հարկադրանքի կամ սադրանքի միջոցով, որի արդյունքում քրեական մեղադրանքի ներկայացումն անարդար է եղել... Նման տեղեկություն ձեռք բերելը հանդիսանում է այն դեպքը, որը կյանքի է կոչում 8-րդ հոդվածով սահմանված՝ անձնական կյանքի անձեռնմխելիությունը պատշաճ կերպով ապահովելու Պայմանավորվող պետության պարտականությունը:

### 6. Առանց պաշտպանի ներկայության արված ինքնախոստովանությունը

***Բրեննան ընդդեմ Միացյալ Թագավորության (Brennan v. United Kingdom), 39846/98, 16.10.2001թ.***

53. Դիմողը փաստարկել է, որ ոստիկանությունում իրականացված հարցաքննության տեսագրության և ձայնագրության ձևով ինքնուրույն ապացույցի և մեղադրյալի փաստաբանի բացակայության պայմաններում մեղադրյալի համար առկա են եղել լուրջ դժվարություններ կապված ենթարկված խոշտանգումների վերաբերյալ դատարանին համոզելու հետ՝ հակառակ ոստիկանի հարցաքննության: Դատարանը համաձայն է, որ հարցաքննությունների արձանագրությու-

ները պարունակում են որոշակի երաշխիքներ ոստիկանության հնարավոր ոչ իրավաչափ վարքագծի դեմ, ինչպիսին է, օրինակ, կասկածյալի փաստաբանի ներկայությունը: Սակայն, այն համոզված չէ, որ սրանք Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով արդարության անհրաժեշտ նախապայմաններն են: Այս Դատարան ներկայացված դիմումների էությունն այն էր, թե սույն գործի հանգամանքներում դիմողին արդյոք տրամադրվել է արդար դատական քննություն: Դատարանը գտնում է, որ դատարանում իրականացվել է մրցակցային դատավարություն, որի ընթացքում հետազոտվել են դիմողի, հոգեբույժ փորձագետների, հարցաքննության մեջ ներգրավված ոստիկանների և կալանքի ընթացքում նրան հետազոտած ոստիկանության բժիշկների ցուցմունքները, և որն ունակ էր լույս սփռել ոստիկանության կողմից դրսևորված հնարավոր դաժան վարքագծի վրա: Այս հանգամանքներում, լրացուցիչ երաշխիքների բացակայությունը չի հանգեցրել դիմողի՝ անարդար դատական քննության:

54. Ինչ վերաբերում է դիմողի կողմից Մագիի որոշման վրա հիմնվելուն..., Դատարանը գտնում է, որ սույն գործը վերաբերում է առավել ծայրահեղ իրավիճակի, երբ դիմողը ոստիկանության կողմից 48 ժամ պահվել է ինկոմունիկադո և նրա կողմից բոլոր խոստովանություններն արվել են նախքան նրան հնարավորություն է տրվել տեսակցելու իր փաստաբանի հետ: Սույն գործով դիմողին պաշտպան տրամադրելը հետաձգվել է քսանչորս ժամով և նրա կողմից խոստովանությունն արվել էր հետագա ժամանակաընթացքում, երբ նա զրկված չի եղել իրավական օգնությունից...

55. Դատարանը եզրակացնում է, որ ոստիկանությունում կատարված հարցաքննության կապակցությամբ տեղի չի ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի կամ/և 6-րդ հոդվածի 3-րդ մասի (c) կետի խախտում:

***Կոլյուն ընդդեմ Թուրքիայի (Kolu v. Turkey), 35811/97, 02.08.2005թ.***

62. …Դատարանը հաստատում է, որ հարցաքննությունների ժամանակ հայցվորի՝ իրավական օգնություն ստանալու իրավունքից զրկումն ինչպիսին էլ որ լինի դրա հիմնավորումը, ոտնահարել է նրա պաշտպանության իրավունքը, ինչը հաջորդիվ հնարավոր չի եղել վերականգնել: Քանի որ առկա դատավարական երաշխիքները խոչընդոտ չեն հանդիսացել արված խոստովանության օգտագործման համար, որը ձեռք էր բերվել չինքնամեղսագրման իրավունքին անտեղյակ լինելու, ինչպես նաև հակազդել մեղադրողների կողմից տրված վկայություններին հակազդելը չթույլատրելու պայմաններում: Այսպիսով, հայցվորը գործնականում դիտարկվում է մերժված իրեն մատնողների մեղադրանքները, փաստաբանի բացակայության պայմաններում, գաղտնաբար անորոշ վայրում կալանքի տակ եղած ժամա-

նակ ձեռք բերված խոստովանության օգտագործման օրինականությունը նորից քննարկման դնելու հարցում:

Այնքանով, որ Վճռաբեկ դատարանը չի կարողացել վերականգնել այս էական խախտումներն ու այդպիսով ընդունվել, որ քննվող գործում՝ ամբողջությամբ, ձեռք չի բերվել 6-րդ հոդվածով նախատեսված ցանկալի արդյունքը, այսինքն՝ հավասար պայմաններում իրականացվող դատավարությունը տեղի չի ունեցել:

***Սալդուզն ընդդեմ Թուրքիայի (Salduz v. Turkey) [GC], 36391/02, 27.11.2008թ.***

56. Սույն գործով դիմողի՝ պաշտպան ունենալու իրավունքը սահմանափակվել է ոստիկանությունում կալանավորված լինելու ժամանակ՝ հիմք ընդունելով թիվ 3842 օրենքի 31-րդ բաժինը, քանի որ նա մեղադրվել է այնպիսի հանցագործության կատարման մեջ, որն ընդդատյա է Ազգային անվտանգության դատարանին: Արդյունքում, նրան չի տրամադրվել փաստաբան՝ համապատասխանաբար՝ ոստիկանությունում, դատախազությունում և գործը քննող դատավորի մոտ ցուցմունք տալու ժամանակ… որևէ այլ հիմնավորում չի տրվել փաստաբան տրամադրելը մերժելու վերաբերյալ, բացի նրանից, որ դա նախատեսված է եղել համապատասխան օրենսդրական դրույթներով: Որպես այդպիսին, սդա արդեն չի բավարարում 6-րդ հոդվածի պահանջները…

57. Նաև Դատարանը գտնում է, որ դիմողին պաշտպան տրամադրվել է կալանավորումից հետո: Հետագա քրեական վարույթի ընթացքում նա նաև իրավասու է եղել հրավիրելու իր վկաներին և հնարավորություն է ունեցել վիճարկելու դատախազության փաստարկները: Նշվում է նաև, որ դիմողը մի քանի անգամ՝ ինչպես գործը քննող, այնպես էլ վերաքննիչ դատարանում հրաժարվել է ոստիկանությունում տված իր ցուցմունքի բովանդակությունից: Սակայն, ինչպես երևում է գործի նյութերից, գործի քննության մեծ մասն ավարտված է եղել նախքան այն գործը քննող դատավորին ուղարկելը… Բացի դրանից, Իզմիրի Ազգային անվտանգության դատարանը նախքան գործի հանգամանքների քննությանն անցնելը ոչ միայն ընդունել է ոստիկանությունում հարցաքննության ժամանակ դիմողի տված ցուցմունքները, այլ նաև օգտագործել է ոստիկանությունում տված ցուցմունքները որպես դիմողի դատապարտման հիմնական ապացույց՝ հակառակ այն բանի, որ վերջինս ժխտել է դրա իսկությունը… Սակայն այս կապակցությամբ Դատարանը կարևոր է համարում այն, որ փորձագետի եզրակացությունը, որը վկայակոչվել է առաջին ատյանի դատարանի դատավճռում, տեղեկություն էր պարունակում հօգուտ դիմողի, քանի որ այն նշում էր, որ հնարավոր չէ պարզել, թե ցուցմունակում ձեռագիրը պատկանում է դիմողին, թե՝ ոչ… Կարևոր է նաև այն, որ բոլոր մեղադրյալները, ովքեր դիմողի դեմ ցուցմունք են տվել ոստիկանությունում և դատախազությունում, դատարանում հետ են

վերցրել իրենց ցուցմունքները և ժխտել են ցույցին մասնակցելու հանգամանքը:

58. Այսպիսով, սույն գործով դիմողի վրա, անկասկած, ազդել է փաստաբան ունենալու իրավունքի սահմանափակումը, քանի որ ոստիկանությունում տված նրա ցուցմունքը հիմք էր ընդունվել նրան դատապարտելիս: Ո՛չ հետագայում տրամադրված իրավաբանական օգնությունը, ո՛չ հետագա դատական քննության մրցակցային բնույթը չեն կարողացել շտկել անձին ոստիկանությունում կալանքի տակ պահելու ժամանակ թույլ տրված սխալները…

59. …սույն գործով չի կարող արժանահավատ համարվել դիմողին իր իրավունքների տեղեկացման եղանակը, մասնավորապես այն, որ դիմողին հիշեցվել է լռություն պահպանելու իր իրավունքի մասին…

60. Ի վերջո, Դատարանը նշում է, որ սույն գործի առանձնահատուկ տարրերից է դիմողի տարիքը: Անդրադառնալով անչափահասներին ոստիկանությունում կալանքի տակ պահելու վերաբերյալ համապատասխան միջազգային իրավական փաստաթղթերին՝… Դատարանը շեշտում է կալանքի տակ գտնվող անչափահասին փաստաբան տրամադրելու հիմնարար կարևորությունը:

61. Մինչդեռ սույն գործում, ինչպես նշվել է վերը, փաստաբան ունենալու իրավունքի վրա դրված սահմանափակումները պարբերական բնույթ են կրել և կիրառվել են ոստիկանությունում կալանքի տակ գտնվող յուրաքանչյուր անձի նկատմամբ՝ անկախ տարիքից, այն հանցագործությունների վերաբերյալ գործերով, որոնք ընդդատյա են ազգային անվտանգության դատարաններին:

62. Հետևաբար, թեև դիմողը հնարավորություն էր ունեցել դատական քննության և ապա՝ վերաքննիչ վարույթի ընթացքում վիճարկելու իր դեմ տրված ցուցմունքը, սակայն այն հանգամանքը, որ անձը փաստաբան չի ունեցել ոստիկանությունում կալանքի տակ գտնված ժամանակ, անուղղելիորեն խախտել է նրա պաշտպանության իրավունքը…

### 7. Լսածի վերաբերյալ ցուցմունք տալը

***Իքսն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության (X v. Federal Republic of Germany), 8414/78, 04.07.1979թ., DR 17, 231***

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը… չի բացառում այն, որ գործը քննող դատարանն ամբողջ ճշմարտությունը բացահայտելու նպատակով հիմք ընդունի անուղղակի («լսածի վերաբերյալ ցուցմունք») ապացույցը, քանի որ նման ապացույցի կիրառումը սույն գործի հանգամանքներում անարդար չէ: Սույն գործով որևէ բան չի վկայում այն մասին, որ Գերմանիայի դատարանների կողմից անուղղակի ապացույցները հիմք ընդունելը եղել է անարդար: Այստեղ Հանձնաժողովը նշում է, որ դիմողի դատապարտումը հիմնված է եղել

ոչ միայն ոստիկանությունում պրն Ա.-ի և պրն Վ.-ի տված ցուցմունքների, այլ նաև տիկին Գ.-ի ցուցմունքների վրա, ով դատարանում ասել է, որ հերոինը ձեռք է բերել դիմողից, ինչպես նաև երկու ոստիկանների՝ պրն Հ.-ի և պրն Պ-ի ցուցմունքների վրա, ովքեր դատարանում նշել են, որ հայտնաբերել են դիմողի կողմից թմրամիջոցների տիրապետման և գործածման հետքեր: Ի վերջո, Հանձնաժողովը գտնում է, որ հաշվի առնելով ոստիկանությունում, ապա՝ դատարանում պրն Ա.-ի և պրն Վ.-ի տված ցուցմունքների միջև առկա հակասությունը, ինչպես Շրջանային, այնպես էլ Տարածաշրջանային դատարանները պետք է քննարկման առարկա դարձնեին նրանց հայտարարությունների արժանահավատությունը: Հանձնաժողովը գտնում է, որ դատարանները հանգամանորեն ուսումնասիրել են այս հարցը և դրանց արժանահավատությունը կրկին Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով խնդիր չի առաջացրել:

***Հասն ընդդեմ Գերմանիայի (Haas v. Germany) (dec.), 73047/01, 17.11.2005թ.***

Անդրադառնալով ամբողջ դատավարությանը և քննարկելով բոլոր ենթադրյալ խախտումները, ինչպես պահանջում են 6-րդ հոդվածի 1-ին մասը և 3-րդ մասի (d) կետը…, Դատարանը գտնում է, որ դատավարության ընթացքում տեղի է ունեցել դիմողի դեմ ներկայացված անուղղակի ապացույցների հավաքում: Տարբեր վկաներ հիմնական քննության ժամանակ ներկայացրել են այն վկաների ցուցմունքները, ում դիմողը տարբեր պատճառներով հնարավորություն չի ունեցել հարցաքննելու: Սակայն ներպետական դատարանները պատշաճ ջանասիրություն են ցուցաբերել ձեռք բերելու բանավոր ցուցմունքներ հատկապես Սաիդ Ս.-ից և գնահատել ինչպես նրա գրավոր ցուցմունքները, այնպես էլ անանուն գործակալներից և Բ.-ից ստացած ցուցմունքները: Հաշվի առնելով այն, որ դիմողի դատապարտումը հիմնված է եղել նաև մի շարք այլ ապացույցների վրա՝ Դատարանը գտնում է, որ պաշտպանության իրավունքը չի սահմանափակվել 6-րդ հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի (d) կետով նախատեսված երաշխիքների հետ անհամատեղելի եղանակով:

## 8. Նախկինում արված հայտարարությունները և առերեսումները

***Ս.-ն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության (S. v. Federal Republic of Germany), 8945/80, 13.12.1983թ., DR 39, 43***

9. …Հանձնաժողովը… նշում է, որ դիմողի դատապարտումը հիմնված է եղել ոչ միայն Նիդեռլանդներում, այլ, առաջին հերթին, Գերնտանի դատարաններում տված նրա ցուցմունքների վրա. դիմողին դատապարտելիս Ֆրանկֆուրտի Տարածաշրջանային դատա-

րանն առաջին հերթին վկայակոչել է դատարանում նրա կողմից արված հայտարարությունները՝ կապված Ֆրանկֆուրտի Շրջանային դատարանում տրված իր ցուցմունքը հիմք ընդունելու հետ, որի համաձայն նա փորձել է հերոին ձեռք բերել Ամստերդամում: Իրավամբ, դատարանում դիմողը հրաժարվել է մանրամասն ցուցմունքներ տալուց: Նա հստակորեն չի կրկնել Շրջանային դատարանում տված ցուցմունքը, սակայն նա ոչ ժխտել է այն, ոչ էլ հետ վերցրել: Հակառակ դրան, նա փաստել է, որ իր կողմից կատարված հանցագործության համար պատժվել է Նիդեռլանդներում, և իր եզրափակիչ խոսքում խնդրել է իր նկատմամբ մեղմ պատիժ նշանակել՝ նշելով, որ ինքն այդպիսով հակասում է իր պաշտպանի կողմից ներկայացված արդարացման խնդրանքին: Հանձնաժողովը չի գտնում, որ այս հանգամանքներում Ֆրանկֆուրտի Տարածաշրջանային դատարանն անարդար է եղել՝ դիմողին դատապարտելով Շրջանային դատարանում գործի քննության ժամանակ տված նրա ցուցմունքի հիման վրա, որը կապված էր դատարանում արված նրա հայտարարությունների (որոնք վերաբերում էին այլ մանրամասների՝ Ամստերդամում գտնվելու վայրին, ժամանակին և հերոինի քանակին) և Նիդեռլանդներում ձեռք բերված անուղղակի ապացույցների հետ:

***Նին-Հանսանն ընդդեմ Դանիայի** (Ninn-Hansan v. Denmark) (dec.), 28972/95, 18.05.1999թ.*

Դատարանը կրկնում է, որ Պաշտոնանկության (Իմպիչմենտի) դատարանը դիմողին դատապարտելու հիմքում չի դրել Պաշտոնանկության (Իմպիչմենտի) դատարանում չհարցաքննված վկաների նախկին ցուցմունքները:

Դատարանը գտնում է, որ Իմպիչմենտի դատարանի կողմից Քննության դատարանի նիստի արձանագրությունն ընդունելը՝ վկաների նախկին ցուցմունքների հետ այն համեմատելու համար չի կարող դիտվել որպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում: Հետևաբար, առկա չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման դրսևորում՝ կապված Քննության դատարանի նիստի արձանագրությունն ընդունելու վերաբերյալ Իմպիչմենտի դատարանի որոշման հետ:

### 9. Վկաներին տրվող անձեռնմխելիությունը (իմունիտետը)

***Իքսն ընդդեմ Միացյալ Թագավորության** (X v. United Kingdom), 7306/75, 06.10.1976թ., DR 7, 115*

Հանձնաժողովն այս կապակցությամբ գտնում է, որ դատական քննության ժամանակ այնպիսի ապացույցների օգտագործումը, որոնք ձեռք են բերվել հանցակցից՝ նրան քրեական հետապնդումից ազատելու միջոցով, կարող է հարցականի տակ դնել մեղադրյալի գործի դատական լսման արդարացիությունը և այդպիսով հանգեցնել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ կապված խնդիրների:

Սույն գործով, սակայն, Ս.-ի կողմից ներկայացված ապացույցների ձեռքբերման եղանակը բացահայտ կերպով քննարկվել է պաշտպանի կողմից ատենակալների ներկայությամբ: Բացի դրանից, Վերաքննիչ դատարանը պատշաճ կերպով հետազոտել է այն խնդիրը, թե ապացույցների գնահատման ժամանակ այս հանգամանքներն ամբողջությամբ հաշվի առնվել են և արդյոք դրանք հիմնավորվել են: Հետևաբար, Հանձնաժողովը եզրակացնում է, որ ամբողջ դատական քննության ուսումնասիրության արդյունքում չի պարզվել, որ առկա է եղել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

### 10. Ներպետական իրավունքի խախտումը

***Պարիսն ընդդեմ Կիպրոսի (Parris v. Cyprus) (dec.), 56354/00, 04.07.2002թ.***

Սույն գործով Դատարանը նշում է, որ հետմահու առաջին հետազոտությունը կատարվել է կորոներների նշանակած երկու դատական բժիշկների կողմից: Քանի որ տուժողի ընտանիքը բավարարված չէր զեկույցի եզրահանգմամբ, նրանք խնդրել էին կորոներներին իրականացնել երկրորդ հետազոտությունը: Կորոներները, ովքեր այդ ժամանակ արդեն կարգադրել էին թաղել մարմինը, մերժել էին այդ խնդրանքը: Սակայն Գլխավոր դատախազը տվել էր իր համաձայնությունը և հետմահու երկրորդ հետազոտությունն իրականացվել էր այլ դատական բժշկի կողմից [բժիշկ Մացակիս], ով եզրակացություն էր տվել այն մասին, որ տուժողի մահը վրա էր հասել այլ պատճառով:

...Գերագույն դատարանը նշել էր, որ, բացի բժիշկ Մացակիսի ներկայացրած ապացույցից, առկա է նաև տուժողի հոր ցուցմունքը, որի բովանդակությունը համապատասխանում է բժիշկ Մացակիսի տեսակետին և որը մեծապես փոխել է դիմողի պաշտպանական կողմի այն վարկածը, որ տուժողն ինքն էր դուրս թռչել պատուհանից: Բացի դրանից, Դատարանը նշում է, որ դիմողը կարող էր վիճարկել երկրորդ զեկույցի ճշմարտացիությունը, և դրա հեղինակն սպառիչ կերպով խաչաձև հարցաքննվել է պաշտպանության կողմից...

Բացի դրանից, Դատարանը չի կարող հաշվի չառնել ներպետական օրենսդրության բնույթն ու սահմանները, որոնք սույն գործով խախտվել են: Այն նշում է, որ Կորոներների մասին օրենքի 15 (2)-րդ բաժինը մասամբ ամրագրում է դիակների զննման վերաբերյալ դրույթներ, որոնք, ինչպես ի սկզբանե նշվել է և ինչպես շեշտադրվել է նաև Կառավարության կողմից, վերաբերում են մահացածի դիակին և ոչ թե մեղադրյալի դատավարական իրավունքներին:

Ի վերջո, Դատարանը նշում է, որ դիմողը դատարանների ուշադրությունը հրավիրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հնարավոր խախտման վրա, և Գերագույն դատարանը գնահատել է այն, թե ապացույցի թույլատրելիությունն ինչպես է անդրադարձել դատական քննության արդարության վրա:

Այս հանգամանքներից ելնելով՝ Դատարանը գտնում է, որ վարույթներն ընդհանուր առմամբ արդար են եղել:

## VII. ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

### 1. Երբ է կիրառվում

***Իքսն ընդդեմ Ավստրիայի (X v. Austria), 6185/73, 29.05.1975թ., DR 2, 68***

1. Դիմողը վիճարկել է այն, որ իրեն՝ իր պաշտպանի հետ, ով դիմողի լեզվով չէր խոսում, հաղորդակցվելու համար անվճար թարգմանիչ ունենալու հնարավորություն չի տրվել… 6-րդ հոդվածի 3-րդ մասի (e) կետը փաստորեն վերաբերում է միայն մեղադրյալի և դատավորի փոխհարաբերություններին… Սույն գործի հանգամանքներից ելնելով՝ Հանձնաժողովը չի կարող բացառել այն, որ պաշտպանությունը բարդացել է դիմողի կողմից իր պաշտպանի ասածը չհասկանալու պատճառով: Այնուամենայնիվ, այդ իրավիճակի համար պատասխանատու պետք է լինի դիմողը: Նրա համար պետք է պարզ լիներ, որ նա պետք է կամ ֆրանսերեն իմացող այլ փաստաբան վարձեր, կամ հոգար ներգրավված թարգմանչի ծախսը: Եթե նա բավարար միջոցներ չուներ պաշտպանի և/կամ թարգմանչի ծախսերը հոգալու համար, նա կարող էր խնդրել իրեն անվճար իրավաբանական օգնություն տրամադրել: Այս կապակցությամբ Հանձնաժողովը նշում է, որ Ավստրիայի պրակտիկայի համաձայն՝ լեզվի վերաբերյալ առանձնահատուկ պահանջները պետք է հաշվի առնվեին դատարանի կողմից պաշտպան նշանակելիս: Բացի դրանից, անվճար իրավաբանական օգնությունը կարող է ներառել թարգմանչի ծառայությունները…

2. …[6-րդ հոդվածի 3-րդ մասից] չի կարող դուրս բերվել… գործի նյութերը թարգմանված ստանալու՝ դիմողի անորոշ իրավունքը: Հանձնաժողովը կրկնում է, որ 6-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված են այնպիսի իրավունքներ, որոնք, որպես կանոն, պաշտպանության կողմին են պատկանում և ոչ թե այնպիսիք, որոնցից մեղադրյալը երբեմն է օգտվում… Անհրաժեշտ է նշել, որ գործի նյութերի մի մասը կազմվել էր գերմաներեն, այնպես որ դիմողի պաշտպանը կարող էր դրանք հասկանալ, իսկ շատ փաստաթղթեր կազմված են եղել ֆրանսերեն, և դիմողն ինքը կարող էր դրանք կարդալ: Վերոգրյալ պատճառների հիմքով դիմողը կրկին պետք է անհատական պատասխանատվություն կրեր ցանկացած լեզվական բարդության կապակցությամբ…

***Կամասինսկին ընդդեմ Ավստրիայի (Kamasinski v. Austria), 9783/82, 19.12.1989թ.***

74. 6-րդ հոդվածի 3-րդ մասի (e) կետում ամրագրված իրավունքը… կապված անվճար թարգմանիչ ունենալու իրավունքի հետ,

պետք է ոչ միայն բանավոր կերպով հայտարարվի դատարանում, այլ նաև արտահայտվի միևչդատական վարույթի փաստաթղթերում: 3-րդ մասի (e) կետը… կարևորում է այն, որ «քրեական հանցագործության մեջ մեղադրվող անձը» ով չի կարող հասկանալ կամ խոսել դատարանում կիրառվող լեզվով, պետք է անվճար թարգմանիչ ունենալու իրավունքից օգտվի՝ իր նկատմամբ հարուցված վարույթի բոլոր փաստաթղթերի կամ հայտարարությունների թարգմանությունը կամ մեկնաբանությունն իրականացնելու համար, քանի որ արդար դատական քննության իր իրավունքն իրականացնելու համար անհրաժեշտ է, որ նա հասկանա կամ նրա համար թարգմանվի դատարանի լեզուն…

Սակայն 3-րդ մասի (e) կետը... չի պահանջում գործով բոլոր գրավոր ապացույցների կամ պաշտոնական փաստաթղթերի գրավոր թարգմանություն: Տրամադրված թարգմանությունը պետք է ապահովի դիմողի տեղեկացումն իր դեմ հարուցված գործի վերաբերյալ և ապահովի դեպքի առնչությամբ դիմողի տեսակետը դատարանին ներկայացնելը:

**2. Ապահովելու պարտականությունը**

***Կ.-ն ընդդեմ Ֆրանսիայի (K. v. France), 10210/82, 07.12.1983թ., DR 35, 203***

7. նաև դիմողը վիճարկել է այն, որ Տրիբունալն իրեն չի թույլատրել օգտվելու թարգմանչի ծառայությունից, որպեսզի իրեն հնարավորություն տրվի իր պաշտպանությունն իրականացնել բրետոնի լեզվով:

8. ...Տրիբունալի որոշումից պարզ է դառնում, որ դիմողը ծնվել և կրթություն է ստացել Ֆրանսիայում և նրա համար որևէ դժվարություն չի ներկայացնում վարույթի լեզուն՝ ֆրանսերենը, հասկանալ և խոսել դրանով: Թարգմանիչ ունենալու կոնվենցիոն իրավունքը, որն ամրագրված է 6-րդ հոդվածի 3-րդ մասի (e) կետով, ուղղակիորեն վերաբերում է այն դեպքերին, երբ մեղադրյալը չի հասկանում դատարանում կիրառվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով:

***Կուսցանին ընդդեմ Միացյալ Թագավորության (Cuscani v. United Kingdom), 32771/96, 24.09.2002թ.***

38. Դատարանը գտնում է, որ դիմողի՝ անգլերեն չիմանալը և դատավարությունը չհասկանալն առաջին անգամ կենսականորեն կարևոր հանգամանք են հանդիսացել 1996թ. հունվարի 4-ին, երբ պաշտպանության կողմը տեղեկացրել է գործը քննող դատավորին այն մասին, որ դիմողը ցանկանում է ինքնախոստովանական ցուցմունքներ տալ իրեն առաջադրված մեղադրանքներով: Դիմողի պաշտպանի խնդրանքով գործը քննող դատավորը թարգմանիչ է ներգրավել 1996թ. հունվարի 26-ին կայանալիք նիստին, որի ժամանակ հրապարակվելու էր դատավճիռը... Դատավորն այսպիսով

հստակ չի նշել, որ դիմողն ընկալման հետ կապված խնդիրներ ունի: Սակայն, չնայած հետագա վարույթներին հետևելու դիմողի ունակության հարցում համոզվելու նրա նախկին ցանկությանը, պարզ է դառնում, որ դատավորը հավատացել է դիմողի փաստաբանի այն վստահեցմանը, որ նա ունակ է «հարմարվել և կարգավորել դա»... Ակնհայտ է, որ գործը քննող դատավորը չլուծված էր թողել անհրաժեշտություն առաջանալու դեպքում դիմողի կողմից իր եղբոր թարգմանչական օգնությունից օգտվելու հնարավորության հարցը: Սակայն, Դատարանի կարծիքով, դատավորը դիմողի՝ թարգմանիչ ունենալու անհրաժեշտությունը պետք է որոշեր դիմողի հետ խորհրդակցելով, հատկապես, քանի որ նա տեղյակ էր դիմողի հետ հաղորդակցվելու՝ փաստաբանի դժվարությունների մասին: Անհրաժեշտ է նշել, որ դիմողն ինքնախոստովանական ցուցմունք է տվել լուրջ մեղադրանքով և նրան մեղսագրվող հանցագործության համար նախատեսված էր ազատազրկման հետ կապված խիստ պատիժ: Այսպիսով, դատավորի վրա էր դրված այն հարցի վերահաստատումը, որ 1996թ. հունվարի 26-ի նիստին թարգմանչի ներկա չգտնվելը բացասաբար չի անդրադառնալու իր համար վճռորոշ նշանակություն ունեցող դեպքի վերաբերյալ դիմողի ամբողջական իրազեկվածության վրա: Սույն գործի հանգամանքներից ելնելով չի կարելի ասել, որ այդ պահանջը բավարարվել է՝ նշված հարցը դիմողի հայեցողությանը թողնելով և առանց դատավորի կողմից վերջինիս հետ խորհրդակցելու, նրա եղբոր չստուգված լեզվական ունակությունների վրա հիմնվելով...

39. Հիմք ընդունելով վերոգրյալ դատողությունները՝ Դատարանը եզրակացնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև 6-րդ հոդվածի 3-րդ մասի (e) կետի խախտում:

### 3. Որակը

***Կամասինսկին ընդդեմ Ավստրիայի (Kamasinski v. Austria), 9783/82, 19.12.1989թ.***

74. ...որպեսզի 3-րդ մասի (e) կետով երաշխավորված իրավունքները... լինեն գործուն և արդյունավետ, իրավասու պաշտոնատար անձանց պարտականությունը չի սահմանափակվում թարգմանչի նշանակմամբ, և եթե նրանք որոշակի հանգամանքներում տեղեկացվում են, ապա նրանց վրա կարող է որոշակի պարտականություն դրվել վերահսկելու կատարված թարգմանության ճշտությունը...

83. ...Դատարանն ամբողջությամբ վերցրած ապացույցներով հիմնավորված չի գտնում այն, որ պրն Կամասինսկին թարգմանության թերի լինելու պատճառով ունակ չի եղել ո՛չ հասկանալու իր դեմ տրված ցուցմունքները, ո՛չ իր անունից հարցաքննել կամ խաչաձև հարցաքննել վկաներին:

***Հուսեյն ընդդեմ Իտալիայի (Husain v. Italy) (dec.), 18913/03, 24.02.2005թ.***

Սույն գործով դիմողին արաբերենից անվճար թարգմանիչ է տրամադրվել այն ժամանակ, երբ նրա գործը քննելու վերաբերյալ որոշում է կայացվել: Գործի նյութերից չի երևում, որ թարգմանչի թարգմանությունը սխալ կամ որևէ այլ կերպ ոչ պատշաճ է եղել: Բացի դրանից, դիմողը չի վիճարկել թարգմանության որակը, և սա իշխանություններին հիմք է տվել կարծելու, որ նա հասկացել է քննարկվող փաստաթղթի բովանդակությունը...

**4. Հետագա մեղադրանքը, որի դեպքում այն տրամադրվում է անվճար**

***Լուեդիկին ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության (Luedicke v. Federal Republic of Germany), 6210/73, 6877/75 և 7132/75, 28.11.1978թ.***

46. ...6-րդ հոդվածի 3-րդ մասի (e) կետում ամրագրված՝ «տրամադրվում է» և «անվճար» եզրույթների իմաստը… չի հակասում այդ կետի ենթատեքստին և հիմնավորվում է 6-րդ հոդվածի նպատակից ու առարկայից ելնելով… Դատարանը եզրակացնում է, որ 6-րդ հոդվածի 3-րդ մասի (e) կետով պաշտպանվող իրավունքները… հանգեցնում են յուրաքանչյուրի, ով չի կարողանում խոսել դատարանում կիրառվող լեզվով կամ հասկանալ այն, անվճար թարգմանիչ ունենալուն՝ առանց հետագայում դրանից բխող ծախսերի հարուցման պարտավորության:

***Իսյարն ընդդեմ Բուլղարիայի (Isyar v. Bulgaria), 391/03, 20.11.2008թ.***

45. Դատարանը հիշատակում է որոշ դատական նախադեպեր, համաձայն որոնց Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի e ենթակետով նախատեսվում է, որ եթե որևէ մեկը չի խոսում կամ չի հասկանում դատական նիստում օգտագործվող լեզուն, նա ունի թարգմանչի ծառայություններից անվճար օգտվելու իրավունք, ինչի հետ կապված ծախսերը ենթակա չեն փոխհատուցման նաև դատավարության ավարտին:

46. Դատարանը գտնում է, որ Սվիլենգրադի շրջանային դատարանը պարտադրել է հայցվորին վճարել նախաքննության և առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ առաջացած ծախսերը: Վճռաբեկ դատարանը վերջին ատյանում գործի քննության ժամանակ թարգմանչի մատուցած ծառայությունների հետ կապված ծախսերը հոգալու պարտականությունը դնում է հայցվորի վրա: Դատարանը հաստատում է, որ հայցվորը վճարել է թարգմանչի մատու-

ցած ծառայությունների դիմաց նախաքննության ժամանակ, գործն առաջին ատյանի դատարանում քննելիս և Վճռաբեկ դատարանում:

47. Դատարանը գտնում է, որ տվյալ գործով ի հայտ են եկել որոշ հակասություններ բուլղարական Վճռաբեկ դատարանի նախադեպերի միջև՝ կապված այն հարցի հետ, թե արդյոք թարգմանության ծախսերը կարող են դրվել քրեական գործով ներգրավված մեղադրյալի վրա, թե՝ իրականում, նույնօրինակ գործի շրջանակներում, նույն դատարանը ազատել է մեղադրյալին թարգմանության ծախսերը հոգալու պարտականությունից:

48. Այս կոնկրետ գործով Դատարանը հաստատում է, որ ներպետական իրավունքը թարգմանելը դատարանի կողմից հանդիսացել է հայցվորի հարկման պատճառ՝ իր համար քրեական դատավարության ընթացքում կատարված թարգմանության համար, այդպիսով, հայցվորը զրկվել է թարգմանչի ծառայություններից անվճար օգտվելու իր իրավունքից:

## VIII. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### 1. Մեղադրանքի վերաբերյալ ծանուցումը

***Բրոզիցեկն ընդդեմ Իտալիայի (Brozicek v. Italy), 10964/84, 19.12.1989թ.***

41. Դատարանի կարծիքով, անհրաժեշտ է դատավարական գործողություններ կատարել հետևյալ փաստերի հիման վրա: Դիմողը ծագումով իտալացի չի եղել և չի բնակվել Իտալիայում: Նա հստակ տեղեկացրել է Իտալիայի իրավասու դատական մարմիններին, որ իտալերեն չիմանալու պատճառով դժվարություններ է կրել նրանց ծանուցումների բովանդակությունը հասկանալու հարցում: Նա նրանց խնդրել է այդ ծանուցումներն իրեն ուղարկել կամ իր մայրենի լեզվով, կամ Միավորված ազգերի պաշտոնական լեզուներից մեկով:

Խնդրանքն ստանալուց հետո, Իտալիայի դատական իշխանության մարմինները պետք է ձեռնարկեին դրա կատարման քայլեր, որպեսզի համոզվեին 6-րդ հոդվածի 3-րդ մասի (a) կետի պահանջների պահպանված լինելու հարցում..., մինչդեռ նրանք ընդունել են, որ դիմողը փաստորեն իտալերենի բավականաչափ իմացություն է ունեցել՝ ծանուցումից հասկանալու համար այն նամակի բովանդակությունը, որով նրան տեղեկացրել են առաջադրված մեղադրանքների մասին:

Նման ապացույցը չի բխում գործի փաստաթղթերից կամ վկաների՝ 1989թ. ապրիլի 23-ին տված ցուցմունքներից... Հետևաբար, այս կապակցությամբ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 3-րդ մասի (a) կետի խախտում...

42. Մյուս կողմից, Դատարանը գտնում է, որ պնդումն առ այն, որ 1976թ. փետրվարի 23-ի դատական ծանուցման մեջ չի նշվել «հան-

գամանորեն... մեղադրանքի բնույթը և հիմքերը», հիմնավորված չէ: Այս տեղեկության նպատակն էր ծանուցել պրն Բրոզիցեկին իր դեմ հարուցված վարույթների մասին. դրանում բավարար չափով թվարկված են եղել այն հանցանքները, որոնց կատարման մեջ նա մեղադրվում է, նշվել են դրանց տեղերը և ժամերը, վկայակոչվել են Քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածները և նշվել են տուժողների անունները:

***Գեա Կատալանն ընդդեմ Իսպանիայի (Gea Catalán v. Spain), 19160/91, 10.02.1995թ.***

25. Պրն Գեա Կատալանը պնդել է 6-րդ հոդվածի 3-րդ մասի (a) կետի խախտման մասին... Խախտումը բխել է այն փաստից, որ նա դատապարտվել էր Քրեական օրենսգրքի 529-րդ հոդվածի 7-րդ մասով և ոչ թե այդ հոդվածի 1-ին մասով, որի վրա հիմնվել են մեղադրանքը ներկայացնող իշխանությունները և քաղաքացիական կողմը:

28. ...Դատարանը գտնում է, որ վիճարկվող հակասությունն ակնհայտորեն եղել է ընդամենը գրասենյակային սխալի արդյունք, որը կատարվել է այն ժամանակ, երբ մեղադրանքի հայտարարությունները տպվել և հետագայում տարբեր կերպ վերարտադրվել են մեղադրանքը ներկայացնող պաշտոնատար անձանց և քաղաքացիական հայցվորի կողմից...

29. Ինչ վերաբերում է գործը քննող դատավորի՝ 1986թ. հուլիսի 1-ի կալանավորման մասին որոշման մեջ տրված իրավական որակման հստակությանը..., Դատարանը չի տեսնում, թե ինչպես պրն Գեա Կատալանը կարող էր վիճարկել այն, քանի որ նա չի տեղեկացվել մեղադրանքի բոլոր տարրերի մասին, մինչդեռ դատախազության հայտարարությունները հիմնված են եղել այդ նույն փաստերի վրա... Բացի դրանից, սույն գործով, ինչպես Գերագույն դատարանն իրավացիորեն նշել է..., անհեթեթ է կիրառել Քրեական օրենսգրքի 529-րդ հոդվածի 1-ին մասը, քանզի ենթադրվում է, որ 7-րդ մասը պետք է կիրառվեր, և թեև սա ինքնաբերաբար արված եզրակացություն չէ, դրան ամեն դեպքում կարելի է հանգել նվազ տրամաբանությամբ:

30. Հետևաբար, Դատարանը դիմողի հայցն անհիմն է համարում և գտնում է, որ տեղի չի ունեցել 6-րդ հոդվածի 3-րդ մասի (a) կետի խախտում...

***Դե Սալվադոր Տորեսն ընդդեմ Իսպանիայի (De Salvador Torres v. Spain), 21525/93, 24.10.1996թ.***

27. Պրն դե Սալվադոր Տորեսը վիճարկել է այն փաստը, որ ինքը դատապարտվել է ծանրացուցիչ հանգամանքներում կատարած հանցանքի համար, որում նրան երբևէ ուղղակիորեն մեղադրանք չի առաջադրվել, և դա հանգեցրել է 6-րդ հոդվածի 3-րդ մասի (a) կետի խախտման...

33. ...դիմողի դիրքի հասարակական բնույթը հանդիսացել է հասարակական ֆոնդերի յուրացման սկզբնական մեղադրանքի բնորոշ տարր և, հետևաբար, այն հայտնի է եղել դիմողին վարույթների հենց սկզբից: Հետևաբար, ենթադրվում է, որ նա պետք է տեղյակ լիներ այն հնարավորության մասին, որ դատարանները... այս ընդգծված փաստական հանգամանքը կարող են հասարակ յուրացման նվազ խիստ բնույթի ենթատեքստում դիտել ծանրացնող հանգամանք՝ պատժի որոշման նպատակով:

Հետևաբար, Դատարանը չի գտնում դիմողի՝ 6-րդ հոդվածի 3-րդ մասի (a) կետով նախատեսված որևէ իրավունքի խախտում՝ կապված... իրեն առաջադրված մեղադրանքի բնույթի և հիմքերի վերաբերյալ տեղեկացված լինելու հետ:

***Մատոցիան ընդդեմ Իտալիայի (Mattoccia v. Italy), 23969/94, 25.07.2000թ.***

71. ...Դատարանը գիտակցում է այն փաստը, որ բռնաբարությունների վերաբերյալ գործերը բարձրացնում են շատ նուրբ և կարևոր հարցեր, որոնք հասարակության համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում, և այդ գործերը վերաբերում են շատ երիտասարդ կամ հոգեպես անկայուն անձանց, ովքեր դատախազության և դատարանների առջև վարույթի ընթացքում լուրջ ապացուցողական նշանակություն ունեցող դժվարություններ են առաջացնում: Դատարանը, սակայն, գտնում է, որ սույն գործով պաշտպանության կողմը բախվել է բացառիկ դժվարությունների: Հաշվի առնելով այն, որ մեղադրանքում պարունակվող տեղեկությունը, որը վերաբերել է այնպիսի տարրական հանգամանքների, ինչպիսիք են ժամանակը և տեղը, բնութագրվել է անորոշ, գործով վարույթի ընթացքում հաճախ մերժվել և ուղղվել է, և, հաշվի առնելով այն երկարատև ժամանակահատվածը, որն անցել էր գործը դատարան ուղարկելու և ինքնին դատական քննության միջև (ավելի քան երեք ու կես տարի) դատական քննության իրականացման ժամանակահատվածի (մեկ ամսից պակաս) համեմատ, ակնհայտ է դառնում, որ արդարությունը պահաջում է, որ դիմողին պետք է տրամադրվեր ավելի մեծ հնարավորություն և միջոցներ իրեն գործուն և արդյունավետ կերպով պաշտպանելու, օրինակ՝ իր այլուրեքությունը հաստատող վկաների հրավիրելու համար:

72. Հակառակ այս հանգամանքների՝ Դատարանը գտնում է, որ խախտվել են դիմողի՝ իր դեմ ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքերի մանրամասների վերաբերյալ տեղեկացված լինելու և իր պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակ ու հնարավորություն ունենալու իրավունքը...

***Սադակը և այլոք ընդդեմ Թուրքիայի (Sadak and Others v. Turkey), 29900/96, 29901/96, 29902/96 և 29903/96, 17.07.2001թ.***

56. ...Դատարանը գտնում է, որ անօրինական զինված կազմավորմանը պատկանելը չի հանդիսանում վարույթի սկզբից դիմողներին մեղսագրվող հանցագործությանը բնորոշ տարր:

57. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ օգտվելով այն իրավունքից, որի համաձայն՝ այն, անկասկած, պետք է վերաորակեր իր իրավասության տակ գտնվող փաստերը, Անկարայի Ազգային անվտանգության դատարանը պետք է դիմողներին հնարավորություն, մասնավորապես՝ բավարար ժամանակ տրամադրեր այդ հարցի կապակցությամբ իրենց պաշտպանության իրավունքը գործուն և արդյունավետ կերպով իրականացնելու համար: Գործի նյութերից երևում է, որ Ազգային անվտանգության դատարանը, որը կարող էր, օրինակ, որոշում կայացնել դատական նիստը հետաձգելու վերաբերյալ, քանի որ փաստերը վերաորակվել էին, դիմողներին հնարավորություն չի տվել նախապատրաստել իրենց պաշտպանությունը նոր մեղադրանքից, որի մասին նրանք չէին տեղեկացվել մինչև գործի քննության վերջին օրը՝ նախքան դատավճռի հրապարակումը, որն ակնհայտորեն շատ ուշ է եղել: Ի լրումն դրա, դիմողների պաշտպանները վերջին նիստի օրը բացակայել են: Անկախ նրանց բացակայության պատճառներից, անհերքելի է մնում այն փաստը, որ դիմողները չեն կարողացել խորհրդակցել իրենց պաշտպանների հետ մեղադրողի և Ազգային անվտանգության դատարանի կողմից փաստերի վերաորակման վերաբերյալ:

58. Հիմք ընդունելով վերոգրյալ դատողությունները՝ Դատարանը եզրակացնում է, որ խախտվել է դիմողների՝ իրենց դեմ ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքերի մանրամասների վերաբերյալ տեղեկացված լինելու և իրենց պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակ ու հնարավորություն ունենալու իրավունքը...

***Վոդելլին ընդդեմ Ֆրանսիայի (Vaudelle v. France), 35683/97, 30.01.2001թ.***

58. ...Դիմողը մեղադրվում էր 15 տարեկանից ցածր տարիքի անչափահասի նկատմամբ սեռական բռնություն գործադրելու մեջ: Ակնհայտ է, որ, ինչպես Քրեական դատարանն ինքն է նշել, հանցագործությունները առանձնապես ծանր են եղել... Այս հանցագործությունների բնույթն անհրաժեշտություն է առաջացնում նաև գնահատել դիմողի հոգեկան վիճակը, քանի որ այն բանից հետո, երբ դիմողը հարցաքննվել է ոստիկանների կողմից, հանրային մեղադրողը կարգադրել է հոգեբուժական եզրակացություն կազմել նրա առնչությամբ: Դիմողը, սակայն, չի ներկայացել նշանակված երկու այցելություններից ոչ մեկին և չի ներկայացրել որևէ բացատրություն դրա վերաբերյալ,

այնպես որ Քրեական դատարանը չէր կարող իրազեկ լինել նրա բացակայության պատճառի մասին:

65. ...Դատարանը գտնում է, որ նման գործերով, որոնք վերաբերում են ծանր հանցագործությունների, ազգային իշխանությունները պետք է ձեռնարկեն լրացուցիչ միջոցներ՝ արդարադատության արդյունավետ իրականացման շահերից ելնելով: Նրանք կարող էին պարտադրել դիմողին տեսակցել հոգեբույժի հետ... և ներկա գտնվել դատական նիստին, իսկ նրա կողմից դա չկատարելու դեպքում՝ կազմակերպել նրա ներկայությունը իր ներկայացուցչի կամ փաստաբանի միջոցով: Դրա արդյունքում դիմողն կհասկանար վարույթների ընթացքը և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (a) կետի իմաստով հանգամանորեն տեղյակ լինել իր դեմ ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքերի մասին. այն նաև հնարավորություն կտար Քրեական դատարանին կայացնել ամբողջությամբ արդարացի որոշում: Սակայն դա տեղի չի ունեցել:

66. Սույն գործի առանձնահատուկ հանգամանքներից ելնելով՝ Դատարանը, հետևաբար, գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում:

***Միրոն ընդդեմ Ֆրանսիայի (Miraux v. France), 73529/01, 26.09.2006թ.***

33. Դատարանի կողմից քննվող գործով, դատարանը գտնում է, որ ատենանակալների առջև դատաքննության սկզբում առաջացած հարցին լուծում տալը՝ ժյուրիի կողմից որոշում ընդունելու համար, այսինքն՝ կատարած իրավախախտման որակումը կոնկրետացնելը հնարավոր կլինի միմիայն դատավորների խորհրդակցության ժամանակ: Այս կերպ, Քրեական դատավարության օրենսգրքի 352-րդ հոդվածի կիրառումը միայն կանխարգելիչ դեր կատարելու նպատակ է հետապնդել, հայցվորին ոչ մի հնարավորություն չի ընձեռվել իր կատարած արարքի վերաորակումը հերքելու համար ներկայացնել իր փաստարկները:

35. Դրա հետ մեկտեղ, գործը Մերձծովյան Սենայի երդվյալ ատենակալների դատարան հետ ուղարկելու ժամանակ եղել են միայն բռնաբարության փորձի և սեռական ոտնձգության որակումները, միայն այդ դատաքննության սկզբում է, որ լրացուցիչ հարցի շնորհիվ վիճելի որակումը ներառվել է: 1997թ. փետրվարի 18-ին ուղարկված մեղադրական եզրակացության մեջ ներկայացված բռնաբարության որակումը Վճռաբեկ դատարանի կողմից 1997թ. մայիսի 21-ին ճանաչվեց առոչինչ, հաջորդիվ այն անվիճելի դարձավ 1997թ. հոկտեմբերի 23-ին գործի երդվյալ ատենակալների դատարան հետուղարկման համար ընդունված ակտով, որով հայցվորը կարող էր արդարացիորեն պնդել, որ բռնաբարության մեղադրանքից պաշտպանվելու կարիք չունի և կոնկրետացնել իր պաշտպանությունը ի վերջո հաստատված բռնաբարության փորձի որակման վրա: Դատարանն այս փաս-

տերն հաշվի առնելով՝ գտնում է, որ շահառուին մեղադրանքը ներկայացնելիս դա պետք է արվի առավելագույն մանրախնդրությամբ, քանի որ այն վճռորոշ դեր է կատարում քրեական հետապնդման մեջ հիմնավորված չէ այն, որ հայցվորը տեղեկացված չի եղել բռնաբարության մեջ մեղադրված լինելու մասին:

36. Անկասկած, Դատարանը գտնում է, որ բռնաբարության և դրա փորձի իրավական հիմքերը նույնն են, գիտենալով քրեական օրենսգրքի 222-223 հոդվածը, առավել ընդհանրացված ասելու դեպքում կստացվի, որ այն մարդը, ով փորձում է հանցանք գործել, դիտարկվում է որպես հանցագործության հեղինակ և հավասար է նրան, ով կատարում է հանցանքը: Այնուամենայնիվ, հնարավոր է պնդել, որ այս 2 իրավախախտումները, ավելի կոնկրետ դեպքում՝ բռնաբարությունն ու դրա փորձը զգալիորեն տարբերվում են իրականացման աստիճանով: Իրականում, ի տարբերություն իրականացված իրավախախտմանը, որը ենթադրում է որոշակի հետևանքով հանցավոր դիտավորության նյութականացում, փորձը բնորոշվում է իրականացումն սկսելով, այսինքն՝ իրավախախտման մասնակի իրականացմամբ, գործողություններով, որոնք ուղղակիորեն ուղղված են դրա իրականացմանը, կատարվում են դիտավորությամբ և ավարտվում առանց կատարողի դրանց իրականացումից կամավոր հրաժարվելու: Այսպիսով, բռնաբարությունն ավարտված համարելու համար անհրաժեշտ է մի յուրահատուկ հետևանքի առկայություն, այն է՝ մուտքն արգանդ այն դեպքում, երբ դրա անհրաժեշտությունը չկա բռնաբարության փորձի պարագայում: Այսպիսով, կարող ենք նկատի առնել, որ այս 2 իրավախախտումների միջև գոյություն ունի ծանրության աստիճանի տարբերություն, ինչը անկասկած, իր ազդեցությունն է ունենում փաստերի գնահատման և ատենակալների կողմից պատժի որոշման վրա, որը սովորաբար միշտ լինում է ավելին, քան պետք է լինի, թեկուզև հանցափորձը պակաս վնասաբեր է, քան ավարտված հանցագործությունը, քանի որ ատենակալները գթասիրտ են զոհերի նկատմամբ, հատկապես այն դեպքում, երբ նրանք տուժել են սեռական հանցագործությունների արդյունքում, ոլորտ, որտեղ զոհն անկախ իր սուբյեկտիվ հատկանիշներից հոգեբանական մեծ հարվածներ է կրում: Բացի սրանից, եթե հանցափորձն իրականացնողը կրում է առավելագույն պատիժ հավասար նրան, որ կարող էր կրել ավարտված հանցագործությունն իրականացրած անձը, բացառված չէ, որ այդ պարագայում երդվյալ ատենակալների դատարանը, բացի պատժի որոշակի որոշված չափից, նաև հաշվի է առնում այն տարբերությունը, որ գոյություն ունի փորձի և ավարտված հանցագործության միջև՝ դրանց իրական ծանրության և վտանգավոր հետևանքների տեսանկյունից: Փաստորեն պետք է արձանագրել, որ կատարած իրավախախտման որակման փոփոխությունը երդվյալ ատենակալների դատարանի առջև կբերեր հայցվորի հանդեպ նշանակվելիք պատժի ծանրացմանը, որը տեղի է ունեցել առանց նրան, նոր որակման հավաստիությու-

նը մի կողմ թողնելով, թեկուզև զուտ արդարացի պատիժ նշանակելու տեսանկյունից հնարավորություն տալու պատրաստել և ներկայացնել նոր որակմանն ու դրա հետևանքներին վերաբերող պաշտպանության որոշակի միջոցներ: Դատարանը նշում է՝ քանի որ կիրառման ենթակա պատժի առավելագույն չափը հասարակական աշխատանքների կատարման հետ զուգորդված ազատազրկումն է 15 տարով, հացվորի հանդեպ նշանակվել է պատիժ 12 տարի ժամկետով, որը մոտ է վերը նշված առավելագույն չափին:

37. Այս բոլոր հանգամանքները հաշվի առնելով՝ Դատարանը հաստատում է, որ խախտվել է հայցվորի՝ իր դեմ բերված մեղադրանքի բնույթի և հիմքերի մասին պատշաճ կերպով տեղեկացված լինելու իրավունքը, ինչպես նաև իր պաշտպանությունը պատրաստելու համար անհրաժեշտ ժամանակ ու հնարավորություն ունենալու իրավունքը:

### 2. Դատական ծանուցագիրը

***Իքսն ընդդեմ Միացյալ Թագավորության (X v. United Kingdom), 8231/78, 06.03.1982թ., DR 28, 5***

2. …Մյուս կողմից, պարզ է դառնում, որ դիմողը չի տեղեկացվել նիստի ճիշտ ժամանակի մասին՝ դրանից անմիջապես առաջ: Հանձնաժողովը ցանկալի է համարում այն, որ մեղադրվող անձինք պատշաճ ծանուցմամբ տեղեկացվեն գործի քննության ժամանակի և տեղի մասին: Սակայն դիմողի գործի միայն այս մասնավոր ասպեկտը չի կարող սույն գործով որոշիչ դիտվել պարզելու համար այն հարցը, թե դիմողին տրամադրվել է, արդյոք, արդար դատական քննություն: Հաշվի առնելով այն փաստը, որ նա բավարար ժամանակ է ունեցել իր պաշտպանությունը նախապատրաստելու համար և, քննարկելով վարույթն ամբողջությամբ, Հանձնաժողովը բավարարված է նրանով, որ այն պայմանները, որոնցում դիմողի գործը քննվել է դատարանի կողմից, անհամատեղելի չեն եղել արդար դատական քննության գաղափարի հետ՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի I-ին մասի իմաստով:

***Վոդելլին ընդդեմ Ֆրանսիայի (Vaudelle v. France), 35683/97, 30.01.2001թ.***

Տե՛ս վերը

### 3. Բավարար ժամանակ և հնարավորություններ

***Ֆերարի-Բրավոն ընդդեմ Իտալիայի (Ferrari-Bravo v. Italy), 9627/81, 14.03.1984թ., DR 37, 15***

23. Այս կապակցությամբ դիմողը վիճարկել է նաև, որ իր պաշտպաններին բավարար ժամանակ և հնարավորություն չի տրվել, որը

նրանց անհրաժեշտ էր նրա պաշտպանությունը նախապատրաստելու համար (6-րդ հոդված, 3-րդ մաս, (b) կետ):

Հանձնաժողովը շեշտում է, որ դիմողը մատնացույց չի արել, թե ինչպես է իր փաստաբանների կողմից գործը (որը բաղկացած էր ավելի քան 56.000 էջից) ուսումնասիրելու համար երեք ամիս ժամանակ ունենալը՝ նախքան գործը քննող դատավորի կողմից իր գործը դատարան ուղարկելը, խախտել իր կողմից վիճարկվող իր իրավունքը: Հանձնաժողովը նշում է, որ գործը դեռ ընթացքի մեջ է: Այսպիսով, չկա որևէ հանգամանք, որը ցույց կտա, որ քննարկվող դրույթը խախտվել է:

***Փադին Գեստոսոն ընդդեմ Իսպանիայի (Padin Gestoso v. Spain), 39519/98 (dec.), 08.12.1998թ.***

2. Դիմողը վիճարկել է, որ իր՝ 1990թ. հունիսի կալանավորումից հետո իր փաստաբաններն սպասել են մինչև 1990թ. օգոստոս, որպեսզի կարողանային ծանոթանալ գործի նյութերին... Դատարանը նշում է, որ 1990թ. հունիսի 11-ին քննիչ դատավորի կողմից դիմողին մեղադրանք առաջադրելուց և նրան կալանավորելուց հետո իրավական օգնության շրջանակներում նրան տրամադրվել է պաշտպան՝ առանձին պահված լինելու ընթացքում իր շահերը պաշտպանելու նպատակով, որը շարունակվել է մինչև 1990թ. օգոստոսի 6-ը: Այդ կապակցությամբ դիմողը չի վիճարկել այն փաստը, որ իրեն հնարավորություն է տրվել խորհրդակցելու իր պաշտպանությունը նախապատրաստելու նպատակով իրավական օգնություն տրամադրելու շրջանակներում նշանակված իր պաշտպանի հետ: Բացի դրանից, դիմողն ընդունել է, որ առանձին պահելը դադարեցվելուց հետո, այսինքն՝ 1990թ. օգոստոսի 6-ից հետո, նրան տրամադրվել են գործի նյութերը՝ դրանց ծանոթանալու համար: Դատարանը մասնավորապես նշում է, որ այն բանից հետո, երբ քառասունյոթ անձ, ներառյալ դիմողը, 1992թ. փետրվարի 19-ին *Աուդիենսիա Նասիոնալի* Քրեական բաժնի առաջ են կանգնել, այս դատարանը 1992թ. հոկտեմբերի 29-ի որոշմամբ կարգադրել է, որ նրանցից յուրաքանչյուրի փաստաբանին տրամադրվի գործի նյութերի պատճենների ամբողջական փաթեթ, ինչը գերազանցում էր ութսուն հատորը, որպեսզի նրանք կարողանան տալ հանցագործությունների նախնական որակումները: Հետևաբար, Դատարանը նշում է, որ գործի նախնական քննությունը տևել է մի քանի տարի, այնպես որ դիմողն իրեն 1990թ. հունիսի 11-ին մեղադրանք առաջադրելու վերաբերյալ որոշումն ստանալուց հետո ունեցել է բավարար ժամանակ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար, ինչը հանդիսանում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (b) կետի հիմնական նպատակը: Ի լրումն դրա, գործում չկա որևէ հանգամանք, որը թույլ կտար եզրակացնել, որ այն բանից հետո, երբ 1990թ. օգոստոսի 6-ին վերացվել է նախնական քննությունը գաղտնի պահելու մասին որոշումը, խոչընդոտվել է դիմողի կողմից իր պաշտպանությունը նախապատրաստելու համար իր փաստաբանից ցու-

ցումներ ստանալը կամ նրա հետ խորհրդակցելը: Այսպիսով, Դատարանը գտնում է, որ դիմումի այս մասը պետք է մերժվի՝ որպես ակնհայտ անհիմն...

***Օջալանն ընդդեմ Թուրքիայի (Öcalan v. Turkey), 46221/99 [GC], 12.05.2005թ.***

134. Իր երկու փաստաբանների այցելությունից հետո, որոնց միջև ընկած է եղել մոտավորապես երկու շաբաթ, դիմողի և նրա պաշտպանի միջև հարաբերությունները սահմանափակվել են շաբաթը երկու անգամ հաճախականությամբ մեկժամյա տեսակցություններով...

137. ...Դատարանը գտնում է, որ դիմողի և նրա փաստաբանների տեսակցությունների թվի և տևողության սահմանափակումը հանդիսացել է նրա պաշտպանության նախապատրաստումը բարդացնող գործոններից մեկը...

144. ...այն փաստը, որ դիմողին պատշաճ հնարավորություն չի տրվել ծանոթանալու մեղադրական եզրակացության նախագծից բացի գործի այլ փաստաթղթերին, ևս հանդիսացել է նրա պաշտպանությունը նախապատրաստելու հետ կապված բարդությունների բաղկացուցիչ մասը...

147. ...Մեծ պալատը համաձայն է Պալատի տեսակետին՝ կապված գործի այն դժվարությունների հետ, որոնց բախվել են դիմողի փաստաբանները գործի նյութերին ծանոթանալու ընթացքում, և որոնք բարդացել են դիմողի կողմից նույն խնդիրն ունենալու պատճառով.

> «...դիմողի փաստաբաններին 17.000 էջից բաղկացած գործի նյութերը տրամադրվել են Ազգային անվտանգության դատարանում գործի քննությունն սկսվելուց մոտավորապես երկու շաբաթ առաջ: Քանի որ նրանց այցելությունների թվի և տևողության վրա դրված սահմանափակումը դիմողի փաստաբանների համար անհնարին են դարձրել իրենց վստահորդին մինչև 1999թ. հունիսի 2-ը գործի նյութերին ծանոթացնելը կամ դրա քննարկումներին և վերլուծություններին նրա ներգրավումը, նրանց դրել է այնպիսի իրավիճակի մեջ, որը հատկապես դժվարացրել է պաշտպանության նախապատրաստումը: Վարույթի հետագա զարգացումները թույլ չեն տվել նրանց հաղթահարել այս դժվարությունները. վարույթն արագ է ընթացել, նիստերն, առանց ընդհատումների շարունակվել են մինչև 1999թ. հունիսի 8-ը, 1999թ. հունիսի 23-ին դիմողի փաստաբաններին առաջարկվել է գործում առկա, ներառյալ նիստի ժամանակ հետազոտված, ապացույցների վերաբերյալ ներկայացնել իրենց հայտարարությունները»:

***Մակֆին ընդդեմ Ֆրանսիայի (Makhfi v. France), 59335/00, 19.10.2004թ.***

34. Դատարանը նշում է, որ քննվող գործով հայցվորը մեղադրվել է միասին կրկնահանցանք կազմող մի քանի բռնաբարությունների և գողության մեջ ու կանգնել երդվյալ ատենակալների դատարանի առջև:

35. Դատական նիստը երդվյալ ատենակալների դատարանում սկսվել է դեկտեմբերի 4-ին, ժամը 9:15-ին: Այդ օրը քննությունը տեղի է ունեցել ժամը 9:15-ից մինչ ժամը 13-ը, այնուհետև՝ 14:30-16:40-ը, 17:00-20:00-ն և 21:00-00:30-ը: Այս վերջին ընդհատման ժամանակ հայցվորի փաստաբանը՝ հիշատակելով պաշտպանության իրավունքները, ներկայացրել է դատաքննության կասեցման դիմում:

36. Այդ դիմումը դատարանի կողմից մերժվել է, դատաքննությունը վերսկսվել է դեկտեմբերի 5-ին, առավոտյան ժամը 1-ին ու տևել մինչ ժամը 4-ը:

37. Դատարանը նաև նշում է, որ հայցվորի փաստաբանը դատական նիստում ելույթ է ունեցել առավոտյան ժամը 4:25-ին, որից հետո առավոտյան ժամը 5-ի մոտ ելույթ է ունեցել մյուս մեղադրյալի շահերը պաշտպանող իր գործընկերը, այնուհետև ժամը 15:45-ից տեղի են ունեցել ընդհանուր՝ բոլոր կողմերի մասնակցությամբ քննարկումներ: Մեղադրյալները, մեղադրող կողմը խոսքի իրավունք են ստացել վերջում:

38. Դատաքննությունն այդ օրվա ընթացքում ընդհանուր առմամբ տևել է մինչև 17:15, որից հետո դատարանը հեռացել է որոշում կայացնելու: Դատարանը նշում է նաև, որ քրեական դատարանը, դատավորներն ու երդվյալ ատենակալները որոշումն ընդունել են դեկտեմբերի 5-ին, առավոտյան ժամը 6:15-8:15-ն ընկած ժամանակահատվածում: Մեղադրող կողմը վերջում պահանջել է 8 տարվա ազատազրկում՝ հասարակական աշխատանքների կատարման հետ մեկտեղ:

39. Դատարանը հիշեցնում է, որ արդեն հաստատել է այն փաստը, որ դժվար է եղել մեղադրյալներին պահել ևվազագույն ֆիզիկական և հոգեբանական կայուն վիճակում այն պահին, երբ նրանք մտնում են իրենց համար այդքան կարևոր դատական նիստերի դահլիճ, հաշվի առնելով այն հանցագործությունների ծանրությունը, որոնցում նրանք մեղադրվում էին, և այն պատիժները, որոնք պետք է կրեին: Չնայած իրենց խորհրդատուների ներկայությանը, որոնք առիթ ունեցան ներկայացնելու իրենց փաստարկները, մեղադրյալների համար, անկասկած, ցավալի կլիներ վճռորոշ պահին իրենց դիրքորոշումը թուլացնելը, երբ նրանք հնարավոր բոլոր միջոցներով պաշտպանվելու կարիք ունեին, հատկապես դատական նիստի բացման պահից տեղի ունեցած իրենց հարցաքննությունների ժամանակ խրոխտ ելույթ ունենալու և իրենց փաստաբանների հետ համագործակցելու միջոցով:

40. Դատարանը կարծում է, որ առաջնային է այն, որ ոչ միայն մեղադրյալները, այլև հավասարապես նրանց պաշտպանները կարողանան հետևել դատաքննությանը, պատասխանեն տրված հարցերին և վարեն գործն առանց չափազանց հոգնած լինելու: Նաև Դատարանը գտնում է, որ հոգնածության դեպքում դատավորներն ու երդվյալ ատենակալները չեն կարող լիարժեքորեն օգտվել իրենց համագոր-

ծակցելու հնարավորությունից ու ուշադիր հետևել գործի քննությանը՝ հեղինակավոր որոշում կայացնելու համար:

41. Դատարանը հաստատում է, որ այսպիսի իրավիճակներ ստեղծվում են ելնելով կոնկրետ գործի բարդությունից: Այն կարծում է, որ վերը նկարագրված պայմաններում չեն կարող ապահովվել պաշտպանության իրավունքի իրացումը և բավարարվել մրցակցային դատավարության և զենքերի հավասարության պահանջները:

42. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի խախտում:

***Գալստյանն ընդդեմ Հայաստանի (Galstyan v. Armenia), 26986/03, 15.11.2007թ.***

85. Սույն գործով Դատարանը գտնում է, որ դիմողի վերաբերյալ գործը քննվել է ՎԻՎՕ-ով սահմանված արագացված ընթացակարգով, համաձայն ՎԻՎՕ-ի 277-րդ հոդվածի՝ մանր խուլիգանության վերաբերյալ գործերը քննվում են մեկօրյա ժամկետում: Դատարանը հիշեցնում է, որ քրեական գործերով արագացված դատաքննությունն ու կիրառումն ինքնին չեն հակասում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին, քանի դեռ դրանք տրամադրում են հոդվածով սահմանված բոլոր անհրաժեշտ երաշխիքները… Կառավարությունը չի կարողացել ներկայացնել համոզիչ փաստարկներ, որ դիմողը և՛ օրենքով, և՛ գործնականում ունեցել է իր պաշտպանությունը նախապատրաստելու համար գործի քննությունը հետաձգելու միջնորդություն ներկայացնելու իրավունք, և որ նման միջնորդությունը կբավարարվեր, եթե դիմողը նման միջնորդություն ներկայացներ…

86. Դատարանը նշում է, որ համաձայն Կառավարության՝ գործի մինչդատական ամբողջ ընթացքը տևել է երկու ժամ՝ 17:30-ից մինչև 19:30: Կառավարությունը պնդել է՝ քանի որ դիմողի գործը բարդ գործ չէր, երկու ժամը բավարար էր՝ հաշվի առնելով, որ դիմողը հրաժարվել էր պաշտպանից, չէր օգտվել միջնորդություններ անելու կամ բացարկներ հայտնելու իրավունքից և կամովին ստորագրել էր վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունը: Դատարանը, այնուամենայնիվ, գտնում է, որ միայն այն հանգամանքը, որ դիմողն ստորագրել է մի փաստաթուղթ, որում հայտնել է, որ չի ցանկանում ունենալ պաշտպան և ինքնուրույն է իրականացնելու իր պաշտպանությունը, չի նշանակում, որ իրեն անհրաժեշտ չէ բավարար ժամանակ և հնարավորություններ՝ դատական նիստին արդյունավետորեն նախապատրաստվելու համար: Եվ ոչ էլ այն, որ դիմողն այդ կարճ նախնական քննության ընթացքում չի ներկայացրել որևէ որոշակի միջնորդություն, ավերապահորեն նշանակում է, որ իրեն անհրաժեշտ չէ լրացուցիչ ժամանակ, որպեսզի կարողանա բավարար պայմաններում պատշաճ գնահատել իրեն ներկայացված մեղադրանքը և քննարկել տարբեր հնարավորություններ իր արդյունավետ պաշտպանության համար: Ի վերջո, Դատարանը համաձայն է, որ դի-

մողն ունեցել է հնարավորություն մերժելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունն ստորագրելը: Այնուամենայնիվ, հակառակ Կառավարության պնդումների, օրենքում կամ դիմողի վերաբերյալ գործի նյութերում առկա չէ որևէ փաստ, որը հիմք կտա եզրակացնելու, որ դիմողի կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունն ստորագրելը հետապնդել է որևէ այլ նպատակ, քան հաստատելը, որ ինքը ծանոթացել է իր դեմ ներկայացված մեղադրանքին և իր իրավունքներին:

87. Դատարանը նշում է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, որը պարունակում է մեղադրանքը և հանդիսանում է դիմողի դեմ ներկայացված հիմնական ապացույցը, հստակ չի սահմանում, թե որ ժամին է այդ փաստաթուղթը ներկայացվել նրան և որքան ժամանակ է տրամադրվել այդ փաստաթղթին ծանոթանալու համար: Նույնը կարելի է ասել ոստիկանների զեկուցագրի և ոստիկանության կողմից պատրաստված այլ նյութերի մասին: Կողմերը համաձայնության չեն եկել միևչդատական վարույթի հստակ ժամկետի հարցում, սակայն, բոլոր դեպքերում, ակնհայտ է, որ այդ ժամկետը եղել է մի քանի ժամից ոչ ավելի: Դատարանն այնուհետև նշում է, որ այդ ժամանակահատվածում դիմողը կամ փոխադրվելիս է եղել դատարան, կամ, առանց արտաքին աշխարհի հետ կապ ունենալու, պահվել է ոստիկանության բաժնում: Ավելին, ոստիկանության բաժնում գտնվելու այս կարճ ընթացքում դիմողը ենթարկվել է մի շարք քննչական գործողությունների, ներառյալ հարցաքննության և խուզարկության: Եթե անգամ ընդունենք, որ դիմողի գործը բարդ չէր, Դատարանը կասկածում է, որ այն պայմանները, որոնց առկայությամբ դիմողի նկատմամբ վարույթ է իրականացվել՝ սկսած նրան ձերբակալելու պահից մինչև դատապարտումը, եղել են այնպիսին, որ հնարավորություն են տվել նրան պատշաճ կերպով ծանոթանալու և գնահատելու իրեն ներկայացված մեղադրանքը և իր դեմ ներկայացված ապացույցները, և իր պաշտպանությունը իրականացնելու նպատակով մշակել կենսունակ իրավաբանական ռազմավարություն:

88. Դատարանը եզրակացնում է, որ դիմողին չի տրամադրվել պատշաճ ժամանակ և հնարավորություններ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար: Համապատասխանաբար, առկա է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում՝ զուգակցված 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ:

***Մոիսեևն ընդդեմ Ռուսաստանի** (Moiseyev v. Russia), **62936/00, 09.10.2008թ.***

222. Սույն գործով Դատարանը նշում է, որ… Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով, դիմողը կալանավորվել, տեղափոխվել և անազատության մեջ է պահվել դատարանի շենքում, չափազանց սահմանափակ պայմաններում՝ առանց բավարար չափով բնական լույսի և օդի կամ սննդով պատշաճ ապահովման: Դիմողը չի կարողացել գրել

կամ կարդալ, քանի որ նա՝ այլ անձանց հետ, կալանավորված է եղել նման փոքր տարածությունում: Այն տառապանքները և հիասթափությունը, որ դիմողը պետք է զգար՝ կապված տեղափոխման և կալանավորման անմարդկային պայմանների հետ, անկասկած, թուլացրել են կենտրոնանալու նրա ունակությունը և ուժեղացրել հոգեկան լարվածությունը դատական լսումներին անմիջապես նախորդող ժամերին: Ակնհայտ է, որ նա ունեցել է պրոֆեսիոնալ փաստաբանների թիմ, ովքեր կարող էին հոգուտ նրա հայտարարություններ անել: Այնուամենայնիվ, հաշվի առնելով վարույթների ընթացքում բարձրացված հարցերի բնույթը և դիմողի իրավասության շրջանակի հետ դրանց սերտ կապը՝ Դատարանը գտնում է, որ ի սկզբանե կարևորվում է իր փաստաբաններին ուղղություն տալու և նրանց հետ խորհրդակցելու նրա ունակությունը: Վերոգրյալ պայմանների ամբողջական ազդեցությունը և հնարավորությունների ոչ պատշաճ հասանելի լինելը բացառել են դիմողի կողմից պաշտպանությունը հաջողությամբ նախապատրաստելու ցանկացած հնարավորություն՝ հատկապես հաշվի առնելով այն, որ նա չի կարողացել գործի նյութերը կամ իր նշումներն իր խցում վերլուծել:

223. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ դիմողին չի տրամադրվել պատշաճ հնարավորություն իր պաշտպանությունը նախապատրաստելու համար, ինչը խախտել է արդար դատական քննության և հնարավորությունների հավասարության վերաբերյալ պահանջները:

### 4. Մեղքն հաստատող ապացույցների բացահայտումը

*ա. Գործի նյութերի մատչելիությունը*

***Միաիլհն ընդդեմ Ֆրանսիայի (Miailhe v. France) (No 2), 18978/91, 26.09.1996թ.***

44. ...Բացի դրանից, նրանց որոշումներից պարզ է դառնում, որ նրանք իրենց կարգավորումները, ի թիվս այլոց՝ նաև հարկային պարտավորությունների կատարման վայրի հետ կապված, հիմնավորել են բացառապես գործում առկա փաստաթղթերով, որոնց հիման վրա կողմերն իրենց գործով վարույթների ընթացքում փաստարկներ են ներկայացրել, այսպիսով հիմնավորվում է, որ դիմողն օգտվել է արդար դատական քննության իրավունքից: ՍԻՖ-ի (CIF) հետ խորհրդակցելու գործընթացի կամ քրեական դատավարությունների ընթացքում որոշ փաստաթղթեր չներկայացնելը, հետևաբար, չի խախտել պրն Միաիլիի պաշտպանության իրավունքը կամ հնարավորությունների հավասարության սկզբունքը...

***Ֆուչերն ընդդեմ Ֆրանսիայի (Foucher v. France), 22209/93, 18.03.1997թ.***

35. Սույն գործով հատկապես կարևորվում է երեք հանգամանք.

*Առաջին*, պրն Ֆյուչերը նախընտրել է իր գործով վարույթում իրեն ներկայացնել անձամբ, որի իրավունքը նա ուներ ինչպես Կոնվենցիայի, այնպես էլ ներպետական օրենսդրության իմաստով...

*Երկրորդ*, քանի որ դիմողը ոստիկանական դատարանի առաջ է կանգնել անմիջապես, առանց նախնական քննության, նախնական քննության գաղտնիության ապահովման հարց չի բարձրացվել:

*Վերջապես*, Կաենի Վերաքննիչ դատարանի կողմից դիմողի դատապարտումը հիմնված է եղել բացառապես անտառապահի պաշտոնական զեկույցի վրա, որը Քրեական դատավարության օրենսգրքի 537-րդ հոդվածի իմաստով..., հակառակն ապացույցող այլ հանգամանքների բացակայության դեպքում արժանահավատ ապացույց է համարվում:

36. Դատարանը... հետևաբար, գտնում է, որ դիմողի համար կարևոր է եղել գործի նյութերին ծանոթանալը և դրանում պարունակվող փաստաթղթերի պատճեններն ունենալը՝ իրեն վերաբերող պաշտոնական զեկույցը վիճարկելու նպատակով...

Քանի որ նրան նման հնարավորություն չի տրվել, դիմողը չի կարողացել պատշաճ ձևով նախապատրաստել իր պաշտպանությունը, և նա զրկվել է հնարավորությունների հավասարության իրավունքի իրականացումից՝ հակառակ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի և դրա հետ կապված՝ 6-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների...

***Մոիսեևն ընդդեմ Ռուսաստանի** (Moiseyev v. Russia), 62936/00, 09.10.2008թ.*

215. Կառավարությունն ընդունել է, որ դիմողի խնդրանքը՝ կապված մեղադրական եզրակացության նախագծի տրամադրման հետ, մերժվել է այն հիմքով, որ վերջինս գաղտնի տեղեկություն է պարունակում: Դատավարությունների ընթացքում մեղադրական եզրակացության նախագիծը պահվել է կամ կալանավայրի հատուկ վարչությունում, կամ Քաղաքային դատարանի հատուկ գրասենյակում, որտեղից այն չէր կարող դուրս բերվել: Կառավարությունը չի վիճարկել դիմողի հայտարարությունն այն մասին, որ գործի բոլոր այլ նյութերը և նիստերի ժամանակ դիմողի կամ նրա ներկայացուցիչների կողմից կատարված նշումները նիստից հետո պետք է հանձնվեին հատուկ գրասենյակ:

216. Դատարանն ընդունում է, որ ազգային անվտանգության նկատառումներից ելնելով որոշ դեպքերում կարող է պահանջվել պետական գաղտնիքի հետ առնչվող գործերով դատավարական սահմանափակումների կիրառում: Այնուամենայնիվ, եթե անգամ դրված է ազգային անվտանգության հարց, ժողովրդավարական հասարակությունում իրավակարգի և օրենքի գերակայության սկզբունքները պահանջում են, որ մարդու հիմնարար իրավունքների, ինչպիսին է, օրինակ, արդար դատական քննության իրավունքը, վրա ազդող միջոցնե-

րի կիրառումն օրինական հիմք ունենա և պետք է համապատասխան լինի հետապնդվող նպատակների իրականացմանը: Սույն գործով Կառավարությունը չի հիմնվել կալանավայրերում հատուկ վարչություններ կամ դատարաններում հատուկ գրասենյակների գործունեությունը կարգավորող որևէ օրենքի կամ կարգավորման կամ ներպետական օրենսդրության այլ դրույթի վրա: Կառավարությունը նաև չի ներկայացրել որևէ հիմնավորում գործի նյութերին ծանոթանալու՝ դիմողի իրավունքի սահմանափակման տարածական բնույթի վերաբերյալ: Այն նաև չի պարզաբանել, թե ինչու ներպետական իշխանություններն ի վիճակի չեն եղել մեղադրական եզրակացության նախագիծը ներկայացնել այնպես, որ գաղտնի տեղեկությունը բովանդակվեր առանձին լրացուցիչ հավելվածում, բացառապես որի վրա կտարածվեր սահմանափակումը: Նմանապես, չի երևում, որ Ռուսաստանի իշխանությունները քննարկել են պետական գաղտնիք հանդիսացող փաստաթղթերն այլ փաստաթղթերից, օրինակ, դատարանների դատավարական որոշումներից, տարանջատելու հարցը, որի վրա սկզբունքորեն որևէ սահմանափակում չի կարող տարածվել: Վերջապես, Դատարանը գտնում է, որ այն փաստը, որ դիմողը և նրա պաշտպանության թիմը չեն կարողացել դուրս բերել իրենց նշումները՝ դրանք փորձագետի ցույց տալու կամ այլ նպատակով օգտագործելու համար, ակնհայտորեն խոչընդոտել է նրանց կողմից դրանցում պարունակվող տեղեկությունների օգտագործմանը, քանի որ նրանք հետագայում պետք է հիմնվեին բացառապես իրենց հիշողության վրա…

217. Դատարանն արդեն նշել է, որ գործի նյութերին ծանոթանալու և յուրաքանչյուր նշման, ներառյալ, եթե անհրաժեշտ է, համապատասխան փաստաթղթերի պատճենների չսահմանափակված հասանելիությունը հանդիսանում է վարույթի լուսաբանման ենթատեքստում արդար դատական քննության կարևոր երաշխիք: Նման հնարավորություն չտրամադրելը, Դատարանի գնահատմամբ, հանգեցրել է հնարավորությունների հավասարության սկզբունքի խախտման… Այս դատողությունը *a fortiori* վերաբերում է սույն գործի հանգամանքներին, որով դիմողը ներգրավված է եղել այնպիսի վարույթում, որի պարագայում կարող էր ոչ միայն կորցնել իր բարի համբավը կամ պետական պաշտոններ զբաղեցնելու (ինչպես լուսաբանման վարույթներում է) իրավունքը, այլ նաև իր ազատությունը: Բացի դրանից, ինչպես Դատարանը գտել է վերևում, գործի նյութերին և նշումներին դիմողի հասանելիության սահմանափակումները ներպետական իրավունքով որևէ կերպ չեն հիմնավորվում և չեն տեղավորվել դրանց շրջանակներում:

218. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ դիմողին և նրա պաշտպանության թիմին պատշաճ հնարավորություն չի տրվել ծանոթանալու գործի նյութերին, ինչպես նաև սահմանափակվել է իրենց նշումներն օգտագործելու՝ նրանց իրավունքը, ինչի հետևանքով նրա

պաշտպանության նախապատրաստման ժամանակ նրանք դժվարություններ են կրել:

***Նատունենն ընդդեմ Ֆինլանդիայի (Natunen v. Finland), 21022/04, 31.03.2009թ.***

44. Վերադառնալով սույն գործին՝ Դատարանը գտնում է, որ ոչնչացված ձայնագրությունների քանակը և դրանց բովանդակությունը չի կարող ճշտվել ներկայացված նյութերով: Կառավարությունը, սակայն, չի վիճարկել դիմողի հայտարարությունն այն մասին, որ նման ձայնագրությունների քանակը որոշակի կարևորություն ունի: Այն չի կարողացել նաև ներկայացնել որևէ առանձնահատուկ տեղեկություն դրանց բովանդակության վերաբերյալ…

46. Դատարանը կրկնում է, որ 6-րդ հոդվածի պահանջները ենթադրում են, որ նշելով առանձնահատուկ պատճառներ այնպիսի ապացույցի չբացահայտման խնդրանքի համար, որը կարող էր մեղադրյալին հնարավորություն տալ իրեն ազատել պատասխանատվությունից, նա պետք է այդ պատճառների հիմնավորվածությունը դատարանի կողմից ուսումնասիրելու հնարավորություն ունենա: Թեև սույն գործով դիմողը պետք է տեղյակ լիներ ոչնչացված ձայնագրությունների բովանդակությանը, քանի որ դրանք իրեն են վերաբերել, և եթե անգամ նա կարողանար այլ մեղադրյալների հետ ունեցած այդ բոլոր քննարկումների վերաբերյալ դատարանում հարցեր տալ, Դատարանը կարծում է, որ ներպետական դատարանները չէին գտնի, որ զենքի ապօրինի վաճառքի վերաբերյալ դիմողների պնդումներն արժանահավատ են, եթե այլ ապացույցներ չլինեին… Բացի դրանից, Վերաքննիչ դատարանը չի մերժել խնդրված ձայնագրությունները բացահայտելու կարգադրություն անել այն հիմքով, որ դիմողը չի ներկայացրել իր խնդրանքի առանձնահատուկ և ընդունելի պատճառներ: Դրա փոխարեն դատարանը մերժել է այդ կապակցությամբ որոշում կայացնել, քանի որ ձայնագրությունները ոչնչացվել էին և այդ պատճառով չէին կարող բացահայտվել պաշտպանության կողմի համար և ներկայացվել դատարանում…

47. Եթե անգամ ոստիկանությունն և դատախազությունը օրենքով սահմանված կարգով պարտավոր էին հաշվի առնել ինչպես հօգուտ կասկածյալի, այնպես էլ նրա դեմ ներկայացված փաստերը, վարույթը, որի ընթացքում նախնական քննություն իրականացնող մարմինն ինքը, անգամ համագործակցելով դատախազության հետ, փորձել է գնահատել, թե ինչը կարող է կապված լինել գործի հետ, ինչը՝ ոչ, չի կարող համապատասխան լինել 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին: Բացի դրանից, պարզ չէ, թե ինչ կերպ է դատախազը, փաստորեն, ներգրավվել գործի նյութերում չներառված այդ ձայնագրությունների ոչնչացմանը: Սույն գործով հեռախոսային խոսակցությունները լսելու արդյունքում ձեռք բերված որոշ նյութերի ոչնչացումը պաշտպանության կողմի համար անհնարին է դարձրել դրանց վերա-

բերելիության մասին իրենց գնահատականները հաստատելը և իրենց իրավացիությունը դատարաններում ապացուցելը:

48. ...սույն գործով, չբացահայտվող ապացույցների վերաբերյալ որոշումները, ենթադրաբար, կատարվել են նախնական քննության ընթացքում՝ առանց պաշտպանության կողմին որոշման կայացմանը մասնակցելու հնարավորություն տալու:

49. ...ապա Դատարանը նշում է, որ վիճարկվող միջոցառումը բխում է օրենսդրության թերությունից, քանի որ այն պաշտպանության կողմի համար չի նախատեսում պաշտպանություն իշխանությունների կողմից թույլ տրված ցանկացած խախտումից, ովքեր օրենքով սահմանված կարգով տվյալ ժամանակահատվածում պարտավոր էին ոչնչացնել վիճարկվող ձայնագրությունները… Դատարանը գտնում է, որ Հարկադրանքի միջոցների մասին օրենքի մեջ ուղղում մտցնելու մասին օրինագծում խնդրահարույց է դիտվել այն, որ կասկածյալի անմեղությունը հիմնավորող տեղեկությունը կարող է ոչնչացվել նախքան գործի լուծումը… Նման դրույթը հաջողությամբ ուղղվել է 2004թ. հունվարի 1-ից՝ նպատակ ունենալով լավագույնս ապահովել պաշտպանության կողմի իրավունքները: Այս ուղղումը, սակայն, դիմողի համար կատարվել է շատ ուշ:

50. Քննարկելով վերոգրյալ դատողությունները՝ Դատարանը եզրակացնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի և դրա հետ կապված՝ 6-րդ հոդվածի 3-րդ մասի (b) կետի խախտում:

*բ. Ապացույցի չբացահայտումը՝ հասարակական շահից ելնելով*

***Ռոուն ու Դեվիսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Rowe and Davis v. United Kingdom) [GC], 28901/95, 16.02.2000թ.***

63. Առաջին ատյանում գործի քննության ընթացքում մեղադրանքի կողմը, առանց դատավորին տեղեկացնելու, որոշել էր չբացահայտել որոշ ապացույցներ՝ ելնելով հասարակական շահից: Նման ընթացակարգը, քանի որ մեղադրանքի կողմն ինքն էր փորձել գնահատել գաղտնի տեղեկության՝ պաշտպանության կողմի համար ունեցած կարևորությունը և այդ տեղեկությունը հավասարեցնել գաղտնի պահելու վերաբերյալ հասարակական շահի հետ, չի համապատասխանում 6-րդ հոդվածի 1-ին մասի վերոնշյալ պահանջներին...

64. Իրավամբ, դիմողների բողոքի քննության սկզբում դատախազը տեղեկացրել է պաշտպանության կողմին այն մասին, որ որոշ տեղեկություն չի բացահայտվել՝ առանց ցույց տալու այդ նյութերի բնույթը, և երկու տարբեր դեպքերում Վերաքննիչ դատարանը վերանայել է չբացահայտված ապացույցները և, *ex parte* նիստի ժամանակ Թագի դատարանի թույլտվությամբ, սակայն պաշտպանության կողմի բացակայությամբ որոշում է կայացրել չբացահայտման օգտին:

65. Սակայն Դատարանը չի գտնում, որ Վերաքննիչ դատարանում կայացած այս վարույթը բավարար է եղել շտկելու վարույթի անարդարությունը, որի պատճառը հանդիսացել է չբացահայտվող տեղեկության նկատմամբ գործը քննող դատավորի կողմից որևէ վերահսկողության բացակայությունը: Ի տարբերություն վերջիններիի, ովքեր լսել են վկաների կողմից տրված ցուցմունքները և ամբողջությամբ տեղյակ են եղել գործի բոլոր ապացույցներին ու հանգամանքներին, Վերաքննիչ դատարանի դատավորները չբացահայտվող նյութերի հնարավոր վերաբերելիության մասին իրենց դատողություններում հիմնվել են Թագի դատարանի նիստի արձանագրության և դատախազի կողմից նրանց ներկայացված հանգամանքների վրա: Ի լրումն դրա, առաջին ատյանի դատարանի դատավորը կարող էր ամբողջ վարույթի ընթացքում վերահսկել չբացահայտման անհրաժեշտությունը՝ չբացահայտվող ապացույցների կարևորությունը նոր հանգամանքների բացահայտման փուլում գնահատելով, երբ խաչաձև հարցաքննությունների միջոցով հնարավոր էր լրջորեն սասանել հիմնական վկաների արժանահավատությունը, և երբ պաշտպանության կողմը կարող էր բազմաթիվ ցուցումներ տալ ատենակալներին կամ շեշտադրումներ անել: Դրան հակառակ, Վերաքննիչ դատարանը պարտավոր էր իր գնահատականը տալ *ex post facto* և նրա վրա որոշ դեպքերում կարող էր անգիտակցաբար ազդել անձի մեղավորության վերաբերյալ ատենակալների դատավճռի վրա՝ նվազեցնելով չբացահայտվող ապացույցի կարևորության գնահատումը:

66. Հետևաբար, քննարկվող ապացույցները դատախազի կողմից գործը քննող դատավորին չներկայացնելը և նրան չթույլատրելը կարգավորելու բացահայտման հարցը, խախտել է դիմողի արդար դատական քննության իրավունքը:

***Պ.Գ.-ն և Ջ.Հ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (P.G. and J.H. v. United Kingdom), 44787/98, 25.09.2001թ.***

71. Դատարանը բավարարված է նրանով... որ պաշտպանության կողմը տեղեկացվել է և նրան թույլատրվել է կարծիք հայտնել և մասնակցել որոշման կայացման վերոնշյալ գործընթացին այնքանով, որքանով դա հնարավոր էր՝ առանց նրանց հայտնելու այն նյութերի մասին, որոնք դատախազությունը, ելնելով հասարակական շահից, խնդրել էր գաղտնի պահել... Դատարանը նաև նշում է, որ այն նյութերը, որոնք չեն բացահայտվել սույն գործի ընթացքում, մեղադրանքի մաս չեն կազմել և երբևէ ատենակալներին չեն ներկայացվել: Այն փաստը, որ բացահայտման անհրաժեշտությունն ամբողջ ընթացքում եղել է գործը քննող դատավորի հայեցողության տակ, հանդիսացել է կարևոր երաշխիք, քանի որ նա էր պարտավոր դատավարության ընթացքում վերահսկել չբացահայտվող ապացույցների արժանահավատությունը կամ անարժանահավատությունը: Չկա որևէ ենթադրություն այն մասին, որ դատավորը չի եղել 6-րդ հոդվածի 1-ին մասի

իմաստով անկախ և անկողմնակալ: Նա լիովին տեղեկացված է եղել գործով ներկայացված ապացույցների և գործի հանգամանքների մասին, և ինչպես գործի քննությունից առաջ, այնպես էլ դրա ընթացքում վերահսկել է այն, թե չբացահայտվող տեղեկությունն առնչվում է, արդյոք, պաշտպանությանը...

***Միրիլաշվիլին ընդդեմ Ռուսաստանի** (Mirilashvili v. Russia), 6293/04, 11.12.2008թ.*

200. Սկզբից ևեթ Դատարանը նշում է, որ պաշտպանության կողմին չներկայացված նյութերը չեն պարունակում տեղեկություն 2000թ. օգոստոսի 7-8-ի դեպքերի վերաբերյալ: Դրանք վերաբերում էին առավելապես դիմողի դեմ «ուղղակի» ապացույցների (ձայնագրություններ) ձեռքբերման եղանակին: Սակայն այն դրանք նվազ կարևոր չի դարձնում: Ոչ միայն գործի հետ ուղղակի կապ ունեցող փաստեր պետք է քննության առնվեն մրցակցային դատավարությունում, այլ նաև ապացույցներ, որոնք կարող են կապ ունենալ նախորդի թուլատրելիության, արժանահավատության և ամբողջականության հետ…

202. Դատարանը գտնում է, որ վիճարկվող սահմանափակումն օրինական նպատակ է հետապնդել: Քրեական դատավարություններն այն կերպ կազմակերպելը, որ պաշտպանվի ոստիկանության գաղտնի գործառնությունների մանրամասների վերաբերյալ տեղեկությունը, կապված է 6-րդ հոդվածի նպատակների հետ: Դատարանը, հաշվի առնելով գործի ենթատեքստը, նախապատրաստվել է ընդունել, որ դիմողի կողմից պահանջվող փաստաթղթերը պետք է պարունակեին ազգային անվտանգությանը վերաբերող գաղտնի տեղեկության տարրեր: Նման հանգամանքներում ազգային դատավորը պաշտպանության կողմից ներկայացված բացահայտման պահանջի վերաբերյալ որոշում կայացնելիս օժտված է եղել գնահատման լայն շրջանակներով:

203. Հարց է ծագում, թե արդյոք չբացահայտելը հավասարակշռել է պատշաճ դատավարական երաշխիքներին: Դատարանն այս կապակցությամբ նշում է, որ հեռախոսային խոսակցությունների լսման թույլտվության հետ կապված նյութերը *ex parte* ուսումնասիրվել են նախագահող դատավորի կողմից 2002թ. սեպտեմբերի 12-ի դատական նիստում: Հետևաբար, որոշ փաստաթղթեր չբացահայտելու վերաբերյալ որոշումը կայացվել է ոչ միայն միակողմանիորեն մեղադրողի… այլ նաև դատական իշխանության ներկայացուցիչների կողմից:

205. ...Դատարանն ուսումնասիրելու է, թե արդյոք դատավորը հասարակական շահը հավասարակշռել է մեղադրյալի շահի հետ և պաշտպանության կողմին հնարավորություն տվել է հնարավորինս առավելագույն չափով մասնակցելու որոշում կայացման գործընթացին:

206. Դատարանը նշում է, որ ներպետական դատարանի պատճառաբանության էական կետն եղել է այն, որ քննարկվող նյութերը կապված էին ՕՈԳՕ-ի (օպերատիվ և որոնողական գործողություննե-

րի մասին օրենքի) հետ և, որպես այդպիսին, չեն կարող բացահայտվել պաշտպանության կողմի համար: Պարզ է, որ դատարանը չի վերլուծել, թե այդ նյութերը կարող էին որևէ աջակցություն ունենալ պաշտպանության կողմի համար, և արդյոք իրենց կողմից այդ նյութերը չբացահայտելը, ինչն ի վերջո հնարավոր է, վնաս կպատճառի նույնացվող հասարակական շահին: Դատարանի որոշումը հիմնված էր քննարկվող նյութերի ձևի (նյութեր, որոնք կապված են ՕՈԳՕ-ի հետ) և ոչ թե բովանդակության վերլուծության վրա:

207. Ջինվորական դատարանը, հավանաբար, դիտարկվող իրավիճակում այլ ընտրություն չի ունեցել՝ պահպանելով օպերատիվ և որոնողական գործողությունների մասին օրենքը, որը բացարձակորեն արգելում է ՕՈԳՕ-ի հետ կապված նյութերի բացահայտումը նման իրավիճակներում և չի նախատեսում դատավորի կողմից որևէ «հավասարակշռման» իրականացում: Դեռևս այն փաստն է անփոփոխ մնում, որ պաշտպանության կողմից ներկայացված բացահայտման պահանջի վերաբերյալ որոշում կայացնելը խիստ սահմանափակ է:

208. Քննարկելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ որոշում կայացնելու գործընթացը լուրջ թերություններ ունի: Ինչ վերաբերում է որոշման ըստ էության հիմնավորմանը, ապա Դատարանը գտնում է, որ վիճարկվող որոշումն անորոշ է եղել. այն չի որոշակիացրել, թե ինչ բնույթի գաղտնի տեղեկություններ են պարունակել դատարանի՝ 2000թ. հուլիսի 11-ի որոշումը և գործառնության հետ կապված այլ նյութերը: Դատարանն ընդունել է մրցակցային քննությունից բոլոր նյութերի անվերապահ բացառումը: Բացի դրանից, Դատարանը գտնում է, որ վերահսկողության գործառնությունն ուղղված չի եղել դիմողի կամ նրա հետ մեղադրվող անձի դեմ:

209. Ընդհանուր առմամբ Դատարանը եզրակացնում է, որ վերահսկողության գործառնության հետ կապված նյութերը չբացահայտելու վերաբերյալ որոշումը չի ուղեկցվել պատշաճ դատավարական երաշխիքներով, և, բացի դրանից, բավականաչափ արդարացված չի եղել: Դատարանը գործի այս տեսակետը հաշվի կառնի ամբողջ դատավարության արդարությունը վերլուծելիս:

Տե՛ս նաև վերը՝ **C.VI.3**

### 5. Մեղադրյալի՝ իր շահերն ինքնուրույն ներկայացնելու իրավունքը

***Իքսն ընդդեմ Նորվեգիայի** (X v. Norway), 5923/72, 20.05.1975թ., DR 3, 43*

Իրավամբ, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (c) կետի ձևակերպումից բխում է, որ յուրաքանչյուր ոք, ում դեմ քրեական մեղադրանք է հարուցված, իրավունք ունի պաշտպանելու իրեն կամ ան-

ձամբ, կամ իր ընտրած դատապաշտպանի միջոցով, իսկ եթե նա իրավական օգնության համար վճարելու բավարար միջոցներ չունի, երբ դա են պահանջում արդարադատության շահերը, նրան պետք է անվճար իրավական օգնություն տրամադրվի:

Իր նախադեպային իրավունքում… Հանձնաժողովը նշել է, որ 6-րդ հոդվածի 3-րդ մասի (c) կետն ամրագրում է, որ մեղադրյալի դեմ հարուցված վարույթը չի կարող իրականացվել առանց պաշտպանության կողմի պատշաճ ներկայացուցչության, սակայն այն մեղադրյալին իրավունք չի տալիս ինքնուրույն որոշել, թե ինչ ձևով իր պաշտպանությունը պետք է ապահովվի: Որոշումն այն մասին, թե այդ դրույթով նախատեսված երկու տարբերակներից, մասնավորապես՝ իր շահերն անձամբ կամ իր կողմից ընտրված կամ, որոշակի հանգամանքներում՝ դատարանի կողմից նշանակված փաստաբանի միջոցով ներկայացնելուց, որ մեկը պետք է ընտրվի, թողնվել է համապատասխան օրենսդրությանը կամ դատարանի որոշմանը:

***Իքսն ընդդեմ Միացյալ Թագավորության (X v. United Kingdom), 8231/78, 06.03.1982թ., DR 28, 5***

2. …6-րդ հոդվածի 3-րդ մասի (b) կետը և 6-րդ հոդվածի 3-րդ մասի (c) կետը համապատասխանաբար երաշխավորում են քրեական հանցագործության մեջ մեղադրվող անձի իրավունքն ունենալու «պատշաճ ժամանակ և հնարավորություններ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար» և «իրեն պաշտպանելու կամ անձամբ կամ իր կողմից ընտրված պաշտպանի միջոցով…»: Սակայն Հանձնաժողովը չի գտնում որևէ հիմնավորում առ այն, որ այս դրույթներում առկա պահանջները սույն գործով չեն պահպանվել: Հանձնաժողովը մասնավորապես նշում է, որ դիմողն այն հանցանքի կատարումից հետո, որի համար ի վերջո դատապարտվել էր, գրավի կիրառմամբ ազատ է արձակվել գրեթե վեց ամիս ժամկետով: Նա պետք է կանխատեսեր, որ հնարավոր է նաև գործի դատական քննություն և, ազատության մեջ գտնվելով՝ նա իր պաշտպանությունը նախապատրաստելու և, եթե ցանկություն ուներ, ապա փաստաբանի հետ խորհրդակցելու համար բավարար ժամանակ է ունեցել: Բացի դրանից, գործը դատարան ուղարկելուց հետո… 1976թ. դեկտեմբերին, երբ նա դատարանի առաջ էր կանգնել, դիմողն ունեցել էր մոտ մեկ ամիս, անկախ կալանքից, դատական քննությանը նախապատրաստվելու և այդ կապակցությամբ փաստաբանի հետ խորհրդակցելու համար: Դիմողը չի ներկայացրել որևէ ապացույց առ այն, որ Միացյալ Թագավորության իշխանությունները որևէ կերպ խոչընդոտել են նրա՝ պաշտպանությանը նախապատրաստվելուն կամ թույլ չեն տվել փաստաբան հրավիրել: Հանձնաժողովն այս կապակցությամբ հղում է կատարում այն փաստին, որ պատիժ նշանակելիս դատավորն ուղղակիորեն նշել է, որ դիմողն ինքը չի ցանկացել փաստաբան ունենալ:

***Կորեիա դե Մաթոս ընդդեմ Պարտուգալիայի (Correia de Matos v. Portugal) (dec.), 48188/99, 15.11.2001թ.***

…մեղադրյալի կողմից ինքն իրեն պաշտպանելը կամ նրան պաշտպան նշանակելը դեռևս գտնվում է Պայմանավորվող պետությունների հայեցողության շրջանակներում, որոնք ավելի բարենպաստ վիճակում են գտնվում իրենց դատական համակարգում պաշտպանության իրավունքի երաշխավորմանն ուղղված միջոցների ընտրության տեսակետից, քան Դատարանը:

Պետք է նշել, որ դատավարությունների որոշ փուլերում փաստաբանի կողմից պարտադիր ներկայացվելու պահանջի հիմքում դրված պատճառները, Դատարանի կարծիքով, բավարար են և հիմնավոր: Այն, մասնավորապես, հանդիսանում է մեղադրյալի շահերից բխող միջոց, որը կոչված է ապահովելու նրա շահերի պատշաճ պաշտպանությունը: Ներպետական դատարանները, այսպիսով, պետք է քննարկեն այն, թե արդարադատության շահը պահանջում է, արդյոք, պաշտպանի պարտադիր մասնակցություն:

Այն փաստը, որ դիմողն ինքը փաստաբան է, ինչպես դա սույն գործում էր, եթե անգամ դիմողի անունը ժամանակավորապես ջնջվել է Փաստաբանների Միության ցուցակից, որևէ կերպ չի խարխլում նախորդ վերլուծությունը: Թեև ճիշտ է, որ որպես ընդհանուր կանոն, փաստաբանները կարող են դատարանում անձամբ գործել, գործը քննող դատարանները, սակայն, իրավասու չեն քննարկելու այն հարցը, որ արդարադատության շահը պահանջում է քրեական հանցագործության մեջ մեղադրվող փաստաբանի անունից գործող ներկայացուցչի նշանակում, ով, հետևաբար, կարող է, հենց այդ պատճառով, չգտնվել կարևորվող շահի պաշտպանության պատշաճ գնահատման վիճակում կամ, համապատասխանաբար, ինքն իր պաշտպանությունն ավելի արդյունավետ իրականացնել: Դատարանի կարծիքով, այս հարցը գտնվում է ազգային իշխանությունների հայեցողության շրջանակներում:

Դատարանը գտնում է, որ սույն գործով դիմողի պաշտպանությունն իրականացվել է պատշաճ կերպով: Դատարանը նշում է, որ այդ կապակցությամբ դիմողը չի վիճարկել այն, որ ի վիճակի չի եղել դիտարկվող դատարաններում ներկայացնել փաստերի վերաբերյալ իր տեսակետը, և որ 1998թ. դեկտեմբերի 15-ի դատական լսման ժամանակ նա ներկայացված է եղել պաշտոնապես նշանակված փաստաբանի միջոցով: Հետևաբար, չկա որևէ ապացույց, որը կհիմնավորեր այն պնդումը, որ դիտարկվող դատական քննությունը եղել է անարդար կամ խախտվել է դիմողի պաշտպանության իրավունքը:

***Բարբերան, Մեսագուե և Ջաբարդո ընդդեմ Իսպանիայի (Barberà, Messegué and Jabardo v. Spain), 10590/83, 06.12.1988թ.***

69. 1982 թվականի հունվարի 11-ին՝ Աուդենսիա Նասիոնալի գործով դատական նիստի բացումից մեկ օր առաջ, դիմողները դեռևս

գտնվել են Բարսելոնայի կալանավայրում: Նրանք Մադրիդ չեն մեկնել ընդհուպ մինչև հունվարի 11-ի երեկոն: Նրանք ժամանել են հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, բանտային ֆուրգոնով ավելի քան 600 կիլոմետր ճանապարհորդելուց հետո, մինչդեռ դատական նիստը պետք է սկսվեր 10:30...

70. Պրն Բարբերան, պրն Մեսագուն և պրն Զաբարդոն այսպիսով պետք է մասնակցեին իրենց համար կենսականորեն կարևոր դատական նիստին, որում քննվելու էին նրանց դեմ առաջադրված լուրջ մեղադրանքներ, որոնք կարող էին հանգեցնել խիստ պատիժների նշանակման, այնպիսի վիճակում, որը նվազագույն ֆիզիկական և հոգեբանական դիմադրություն էր պահանջում:

Չնայած որ նրանք պաշտպաններ ունեին, ովքեր կարող էին հայտարարություններ անել, ինքնին ցավալի այս հանգամանքը, անկասկած, թուլացրել է նրանց դիրքը կենսականորեն կարևոր պահի, երբ նրանք իրենց պաշտպանելու և հատկապես դատական քննության հենց սկզբում հարցաքննությանը մասնակցելու և իրենց պաշտպանների հետ արդյունավետորեն խորհրդակցելու համար իրենց բոլոր ռեսուրսների օգտագործման կարիքն ունեին:

***Գալստյանն ընդդեմ Հայաստանի (Galstyan v. Armenia), 26986/03, 15.11.2007թ.***

91. Դատարանը նշում է, որ իր տրամադրության տակ եղած բոլոր նյութերը վկայում են, որ դիմողը որոշակիորեն հրաժարվել է պաշտպանի միջոցով ներկայացված լինելու իր իրավունքից և՛ մինչդատական վարույթում, և՛ դատարանում… 6-րդ հոդվածի 3-րդ մասի (գ) կետի տեքստից բխում է, որ մեղադրյալն ունի իրեն պաշտպանելու այլընտրանք՝ «անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանի միջոցով»: Այսինքն՝ սովորաբար հոդվածի պահանջներին չի հակասի, եթե մեղադրյալն իր կամքով է ինքն իրեն ներկայացնում, եթե, իհարկե, արդարադատության շահերն այլ բան չեն պահանջում: Սույն գործում բացակայում է որևէ ապացույց, որ դիմողի՝ անձամբ ներկայացված լինելու ընտրությունն արդյունք է ֆիզիկական բռնության կամ սպառնալիքի: Ավելին, որևէ փաստ չկա, որով կհիմնավորվի դիմողի պնդումները, որ իրեն «խաբեությամբ» համոզել են հրաժարվել պաշտպանից: Չնայած ԵԽԽՎ և Human Rights Watch-ի զեկույցները պարունակում են համապատասխան տեղեկատվություն, այս նյութերը, այնուամենայնիվ, բավարար չեն Դատարանի համար եզրակացնելու, որ գործողությունները, որոնք նկարագրված են այս զեկույցներում, տեղ են գտել նաև դիմողի վերաբերյալ գործում: Ի վերջո, հաշվի առնելով, որ դիմողը մեղադրվում էր փոքր հանցանքի մեջ, և նրա նկատմամբ առավելագույն պատիժը կարող էր սահմանվել 15-օրյա կալանքը, Դատարանը չի գտնում արդարադատության որևէ շահ, որը կպահանջեր պարտադիր փաստաբանական ներկայացուցչություն տվյալ գործում:

92. Եզրակացնելով, որ պաշտպանից հրաժարվելը դիմողի կամքն էր, Դատարանը գտնում է, որ իշխանությունները չեն կարող պատասխանատու լինել այն փաստի համար, որ նա վարչական դատավարության ընթացքում ներկայացված չի եղել փաստաբանի միջոցով: Հետևաբար, այս առումով առկա չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (գ) կետի՝ 6-րդ հոդվածի 1-ին մասի զուգակցմամբ, խախտում:

### 6. Իրավական ներկայացուցչություն

*ա. Ժամանակի հաշվումը*

***Բերլինսկին ընդդեմ Լեհաստանի (Berliński v. Poland), 27715/95 և 30209/96, 20.06.2002թ.***

75. Դատարանը ժխտում է, որ եթե քրեական գործերով 6-րդ հոդվածի առաջնային նպատակը հանդիսանում է արդար դատաքննության ապահովումը «դատարանի» կողմից, որն իրավասու է քննել «ցանկացած քրեական մեղադրանք», դա չի ենթադրում, որ Կոնվենցիայի այս դրույթը չի կիրառվում նախնական քննության փուլում...

76. ...թեև 6-րդ հոդվածը, որպես կանոն, պահանջում է, որ ապահովվի մեղադրյալի պաշտպանության իրավունքը ոստիկանությունում իրականացվող հարցաքննության սկզբնական փուլերում, սակայն այս իրավունքն ուղղակիորեն ամրագրված չէ Կոնվենցիայում և կարող է բավարար հիմքերի առկայության դեպքում սահմանափակվել: Յուրաքանչյուր դեպքում, հարցը վերաբերում է նրան, թե այս սահմանափակումը՝ ամբողջ վարույթի իմաստով, խախտել է, արդյոք, մեղադրյալի արդար դատաքննության իրավունքը, թե՝ ոչ...

77. Դատարանը գտնում է, որ անվիճելի է այն, որ դիմողներին հնարավորություն չի տրվել իրենց դեմ հարուցված քրեական վարույթում ունենալ ներկայացուցիչ: Անվիճելի է նաև այն, որ պաշտպան ունենալու՝ դիմողների պահանջը չի քննարկվել պաշտոնատար անձանց կողմից, ինչի արդյունքում նրանք ավելի քան մեկ տարի պաշտպան չեն ունեցել: Հաշվի առնելով այն, որ բազմաթիվ դատավարական գործողություններ, այդ թվում բժշկական հետազոտություններ են իրականացվել այդ ժամանակահատվածում..., Դատարանը չի գտնում որևէ հիմնավորում գործով նախնական և դատական քննությունների փուլերում դիմողների պաշտպանության իրավունքի սահմանափակման համար:

78. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի (c) կետի խախտում:

Տե՛ս նաև վերը՝ **B.V.1**

*բ. Արդարադատության շահը պահանջում է պետական աջակցություն*

*i. Գործին վերաբերող հանգամանքներ*

***Քուարանտան ընդդեմ Շվեյցարիայի (Quaranta v. Switzerland), 12744/87, 24.05.1991թ.***

32. Որոշելու համար, թե «արդարադատության շահը» պահանջում է, արդյոք, դիմողին անվճար իրավաբանական օգնություն տրամադրել, Դատարանը քննարկելու է բազմաթիվ չափանիշներ…

33. Առաջին հերթին, քննարկվելու է պրն Քուարանտային մեղսագրվող հանցագործության ծանրությունը և ակնկալվող պատժի խստությունը… Թմրամիջոցների չարաշահման դաշնային օրենքի 19-րդ բաժնի 1-ին մասի և Շվեյցարիայի Քրեական օրենսգրքի 36-րդ հոդվածի համաձայն՝ նշված արարքի համար նախատեսվում է առավելագույնը երեք տարի ժամկետով ազատազրկում… Սույն գործով անվճար իրավաբանական օգնություն պետք է տրամադրվեր՝ հաշվի առնելով ընդամենն այն հանգամանքը, որ այսքան խիստ պատիժ է սահմանված:

34. Լրացուցիչ փաստարկը վերաբերում է գործի բարդությանը... սույն գործում չկան հատուկ դժվարություններ, որոնք վերաբերում են փաստերի հիմնավորմանը... Սակայն վարույթի արդյունքը հատկապես կարևորվում է դիմողի համար, ով մեղսագրվող հանցանքը կատարել է իր նկատմամբ 1982թ. նշանակված փորձաշրջանի ընթացքում... հետևաբար, Քրեական դատարանը պետք է որոշում կայացներ կասեցված պատժի վերականգնման և նոր պատժի նշանակման վերաբերյալ: Վարույթին պաշտպանի մասնակցությունը կապահովեր դիմողի պաշտպանության ավելի լավ պայմաններ, հաշվի առնելով, մասնավորապես, Դատարանի կողմից կիրառման ենթակա միջոցների բազմաթիվությունը:

35. Նման հարցերը, որոնք ինքնին բարդ են, ավելի են բարդացել պրն Քուարանտայի համար՝ ելնելով նրա անձնական վիճակից, մասնավորապես նրանից, որ նա հանդիսացել է օտարերկրյա ծագմամբ երիտասարդ անձ, ով նվազ իրավունքներից է օգտվում, իրականում չի ստացել մասնագիտական կրթություն և ունի երկարատև հանցավոր անցյալ: Նա թմրամիջոցներ է գործածել 1975թ. սկսած, իսկ 1983թ.՝ գործածել է գրեթե ամեն օր, տվյալ ժամանակահատվածում իր ընտանիքի հետ ապրել է, Սոցիալական պաշտպանության շրջանակներում տրամադրվող նպաստի հաշվին:

36. Սույն գործի հանգամանքներում առանց պաշտպանի գործը քննող դատավորի, ապա՝ Քրեական դատարանի առջև կանգնելը զրկել է նրան իր գործի քննությանը պատշաճ ներկայանալու հնարավորությունից...

***Բենհամն ընդդեմ Միացյալ Թագավորության (Benham v. United Kingdom), 19380/92, 10.06.1996թ.***

61. ...ազատության սահմանափակման հարցի ծագման դեպքում, արդարադատության շահը պահանջում է պաշտպանի մասնակցություն... Սույն գործով, պրն Բենհամի նկատմամբ նշանակվել է առավելագույն, այն է՝ երեք ամիս ժամկետով ազատազրկում:

62. Բացի դրանից, օրենքը, որի վրա մագիստրատները հիմնվել են, պարզ չի եղել: Հանցավոր անփութության ստուգումը, մասնավորապես, դժվար է եղել հասկանալ և կիրառել...

64. Հաշվի առնելով պրն Բենհամի նկատմամբ նշանակվելիք պատժի խստությունը և կիրառվող օրենքի բարդությունը՝ Դատարանը գտնում է, որ արդարադատության շահերից ելնելով և արդար դատաքննության ապահովման համար անհրաժեշտ էր մագիստրատների կողմից գործի քննության ընթացքում պրն Բենհամին անվճար պաշտպանի տրամադրումը:

***Թալաթ Թունքն ընդդեմ Թուրքիայի (Talat Tunç v. Turkey), 32432/96, 27.03.2007թ.***

57. Քննվող գործում մեղադրող կողմը մայրասպանության համար որպես պատիժ դիմողի նկատմամբ պահանջել էր կիրառել մահապատիժ: Սրան գումարվել էին հայցվորի համար առաջացած այն խնդիրները, որոնք ծագել էին քրեական դատավարության ժամանակ, մասնավորապես հետաքննության փուլում առանց պաշտպանի արած խոստովանությունների պատճառով:

58. Դրան հաջորդել է այն, որ 6-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված երկրորդ պայմանը բավարարվել է:

60. Բացի դրանից, քննվող գործում Դատարանը հաստատում է, որ հայցվորը 1994թ. դեկտեմբերի 26-ին Ալասեհիրի դատախազին տեղեկացրել է այն մասին, որ չի կարողացել դատախազի և դատավորի առջև հարցաքննությունների ժամանակ հանդես գալ իր կամքով, ասել այն, ինչ ինքը կկամենար, քանի որ ոստիկաններն իրեն սպառնացել էին վատ վերաբերվել, տանջել: Նրանք չեն պատկերացրել, որ հայցվորը, որը մասնագիտական կրթություն չունի և մի համեստ վայրի բնակիչ է, կկարողանա ճիշտ գնահատել այն բանի հետևանքները, որ նա այն քրեական դատավարության ժամանակ, որում նրան որպես պատիժ սպառնում էր մահապատժի նախատեսում, չի ունեցել փաստաբան:

61. Բնականաբար, պաշտպանությունն արդյունավետ կերպով իրականացնելու համար նախատեսված իրավունքներից օգտվելու համար ստեղծված խոչընդոտների մասին բողոքները պատասխանող կողմի համար կհաղթահարվեին, եթե ներպետական իշխանությունները, որոնք գիտակցել են հայցվորի խնդիրների բնույթը, նախկինում ցուցաբերած լինեին ակտիվ վարքագիծ և դատաքննության ժամանակ կարողանային հավաստիացնել, որ շահառուն իմացել է այն մա-

սին, որ ինքը կարող է պահանջել դատարան կանչել դատական ծառայության կողմից անվճար տրամադրվող փաստաբանի: Նրանք, այնուամենայնիվ, ցուցաբերել են անգործություն չիրականացնելով նաև արդար դատավարության երաշխիք հանդիսացող իրենց տվյալ պարտավորությունը:

62. Հաշվի առնելով այս հանգամանքները, Դատարանը գտնում է, որ հայցվորը տեղեկացված չի եղել իր՝ դատական ծառայության կողմից անվճար տրամադրվող փաստաբանի խորհուրդներից օգտվելու իրավունքի մասին: Բացի դրանից, հաշվի առնելով նրա կրած պատժի խստությունը՝ Դատարանը հաստատում է նաև, որ արդարադատության շահերը պահանջում էին, որ, արդար դատավարության նպատակներից ելնելով, դիմողն իր դեմ հարուցված քրեական դատավարության ժամանակ օգտվեր անվճար իրավական օգնություն ստանալու իրավունքից:

*ii. Փոխհատուցման պարտականություն*

***Կրուսանն ընդդեմ Գերմանիայի (Croissant v. Germany), 13611/88, 25.09.1992թ.***

33. Ի տարբերություն 6-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված այլ իրավունքների՝... անվճար իրավաբանական օգնության իրավունքը, որը սահմանված է (c) կետում,... չի հանդիսանում բացարձակ. նման օգնություն տրամադրվում է այն դեպքում, երբ մեղադրյալը «չունի վճարման համար բավարար միջոցներ»:

35. ...Գերմանիայի օրենսդրության համաձայն՝ մեղադրյալը, ով արդարացվել է, անկախ իր կարողությունից, պարտավոր չէ հատուցել դատական ծախսերը, ինչպես նաև վճարել դատարանի կողմից նշանակված պաշտպանի ծառայության դիմաց. բոլոր այս ծախսերը կրում է պետությունը: Մյուս կողմից, դատապարտված անձը, բոլոր դեպքերում, պարտավոր է փոխհատուցել դատարանի կողմից նշանակված փաստաբանի ծառայությունների հետ կապված ծախսերը և վճարել նրան, սա հանդիսանում է դատապարտման սովորական հետևանք:

Միայն դատավճռի կայացմանը հետևող իրավակիրառ վարույթում է, որ դատապարտյալի ֆինանսական վիճակը կարող է նշանակություն ունենալ. այս կապակցությամբ, չի կարևորվում այն, թե նա դատական քննության ընթացքում ունեցել է բավարար միջոցներ, թե՝ ոչ, կարևորվում է միայն դատապարտումից հետո առկա նրա վիճակը:

36. Նման համակարգը չի կարող համատեղելի լինել... Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, քանի որ այն բացասաբար է անդրադառնում վարույթի արդարացիության վրա: Սակայն չի կարելի ասել, որ այս համակարգը, որպես կանոն, հանգեցնում է նման հետևանքների կամ հանգեցրել է դրանց սույն գործով: Ինչպես արդեն նշվել է, երեք պաշտպանների անվճար նշանակումը համատեղելի է 6-րդ հոդվածի

պահանջների հետ… Հետևաբար, այն անհամատեղելի չէ այն դրույթի հետ, որ դիմողը պարտավոր է հատուցել նրանց ծախսերը: Ազգային դատարանները նրանց նշանակումն անհրաժեշտ են համարել և նրանց համար պահանջվող գումարը չափազանց մեծ չէ:

...որևէ պատճառ չկա կասկածելու, որ եթե դիմողը կարողանա ապացուցել, որ ի վիճակի չէ վճարել ամբողջ գումարը, ապա կիրառվելու են համապատասխան օրենսդրությունն ու պրակտիկան… Այս կապակցությամբ Դատարանը Կոնվենցիայի իմաստով թույլատրելի է համարում այն, որ բավարար միջոցների բացակայության ապացուցման պարտականությունը պետք է դրվի դրա մասին հայտարարած անձի վրա:

38.Դատարանը գտնում է, որ փոխհատուցման կարգադրությունն անհամապատասխան չէ 6-րդ հոդվածի 3-րդ մասի (c) կետին...

*գ. Ընտրություն*

***Էնսլին, Բաադերը և Ռեսփն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության (Ensslin, Baader & Raspe v. Federal Republic of Germany), 7572/76, 7586/76 և 7587/76, 08.07.1978թ., DR 14, 64***

19. …Ամրագրելով, որ մեղադրյալը կարող է իրավական օգնություն ստանալ սեփական ընտրությամբ՝ 6-րդ հոդվածի 3-րդ մասի (c) կետը չի նախատեսում անսահմանափակ թվով պաշտպանների մասնակցություն… այս դրույթի նպատակն է ապահովել գործին մասնակցող երկու կողմերի լսված լինելու իրական հնարավորությունը՝ անհրաժեշտության դեպքում մեղադրյալին անկախ մասնագետի օգնություն տրամադրելով: Մեղադրյալի կողմից ընտրված փաստաբանների թիվը երեքով սահմանափակելու միջոցով՝ առանց *ex officio* կանխորոշելու Դատարանի կողմից նշանակված այլ պաշտպանների համալրումը, որը հանդիսանում է Գերմանիայի դատավարական համակարգի առանձնահատուկ կարգավորում, Գերմանիայի դաշնային Հանրապետության պաշտոնատար անձինք չեն խախտել այս դրույթով նախատեսված իրավունքը…

20. Պաշտպանին չընդունելու կամ նրան վարույթից հեռացնելու հարցը բավականաչափ բարդ է ինչպես դրա կիրառման սկզբունքների, այնպես էլ դրա արդյունքների առումով: Այն հանդիսանում է այնպիսի միջոց, որը կարող է զգաստացնել այլ պաշտպանների կամ ընդհանրապես անվստահություն ներշնչել պաշտպանություն իրականացնող անձանց նկատմամբ. դրանից հետո պաշտպանական կողմի փաստաբանի փոխարինումը կարող է վնաս պատճառել նրա կողմից իրականացվող ներկայացուցչությանը և որոշ անհստակություններ մտցնել նրա՝ «որպես դատավարական կարգավորման նկատմամբ հսկողություն իրականացնողի» գործառույթի իրականացման մեջ: Սակայն,… անձի կողմից պաշտպան ընտրելու իրավունքը… չի հանդիսանում բացարձակ իրավունք. այն սահմանափակված է դատարա-

նում պաշտպանի մասնակցության հարցերը կարգավորելու Պետության իրավունքով… և պաշտպանի՝ մասնագիտական էթիկայի որոշ սկզբունքներ չխախտելու պարտականությամբ: Քննարկվող գործով որոշ փաստաբաններ հեռացվել են պաշտպանական կողմից, քանի որ առկա են եղել հիմնավոր կասկածներ առ այն, որ նրանք ծառայություններ են մատուցել մեղադրյալների հանցավոր խմբին: Սա չի եղել դատավարական կարգի պահպանման նպատակով Դատարանի կողմից ուղղակի կիրառված միջոց, քանի որ քննարկվող փաստաբանները հանդիսացել են քրեական դատավարության սուբյեկտ: Նրանց հեռացումը չի դադարեցրել դիմողների արդյունավետ պաշտպանությունը, քանի որ դիմողներին ներկայացրել են թվով տասը պաշտպաններ, որոնց մի մասը… ընտրվել է դիմողների կողմից:

***Իքսն ընդդեմ Միացյալ Թագավորության (X v. United Kingdom), 8295/78, 09.10.1978թ., DR 15, 242***

1. …Ամբողջությամբ քննարկելով դիմողի պաշտպանությունը՝ Հանձնաժողովը գտնում է, որ նրան տրվել է իր գործով բավարար ներկայացուցչության հնարավորություն: Դիմողի կողմից ներկայացուցիչներ ընտրելու սահմանափակումները կապված են եղել նրա որդուն վարույթից հեռացնելու հետ՝ հիմք ընդունելով մասնագիտական էթիկայի պահանջները: Դիմողը կարող էր ընտրել ցանկացած այլ փաստաբան, սակայն չի ցանկացել այդ անել: Նիստի արձանագրության ուսումնասիրության արդյունքում չի հայտնաբերվել պաշտպանության հետ կապված որևէ անբարենպաստ վիճակ կամ անարդարություն: Հետևաբար, Հանձնաժողովը գտնում է, որ դիմողի որդու՝ որպես նրա պաշտպանի, հեռացումը գործով վարույթից չի հանգեցրել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (c) կետի խախտման:

***Կրուսանն ընդդեմ Գերմանիայի (Croissant v. Germany), 13611/88, 25.09.1992թ.***

27. ...Այն պահանջը, որ մեղադրյալին պետք է պաշտպան տրամադրվեր Շրջանային դատարանում գործի քննության բոլոր փուլերում, ինչը նախատեսված է նաև Կոնվենցիայի մասնակից այլ պետությունների օրենսդրություններով, Դատարանի կարծիքով, չի կարող Կոնվենցիայի հետ անհամատեղելի համարվել:

Կրկին, ավելի քան մեկ պաշտպանի նշանակումն ինքնին անհամատեղելի չէ Կոնվենցիայի հետ և իրականում կարող է անհրաժեշտ լինել արդարադատության շահերից ելնելով: Սակայն, նախքան մեկից ավելի պաշտպան նշանակելը, դատարանը պետք է հաշվի առնի մեղադրյալի կարծիքը, քանի որ Գերմանիայում մեղադրյալը պարտավոր է հատուցել նրանց ծառայությունների հետ կապված ծախսերը, եթե դատարանի դատավճռով մեղավոր ճանաչվի: Եթե պաշտպանների նշանակումը կատարվել է առանց մեղադրյալի կարծիքը հաշվի առնելու, ապա այն անհամատեղելի է 6-րդ հոդվածի 1-ին մասով նա-

խատեսված արդար դատաքննության իրավունքի հետ... և զուրկ կլինի հիմնավոր և բավարար պատճառաբանությունից:

28. ...Առաջին հերթին, փորձ է արվել խուսափել արդարադատության իրականացման հնարավոր բացերից կամ ձգձգումներից, որոնք սույն գործի իմաստով առկա են եղել և կարող են հիմնավորել մեղադրյալի կամքին հակառակ կատարված նշանակումը: Բացի դրանից, պրն Հաուսերի նշանակումն այլ նպատակներ էլ է հետապնդել: 1978թ. մարտի 1-ի... որոշման համաձայն՝ այն հիմնված է եղել պրն Կրուսանի՝ գործով վարույթի ընթացքում պատշաճ ներկայացված լինելու հիմնավորման անհրաժեշտության վրա՝ քննարկելով նաև գործի հնարավոր տևողությունը, ծավալը և բարդությունը: Շրջանային դատարանը նշել է, որ իր կողմից պրն Հաուսերին նշանակելը հիմնված է եղել այն հանգամանքի վրա, որ նա ունեցել է նման գործերի համար անհրաժեշտ որակավորում...:

29. ...Պաշտպան նշանակելիս ներպետական դատարանները պետք է հաշվի առնեն մեղադրյալի կարծիքը... Սակայն նրանք կարող են մերժել դրանք, եթե առկա են հիմնավոր և բավարար պատճառներ ասելու, որ դա անհրաժեշտ է արդարադատության շահերից ելնելով:

30. Իր՝ 1978թ. մարտի 1-ի որոշման մեջ Շրջանային դատարանը բարձրացրել է այն հարցը, որ պրն Հաուսերի ընտրությունը պայմանավորված է եղել գործի բնույթով, դրա փաստական և իրավական կողմի բարդությամբ և մեղադրյալի անձի հատկանիշներով, և նրանով, որ նա կարող է պատշաճ իրավական օգնություն տրամադրել: Բացի դրանից, դատարանը գտել է, որ դիմողի նշած այն հանգամանքը, որ նա չի կարողանում պրն Հաուսերին վստահել, որոշիչ հանգամանք չէ. այս կապակցությամբ դատարանը նշել է, որ դիմողի ընտրությամբ նշանակվել են երկու այլ փաստաբան ևս... Ստուտգարտի Վերաքննիչ դատարանը, որը օրինական ուժի մեջ է թողել Շրջանային դատարանի որոշումը, նշել է, որ պրն Հաուսերի նշանակումը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ, ի տարբերություն մյուս երկու պաշտպանների, նա ունեցել է իր գրասենյակը Շրջանային դատարանին ընդդատյա տարածքում.... սա կարող է առավելություն համարվել՝ հաշվի առնելով վարույթի ակնկալվող տևողությունն այն դեպքում, եթե նրանք հնարավորություն չեն ունենա ներկա գտնվել...

Վերջապես, Շրջանային դատարանի կարծիքով, առկա են եղել անվիճելի հիմքեր պրն Կունզելին վարույթից հեռացնելը մերժելու համար, դրանք են, մասնավորապես՝ պրն Կրուսանի և նրա նախկին աշխատակիցների շահերի հնարավոր բախումները...

Պրն Հաուսերի նշանակման և նրան վարույթից հեռացնելու վերաբերյալ դիմողի պահանջը մերժելու պատճառաբանությունները, Դատարանի կարծիքով, հիմնավոր և բավարար են:

31. Բացի դրանից... պրն Հոսերն ակտիվ մասնակցություն է ունեցել պաշտպանությանը և մյուս երկու պաշտպանների հետ համատեղ մշակել է պաշտպանական ռազմավարությունը: Հետևաբար, նրա

նշանակումը չի կարելի ասել, որ բացասական ազդեցություն է ունեցել դիմողի պաշտպանության վրա:

32. Ընդհանրացնելով՝ կարելի է ասել, որ քննարկվող երեք պաշտպանների նշանակումը չի կարող դիտվել որպես երկուստեք 6-րդ հոդվածի 3-րդ մասի (c) կետի և 1-ին մասի հետ անհամատեղելի:

***Մայզիթն ընդդեմ Ռուսաստանի (Mayzit v. Russia), 63378/00, 20.01.2005թ.***

68. Դատարանը նշում է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածը որպես ընդհանուր կանոն նախատեսում է այն, որ պաշտպանները պետք է պրոֆեսիոնալ փաստաբաններ լինեն, փաստաբանների միության անդամ: Նույն դրույթի համաձայն՝ Մոսկվայի Շրջանային դատարանը կարող էր, համապատասխանություն տեսնելու դեպքում, թույլատրել դիմողի մորը և քրոջը իրականացնել նրա պաշտպանությունը: Դատարանը գտել է, սակայն, որ որպես ոչ մասնագետներ նրանք չեն կարող ապահովել դիմողի արդյունավետ պաշտպանությունը վարույթի ընթացքում: Բացի դրանից, Դատարանը եզրակացնում է, որ նրանք առողջական վիճակի կամ մասնագիտական գիտելիքների բացակայության պատճառով, չեն կարող պատշաճ կերպով մասնակցել վարույթին: Դատարանի կարծիքով, այս դիտարկումները եղել են օրինական և գերազանցել են դիմողի ցանկությունները...

69. Ամբողջությամբ քննարկելով դիմողի պաշտպանության հարցը՝ Դատարանը գտնում է, որ նրան տրվել է բավարար հնարավորություն իր վարույթով ներկայացուցչություն ապահովելու համար: Դիմողի ներկայացուցչության վրա դրված սահմանափակումները վերաբերել են վերոնշյալ հիմքերով նրա մորը և քրոջը վարույթից հեռացնելուն: Դիմողը կարող էր ընտրել ցանկացած այլ փաստաբան, սակայն նա դրան ուղղված որևէ գործողություն չի կատարել: Գործի հանգամանքներով չի բացահայտվել պաշտպանության իրավունքների հետ կապված որևէ խախտում կամ անարդարություն:

*դ. Իրավասություն*

***Վ.-ն ընդդեմ Շվեյցարիայի (W v. Switzerland), 9022/80, 13.07.1983թ., DR 33, 21***

4. ...Միայն նշանակումը չի կարող հավաստել արդյունավետ պաշտպանություն, և եթե նշանակված պաշտպանը մահացել կամ լուրջ հիվանդացել է, ապա երկարաձգված ժամանակահատվածի ընթացքում նա պետք է հեռացվի իր պարտականությունների իրականացումից կամ դրանք պետք է հանձնվեն այլ անձի: Եթե նրանք այս մասին նշել են, պաշտոնատար անձինք պետք է կամ փոխարինեն նրանց այլ անձանցով, կամ պարտադրեն այլ անձանց հանձնել իրենց լիազորությունները: Միայն այս եղանակով կարող է ապահովվել Կոնվեն-

ցիայի նպատակի իրականացումը՝ կապված ոչ միայն տեսական և պատրանքային, այլ նաև գործուն և արդյունավետ իրավունքների ապահովման հետ:

6. ...Իրոք, վարույթի ընթացքում պաշտոնատար անձինք տեղյակ չեն եղել պաշտպանական վարքագծի վերաբերյալ դիմողի և նրա փաստաբանների կարծիքների անհամապատասխանության մասին, և չեն իմացել, որ դիմողը շփոթմունքի մեջ է ընկել՝ կապված իր պաշտպանների խիստ ակտիվ միջամտության ցանկալիության հետ: Միայն դատավճռի հրապարակման ժամանակ, լրացուցիչ ապացույց ձեռք բերելու միջնորդության հետ մեկտեղ, այս հանգամանքը դատական իշխանությունների ուշադրությանն է արժանացել: Այդ ժամանակահատվածից սկսած դիմողն օգտվել է արդյունավետ պաշտպանությունից, և իշխանությունների կողմից որևէ միջամտություն չի պահանջվել:

Այս դատողությունների լույսի ներքո Հանձնաժողովը գտնում է, որ իրավասու պաշտոնատար անձինք երբևէ չեն կատարել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (c) կետով նախատեսված պարտականությունները:

***Դաուդն ընդդեմ Պորտուգալիայի (Daud v. Portugal), 22600/93, 21.04.1998թ.***

39. ...Դատարանը նշում է, որ պաշտոնապես նշանակված առաջին փաստաբանը, նախքան իր հիվանդության մասին հայտնելը, որպես պրն Դաուդի պաշտպան, որևէ քայլ չէր ձեռնարկել, մինչդեռ վերջինս սեփական պաշտպանությունն իրականացնելու անհաջող փորձեր էր արել: Ինչ վերաբերում է երկրորդ պաշտպանին, որի նշանակման մասին դիմողն իմացել էր Քրեական դատարանում գործի քննությունն սկսվելուց ընդամենը երեք օր առաջ, ապա Դատարանը գտնում է, որ նա անհրաժեշտ ժամանակ չի ունեցել գործն ուսումնասիրելու, կալանավայրում իր պաշտպանյալին հանդիպելու և նրա պաշտպանությունը նախապատրաստելու համար: Պաշտպանի նշանակման մասին ծանուցելու... և դատական նիստի միջև ընկած ժամանակահատվածը... (3 օր) չափազանց կարճ է եղել լուրջ, բարդ գործի համար, որի նախնական քննության ընթացքում որևէ դատական վերահսկողություն չի իրականացվել, և որի արդյունքում անձը կարող էր խիստ պատժի ենթարկվել: Գերագույն դատարանը չի շտկել իրավիճակը, մինչդեռ իր՝ 1993թ. հունիսի 30-ի դատավճռում նշել է, որ բողոքը չի կարող ընդունվել՝ հաշվի առնելով հիմքերի ոչ բավարար լինելը...

Հետևաբար, պրն Դաուդին չի տրամադրվել գործնական և արդյունավետ պաշտպանություն, ինչպես դա պահանջվում է 6-րդ հոդվածի 3-րդ մասի (c) կետով...

40. Այսպիսով, Դատարանը պետք է համոզված լինի, որ իրավասու պաշտոնատար անձինք, հարգելով Փաստաբանների միության

անկախության սկզբունքը, միջոցներ են ձեռնարկել պարզելու համար, թե դիմողին տրամադրվում է, արդյոք իր իրավունքների արդյունավետ պաշտպանություն, որը հաստատվել է իրենց կողմից:

41. Առաջին հերթին Դատարանը նշում է, որ դատական վերահսկողության վերաբերյալ խնդրանքը, որը ներկայացվել էր դիմողի կողմից 1992թ. հոկտեմբերի 15-ին, մերժվել էր գործը քննող դատավորի կողմից այն հիմքով, որ դա գրվել էր իսպաներեն...

42. 1992թ. դեկտեմբերի 15-ի իր նամակում, երբ արդեն ավելի քան ութ ամիս էր անցել, դիմողը կրկին խնդրել է դատարանին թույլատրել տեսակցություն իր փաստաբանի հետ, ով դեռևս իր հետ չէր հանդիպել... Այն պատճառով, որ նամակը գրված է եղել օտար լեզվով, դատավորը քննարկման առարկա չէր դարձրել խնդրանքը: Միևչդեռ խնդրանքը պետք է դրդեր իրավասու պաշտոնատար անձանց փոխարինում կատարել՝ հիմնք ընդունելով պաշտոնապես նշանակված առաջին փաստաբանի ակնհայտ թերացումները, հատկապես, քանի որ վերջինս 1992թ. մարտից նշանակվելուց ի վեր որևէ քայլ չի ձեռնարկել: Այդ պատճառով, ինչպես նաև հաշվի առնելով նույն ժամանակահատվածում մեղադրյալի կողմից ներկայացված երկու դիմումները, դատարանը պետք է ուսումնասիրեր, թե ինչպես է փաստաբանն իր պարտականությունները կատարում, և նրան ավելի վաղ փոխարիներ այլ փաստաբանով՝ առանց սպասելու, որ նա ինքը հայտարարեր ի շահ պրն Դաուդի գործելու անկարողության մասին: Բացի դրանից, փոխարինումից հետո Լիսաբոնի Քրեական դատարանը, որը պետք է տեղյակ լիներ, որ պաշտպանյալին որևէ պատշաճ իրավական օգնություն ցույց չի տրվել, պետք է սեփական նախաձեռնությամբ հետաձգեր դատական նիստը: Այն փաստը, որ պաշտոնապես նշանակված երկրորդ փաստաբանը նման դիմում չի ներկայացրել, որևէ հետևանք չի առաջացրել: Գործի հանգամանքները պահանջում էին, որ դատարանը պասիվ չլիներ:

***Սանինոն ընդդեմ Իտալիայի (Sannino v. Italy), 30961/03, 27.04.2006թ.***

50. Սույն գործով 1999թ. հունվարի 18-ին դիմողի կողմից ընտրված փաստաբանը հեռացվել է գործով վարույթից... Պրն Բ.-ն՝ դիմողին ներկայացնելու համար դատարանի կողմից նշանակված փաստաբանը, ծանուցվել է հաջորդ նիստի ժամանակի մասին, սակայն չի ծանուցվել իր նշանակման մասին... Իշխանությունների կողմից թույլ տրված այդ բացթողումը մասամբ պարզում է պրն Բ.-ի բացակայությունը, ինչը հանգեցրել է դիմողի կողմից վիճարկված այն իրավիճակին, որ յուրաքանչյուր դատական նիստի ընթացքում նա ներկայացվել է տարբեր փոխարինող փաստաբանների կողմից... Ոչինչ հիմք չի տալիս ենթադրելու, որ փոխարինած փաստաբանները գործին տեղյակ են եղել: Սակայն նրանք չեն խնդրել հետաձգել դատական նիստը՝ իրենց վստահորդի գործին ծանոթանալու համար: Նրանք նաև

չեն խնդրել հարցաքննել պաշտպանության կողմի այն վկաներին, որոնց առաջին երկու փաստաբանների միջնորդության հիման վրա Շրջանային դատարանը թույլատրել էր կանչել...

51. Ակնհայտ է, որ դիմողը, ով մինչ 1999թ. նոյեմբերի 2-ը մասնակցել է բազմաթիվ դատական նիստերի, երբեք չէ տեղեկացրել իշխանություններին իր պաշտպանության նախապատրաստման հետ կապված դժվարությունների մասին... Դիմողը չի հանդիպել դատարանի կողմից նշանակված իր փաստաբանների հետ՝ նրանցից վարույթի ընթացքի և պաշտպանության ռազմավարության վերաբերյալ պարզաբանում ստանալու համար: Նա նաև դատարանի գրասենյակից չի հետաքրքրվել իր վարույթի արդյունքների մասին: Սակայն Դատարանը գտնում է, որ դիմողի վարքագիծն ինքնին չի կարող իշխանություններին ազատել մեղադրյալի պաշտպանության արդյունավետությունն ապահովելու պարտականությունից: Դատարանի կողմից նշանակված փաստաբանների վերոնշյալ թերացումներն ակնհայտ են եղել է, ինչը ներպետական իշխանություններին պարտավորեցրել է միջամտել: Սակայն ոչինչ հիմք չի տալիս ասելու, որ վերջինս միջոցներ է ձեռնարկել մեղադրյալի արդյունավետ պաշտպանությունը և ներկայացուցչությունն ապահովելու համար:

52. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում:

***Բոգումիլն ընդդեմ Պորտուգալիայի (Bogumil v. Portugal), 35228/03, 07.10.2008թ.***

47. Դատարանը հաստատում է, որ դատավարության սկզբնական փուլում հացվորն օգտվել է փորձնակ փաստաբանի ծառայություններից, ով իր ծավալած գործունեության ընթացքում բազմաթիվ անգամ հետ է կանչվել, ապա նորից գործը վարելու նպատակով վերականգնվել: 2003թ. հունվարի 15-ին դատախազը հաշվի առնելով, որ այդ փորձնակ փաստաբանը կարողունակ չէ ներկայացնելու հայցվորի շահերը՝ նկատի ունենալով քննվող գործում նրան սպառնացող պատժի ծանրությունը, դատական ծառայությունից ներգրավել է ավելի փարձառու նոր փաստաբանի: Այդ փաստաբանը 2003թ. սեպտեմբերի 15-ին՝ դատաքննության սկսվելուց 3 օր առաջ, ներգրավվելով դատավարության մեջ՝ միակ բանը, որ արել է, խնդրելն էր իրեն ազատել իր պարտականությունների կատարումից: Հենց դատական նիստի օրը դատական ծառայությունից մեկ այլ նոր փաստաբան է տրամադրվել հայցվորին, որը կարողացել է ծանոթանալ գործին ժ. 10:00-15:15:

48. Այս դեպքում, հաստատվել է, որ 6-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված արդյունքը գործի նախապատրաստման և վարման համար դատական ծառայության կողմից տրամադրված փաստաբանների միջոցով ձեռք չի բերվել: Անդրադառնալով հատկապես դատական ծառայության կողմից հենց դատական նիստի օրը տրամադրված

փաստաբանին՝ պետք է նշել, որ նմանօրինակ ծանր գործի պաշտպանությունը պատրաստելու համար, որը կարող էր հանգեցնել ծանր պատժի, հինգ ժամից փոքր-ինչ ավելի ժամանակն ակնհայտորեն շատ քիչ է:

49. Բախվելով իր պաշտպանության այդպիսի ակնհայտ անկարողության հետ՝ հայցվորն այդ փաստի վրա է հրավիրել դատական իշխանությունների ուշադրությունը: Միևնույն ժամանակ, Լիսաբոնի Քրեական դատարանի 9-րդ պալատը համարժեք լուծումներ չի տվել նրա խնդրանքներին և ոչինչ չի արել համոզվելու համար այն բանում, թե արդյոք հայցվորի շահերը դատական ծառայության տրամադրած փաստաբանի կողմից բարեխղճորեն են ներակայացվել, թե՝ ոչ: Սակայն փոխարինող տրամադրելուց հետո, Լիսաբոնի Քրեական դատարանը, որը պետք է իմանար, որ հայցվորը մինչ այդ պահն իրական փաստաբանական օգնություն չէր ստացել, իր իսկ նախաձեռնությամբ հետաձգել է դատաքննության օրը: Այն, որ դատական ծառայության հիշատակված փաստաբանը նման դիմում չէր ներկայացրել՝ էական չէր: Դատավարության պայմանները հրամայում էին դատարանին պասիվ չմնալ և միջոցներ ձեռնարկել հայցվորի պաշտպանության իրավունքների կոնկրետ և արդյունավետ ապահովման համար:

50. Այս գնահատականների ամբողջությունը դատարանին ստիպում է հաստատել 6-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի c ենթակետի պահանջների թերի կատարումը: Այստեղ, փաստորեն, տեղի է ունեցել այդ հիմնամասերի խախտում:

*ե. Անկախություն*

***Մորիսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Morris v. United Kingdom), 38784/97, 26.02.2002թ.***

90. …եթե դիմողն ընդունած լիներ Իրավական օգնություն տրամադրող իշխանությունների առաջարկն իրավական օգնություն տրամադրելու վերաբերյալ, ինչպես դա նշված է 1997թ. ապրիլի 21-ի իր նամակում, նա զինվորական դատարանում կներկայացներ անկախ իրավական ներկայացուցչի կողմից: Դրա փոխարեն, դիմողը մերժել է այդ առաջարկը նախքան Իրավական օգնություն տրամադրող իշխանությունների կողմից այդ առաջարկի ձևակերպումների վերանայման վերաբերյալ նրա փաստաբանի խնդրանքին պատասխանելը: Իհարկե, դիմողը 1997թ. մայիսի 2-ին հաստատել է, որ չի ցանկանում, որ իրեն ներկայացնի այլ փաստաբան, բացի նրանից, ում ինքն իր ցանկությամբ է ընտրել…

91. Արդյունքում, Դատարանը դիմողի պատասխանում չի գտել որևէ նշում նրա պաշտպանի և վերջինիս կողմից նրա պաշտպանության իրականացման անկախության վերաբերյալ: Ամեն դեպքում, Դատարանը հիմնվում է այն ապացույցի վրա, որ պաշտպանը ոչ պատշաճ խորհուրդ չի տվել իր պաշտպանյալին և չի ներկայացրել նրան՝

բացառությամբ զինվորական դատարանի դատավճռի դեմ իր բողոքարկումից բխող ռիսկերից: Անգամ այդ դեպքում դիմողը բողոք է ներկայացրել այդ իրավական ներկայացուցչի հետ համատեղ, այնպես որ, այս սխալը, թվում է, դիմողի համար որևէ հետևանք չի առաջացրել:

*գ. Հաղորդակցություն*

*i. Տեսակցություններ*

***Բոնզիի ընդդեմ Շվեյցարիայի (Bonzi v. Switzerland), 7854/77, 12.07.1978թ., DR 12, 185***

2. …Որևէ ուղղակի դրույթի բացակայության պայմաններում չի կարելի պնդել, որ փաստաբանի հետ խորհրդակցելու և խորհրդապահական ցուցումներ փոխանակելու իրավունքը, որն անուղղակիորեն նախատեսված է 6-րդ հոդվածի 3-րդ մասում, որևէ սահմանափակման չի կարող ենթարկվել: Քանի որ սույն գործով մեղադրյալին առանձին պահելու վերաբերյալ որոշման կայացումից հետո փաստաբանի հետ նրա տեսակցություններն արգելվել էին, պետք է մատնանշվեր, որ դիմողն ազատ է եղել, դատարանի վերահսկողության շրջանակներում, գրավոր ձևով տեղեկացնելու իր փաստաբանին նախնական քննության ընթացքի վերաբերյալ: Ի լրումն դրա, նա կարող էր պահանջել դադարեցնել իր մեկուսացումն այն դեպքում, երբ պաշտպանի այցելություններն անհրաժեշտ են եղել: Այսպիսով, դիմողի և նրա պաշտպանի հարաբերությունների համապատասխան ժամանակավոր սահմանափակումները, ամբողջությամբ վերցրած, քրեական վարույթի իմաստով չեն կարող դիտվել որպես դատական իշխանությունների կողմից դիմողին իր պաշտպանությունը նախապատրաստելու համար անհրաժեշտ միջոցների չտրամադրում…

***Բրենանն ընդդեմ Միացյալ Թագավորության (Brennan v. United Kingdom), 39846/98, 16.10.2001թ.***

61. Խորհրդատվությունը... առաջին անգամ տեղի է ունեցել նրա ձերբակալության ընթացքում, որի ժամանակ նա կարողացել է խորհուրդ հարցնել իր փաստաբանից: Նա 1988թ. Կարգադրության 3-րդ հոդվածի իմաստով զգուշացվել է... և, ինչպես նշվել է Ջոն Մյուրեյի գործով... առաջադրված հարցերին պատասխանելու և դրանք իր դեմ օգտագործելու վտանգի ընկալմամբ կայացված նրա որոշումը հետագայում կարող է կարևորվել դատարանում նրա պաշտպանության իրականացման համար:...

62. ...Դատարանը, սակայն, եզրակացնում է, որ ոստիկանության աշխատակցի ներկայությունն անխուսափելիորեն կարող էր խոչընդոտել դիմողի՝ իր պաշտպանի հետ ազատ խոսելու հնարավորությանը և նրա դեմ հարուցված գործի համար կարևոր հարցերի քննարկումն

սկսելու տատանումների պատճառ հանդիսանալ: Երկուստեք՝ դիմողը և նրա պաշտպանն զգուշացվել են, որ որևէ անուն չպետք է նշվի, և որ խորհրդակցությունը կդադարեցվի, եթե ասվի որևէ բան, որը կարող է ընդունվել որպես նախնական քննության խոչընդոտ: Էական չէ այն, որ ցույց չի տրվել, որ առկա են եղել այլ հանգամանքներ, որոնք դադարեցրել են դիմողի և նրա պաշտպանի խորհրդակցությունը: Իր պաշտպանի հետ անարգել հաղորդակցվելու մեղադրյալի իրավունքը, որը *inter alia* ամրագրված է Կալանավորների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների 93-րդ հոդվածում, ուղղակի սահմանափակումների առարկա է դարձել: Դիմողը խոստովանություն էր արել նախքան խորհրդատվությունը և դրանից հետո: Անվիճելի է, որ նա այդ ժամանակ իրավական խորհրդի կարիք է ունեցել, և որ հետագա հարցաքննությունների ընթացքում, որոնք իրականացվելու էին պաշտպանի բացակայությամբ, նրա տված պատասխաններն օգտագործվելու էին նրա գործի դատական քննության ժամանակ և կարող էին անուղղելի վնաս պատճառել նրա պաշտպանությանը:

63. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ դիմողի և նրա պաշտպանի առաջին խորհրդակցությանը ոստիկանության աշխատակցի ներկա գտնվելը խախտել է նրա՝ իր պաշտպանությունը պատշաճ իրականացնելու իրավունքը և այդ կապակցությամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (c) կետի և դրա հետ կապված՝ 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

***Օջալանն ընդդեմ Թուրքիայի (Öcalan v. Turkey) [GC], 46221/99, 12.05.2005թ.***

132. Վարույթի այս պահի վերաբերյալ կողմերի որևէ առանձնահատուկ դատողության բացակայության պայմաններում Մեծ պալատը հավանության է արժանացնում Պալատի հետևյալ կարծիքը.

> «...դիմողի և նրա պաշտպանների առաջին տեսակցությունը տեղի է ունեցել վերահսկողության ներքո և անվտանգության աշխատակիցների, դատավորի և դիմողի և նրա պաշտպանների հետ նույն սենյակում գտնվող անձանց տեսողության և լսողության սահմաններում: Անվտանգության աշխատակիցների կողմից տեսակցությունը սահմանափակվել է քսան րոպե տևողությամբ: Տեսակցության ձայնագրությունն ուղարկվել է Ազգային անվտանգության դատարան:
>
> ...Ինչ վերաբերում է հետագա տեսակցություններին,... Դատարանն ընդունում է, որ այս տեսակցությունից հետո դիմողի և նրա փաստաբանների տեսակցությունները տեղի են ունեցել անվտանգության աշխատակիցների լսողության սահմաններում, եթե անգամ անվտանգության ծառայողները չեն գտնվել այնտեղ, որտեղ տեսակցությունը տեղի է ունեցել»:

133. Մեծ պալատն իր համաձայնությունն է արտահայտում երրորդ անձանց լսողության սահմաններից դուրս իր պաշտպանների հետ խորհրդակցելու իրավունքի բացակայության արդյունքների վերաբերյալ Պալատի հետևյալ գնահատականներին.

> «...երրորդ անձանց լսողության սահմաններից դուրս իր իրավական ներկայացուցիչների հետ հաղորդակցվելու մեղադրյալի իրավունքը ժողովրդավարա-

կան հասարակությունում արդար դատական քննության հիմնական պահանջի մաս է կազմում և բխում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (c) կետից: Եթե փաստաբանին հնարավորություն չի տրվում իր վստահորդի հետ խորհրդակցել և նրանից խորհրդապահական ցուցումներ ստանալ առանց նման վերահսկողության, նրա օգնությունն իր արդյունավետության մեծ մասը կարող է կորցնել, մինչդեռ Կոնվենցիան կոչված է երաշխավորելու իրավունքներ, որոնք գործուն են և արդյունավետ (տե՛ս Ս.-ն ընդդեմ Շվեյցարիայի...): Պաշտպանության կողմի իրավունքները կապված մեղադրյալի և նրա փաստաբանների տեսակցությունների խարհրդապահական բնույթի հետ, ամրագրվել են բազմաթիվ միջազգային փաստաթղթերում, ներառյալ Եվրոպական փաստաթղթերը (տե՛ս Բրեմանն ընդդեմ Միացյալ Թագավորության,...): Սակայն, ինչպես նշվել է վերը... մեղադրյալի և նրա փաստաբանի տեսակցության իրավունքի վրա սահմանափակումներ կարող են դրվել, եթե առկա են հիմնավոր պատճառներ: Սույն գործով էական է այն, որ ամբողջ վարույթի իմաստով՝ խախտվել է մեղադրյալի արդար դատական քննության իրավունքը:

...Սույն գործով Դատարանը գտնում է,... որ դիմողը և նրա փաստաբանները յուրաքանչյուր փուլում ի վիճակի չեն եղել խորհրդակցել պաշտոնատար անձանց լսողության սահմաններից դուրս: Այն գտնում է, որ երկուստեք՝ նախնական և դատական քննության փուլերում այդ խախտման անխուսափելի հետևանքը եղել է դիմողին իր փաստաբանների հետ բացահայտ խորհրդակցելուն և նրանց հարցեր տալուն խոչընդոտելը, ինչը կարող էր կարևոր լինել նրա պաշտպանության նախապատրաստման համար: Այսպիսով, պաշտպանության կողմի իրավունքներն էականորեն խախտվել են:

...Դատարանն այդ կապակցությամբ գտնում է, որ նախքան իր փաստաբանների հետ խորհրդակցելը՝ դիմողն արդեն ցուցմունքներ էր տվել, իսկ Ազգային անվտանգության դատարանում ցուցմունքներ էր տվել իր փաստաբանների հետ խորհրդակցելուց հետո: Եթե լուրջ մեղադրանքից նրա պաշտպանությունը պահանջել է, որ նա պատասխանի, և դա պետք է արդյունավետ լիներ, ապա պարզ է, որ այդ ցուցմունքները պետք է հետևողական լինեին: Հետևաբար, Դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է դիմողին հնարավորություն տալ խոսելու իր փաստաբանների հետ՝ երրորդ անձանց լսողության սահմաններից դուրս:

...Ինչ վերաբերում է Կառավարության այն պնդմանը, որ դիմողի և նրա փաստաբանների հանդիպումների վերահսկողությունն անհրաժեշտ է եղել ապահովելու համար դիմողի անվտանգությունը, ապա Դատարանը գտնում է, որ փաստաբաններն ընտրվել էին դիմողի կողմից և որևէ պատճառ չկան կասկածելու, որ նրանք կվտանգեին իրենց վստահորդի կյանքը: Նրանց թույլ չի տրվել տեսակցել դիմողին առանց նախապես մի շարք անձնական խուզարկությունների ենթարկվելու: Կալանավայրի աշխատակիցների կողմից միայն դիտողական (վիզուալ) վերահսկողության իրականացումը՝ այլ միջոցների հետ մեկտեղ, բավարար կլիներ ապահովելու դիմողի անվտանգությունը»:

Հետևաբար, Դատարանը գտնում է, որ այն փաստը, որ դիմողը չի կարողացել խորհրդակցել իր փաստաբանների հետ անվտանգության աշխատակիցների լսողության սահմաններից դուրս, խախտել է նրա պաշտպանության իրավունքը:

***Մոիսեևն ընդդեմ Ռուսաստանի (Moiseyev v. Russia), 62936/00, 09.10.2008թ.***

204. ...դիմողի փաստաբանից պահանջել են ստանալ հատուկ թույլտվություն նրա հետ հանդիպելու և խորհրդակցելու համար: Թույլտվությունը վավեր էր միայն մեկ այցելության համար, և վավերականության ժամկետը երկարացնելու՝ փաստաբանների փորձերն

անհաջողությամբ են ավարտվել: Թույլտվությունները տրվել են գործով պատասխանատու պաշտոնատար անձի կողմից: Այն բանից հետո, երբ Չերբակալման մասին օրենքի դրույթները, որոնք քրեական գործով պատասխանատու անձանց հայեցողությանն էին թողնում փաստաբանի հետ տեսակցելու հարցը..., Սահմանադրական դատարանի կողմից հակասահմանադրական են ճանաչվել, դիմողի փաստաբանը ձեռք է բերել անխախտելի թույլտվություն. սակայն այդ ժամանակ դատապարտումն արդեն հաստատվել էր վերջին ատյանում: Դրանից բխում է, որ դիմողի դեմ հարուցված քրեական վարույթների ամբողջ ընթացքում դիմողի փաստաբանի այցելությունները պայմանավորված են եղել իշխանությունների թույլտվության վրա:

205. Դիմողի գործով մեղադրանքը հարուցվել և պաշտպանվել է Դաշնային անվտանգության ծառայության կողմից: Լեֆորտովոյի կալանավայրը, որտեղ դիմողը պահվել է, ևս գտնվել է Դաշնային անվտանգության ծառայության ենթակայության տակ: Այս հանգամանքներում մեղադրող կողմն իր նպատակների իրականացման համար դիմողին տեսակցելու անսահմանափակ հնարավորություն է ունեցել, սակայն իրականացրել է ամբողջական և արդյունավետ վերահսկողություն նրա և նրա պաշտպանի հարաբերությունների նկատմամբ, վերջինից պահանջվում էր ստանալ նախաքննական մարմնի՝ Դաշնային անվտանգության ծառայության աշխատակցի, թույլտվությունն իր պաշտպանյալին կալանավայրում հանդիպելու յուրաքանչյուր դեպքում: Դատարանը հաշվի է առնում Կառավարության պնդումներն այն մասին, որ վարույթների ոչ մի փուլում պաշտպանի այցելություններն առանց բավարար հիմքի չեն մերժվել: Այնուամենայնիվ, որևէ կասկած չկա առ այն, որ յուրաքանչյուր այցելության համար անհատական թույլտվություն ստանալու անհրաժեշտությունը պաշտպանության իրավունքի իրականացման համար լուրջ գործնական դժվարություններ է առաջացրել, քանի որ այն ժամանակ և ուժեր է խլել պաշտպանության կողմից՝ հիմնական գործառության իրականացման համար: Դատարանին անհանգստություն է պատճառում այն, որ այս միջոցառումը պաշտպանության կողմին կախվածության վիճակի մեջ է դնում և ենթակա դարձնում մեղադրանքի կողմի կամքին՝ այդպիսով խախտելով հնարավորությունների հավասարությունը: Մի շարք դեպքերում Դաշնային անվտանգության ծառայությունը չարաշահել է իր գերակա դիրքը՝ մերժելով անսահմանափակ թույլտվություն տրամադրելու վերաբերյալ տիկին Մոսկալենկոյի խնդրանքը կամ առանց որևէ ապացույցի նրան քրեական մեղադրանք է առաջադրել, որպեսզի թույլտվության հարցը մոռացվի...

206. Նաև Դատարանը նշում է, որ Կառավարությունը որևէ իրավական մեկնաբանություն չի ներկայացրել, որի համաձայն՝ ներպետական իշխանությունները կարող են առաջին հերթին փաստաբանից այցելությունների համար հատուկ թույլտվություն պահանջել: Չերբակալման մասին օրենքի 18-րդ բաժնում չկա որևէ դրույթ, որը

թույլ կտար ասելու, որ իրավական ծառայություններում աշխատող անձից ստացված հանձնառությունը և համապատասխան փաստաթուղթը բավարար չեն պրոֆեսիոնալ փաստաբաններին, ովքեր բոլորն էլ դիմողի իրավական ներկայացուցիչներն են, դիմողին այցելելը թույլատրելու համար: Եթե 18-րդ բաժինն ուղղակիորեն պահանջում է իրավասու պաշտոնատար անձանց համաձայնությունն ընտանիքի հետ տեսակցելու համար, դա չի նշանակում, որ պաշտպանի հետ տեսակցությունները կարող են ենթարկվել նման համաձայնության: Դրանից բխում է, որ դիմողի պաշտպանի կողմից նրան այցելելու համար թույլտվություն խնդրելը ոչ միայն չափազանց ծանրաբեռնել է պաշտպանության կողմին, այլ նաև այն զուրկ է եղել իրավական հիմքից և, հետևաբար, եղել է ինքնիրավ:

207. Վերոգրյալի լույսի ներքո, Դատարանը գտնում է, որ մեղադրանքի կողմից իրականացվող վերահսկողությունը դիմողի և նրա փաստաբանի տեսակցությունների նկատմամբ, խարխլում են արդար դատաքննության և հնարավորությունների հավասարության սկզբունքների կիրառումը:

***Ռոյբացկին ընդդեմ Լեհաստանի (Rybacki v. Poland), 52479/99, 13.01.2009թ.***

57. ...դիմողը ներկայացվել է իր փաստաբանի կողմից, ով նշանակվել է 1996թ. մայիսի 9-ին՝ դիմողի ձերբակալությունից մեկ օր հետո: Փաստաբանը ներկա է գտնվել դատախազի կողմից դիմողի հարցաքննությանը: Նա մասնակցել է հարցաքննությանը, հարցեր է տվել և ապացույցներ ձեռք բերելու միջնորդություններ է ներկայացրել… Հետևաբար, վարույթի սկզբնական փուլում դիմողը շատ կարճ ժամանակահատվածի ընթացքում օգտվել է իր իրավական ներկայացուցչի հետ անարգել տեսակցելու իրավունքից:

58. Սակայն 1996թ. մայիսի 17-ին դատախազն իրեն իրավունք է վերապահել ներկա գտնվել դիմողի և նրա պաշտպանի հանդիպումներին… Սույն գործով, սակայն, որևէ անգամ ընդհանուր բնույթի, ինչպիսին է, օրինակ, նախնական քննության պատշաճ ընթացքն ապահովելը, հիմնավորում չի ներկայացվել առ այն, թե ինչու է նման որոշում կայացվել: Որևէ իրական պատճառ չի ներկայացվել հիմնավորելու սույն գործով նման վերահսկողության անհրաժեշտությունը և հիմնավորվածությունը:

59. Մասնավորապես, Դատարանը գտնում է, որ ցույց չի տրվել կամ վիճարկվել այն… որ այդ միջոցների կիրառման ժամանակ մեղադրանքի կողմի պաշտոնատար անձինք քննարկել են այն հարցը, որ դիմողի և նրա փաստաբանի տեսակցությունները հանցավոր համաձայնության գալու վտանգ են պարունակում: Ոչ փաստաբանի մասնագիտական էթիկան, ոչ նրա վարքագծի իրավաչափությունն այդ ժամանակահատվածում կասկածի տակ չեն առնվել… Դատարա-

նը կարող է միայն եզրակացնել, որ չի հիմնավորվել, որ առկա են բավարար պատճառներ վիճարկվող միջոցների կիրառման համար:

60. Նաև Դատարանը նշում է, որ 1996թ. մայիսի 17-ի կարգադրության արդյունքում մինչև 1996թ. նոյեմբերի 7-ը դիմողի և նրա փաստաբանի տեսակցությունները վերահսկվել են ոստիկանների կողմից, ովքեր ոչ միայն ներկա են գտնվել այդ սենյակում, այլ նաև լսել են դիմողի և նրա փաստաբանի խոսակցությունները: Դատարանը նշում է դիմողի պնդումն այն մասին, որ իր և իր փաստաբանի վերահսկվող տեսակցությունների ընթացքում, երբ իրենք սկսել են գործի մասին խոսել՝ ոստիկանն ընդհատել է նրանց քննարկումը և զգուշացրել, որ եթե շարունակեն այդ մասին խոսել տեսակցությունը կընդհատվի… Կառավարությունը չի առարկել այս պնդումը: Հետևաբար, չի կարելի ասել, որ դիմողի և նրա փաստաբանի շփումները նման հանգամանքներում կարողացել են եղել ապահովել դիմողի պաշտպանության իրավունքի պատշաճ իրականացումը:

61. Վերջապես, Դատարանը նշում է, որ չի վիճարկվել, որ վարույթի արդարացիությունը խախտվել է, օրինակ, մայիսից նոյեմբեր, այսինքն՝ այն ժամանակահատվածում, երբ դիմողը չի օգտվել չվերահսկվող իրավական օգնություն ստանալու հնարավորությունից՝ դիմողի տված ինքնախոստովանական ցուցմունքները դատախազի կողմից հիմք ընդունվելու արդյունքում: Թեև Դատարանը չպետք է, սակայն նշում է, որ այդ սահմանափակումները կիրառվել են վեց ամսվա ընթացքում, մինչդեռ նախնական քննությունն ընդհանուր առմամբ տևել է յոթ ամիս և երկու շաբաթ… Դատարանը նաև նշում է, որ այս ժամանակաընթացքում մեղադրանքի կողմի պաշտոնատար անձինք ձեռք են բերել շատ մեծ ծավալով ապացույցներ… Այն փաստը, որ պաշտոնատար անձինք ակտիվորեն նախապատրաստել են մեղադրական եզրակացության նախագիծը՝ այդ ժամանակահատվածի երկարատևության հետ մեկտեղ, չպետք է, սակայն, հանգեցնում է այն եզրակացությանը, որ այդ ժամանակահատվածում նրա փաստաբանի հետ անարգել հաղորդակցվելու հնարավորության բացակայությունը բացասաբար է անդրադարձել նրա պաշտպանության իրավունքի իրականացման վրա:

62. Քննարկելով ամբողջությամբ վերցրած գործի հանգամանքները՝ Դատարանն այն կարծիքն է հայտնում, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (c) կետի և դրա հետ կապված՝ 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

*ii. Թղթակցություն և հեռախոսային խոսակցություններ*

***Դոմենիչհինի ընդդեմ Իտալիայի (Domenichini v. Italy), 15943/90, 15.11.1996թ.***

37. Պրն Դոմենիչհինին... նշել է, որ այն բանից հետո, երբ 1988թ. սեպտեմբերի 16-ին ստացել է պատժի կատարման համար պատաս-

խանատու դատավորի որոշման դեմ իր բողոքը մերժելու վերաբերյալ ծանուցագիրը, նա այն օրենքով սահմանված կարգով բողոքարկել է (1988թ. նոյեմբերի 9-ին) և ապա գրել իր փաստաբանին, ով պետք է սահմանված տասնօրյա ժամկետում ներկայացներ այն հիմնավորող փաստերը: Այդ նամակը բանտում բացվել է, կարդացվել և ապա պրն Պիսկոպոյին ուղարկվել տասնօրյա ժամկետն անցնելուց հետո...

39. ...Ինչ վերաբերում է քննարկվող նամակը պրն Պիսկոպոյին ուշացմամբ ուղարկելուն..., Դատարանը գտնում է, որ, անկախ վարույթի կանխատեսելի արդյունքներից..., նամակի վերահսկողությունը խախտել է պրն Դոմնիչինիի պաշտպանության իրավունքը: Նրա փաստաբանը դա հիմնավորող փաստերը ներկայացրել է օրենքով սահմանված տասնօրյա ժամկետն անցնելուց հետո:

Հետևաբար, տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 3-րդ մասի (b) կետի խախտում...

***Զագարիան ընդդեմ Իտալիայի (Zagaria v. Italy), 58295/00, 27.11.2007թ.***

32. Դատարանը նախևառաջ գտնում է, որ քննվող գործում մեղսագրվող միջամտությունը չի ունեցել ոչ մի իրավական հիմք, նույնիսկ՝ հակառակը, հոդված 146-ի *bis*-ը CPP-ի պահանջների իրականացման ժամանակ նախատեսում է, որ պաշտպանը կամ նրան փոխարինողը, որը ներկա է դատական նիստերի դահլիճում, ու մեղադրյալը կարող են խորհրդապահության կարգով խորհրդակցել սահմանված տեխնիկական միջոցներով: Դիմողի՝ իր խորհրդատուի հետ վարած հեռախոսազրույցները լսելիս հսկիչը փաստորեն ոտնահարել է այդ հիմնամասով սահմանված խորհրդապահության կանոնը: Այդպիսի վարքագծի հանցավորությունը բացառող որևէ ապացույց Կառավարության կողմից չի ներկայացվել, քանի որ վերջինս պնդել է, թե դա անցանկալի, չնախատեսված լսում է եղել:

33. Ինչ վերաբերում է անօրինական միջոցի առաջացրած հետևանքներին, Դատարանը պարզեց, որ հեռախոսազրույցը, որին խոսքը է վերաբերում է, կայացել է դատական նիստի ընթացքում, որ տեղի է ունեցել Սանտա Մարիա Կապուա Վետերեյի երդվյալ ատենակալների դատարանում: Դիմողի խորհրդատուն գտնվել է դատական նիստերի դահլիճում, մինչդեռ շահառուն դատաքննությանը հետևել է տեսակոնֆերանսի միջոցով՝ իր կալանավայրից: Դատարանի կարծիքով, մեղադրյալին ընձեռված՝ գաղտնի կերպով իր պաշտպանին հանձնարարություններ տալու հնարավորությունն այն պահին, երբ գործն ըստ էության քննող դատարանում քննվում է իր գործն ու հետազոտվում են բերված ապացույցները, արդար դատավարության էական պայման է հանդիսանում:

34. Ճիշտ է, որ լսված հեռախոսազրույցը, որը կապված է եղել ֆաքսի ուղարկման ու անձնական զննության բացառման հետ, թվում է, թե ուղղակի կապ չի ունեցել մեղադրանքների լավ ձևակերպման

կամ պաշտպանության ռազմավարության հետ: Հավասարապես անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ թվում է, թե հայցվորն ու իր խորհրդականը տեղյակ են եղել այն մասին, որ իրենց ապօրինաբար լսում են, որը տեղի է ունեցել 1999թ. ապրիլի 15-ին, քանի որ ավելի քան տասն ամիս հետո՝ 2007թ. մարտի 7-ին Կառավարությունը հաստատել է դա:

35. Հարկ է նշել, որ 2000թ. մարտին R.G.-ի համար 9/98 դատական գործը դեռ գտնվում էր առաջին ատյանում և դեռ այլ դատական նիստեր էլ պետք է կայանային Սանտա Մարիա Կապաուա Վետերեյի երդվյալ ատենակալների դատարանում ու Վերաքննիչ դատարանում, որտեղ դատավարությունն ավարտվեց միայն 2002թ. հունվարին: Ինչ վերաբերում է R.G.-ի թիվ 9/98 դատական գործին՝ 2005թ. ապրիլի 29-ին այն դեռևս շարունակում էր կախված մնալ առաջին ատյանի դատարանում: Հաշվի առնելով պետության ոչ խիստ վերաբերմունքը բանտարկյալներին դասակարգող հսկիչի նկատմամբ, որը խախտելով խորհրդապահության պարտականությունը՝ նույնիսկ ծառայողական հետաքննության սուբյեկտ չէր դարձել, ոչինչ երաշխիք չէր կարող հանդիսանալ հայցվորի համար, որ այդ դեպքը չի կրկնվի: Այդ ժամանակահատվածից սկսած նա արդարացիորեն կարծել է, որ մյուս հեռախոսազրույցներն էլ կլսվեն, ինչը նրան առիթ է տվել մեղադրանքի համար էական արժեք ձեռք բերող հարցեր քննարկելուց առաջ երկմտելու համար:

36. Արդյունքում, Դատարանը որոշեց, որ 1999թ. ապրիլի 15-ին հայցվորի՝ իր փաստաբանի հետ վարած հեռախոսազրույցի լսումը պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման տեսանկյունից ոտնահարել է դիմողի իրավունքները: Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի c ենթակետի խախտում՝ զուգորդված 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտմամբ:

***Մոիսեևն ընդդեմ Ռուսաստանի (Moiseyev v. Russia), 62936/00, 09.10.2008թ.***

208. Ի լրումն այցելություններ թույլ տալու խնդրանքի, դիմողի փաստաբանը և ինքը՝ դիմողը խնդրել են կալանավայրի վարչակազմին հատուկ թույլտվություն տալ ցանկացած փաստաթուղթ միմյանց փոխանցելու վերաբերյալ: Այդ փաստաթղթերը նախքան փոխանցելն ուսումնասիրվել են վարչակազմի կողմից…

210. Դատարանը գտնում է, որ Ձերբակալման մասին օրենքի 20-րդ բաժինը, որն ակնհայտորեն հանդիսանում է դիմողի և նրա պաշտպանների միջև փոխանցվող փաստաթղթերի ուսումնասիրության իրավական հիմքը, ընդհանուր առմամբ նախատեսում է կալանավորների բոլոր թղթակցությունների վերահսկողություն՝ առանց արտոնյալ, օրինակ՝ փաստաբանի հետ տարվող թղթակցության, բացառության: Դատարանն այս կապակցությամբ կրկնում է, որ փաստաբանների հետ տարվող թղթակցությունը, անկախ դրա նպատակներից, միշտ

արտոնյալ է և այդ պատճառով կալանվորի՝ իր պաշտպանի հետ կատարվող նամակագրությունը կարող է վերահսկվել բացառիկ հանգամանքներում, երբ պաշտոնատար անձինք ունեն հիմնավոր կասկած առ այն, որ այս արտոնությունը չարաշահվում է և նամակի բովանդակությունն սպառնում է կալանավայրի կամ այլոց անվտանգությանը կամ այլ կերպ ունի հանցավոր բնույթ…

211. Ինչպես նշվել է վերը, Լեֆորտովոյի կալանավայրը ղեկավարել են այն նույն պաշտոնատար անձինք, ովքեր դիմողի դեմ մեղադրանք են առաջադրել: Այսպիսով, դիմողի և նրա պաշտպանական կողմի միջև փոխանակվող բոլոր փաստաթղթերի ընթացիկ վերահսկողությունը մեղադրանքի կողմին հնարավորություն կտա տեղեկանալ պաշտպանական կողմի ռազմավարությանը և դիմողին իր հակառակորդի նկատմամբ ոչ բարենպաստ վիճակում կդնի: Վստահորդ-փաստաբան հարաբերության գաղտնիության նման աղաղակող խախտումը չպետք է, սակայն ազդում է դիմողի պաշտպանության իրավունքի վրա և նրա իրավական պաշտպանությունը զրկում արդյունավետությունից: Չի վիճարկվել այն, որ քրեական վարույթի ամբողջ ընթացքում նման տարածական միջոցի կիրառումը պայմանավորված է եղել որևէ բացառիկ հանգամանքով կամ այս առավելության նախկին չարաշահումներով: Դատարանը գտնում է, որ դիմողի և նրա պաշտպանի միջև փոխանակվող փաստաթղթերի վերահսկողությունը սահմանազանցող և անօրինական ձևով խախտել է նրա պաշտպանության իրավունքը:

212. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ մեղադրող պաշտոնատար անձի կողմից պաշտպանական նյութերի ընթացիկ վերահսկողությունը հանդիսանում է հնարավորությունների հավասարության սկզբունքի խախտում և ակնհայտորեն խախտում է պաշտպանության իրավունքը:

*գ. Ներկայացուցչի պատասխանատվությունն իր հայտարարությունների համար*

***Նիկուլան ընդդեմ Ֆինլանդիայի** (Nikula v. Finland), 31611/96, 21.03.2002թ.*

51. Իրավամբ, դիմողը դատախազ Տ.-ին մեղադրել է ոչ օրինական վարքագիծ դրսևորելու մեջ, բայց այս քննադատությունն ուղղված է եղել Տ.-ի կողմից ընտրված մեղադրանքի ռազմավարությանը, մասնավորապես, երկու որոշումների, որոնք կայացվել են նախքան դատական քննությունը, և որոնք, դիմողի կարծիքով, հանգեցրել են «այնպիսի վարքագծի... որով խախտվել են նրանց պաշտոնական պարտականությունների իրականացումը»: Թեև որոշ ձևակերպումներ անընդունելի են եղել, սակայն նրա քննադատությունն ուղղված է եղել բացառապես իր պաշտպանյալի գործով վարույթի ընթացքում Տ.-ի՝ որպես դատախազի, վարքագծին, որը տարբերվում է Տ.-ի մաս-

նագիտական կամ այլ որակների դեմ ուղղված քննադատությունից: Այդ իմաստով, Տ.-ն պետք է հանդուրժեր դիմողի՝ որպես պաշտպանական կողմի փաստաբանի, շատ կարևոր քննադատությունը:

52. Բացի դրանից, Դատարանը նշում է, որ դիմողի հայտարարությունները սահմանափակվել են դատարանի դահլիճով, ինչը տարբերվում է դատավորի կամ դատախազի քննադատությունից, որը կատարվում է, օրինակ, լրատվության միջոցներով... Դատարանը չի գտնում նաև, որ դիմողի կողմից դատախազին ուղղված քննադատությունը, լինելով դատավարական բնույթի, հանգեցրել է անձնական վիրավորանքի...

53. Ապա Դատարանը կրկնում է, որ եթե անգամ դիմողը չի հանդիսացել Փաստաբանների միության անդամ և, հետևաբար, նրա նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվել չէր կարող, այնուամենայնիվ, նա պետք է ենթարկվի գործը քննող դատարանի վերահսկողությանը և ուղղորդմանը: Չկա որևէ նշում առ այն, որ դատախազ Տ.-ն խնդրել է նախագահող դատավորին արծագանքել դիմողի քննադատությանն այլ կերպ, քան որոշում կայացնելով մեղադրանքի կողմի տվյալ վկային լսելու մասին պաշտպանական կողմի դատավարական առարկության վերաբերյալ... Այդ կապակցությամբ Դատարանն անդրադառնում է դատարանների և նախագահող դատավորի՝ վարույթն այնպես ուղղորդելու պարտականությանը, որ ապահովվի կողմերի պատշաճ վարքագիծը և առավելապես՝ արդար դատաքննությունը, և ոչ թե հետագա վարույթներով քննի դատարանի դահլիճում կողմի հայտարարության իրավաչափության հարցը:

54. Իրավամբ, դատախազ Տ.-ի կողմից հարուցված մասնավոր մեղադրանքի արդյունքում դիմողը դատապարտվել է բացառապես անզգույշ զրպարտության համար: Նմանապես հիմնավորվել է Գերագույն դատարանի կողմից նրա պատժի կատարումը հետաձգելը, որը հիմնվել է հանցանքի նվազ վտանգավոր բնույթի վրա: Թեև նրա նկատմամբ նշանակված տուգանքը չի կիրառվել, սակայն վնասների և ծախսերի փոխհատուցման պարտականությունը մնացել է: Այնուամենայնիվ, քրեական վարույթի ընթացքում մյուս կողմին ուղղված քննադատության *ex post facto* վերանայումը, որի առկայությունը հանրային մեղադրողը, անկասկած, պետք է հաշվի առնի, դժվար է համաձայնեցնել իր վստահորդների շահերը ջանասիրաբար պաշտպանելու՝ պաշտպանության կողմի փաստաբանի պարտականության հետ: Դրանից բխում է, որ պաշտպանները՝ ենթակա լինելով դատական վերահսկողության, պետք է առաջին հերթին գնահատեն պաշտպանական փաստարկների հիմնավորվածությունը և օգտակարությունը՝ առանց ենթարկվելու նույնիսկ նվազ քրեական պատիժների, պատճառված վնասների կամ կատարված ծախսերի հատուցման «ճնշող ազդեցության»...

56. Այս հանգամանքներում, Դատարանը եզրակացնում է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածը խախտվել է, քանի որ դիմողին դատա-

պարտելը և պատճառված վնասներն ու ծախսերը փոխհատուցել պարտավորեցնելը համաչափ չեն եղել հետապնդվող օրինական նպատակին:

***Կիպրիանուն ընդդեմ Կիպրոսի (Kyprianou v. Cyprus) [GC], 73797/01, 15.12.2005թ.***

178. Լիմասոլի Ասսիզների դատարանը դիմողին դատապարտել է հնգօրյա ազատազրկման: Սա չի կարող դիտվել որպես խիստ պատիժ, հատկապես, եթե հաշվի առնենք այն, որ դա իրականացվել է անմիջապես: Հետագայում այն անփոփոխ է թողնվել նաև Գերագույն դատարանի կողմից:

179. Դիմողի վարքագիծը կարող է գնահատվել որպես Ասսիզների Դատարանի դատավորների նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորում: Այնուամենայնիվ, չնայած դրանց կոպիտ լինելուն, այդ մեկնաբանություններն ուղղված են եղել և վերաբերել են դատավորի կողմից վարույթն իրականացնելու ձևին, մասնավորապես, դրանք կապված են եղել վկայի խաչաձև հարցաքննության հետ, որը նա իրականացրել է իր վստահորդին սպանության մեղադրանքից պաշտպանելիս:

180. Քննարկելով վերոգրյալը՝ Դատարանը չի համոզվում Կառավարության այն փաստարկով, որ դիմողի նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատիժը եղել է համաչափ նրա հանցագործության ծանրությանը, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողը եղել է իրավաբան և այլընտրանքների քննարկումը հնարավոր է եղել…

181. Հետևաբար, Դատարանի գնահատմամբ դիմողի նկատմամբ նշանակված նման պատիժը եղել է անհամաչափորեն դաժան և կարող է ունենալ «ճնշող ազդեցություն» փաստաբանների կողմից իրենց պաշտպանական պարտականությունները կատարելիս… Դատարանի կողմից հայտնաբերված, արագացված վարույթի խախտմամբ թույլ տրված դատավարական սխալները… ծառայում են լրացնելու համապատասխանության այս բացակայությունը... Այսպիսով, Դատարանը գտնում է, որ Ասսիզների դատարանը չի ապահովել հստակ հավասարակշռություն դատական իշխանության ինքնիշխանության ապահովման անհրաժեշտության և ազատ արտահայտվելու դիմողի իրավունքի ապահովման միջև: Այն փաստը, որ դիմողը կրել է միայն ազատազրկման մի մասը… չի փոխարինում այդ եզրակացությանը:

183. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածը խախտվել է դիմողի նկատմամբ նշանակված ոչ համապատասխան պատժի պատճառով:

***Սադայն ընդդեմ Թուրքիայի (Saday v. Turkey), 32458/96, 30.03.2006թ.***

Քննվող գործում անհերքելի է, որ հայցվորն իր դատական ելույթում արել է շատ կոպիտ արտահայտություններ, այնպիսիք, ինչպիսիք են «Պետությունն ուզում է, որ մենք սպանվենք կիսաշրջազգեստ հագած դահիճների կողմից» կամ «Ֆաշիստական բռնապետությունը ցանկանում է հիմա ինձ դատապարտել պետության անվտանգության հետ կապված գործեր քննող դատարանի միջոցով», որոնք նրա վկայություններին տվել են խոր թշնամական բնույթ: Դատարանը չկարողացավ նվաստացնել հայցվորին դատապարտող կարծիքը՝ այն դնելով պետության ունեցած վստահության հետ կապված հասարակ կառուցվածքային քննադատության շրջանակներում: Իրականում, հայցվորը կարող էր քննադատել պետության անվտանգության հետ կապված գործեր քննող դատարանի կազմին ու գործունեությունը առանց անձնապես այդտեղ ներկա դատավորների վրա հարձակվելու: Այդ հավաստումն ավելի է ամրապնդվում ընդհանուր առմամբ շահառուի կողմից տրված արատավորող վկայությունների ծանրությամբ, ինչպես նաև դրանց արտահայտման համար ընտրված տոնով, որոնք դատական իշխանությանը դատապարտելու արդյունքում կարող էին ստեղծել ոչ անվտանգ մթնոլորտ, որը վնաս կհասցներ արդարադատության բնականոն իրականացմանը:

36. Այնուհետև հայցվորի կողմից արված՝ իրենց բնույթով ատենակալների արժանապատվությունն ուղղակիորեն ոտնահարող առաջարկների արդյունքում դատարանն ընդունել էր անվերապահորեն սանկցիա կիրառելու անհրաժեշտությունը: Դատարանը պնդում է, որ նշանակվելիք պատիժն ընտրելիս դրանց բնույթն ու ծանրությունն այնպիսի հանգամանքներ են, որոնք պետք է անպայման հաշվի առնվեն կատարած հանցանքի հետ իրենց համաչափության տեսանկյունից: Քննվող գործում, հայցվորը պետք է կրեր պետության անվտանգության հետ կապված գործեր քննող դատարանի կողմից նշանակված ազատազրկման ձևով 6 ամիս ժամկետով սահմանված պատիժը, կամ թիվ 2845 օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված պատժաչափի առավելագույնը, որոնցից առաջին երկու ամիսը պետք է անցնեին լրիվ մեկուսացման մեջ՝ առանձին խցում: Եվ չնայած պետության անվտանգության հետ կապված գործեր քննող դատարանը որոշել էր հետաձգել պատիժն ամբողջությամբ կրելուն մնացած չորս ամիսները, հաշվի առնելով այդ պատժի ծանրությունն ու բարդությունը, միևնույն է, երկու ամսով անձնական մեկուսացումը համարվում է ոչ համահունչ նախատեսված նպատակներին և դրանով իսկ՝ ոչ անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում:

37. Փաստորեն առկա է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

*է. Լսմանը ներկա գտնվելը*

***Բալիուն ընդդեմ Ալբանիայի (Balliu v. Albania), 74727/01, 16.06.2005թ.***

35. Դատարանը նշում է՝ քանի որ դիմողը չի ցանկացել ինքն իրեն պաշտպանել, իսկ նրա ընտրած փաստաբանը չի կատարել իր պարտականությունները, Ալբանիայի իշխանությունները տարբեր կերպ գործելու հնարավորություն են ունեցել: Նրանք կարող էին դիմողի ընտրած փաստաբանին՝ պրն Լելիին հարկադրել կատարելու իր պարտականությունը, կամ նրանք կարող էին փաստաբանին փոխարինել պաշտոնապես նշանակված այլ փաստաբանով: Սակայն, Փաստաբանների միության անկախությունը հաշվի առնելով, անհնարին էր դիմողի փաստաբանին հարկադրել գործել: Բացի դրանից, դիմողը հրաժարվել էր պաշտոնապես նշանակված փաստաբանից: Այսպիսով, ներպետական դատարանն ընտրել էր երրորդ ուղին, այն է՝ հետաձգել դատական նիստը, ապա վարույթը շարունակել դիմողի փաստաբանի բացակայությամբ, սակայն դիմողի ներկայությամբ:

36. Դատարանը նշում է, որ դիմողը երբեք չի տեղեկացրել Դուրեսի Շրջանային դատարանին իր ներկայացուցչության հետ կապված բացթողումների մասին, ինչպես նաև չի խնդրել պաշտոնապես նշանակված կամ այլ փաստաբան:

37. Այս իրավիճակից ելնելով՝ Դատարանը գտնում է, որ իշխանության ներկայացուցիչները պատշաճորեն իրականացրել են իրավական օգնություն տրամադրելու իրենց պարտականությունը, երկուստեք՝ հետաձգելով դատական նիստը՝ դիմողի փաստաբանին իր պարտականությունները կատարելու համար հնարավորություն տալու և սահմանված կարգով անվճար փաստաբան նշանակելու նպատակով:

38. Հիշելով նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իշխանությունների՝ «ողջամիտ ժամկետում» վարույթ իրականացնելու պարտականությունը, վարույթի ընթացքում դիմողի ներկայացուցչության հանգամանքները չեն վկայում այն մասին, որ վերջինս հանգեցրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (c) կետով նախատեսված՝ իրավական օգնություն տրամադրելու իրավունքի խախտման կամ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ արդար դատական քննության պահանջի մերժման...

44. Դուրեսի Շրջանային դատարանում քննության ընթացքում երկուստեք՝ դիմողը և նրա փաստաբանը, մեղադրանքի կողմի վկաներին հարցաքննելիս հնարավորություն են ունեցել նրանց հարցեր տալ, սակայն նրանք նախընտրել են դա չանել. դիմողի փաստաբանը՝ բացակա լինելու, դիմողը՝ լռություն պահպանելու պատճառով:

*ը. Ծախսերի հատուցումը*

***Մորիսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Morris v. United Kingdom), 38784/97, 26.02.2002թ.***

88. Դատարանը մերժում է, որ Կրոիսանն ընդդեմ Գերմանիայի վճռում… նշել է, որ առկա չէ 6-րդ հոդվածի 3-րդ մասի (c) կետի խախ-

տում այն դեպքում, երբ անձին պարտավորեցնում են վճարել իրավական օգնություն տրամադրելու համար, և նա ունի բավարար միջոցներ այն կատարելու:

89. Դատարանը նշում է, որ դիմողին առաջարկվել է անվճար իրավաբանական օգնություն, եթե նա վճարի 240 անգլիական ֆունտ սթեռլինգ: Դա չի նշանակում, որ առաջարկը եղել է անօրինական կամ չհիմնավորված, եթե հիշենք այդ ժամանակ դիմողի զուտ աշխատավարձի չափը, անկախ այն բանից, թե դիմողին հնարավորություն տրվել է մաս-մաս վճարել, թե՝ ոչ:

*թ. Գույքային պատիժներ զանցանքների համար*

***Իքսը և Իգրեկն ընդդեմ Ավստրիայի** (X and Y v. Austria), 7909/74, 12.10.1978թ., DR 15, 160*

4. ...վարույթի հետաձգման ծախսերի հարցը... լուծվել է Քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ բաժնի հիման վրա, որի համաձայն՝ նման ծախսերը պետք է կրի այն փաստաբանը, ով պատասխանատու է այդ հետաձգումների համար: Այս պահանջը... համապատասխանում է այլ Բարձր պայմանավորվող կողմերի մասին օրենքում առկա համանման կարգավորումներին, և ողջամտորեն կարող է դիտվել որպես «անհրաժեշտ» Արձանագրության 1 (2) հոդվածի իմաստով, և միակ չլուծված հարցը մնում է այն, թե սույն գործով այդ դիմումը ևս կարող է արդարացված լինել, թե՝ ոչ...

*ժ. Վարույթից հեռացվելը*

***Պանովիցն ընդդեմ Կիպրոսի** (Panovits v. Cyprus), 4268/04, 11.12.2008թ.*

96. Դատարանը նշում է, որ դիմողի փաստաբանը և Ասսիզների դատարանի դատավորներն ունեցել են բազմաթիվ անհամաձայնություններ՝ կապված դիմողի գործով վարույթի ընթացքի հետ, և որ դիմողի փաստաբանն անհրաժեշտություն է զգացել իր կողմից դիմողի պաշտպանությունն իրականացնելուն դատարանի միջամտության պատճառով թույլտվություն խնդրել վարույթից հեռանալու համար: Նրա խնդրանքը մերժվել է, և նա շարունակել է ներկայացնել դիմողին:

97. Դատարանը նշում է, որ խախտման վարույթին հաջորդած հիմնական վարույթի վերաբացումից հետո պրն Կիպրիանուն գտել է, որ անհրաժեշտ է, որ մեկ այլ փաստաբան ներկայացնի դիմողին և խնդրել է դատարանին հեռացնել իրեն գործի հետագա քննությունից: Խնդրանքը մերժվել է, քանի որ Ասսիզների դատարանը գտել է, որ բանական որևէ մարդ չի կարող եզրակացնել, որ խախտման վարույթների արդյունքում դիմողի նկատմամբ կանխակալ վերաբերմունք է ձևավորվել:

98. ...Թեև խախտման վարույթները դիմողի հիմնական վարույթից առանձին են եղել, սակայն այն փաստը, որ դատավորները մեղադրվել են դիմողի փաստաբանի կողմից, երբ նա վիճարկել է դատարանի կողմից խաչաձև հարցաքննություն ընդունելու ձևը, խախտել է դիմողի պաշտպանական վարքագիծը:

99. ...թեև դիմողի փաստաբանի վարքագիծը կարող է դիտվել որպես անհարգալից Ասսիզների դատարանի դատավորների նկատմամբ, նրա մեկնաբանություններն ուղղված և սահմանափակված են եղել դատավորների կողմից գործի քննության քննադատությամբ, և մասնավորապես, նրանց ենթադրյալ ոչ բավարար ուշադրությանը պաշտպանական կողմի վկայի խաչաձև հարցաքննության նկատմամբ: Այս կապակցությամբ, դիմողի պաշտպանությունն իրականացնելիս փաստաբանի ազատ արտահայտվելու իրավունքի իրականացմանը խոչընդոտելը խախտել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածը… Բացի դրանից, Դատարանը գտնում է, որ դիմողի պաշտպանի նկատմամբ նշանակված պատիժն ունեցել է «ճնշող ազդեցություն» պաշտպանական կողմի փաստաբանի պարտականությունների իրականացման ժամանակ:

100. Դատարանը գտնում է, որ դիմողի պաշտպանությունն արդյունավետ կերպով շարունակել չկարողանալու պատճառով պրն Կիպրիանուի՝ վարույթից հեռանալու մասին խնդրանքի մերժումը սույն գործի հանգամանքներում գերազանցել է դիմողի պաշտպանության իրավունքի վրա համաչափ ազդեցության սահմանը: Բացի դրանից, Դատարանի կարծիքով, Ասսիզների դատարանի պատասխանը պրն Կիպրիանուի կոպիտ քննադատությանը՝ կապված նրանց կողմից գործի քննության անցկացման ձևի հետ, ինչը պատճառ էր հանդիսացել դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար նրան անմիջապես դատապարտելու և ազատազրկման հետ կապված պատիժ նշանակելու համար, նույնպես անհամաչափ է եղել: Այն նաև նշում է, որ «ճնշող ազդեցությունը» պրն Կուպրիանուի՝ որպես պաշտպանական կողմի փաստաբանի, իր պարտականությունների իրականացման վրա ակնհայտ է եղել վարույթի վերաբացումից հետո նրա այն պնդմամբ, որ մեկ այլ փաստաբան պետք է դատարանին ուղղի խնդրանք այլ կազմով դատարանի առաջ վարույթը շարունակելու վերաբերյալ:

101. Այս հանգամանքներից ելնելով՝ Դատարանը եզրակացնում է, որ Ասսիզների դատարանի կողմից դիմողի պաշտպանի հետ առճակատումը քննարկելը հանգեցրել է արդար դատաքննության խախտման: Հետևաբար, այս կապակցությամբ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

## 7. Ապացույցի թույլատրելիությունը

***Սոֆրին և այլոք ընդդեմ Իտալիայի (Sofri and Others v. Italy) (dec.), 37235/97, 27.05.2003թ.***

1. …չափազանց ցավալի է, որ սպանության գործով ապացույցները պետք է ոչնչացվեին կասկածյալներին մեղադրելուց հետո: Այդ ապացույցների ոչնչացման համար պատասխանատվությունը, որը հավանաբար Միլանի դատարանում վարչական խառնաշփոթի պատճառով է եղել, կրում են Իտալիայի իշխանությունները:

Սակայն Դատարանի համար բավարար չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում հայտնաբերելը: Պետք է նաև պարզվի, որ ոչ պատշաճ աշխատանքի հետևանքները դիմողներին մեղադրանքի կողմի համեմատ անբարենպաստ վիճակի մեջ են դրել…

Այդ կապակցությամբ Դատարանը նշում է, որ դիմողները ցույց չեն տվել, թե ինչպես ոստիկանապետ Կալաբրեսիի հագուստը կարող էր օգնել պաշտպանության կողմին: Մյուս կողմից, մեքենայի և փամփուշտների դատաբժշկական փորձաքննությունները կարող են լույս սփռել ճանապարհատրանսպորտային պատահարի ընթացքի, որը տեղի էր ունեցել սպանությունից հետո, և կրակահերթի հաջորդականության վրա: Եթե նման փորձաքննությունների արդյունքներով լրիվ կամ մասամբ հերքվեր պրն Մարիանոյի պատասխանատվությունը, դա կազդեր նրա ցուցմունքների արժանահավատության վրա:

Դատարանը գտնում է, սակայն, որ հանրային մեղադրողի գրասենյակը հայտնվել է նույն վիճակում, ինչ դիմողները, քանի որ դատաբժշկական փորձաքննություն իրականացնելու հնարավորությունը հանրային մեղադրողի գրասենյակին ևս զրկել է կորցրած կամ ոչնչացված ապացույցների վրա հիմնվելու հնարավորությունից: Հետևաբար, այս հանգամանքներում դատավարության կողմերն ունեցել են հավասար հիմքեր:

Բացի դրանից, երկուստեք՝ մեքենան և փամփուշտները, նախքան ոչնչացվելը, նկարագրվել, հետազոտվել և լուսանկարահանվել են, ուստի դիմողներն այդ ապացույցների կապակցությամբ կարող էին իրականացնել իրենց պաշտպանության իրավունքը: Մասնավորապես, նրանք կարող էին օգտագործել փորձագետի ցուցմունքը և նկարների համակարգչային ցուցադրությունը, և այդ ապացույցները նրանց կօգնեին ստանալ կարգադրություն, որ վերանայման իրենց խնդրանքն ընդունելի է: Վերջապես, նրանք հնարավորություն են ունեցել մրցակցային դատական քննությունների տարբեր փուլերի ընթացքում վիճարկելու դեպքի վերաբերյալ իրենց մեղադրողների առաջարկած տարբերակի շատ այլ կողմեր:

Այս հանգամանքներից ելնելով՝ Դատարանը չի կարող եզրակացնել, որ վերոնշյալ ցուցմունքի առանձին կետերի ոչնչացումը կամ կորուստը կարող է ազդել վարույթի արդարացիության վրա…

Դրանից հետևում է, որ գանգատն ակնհայտորեն թերի է հիմնավորված և պետք է մերժվի:

Տե՛ս նաև վերը՝ **C.VIII.4a**

### 8. Մեղադրյալի՝ լսված լինելու և ապացույցներ ներկայացնելու հնարավորությունը

*ա. Ներկայություն*

***Էնսլին, Բադերը և Ռասփն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության (Ensslin, Baader & Raspe v. Federal Republic of Germany), 7572/76, 7586/76 և 7587/76, 08.07.1978թ., DR 14, 64***

22. …Քննարկվող որոշումը կայացվել է 191 օր տևած գործի քննության 40-րդ օրը: Հետագայում դիմողները պարբերաբար ներկա են գտնվել դատավարություններին մինչև 1976թ. մայիսի 8-ը՝ Ու.Մեինհոֆի մահը. անկախ դատական փոխարինման ավանդական ձևերը մերժելու պատճառներից, նրանք կարողացել են պարզաբանել իրենց դրդապատճառները և դիրքորոշումը և քննադատել իրենց դատելու համար ձևավորված իրավական համակարգը. սրանք հանդիսացել են նրանց պաշտպանության հիմնական գծերը: Որոշման կայացման հիմք է հանդիսացել բժշկական տեսակետից նրանց անկարողությունն առնվազն վեց ամսվա ընթացքում օրական երեք ժամից ավելի մասնակցելու դատական նիստին: Այն վկայակոչում է մեղադրյալի հայտարարությունը, որը ցույց է տալիս, որ նրանք ցանկանում են դատական նիստն սկսելն անհնարին դարձնել, մասնավորապես՝ առանց հացադուլի դիմելու: Այն հանգամանքներում դատավորը օրենքով սահմանված կարգով իրավասու էր օգտագործել է իր տնօրինության տակ գտնվող միակ միջոցը՝ կանխելու համար դատավարության կեսից դրա մասնատումը՝ առանց պաշտպանությանն անբարենպաստ վիճակի մեջ դնելու, նրանց համար ապահովելու պաշտպանների ներկայությունը և նրանց անսահմանափակ հնարավորությունը հաղորդակցվելու իրենց վստահորդների հետ: Վերոշարադրյալ բոլոր գործոնների լույսի ներքո, մեղադրյալի բացակայությամբ դատական նիստը շարունակելը չի կարող, հետևաբար, դիտվել որպես Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների և, մասնավորապես, վերոնշյալ դրույթների խախտում:

***Զանան ընդդեմ Թուրքիայի (Zana v. Turkey), 18954/91, 25.11.1997թ.***

69. Սույն գործով Դատարանը նշում է, որ պրն Զանային չի խնդրվել ներկա գտնվել Դիարբեքիրի Ազգային անվտանգության դատարանի նիստին, որը նրան դատապարտել էր տասներկու ամիս ժամկետով ազատազրկման... Քրեական դատավարության օրենս-

գրքի 226-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն,՝ Այդմի Ասսիզների դատարանին Ազգային անվտանգության դատարանի կողմից վերապահված իրավասության սահմաններում խնդրվել է հոգուտ իր պաշտպանության նրանից ապացույցներ պահանջել...

71. Հաշվի առնելով այն հանգամանքը, թե դա ինչ հետևանքներ կունենար պրն Զանայի համար, ով դատապարտվել էր տասներկու ամիս ազատազրկման, Ազգային անվտանգության դատարանը չէր կարող դատական քննության արդարության պայմաններում դատավճիռ կայացնել առանց դիմողի կողմից ներկայացված ապացույցների ուղղակի գնահատման... Եթե դիմողը ներկա գտնվեր դատական նիստին, նա հնարավորություն կունենար, մասնավորապես, ասելու, թե ինչ նպատակով է նա այդ ցուցմունքները տվել և ինչ պայմաններում է հարցաքննությունը կատարվել, լրագրողներին հրավիրելու որպես վկա կամ խնդրելու ձայնագրության վերծանում:

72. Ո՛չ Այդմի Ասսիզների դատարանի «անուղղակի» նիստը, ո՛չ Դիարբեքիրի Ազգային անվտանգության դատարանի նիստին դիմողի փաստաբանների մասնակցությունը չեն կարողացել փոխարինել դիմողի բացակայությանը:

73. Հետևաբար, Դատարանը գտնում է... որ պաշտպանության իրավունքին նման միջամտությունը չի կարող արդարացված լինել՝ հաշվի առնելով ժողովրդավարական հասարակությունում Կոնվենցիայի իմաստով արդար դատական քննության իրավունքի կայուն տեղը:

*բ. Լսված լինելու անհրաժեշտությունը*

***Կոնստանտինեսկուն ընդդեմ Ռումինիայի (Constantinescu v. Romania), 28871/95, 27.06.2000թ.***

58. Սույն գործով Դատարանը նշում է, որ առաջին ատյանի դատարանի արդարացման որոշումը բեկանելով՝ Բուխարեստի Շրջանային դատարանը դիմողին առաջադրված մեղադրանքի հարցը որոշել է՝ նրան դատապարտել է զրպարտության համար՝ առանց հետազոտելու նրա ներկայացրած ապացույցները: Դատարանը բավարարված չէ Կառավարության այն փաստարկով, որ սույն գործով բավարար էր այն, որ դիմողը դատարանին դիմել է վերջինը: Առաջին հերթին Դատարանը նշում է, որ Կառավարությունը և դիմողը համաձայնության չեն եկել այն հարցում, թե արդյոք դիմողը՝ դատարանին փաստացիորեն դիմել է վերջինը: Երկրորդ, այն նշում է, որ թեև դիմողի՝ վերջինը դատարանին դիմելու իրավունքը կարևոր է, այն չի կարող հավասարեցվել գործի քննության ընթացքում դատարանի կողմից լսված լինելու նրա իրավունքին:

59. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ Բուխարեստի Շրջանային դատարանը դիմողին առաջադրված քրեական մեղադրանքը հաստատված է համարել և նրան մեղավոր դիտել զրպարտության

մեջ՝ առանց նրան հնարավորություն ընձեռելու ապացույց ներկայացնել և պաշտպանել իրեն: Այն գտնում է, որ Բուխարեստի Շրջանային դատարանը պետք է հետազոտեր դիմողի ներկայացրած ապացույցները՝ անդրադառնալով, մասնավորապես, այն հանգամանքին, որը հաշվի է առել նրան առաջադրված քրեական մեղադրանքի հիման վրա նրան դատապարտած առաջին ատյանի դատարանը:

*գ. Ապացույցներ ներկայացնելու հնարավորությունը*

***Գեորգիոս Պապագեորգիոն ընդդեմ Հունաստանի (Georgios Papageorgiou v. Greece), 59506/00, 09.05.2003թ.***

37. ...սույն գործը վերաբերում է ոչ թե ապացույցը թաքցնելուն, այլ որպես մեղադրանքի ապացույց օգտագործվող փաստաթղթերի բնօրինակները ներկայացնելու կարգադրություն անելը մերժելուն: Դատավարության որևէ փուլում գործը քննող դատարանները չեն կարողացել հետազոտել բանկի համակարգչի գրանցամատյանից արված քաղվածքները կամ չեկերի բնօրինակները, կամ ստուգել, թե արդյոք ներկայացված պատճենները համապատասխանում են բնօրինակներին: Բացի դրանից, առաջին ատյանի դատարանը կարգադրել էր ոչնչացնել չեկերը, նշելով, որ մոռացել է, որ դրանք դիմողի գործով առանցքային ապացույցներ են: Խարդախության համար դիմողի դատապարտումն առավելապես հիմնված է եղել քննարկվող չեկերի լուսապատճենների վրա: Վերաքննիչ դատարանի դատավճռից պարզ է դառնում, որ խարդախությունը բացահայտվել է չեկերի և համակարգչի միջոցով, որն անհրաժեշտ է եղել բանկի կենտրոնական համակարգչի տվյալները փոփոխելու համար: Այդ հանգամանքներում, Դատարանը գտնում է, որ չեկերի բնօրինակների ներկայացումը կենսական նշանակություն է ունեցել դիմողի պաշտպանության համար, քանի որ դրա միջոցով, ինչպես ինքն է նշել, նա կկարողանար ցույց տալ, որ վճարման կարգադրություններն արվել են ոչ թե իր, այլ բանկի այլ աշխատակիցների կողմից, ինչի արդյունքում դատավորները կեզրակացնեին, որ խարդախության մեղադրանքն անհիմն էր...

39. Հաշվի առնելով այն փաստը, որ հակառակ նրա պարբերական խնդրանքներին, կարևոր ապացույցները պատշաճ կերպով չեն ներկայացվել և հետազոտվել դատարանում՝ դիմողի մասնակցությամբ, Դատարանը եզրակացնում է, որ քննարկվող դատավարությունը, ամբողջությամբ վերցրած, չի բավարարել արդար դատական քննության պահանջները:

40. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի (d) կետի խախտում:

***Փերնան ընդդեմ Իտալիայի (Perna v. Italy) [GC], 48898/99, 06.05.2003թ.***

31. ...Դատարանն Իտալիայի դատարանների հետ համաձայնում է այն հարցում, որ եթե անգամ ենթադրենք, որ գործի նյութերին երկու հոդվածների կցումը և պրն Կասելիից ցուցմունք վերցնելը կարող է լույս սփռել վերջինիս քաղաքական ուղղվածության և երրորդ կողմի հետ նրա կապի վրա, միևնույն է, այդ միջոցները հնարավորություն չէին տա ասելու, որ նա չի ապահովել իր պարտականություններին բնորոշ անկողմնակալության, անկախության և օբյեկտիվության սկզբունքների իրականացումը: Այդ վճռորոշ առումով երբևէ դիմողը չի փորձել ապացուցել ենթադրաբար այդ սկզբունքներին հակասող վարքագծի առկայությունը: Հակառակ դրան, նրա պաշտպանությունը կայացել է նրանում, որ դրանք կարևոր դատավճիռներ են հանդիսացել և ապացուցման կարիք չեն ունեցել:

32. Վերոգրյալ դատողությունների լույսի ներքո, Դատարանը գտնում է, որ այն որոշումները, որոնցով ներպետական իշխանությունները մերժել են դիմողի խնդրանքները, 6-րդ հոդվածի իմաստով քննադատության ենթակա չեն, քանի որ նա չի սահմանել, որ փաստաթղթային ապացույցներ ներկայացնելու և տուժողից ու վկաներից ցուցմունքներ վերցնելու վերաբերյալ նրա խնդրանքներն օգտակար կլինեն ապացուցելու համար, որ պրն Կասելիին մեղսագրվող առանձնահատուկ վարքագիծն իրականում առկա է եղել: Այդ տեսակետից ելնելով, հետևաբար, չի կարելի ասել, որ պրն Կասելիի դեմ հարուցված զրպարտության հետ կապված վարույթն անարդար է եղել՝ հաշվի առնելով ապացույցների ձեռքբերման եղանակները ...Հետևաբար, տեղի չի ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի (d) կետի խախտում:

### 9. Վարույթի նշանակման անհրաժեշտությունը

***Կոումն ընդդեմ Բելգիայի (Coëme v. Belgium), 32492/96, 32547/96, 32548/96, 33209/96 և 33210/96, 22.06.2000թ.***

99. ...Կասկած չկա առ այն, որ Վճռաբեկ դատարանը, որը Բելգիայի օրենսդրության համաձայն միակ դատարանն է, որին ընդդատյա էր պրն Կոումի գործը, հանդիսացել է «օրենքով սահմանված կարգով ստեղծված դատարան»...

100. Դատարանը նշում է, որ Սահմանադրության 103-րդ հոդվածի կիրառմանն ուղղված որևէ օրենք չի գործել այն ժամանակ, երբ դիմողները կանգնել են Վճռաբեկ դատարանի առջև... Թեև 103-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Պառլամենտը պետք է սահմանի Վճռաբեկ դատարանում իրականացվող վարույթի ընթացակարգը, և 1831թ. փետրվարի 7-ի Սահմանադրության 139-րդ հոդվածն ամրագրում է դրա՝ հնարավորինս շուտ իրականացումը... Երբ 1996թ. փետրվարի 5-ին վարույթը բացվեց... Վճռաբեկ դատարանի նախագահն ինքը հաստատեց, որ կիրառվելու է ընդհանուր իրավասության քրեական դատարաններում իրականացվող վարույթը, նշելով, որ

գործը քննվելու է Քրեական գործերով նախնական քննության մասին օրենսգրքի 190-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

101. Սակայն Կառավարությունն ընդունել է, որ ընդհանուր իրավասության քրեական դատարաններում վարույթը չպետք է իրականացվի այնպես, ինչպես Վճռաբեկ դատարանում, որը գործը քննում է ամբողջ կազմով: Իր՝ 1996թ. փետրվարի 12-ի միջանկյալ դատական ակտում… Վճռաբեկ դատարանը նշել է, որ ընդհանուր իրավասության քրեական դատարաններում վարույթը պետք է իրականացվի այնպես, որ համապատասխանի «Վճռաբեկ դատարանում ամբողջ կազմով գործի քննության վարույթը կարգավորող դրույթներին»: Որպես դրա հետևանք՝ կողմերը չեն կարողացել նախապես որոշել իրականացման ենթակա վարույթի բոլոր հանգամանքները: Նրանք չեն կարողացել կանխատեսել, թե ինչ եղանակով է Վճռաբեկ դատարանը լրացնելու կամ փոփոխելու քրեական վարույթի բնականոն ընթացքը կարգավորող դրույթները, որոնք սահմանվել են Բելգիայի պառլամենտի կողմից:

Դա անելիս՝ Վճռաբեկ դատարանն անորոշության տարր է ցուցաբերել՝ չհստակեցնելով, թե ինչ կարգավորումներ են նախատեսվել կիրառված սահմանափակումներում: Թեև Վճռաբեկ դատարանը չի օգտագործել այդ հնարավորությունը, սակայն այն իրեն վերապահել է ընդհանուր իրավասության քրեական դատարաններում դատավարությունը կարգավորող կանոններում որոշ փոփոխություններ կատարելու իրավասություն, հատկապես դժվար էր պաշտպանության խնդիրը, քանի որ նախապես պարզ չի եղել, թե առկա կարգավորումը դատավարության ընթացքում կիրառվելու է, թե՝ ոչ:

102. Դատարանը կրկնում է, որ այն սկզբունքը, ըստ որի՝ քրեական դատավարության կանոնները պետք է ամրագրվեն օրենքում, հանդիսանում է օրենքի ընդհանուր սկզբունք: Այն հավասարազոր է այն պահանջին, ըստ որի՝ նյութական քրեական իրավունքը պետք է սահմանվի օրենքով և տեղավորվի "*nullum judicium sine lege*" սկզբունքի սահմաններում: Այն նախատեսում է որոշակի պահանջներ՝ կապված վարույթի պայմանների հետ և նպատակ է հետապնդում երաշխավորելու արդար դատաքննությունը և դրա արդյունքում՝ նաև հնարավորությունների հավասարությունը ...Դատարանը եզրակացնում է, որ դատավարական կանոնների առաջնային նպատակն իշխանության ներկայացուցիչների չարաշահումներից մեղադրյալի և, հետևաբար՝ նաև պաշտպանության կողմի պաշտպանությունն է, որոնց վրա օրենսդրական բացերը և անհստակությունն ավելի հաճախ են անդրադառնում:

103. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ անհստակությունը հետևանք է դիմողին մեղադրանք առաջադրելու գործընթացը կարգավորող դատավարական կանոնների բացակայության, որը կնպաստեր նրան անբարենպաստ վիճակի մեջ չդնելուն և պրն Սոյեմին Կոնվեն-

ցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արդար դատաքննության իրավունքից չզրկելուն:

***Կլեսը և այլոք ընդդեմ Բելգիայի (Claes and Others v. Belgium), 46825/99 և 6 այլ, 02.06.2005թ.***

35. Ինչպես նշել է Կառավարությունը՝ սույն գործում առկա է մեկ նոր անվիճելի փաստ, ներկայումս առաջացած հարցերից ամենաէականին լուծում արդեն տրվել է Ինուսուպի գործում, որը հարուցվել էր Կոյեմի ու այլոց պահանջի առիթով և լուծում ստացել համապատասխան մարմինների, ավելի կոնկրետ՝ Վճռաբեկ դատարանի կողմից 1996թ. փետրվարի 12-ին ընդունված միջանկյալ վճռում: Վճռաբեկ դատարանի կողմից այս գործով ընդունված դատավարական որոշումներն ակնհայտորեն ունեն դատական նախադեպի բնույթ և Ինուսոպի դատավարությունը, որը լայնորեն մեկնաբանվել էր լրատվամիջոցների կողմից ու բազմաթիվ գիտական վերլուծությունների առիթ հանդիսացել, Ագուստա-Դասաուլտի դատավարության պաշտպանությունը ճանաչեց կարևոր ու էական այն բազմաթիվ դատավարությունների թվում, որ եղել են ու դեռ կլինեն: Առաջին երկու հայցվորները՝ պարոնայք Կլաեսն ու Կոյեմն այլևս չեն կարողանա հանդես գալ որպես այդպիսիք, քանի որ, ինչպես Դատարանն է հաստատել վերոնշյալ Կոյեմն ու այլոք գործում անորոշությունը, որն առկա է դատավարական նորմի բացակայության պատճառով, հայցվորին դնում է դատախազի համեմատ ոչ շահեկան վիճակում: Այս պնդումն առավել ևս ապացուցվում է այն հանգամանքով, որ պրն Կոյեմը երկու դատավարություններում էլ հանդես է եկել կողմի կարգավիճակով և պարոն Կլաեսի փաստաբաններից մեկը ներկա է եղել դրան՝ թեկուզև Ինուսոպ գործի ողջ ընթացքում ներկայացրել է պարոն Կոյեմին և ներկայումս էլ դատարանում միաժամանակ ներկայացնում է այդ երկու հայցվորներին: Հավանականության տեսությունը մեծ մասամբ կախված է այն տեքստի բովանդակությունից, որին խոսքը վերաբերում է, այն ոլորտից, որին այն վերաբերում է, ինչպես նաև դրա հասցեատերերի թվից ու կարգավիճակից: Առաջին երկու հայցվորները փաստորեն կարողացել են թերևս իրենց փաստաբանի միջոցով կամ իրենց տեղեկացված խորհրդատուների շնորհիվ անցնել միանգամից կոնկրետ Ինուսոպ դատավարության դատական նախադեպերի պարզաբանմանը:

36. Այս համատեքստում, չի երևում, որ քննվող գործում առաջին երկու հայցվորները եղել են դատախազի համեմատ ոչ շահեկան վիճակում: Դիմողների վնասները մնում են տեսական ու վերացական, և դիտարկված իրավիճակում նրանք փաստորեն չեն բավարարում ոչ շահեկան վիճակի համար սահմանված նվազագույն կոնկրետ չափանիշը, այսինքն՝ նրանց պաշտպանության կազմակերպման անհնարինության իրենց, այսպես կոչված, դատավարության մասին անտեղյակ լինելու պատճառով կամ դրա շուրջ ունեցած անորոշության ու կասկած-

ների պատճառով: Փաստացի քննվող գործում ոչինչ ցույց չի տալիս, որ հնարավորությունների հավասարությունը պահպանված չի եղել:

37. Դատարանը հաստատում է, որ վնասի վերաբերյալ գանգատի քննությունը թույլ չի տալիս հաստատել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի խախտման մասին պնդումը:

## 10. Հարկադրանքի միջոցների կիրառումը

***Գորոդնիչևն ընդդեմ Ռուսաստանի (Gorodnichev v. Russia), 52058/99, 24.05.2007թ.***

103. Դատարանը նախևառաջ նշում է, որ կալանավորված հայցվորը 1999թ. փետրվարի 5-ի և 22-ի դատական լսումների ժամանակ ձեռնաշղթաներ է կրել: Կողմերի միջև չկա որևէ տարաձայնություն, որ նա կարող էր ուժ գործադրել: Դիմողը, սակայն, չի պնդել, որ ձեռնաշղթաներ կրելն իրեն ֆիզիկապես խանգարում է:

104. Դատարանը հիշեցնում է, որ արդարացի դատաքննության տեսանկյունից, Կառավարությունը, ինչպես նաև ներքին դատական ատյաններն իրենց որոշումներում հաստատել են այն փաստը, որ ձեռնաշղթաներ կրելը չի համապատասխանել հայցվորի պաշտպանվելու իրավունքին, որը նախատեսված է Քրեական դատավարության օրենսգրքի 46-րդ հոդվածով: Այստեղից դատարանը եզրակացնում է, որ տվյալ դեպքում ձեռնաշղթաների օգտագործումը չէր համապատասխանում հայցվորի կալանքի պայմաններին:

105. Իր հերթին Դատարանը գործի նյութերից չի գտնում, որ Կիրովսկի դատարանի առջև առանց ձեռնաշղթաների ներկայանալը վնաս հասցնելու, փախուստի կամ դատաքննության ընթացքի վրա ազդելու վտանգ կարող էր ներկայացնել: Այն գտնում է՝ հաշվի առնելով, որ ձեռնաշղթաների օգտագործումը նպատակ ուներ սահմանափակել հայցվորի հնարավորությունները և գտնում է, որ տվյալ միջոցը անհամաչափ է Կառավարության մատնանշած հանրության անվտանգության պահպանման անհրաժեշտության հետ:

106. Ինչ վերաբերում է տվյալ միջոցի հասարակական բնույթին, կողմերն այդ կապակցությամբ տարբեր կարծիքներ են հայտնել: Ըստ Կառավարության՝ 1999թ. փետրվարի 5-ի և 22-ի դատական լսումները հետաձգվել են, և հայցվորը երկարատև չէր մնացել հանրության առջև: Դիմողը, իր հերթին, վիճարկում է փաստերի նման նկարագրությունը և հաստատում, որ դատալսումները կայացել են:

107. Դատարանը կարծում է, որ գործի նյութերը, այդ թվում՝ նաև Կառավարության կողմից կազմված, հաստատում են հայցվորի վարկածը: Մասնավորապես, Ռուսաստանի Դաշնության Վճռաբեկ դատարանի վերադաս մարմինն իր՝ 2001թ. հունվարի 16-ի և Նովոսիբիրսկի շրջանային դատարանի դատավորների խորհուրդն իր՝ 2001թ. փետրվարի 8-ի վճռով հաստատել են, որ «1999թ. փետրվարի 5-ի և 22-ի դատալսումների ընթացքում հայցվորը ձեռնաշղթաներ է կրել» և խնդրել

է, «ձեռնաշղթաները հանվեն, որպեսզի ինքը կարողանա գրառումներ կատարել իր պաշտպանության նպատակով», համաձայն Վճռաբեկ դատարանի նախագահի տեղակալի՝ «դատալսումների ընթացքում կիրառվող նախազգուշացումները չեն արդարացնում նման միջոցի կիրառումը»: Ներքին դատական ատյանների կողմից կազմված այս փաստաթղթերը, Դատարանի կարծիքով, հերքում են Կառավարության վարկածը և հաստատում այն փաստը, որ գործերի դատական լսումներն անխափան են ընթացել: Բացի դրանից, եթե դրանք իրականում հետաձգվել են, ապա դժվար է հասկանալ հանրությանը հայցվորից պաշտպանելու մասին իշխանությունների մտահոգությունը:

108. Այսպիսով, եթե նույնիսկ ապացուցված չէ, որ դատավարության ընթացքում կիրառված միջոցը հայցվորին նսեմացնելու և վիրավորելու նպատակ ուներ, Դատարանը գտնում է, որ 1999թ. փետրվարի 5-ի և 22-ի հրապարակային դատալսումներին հայցվորի ձեռնաշղթաներով ներկայանալը, բացառությամբ այն դեպքի, երբ տվյալ միջոցի կիրառումն անհրաժեշտ է եղել հասարակական անվտանգությունը և արդարադատության անխափան իրականացումն ապահովելու համար, Կոնվենցիայի 3-րդ հոդվածի շրջանակներում այն դիտարկվում է արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունք:

109. Արդյունքում, խախտվել է տվյալ իրավական նորմը:

## IX. ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

### 1. Որևէ մեկի մեղադրելու իրավունքի բացակայությունը

***Պերեզն ընդդեմ Ֆրանսիայի (Perez v. France) [GC], 47287/99, 12.02.2004թ.***

70. Դատարանը գտնում է, որ նման գործերով 6-րդ հոդվածի կիրառելիությունը սահմանափակ է: Այն նշում է, որ Կոնվենցիան չի նախատեսում, ինչպես պահանջում է դիմողը, «անհատական վրեժի» կամ *«actio popularis»* որևէ իրավունք: Այսպիսով, երրորդ անձանց՝ քրեական հանցագործության մեջ մեղադրելու կամ դատապարտելու իրավունքը չի կարող անկախ ձևով իրականացվել. այն պետք է տարանջատվի տուժողի՝ ներպետական իրավունքով սահմանված կարգով քաղաքացիական վարույթ հարուցելու իրավունքից, եթե անգամ այն կոչված է միայն ապահովելու խորհրդանշական փոխհատուցումը կամ պաշտպանելու այնպիսի քաղաքացիական իրավունքը, ինչպիսին է «բարի համբավը»...

***Յանկովիցն ընդդեմ Խորվաթիայի (Jankovic v. Croatia), 38478/05, 05.03.2009թ.***

48. ...առանձին անձանց կողմից բռնի գործողությունների կատարումն արգելված է Քրեական օրենսգրքի մի շարք դրույթներով: Դատարանը գտնում է, որ Խորվաթիայի քրեական իրավունքը տար-

բերակում է այն քրեական հանցագործությունները, որոնք պետք է քննվեն Պետական մեղադրողի գրասենյակի կողմից կամ սեփական նախաձեռնությամբ կամ անհատական հայտարարության հիման վրա, այն հանցագործություններից, որոնք պետք է քննվեն մասնավոր մեղադրանքի շրջանակներում: Վերջին խումբը վերաբերում է նվազ վտանգավոր հանցագործություններին: Դատարանը նաև նշում է, որ դիմողը հայտարարել է, որ իր նկատմամբ կատարված բռնի գործողությունները, *inter alia,* հանդիսանում են բռնի վարքագծի և սպառնալիքի դրսևորումներ: Այս երկու հանցագործությունների քննությունը պետք է իրականացվեր Պետական մեղադրողի գրասենյակի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ՝ կապված առաջին հանցագործության հետ, և մասնավոր մեղադրանքի շրջանակներում՝ կապված երկրորդի հետ:

49. ...Երբ Գրասենյակը որևէ հիմքով մերժում է մեղադրանք առաջադրել այն քրեական հանցագործություններով, որոնց վերաբերյալ մեղադրանքները պետք է ներկայացվեն Պետական մեղադրողի գրասենյակի կողմից կամ սեփական նախաձեռնությամբ կամ անհատական դիմումի հիման վրա, տուժող կողմը կարող է ինքնուրույն իրականացնել մեղադրական գործառույթ՝ հանդես գալով որպես լրացուցիչ մեղադրող: Հակառակ դրա, մասնավոր մեղադրանքը սկզբից ևեթ հարուցվում է մասնավոր մեղադրողի կողմից: Բացի դրանից, տվյալ ժամանակահատվածում ներկայացված քրեական մեղադրանքը, որը վերաբերում է մասնավոր մեղադրանքի շրջանակներում գործ հանդիսացող քրեական հանցագործությանը, հանդիսանում է մասնավոր մեղադրանք....

50. ...Դատարանը չի կարող ընդունել դիմողի այն փաստարկը, որ նրա կոնվենցիոն իրավունքները կարող են ապահովվել, եթե միայն իր վրա հարձակում գործած անձինք մեղադրվեն Պետության կողմից, և որ Կոնվենցիան պահանջում է պետական մեղադրողի առկայություն: ...Դատարանը բավարարված է նրանով, որ սույն գործով ներպետական իրավունքը հնարավորություն է տալիս դիմողին մեղադրանք ներկայացնել իր վրա հարձակում գործած անձանց դեմ՝ կամ որպես մասնավոր մեղադրող կամ որպես տուժող կողմ, որը լրացուցիչ մեղադրողի գործառույթ է իրականացնում, և որ Կոնվենցիան բոլոր գործերով չի պահանջում պետական մեղադրողի առկայություն...

52. ...նվազ ծանրության մարմնական վնասվածք պատճառելու հետ կապված մասնավոր մեղադրանք չներկայացնելու, այլ դրա փոխարեն իր վրա հարձակում գործած անձանց նկատմամբ բռնության կիրառման և լուրջ սպառնալիքի հիման վրա նախնական քննություն պահանջելու՝ դիմողի որոշումը համապատասխանում է Քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին՝ կապված տուժող կողմի՝ որպես լրացուցիչ մեղադրողի, դերի հետ:

53. ...նախնական քննություն սկսելու վերաբերյալ իր սկզբնական պահանջում դիմողն արդեն հստակեցրել էր, որ պահանջում է

նախնական քննություն, *inter alia,* 2003թ. հունիսի 6-ի իր հայտարարության հետ կապված, որում նշվել էր, որ երեք անձ հարձակում էին գործել նրա վրա: Նա նշել էր այդ անձանց անունները և հասցեները: Նա պնդել էր, որ բռնության դեպքերը, *inter alia,* հանդիսանում են հանցագործություններ՝ կապված սպառնալիքի և բռնություն գործադրելու հետ: Ի հիմնավորումն իր պնդումների՝ նա ներկայացրել էր գործին վերաբերող բժշկական փաստաթուղթ: Սակայն ներպետական իշխանությունները նրա պահանջն անընդունելի էին համարել՝ առանց հստակեցնելու, թե ինչ ծևական պահանջներ չեն պահպանվել:

54. Ճիշտ է, դիմողի հայտարարությունը ներկայացված չէր քրեական վարույթներով Պետական մեղադրողի գրասենյակ ներկայացվող հայտարարությունների համար սահմանված ծևով: Այս կապակցությամբ Դատարանը նշում է, որ սույն գործով չի ապահովվել դիմողի օրինական ներկայացուցչությունը: Նա եղել է գործազուրկ և ակնհայտորեն զուրկ է եղել սեփական միջոցներով իր իրավական ներկայացուցչությունն ապահովելու հնարավորությունից: Բացի դրանից, Քրեական դատավարության օրենսգրքի՝ գործին վերաբերող դրույթների համաձայն…, դիմողն անվճար իրավաբանական օգնության իրավունք չունի այն դեպքում, եթե այն հանցագործությունը, որի վերաբերյալ նա հայտարարություն է տվել, չի պատժվում երեք տարվանից ավելի ժամկետով ազատազրկմամբ:

55. Դատարանը նաև նշում է, որ սույն դեպքի վերաբերյալ առկա է եղել ոստիկանության արձանագրություն, որում ևս նկարագրվում է դիմողի նկատմամբ բռնության կիրառման դեպքը, և այն, որ Սպլիտի Տեղական պետական մեղադրողի գրասենյակի կողմից այս դեպքը հաշվառվել է: Այնուամենայնիվ, դժվար է ընդունել Սպլիտի Շրջանային դատարանի՝ գործը քննող դատավորի այն եզրակացությունը, որ նախնական քննություն իրականացնելու վերաբերյալ դիմողի խնդրանքը մերժվել է այն հիմքով, որ այն եղել է ոչ հստակ և կիսատ: Հակառակ դրան, Դատարանը գտնում է, որ դիմողը հստակ ներկայացրել է, որ խնդրում է նախնական քննություն իրականացնել իր նկատմամբ կիրառված բռնության փաստով: Նա շահագրգռություն է ցուցաբերել իր գործի նկատմամբ և լուրջ նպատակներ է ունեցել մեղադրելու իր վրա հարձակում գործած անձանց: Նրա փաստարկները գործը քննող իրավասու դատավորի համար բավարար են եղել նրա պահանջի հիման վրա վարույթ հարուցելու համար: Այսդ փաստարկները պարունակել են Քրեական դատավարության օրենսգրքի 188 (3)-րդ հոդվածով պահանջվող ամբողջ տեղեկությունը, մասնավորապես՝ այն անձի անհատական տվյալները, ում դեմ պահանջ է ներկայացվել, տվյալ հանցագործության նկարագրությունն ու իրավական որակումը, այն հանգամանքները, որոնք առաջացնում են հիմնավոր կասկած առ այն, որ նշված անձը կատարել է մեղսագրվող հանցանքը, և առկա ապացույցները:

56. Ինչ վերաբերում է Կառավարության այն պնդմանը, որ դիմողը չի հարուցել մասնավոր մեղադրանք, Դատարանը գտնում է, որ դիմողը ժամանակին ներկայացրել է քրեական մեղադրանք Սպլիտի Տեղական պետական մեղադրողի գրասենյակ… 2003թ. նոյեմբերի 11-ին այդ գրասենյակը որոշել է պաշտոնական նախնական քննություն չսկսել այն հիմքով, որ քննարկվող գործողությունը հանդիսանում է այնպիսի քրեական հանցագործություն, որի դեմ մեղադրանք պետք է ներկայացվի անձամբ տուժողի կողմից... Քրեական դատավարության օրենսգրքի 48(3)-րդ հոդվածի իմաստով այս հանգամանքներում դիմողի ներկայացրած քրեական մեղադրանքը պետք է դիտվի որպես մասնավոր… Սակայն իրավասու իշխանության ներկայացուցիչներն լիովին անտեսել են այդ կանոնը և դիմողի ներկայացրած քրեական մեղադրանքով վարույթ չեն հարուցել:

57. Վերոնշյալ դատողությունն առաջին հերթին ցույց է տալիս, որ Պետության իրավասու իշխանությունները որոշել են դիմողի նկատմամբ բռնություն գործադրած ենթադրյալ հանցագործներին մեղադրանք չառաջադրել: Բացի դրանից, իրավասու պաշտոնատար անձինք դիմողին մասնավոր մեղադրանք հարուցելու հնարավորություն չեն տվել: Վերջապես, ինչ վերաբերում է Կառավարության այն պնդմանը, որ դիմողին տրվել է նվազ վտանգավոր հանցագործությունների վարույթին համապատասխան պատշաճ պաշտպանություն, ապա Դատարանը նշում է, որ այդ վարույթները դադարեցվել են օրենքով ամրագրված սահմանափակումների պատճառով և այսպիսով եզրափակվել են՝ առանց հարձակում գործած անձանց մեղքի վերաբերյալ որևէ վերջնական որոշման կայացման: Այս տեսակետը հաշվի առնելով՝ Դատարանն այն կարծիքն է հայտնում, որ սույն գործով ներպետական իշխանությունների որոշումները եղել են ոչ արդյունավետ և կայացվել են ներառել Խորվաթիայի դատական իշխանության ներկայացուցիչների հետ համատեղ:

58. Դատարանի կարծիքով, վիճարկվող գործողությունները սույն գործի հանգամանքներում չեն ապահովել դիմողի ֆիզիկական անձեռնմխելիության պատշաճ պաշտպանությունը և ցույց են տվել, որ քրեական իրավունքում ամրագրված կառուցակարգերի կիրառումը սույն գործով եղել է թերի՝ այն իմաստով, որ հանգեցրել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված՝ Պետության պոզիտիվ պարտականության խախտման:

### 2. Որպես քաղաքացիական կողմ մեղադրանքին միանալու իրավունքի բացակայությունը

***Էռնստը և այլոք ընդդեմ Բելգիայի (Ernst and Others v. Belgium), 33400/96, 15.07.2003թ.***

49. Դատարանը բացահայտել է, որ ինչպես Բրյուսելի առաջին ատյանի դատարանի խորհուրդը, այնպես էլ վճռաբեկ դատարանը

կոչված էին որոշում կայացնելու ըստ ընթացակարգի, և որ հայցվորը վճռաբեկ դատարան է դիմել սոսկ հայտարարելու համար քրեական գործով քաղաքացիական հայց հարուցելու անհնարինության մասին, քանի որ հայցն ուղղված էր դատական անձեռնմխելիություն ունեցող անձի դեմ:

54. Այս առումով Դատարանի ուշադրությանն է արժանանում այն փաստը, որ համաձայն բելգիական օրենքի՝ քննիչի կողմից անձին որպես քաղաքացիական հայցվոր ճանաչելը քաղաքացիական հայց հարուցելու եղանակներից մեկն է, և որ տուժողները, իրականում, իրենց քաղաքացիական իրավունքները պաշտպանելու այլ միջոցներ ունեն: Տվյալ դեպքում, քանի որ տուժողների բողոքն ուղղված է եղել այլ անձանց և ոչ այդ պաշտոնատար անձի դեմ, նրանք կարող էին հայց հարուցել քաղաքացիական դատարանում այլ անձանց դեմ:

Ինչ վերաբերում է պաշտոնատար անձի դեմ քաղաքացիական գործ հարուցելուն, ապա այն կարգավորվում է Դատական օրենսգրքով նախատեսված սպառիչ դրույթներով, որոնց սահմաններում հնարավոր է պաշտոնատար անձանց «որպես կողմ ներգրավել»: Խոսքը վերաբերում է առանձին մեխանիզմին, որը կիրառվում է բացառիկ դեպքերում: Դատարանը կասկած է հայտնում առ այն, որ տվյալ դեպքում այդ դրույթը ենթակա էր կիրառման: Այն հաստատում է, որ Կառավարությունն իր եզրակացության մեջ առանձնահատուկ ուշադրություն չի դարձրել տվյալ դրույթին:

55. Դիմողները քաղաքացիական գործ չեն հարուցել անհատների դեմ, և հակառակը՝ քրեական գործով քաղաքացիական հայց հարուցելուն զուգահեռ, նույն հիմքերով 1995թ. նոյեմբերի 21-ին քաղաքացիական դատարանում, այս գործը դեռևս շարունակվում է:

Փաստերը ցույց են տալիս, որ քրեական գործով քաղաքացիական հայցը Վճռաբեկ դատարանի կողմից մերժելը և Գլխավոր դատախազի կողմից վերաքննիչ դատարանում հայցն առանց քննության թողնելը նրանց չի զրկել վնասների հատուցում ստանալու բոլոր իրավունքներից:

56. Այս պայմաններում Դատարանը գտնում է, որ սահմանափակվելով դատական անձեռնմխելիության հետ կապված առանձնահատկությունների ճանաչմամբ, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի տեսանկյունից դատարան դիմելու իրենց իրավունքի սահմանափակումները, ըստ էության, չեն խախտել նրանց՝ գործի դատական քննության իրավունքը:

### 3. Գործի նախնական քննությանը մասնակցելու հնարավորություն

***Սոթանին ընդդեմ Իտալիայի (Sottani v. Italy) (dec.), 26775/02, 24.02.2005թ.***

2. Դիմողը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 13-րդ հոդվածների իմաստով վիճարկել է այն, որ պետական մեղադրողը տվյալ գործով

նախնական քննության ընթացքում չի հանձնարարել կատարել դատական դիահերձում... Մինչդեռ Իտալիայի օրենսդրության իմաստով ակնհայտ է, որ տուժող կողմը չի կարող մինչև նախնական լսումներն սկսվելը ներգրավվել վարույթում՝ որպես քաղաքացիական կողմ ..., նախնական քննության փուլում նրանք օժտված են օրենքով նախատեսված իրավունքներով և լիազորություններով... Այդ իրավունքները ներառում են, օրինակ, հնարավորություն խնդրելու, որպեսզի դատախազը դիմի գործը քննող դատավորին անհապաղ ապացույց ներկայացնելու համար... և օրենքով սահմանված կարգով նշանակելու ներկայացուցիչ տուժող կողմի իրավունքներն ու պարտականություններն իրականացնելու համար ... Ավելին, այդ իրավունքների իրականացումը կարող է էական լինել վարույթին նրանց՝ որպես քաղաքացիական կողմի, արդյունավետ մասնակցելու համար, հատկապես, եթե, ինչպես սույն գործում է, որոշակի ապացույցներ կարող են ժամանակի ընթացքում վնասվել և այլևս կիրառելի չլինել վարույթի հետագա փուլերում: Ի լրումն դրա, տուժող կողմն իրավասու է առարկել վարույթի ցանկացած փուլում և, բացառությամբ վճռաբեկ վարույթի, կարող է խնդրել ապացույց կցել գործին...

Հետևաբար, Դատարանը գտնում է, որ վերոգրյալի հիման վրա, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը սույն գործով կիրառելի է:

Սակայն... դիմողը պետք է խնդրեր, որպեսզի պետական մեղադրողը դիմեր գործը քննող դատավորին՝ դատական հերձման արդյունքում ստացված ապացույցի անհապաղ ներկայացման համար: Քանի որ դիմողը չի օգտագործել ներպետական իրավունքով իրեն ընձեռված ընթացակարգը, Դատարանը գտնում է, որ դիմումի այս մասը պետք է մերժվի ներպետական միջոցներն սպառված չլինելու պատճառաբանությամբ...

***Մենեթն ընդդեմ Ֆրանսիայի (Menet v. France), 39553/02, 14.06.2005թ.***

48. Տվյալ դեպքում Դատարանը նշում է, որ հայցվորը, որը երբեք չի ներկայացվել պաշտպանի կողմից գործի նյութերին ծանոթանալու ոչ մի հնարավորություն չի ունեցել: Արդյունքում, այն գտնում է, որ նախաքննության նյութերին պաշտպանի մասնակցության իրավունքի սահմանափակումը կարող էր ազդել հայցվորի կողմից ներպետական դատական ատյաններին հիմնավորում ներկայացնելու վրա:

49. Այնուամենայնիվ, Դատարանը գտնում է, որ ֆրանսիական օրենսդրության համաձայն մեղադրյալները և քաղաքացիական գործի կողմերը, որպես ֆիզիկական անձինք, ենթակա չեն մասնագիտական գաղտնիքի պահպանման՝ ի տարբերություն փաստաբանների: Այսպես, այն փաստը, որ գործի նյութերին ծանոթանալու իրավունքը տրված էր փաստաբաններին՝ անմիջապես կամ նրա միջնորդությամբ, որի հետևանքով հայցվորը չէր կարող դրանց ծանոթանալ,

բխում է նախաքննության գաղտնիությունը պահպանելու անհրաժեշտությունից:

50. Դատարանը հիշեցնում է, որ նախաքննության ընթացքում գաղտնիության պահպանումը պայմավորված է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով պայմանավորված կողմերի անձնական կյանքն ու արդարադատության շահերը պահպանելու հանգամանքով և որ, եթե տվյալ հոդվածը կարող է որևէ դեր խաղալ գործն ըստ էության քննող դատարանին դիմելուց առաջ, ապա նախաքննության ընթացքում դրա կիրառման եղանակները կախված են քննության առանձնահատկություններից և գործի հանգամանքներից:

52. Վերանայելով բոլոր հանգամանքները և հաշվի առնելով մրցակցող շահերը, Դատարանը գտնում է, որ հայցվորի իրավունքների նկատմամբ կիրառված սահմանափակումներն անհամաչափ կերպով չեն խախտել հայցվորի արդար դատական քննության իրավունքը:

### 4. Վարույթի դադարեցումը և արդարացումը՝ որպես քաղաքացիական իրավունքի դադարեցման հիմք

***Կորդովան ընդդեմ Իտալիայի (Cordova v. Italy) (No 1), 40877/98, 30.01.2003թ.***

49. Սույն գործով Դատարանը նշում է, որ դիմողը, գտնելով, որ պրն Կոսիգասն իր վարքագծով զրպարտել է իրեն, հայց է ներկայացրել նրա դեմ և ներգրավվել քրեական դատավարությանը որպես քաղաքացիական կողմ: Այդ պահից սկսած այդ վարույթներն սկսել էին ապահովել նաև քաղաքացիական իրավունքների, մասնավորապես՝ իր բարի համբավի պաշտպանությունը, որի իրավասությունը դիմողն ուներ…:

50. Դատարանը նաև նշում է, որ Սենատն իր՝ 1997թ. հուլիսի 2-ի որոշմամբ հայտարարել է, որ պրն Կոսիգասի վարքագիծը ապահովված էր Սահմանադրության 68-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անձեռնմխելիությամբ…՝ այդպիսով անհնարին դարձնելով իր պատասխանատվությունը նախատեսող կամ վնասների փոխհատուցման իր պահանջն ապահովող ցանկացած քրեական կամ քաղաքացիական դատավարության շարունակելիությունը…

63. Դատարանը հաշվի է առնում, որ Պառլամենտի գործունեության հետ որևէ հստակ կապի բացակայությունը պահանջում է, որ այն նեղ մեկնաբանություն տա հետապնդվող նպատակի և կիրառված միջոցների համաչափության հասկացությանը...

64. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ սույն գործով կայացված որոշումները, որոնց պատասխան ներկայացնելու իրավունք պրն Կոսիգասին չի տրամադրվել, և այն, որ այլ ընթացակարգ չի իրականացվել ապահովելու համար դիմողի բարի համբավը, չի խախտվել հասարակական շահի և անձի հիմնարար իրավունքների

պաշտպանությունն ապահովելու միջև առկա հավասարակշռությունը:

65. Դատարանը նաև կարևորում է այն փաստը, որ Սենատի 1997թ. հուլիսի 2-ի որոշմամբ դիմողին չի տրամադրվել իր կոնվենցիոն իրավունքների արդյունավետ պաշտպանության ողջամիտ այլընտրանք…

66. Վերոգրյալի լույսի ներքո Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել դիմողի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատարան դիմելու իրավունքի խախտում:

***Գորում ընդդեմ Հունաստանի (Gorou v. Greece) (No 2) [GC], 12686/03, 20.03.2009թ.***

38. ...Դատարանը նշում է, որ ներպետական օրենսդրության համաձայն՝ արդարացման վերաբերյալ որոշման կայացման ժամանակ քաղաքացիական կողմը սկզբունքորեն իրավասու չէ ուղղակիորեն բողոքարկել այդ որոշումը կամ պահանջել, որ հանրային մեղադրողը բավարարում պահանջի Վճռաբեկ դատարանում: Այնուամենայնիվ, Դատարանն ընդունում է, որ կայացած դատական պրակտիկայի առկայությունը չի կարող անտեսվել սույն գործով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելի է՝ հաշվի առնելով Վճռաբեկ դատարանում դիմողի կողմից հանրային մեղադրողին ուղղված խնդրանքը: Նույն պրակտիկան պետք է հաշվի առնվեր հանրային մեղադրողի կողմից տրված պատասխանի պատճառաբանություններում:

39. Դատարանն արդեն նշել է, որ հանրային մեղադրողը սովոր է, թեև հակիրճ շարադրմամբ, պատասխանել քաղաքացիական կողմի՝ բողոք ներկայացնելու խնդրանքներին: Գործնականում, քաղաքացիական կողմը հանրային մեղադրողի ուշադրությունն է հրավիրում գործի որոշ հանգամանքների վրա, սակայն դատախազն ազատ է իր որոշումը կայացնել ներկայացված փաստարկները վերլուծելուց հետո:

40. Բացի դրանից, անհրաժեշտ է նշել, որ Քրեական դատավարության Օրենսգրքի 506-րդ հոդվածի իմաստով՝ հանրային մեղադրողի «դրական» որոշումն ուղղված չի եղել քաղաքացիական կողմին, այլ հանդիսացել է ինքնին դատախազի՝ օրենքով սահմանված կարգով ներկայացված բողոք: Նմանապես «բացասական» որոշումը նշանակում է, որ հանրային մեղադրողը հրաժարվել է իր՝ օրենքով սահմանված կարգով բողոքը ներկայացնելուց...

41. Ի վերջո, Դատարանը գտնում է, որ ինչ վերաբերում է Վճռաբեկ դատարանում գտնվող մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով բողոքի քննության և ընդունման նախնական ընթացակարգին, ապա նշվել էր, որ բողոքն ընդունող դատարանը որևէ իրավական դրույթի հիման վրա բողոքը մերժելիս պարտավոր չէ մանրամասն պատճառաբանել այն, քանի որ չի կարող աջակցել դրա հետագա իրականացմանը... Դատարանը գտնում է, որ նույն սկզբունքը կա-

րող է կիրառվել այն հանրային մեղադրողի նկատմամբ Վճռաբեկ դատարանում, ում քաղաքացիական կողմը խնդրել է իր անունից օրենքով սահմանված կարգով բողոք ներկայացնել:

42. Հետևաբար, դիմողի խնդրանքում ներառված ծեռագիր նշումն ուղղակի տեղեկություն էր պարունակում հանրային մեղադրողի կողմից կայացված որոշման վերաբերյալ: Ելնելով այդ հեռանկարից և հիմք ընդունելով առկա դատական պրակտիկան՝ հանրային մեղադրողը պարտավոր չէ հիմնավորել իր պատասխանը, նա պարտավոր է միայն քաղաքացիական կողմին պատասխան ներկայացնել: Եթե դատախազից պահանջվի ավելի մանրամասն պատճառաբանություն, ապա դրա արդյունքում Վճռաբեկ դատարանում նրա վրա կդրվի լրացուցիչ ծանրություն, որը չի բխում արդարացման դեմ օրենքով սահմանված կարգով բողոք ներկայացնելու վերաբերյալ քաղաքացիական կողմի խնդրանքի բնույթից: Հետևաբար, Դատարանը գտնում է՝ նշելով, որ «չկան բողոքարկման իրավական կամ պատճառաբանված հիմքեր Վճռաբեկ դատարան բողոք ներկայացնելու համար», հանրային մեղադրողը բավարար չափով պատճառաբանել է խնդրանքը մերժելու մասին իր որոշումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տեղի չի ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

### 5. Վարույթներին մասնակցելու սահմանափակումը

***Բերգերն ընդդեմ Ֆրանսիայի (Berger v. France), 48221/99, 03.12.2002թ.***

35. ...Քրեական իրավունքի համաձայն՝ Վճռաբեկ դատարան բողոք ներկայացնել կարող են քրեական դատավարության բոլոր կողմերը, ում շահերից բխում է օրենքով սահմանված կարգով բողոք ներկայացնելը: Թեև քաղաքացիական կողմի բողոքի ընդունելիությունը, ի տարբերություն սպառիչ կերպով թվարկված յոթ իրավիճակների, պայմանավորված է մեղադրանքի կողմի բողոքի առկայությամբ, սակայն այս սահմանափակումը բխում է նախնական քննության բաժինների կողմից կայացված դատավճիռների բնույթից և քրեական վարույթներում քաղաքացիական կողմին վերապահված դերից: Դատարանը Կառավարության հետ համաձայն է նրանում, որ քաղաքացիական կողմը քրեական դատավարությունում չպետք է անսահմանափակ իրավունք ունենա վարույթը կարճելու վերաբերյալ դատավճռի դեմ Վճռաբեկ դատարան բողոք ներկայացնելու...:

38. ...դիմողի՝ դատարան դիմելու իրավունքը, ինչպես դա երաշխավորված է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով, չի խախտվել Վճռաբեկ դատարան նրա ներկայացրած բողոքի ընդունելիության առումով պայմաններ դնելու արդյունքում: Անդրադառնալով քրեական դատավարությունում քաղաքացիական գործունեության դերին և ի լրումն դրա՝ նաև քաղաքացիական և մեղադրանքի կողմերի շահե-

րին, Դատարանը չի կարող ընդունել, որ հնարավորությունների հավասարության սկզբունքը սույն գործով խախտվել է: Այդ կապակցությամբ Դատարանը համաձայն է Կառավարության հետ, որ քաղաքացիական կողմը չի կարող դիտվել մեղադրանքին հակառակ կամ աջակից կողմ, քանի որ նրանց դերերն ու գործառույթները բավականին տարբեր են:

### 6. Դիմումները չբացահայտելը

***Չեսնեյն ընդդեմ Ֆրանսիայի (Chesnay v. France), 56588/00, 12.10.2004թ.***

20. Դիմողը բողոքում է, որ նախքան դատական նիստը ոչ ինքը և ոչ էլ իր փաստաբանը դատավորի օգնականից զեկույցի մասին հաղորդագրություն չեն ստացել, այն դեպքում, երբ դատախազն այն ստացել էր:

21. Դատարանը հիշեցնում է, որ օգնականի կողմից դատապարտյալին հաղորդագրություն չտրամադրելու հարցը 6-րդ հոդված 1-ին մասի շրջանակներում խնդիր չէ, եթե այն տրամադրվել է դատախազին դատական նիստից առաջ: Տվյալ դեպքում սա է իրավիճակը:

22. Դատարանը նաև հիշեցնում է, որ զեկույցը կազմված էր 2 մասից: Առաջինն իրենից ներկայացնում էր փաստերի, դատական ընթացակարգի և վճռաբեկ բողոքի հիմքերի նկարագրություն, իսկ երկրորդ մասը՝ գործի իրավական վերլուծությունը և այն վճռաբեկ կարգով վերանայելու մասին եզրակացությունը:

Դատարանի կարծիքով, եթե զեկույցի երկրորդ մասը, որում շարադրված էին խորհրդակցությունների սենյակում կայացած խոսակցությունները, ինչպես և դատավճռի նախագիծը, կարող է մնալ գաղտնի թե կողմերի և թե դատախազի համար, ապա առաջին մասը, որում չի խոսվում գաղտնի խորհրդակցությունների մասին, նույն պայմաններում պետք է տրամադրվի թե կողմերին և թե գլխավոր դատախազին:

23. Արդյունքում, խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին մասը:

### 7. Սահմանազանցող հետաձգում

***Թոմազին ընդդեմ Ֆրանսիայի (Tomasi v. France), 12850/87, 27.08.1992թ.***

125. ...Այս վարույթներով կայացված որոշումների հրապարակումը… ցույց է տալիս, որ գործը բարդ չի եղել: Ի լրումն դրա, դիմողը, Բորդոքսի մեղադրական բաժնում վիճարկելով որոշումը, չգտնելով պատասխան և խնդրելով, որ այդ բաժինը կարգադրի հետագա ուսումնասիրությունների իրականացումը, հազիվ թե նպաստել է դատավարությունների ավարտի հետաձգմանը... Հայտնաբերված

ձգձգումների համար պատասխանատվություն, ըստ էության, կրում են դատական իշխանությունները: Մասնավորապես, Բաստիայի հանրային մեղադրողը բաց է թողել ավելի քան տարիուկես՝ նախքան նախնական քննության իրավասու մարմին նշանակելու վերաբերյալ Վճռաբեկ դատարան դիմում ներկայացնելը… Բորդոքսի գործը քննող դատավորը պրն Թոմազիին լսել է միայն մեկ անգամ և չի կատարել որևէ քննչական գործողություն 1985թ. մարտից սեպտեմբեր և 1986թ. հունվարից 1987թ. հունվար ընկած ժամանակահատվածներում… Հետևաբար, տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում…

***Կավելին և Կիգլիոն ընդդեմ Իտալիայի (Calvelli and Ciglio v. Italy) [GC], 32967/96, 17.01.2002թ.***

65. Սույն գործի կապակցությամբ Դատարանը նշում է, որ դիտարկվող դատավարությունները, անկասկած, բարդ են եղել: Բացի դրանից, թեև այն բանից հետո, երբ 1989թ. հուլիսի 7-ին դիմողները ներգրավվել են գործին որպես քաղաքացիական կողմ, առաջին ատյանի դատարանում վարույթը հետաձգվել է (այսպես. 1991թ. հունիսի 12-ին Ե.Ս.-ի գործը դատարան հանձնելու և առաջին լսման միջև՝ 1992թ. հուլիսի 2-ին, անցել է մոտ մեկ տարի...), սակայն այլևս չեն եղել իշխանությունների կողմից անգործություն ցուցաբերելու ժամանակահատվածներ (բացառություն է առաջին լսման հետաձգումը, ինչն իրականացվել էր փաստաբանների վիճաբանության պատճառով...):

66. Այդ հանգամանքներում, Դատարանը գտնում է, որ վեց տարի, երեք ամիս և տասն օր տևողությամբ ժամկետը, որի ընթացքում դատավարությունն անցել է արդարադատության չորս փուլերը, չի կարող դիտվել ոչ ողջամիտ:

67. Հետևաբար, տեղի չի ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

## X. ՎԱՐՈՒՅԹԸ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ

### 1. Մասնակցությունից հրաժարվելը

***Կոլոցան ընդդեմ Իտալիայի (Colozza v. Italy), 9024/80, 12.02.1985թ.***

28. ...,Դատարանն այս պարագայում չի առնչվել մեղադրյալին, ով անձամբ ծանուցվել է, և ով, այդպիսով, տեղյակ լինելով մեղադրանքի հիմքերին, ուղղակիորեն հրաժարվել է ներկայանալու և իրեն պաշտպանելու իր իրավունքից: Իտալիայի իշխանությունները, հիմնվելով ոչ ավելի, քան կանխավարկածի վրա..., պրն Կոլոցային շնորհված «լատիտանտեի» կարգավիճակից բխեցրել են, որ տեղի է ունեցել նման հրաժարում:

Դատարանի կարծիքով, այս կանխավարկածը բավարար հիմնավորում չի ապահովում: Փաստերի հետազոտությունը չի բացահայտում, որ դիմողը որևէ պատկերացում է ունեցել իր դեմ հարուցված քրեական վարույթների մասին. նա հազիվ թե տեղյակ լիներ դրանց մասին՝ նախքան գործը քննող դատավորի կողմից և դրանից հետո դատարանի գրասենյակում տրված ծանուցումը: Ի լրումն դրա, նրան հայտնաբերելու փորձերը պատշաճ չեն եղել. դրանք սահմանափակվել են բնակարանով, որտեղ նա անարդյունք փնտրվել է 1972թ. (վիա Լոնգանեսի) և Գլխավոր մատենավարի գրառումներում նշված հասցեում (վիա Ֆոնտեիանա), թերևս հայտնի է եղել, որ նա այլևս այնտեղ չի ապրում... Այստեղ Դատարանը հատկապես կարևորում է այն փաստը, որ Հռոմի հանրային մեղադրողի գրասենյակի և Հռոմի ոստիկանության որոշ ծառայությունների հաջողվել էր, այլ քրեական դատավարության ենթատեքստում, գտնել պրն Կոլոցայի նոր հասցեն.... այսպիսով, հնարավոր է եղել հայտնաբերել նրան եթե անգամ, ինչպես Կառավարությունն արդարանալու համար նշել է, որևէ տվյալների բազա հասանելի չի եղել: Դժվար է Դատարանի կողմից բացահայտված այս իրավիճակը դիտել համապատասխան այն ջանասիրությանը, որը Պայմանավորվող պետությունները պետք է դրսևորեն համոզվելու համար, որ 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները... ապահովվել են պատշաճ կերպով...

Հետևաբար, Դատարան ներկայացված նյութերից չի պարզվում, որ պրն Կոլոցան հրաժարվել է իրականացնել ներկա գտնվելու և իրեն պաշտպանելու իր իրավունքը կամ որ նա փորձել է թաքնվել արդարադատությունից: Հետևաբար, անհրաժեշտ չի եղել որոշել, թե արդյոք քրեական հանցագործության մեջ մեղադրվող անձը, ով թաքնվում է արդարադատությունից, այդ պատճառով պետք է զրկվի քննարկվող իրավունքներով նախատեսված առավելությունից:

***Սոմոգյին ընդդեմ Իտալիայի (Somogyi v. Italy), 67972/01, 18.05.2004թ.***

70. ...դիմողը բազմիցս վիճարկել է իրեն վերագրվող ստորագրության նույնականությունը, որը հանդիսացել է միակ ապացույցն առ այն, որ մեղադրյալը տեղեկացված է եղել իր դեմ հարուցված վարույթի մասին: Չի կարող նշվել, որ դիմողի ցուցմունքներն առերևույթ են եղել, չեն ունեցել հիմնավորում՝ հատկապես հաշվի առնելով նրա ներկայացրած ստորագրության և հետադարձ ծանուցման թերթիկի վրա առկա ստորագրության միջև եղած տարբերությունները և դիմողի անվան (Tamas) և հետադարձ ծանուցման թերթիկի վրա ստորագրած անձի անվան (Thamas) միջև առկա տարբերությունները: Ի լրումն դրա, հասցեում թույլ տրված սխալներն այնպիսին են եղել, որ լուրջ խնդիրներ են առաջացրել այն վայրի հետ կապված, ուր նամակն ուղարկվել է:

71. Ի պատասխան դիմողի փաստարկների, Իտալիայի իշխանությունները մերժել են դիմողի փորձերը դիմելու ներպետական ըն-

թացակարգերի, և հրաժարվել են վերաբացել գործով վարույթը կամ բողոքարկման ժամկետ նախատեսել՝ առանց քննարկման առարկա դարձնելու հետադարձ ծանուցման թերթիկն ստորագրած անձի ինքնության հարցը, որը, Դատարանի կարծիքով, ընկած է գործի հիմքում: Մասնավորապես, որևէ քննություն չի իրականացվել վերհանելու համար վիճարկվող փաստերը և, չնայած դիմողի կրկնվող խնդրանքներին, չի կատարվել որևէ դատաձեռագրաբանական փորձաքննության ձևով համեմատություն ստորագրությունների միջև:

72. Դատարանը գտնում է, որ հաշվի առնելով ժողովրդավարական հասարակությունում արդար դատական քննության իրավունքի զբաղեցրած տեղը... Կոնվենցիայի 6-րդ հոդվածը յուրաքանչյուր ներպետական դատարանի վրա պարտականություն է դնում ստուգել, թե արդյոք մեղադրյալը հնարավորություն է ունեցել տեղեկացվելու իր դեմ հարուցված վարույթի վերաբերյալ, քանի որ սույն գործով այն վիճարկվել է այնպիսի հիմքով, որն ի սկզբանե չի եղել արժանահավատությունից ակնհայտ զուրկ...

73. Սույն գործով, սակայն, Բոլոնիայի Վերաքննիչ դատարանը և Վճռաբեկ դատարանն այդ ստուգումներից որևէ մեկը չի իրականացրել՝ այդպիսով զրկելով դիմողին, անհրաժեշտության դեպքում, Կոնվենցիայի պահանջներին հակասող իրավիճակում այն վիճարկելու հնարավորությունից: Այսպիսով, չի եղել մանրամասն հետազոտություն պարզելու համար, թե արդյոք հիմնավոր կասկածի բացակայության պայմաններում դատապարտված անձն աներկբա հրաժարվել է իր գործի քննությանը ներկա գտնվելու իրավունքից:

74. Դրանից բխում է, որ սույն գործով ազգային իշխանությունների կողմից կիրառված միջոցները չեն ապահովում Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված նպատակներին հասնելը:

75. Վերջապես, ինչ վերաբերում է Կառավարության պնդմանն առ այն, որ դիմողն ամեն դեպքում տեղեկացվել է դատավարությունների մասին այն լրագրողից, ով հարցազրույց է վերցրել նրանից կամ տեղական մամուլից, ապա Դատարանը նշում է, որ որևէ անձի իր դեմ ներկայացված մեղադրանքի վերաբերյալ տեղեկացնելն այնպիսի կարևորության իրավական ակտ է, որ պետք է իրականացվի դատավարական և նյութական պահանջներին համապատասխան, որոնք կարող են երաշխավորել դիմողի իրավունքների պատշաճ իրականացումը, և որքանով պարզ է դառնում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (a) կետից՝ անորոշ և ոչ ֆորմալ տեղեկությունը չի կարող բավարար համարվել...

***Մարիանին ընդդեմ Ֆրանսիայի (Mariani v. France), 43640/98, 31.03.2005թ.***

41. Տվյալ դեպքում Մ. Մարիանին չի հրաժարվել ներակայանալուց: Նա ֆիզիկապես անկարող էր, քանի որ Իտալիայում կրում էր իր պատիժը:

Այս առումով, Դատարանը նշում է, որ ֆրանսիական իշխանությունները, առանց հաշվի առնելու Քրեական վերաքննիչ դատավճիռը, ըստ որի շահագրգիռ անձի նկատմամբ հետախուզում էր հայտարարվել, տեղյակ էին հայցվորի դատված լինելու մասին, քանզի Վերաքննիչ դատարանի դատավճռի մասին նրան ծանուցվել էր կալանավայրում:

42. ...Հետևաբար, խախտվել են 6-րդ հոդվածի 1-ին մասը և 3-րդ մասի c, d, e ենթակետերը:

### 2. Իրավական ներկայացուցչություն

***Վան Գեյսեղեմն ընդդեմ Բելգիայի (Van Geyseghem v. Belgium) [GC], 26103/95, 21.01.1999թ.***

34. ...Յուրաքանչյուր անձի, ում քրեական մեղադրանք է ներկայացվել, պաշտպան ունենալու իրավունքն արդար դատական քննության հիմնական հատկանիշներից մեկն է: Մեղադրյալը չի զրկվում իր այս իրավունքից, եթե անգամ չի ներկայանում դատարան: Եթե անգամ օրենսդրությունն իրավասություն է վերապահում խոչընդոտել չհիմնավորված բացակայությունները, այն չի կարող որպես պատիժ նախատեսել իրավական օգնությունից զրկելու ձևով: Մեղադրյալների՝ դատարան ներկայանալու իրավաչափ պահանջը պետք է ապահովվի այլ կերպ, քան պաշտպանության իրավունքի սահմանափակումը: Դատարանը նշում է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասը… նախատեսում է, որ յուրաքանչյուր դեպքում Քրեական դատարանը կարող է կարգադրել մեղադրյալին դատարան ներկայանալ, և այս որոշման դեմ որևէ բողոք չի կարող ներկայացվել:

35. ...Եթե անգամ տիկին Վան Գեյսեղեմն իրեն պաշտպանելու մի քանի հնարավորություն է ունեցել, միևնույն է, Բրյուսելի վերաքննիչ դատարանը պարտավոր էր նրա փաստաբանին, ով ներկայացել էր դատարան, թույլատրել պաշտպանել նրան նրա բացակայությամբ:

Իրավամբ, սույն գործով քանի որ պրն Վերստրաետենի կողմից կիրառման ենթակա պաշտպանությունը համապատասխանում էր օրենքի դրույթներին... պրն Վերստրաետենն առարկել է օրենքով սահմանված սահմանափակման կիրառման դեմ, մի հանգամանք, որը Դատարանը դիտում է որոշիչ... Եթե անգամ, ինչպես Կառավարությունը նշել է, Վերաքննիչ Դատարանը պարտավոր էր սեփական նախաձեռնությամբ քննել օրենքով սահմանված սահմանափակման հարցը, անփոփոխ է մնում այն փաստը, որ փաստաբան ունենալն անփոխարինելի է վեճերի լուծման ժամանակ, և նա կոչված է իրականացնելու պաշտպանության իրավունքները: Բացի դրանից, 1993թ. հոկտեմբերի 4-ի դատավճռից չի երևում... որ այդ հարցին որևէ կարգավորում է տրվել:

36. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի և դրա հետ մեկտեղ՝ 6-րդ հոդվածի 3-րդ մասի (c) կետի խախտում:

***Կրոմբախն ընդդեմ Ֆրանսիայի (Krombach v. France), 29731/96, 13.02.2001թ.***

90. Սույն գործով Դատարանը գտնում է, որ Ֆրանսիայի քրեական դատավարության օրենսգրքի 630-րդ հոդվածի տառացի մեկնաբանության համաձայն՝ արգելվում է փաստաբաններին ներկայացնել այն մեղադրյալներին, ովքեր դատապարտվում են բացարձակ *in absentia,* և որ Ասսիզների դատարանի կողմից նման մեղադրյալի դատապարտումը բացառում է այդ կանոնի բացառման որևէ հնարավորություն:

Դատարանը գտնում է, սակայն, որ Ասսիզների դատարանը, որը գործը քննել է առանց ատենակալների մասնակցության, պետք է հնարավորություն ընձեռեր փաստաբաններին, ովքեր ներկա են եղել դատական նիստին, իրականացնելու մեղադրյալի պաշտպանությունը նրա բացակայությամբ, քանի որ սույն գործով նրանց ներկայացրած փաստարկը հիմնված էր օրենքի վրա..., մասնավորապես, դա վերաբերել է պետության քաղաքականության դեմ առարկությանը՝ հիմնված *per rem judicatam* և *non bis in idem* կանոնների վկայակոչման վրա... Կառավարությունը ենթադրություն չի արել առ այն, որ Ասսիզների դատարանը չպետք է իրավասու լիներ քննելու դիմողի փաստաբանների կողմից առարկություն ներկայացնելու թույլտվության հարցը: Ի վերջո, Դատարանը գտնում է, որ դիմողի փաստաբաններին չի թույլատրվել ներկայացնելու իրենց վստահորդներին Ասսիզների դատարանում քաղաքացիական հայցի քննության ընթացքում: Պաշտպանության իրականացման նման բացարձակ արգելքի միջոցով չներկայանալու համար դիմողին պատժելն ակնհայտորեն անհամաչափ է եղել:

91. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի և դրա հետ կապված՝ 6-րդ հոդվածի 3-րդ մասի (c) կետի խախտում:

### 3. Վերանայման անհրաժեշտություն

***Մեդենիցան ընդդեմ Շվեյցարիայի (Medenica v. Switzerland), 20491/92, 14.06.2001թ.***

57. Իրավամբ, Ժնևի Քրեական դատավարության օրենսգրքի 331-րդ հոդվածն սկզբունքորեն թույլատրում է *in absentia* դատապարտված անձանց նկատմամբ հարուցված վարույթների հետաձգում և ապահովում է գործի վերանայում ինչպես փաստական, այնպես էլ իրավական հիմքով: Սակայն սույն գործով Ժնևի Կանտոնի Արդարադատության դատարանը մերժել է դատապարտումը բեկանելու

վերաբերյալ դիմողի խնդրանքն այն հիմքով, որ նա չի ներկայացրել պատշաճ հիմնավորում իր բացակայության համար, ինչպես դա նախատեսված է այդ դրույթով, և որ գործի նյութերով չի հիմնավորվում այն դատողությունը, որ նա բացակայել է իր կամքից անկախ պատճառներով... Այդ դատավճիռը կայացվել էր Ժնևի Վճռաբեկ դատարանի և Դաշնային դատարանի կողմից: Դատարանի կարծիքով, ոչինչ թույլ չի տալիս ենթադրել, որ Շվեյցարիայի դատարանները գործել են ինքնիրավ կերպով կամ հիմնվել են ակնհայտ սխալ կանխադրույթների վրա...

58. ...,Դատարանը նաև գտնում է, որ դիմողն աջակցել է այն իրավիճակի վերհանմանը, որը խոչընդոտել է նրա՝ Ժնևի Ասսիզների դատարան ներկայանալուն: Այն մասնավորապես վկայակոչում է Դաշնային դատարանի կողմից 1991թ. դեկտեմբերի 23-ի դատավճռում արտահայտված տեսակետն այն մասին, որ դիմողը մոլորության մեջ է գցել Ամերիկայի դատարանին՝ տալով երկակի և անգամ դիտավորյալ սխալ ցուցմունքներ, հատկապես Շվեյցարիայում իրականացվող վարույթի վերաբերյալ՝ նպատակ ունենալով ապահովել այնպիսի որոշման կայացումը, որի արդյունքում անհնարին կդառնար իր գործի քննությանը նրա մասնակցությունը:

59. Վերոգրյալի լույսի ներքո և հաշվի առնելով այն, որ սույն գործը չի վերաբերել մեղադրյալին, ում չի տրամադրվել դատարան ներկայանալու ծանուցում... կամ ով հրաժարվել է փաստաբան ունենալուց..., Դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ Շվեյցարիայի իշխանություններին վերապահված հայեցողության սահմանները, դիմողի *in absentia* դատապարտումը և նրան վերաքննություն տրամադրելը մերժելը, որին նա ներկա էր գտնվելու, չի հանդիսացել անհամաչափ պատիժ:

***Սեժդովիցն ընդդեմ Իտալիայի (Sejdovic v. Italy) [GC], 56581/00, 01.03.2006թ.***

100. ...Օրենքի համաձայն՝ դիմողի մեղքի հաստատումը հանդիսանում է քրեական դատավարության նպատակը, որը դիմողի՝ փախուստի մեջ գտնված ժամանակ եղել է նախնական քննության փուլում:

101. Այդ հանգամանքներում, Դատարանը գտնում է, որ ցույց չի տրվել, որ դիմողը բավարար չափով իրազեկված է եղել իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման և իրեն առաջադրված մեղադրանքների մասին: Հետևաբար, Դատարանը չի կարող եզրակացնել, որ նա փորձել է թաքնվել վարույթից կամ աներկբա հրաժարվել է դատարան ներկայանալու իրավունքից...

103. Քանի որ Կառավարությունը վկայակոչել է դիմողի՝ ժամկետանց բողոք ներկայացնելու հնարավորությունը... դիմողը պետք է որ լուրջ դժվարությունների հետ բախված լիներ բողոք ներկայացնելու, դատավարական քայլեր ձեռնարկելու կամ վարույթից խուսափելու

իրավական նախապայմաններից մեկը բավարարելիս: Դատարանը նաև գտնում է, որ առկա են եղել անճշտություններ՝ կապված այդ նախապայմանի ապացուցման ծանրության բաշխման հետ... Խնդիրներ են առաջանում՝ կապված դիմողի իրավունքի հետ՝ չապացուցելու, որ նա չի ցանկացել թաքնվել վարույթից... Բացի դրանից, դիմողը, ով պետք է ունենար «արդյունավետ տեղեկություն դատավճռի վերաբերյալ» Գերմանիայում ձերբակալվելուց կարճ ժամանակ անց, ուներ ընդամենը տասն օր ժամկետանց բողոք ներկայացնելու համար: Որևէ ապացույց չկա առ այն, որ նա տեղեկացվել է վերաբացման հնարավորության, իր դատապարտումը բողոքարկելու և նման ընթացակարգի դիմելու կարճ ժամանակի առկայության մասին: Այս հանգամանքները, ինչպես նաև հաշվի առնելով այն դժվարությունները, որ օտարերկրյա պետությունում կալանավորված անձը կարող էր կրել արագ փաստաբան գտնելու առումով, ով տեղյակ էր Իտալիայի օրենսդրությունը և տալու նրան փաստերի հստակ նկարագրություն և մանրամասն ցուցումներ, որոնք առաջացրել են օբյեկտիվ դժվարություններ դիմողի կողմից ՔԴՕ 175-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ընթացակարգի կիրառման ժամանակ...

104. Դրանից բխում է, որ ՔԴՕ 175-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը բավարար կերպով չի երաշխավորում դիմողի հնարավորությունը գործի նոր քննության ժամանակ իր պաշտպանությունն իրականացնելու համար...

105. Վերոգրյալի լույսի ներքո, Դատարանը գտնում է, որ դիմողը, ով դատապարտվել է *in absentia* և որևէ կերպ ցույց չի տրվել, որ նա փորձել է փախչել կամ հրաժարվել է դատարան ներկայանալու իր իրավունքից, հնարավորություն չի ունեցել ձեռք բերել իր դեմ ներկայացված մեղադրանքի հանգամանքների նոր հիմնավորում այն դատարանի կողմից, որը լսել է իրեն՝ իր պաշտպանության իրավունքի պահպանմամբ:

106. Հետևաբար, սույն գործով տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում:

***Ստոիչկովն ընդդեմ Բուլղարիայի (Stoichkov v. Bulgaria), 9808/02, 24.03.2005թ.***

57. Սույն գործով դիմողը դատապարտվել էր *in absentia*... Չկա որևէ նշում, և դա չի փաստարկվել նաև պատասխանող Կառավարության կողմից, որ նա ուղղակիորեն կամ ենթադրաբար հրաժարվել է ներկայանալու և իրեն պաշտպանելու իրավունքից: Հետևաբար, որպեսզի նրա դատապարտմանը հանգեցրած վարույթները չդիտվեն «հրաժարում արդարադատության իրականացումից», նա պետք է հնարավորություն ունենա պահանջել դրանք վերաբացելու և իր ներկայությամբ հետազոտելու իր դեմ ներկայացված բռնաբարության հետ կապված մեղադրանքի հանգամանքները: Մինչև 2000թ. հունվարի 1-ը գործած Բուլղարիայի օրենքն ուղղակիորեն նման հնարավո-

րություն նախատեսում էր... Սակայն երբ դիմողը 2001թ. փետրվարին՝ իր ձերբակալումից մոտավորապես մեկ տարի հետո, խնդրել էր վարույթը վերաբացել ՔԴՕ նոր՝ 362a-րդ հոդվածի հիման վրա, Գերագույն վճռաբեկ դատարանը մերժել էր նրա խնդրանքն ըստ էության այն հիմքով, որ իրականացված վարույթի նյութերը ոչնչացվել են 1997թ., ինչի արդյունքում գործնականում անհնարին է դառնում գործի վերանայումը... Այս կապակցությամբ ուշադրության է արժանի այն, որ դիմողը հետագայում վարույթի վերաբացում պահանջել է Պերնիկի Շրջանային դատարանից, սակայն իր խնդրանքի պատասխանը չի ստացել... Այսպիսով, դիմողը զրկվել է այն դատարանից, որը լսել է իր գործը, իր դատապարտման հիմքում դրված մեղադրանքի նոր հիմնավորում ստանալուց:

58. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ դիմողի դեմ հարուցված քրեական դատավարությունը և նրան ներկայացված մեղադրանքների նոր հիմնավորումներ ձեռք բերելու անհնարինությունն այն դատարանի կողմից, որը լսել էր նրան, ակնհայտորեն հակասել է 6-րդ հոդվածում ամրագրված սկզբունքներին: Հետևաբար, 2000թ. փետրվարին նրա ազատության նախնական սահմանափակումը պետք է 5րդ հոդվածի 1-ին մասի (a) կետի իմաստով դիտվի անարդար, քանի որ իրականացվել է օրինական դատապարտումն ապահովելու նպատակով, և այն դադարել է այդպիսին լինելուց 2001թ. հուլիսի 19-ից հետո, երբ Գերագույն դատարանը մերժել է վերաբացել վարույթը: Այս եզրակացության արդյունքում անհրաժեշտ չի դառնում այլևս որոշել, թե դիմողը կալանավորվել է, արդյոք, նրա դատապարտումն ապահովելու նպատակով սահմանված ժամկետի խախտմամբ:

59. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

Տե՛ս նաև ստորև՝ **D.I.1**

### 4. Բացակայությունը պատիժ նշանակելիս

***Բ.-ն ընդդեմ Ֆրանսիայի (B v. France), 10291/83, 12.05.1986թ., DR 47, 59***

...եթե մեղադրյալը դատապարտվել է *in absentia*, իր բացակայությամբ, ապա նա հետագայում, իմանալով դատապարտման մասին, իրավասու է վարույթի վերաբացման պահանջ ներկայացնել, և այդպիսով նրա պաշտպանության իրավունքի իրականացումը չի թուլացվի այնպես, ինչպես դա տեղի է ունենում այդ իրավունքից զրկելու արդյունքում: Հանձնաժողովը գտնում է, որ նման հարցեր կարող են առաջանալ, եթե գործի հանգամանքներից պարզվի, որ *in absentia* դատապարտված մեղադրյալը որևէ փուլում տեղյակ չի եղել իր նկատմամբ հարուցված վարույթի մասին և այդպիսով խոչընդոտվել է նրա մասնակցությունը նախնական քննության փուլին: Սույն գործը

չի առնչվում այդ փուլին և նման հարց չի առաջանում, քանի որ, ինչպես դիմողն ինքն է նշել, նա մասնակցել է իր դեմ իրականացված բոլոր քննչական գործողություններին: Քրեական դատավարության օրենսգրքի 627-րդ և նույն օրենսգրքի 639-րդ բաժինների համաձայն՝ թեև *in absentia* դատապարտումից հետո վերաքննությունն ինքնաբերաբար վերացնում է դատապարտումը, սակայն վավերական են մնում մինչև գործը դատարան ուղարկելու մասին որոշման կայացումը կատարված գործողությունները: Հետևաբար, հիմք ընդունելով գործի հանգամանքները և հատկապես այն, որ դիմողը մասնակցել է նախնական քննությանը և հրաժարվել է դատարան ներկայանալու ծանուցումն ընդունել, Հանձնաժողովը գտնում է, որ դիմումը պետք է մերժվի ակնհայտորեն թերի հիմնավորված լինելու պատճառով...

## XI. ԴԱՏԱՎՃԻՌ

### 1. Մեղավոր ճանաչելը

*ա. Պատճառաբանման անհրաժեշտությունը*

***Պապոնն ընդդեմ Ֆրանսիայի (Papon v. France) (dec.), 54210/00, 15.11.2001թ.***

6. ...Պատճառաբանելու պահանջը կիրառվում է նաև ոչ սովորական դատավարություններում, մասնավորապես, ասսիզների դատարաններում, որտեղ ատենակալները պարտավոր չեն պատճառաբանել իրենց դատավճիռը:

Դատարանը նշում է, որ սույն գործով Ասսիզների Դատարանը իր դատավճռում վկայակոչել է ատենակալների պատասխանները, որոնք տրվել էին Ասսիզների դատարանի նախագահի կողմից առաջադրված 768 հարցերին, ինչպես նաև հաստատված համարված հանգամանքները և Քրեական դատավարության օրենսգրքի կիրառված հոդվածները: Թեև ատենակալները նախագահի կողմից առաջադրված յուրաքանչյուր հարցի կարող էին պատասխանել միայն «այո» կամ «ոչ», սակայն այդ պատասխանների վրա էր հիմնված ատենակալների որոշումը: Դատարանը գտնում է, որ այդ հարցերի հստակությունը բավարար չափով փոխարինում է ատենակալների պատասխաններում հիմնավորումների բացակայությանը:

Հետևաբար, Դատարանը գտնում է, որ Ասսիզների դատարանի կողմից արված պատճառաբանությունը եղել է բավարար Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով:

***Սալովն ընդդեմ Ուկրաինայի (Salov v. Ukraine), 65518/01, 06.09.2005թ.***

92. ...Դատարանը գտնում է, որ դիմողին չի տրամադրվել արդար դատական քննության իրավունք, քանի որ ներպետական դատարան-

ները պատճառաբանված պատասխան չեն ներկայացրել այն հարցին, թե ինչու Դոնեցկի Կույբիշևսկի Շրջանային դատարանն ի սկզբանե չի գտել որևէ ապացույց դիմողին դատապարտելու այն հանցագործության համար, որում նա մեղադրվել է, և 2000թ. մարտի 7-ին գործն ուղարկվել է լրացուցիչ նախաքննության, և արդեն 2000թ. հուլիսի 6-ին դիմողը մեղավոր է ճանաչվել ընտրողների իրավունքների խախտման համար: Պատճառաբանված որոշման բացակայությունը խոչընդոտել է նաև դիմողի կողմից վերաքննության փուլում այս հարցերը բարձրացնելուն...

***Բոլդեան ընդդեմ Ռումինիայի (Boldea v. Romania), 19997/02, 15.02.2007թ.***

31. Դատարանը նշում է, որ Թիմիսոարայի առաջին ատյանի դատարանը հայցվորին ենթարկել է վարչական տույժի՝ ապացուցելով փաստերը և գտնելով, որ տվյալ դեպքում առկա էր դիտավորության և գործի՝ հասարակական բնույթ ունենալու փաստը: Այնուամենայնիվ, Դատարանը չի անդրադարձել ոչ մի փաստական հանգամանքի, որը կարող էր հիմնավորել նրա մեղքի և արարքի հասարակական բնույթի վերաբերյալ եզրակացությունը: Այն սահմանափակվել է հաստատելով, որ տվյալ հանգամանքներն առկա էին այս գործում:

32. Տվյալ գործում, Դատարանը նշում է, որ առաջին ատյանի դատարանը չի անդրադարձել հանցակազմը կազմող բոլոր կողմերին և չի վերլուծել հայցվորի ներկայացրած ապացույցները՝ համարելով դրանք գործին չվերաբերող:

33. Ավելին, Դատարանը, որը որոշում է կայացրել հայցվորի՝ առաջին ատյանի դատարանի կողմից կայացրած դատավճռում հիմնավորման բացակայության մասին բողոքի հիման վրա, և չի անդրադարձել բողոքի հիմքերին: Եթե համարենք, որ 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրենց որոշումները հիմնավորելու պարտականությունը չի կարող համարվել որպես մանրամասն պատասխան, ապա անհրաժեշտ է հաստատել, որ այս դեպքում Թիմիսի Շրջանային դատարանը կողմերին միայն ուղարկել է առաջին ատյանի դատարանի որոշումը: Եթե նույնիսկ սա կարող է կազմել ցածր ատյանի կողմից բերված հիմքերի օգտագործման միջոցով պատճառաբանություն, հայցվորի դեմ հարուցված գործն արդարացիորեն գնահատելու համար անհրաժեշտ էր առաջին ատյանի դատարանը մանրամասնորեն և ամբողջական պատճառաբանված որոշում: Տվյալ դեպքում, ինչպես արդեն նշվեց, այս որոշումը բացակայում էր:

Այս հանգամանքները բավարար են, որպեսզի Դատարանը եզրահանգի, որ հայցվորը հիմքեր ունի պնդելու որ Թիմիսոարայի առաջին ատյանի դատարանի և Թիմիսի Շրջանային դատարանի որոշումները բավարարապես պատճառաբանված չեն, և որ նրան վարչական տուգանքի ենթարկելու գործն արդարացիորեն չի քննվել:

***Գրադինարն ընդդեմ Մոլդովայի (Gradinar v. Moldova), 7170/02, 08.04.2008թ.***

109. Սույն գործով, թեև Գ.-ն մահացել էր նախքան իր դեմ հարուցված գործի վերաքննությունը, սակայն նա մեղավոր ճանաչվեց առաջադրված մեղադրանքում: Դատարանը լուրջ վերապահումներ է անում այն իրավական համակարգերի համար, որոնք թույլ են տալիս մահացած անձանց նկատմամբ հարուցված գործերի քննությունն ու նրանց դատապարտումը՝ հաշվի առնելով այդ անձանց՝ իրենց պաշտպանելու ակնհայտ անհրական լինելը: Սակայն սույն գործի առանձնահատուկ հանգամանք է հանդիսանում այն, որ մահացած անձի ազգականը և իրավական ներկայացուցիչը խնդրել են շարունակել դատավարությունը՝ ապացուցելու համար նրա անմեղությունը…

111. Դատարանը նշում է, որ մի շարք դատողություններում Չիսինոյի Տարածաշրջանային դատարանի կարծիքը չի հակասել բարձրագույն ատյանների կարծիքներին և, հետևաբար, դրանք դիտել է որպես հաստատված հանգամանքներ… Դրանում ներառվում է նաև այն փաստը, որ Գ.-ն և այլ մեղադրյալները ձերբակալվել և կալանավորվել են իրականում տեղի չունեցած վարչական իրավախախտման հիմքով, կալանքի տակ գտնվելու ընթացքում նրանք հարցաքննվել են և ինքնախոստովանական ցուցմունքներ են տվել որևէ դատավարական երաշխիքի բացակայության պայմաններում… Որևէ կերպ չի կարող պատասխան գտնել այն դատողությանը, որ Գ.-ին անօրինական կերպով ցուցադրվել է Դ.Ս.-ի ցուցմունքի տեսագրությունը՝ հանցանքի կատարման վայրում… ձեռք բերելու համար համապատասխան ցուցմունքներ մյուս բոլոր մեղադրյալներից:

112. Դատարանը նաև նշում է, որ բարձր ատյանները հիմք չեն ընդունել ստորադաս ատյանների դատողություններն այն մասին, որ Գ.-ն և մյուս հանցակիցները ենթադրյալ հանցագործության կատարման ժամանակ գտնվել են այլ վայրում..., և որ տեղի են ունեցել մի շարք լուրջ դատավարական խախտումներ, որոնց արդյունքում փորձագետի զեկույցի մեծ մասն անարժանահավատ էր դարձել…

113. Բարձր ատյանները Գ.-ի գործով նաև հիմք են ընդունել մի շարք վկաների ցուցմունքներ: Սակայն Դատարանը գտնում է, որ որևէ կերպ չի մեկնաբանվել ստորադաս ատյաններում արված դատողություններն այն մասին, որ այդ վկաների ցուցմունքները կեղծվել էին ոստիկանության կողմից…

114. Դատարանը եզրակացնում է, որ մեղադրյալի ինքնախոստովանական ցուցմունքն ընդունելով որպես «որոշիչ ապացույց»… ներպետական դատարանները նախընտրել են պարզապես լռել օրենքի բազմաթիվ լուրջ խախտումների վերաբերյալ, որոնք բացահայտվել էին ստորադաս դատարանների կողմից, և այնպիսի կոնկրետ հիմնարար հարցերի վերաբերյալ, ինչպիսին է այն, որ մեղադրյալն ունի այլուրեքություն՝ կապված ենթադրյալ սպանության կատարման ժամանակի հետ: Դատարանը չի կարողացել գտնել որևէ բացատրություն

դատարանների որոշումներում առկա նման բացթողումների վերաբերյալ, և ոչ էլ Կառավարությունն է ներկայացրել որևէ պարզաբանում այս կապակցությամբ:

115. Վերոգրյալ դատողությունների լույսի ներքո և հիմք ընդունելով ամբողջ դատավարությունը՝ Դատարանը գտնում է, որ ներպետական դատարանները Գ.-ի դատապարտման համար բավարար հիմնավորումներ չեն ներկայացրել և, այսպիսով, չեն բավարարել Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդարության պահանջը:

116. Դատարանը կրկնում է, որ Գ.-ի դեմ հարուցված վարույթը վերաբերել է դիմողի անձնական իրավունքներին… Այն եզրակացնում է, որ Գ.-ի դատապարտումը, բավարար հիմնավորումների բացակայության պայմաններում, անխուսափելիորեն խախտել է դիմողի՝ արդար դատական քննության իրավունքը:

*բ. Նույն փաստերով հետագա վարույթը*

***Սերգեյ Զոլոտուխինն ընդդեմ Ռուսաստանի (Sergey Zolotukhin v. Russia) [GC], 14939/03, 10.02.2009թ.***

70. Նախադեպային իրավունքի հիմքը, որը ձևավորվել է Դատարանի կողմից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի բողոքարկման արդյունքում, փաստում է, որ առկա է մի քանի մոտեցում այն հարցի հետ կապված, թե նույնն են, արդյոք, այն արարքները, որոնց մեջ դիմողը մեղադրվում է:

71. Առաջին մոտեցումը, որը հիմնվում է դիմողի «նույն վարքագծի վրա»՝ անկախ այն բանից, թե այդ վարքագիծն ինչպես է որակվում օրենքով (*idem factum*), ներկայացված է Գրադինջերի դատավճռում… որի համաձայն՝ թեև երկու հանցագործությունների տարբերակումը, բնույթը և նպատակները տարբեր են եղել, տեղի է ունեցել 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի խախտում, քանի որ երկու որոշումներն էլ հիմնված են եղել դիմողի նույն վարքագծի վրա...

72. Երկրորդ մոտեցումը ևս բխում է այն ենթադրությունից, որ մեղադրյալի վարքագիծը, որի վրա հիմնված է մեղադրանքը, նույնն է, սակայն նշվում է, որ նույն վարքագիծը կարող է հանգեցնել մի քանի հանցագործության (*concours idéal d'infractions*), որոնք կարող են քննվել տարբեր վարույթներում… Օլիվեիրայի գործի… փաստական հանգամանքները… հանդիսանում են մեկ գործողությամբ մի քանի հանցագործության տիպիկ օրինակ, մինչդեռ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածն արգելում է միայն նույն հանցագործության համար անձին երկու անգամ դատապարտելը: Դատարանի կարծիքով, թեև արդարադատության պատշաճ իրականացման սկզբունքին ավելի համահունչ կլիներ այն, որ երկու հանցագործությունների վերաբերյալ գործերը քննվեին նույն դատարանում՝ մեկ վարույթով, սակայն այն փաստը, որ քննվող գործով երկու վարույթ է իրականացվել, էական չի

հանդիսանում: Այն փաստը, որ տարբեր հանցագործություններ, եթե անգամ դրանք մեկ արարքի մաս են հանդիսանում, քննվում են տարբեր դատարաններում, չի հանգեցնում 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի խախտման, հատկապես, եթե դրանց պատիժները չեն համակցվում…

73. Երրորդ մոտեցումը շեշտադրում է երկու հանցագործությունների «էական տարրերը»: Ֆրանց Ֆիշերն ընդդեմ Ավստրիայի (no. 37950/97 ...) գործով որոշման մեջ Դատարանը նշում է, որ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի իմաստով հանդուրժելի է մեկ արարքի արդյունքում կատարված մի քանի հանցանքի համար մեղադրանք առաջադրելը (*concours idéal d'infractions*): Սակայն այն անհամատեղելի կլիներ այդ դրույթի հետ, եթե դիմողը մեղադրվեր և դատապարտվեր այնպիսի հանցագործությունների համար, որոնք «էապես տարբեր են», Դատարանը գտնում է, որ հետևողականորեն պետք է ուսումնասիրվի այն հարցը, թե այդ հանցագործություններն ունեն նմանվող «էական տարրեր», թե՝ ոչ…

78. Դատարանը գտնում է, որ տարբեր մոտեցումների առկայությունը՝ կապված այն խնդրի հետ, թե դիմողին մեղսագրվող արարքն իսկապես համընկնում է այն արարքի հետ, որի համար նա արդեն դատապարտվել կամ արդարացվել է, առաջացնում է իրավական անորոշություն, որը համատեղելի չէ այնպիսի հիմնարար իրավունքի հետ, ինչպիսին է նույն հանցագործության համար երկու անգամ չմեղադրվելը...

79. *non bis in idem* սկզբունքն ամրագրող միջազգային փաստաթղթերի վերլուծությունն այս կամ այն կերպ բացահայտում է այն եզրույթները, որոնցով վերջինս ձևակերպվում է… մի կողմից՝ «նույն գործողություններ» կամ «նույն պատճառներ» եզրույթների և, մյուս կողմից՝ «(նույն) հանցագործություն» ("*[même] infractio"*) եզրույթի տարբերությունը Եվրոպական Համայնքների արդարադատության դատարանի և Մարդու իրավունքների համամերիկյան դատարանի կողմից դիտվել են որպես կարևոր տարր, որը կարող է նպաստել այն մոտեցման ընդունմանը, որը հիմնված է բացառապես տվյալ արարքների նույնացման և նման արարքների իրավական որակումը գործին չվերաբերող դիտելուց հրաժարվելու վրա: Նման դատողությամբ, երկու դատարաններն էլ շեշտադրել են այն, որ նման մոտեցումը բարենպաստ պայմաններ կստեղծի հանցանք կատարած անձի համար, ով տեղյակ կլինի, որ եթե ինքը մեկ անգամ մեղավոր է ճանաչվել և պատիժ է կրել կամ արդարացվել, այլևս չպետք է անհանգստանա այն առումով, որ հետագայում կարող է մեղադրվել նույն արարքի համար…

80. Դատարանը գտնում է, որ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածում «հանցագործություն» բառի օգտագործումը չի կարող արդարացնել ավելի խիստ մոտեցման կիրառումը…

81. Դատարանը նշում է, որ այն մոտեցումը, որի համաձայն շեշտադրվում է երկու հանցագործությունների իրավական որակումը, չափազանց խիստ է սահմանափակում անձի իրավունքները, քանի որ եթե Դատարանը սահմանափակվում է այն հարցի պարզաբանմամբ, թե անձը մեղադրվում է տարբեր իրավական որակում ունեցող հանցագործություններում, ապա վտանգվում են 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածով ամրագրված երաշխիքները և չեն հանդիսանում կիրառելի և արդյունավետ, ինչպես դա պահանջվում է Կոնվենցիայով…

82. Հետևաբար, Դատարանը կարծում է, որ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածը պետք է ընկալվի այնպես, որ արգելի երկրորդ «հանցագործության» մեջ մեղադրելը կամ դատապարտելը, քանի որ այն բխում է նույն փաստերից կամ այնպիսի փաստերից, որոնք ըստ էության նման են:

83. 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածում ամրագրված երաշխիքները ենթակա են կիրառման նոր մեղադրանք հարուցելու ժամանակ, երբ սկզբնական արդարացումը կամ դատապարտումն արդեն ձեռք է բերել *res judicata* ուժը: Այս հատման կետում առկա նյութը, անկասկած, ներառում է այն որոշումը, որով առաջին «պատժիչ վարույթը» եզրափակվել է և այն մեղադրանքները, որոնք ներկայացվել են դիմողին նոր վարույթով: Որպես կանոն, այս փաստաթղթերում պետք է առկա լինեն երկուստեք՝ այն հանցագործության փաստական հանգամանքները, որի համար դիմողն արդեն դատապարտվել է, և այն հանցագործությանը, որի համար նրան մեղադրանք է առաջադրվել: Դատարանի կարծիքով, նման փաստական հանգամանքները որպես ելակետ բավարար են պարզաբանելու համար այն հարցը, թե արդյոք երկու վարույթների փաստերը եղել են նման, թե՝ ըստ էության նույնական: Դատարանը շեշտադրում է, որ կարևոր չէ, թե նոր մեղադրանքների որ հատվածներն են ի վերջո հետագա վարույթներով բավարարվել կամ մերժվել, քանի որ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածն ամրագրում է երաշխիքներ՝ ուղղված նոր վարույթով մեղադրվելու կամ պատասխանատվության ենթարկվելու դեմ և ոչ թե երկրորդ անգամ դատապարտվելու կամ արդարացվելու արգելքի…

84. Դատարանի կողմից գործի հանգամանքների քննությունը պետք է հիմնվի այն փաստերի վրա, որոնք ձևավորում են որոշակի փաստական հանգամանքների ամբողջություն, որում ներգրավված է նույն մեղադրյալը, որոնք փոխկապակցված են ժամանակի և տարածության մեջ և որոնց գոյությունը պետք է արտահայտվի՝ ապահովելու համար դատապարտումը կամ քրեական վարույթների հարուցումը…

97. Դիմողի դեմ վարչական մեղադրանք ներկայացնելը կապված էր դիմողի կողմից հասարակական կարգի խախտման հետ, որն իրականացվել է ոստիկանության աշխատակիցներ տիկին Ու.-ին և կապիտան Ս.-ին հայհոյելու և հրելու ձևով: Նույն փաստերը դրվել են Քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածով մեղադրանք առաջադրելու հիմ-

քում, որի համաձայն՝ դիմողը խախտել է հասարակական կարգը ոչ վայել վարքագիծ դրսևորելով և բռնություն գործադրելով կապիտան Ս.-ի նկատմամբ և նրան դիմադրություն ցույց տալով: Այսպիսով, երկու վարույթները տարբերվում են իրարից միայն մեկ տարրով՝ բռնության գործադրմամբ, որը չի հիշատակվել առաջին վարույթում: Հետևաբար, Դատարանը գտնում է, որ 213-րդ հոդվածի 2-րդ մասի (b) կետով ներկայացված քրեական մեղադրանքն ամբողջությամբ ներառում է Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 158-րդ հոդվածով նախատեսված արարքը և այն, ընդհակառակն, հանդիսանալով «նվազ վտանգավոր արարք»՝ չի պարունակում որևէ տարր, որը չկա «օրենքով արգելված» հանցագործության մեջ: Երկու հանցագործությունների փաստական հանգամանքները, հետևաբար, 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի իմաստով պետք է դիտարկվեն որպես ըստ էության նույնը: Ինչպես Դատարանը շեշտել էր վերը, երկու հանցագործությունների փաստական հանգամանքները հանդիսացել են դրանց համադրության միակ կետը, և Կառավարության այն փաստարկը, որ դրանք տարբերվում են պատժի խստության առումով, որևէ կապ չունի գործի հանգամանքների քննության հետ…

109. Սույն գործով 2002թ. հունվարի 4-ի վարչական ակտը կայացվել է սահմանված կարգով, որում նշվել է, որ այն չի կարող բողոքարկվել և ուժի մեջ է մտնում անմիջապես… Սակայն, եթե անգամ ընդունենք, որ, ինչպես նշում է Կառավարությունը, այն կարող էր բողոքարկվել կայացման պահից տասնօրյա ժամկետում, ապա նշված ժամկետն անցնելուց հետո այն օժտվում էր *res judicata*-ով: Որևէ այլ ընթացակարգ կողմերի համար նախատեսված չէ: Այսպիսով, վարչական ակտը Կոնվենցիայի իմաստով հանդիսացել է «վերջնական» 2002թ. հունվարի 15-ին, մինչդեռ քրեական վարույթն սկսվել է 2002թ. հունվարի 23-ին...

110. ...Դատարանը կրկնում է, որ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածը չի սահմանափակում երկու անգամ չպատժվելու իրավունքը, սակայն ընդլայնում է երկու անգամ չմեղադրվելու և դատարանի առաջ չկանգնելու իրավունքը… 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածը կիրառվում է անգամ այն դեպքերում, երբ անձը մեղադրվել է, սակայն չի դատապարտվել: Դատարանը կրկնում է, որ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածը սահմանում է երեք տարբեր երաշխիքներ և նշում, որ որևէ մեկը չպետք է լինի (i) մեղադրման ենթակա (ii) մեղադրված կամ (iii) դատապարտված նույն հանցագործության համար…

111. Սույն գործով դիմողը վերջնականապես դատապարտվել է նվազ վտանգավոր արարքների համար և կրել իր նկատմամբ նշանակված պատիժը: Դրանից հետո նա մեղադրվել է օրենքով արգելված արարքների կատարման մեջ և կալանավորվել է: Վարույթը շարունակվել է ավելի քան տասն ամիս, որի ընթացքում դիմողը պետք է մասնակցեր գործով նախնական քննությանը և կանգներ դատարանի

առջև: Հետևաբար, այն փաստը, որ նա ի վերջո արդարացվել է, որևէ կերպ չի ազդում նրա բողոքի վրա այն մասին, որ նա երկրորդ անգամ մեղադրվել և դատապարտվել է նույն հանցագործության համար…

116. Վերադառնալով սույն գործի փաստերին՝ Դատարանը չի հատնաբերել որևէ նշում այն մասին, որ Ռուսաստանի իշխանությունները վարույթի որևէ փուլում ընդունել են *non bis in idem* սկզբունքի խախտումը: Քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով դիմողի արդարացումը հիմնված չի եղել այն փաստի վրա, որ նա նույն արարքի համար Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի ուժով արդեն դատապարտվել է: 2002թ. դեկտեմբերի 2-ի որոշման մեջ 2002թ. հունվարի 4-ի վարչական վարույթին կատարված հղման առկայությունը հանդիսացել է ուղղակի նշում այն մասին, որ նման վարույթ տեղի է ունեցել: Մյուս կողմից, դատավճռի տեքստից պարզորոշ երևում է, որ Շրջանային դատարանը հետազոտել է դիմողի դեմ ներկայացված ապացույցը և գտել, որ այն թույլատրելի չէ: Հետևաբար, դիմողի արդարացումը եղել է ավելի շատ փաստական, քան դատավարական հիմքի վրա…

121. Վերոգրյալի լույսի ներքո, Դատարանը գտնում է, որ Քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի (b) կետի հիմքով դիմողի նկատմամբ հարուցված վարույթն ըստ էության վերաբերել է նույն հանցագործությանը, որի համար նա Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 158-րդ հոդվածով արդեն դատապարտվել է:

122. Հետևաբար, տեղի է ունեցել 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի խախտում:

### 2. Վարույթի դադարեցումը

***Պանտելեյենկոն ընդդեմ Ուկրաինայի (Panteleyenko v. Ukraine), 11901/02, 29.06.2006թ.***

70. ...դիմողի դեմ հարուցված քրեական վարույթը դադարեցնող դատարանի որոշումները ձևակերպվել են այնպես, որ կասկած չեն թողել առ այն, որ նրանց կարծիքով դիմողը կատարել է իրեն մեղսագրվող արարքը: Մասնավորապես, Դեսնիանսկիի դատարանը նշել է, որ նախնական քննության տվյալներում առկա են բավարար ապացույցներ առ այն, որ դիմողը կեղծել է նոտարական փաստաթուղթը և դիտավորությամբ կատարել է իրավաբանական ուժ չունեցող նոտարական գործողություն, և վարույթը դադարեցնելու միակ պատճառը հանդիսացել է ոչ կարևոր հանցագործության դեմ մեղադրանք ներկայացնելու աննպատակահարմարությունը… Դատարանի կարծիքով, Դեսնիանսկիի դատարանի կողմից կիրառված լեզուն ինքնին բավարար է եղել անմեղության կանխավարկածի խախտում արձանագրելու համար: Այն փաստը, որ դիմողի փոխհատուցման պահանջը մերժվել է քրեական վարույթի ընթացքում ձեռք բերված նյութերի վկայակոչման հիմքով, ավելի է բարդացնում իրավիճակը: Թեև Դես-

նիանսկիի դատարանը նման եզրակացության է հանգել դիմողի ներկայությամբ իրականացված վարույթում, սակայն վերջինս իր բնույթով քրեական վարույթ չի հանդիսացել և չեն կիրառվել ընդհանրապես քրեական վարույթին վերաբերող բազմաթիվ դրույթներ: Այդ պատճառով չի կարելի եզրակացնել, որ դատարանում իրականացված վարույթը ենթադրում է կամ պետք է ենթադրի դիմողի՝ «մեղքի օրենքով սահմանված կարգով հաստատում»: Այս հանգամանքներում, Դատարանը գտնում է, որ դիմումը մերժելու հիմքում Դեսնիանսկիի դատարանի կողմից դրված պատճառները՝ փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ, դիմողի հայցի մերժման հիմքում դրված պատճառների հետ մեկտեղ, հանգեցրել են անմեղության կանխավարկածի խախտման:

***Մարցիանոն ընդդեմ Իտալիայի (Marziano v. Italy), 45313/99, 28.11.2002թ.***

29. Այս համատեքստում, Դատարանը նշում է, հանգելով արարքի որակման վերաբերյալ նույն եզրակացությանը, քննիչը չի համաձայնել դատախազության իրավական վերլուծությանը: Մասնավորապես, այն չի կիսել այն գնահատականները, որոնք դատախազությունն արել էր X-ի դատալսումների, քրեական հետապնդման ընթացքում X-ի կատարած հայտարարությունների և զուգահեռ ընթացող քաղաքացիական գործերի արդյունքում: Հետևաբար, միանշանակ իրավացի էր, որ քննիչը, որը պետք է հիմնավորված որոշում կայացներ, պարզաբանում է, թե ինչու է ընդունելով դատախազության պահանջները՝ գործը կարճելու մասին որոշում կայացրել: Հաշվի առնելով, որ դատախազության հետ ունեցած տարակարծությունն ավելի շատ վերաբերում է ապացույցներին և դրանց գնահատմանը, քան դրանց իրավական գնահատականին, բնական է, իր որոշման մեջ քննիչն այդ մասին նշել է:

Ինչպես նշել է Կառավարությունը, Դատավարական օրենսգրքի հատուկ մասի 125-րդ հոդվածով նախատեսված կարգով, քննիչը ենթադրություն է արել գործը դատավորին հանձնված լինելու դեպքում գործի հնարավոր արդյունքի մասին,: Դատավորը սահմանափակվել է գտնելով, որ քննարկվող հանցանքի կատարման հարցում շահագրգիռ անձին կասկածելու առիթների առկայությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դատարանում մեղադրանքի կողմը հաջողության նվազ հնարավորություն կունենար: Սակայն նա ոչ միայն հաշվի է առել, թե ինչ ազդեցություն էր դատաքննությունն ունենալու X-ի վրա, այլ նա նաև նշել է X-ի կողմից մատնանշված որոշ փաստերի անհիրական լինելու մասին: Այսպիսով, նա ընդգծել է, որ X-ի հայտարարությունների հավաստիությունը կարող է կասկածի տեղիք տալ:

30. Այս հանգամանքներում, Դատարանը հաստատում է, որ քննիչը, որն իր հերթին տեղյակ էր հայցվորի և նրա ամուսնու միջև վեճի մասին, իրավասու իր ներքին համոզմամբ որոշել իր կարծիքի արտա-

հայտման եղանակը՝ հաշվի առնելով գործի հանգամանքները: Իհարկե, կարող է ծագել այն հարցը, թե արդյոք բերված վերջնական հիմնավորումները կրում էին այնպիսի բնույթ, որ դրանց հիման վրա կարող էր կազմվել մեղադրանքը: Այնուամենայնիվ, չնայած 1998թ. ապրիլի 17-ի հրամանի՝ որոշման մեջ տեղ գտած դրույթներին, Դատարանը գտնում է, որ տվյալ որոշման մեջ «կասկած» է արտահայտվում, իսկ մեղքի առկայությունը հաստատված չէ:

31. Այսպես, պետք է տարանջատում կատարվի այն որոշումների, որոնք արտահայտում են զգացմունք, որ տվյալ մարդը մեղավոր է, և նրանց միջև, որոնցում միայն կասկած է արտահայտված: Առաջիններ-ը խախտում են անմեղության կանխավարկածի սկզբունքը, իսկ երկրորդը բազմիցս համարվել է համապատասխան Կոնվենցիայի 6-րդ հոդվածին:

32. Այս հանգամանքներում, Դատարանը միայն կարող է եզրահանգել, որ խախտվել է անմեղության կանխավարկածի սկզբունքը:

### 3. Դատապարտում

***Ե.Կ.-ն ընդդեմ Թուրքիայի (E. K. v. Turkey), 28496/95, 07.02.2002թ.***

Ըստ Դատարանի՝ սույն գործով կիրառված օրենսդրությունը, որի վրա հիմնվել է Պետական անվտանգության գործերով դատարանը դատաքննության երկրորդ փուլում հայցվորի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնելիս, որն այնուհետև հաստատվել է Վճռաբեկ դատարանի կողմից, չի անցնում այն սահմանը, որը կարելի էր նախատեսել տվյալ գործի հանգամանքներում: Դատարանը եզրահանգում է, որ 1991թ. օրենքի 8-րդ հոդվածի շրջանակներում հայցվորի դատապարտումը չի անտեսել "*nullum crimen sine lege*" սկզբունքը, որն ամրագրված է Կոնվենցիայի 7-րդ հոդվածով:

55. Սակայն հայցվորը բողոքարկում է, որ նա օրենքի 8-րդ հոդվածի երկրորդ մասով դատապարտվել է պատժի՝ ազատազրկման ձևով որը տառացիորեն տարածվում է միայն գլխավոր խմբագիրների, խմբագիրների վրա, և վերջիններս էլ պատժվում են միայն տուգանքով: Այդ առումով Կառավարությունն ընդգծում է, որ սովորաբար խմբագիրների նկատմամբ 8-րդ հոդվածի երկրորդ մասի կիրառումը նախատեսում է ավելի թեթև պատիժ, քան նույն հոդվածի 1-ին մասը: Եթե դա այդպես է, ապա առավել հավանական է, որ 8-րդ հոդվածի 2-րդ մասը հատուկ նորմ է, որը տարածվում է գլխավոր խմբագիրների, պարբերականների խմբագիրների վրա, և որ, հայցվորը՝ որպես ոչ պարբերական ամսագրի խմբագիր, դատապարտվել է տվյալ հոդվածի նույն մասով սահմանված դրույթի՝ անալոգիայի սկզբունքով տարածական մեկնաբանման հիմքով: Վերջինս, սակայն, նախատեսում է գլխավոր խմբագիրների նկատմամբ կիրառվող պատժի տեսակները:

56. Այս հանգամանքներում, Դատարանը գտնում է, որ հայցվորին ազատազրկման ձևով պատժի դատապարտումն անհամատեղելի է "*nullum crimen sine lege*" սկզբունքի հետ, որը նախատեսված է Կոնվենցիայի 7-րդ հոդվածով:

57. Արդյունքում, խախտվել է Կոնվենցիայի 7-րդ հոդվածը:

***Բոհմերն ընդդեմ Գերմանիայի (Böhmer v. Germany), 37568/97, 03.10.2002թ.***

61. Դատարանն առաջին հերթին նշում է, որ Պատժիչ օրենսգրքի 56-րդ բաժնի համաձայն՝ ազատազրկման դատապարտումը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե ակնկալիքներ կան, որ պատիժը կարող է դատապարտյալի համար հանդիսանալ նախազգուշացում, և նա ապագայում չի կատարի նոր հանցագործություն անգամ առանց պատիժը փաստացի կրելու: Այս կանխատեսումներն անելիս քրեական դատարանը պետք է ուսումնասիրի դատապարտյալի անձը, նրա անցյալը, հանցանքի կատարման հանգամանքները, նրա կյանքի պայմանները և այն արդյունքները, որոնք կարող են ակնկալվել պատիժը պայմանականորեն չկիրառելիս:

62. Դատարանը պատրաստ է ընդունել… որ պայմանականորեն չկիրառելու մասին որոշումը հիմնված է հետադարձ գնահատականի վրա՝ այն մասին, որ դատապարտյալը ցույց է տվել, որ նա չի կատարում այն պահանջները, որոնց հիման վրա պատիժը պայմանականորեն չի կիրառվել, կարող է լինել ոչ ավելի, քան սկզբնական կանխատեսումների շտկում:

63. Պատժիչ օրենսգրքի 56f (1) բաժինը պահանջում է դատարանից հիմնավորել իր գնահատականն առ այն, որ անձը կատարել է քրեական հանցագործություն իր փորձաշրջանի ընթացքում:

64. Այս իրավիճակում, Վերաքննիչ դատարանի որոշման մեջ առկա պատճառաբանությունները սահմանափակված չեն դիմողի անձի գնահատմամբ կամ «կասկածի ձևակերպման» նկարագրությամբ առ այն, որ դիմողը կատարել է քրեական հանցագործություն իր փորձաշրջանի ընթացքում:

65. Դատարանի կարծիքով, Վերաքննիչ դատարանը, հսկողություն իրականացնելով պատժի կատարման նկատմամբ, գնահատել է գործը քննող իրավասու դատարանի՝ Համբուրգի Շրջանային դատարանի դերը, և աներկբայորեն հայտարարել է, որ դիմողը մեղավոր է քրեական հանցագործության մեջ: Դա հաստատվում է այն հստակ նշումով, որ նա ընդունել է «հավաստիությունը», որ դիմողը խարդախություն է կատարել… Այս եզրահանգումը հետագայում հաստատվել է այն փաստով, որ Վերաքննիչ դատարանը նախընտրել է ապացույցներ ձեռք բերել Քրեական դատավարության օրենսգրքի 308-րդ բաժնի ուժով և իր որոշման մեջ վկաների կողմից արված հայտարարությունների ապացուցողական արժեքն էականորեն և մանրամասնորեն

գնահատելուն ուղղված դատավարական գործողություններ է կատարել…

69. Այս պայմաններում, Դատարանը գտնում է, որ Համբուրգի Վերաքննիչ դատարանի 1996թ. հոկտեմբերի 14-ի որոշման պատճառաբանությունները խախտում են անմեղության կանխավարկածը, որը հանդիսանում է արդար դատաքննության պահանջի առանձնահատուկ տեսակետ:

***Գեերինգսն ընդդեմ Նիդեռլանդների (Geerings v. Netherlands), 30810/03, 01.03.2007թ.***

43. ...Եթե մեղադրյալը մեկ անգամ համապատասխանաբար մեղավոր է ճանաչվել այդ հանցագործության կատարման մեջ, 6-րդ հոդվածի 2-րդ մասը չի նախատեսում որևէ դիմումի ներկայացում՝ կապված մեղադրյալի անձի և վարքագծի գնահատման հետ՝ որպես պատիժ նշանակելու գործընթացի մաս, քանի որ նման մեղադրանքներն այնպիսի բնույթ և աստիճան ունեն, որը հավասար է Կոնվենցիայի իմաստով նոր «մեղադրանք» առաջադրելուն...

44. Մի շարք գործերով Դատարանը քննել է առգրավման վարույթները, որոնք հաջորդել են դատապարտմանը և հանդիսացել պատժի մաս և, հետևաբար, դուրս է գալիս 6-րդ հոդվածի 2-րդ մասի սահմաններից (տե՛ս մասնավորապես, Ֆիլիպսը… և Վան Օֆերենն ընդդեմ Նիդեռլանդների (dec.), no. 19581/04....): Սույն գործերի ընդհանուր հատկանիշներ են հանդիսանում այն, որ դիմողը դատապարտվել է թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների համար, որ դիմողը շարունակել է կասկածվել թմրամիջոցների հետ կապված լրացուցիչ հանցանքների կատարման մեջ, որ դիմողը բացահայտ կերպով տիրապետել է ունեցվածքի, որի ծագումը հնարավոր չէ պարզել, որ ողջամտորեն ենթադրվել է, որ այս ունեցվածքը ձեռք է բերվել անօրինական գործունեության արդյունքում, և որ դիմողը չի ներկայացրել բավարար այլընտրանքային բացատրություն:

45. Սույն գործով առկա են լրացուցիչ հատկանիշներ, որոնք տարբերում են այն Ֆիլիպսի և Վան Օֆերենի գործերից:

46. Առաջին հերթին, Վերաքննիչ դատարանը գտել է, որ դիմողն անօրինական եկամուտ էր ձեռք բերել քննարկվող հանցագործությունների արդյունքում, թեև սույն գործով երբևէ ցույց չի տրվել, որ նա տիրապետել է որևէ ունեցվածքի, որի ծագման մասին նա պատշաճ բացատրություն չի կարողացել ներկայացնել: Վերաքննիչ դատարանն իր որոշումը կայացրել է՝ ընդունելով ենթադրական էքստրապոլյացիան, որը հիմնված էր փաստերի խառնուրդի և ոստիկանության զեկույցի մեջ առկա գնահատականի վրա:

47. Դատարանը գտնում է, որ «առգրավումը», որը հաջորդել է դատապարտմանը, կամ, եթե կիրառենք Նիդեռլանդների Քրեական օրենսգրքում առկա արտահայտությունը, «անօրինական ճանապարհով ձեռք բերված եկամուտներից զրկելը» հանդիսանում է միջոց

(*maatregel*), ինչը չի կիրառվում այն ունեցվածքի նկատմամբ, որը հայտնի չի եղել, որ գտնվել է ենթադրյալ հանցագործի տիրապետման տակ, ավելին, եթե կիրառված միջոցը կապված է այնպիսի հանցագործության հետ, որի կատարման մեջ անձը մեղավոր չի ճանաչվել: Եթե հիմնավոր կասկածի բացակայության պայմաններում չի պարզվել, որ անձն իրականում հանցանք է կատարել, և եթե չի կարող որպես փաստ սահմանվել, որ որևէ եկամուտ, անօրինական կամ այլ ճանապարհով, իրականում ձեռք է բերվել, նման միջոցի կիրառումը կարող է հիմնված լինել միայն մեղավորության կանխավարկածի վրա: Սա հազիվ թե կարող է դիտվել 6-րդ հոդվածի 2-րդ մասի հետ համատեղելի…

48. Երկրորդ, ի տարբերություն Ֆիլիպսի և Վան Օֆերենի գործերով որոշումների, վիճարկվող որոշումը կապված է այն հանցագործությունների հետ, որոնցով դիմողը փաստորեն արդարացվել էր:

49. ...6-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է ընդհանուր կանոն, որի համաձայն՝ վերջնական արդարացումից հետո այլևս ընդունելի չէ անգամ մեղադրյալի անմեղությանը վերաբերող կասկածը:

50. Վերաքննիչ դատարանի կարծիքը, սակայն, ավելի հեռուն է գնում, քան ընդամենը կասկածի վերաբերյալ քվեարկությունը: Այն վերաբերում է դիմողի մեղքի որոշմանը՝ առանց դիմողին «օրենքով սահմանված կարգով մեղավոր ճանաչելու»…

51. Հետևաբար, տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում:

### 4. Արդարացում

*ա. Արդյունքը*

***Գիսեթն ընդդեմ Ֆրանսիայի (Guisset v. France), 33933/96, 26.09.2000թ.***

68. Դատարանը նշում է, որ սույն գործով, հակառակ դիմողի արդարացմանը, Կարգապահական հանցագործությունների (բյուջե և ֆինանսներ) դատարանի 1995թ. ապրիլի 12-ի դատավճռում ուղղակիորեն պատճառաբանվել է, որ դիմողը «խախտել է Պետության ներմուծումները և արտահանումները կարգավորող կանոնները և ենթակա է 1948թ. սեպտեմբերի 25-ի փոփոխված օրենքի 5-րդ բաժնով նախատեսված պատասխանատվության»: Դատարանն այդ կապակցությամբ նշում է, որ որոշման մեջ առկա պատճառաբանությունը մեկ ամբողջություն է կազմում և չի կարող տարանջատվել իրավակիրառ դրույթներից…

69. Այսպիսով, պարզվել է, որ դիմողը մեղավոր է և ենթակա է տուգանքի: Բացի դրանից, Կարգապահական հանցագործությունների (բյուջե և ֆինանսներ) դատարանն ուղղակիորեն մերժել է Կոնվենցիայի հիման վրա ներկայացված նրա բողոքը: Հետևաբար, այն փաս-

տը, որ նա ի վերջո ազատվել է պատժից, որին ենթակա էր, չի կարող հանցագործության կատարման մասնավոր հանգամանքներում դիտվել որպես ենթադրյալ խախտման ընթացակարգ:

70. Հետևաբար, հիմք ընդունելով Կարգապահական հանցագործությունների (բյուջե և ֆինանսներ) դատարանի 1995թ. ապրիլի 12-ի դատավճռի ինչպես պատճառաբանությունը, այնպես էլ իրավակիրառ դրույթները, Դատարանը եզրակացնում է, որ դիմողը չի դադարել «տուժող» լինելուց՝ Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով…

***Վասիլոս Ստավրոպոլուսն ընդդեմ Հունաստանի (Vassilios Stavropoulos v. Greece), 35522/04, 27.09.2007թ.***

38. Համաձայն դատական նախադեպերի՝ արդարացման դատավճռի ուժի մեջ մտնելուց հետո,եթե նույնիսկ այդ դատավճիռը կայացվել է 6-րդ հոդվածի 2րդ մասով նախատեսված կարգով՝ չփարատված կասկածների հիմքով, անձի մեղավորության մասին կասկած հայտնելը, այդ թվում այն կասկածները, որոնք տեղ են գտել արդարացման դատավճռի հիմնավորման մեջ, չի համապատասխանում անմեղության կանխավարկածի սկզբունքին:

39. Դատարանը գտնում է, որ «չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի» սկզբունքի շրջանակներում, որն անմեղության կանխավարկածի առանձին արտահայտում է, որևէ որակական տարբերություն չպետք է դրվի ապացույցների բացակայության և անձի անմեղությունը կասկածի տակ չդնող արդարացման դատավճռի հիմքով քրեական գործի ավարտման միջև: Իրականում, արդարացման դատավճիռները միմյանցից չեն տարանջատվում ըստ դատավորների կողմից բերված հիմնավորումների: Հակառակը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի շրջանակներում արդարացման դատավճռի պայմանները պետք է պահպանվեն իշխանության բոլոր ներկայացուցիչների կողմից, որոնց կողմից՝ ուղղակիորեն կամ որոնց միջնորդությամբ կայացվում է շահագրգիռ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում:

40. Այդ դեպքում Դատարանը գտնում է, որ վարչական ատյաններ-ը բառացիորեն և առանց որևէ վերապահման հիմնվել են այն փաստի վրա, որ հայցվորն արդարացվել է չփարատված կասկածների հետևանքով, որպեսզի հիմնավորեն իրենց անգործության դիտավորյալ բնույթի մասին եզրակացությունը: Թե Պետական խորհուրդը և թե Վարչական վերաքննիչ դատարանն օգտագործել են այնպիսի արտահայտություններ, որոնք չեն համապատասխանում վեճի վարչական բնույթին և ոչ մի կասկած չեն թողնում այն մասին, որ հայցվորը իր տնօրինության տակ գտնվող ողջ անշարժ գույքը հայտարարագրում չի ներառել ուղղակի դիտավորությամբ: Համաձայն վերոհիշյալի, Պետական խորհրդի և Վարչական վերաքննիչ դատարանի հիմնավորումներն անհամատեղելի են անմեղության կանխավարկածի սկզբունքի հետ:

41. Արդյունքում, խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասը:

*բ. Պահպանման պարտականությունը*

***Ասանիձեն ընդդեմ Վրաստանի** (Assanidze v. Georgia) [GC], 71503/01, 08.04.2004թ.*

172. Սույն գործով դիմողը կալանավորվել էր Աջարիայի իշխանությունների կողմից 5-րդ հոդվածի 1-ին մասի (c) կետի հիմքով՝ 1999թ. դեկտեմբերի 11-ից սկսած, այդ ժամանակից սկսած նրա նկատմամբ նոր քրեական հետապնդում է հարուցվել…: Սակայն այդ իրավիճակը դադարեց 2001թ. հունվարի 29-ին Վրաստանի Գերագույն դատարանի կողմից դիմողի արդարացմամբ, երբ միաժամանակ որոշում կայացվեց նրան ազատ արձակելու վերաբերյալ… Այդ ժամանակվանից ի վեր, հակառակ այն բանի, որ իր գործը չի վերաբացվել և որևէ կարգադրություն չի արվել նրա կալանավորման կապակցությամբ, դիմողը շարունակել է մնալ կալանքի տակ: Այսպիսով, որևէ օրենսդրական կամ դատական հիմք չի եղել 2001թ. հունվարի 29-ից սկսած դիմողի ազատության սահմանափակման համար: Հետևաբար, այն չի կարող արդարացվել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի որևէ ենթակետի իմաստով...

174. Ինչպես ցույց են տալիս գործի նյութերը՝ կենտրոնական պետական իշխանություններն իրենք մի շարք դեպքերում նշել են, որ դիմողի կալանավորման հիմքեր չկան: Աջարիայի Կենտրոնական դատական և վարչական իշխանությունները բացահայտորեն նշել են, որ դիմողի ազատության սահմանափակումները եղել են անօրինական՝ ներպետական օրենսդրության և Կոնվենցիայի 5-րդ հոդվածի իմաստով: Սակայն նրանց բազմաթիվ հուշագրերը և դիմողին ազատ արձակելու վերաբերյալ պահանջներն անպատասխան են մնացել...

175. Դատարանը գտնում է, որ անձին անորոշ և անկանխատեսելի ժամկետով կալանավորելը՝ առանց օրենքի հստակ սահմանման կամ դատարանի որոշման, անհամատեղելի է իրավական որոշակիության սկզբունքի հետ... և անօրինական, և հակասում է օրենքի գերակայության հիմնարար սկզբունքներին:

176. Դատարանը համապատասխանաբար, գտնում է, որ սկսած 2001թ. հունվարի 29-ից դիմողն անօրինական է պահվել կալանքի տակ՝ ի խախտումն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի:

*գ. Հետագա քաղաքացիական վարույթները*

***Ռինգվոլդն ընդդեմ Նորվեգիայի** (Ringvold v. Norway), 34964/97, 11.02.2003թ.*

38. ...այն փաստը, որ արարքը կարող է քաղաքացիական հայցի հարուցման հանգեցնել, ևս նախատեսվում է Իրավախախտումների

մասին օրենքով, սակայն քրեական հանցագործության օբյեկտիվ հիմնական տարրերը, անկախ դրա ծանրության աստիճանից, չեն կարող բավարար հիմք նախատեսել անձին իրավախախտման փաստի առիթով հարուցված գործով պատասխանատու, այն է՝ որպես «քրեական հանցագործության մեջ մեղադրվող» դիտելու համար: Ոչ էլ այն, որ քրեական գործի քննության ժամանակ ներկայացված ապացույցը կիրառվում է քաղաքացիաիրավական հետևանքների հիմնավորման համար, կարող է հիմնավորել նման մոտեցումը...

...մինչդեռ քրեական պատասխանատվությունից ազատելը կարող է դրվել փոխհատուցման վարույթի հիմքում, և այն չպետք է խոչընդոտի նույն փաստերից բխող, սակայն ապացուցման նվազ խիստ պարտականության հիմքով փոխհատուցում տրամադրելու հետ կապված քաղաքացիական պատասխանատվության առաջացմանը...

Սույն գործով ազգային դատարանների կողմից փոխհատուցման կապակցությամբ կիրառված կարգավորումը, որն իրականացվել է արդարացման դատավճռից տարբերվող ակտով, ուղղակի կամ անուղղակի կերպով չի ամրագրել, որ բոլոր պայմաններն առկա են դիմողի քրեական պատասխանատվությունը համարել հաստատված այն մեղադրանքներով, որոնցով նա արդարացվել է... Հաջորդող քաղաքացիական դատավարությունն անհամատեղելի չի եղել և չի «մերժել» այդ արդարացումը:

39. Բացի դրանից, փոխհատուցման պարտականություն դնելու նպատակը, ի տարբերություն քրեական պատասխանատվության, առաջին հերթին նպատակ է հետապնդում փոխհատուցել տուժողին պատճառված վնասները: 75.000 նորվեգական կրոն փոխհատուցումը կարող է արդարացված լինել պատճառված վնասի համար: Ակնհայտ է, որ ո՛չ փոխհատուցումը, ո՛չ դրա չափը չեն կարող համեմատվել՝ 6-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, քրեական հանցագործության համար նշանակվող պատժի բնույթի հետ:

40. Հակառակ վերոգրյալին, Դատարանը չի գտնում, որ փոխհատուցման հայց ներկայացնելը հանգեցրել է արդարացումից հետո դիմողի նկատմամբ մեկ այլ «քրեական մեղադրանք» առաջադրելուն:

41. ...Դատարանը կրկնում է, որ քրեական դատավարությունների արդյունքները որոշիչ չեն փոխհատուցման հարցի որոշման համար: Սույն գործով հակառակն էր տեղի ունեցել. թեև դիմողն արդարացվել էր, սակայն նրա վրա փոխհատուցման պարտականություն էր դրվել: Անկախ դիմողի նկատմամբ հարուցված քրեական դատավարության արդյունքում կայացված որոշումից, փոխհատուցման վարույթը վերջինիս ուղղակի շարունակությունը չէ: Այս առումով սույն գործը տարբերվում է այն գործերից... որոնցով Դատարանը գտել է, որ քննարկվող վարույթները եղել են քրեական դատավարության հետևանք և հավելել այն, և որ դրանց նկատմամբ պետք է կիրառվի 6-րդ հոդվածի 2-րդ մասը:

42. Հետևաբար, Դատարանը եզրակացնում է, որ 6-րդ հոդվածի 2-րդ մասը կիրառելի չէ դիմողի նկատմամբ հարուցված հայցային վարույթներով, հետևաբար, սույն գործով այս դրույթը չի խախտվել:

*դ. Պատշաճ արձանագրություն*

***Կեմելետին Կանլին ընդդեմ Թուրքիայի (Cemalettin Canli v. Turkey), 22427/04, 18.11.2008թ.***

40. Դատարանն ուշադրություն է դարձրել այս Կարգավորումների վրա և նշել, որ դրանք հանգամանորեն վեր են հանում այն պայմանները, որոնցում ոստիկանությունը կարող է պահել և այլ Պետության իրավասու մարմնին փոխանցել հանցագործության մեջ մեղադրված և դատապարտված անձի վերաբերյալ տեղեկությունը և նրա մատնահետքերը: Սույն գործով հատկապես կարևորվում է այն, որ Կարգավորումներն իրավասություն են տվել ոստիկանությանը պահելու ծանր հանցագործությունների մեջ մեղադրված, ներառյալ անօրինական կազմակերպություններին անդամակցած անձանց վերաբերյալ տեղեկությունը, վերջինի կատարման մեջ անձը նախկինում մեղադրվել է, սակայն հետագայում՝ 1990թ. նա անմեղ է ճանաչվել:

41. Կարգավորումները նաև պարունակում են դրույթներ, որոնք վերաբերում են ոստիկանության արձանագրություններում առկա տեղեկությունների շտկմանը և վերանայմանը: Դրանք պարտավորեցնում են ոստիկանությանն իրենց արձանագրություններում ներառել առաջադրված մեղադրանքների հիման վրա հարուցված քրեական դատավարությունների արդյունքի վերաբերյալ տեղեկություն...

42. Այնուամենայնիվ, ինչպես նշվել է վերը, զեկույցում զետեղված տեղեկությունը ոչ միայն սխալ է եղել, այլ նաև այն չի ներառել դիմողի արդարացման կամ քրեական վարույթը դադարեցնելու վերաբերյալ որևէ նշում: Բացի դրանից, 1990թ. կայացված որոշումները չեն կցվել զեկույցին այն ժամանակ, երբ այն 2003թ. ներկայացվել է Անկարայի դատարան: Այս խախտումները, Դատարանի կարծիքով, հակասել են ոստիկանության գործունեությունը կանոնակարգող աներկբա դրույթներին և չի ապահովել մի շարք դատավարական երաշխիքներ, որոնք նախատեսված են ներպետական իրավունքով և կոչված են ապահովելու Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված դիմողի իրավունքները...

43. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ ոստիկանության քննարկվող զեկույցի նախագիծը և դիմումներն Անկարայի դատարան ներկայացնելը չի եղել «օրենքին համապատասխան»՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով...

## 5. Դատական նիստի արձանագրության մատչելիությունը

***Զեթն ընդդեմ Ֆինլանդիայի (Z v. Finland), 22009/93, 25.02.1997թ.***

111. Ինչ վերաբերում է բողոքին այն մասին, որ քննարկվող բժշկական տեղեկությունն սկսած 2002թ. հասանելի է դառնալու հանրությանը, ապա Դատարանը նշում է, որ գաղտնիության ժամկետի՝ տասը տարով սահմանափակումը չի համապատասխանում դատավարության կողմերի շահերին կամ ցանկություններին, որոնք բոլորն էլ խնդրել են գաղտնիության պահպանման ավելի երկար ժամկետ...

112. Դատարանը համոզված չէ, որ տասը տարի ժամկետ սահմանելով՝ ներպետական դատարանները բավարար չափով հաշվի են առել դիմողի շահերը: Անհրաժեշտ է հիշել, որ քննարկվող տեղեկությունն առանց նրա համաձայնության դատավարության ժամանակ հրապարակելու արդյունքում նրա անձնական և ընտանեկան կյանքին արդեն լուրջ միջամտություն է տեղի ունեցել: Հաջորդ միջամտությունը, որի արդյունքում նրա առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունը տասը տարի հետո հասանելի է լինելու հասարակությանը, պատճառաբանված չէ այնպիսի հիմքերով, որոնք կարող են բավարար դիտվել այդ տեղեկությունն ավելի երկար ժամանակ գաղտի պահելու վերաբերյալ նրա շահը հաշվի չառնելու համար: Նյութերը դեռևս 2002թ. հասանելի դարձնելու կարգադրությունը, կիրառման դեպքում, հանգեցնելու է անհամաչափ միջամտության նրա անձնական և ընտանեկան կյանքին՝ խախտելով 8-րդ հոդվածը ...

***Կրաքսին ընդդեմ Իտալիայի (Craxi v. Italy) (No 2), 25337/94, 17.07.2003թ.***

75. Սույն գործով Դատարանը կրկնում է, որ տեղի են ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի հետ անհամատեղելի անձնական բնույթի բացահայտումներ... Դրանից հետևում է, որ այն բանից հետո, որ արձանագրությունները հանձնվել էին գրասենյակի պատասխանատվությանը, իշխանությունները չեն կատարել իրենց պարտականությունը և չեն ապահովել դրանց պահպանությունը՝ դիմողի անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության նպատակով: Դատարանը նաև գտնում է, որ պարզ չէ, որ սույն գործով պատշաճ քննություն է իրականացվել պարզելու համար այն հանգամանքները, որոնցում լրագրողները ձեռք էին բերել դիմողի խոսակցությունների արձանագրությունները և, անհրաժեշտության դեպքում, պատժելու տեղի ունեցած թերացումների համար պատասխանատու անձանց...

76. ...Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում...

# Դ. ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

## Ի. ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

### 1. Իրավունքը

***Ռոսսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Ross v. United Kingdom), 11396/85, 11.12.1986թ., DR 50, 179***

3. ...թեև 6-րդ հոդվածը... չի երաշխավորում քրեական գործերով վերաքննիչ բողոքի ներկայացումը, քանի որ այն՝ կապված քրեական մեղադրանքի ներկայացման հետ, նախատեսված է ներպետական օրենսդրությամբ, 6-րդ հոդվածի երաշխիքները... կիրառելի են վերաքննիչ վարույթում, քանի որ այդ վարույթներն ամբողջ դատավարության մաս են կազմում, որը հարուցվել է ներկայացված քրեական մեղադրանքի առնչությամբ...

***Կրոմբախն ընդդեմ Ֆրանսիայի (Krombach v. France), 27931/96, 13.02.2001թ.***

96. Դատարանը կրկնում է, որ Պայմանավորվող կողմի կարգավիճակը սկզբունքորեն ենթադրում է գնահատման լայն շրջանակ՝ որոշելու համար, թե ինչպես են Կոնվենցիայի 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն իրականացվելու: Այսպիսով, վերադաս ատյանի կողմից դատապարտման կամ պատիժ նշանակելու հետ կապված հարցի վերանայումը կարող է վերաբերել երկուստեք՝ փաստին և իրավունքին, կամ սահմանափակված լինել բացառապես իրավունքի հարցերով: Բացի դրանից, որոշ պետություններում բողոք ներկայացնելու ցանկություն ունեցող մեղադրյալից կարող է պահանջվել այդ անելու թույլտվություն ստանալ: Սակայն վերանայման իրավունքի կապակցությամբ ներպետական օրենսդրության մեջ առկա ցանկացած սահմանափակում, որը նշվել է այդ դրույթում, պետք է, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ դատարան դիմելու իրավունքի համամնմանությամբ, օրինական նպատակ հետապնդի և չխախտի այդ իրավունքի բուն էությունը...: Այս կանոնն ինքնին համապատասխանում է 2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված բացառությանը և հիմնված է Ֆրանսիական հռչակագրի վրա, որը վերաբերում է այդ հոդվածի մեկնաբանությանը, որի համաձայն՝ «...2-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով վերադաս ատյանի կողմից վերանայումը սահմանափակված է օրենքի կիրառման նկատմամբ այնպիսի վերահսկողությամբ, որն իրականացվում է Գերագույն դատարանի կողմից»:

97. ...տվյալ ժամանակահատվածում... հնարավոր էր միայն օրենքով սահմանված կարգով բողոք ներկայացնել: Առաջին հայացքից, Ֆրանսիայի քրեական դատավարության կանոնները կարծես համապատասխանում են 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածին...

98. Սակայն, Դատարանը նշում է, որ Ֆրանսիական հռչակագիրը, որը վերաբերում է Արծանագրության մեկնաբանությանը, չի կիրառվում Քրեական դատավարության օրենսգրքի 636-րդ հոդվածի նկատմամբ, որն ուղղակիորեն նախատեսում է, որ *in absentia* դատապարտված անձն իրավասու չէ վճռաբեկ բողոք ներկայացնել: Հետևաբար, տառացի մեկնաբանության արդյունքում ստացվում է, որ դիմողին տրամադրված չի եղել դատական մեկ ատյանի կողմից *in absentia* իր դատապարտման դեմ բողոք ներկայացնելու «ընթացակարգ»...

99. Սույն գործով դիմողը բողոքարկել է այն, որ նա իրավունք չի ունեցել Վճռաբեկ դատարանում վիճարկելու *in absentia* դատավարության թերությունները: Դատարանը գտնում է, որ այն փաստը, որ մեղադրյալը կարող է քավել իր մեղքը, այդ կապակցությամբ որոշիչ չէ..., քանի որ մեղքը քավելը կարող է դիմողին տրամադրել իր ներկայությամբ իր գործի ամբողջական վերանայում՝ այսպիսով Պետության վրա պարտականություն դնելով ծերբակալման պահից սկսած ըստ էության երաշխավորելու մրցակցային դատավարությունը և քրեական հանցագործության մեջ մեղադրվող անձի պաշտպանության իրավունքի ապահովումը:

100. Սույն գործով դիմողը ցանկացել է պաշտպանվել առաջադրված մեղադրանքից և բողոքարկել նախնական քննության իրականացումը: Դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ դիմողը հնարավորություն չի ունեցել գոնե Վճռաբեկ դատարանի միջոցով վերանայելու Ասսիզների դատարանի կողմից փաստաբանների կողմից մեղադրյալին պաշտպանելը մերժելու օրինականությունը...

Քրեական դատավարության օրենսգրքի 630-րդ և 639-րդ հոդվածների համաձայն... դիմողը, մի կողմից, չէր կարող և չի ներկայացվել փաստաբանի կողմից Ասսիզների դատարանում..., և, մյուս կողմից՝ չէր կարող վճռաբեկ բողոք բերել, քանի որ մեղադրվել էր *in absentia:* Հետևաբար, առաջին ատյանի դատարանում չուներ պաշտպանվելու, իսկ վերադաս ատյանի կողմից իր դատապարտումը վերանայելու իրական հնարավորություն:

Հետևաբար, տեղի է ունեցել նաև Կոնվենցիայի 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածի խախտում:

***Գուրեպկան ընդդեմ Ուկրաինայի (Gurepka v Ukrain), 61406/00, 06.09.2005թ.***

60. Դատարանն ուսումնասիրել է Վարչական իրավախախտումների մասին Օրենսգրքով նախատեսված բացառիկ վերանայման ընթացակարգն: Այն կարող է հարուցվել միայն դատախազի կողմից կամ վերադաս դատարանի նախագահի միջնորդությամբ...: Քանի որ այս ընթացակարգը ուղղակիորեն հասանելի չէ դատավարության կողմին և չի հիմնվում նրա միջնորդության կամ փաստարկների վրա, Դատա-

րանը գտնում է, որ սա չի հանդիսանում Կոնվենցիայի իմաստով բավականաչափ արդյունավետ ընթացակարգ:

61. Ինչ վերաբերում է Կառավարության այն փաստարկին, որ դիմողի վարչական ձերբակալման և կալանավորման վերաբերյալ որոշումը վերանայվել է վերադաս ատյանի կողմից, Դատարանը չի գտնում որևէ ապացույց առ այն, որ Դատախազի գրասենյակի կողմից բացառիկ բողոքի ներկայացման հիմքում ընկած է եղել դիմողի միջնորդությունը: Ավելին, այս բողոքարկումն արտացոլել է Դատախազի գրասենյակի դիրքորոշումը և ոչ թե դիմողինը: Այս վարույթների ընթացքում դիմողին հնարավորություն չի ընձեռվել որևէ փաստարկ ներկայացնել, և Դատախազի գրասենյակի և դատարանի միջև քննարկվել է այն հարցը, թե ով է իրավասու դիմողի նկատմամբ հարկադրանքի միջոց կիրառել: Դատարանը գտնում է, որ միայն այն փաստը, որ Դատախազի գրասենյակի կողմից հարուցված վերանայումը որոշակի դրական, սակայն ժամանակավոր ազդեցություն է ունեցել դիմողի վրա, մասնավորապես՝ հետաձգել է նրա նկատմամբ պատժի կիրառումը, ինքնին բավարար չէ եզրակացնելու, որ բացառիկ վերաքննությունն արդյունավետ ընթացակարգ է, որը համապատասխանում է 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածի պահանջներին:

***Գրեկուն ընդդեմ Ռումինիայի (Grecu v. Romania), 75101/01, 30.11.2006թ.***

82. Տվյալ դեպքում, այն հանցագործությունը, որում հայցվորը մեղավոր է ճանաչվել իշխանությունների կողմից, պատժվում է 6 ամսից 5 տարի ազատազրկմամբ: Փաստորեն խոսքը չի վերաբերում, ինչպես նշել է Կառավարությունը, միջին ծանրության հանցագործությանը, որի դեպքում հիմնավորվում է գործը միայն մեկ դատական ատյանին ենթակա լինելու փաստը: Վերոնշյալ հոդվածի 2 մասով նախատեսված այն բացառությունը, որը միջին ծանրության հանցագործությունների քննության համար նախատեսում է երկաստիճան դատական համակարգ, տվյալ դեպքում կիրառելի չէ՝ հաշվի առնելով գործի հանգամանքները:

83. Դիմողի մեղքի մասին գործը քննած միակ անկախ և անկողմնակալ դատական իշխանության մարմինը 2000թ. ապրիլի 25-ին դատավճիռ կայացրած՝ Բուխարեստի Շրջանային դատարանն է:

84. Դիմողի հետագա բողոքը վերոհիշյալ վճռի դեմ անհաջողությամբ է ավարտվել: Ինչպես պնդել է Կառավարությունը, այդ պահին չկար այնպիսի օրենսդրական նորմ, որը կսահմաներ Դատախազության որոշման դեմ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ առաջին ատյանի դատարանի կողմից կայացված որոշումների դեմ վերադաս դատական ատյանին բողոք բերելու եղանակները: Հաշվի առնելով, այն հանգամանքը, որ Կառավարությունն ընդհանուր բնույթի նորմերի կիրառման հետ կապված գործեր չի քննում, ապա գործով կիրառման ենթակա օրենսդրական պրակտիկան վկայում է այն մասին, որ դա-

տական վերահսկողության ազգային մարմինները, մասնավորապես Վճռաբեկ դատարանը, առանց քննության են թողնում դատախազի կողմից կատարված գործողությունների օրինականության և հիմնավորվածության հարցով որոշումների դեմ բողոքները:

85. Դատարանը հատկապես գտնում է, որ դատախազի կողմից կայացված որոշումները վերանայելու իրավասություն ունեցող ազգային օրենքով առաջին ատյանի դատարանների որոշումների դեմ բողոքարկման եղանակների կարգավորման հարցն, այսուհետ կարգավորվում է 2003թ. հունիսի 26-ի թիվ 281 օրենքի նոր՝ 278 հոդվածով:

86. Հաշվի առնելով այդ ժամանակ գործող օրենսդրությունը և գործով կիրառման ենթակա օրենսդրական պրակտիկան, այն հետևանքը, որն այն ունեցել է գործի քննության վրա, Դատարանը գտնում է, որ հայցվորը զրկված էր երկաստիճան դատական համակարգի առջև իր գործի քննության հնարավորությունից, որը խախտում է 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածը:

***Զաիցևներն ընդդեմ Լատվիայի (Zaicevs v. Latvia), 65022/01, 31.07.2007թ.***

55. Կառավարությունը պնդել է, որ այն հանցանքը, որի համար հայցվորը դատապարտվել է 2-րդ հոդվածի 2-րդ մասով՝ համարվում է «միջին ծանրության» հանցագործություն: Այս առումով, Դատարանը հիմնվել է 7-րդ արձանագրության պարզաբանումների մասով նախատեսված դրույթների վրա, որի արդյունքում արձանագրում է՝ որոշելու համար, որ հանցագործությունը միջին ծանրության է, կարևոր է մեկ հատկանիշ՝ արդյոք այդ հանցագործության համար նախատեսված է ազատազրկման ձևով պատիժ, թե՝ ոչ: Այս դեպքում, Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 201-39-րդ հոդվածներ տվյալ հանցանքի կատարման համար նախատեսված է կալանք՝ մինչև 15 օր: Հաշվի առնելով 2-րդ հոդվածի կարգավորման առարկան և այն երաշխիքները, որոնք այն նախատեսում է, Դատարանը համոզված է, որ այնպիսի հանցագործությունը, որի համար որպես հիմնական պատժամիջոց օրենքով նախատեսված է ազատզրկման ձևով պատիժ, չի կարող 2-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով «միջին» որակվել: Ինչ վերաբերում է ազգային օրենսդրությամբ հանցանքի որակմանը, Դատարանն արդեն նշել է, որ այն ունի միայն հարաբերական արժեք: Տվյալ գործում, Կառավարության կողմից մատնանշված բառացությունը ենթակա չէ կիրառման:

56. Վերջապես, Դատարանը նշում է, որ Սահմանադրական դատարանն իր՝ 2002թ. հունիսի 20-ի որոշմամբ հայտարարել է, որ Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 279-րդ հոդվածի 2-րդ մասը հակասում է 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածին և այն չեղյալ է հայտարարել: Այդուհանդերձ, այս փոփոխությունը չի տարածվել հայցվորի կարգավիճակի վրա, որի վրա տարածվել են

քննարկվող նորմի հետևանքները և որը հանդիսանում է վերացված իրավախախտման «զոհ»:

57. Արդյունքում, խախտվել է 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածը:

***Գալստյանն ընդդեմ Հայաստանի (Galstyan v. Armenia), 26986/03, 15.11.2007թ.***

124. Դատարանը նախ նշում է, որ դիմողը պատասխանատվության է ենթարկվել համաձայն ՎԻՎՕ-ի, որը նախատեսում է պատժամիջոցներ այնպիսի իրավախախտումների համար, որոնք ներպետական օրենսդրությամբ չեն դասվում քրեական հանցագործությունների թվին: Այս հանգամանքը կարող է հարց առաջացնել, թե արդյո՞ք այն իրավախախտումը, որի համար դիմողը պատասխանատվության է ենթարկվել, Կոնվենցիային կից թիվ 7 արձանագրության 2-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է չնչին հանցագործություն, թե՝ ոչ, և հոդվածում ամրագրված բացառությունը պետք է տարածվի դրա վրա: Դատարանը հիշեցնում է, որ նախկինում Հանձնաժողովը «չնչին հանցագործություն» է համարել Ավստրիայի քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ «դատարանում կարգուկանոնի դեմ ուղղված իրավախախտումը», որի համար նախատեսված էր 100.000 ավստրիական շիլինգ տուգանք, կամ, եթե դա անհրաժեշտ է կարգուկանոնի պահպանման համար՝ առավելագույնը 8-օրյա ազատազրկում… Սույն գործում, դիմողը ենթարկվել է եռօրյա կալանքի: Սակայն ՎԻՎՕ-ի 172-րդ հոդվածը, որի համաձայն կիրառվել էր պատասխանատվությունը, նախատեսում էր առավելագույնը 15-օրյա ազատազրկում: Դատարանը գտնում է, որ 15-օրյա կալանքը բավականին խիստ պատիժ է, որպեսզի չհամարվի «չնչին հանցագործություն»՝ Կոնվենցիային կից թիվ 7 արձանագրության 2-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով:

125. Դատարանը հիշեցնում է, որ Պայմանավորվող կողմերն սկզբունքորեն ունեն հայեցողության լայն ազատություն որոշելու համար, թե Կոնվենցիային կից թիվ 7 արձանագրության 2-րդ հոդվածով նախատեսված իրավունքները ինչպես պետք է իրականացվեն: Որոշ պետություններում բողոքարկել ցանկացող անձից կարող է պահանջվել դրա համար թույլտվություն ստանալ: Սակայն բողոքարկման իրավունքի՝ ներպետական օրենսդրությամբ նախատեսված ցանկացած սահմանափակում, ինչպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված դատարանի մատչելիության իրավունքի դեպքում, պետք է հետապնդի իրավաչափ նպատակ և չվնասի այդ իրավունքի էությունը…

126. Դատարանը հիշեցնում է վերը նշված իր որոշումը, որ ՎԻՎՕ-ի 294-րդ հոդվածով նախատեսված վերանայման ընթացակարգն անձին չի ընձեռում բողոքարկելու հստակ և մատչելի իրավունք…: Այս հոդվածը նախատեսում է վերադաս դատարանի նախա-

գահի իրավունքը՝ վերանայելու որոշումը, լինի դա անձի խնդրանքով, թե՝ առանց դրա, որը, ավելին՝ չունի որևէ հստակ ձևակերպված ընթացակարգ կամ ժամկետներ և չկա դրա կիրառման հետևողական պրակտիկա: Դատարանի կարծիքով, վերանայման նման հնարավորությունը չի կարող համարվել Կոնվենցիային կից թիվ 7 արձանագրության 2-րդ հոդվածին համապատասխան: Այստեղից հետևում է, որ դիմողն իր տրամադրության տակ չի ունեցել բողոքարկման այնպիսի ընթացակարգ, որը կհամապատասխաներ այս հոդվածի պահանջներին:

***Հաջիևն ընդդեմ Ադրբեջանի (Hajiyev v. Azerbaijan), 5548/03, 16.11.2006թ.***

39. Դատարանը գտնում է, որ դիմողի կողմից համակարգը հասկանալը պետք է գնահատվի այն ժամանակ, երբ նա փորձել է կիրառել քննարկվող ընթացակարգը... Միջանկյալ օրենքը նախատեսում է նրա գործի վերաքննություն «վերաքննիչ կամ Գերագույն դատարանի կողմից»: Այս ձևակերպումը... չէր կարող դիմողին հստակ պատկերացում տալ առ այն, որ իր բողոքը գտնվում էր Գերագույն դատարանի՝ որպես վճռաբեկ ատյանի, ընդդատության ներքո՝ այսպիսով շրջանցելով վերաքննիչ ատյանը, որը, որպես կանոն, հասանելի էր նոր ՔԴՕ-ով նախատեսված ընթացակարգով դատապարտված անձանց համար:

40. Դիմողն իր ամբողջական բողոքը ներկայացրել է 2002թ. մարտի 7-ին: Հակառակ այն փաստին, որ նա դրանից հետո մի քանի անգամ վերանայել է իր բողոքը, այն ո՛չ վերանայվել, ո՛չ մերժվել է դատարանի ձևական որոշմամբ, քանի որ Վերաքննիչ դատարանն իրավասու չէր լսելու այն: Բացի դրանից, դիմողի շարունակական հարցումների արդյունքում, նրան երկու անգամ՝ 2002թ. հոկտեմբերի 24-ին և նոյեմբերի 27-ին Վերաքննիչ դատարանի գործավարի նամակով հավաստվել է, որ իր գործը շուտով քննվելու է: Մինչև 2004թ. մարտի 31-ը, այսինքն՝ բողոքի ներկայացումից ավելի քան երկու տարի հետո, դիմողը Վերաքննիչ դատարանի կողմից չի տեղեկացվել, որ նրա բողոքը ենթակա է քննության Գերագույն և ոչ թե Վերաքննիչ դատարանի կողմից: Հակառակ դրան, նրան համոզել են, որ իր գործը իրականում գտնվում է Վերաքննիչ դատարանում՝ քննության փուլում, սակայն երկարատև հետաձգումներ են կատարվել:

41. Դատարանը նաև նշում է, որ նույն ժամանակաընթացքում երեք այլ անձանց գործեր, ովքեր դատավարական առումով համեմատելի վիճակում էին գտնվում, Վերաքննիչ դատարանի կողմից քննվել են վերաքննիչ վարույթի շրջանակներում՝ հիմք ընդունելով Միջանկյալ օրենքի այդ նույն դրույթը...

42. Դատարանին չի համոզում Կառավարության այն փաստարկը, որ այս երեք գործերը մեծապես տարբերվել են դիմողի գործից...

43. Այս հանգամանքներում, Դատարանը եզրակացնում է, որ հաշվի առնելով Միջանկյալ օրենքի երկակիությունը և դրա դրույթների վերաբերյալ ներպետական դատական ատյանների մեկնաբանության բացակայությունը, ինչպես նաև երեք ներպետական նախադեպերի առկայությունը, որոնցով Միջանկյալ օրենքի հիման վրա Վերաքննիչ դատարանը գործերի վերանայում է իրականացրել, հիմնավորված է դիմողի տեսակետն այն մասին, որ իր բողոքը պետք է քննվի Վերաքննիչ դատարանի կողմից:

44. Բացի դրանից, Դատարանը նշում է, որ ՔԴՕ 391.1-րդ և 391.2-րդ հոդվածների համաձայն՝ եթե անգամ բողոքը ենթակա չէ քննության Վերաքննիչ դատարանում կամ ենթակա է մերժման որևէ այլ պատճառով (օրինակ՝ բողոքարկման ժամկետն անցել է), Վերաքննիչ դատարանը պետք է նախնական լսում իրականացնի բողոքը ստանալուց 15 օրվա ընթացքում և որոշի, թե ներպետական օրենսդրության իմաստով այն իրավասու է, արդյոք, քննելու այդ բողոքը: Բացի դրանից, ՔԴՕ 391.3-րդ հոդվածի համաձայն՝ եթե Վերաքննիչ դատարանը գտնի, որ նման իրավասություն չունի, այն պետք է մերժման վերաբերյալ պատճառաբանված որոշում կայացնի և/կամ գործն ուղարկի ըստ ընդդատության: Հետևաբար, եթե անգամ Վերաքննիչ դատարանը գտել էր, որ իրավասու չէ քննելու դիմողի բողոքը, այն ներպետական օրենսդրության իմաստով պարտավոր էր նախնական լսում իրականացնել և դիմողի վերաքննիչ բողոքն ստանալու պահից 15 օրվա ընթացքում մերժման որոշում կայացնել:

45. Սակայն ավելի քան երկու տարի Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել դիմողի բողոքին և չի հարուցել վերաքննիչ վարույթ կամ մերժել այն իրեն ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ: Ինչպես նշվել է վերը, 2004թ. մարտի 31-ի նամակը, որն ստորագրվել է Վերաքննիչ դատարանում աշխատող գործավարի կողմից, ներպետական օրենսդրության համաձայն չի հանդիսանում այդ դատարանի ձևական դատական որոշում:

46. ...Իր բողոքը ներկայացնելու ժամանակահատվածում և դրան հաջորդած երկու տարիների ընթացքում դիմողին չեն տրամադրվել բավարար երաշխիքներ կանխելու համար Միջանկյալ օրենքով իրեն տրամադրված ընթացակարգի սխալ ընկալումը, ինչի արդյունքում անձի մոտ կարծիք է ձևավորվել առ այն, որ իր գործը պետք է քննվի Վերաքննիչ դատարանի կողմից: Հաշվի առնելով սույն գործի առանձնահատկությունները՝ Դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը պետք է քայլեր ձեռնարկեր համոզվելու համար, որ դիմողը պատշաճ կերպով օգտվում է Միջանկյալ օրենքով իրեն վերապահված իրավունքներից: Սակայն Վերաքննիչ դատարանն այդպես չի վարվել: Դատարանը նաև գտնում է, որ նման հանգամանքներում դիմողից չի կարող պահանջվել դիմել Գերագույն դատարան:

47. Վերոգրյալ դատողությունների լույսի ներքո, Դատարանը եզրակացնում է, որ սահմանափակվել է դիմողի դատարան դիմելու և, հետևաբար, նաև արդար դատական քննության իրավունքը:

Հետևաբար, Դատարանը մերժում է Կառավարության նախնական առարկությունը և գտնում է, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

***Պատսուրիսն ընդդեմ Հունաստանի (Patsouris v. Greece), 44062/05, 08.01.2009թ.***

36. Դատարանը միանգամից նշում է, որ համաձայն գործում առկա փաստերի՝ սկզբունքորեն թիվ 3346/2005 օրենքի դրույթները տարածվում են այն անձանց վրա, որոնք առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանների կողմից դատապարտվել են մինչև վեց ամիս ժամկետով ազատազրկման, մասնավորապես այն դեպքում, երբ այդ պատժամիջոցներն ի կատար չեն ածվել, անձինք դրանց կատարման համար չունեն դատվածություն: Այս վերջին կետում, Դատարանը մեծ կշիռ է տալիս երկրի դատախազների կողմից տրված իրար համապատասխանող եզրակացություններին, որոնցում նշվել է, որ այնպիսի հանցանքների համար, որոնց կատարման համար դատապարտված է հայցվորը, դատական ռեեստրում գրանցելն արգելվում է (տե՛ս 26-րդ կետը): Ավելին, Դատարանն ընդունում է, որ նոր օրենքն օրինական նպատակ է հետապնդում, այն է՝քրեական դատավարության արագացումը՝ փոքրացնելով դատարանների դերը նվազ կարևորության գործերում:

37. Խոսելով հայցվորի դեպքի մասին՝ Դատարանը պետք է որոշի, թե արդյոք քրեական գործի որակումն ունեցել է այլ բացասական հետևանքներ, ինչը կարող էր հայցվորի համար արդեն քննված գործը դատական բարձր ատյանի առջև վերանայելու՝ օրենքով նախատեսված իրավունքից օգտվելու պայման հանդիսանալ:

38. Ճիշտ է, որ նոր հանցանքի կատարման դեպքում քրեական հետապնդումը վերսկսելու հնարավորությունը պահպանվում էր, սակայն այն կասկածի տակ էր դնում դատապարտյալի իրավունքները: Այնուամենայնիվ, Դատարանը հիշեցնում է, որ մասնավոր գանգատի հիման վրա հարուցված գործերով այն վիճարկվող օրենսդրությունն իր ընդհանրության մեջ ստուգելու գործառույթ չունի: Դատարանը պետք է հնարավորինս սահմանափակվի հարուցված գործում առկա խնդիրների ուսումնասիրմամբ: Տվյալ դեպքում Դատարանը գտնում է, որ, անկասկած, հայցվորն օրենքի պաշտոնական հրատարակումից հետո 18 ամսվա ընթացքում նոր հանցանք չի կատարել, և որ այդ պատճառով նրա գործը երբևէ չէր կարող հանվել արխիվներից և նրա դեմ օգտագործվել:

39. Իրավացի է, որ առաջին ատյանի դատարանի կողմից հայցվորի դատապարտումը հաշվի է առնվել նրա դեմ հարուցված կարգապահական վարույթում, որը դեռևս շարունակվում է: Դատարանը, այ-

նուամենայնիվ, նշում է, որ վերջինս բառառիկ դեր չի ունեցել կարգապահական վարույթի համար: Այն գտնում է, որ կարգապահական վարույթների ընթացքում իրավասու մարմիններն իրենց որոշումները հիմնավորելու համար հիմնվում են ապացույցների տարբեր տեսակների վրա, մասնավորապես՝ վկաների ցուցմունքների և փաստաթղթերի, որոնք ստացվում են հայցվորի և նրա իրավախորհրդատուի ներկայությամբ ընթացող դատական վիճաբանությունների ընթացքում: Բացի դրանից, այնքանով, որքանով հայցվորը պնդել է, որ նրա դեմ կարգապահական վարույթ է հարուցվել «երկկողմ վնասի» պատճառման համար…, Դատարանը գտնում , որ այդ փաստարկը հիմնված է այն վարկածի վրա, որ հայցվորը քրեական վերադաս դատական ատյանների կողմից կարդարացվեր, եթե իր գործը չավարտվեր առաջին ատյանի դատարանի կողմից կայացված որոշումից հետո: Նույնիսկ այս վերջին դեպքում, հաշվի առնելով ներպետական օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան՝ կարգապահական մարմիններն իրավասու են հայցվորի նկատմամբ պատժամիջոց կիրառել, եթե նրանք գտնեն, որ վերջինիս վարքագիծը վնաս է հասցրել հուսական ոստիկանության պատվին և հեղինակությանը:

40. Ավելին, Դատարանը գտնում է, որ հայցվորի առաջարկությանը հետևելը, ըստ որի՝ կարգապահական մարմինները լիովին պետք է անտեսեն իր դեմ հարուցված քրեական գործը, որպեսզի կարողանան հաստատել, որ նրա գործի ավարտը համապատասխանում էր 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածին, կնշանակեր կասկածի տակ դնել կարգապահական մարմինների իրավասությունները: Չնայած դրան, կարգապահական մարմինները համաձայն ազգային օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի՝ իրավասու են անդրադառնալ քրեական դատարանի կայացրած որոշմանը և գնահատել քրեական հետապնդման հիմք ծառայած փաստերը.. Դատարանը հիշեցնում է, որ տվյալ գործը չի վերաբերում կարգապահական վարույթի արդարացիությանը, քանզի այն դեռևս ավարտված չէ, այլ հայցվորի՝ իր դատապարտումը վերադաս դատական ատյանի կողմից վերանայելու իրավունքի սահմանափակմանը:

41. Նկատի ունենալով վերոշարադրյալը, Դատարանը գտնում է, որ տվյալ գործի առանձնահատուկ հանգամանքներում, թիվ 3346/2005 օրենքի դրույթների կիրառումն այնպիսի հետևանքներ է ունեցել, որը կարելի է համեմատել անձին գործին մասնակից չդարձնելու հետ: Այդպիսով, Դատարանը եզրահանգում է, որ նոր օրենքի շրջանակներում հայցվորի գործի կարճումը իրավական ոչ մի խնդիր չի առաջացրել երկաստիճան դատական համակարգին դիմելու իրավունքի համար, եթե նույնիսկ նախնական շրջանում հայցվորը դատապարտվել էր այնպիսի հանցագործության համար, որի համար ենթակա էր ազատազրկման եղանակով պատժի:

42. Այսպիսով, 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

**2. Հրաժարումը**

***Խալֆաուն ընդդեմ Ֆրանսիայի (Khalfaoui v. France), 34791/97, 14.12.1999թ.***

43. ...կալանավորման համար ինքնակամ ներկայանալու պարտականությունը բողոքատուին դրդել է ինքնին իրեն դնել ազատության սահմանափակման վիճակում, որը բխել է վիճարկվող որոշումից, եթե անգամ Ֆրանսիայի օրենսդրության համաձայն օրենքով սահմանված կարգով վերաքննիչ բողոքի ներկայացումը հետաձգում է դատավճռի ուժի մեջ մտնելը և վերաքննության կարգով բողոքարկված դատավճիռները դեռևս վերջնական չեն: Հետևաբար, մեղադրական դատավճիռն ուժի մեջ է մտնում միայն այն ժամանակ, երբ ներկայացված բողոքն օրենքով սահմանված կարգով մերժվում է:

44. Քանի որ խնդիրը վերաբերել է դատական որոշումներում առկա հենց հարկադրանքի օրինականության հավաստմանը, Դատարանը գտնում է, որ իշխանություններն իրենց իրավասության տակ ունեն այլ միջոցներ մեղադրվող անձին՝ նրա կողմից օրենքով սահմանված կարգով ներկայացված բողոքը լսելուց առաջ կամ հետո կալանավորելու համար: Գործնականում, կալանավորման համար ինքնակամ ներկայանալու պարտականությունը նպատակ է հետապնդում փոխարինելու այն ընթացակարգերը, որոնց ընթացքում դա իրականացվում է ոստիկանության ուժերի կիրառմամբ, և որը հիմնված է առավելապես օրենքով սահմանված կարգով բողոք ներկայացնելու նրանց իրավունքի սահմանափակման հետ կապված պատժի վրա:

45. Ի վերջո, Դատարանը գտնում է, որ կալանավորման համար ինքնակամ ներկայանալու պարտականությունը չի հիմնավորվում նաև վճռաբեկ վարույթի առանձնահատկություններից ելնելով. վարույթը Վճռաբեկ դատարանում, որտեղ կարող են ներկայացվել միայն իրավական հարցերի հետ կապված փաստարկներ... որպես կանոն, գրավոր է, և չկա որևէ նշում այն մասին, որ նիստին դիմողի մասնակցությունն անհրաժեշտ է...

46. Սույն գործով, Քրեական դատավարության օրենսգրքի 583-րդ հոդվածի դրույթների համաձայն, դիմողի՝ կալանավորման համար ինքնակամ չներկայանալը պատժվել է՝ նրան օրենքով սահմանված կարգով բողոք ներկայացնելու իրավունքից զրկելով: Այդ կապակցությամբ, հակառակ Կառավարության փաստարկներին, Դատարանը չի տեսնում մեծ տարբերություն ինքնաբերաբար մերժման, որը նախատեսված է միայն Վճռաբեկ դատարանի քրեական բաժնի նախադեպային իրավունքով... և բողոք ներկայացնելու իրավունքից զրկելու միջև, որն ուղղակիորեն նախատեսված է 583-րդ հոդվածով...

47. Անդրադառնալով քրեական գործերը Վճռաբեկ դատարանի կողմից վերանայելու կարևորությանը և վերանայվող հարցի կարևորությունն այն անձանց համար, ովքեր կարող են դատապարտվել երկարաժամկետ ազատազրկման, Դատարանը գտնում է, որ սա հատ-

կապես խիստ պատիժ է, ինչն ազդում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ դատարան դիմելու իրավունքի վրա...

53. ...խնդրելու հնարավորությունն ազատում է կալանավորման համար ինքնակամ ներկայանալու պարտականությունից, սակայն, Դատարանի կարծիքով, չի կարող վերացնել օրենքով սահմանված կարգով բողոք ներկայացնելու իրավունքից զրկելու համար պատասխանատվության անհամաչափությունը:

54. Հետևաբար, հաշվի առնելով գործի բոլոր հանգամանքները, Դատարանը գտնում է, որ դիմողի՝ դատարան դիմելու և, հետևաբար, նաև արդար դատական քննության իրավունքը չափազանց խիստ սահմանափակման է ենթարկվել:

***էլիազերն ընդդեմ Նիդեռլանդների (Eliazer v. Netherlands), 38055/97, 16.10.2001թ.***

33. Սույն գործով... դիմողը պարտավոր չէր կալանավորումը դիտել որպես Արդարադատության միացյալ դատարանում բողոքարկման վարույթի իրականացման նախապայման: Դիմողն ինքը էր նախընտրել չներկայանալ այս վարույթներին, քանի որ առկա էր նրան ձերբակալելու վտանգը: Բացի դրանից... վճռաբեկ դատարան տանող ճանապարհը դիմողի համար կբացվեր, եթե նա նախընտրեր ներկա գտնվել բողոքարկման վարույթին...

34. Հակառակ դրան, Դատարանը գտնում է, որ սույն գործով Պետության շահը՝ կապված որքան հնարավոր է շատ գործեր մեղադրյալի ներկայությամբ քննելու հետ՝ նախքան վճռաբեկ վարույթին դիմելը, գերազանցում է ձերբակալվելու վտանգից վախենալով մեղադրյալի՝ դատարան չներկայանալուն...

35. Այս եզրակացությանը հանգելիս Դատարանը հաշվի է առել ամբողջ դատավարությունը, մասնավորապես այն հանգամանքը, որ դիմողի փաստաբանը լսվել է Արդարադատության միացյալ դատարանում տեղի ունեցած վերաքննության վարույթի ընթացքում այն դեպքում, երբ դիմողը չի ներկայացել այդ վարույթներին... և որ դիմողն իրավասու էր դիմելու Գերագույն դատարան՝ նախաձեռնելով այնպիսի վարույթ, որը կհանգեցներ իր դեմ ներկայացված մեղադրանքների վերանայման, այն դեպքում, եթե նա ներկա է եղել դատավարությանը: Դատարանի կարծիքով, չի կարելի ասել, որ նման համակարգը, որն ապահովում է մասնավոր շահերի հավասարակշռությունը, անարդարացի է:

36. Դիմողի վճռաբեկ բողոքը մերժելու վերաբերյալ որոշումը չի կարող, հետևաբար, դիտվել որպես դիմողի՝ դատարան դիմելու իրավունքի անհամաչափ խախտում կամ արդար դատական քննությունից զրկում: Հետևաբար, տեղի չի ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի խախտում:

***Օսուն ընդդեմ Իտալիայի (Osu v. Italy), 36534/97, 11.07.2002թ.***

29. Դատարանն առաջին հերթին նշում է, որ դիմողը, ով հեռացել էր Իտալիայից՝ առաջին ատյանի դատարանի կողմից իրեն արդարացնելուց կարճ ժամանակ անց, մեղադրանքի կողմի իշխանություններին չի տեղեկացրել իր հասցեի փոփոխության մասին, ինչպես դա նախատեսված է ներպետական օրենսդրությամբ: Իտալիայի իշխանությունները վերաքննիչ վարույթի բոլոր փաստաթղթերն ուղարկել են դիմողի՝ Իտալիայի հասցեով: Քանի որ այս փորձերն անհաջողությամբ են ավարտվել, ուստի դիմողը տեղեկություն չի ունեցել Հանրային մեղադրողի կողմից Արեցոյի Շրջանային դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու մասին:

30. Դատարանը նաև նշում է, որ դիմողը տեղեկացվել էր Ֆլորենցիայի Վերաքննիչ դատարանի կողմից իրեն դատապարտելու վերաբերյալ ամենաուշը 1995թ. օգոստոսի 19-ին՝ իր ձերբակալման օրը: 1995թ. սեպտեմբերի 22-ին նա դիմել է Վճռաբեկ դատարան՝ խնդրելով իրեն թույլատրել ժամկետանց բողոք ներկայացնել...

34. ...դիմողի խնդրանքը... անթույլատրելի է ճանաչվել այն հիմքով, որ չի ներկայացվել Քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածով նախատեսված տասնօրյա ժամկետի ընթացքում...

36. ...Դատարանը գտնում է, որ 1969թ. հոկտեմբերի 7-ի թիվ 742 օրենքի 1-ին բաժինը նախատեսում է, որ դատավարական ժամկետների ընթացքն ինքնաբերաբար դադարեցվում է յուրաքանչյուր տարվա օգոստոսի 1-ից սեպտեմբերի 15-ը և որ՝ եթե ժամկետն սկսում է ընթանալ այդ ժամանակահատվածում, ապա ժամկետի սկիզբն ինքնաբերաբար հետաձգվում է մինչև այդ ժամկետի ավարտը: Փաստորեն, դիմողն իր խնդրանքը չի ներկայացրել սեպտեմբերի 22-ին, այսինքն՝ 1995թ. սեպտեմբերի 16-ից սկսված տասնօրյա ժամկետի ընթացքում:

37. Սակայն Վճռաբեկ դատարանը չի կիրառել թիվ 742 օրենքի դրույթները և մերժել է դիմողի բողոքը՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ: Վճռաբեկ դատարանի որոշման կամ Կառավարության վերլուծության մեջ չկա որևէ հիմնավորում, թե ինչու դիմողի գործով չի կիրառվել թիվ 742 օրենքի տառացի մեկնաբանությունը...

38. Վերոգրյալի լույսի ներքո, Դատարանը գտնում է, որ դիմողը հիմնավորված կերպով կարող էր ակնկալել, որ իր գործով դադարեցվելու են դատավարական ժամկետների սահմանափակումները, և որ ներպետական օրենսդրության իմաստով Վճռաբեկ դատարանի 1996թ. հունվարի 30-ի որոշումը չի եղել կանխատեսելի:

39. Կասեցված ժամկետի ավարտից յոթ օր հետո վերաքննիչ բողոք ներկայացնելու վերաբերյալ խնդրանքի առումով չի կարելի ասել, որ դիմողը գործել է անզգուշաբար: Այս հանգամանքներում Դատարանը գտնում է, որ առանց որևէ պատճառաբանության 747/69 օրենքի 1-ին բաժնի չկիրառումը, հետևաբար, զրկել է դիմողին *in*

*absentia* իր դատապարտումը դատարանում վիճարկելու հնարավորությունից:

40. Հետևաբար, տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

***ԱԵՓԻ ՍԱ-ն ընդդեմ Հունաստանի (AEPI SA v. Greece), 48679/99, 11.04.2002թ.***

24. Դատարանը նշում է, որ 505-րդ հոդվածի 2-րդ և 479 հոդվածի 2-րդ մասերից բխում է, որ դատախազի կողմից վճռաբեկ բողոք ներկայացնելու ժամկետը կազմում է 30 օր, և որ այդ կարճ ժամկետը հաշվարկվում է բողոքարկվող որոշման հրապարակման պահից: 473-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է հատուկ նորմ, որի համաձայն՝ այն դեպքում, երբ որոշումը ենթակա չէ բողոքարկման վերաքննության կարգով, ապա վերոնշյալ ժամկետը հաշվարկվում է որոշման մեջ:

25. Տվյալ դեպքում հայցվորը վճռաբեկ բողոք է ներկայացրել քրեական դատարանի կողմից կայացված դատավճռի տեքստին ծանոթանալուց 20 օր հետո: Բողոքը Վճռաբեկ դատարան է ներկայացվել դատախազի օգնականի միջոցով և որի արդյունքում որոշվել է, որ քրեական դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել Հեղինակային իրավունքի մասին օրենքի 70-րդ հոդվածը: Այնուամենայնիվ, վճռաբեկ բողոքը մերժվել է ուշացման պատճառով, քանի որ դատավճիռը կարող է դառնալ վերաքննիչ բողոքարկման առարկա և, հետևաբար, բողոքի ներկայացման ժամկետը հաշվարկվում է դատավճռի հրապարակման պահից և ոչ թե դրա վերջնական տեքստի ընդունման պահից:

26. Դատարանը նշում է, որ անկախ այն բանից, որ տվյալ դեպքում առկա է Քրեական դատարանի կողմից կայացված դատավճռի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու հնարավորությունը, հայցվորը ցանկանում էր վճռաբեկ բողոք ներկայացնել տվյալ դատավճռի դեմ ոչ թե փաստի, այլ իրավունքի հիմքով՝ դատավճռի հիմնավորումների մասով: Դատավճռի ամբողջ տեքստն անհրաժեշտ էր վճաբեկ բողոքի հիմնավորումը ճիշտ և հստակ ներկայացնելու համար:

27. Այնուամենայնիվ, Դատարանը հիշեցնում է, որ դիմողը վճռաբեկ բողոք է ներկայացրել դատախազի միջնորդությամբ: Եթե տվյալ դեպքում կիրառվեր Կառավարության կողմից մատնանշված օրենսդրությունը, ապա Դատախազը, որն արդեն քաջատեղյակ էր իր իրավասություններին՝ կապված ընթացակարգային հարցերի հետ, անկասկած, կհրաժարվեր նման բան անելուց:

28. Դատարանը գտնում է, որ Վճռաբեկ դատարանը դիմողին զրկել է իր իրավունքները դատարանի առջև պաշտպանելու իրավունքից, քանի որ ժամկետանց լինելու հիմքով մերժել է վճռաբեկ բողոքը՝ այն ոչ թե դատավճռի հրապարակման, այլ դրա վերջնական տեքստի ընդունման պահից հաշված ժամկետում ներկայացված լինելու պատ-

ճառաբանությամբ: Այն եզրահանգում է, որ խախտվել է 6-րդ հոդվածի առաջին մասը:

### 3. Մարմինը

***Դիդիերն ընդդեմ Ֆրանսիայի (Didier v. France) (dec.), 58188/00, 27.08.2002թ.***

3. ...6-րդ հոդվածի իմաստով «դատարանը» համընկնում է 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածով նախատեսվածի հետ… Դատարանը, ի վերջո, նշում է, որ ՖՇԽ-ի [Ֆինանսական շուկաների Խորհրդի] որոշումները վերանայելիս Պետական խորհուրդն իրավասու էր վերանայելու գործի բոլոր հանգամանքները, այսպիսով, այդ իմաստով այն ևս «ընդհանուր իրավասության դատական մարմին է» և, հետևաբար՝ «դատարան»… Ուստի Դատարանը եզրակացնում է, որ դիմողին տրամադրվել է քրեական գործով վերանայման իրավունք՝ 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն…

### 4. Անկողմնակալությունը

***Բոնացին ընդդեմ Իտալիայի (Bonazzi v. Italy), 7975/77, 13.12.1978թ., DR 15, 169***

9. ...Ինչ վերաբերում է դատավորների վարքագծին, Հանձնաժողովը եզրակացնում է, որ դատավորների կողմնակալ լինելը հիմնավորող որևէ ապացույց Վճռաբեկ դատարանում դիմողի կողմից չի ներկայացվել: Այն փաստը, որ Ասսիզների վերաքննիչ դատարանը փոփոխել է մեղադրանքը և խստացրել պատիժը (մոտավորապես՝ 11 տարվանից 14 տարի)՝ սույն գործով չի կարող դիտվել որպես կողմնակալության հիմնավորում:

***Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի (Oberschlick v. Austria), 11662/85, 23.05.1991թ.***

50. ...Քրեական դատավարության օրենսգրքի 489-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ Վերաքննիչ դատարանը նման գործերով չպետք է կազմված լինի այնպիսի դատավորներից, ովքեր նախկինում մասնակցել են նույն գործի քննությանը…, ցույց է տալիս ազգային օրենսդրի ձգտումը կատարել դատարանի վերաբերյալ բոլոր ողջամիտ կասկածները: Հետևաբար, այդ նորմը չպահպանելը նշանակում է, որ դիմողի բողոքը քննվել է մի դատարանի կողմից, որի անկողմնակալությունը նույնիսկ ներպետական իրավունքի տեսակետից կարող էր կասկածի տակ դրվել:

51. ...Տվյալ դեպքում ոչ միայն նախագահողը, այլ նաև Վերաքննիչ դատարանի ևս երկու անդամներ պետք է Քրեական դատավարության օրենսգրքի 489-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա ինքնաբացարկ հայտնեին: Անկախ նախագահող դատավորի դիրքորոշու-

մից, ո՛չ դիմողը, ո՛չ նրա փաստաբանը նախքան 1984թ. դեկտեմբերի 17-ի լսումը տեղյակ չեն եղել այն մասին, որ մյուս երկու դատավորները նույնպես մասնակցել են 1983թ. մայիսի 31-ի որոշման կայացմանը:

Այսպիսով, հիմնավորված չէ, որ դիմողը հրաժարվել է գործը «անկողմնակալ» դատարանի կողմից քննության առնելու իր իրավունքից:

***Բորգերսն ընդդեմ Բելգիայի (Borgers v. Belgium), 12005/86, 30.10.1991թ.***

28. Բացի դրանից, և նախևառաջ, անհավասարությունն առաջացել է առավելապես Դատարանի քննարկումներին խորհրդակցական ձայնի իրավունքով գլխավոր պաշտպանի մասնակցությունից: Նման բնույթի աջակցությունը, հաշվի առնելով լրիվ օբյեկտիվությունը, կարող է կիրառվել դատավճռի նախագծի պատրաստման ժամանակ, թեև առաջին հերթին դա Վճռաբեկ դատարանի բուն խնդիրն է: Թերևս դժվար է տեսնել, թե ինչպես նման աջակցությունը կարող է սահմանափակվել ձևական դատողություններով, որոնք, որպես կանոն, տարանջատվում են բովանդակային հարցերից, եթե լրացուցիչ կերպով նպատակ է հետապնդվել, ինչպես Կառավարությունը ևս հաստատել, աջակցել՝ պնդելով նախադեպային իրավունքի հետ դրա համապատասխանությունը: Եթե անգամ նման աջակցությունն այդքան սահմանափակվել էր սույն գործով, հաստատապես կարելի է ասել, որ այդ դատողությունները գլխավոր փաստաբանին լրացուցիչ հնարավորություն են տվել, առանց դիմողի հակափաստարկներից անհանգստանալու, առաջ քաշել իր տեսակետն այն մասին, որ վերաքննիչ բողոքը պետք է մերժվի:

29. Հետևաբար, անդրադառնալով պաշտպանության իրավունքին և հնարավորությունների հավասարության սկզբունքին և ելույթների դերին՝ որոշելու համար, թե արդյոք դրանք պահպանվել են, Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում...

***Դակտարասն ընդդեմ Լիտվայի (Daktaras v. Lithuania), 42095/98, 10.10.2000թ.***

33. ...Դատարանը նշում է, որ Գերագույն դատարանի քրեականբաժնի նախագահը, այդ բաժնի այլ դատավորների հետ, հիմք ընդունելով առաջին ատյանի դատարանի դատավորի խնդրանքը, միջնորդություն է ներկայացրել բեկանելու համար Վերաքննիչ դատարանի դատավճիռը: Նախագահն առաջարկել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ առաջին ատյանի դատարանի դատավճռին: Նույն Նախագահը դրանից հետո զեկուցող դատավոր է նշանակել և ձևավորել Պալատ, որը պետքէ քններ գործը: Նախագահի միջնորդությունը նիստի ժամանակ հիմնավորվել է մեղադրողի

կողմից և արդյունքում քննության է առնվել Գերագույն դատարանի կողմից…

35. ...Դատարանը գտնում է, որ նման կարծիքը չի կարող դիտվել կողմերի կարծիքից անկախ: Երաշխավորելով մասնավոր որոշման ընդունումը կամ բեկանումը՝ նախագահողը, անկասկած, դառնում է մեղադրյալի կողմնակիցը կամ հակառակորդը…

Ըստ սույն բողոքի Նախագահողն իրականացրել է մեղադրական գործառույթ, քանի որ նիստի ժամանակ նախագահողի միջնորդությունը վիճարկվել է դիմողի, սակայն հավանության է արժանացել մեղադրողի կողմից, ով ինքը բողոք չէր ներկայացրել…

36. Բացի դրանից, իրոք, նախագահողը չի հանդիսացել միջնորդությունը քննող դատարանի անդամ, նա չի ընտրել զեկուցող դատավորին և Պալատի անդամներին իր գլխավորած Քրեական բաժնի դատավորների կազմից…

...այն դեպքում, երբ Քրեական բաժնի նախագահը ոչ միայն մեղադրական գործառույթներ է իրականացրել, այլ նաև, ի լրումն իր կազմակերպական և վարչարարական գործառույթների, ձևավորել է դատարան. հիմք ընդունելով օբյեկտիվ ելակետը՝ չի կարելի ասել, որ առկա են եղել բավարար երաշխիքներ բացառելու համար որևէ ողջամիտ կասկած առ այն, որ առկա չի եղել ճնշում: Այն փաստը, որ Նախագահի միջամտությանն աջակցել է առաջին ատյանի դատարանի դատավորը, միայն բարդացնում է իրավիճակը…

***Չմելիրն ընդդեմ Չեխիայի Հանրապետության (Chmelíř v. Czech Republic), 64935/01, 07.06.2005թ.***

60. ...Դատարանն այսպիսով նշում է, որ պրն Մ.Վ.-ն՝ որպես այն բաժնի նախագահ, որտեղ ներկայացվել է պրն Չմելիրի բողոքը, դարձել է դիմողի կողմից իր անձնական իրավունքների պաշտպանությանն ուղղված՝ 2000թ. փետրվարի 7-ին ներկայացված բողոքի պատասխանող: Ապա 2000թ. փետրվարի 15-ին Մ.Վ.-ն որոշել է դիմողին կարգապահական պատասխանատվության ենթարկել և պարտավորեցնել տուգանք վճարել դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու համար այն հիմքով, որ նա դատավորին բացարկ հայտնելու վերաբերյալ 1999թ. դեկտեմբերի 3-ի իր միջնորդության մեջ սխալ հայտարարություններ է արել և որ այդ հայտարարությունները հանգեցրել են նրա անձի նկատմամբ լկտի և աննախադեպ ոտնձգության և նպատակ են հետապնդել ձգձգել գործով վարույթը: Ի վերջո, 2000թ. մարտի 1-ին Բարձրագույն դատարանը մերժել է դատավորի ինքնաբացարկի վերաբերյալ դիմողի երկրորդ միջնորդությունն այն բանից հետո, երբ անձնական իրավունքների պաշտպանության համար արարքը ներկայացվել է Մ.Վ.-ին:

67. ...բացարկի միջնորդությունն ունի օրենքի վրա հիմնված ընթացակարգ, որը Քրեական դատավարության օրենսգրքի հիման վրա հասանելի է կողմերին: Բացի դրանից, այդ որոշման պատճառաբա-

նությունից երևում է, որ բաժնի նախագահը չի կարողացել բավարար չափով հեռու պահել իրեն դիմողի կողմից ներկայացված առաջին ինքնաբացարկի միջնորդության մեջ իր վերաբերյալ արտահայտված կարծիքից: Դատարանի կարծիքով, իրականությունից չափազանց կտրված կլիներ պնդումն այն մասին, որ դատարանը գործել է առանց որևէ անձնական շահագրգռության և ընդամենը պաշտպանել է դատարանի հեղինակությունը և դիրքը: Իրականում, դատարանները չեն հանդիսանում անդեմ հաստատություններ և գործում են դատավորների միջոցով: Քանի որ սույն գործով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը դրսևորվել է բաժնի նախագահի նկատմամբ լկտի և աննախադեպ ոտնձգությամբ, հետևաբար, դա վկայում է այն մասին, որ դիմողի վարքագիծը դատավորի կողմից գնահատվել էր իր անձնական ընկալումներից, զգացողություններից, արժանապատվության մասին իր պատկերացումներից և վարքագծի վերաբերյալ իր չափանիշներից ելնելով, քանի որ նա անձնապես էր խոցվել և վիրավորվել: Այսպիսով, փաստերի վերաբերյալ նրա անձնական ընկալումները և գնահատականները և նրա դատավճիռը ներգրավված են եղել այդ յուրահատուկ դեպքի՝ դատարանի վրա ազդելը որոշելու գործընթացի մեջ:

Այս ենթատեքստում շեշտադրում պետք է արվի նշանակված պատժի խստության (Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված տուգանքի առավելագույն չափ) և դիմողի նախազգուշացման վրա առ այն, որ ապագայում նման որևէ ոտնձգություն կորակվի որպես քրեական հանցագործություն: Բոլոր այս տարրերը, Դատարանի կարծիքով, վկայում են այն մասին, որ դատավորը չափազանց խիստ վերաբերմունք է դրսևորել դիմողի վարքագծի նկատմամբ…

69. Դատարանի համար այս տարրերը բավարար են հիմնավորելու համար դիմողի մոտ կասկածների առկայության օբյեկտիվությունը՝ կապված այն բանի հետ, թե արդյոք Մ.Վ.-ն՝ որպես Բարձրագույն դատարանի բաժնի նախագահ, չի դրսևորել անկողմնակալություն:

### 5. Նիստի մասին ծանուցումը

***Վաչերն ընդդեմ Ֆրանսիայի (Vacher v. France), 20368/92, 17.12.1996թ.***

25. Քրեական դատավարության օրենսգրքի 585 և 588-րդ հոդվածների իմաստով… դատապարտված բողոքատուն իրավասու է ընտրություն կատարել Պետական Խորհրդի և Վճռաբեկ դատարանի Փաստաբանների միության անդամների թվից նշանակված փաստաբանի միջոցով կամ անձամբ իր գործը ներկայացնելու հնարավորության միջև: Սակայն զեկուցող դատավորը պատասխան ներկայացնելու ժամկետները սահմանափակել է այդ հնարավորություններից միայն առաջինով: Սույն գործով պրն Վաչերին իրավական օգնություն է ցույց տվել պրն Ռիկարդը (ով Պետական Խորհրդի և Վճռաբեկ դա-

տարանի Փաստաբանների միության անդամ չի հանդիսացել) իր առարկությունները պետք է ներկայացներ նախքան դատական նիստը:

27. Կառավարության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Վճռաբեկ դատարանի կողմից գործի քննության միջին ժամկետը մոտավորապես երեք ամիսն է՝ հաշված բողոքը ներկայացնելու օրվանից. երկու ամսվա ընթացքում գործի նյութերը ներկայացվում են Վճռաբեկ դատարան և մեկ ամսվա ընթացքում դատարանը որոշում է կայացնում: Սույն գործով բողոքը մերժվել է ավելի կարճ ժամանակահատվածում՝ առանց բողոքաբերին տեղեկացնելու նիստի ժամանակի մասին: Պրն Վաչերը կարող է անակնկալի եկած լինել այն փաստի հետ կապված, որ վարույթներն ավելի կարճատև են եղել, քան սովորաբար, և, հետևաբար, կարող է ենթադրած լինել, որ բավարար ժամանակ ունի պատասխան ներկայացնելու համար՝ առանց անհանգստանալու նիստի ժամանակի առումով:

28. Դատարանը շեշտադրում է, որ Պետությունները պարտավոր են համոզվել, որ քրեական հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք օգտվում է 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված երաշխիքներից… Դատապարտված բողոքատուի վրա սահմանված ժամկետի ընթացքն սկսվելը կամ ավարտվելը պարզելու պարտականություն դնելն անհամատեղելի է «ջանասիրության» պահանջի հետ, որը Պայմանավորվող պետությունները պետք է ցուցաբերեն համոզվելու համար, որ 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները… իրականացվում են արդյունավետորեն…

30. Եզրակացնելով՝ անհրաժեշտ է նշել՝ քանի որ պատասխան ներկայացնելու համար չի եղել որոշված ժամկետ և Վճռաբեկ դատարանը սովորականից քիչ ժամանակ է տրամադրել բողոքը լսելուն, և պրն Վաչերը չի տեղեկացվել այդ մասին գրասենյակի կողմից, ինչպես նաև չի կարողացել կանխատեսել դա, հետևաբար, նա զրկվել է Վճռաբեկ դատարանում իր գործը որոշակի և արդյունավետ ներկայացնելու հնարավորությունից:

Հետևաբար, տեղի է ունեցել 6-րդ հոդվածի խախտում…

***Վայենն ընդդեմ Բելգիայի (Wynen v. Belgium), 32576/96, 05.11.2002թ.***

35. ...Սույն գործով Վճռաբեկ դատարանում գործի քննության ժամանակի մասին տեղեկատվությունը 1996թ. հունվարի 8-ից, այսինքն՝ նիստից տասնվեց օր առաջ, փակցված էր գրասենյակում և Վճռաբեկ դատարանի նիստերի դահլիճում: Դիմողին ներկայացնում էին չորս փաստաբաններ, որոնք բոլորն էլ Բրյուսելսի անդամ են հանդիսացել… անգամ լինելով անսովոր և հնացած՝ վիճարկվող կանոնները ուղղակիորեն նախատեսված են եղել Քրեական դատավարության օրենսգրքով և, հետևաբար, եղել են կիրառելի, բավականաչափ փոխկապակցված և պարզ, այնպես որ, փաստաբաններն, ի պաշտո-

նե առնչվելով դատավարությանը՝ չէին կարող օրինական կարգով վիճարկել, որ դրանց մասին տեղյակ չեն եղել…

Բացի դրանից, և նախևառաջ, եղել է պրակտիկա, որի համաձայն կողմերը և նրանց փաստաբանները կարող են խնդրել Վճռաբեկ դատարանի գրասենյակին իրենց գրավոր տեղեկացնել նիստի ժամանակի մասին կամ նման տեղեկություն ստանալ հեռախոսով… Դատարանը գտնում է, որ անհիմն չէ այն դիմողներից, ովքեր ցանկանում են անձնապես տեղյակ լինել Վճռաբեկ դատարանում իրենց գործի քննության նիստի ժամանակի մասին, պահանջել օգտվելու լրացուցիչ ծանուցման այս միջոցներից…

Այսպիսով, դիմողները չեն կարող վիճարկել, որ իշխանություններ-ը նրանց համար անհնարին են դարձրել Վճռաբեկ դատարանի նիստին մասնակցելը: Հետևաբար, այդ կապակցությամբ տեղի չի ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

***Հերմին ընդդեմ Իտալիայի (Hermi v. Italy) [GC], 18114/02, 18.10.2006թ.***

90. ...Մեծ պալատը գտնում է, որ գործի նյութերից պարզ է դառնում, որ դիմողը բավարար չափով տիրապետել է իտալերենին՝ ընկալելու համար վերաքննիչ դատարանում գործի քննության ժամանակի վերաբերյալ ծանուցումը… Բացի դրանից… մինչ վերաքննիչ վարույթի ընթացքը դիմողն արդեն ավելի քան տասը տարի ապրել էր Իտալիայում, և երբ նա 1999թ. ձերբակալվել էր, նա ունակ է եղել *կարթաբհներիին* մանրամասներ հաղորդել իրեն ներկայացված մեղադրանքների վերաբերյալ…

91. Դատարանի կարծիքով, այս հանգամանքները ներպետական դատական իշխանությունների համար բավարար հիմք են հանդիսանում հավատալու, որ դիմողն ունակ է եղել ընկալելու նիստի ժամանակի վերաբերյալ ծանուցման կարևորությունը, և որևէ թարգմանության կամ մեկնաբանության անհրաժեշտություն չի եղել: Դատարանը նաև նշում է, որ դիմողը կալանավայրի իշխանություններին չի տեղեկացրել քննարկվող փաստաթուղթը հասկանալու հետ կապված դժվարությունների մասին:

***Զայցևն ընդդեմ Ռուսաստանի (Zaytsev v. Russia), 22644/02, 16.11.2006թ.***

22. Քանի որ դիմողի առարկությունը վերաբերում էր 2001թ. հոկտեմբերի 26-ի բողոքարկման հիման վրա հարուցված վարույթի նիստի մասին իրեն չտեղեկացնելուն, Դատարանը գտնում է, որ բողոքարկման վարույթը բեկանվել էր հենց այդ հիմքով և գործն ուղարկվել նոր քննության: Դատարանը կրկնում է, որ երբ քրեական վարույթը վերջնական դատապարտումից հետո վերաբացվում է, ապա դատապարտումը բեկանելու վերաբերյալ որոշումն ինքնին բավարար չէ անձին «տուժողի» կարգավիճակ տալու համար, եթե ներպետական

իշխանությունները դա ուղղակիորեն կամ ըստ էության չընդունեն և Կոնվենցիայի խախտման համար հատուցում չտրամադրեն…

23. Սույն գործով 2005թ. հունիսի 27-ին Տուլայի Շրջանային դատարանի նախագահությունը բեկանել է դիմողի վերջնական դատապարտումն այն հիմքով, որ նրա բողոքի քննությունն իրականացվել է նրա բացակայությամբ, առանց նիստի մասին նրա տեղեկացման, ինչը խախտել է նրա պաշտպանության իրավունքը: Հետևաբար, Նախագահությունն ուղղակիորեն ընդունել է, որ դիմողի արդար դատական քննության իրավունքը խախտվել է:

### 6. Մեղադրանքի վերաորակումը

***Փելիսիերը և Սասին ընդդեմ Ֆրանսիայի (Pelissier and Sassi v. France) [GC], 25444/94, 25.03.1999թ.***

61. ...Դատարանը նաև գտնում է, որ օժանդակությունը և դրդչությունը չեն հանդիսացել սկզբնական մեղադրանքի, որի մասին դիմողները վարույթի սկզբից տեղյակ են եղել, բնորոշ տարր..

62. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ օգտագործելով իրավունքը, որի համաձայն՝ այն անկասկած պետք է վերաորակեր գործի փաստերը, որոնք իր իրավասության տակ էին գտնվում, Աիքս-են-Փրովենսի Վերաքննիչ դատարանը պետք է դիմողներին իրավունք տար այդ կապակցությամբ արդյունավետորեն և հատկապես ժամանակին իրականացնելու իրենց պաշտպանության իրավունքը: Սույն գործում Դատարանը չի գտել որևէ հիմնավորում այն մասին, թե ինչու, օրինակ, նիստը չի հետաձգվել այլ փաստարկ ներկայացնելու համար կամ դրա փոխարեն դիմողներին չի առաջարկվել ներկայացնել գրավոր բացատրություններ քանի դեռ Վերաքննիչ դատարանը խորհրդակցական սենյակում էր: Հակառակ դրան, Դատարանում հետազոտված նյութերը փաստում են, որ դիմողներին հնարավորություն չի տրվել նախապատրաստել նոր մեղադրանքից իրենց պաշտպանությունը, քանի որ միայն Վերաքննիչ դատարանի դատավճռից են տեղեկացել փաստերի վերաորակման մասին: Ակնհայտ է, որ դա շատ ուշ է եղել:

63. Վերոգրյալի լույսի ներքո, Դատարանը եզրակացնում է, որ իրենց ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքերի վերաբերյալ հանգամանորեն տեղեկացված լինելու և իրենց պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակ և հնարավորություն ունենալու դիմողների իրավունքը խախտվել է:

***Դալոսն ընդդեմ Հունգարիայի (Dallos v. Hungary), 29082/95, 01.03.2001թ.***

48. Սույն գործով Դատարանը գտնում է, որ դիմողն իրոք տեղյակ չի եղել, որ Շրջանային դատարանը կարող է վերաորակել իր հանցանքը խարդախության: Այս հանգամանքն իրոք խաթարել է իրեն

վերջնականապես առաջադրված մեղադրանքներից պաշտպանվելու հնարավորությունը:

49. Սակայն… Դատարանն այս կապակցությամբ որոշիչ կարևորություն է տալիս Գերագույն Դատարանում գործի հետագա քննություններին:

52. ...դիմողը հնարավորություն է ունեցել Գերագույն դատարանում բարձրացնել իր պաշտպանության իրավունքի հարցը՝ կապված մեղադրանքի վերաորակման հետ: Ամբողջությամբ վերցրած վարույթի արդարությունը գնահատելով և հաշվի առնելով Գերագույն դատարանում գործի քննության բնույթը՝ Դատարանը բավարարված է այն հանգամանքով, որ վարույթի ընթացքում Շրջանային դատարանի թույլ տված բոլոր թերությունները շտկվել են Գերագույն դատարանի կողմից:

Հետևաբար, Դատարանը համոզված է, որ իրեն առաջադրված մեղադրանքի բնույթի և հիմքերի վերաբերյալ տեղեկացված լինելու և իր պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակ և հնարավորություն ունենալու դիմողի իրավունքը չի խախտվել:

***Բաքստրոմը և Անդերսոնն ընդդեմ Շվեդիայի (Bäckström and Andersson v. Sweden) (dec.), 67930/01, 05.09.2006թ.***

Սույն գործով Դատարանը նշում է, որ 2000թ. փետրվարի 11-ի մեղադրական եզրակացությամբ դիմողներին… մեղադրանք է առաջադրվել ծանրացնող հանգամանքներում կատարված գողության փորձի համար… Շրջանային դատարանի՝ 2000թ. ապրիլի 17-ի դատավճռով դիմողները դատապարտվել են նշված հանցանքի կատարման համար, քանի որ դատարանը գտել էր, որ առկա են դատախազի կողմից նկարագրված դեպքի վերաբերյալ ապացույցներ:

2000թ. հունիսի 19-ին, Վերաքննիչ դատարանում գործի լսման ավարտին, վերջինիս նախագահի միջամտությունից հետո դատախազը նշել է, որ արարքը համապատասխանում է ծանրացնող հանգամանքներում կատարված ավարտված գողության հանցակազմին: 2000թ. հուլիսի 4-ի դատավճռում Վերաքննիչ դատարանը գտել է, որ դատախազը չի ներկայացրել տրանսպորտային միջոցի գողության վերաբերյալ լրացուցիչ մեղադրանք, բացի նրանից, որ իր տված որակումից հետո նա նշել է, որ գողությունն ավարտին է հասցվել տրանսպորտային միջոցն իրենց սեփականությունը դարձնելու պահից: Համաձայնելով այս պնդմանը՝ Դատարանը գտնում է՝ այն փաստը, որ դիմողներն իրենց տնօրինությանիրապետման տակ են վերցրել տրանսպորտային միջոցը՝ դրանում եղած դրամի հետ մեկտեղ, նշանակում է, որ հանցագործությունն ավարտին է հասցվել:

Դատարանի կարծիքով, այս հանգամանքներից բխում է, որ դիմողները տեղյակ են եղել դատախազի մեղադրական եզրակացությամբ իրենց մեղսագրվող հանցագործության բոլոր փաստական հանգամանքների մասին: 2000թ. հունիսի 19-ին ներկայացված նոր

տվյալն ապացուցում է, որ նրանց գործողությունների ընթացքը հանգեցրել է ավարտված հանցագործության… պետք է որոշվի, թե նրանք արդյոք անմիջապես տեղեկացվել են ավարտված հանցագործության համար դատապարտվելու հավանականության մասին, և արդյոք նրանց տրվել է պատշաճ հնարավորություն իրենց պաշտպանությունը նախապատրաստելու համար:

Այս կապակցությամբ Դատարանը նշում է, որ դիմողները տեղեկացվել են նշված հավանականության մասին 2000թ. հունիսի 19-ին՝ Վերաքննիչ դատարանում գործի քննության վերջին օրը: Թեև այս կարճ նշումը որոշ անհանգստություններ է առաջացրել, սակայն Դատարանը գտնում է, որ բոլոր փաստերը, որոնք ընկած են մեղադրանքի համապատասխանեցման հիմքում, դիմողներին շատ վաղուց են հայտնի եղել: Բացի դրանից, երկրորդ դիմողի պաշտպանն այն կարծիքն է հայտնել, որ ծանրացնող հանգամանքներում կատարված գողության հետ կապված մեղադրանքը կարող է դիտվել որպես հիմնական մեղադրական եզրակացության մեջ ներառվող: Ապա երկու դիմողների պաշտպանները համապատասխանեցված մեղադրանքի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնել են դրա ներկայացման օրը: Նրանք այս կապակցությամբ չեն ներկայացրել որևէ լրացուցիչ փաստարկ նաև հաջորդ՝ գործի քննության վերջին օրը, թեև ազատորեն կարող էին դա անել: Նրանք նաև չեն խնդրել հետաձգել գործի վարույթը՝ հարցը քննարկելու համար ավելի շատ ժամանակ ունենալու նպատակով… Դատարանը գտնում է, որ գործում չկա դիմողների պնդումները հիմնավորող որևէ հանգամանք առ այն, որ հետաձգման մասին պահանջն ակնհայտորեն կմերժվեր Վերաքննիչ դատարանի կողմից:

Դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի նախագահի միջամտությունը կատարվել է տեղեկացնելու համար կողմերին, որ դիմողներին մեղսագրվող արարքները կարող են որակվել որպես ավարտված գողություն: Այսպիսով, դիմողներին հնարավորություն է տրվել ներկայացնել այս հարցի առնչությամբ իրենց փաստարկները: Բացի դրանից, քանի որ դատարանը սահմանափակված չի եղել հանցագործության՝ դատախազի որակմամբ և, հետևաբար, նրա կողմից կատարված մեղադրանքի համապատասխանեցումը չի եղել անհրաժեշտ նախապայման ավարտված հանցագործության մեջ դիմողների մեղքը հաստատված համարելու համար, նախագահի միջամտությունը չի կարող դիտվել հնարավորությունների հավասարության» սկզբունքի խախտում:

Այս հանգամանքներում, Դատարանը գտնում է, որ իրականում պաշտպանն ունեցել է պատշաճ հնարավորություն համակողմանիորեն ներկայացնելու դիմողների դիրքորոշումը Վերաքննիչ դատարանում մեղադրանքի համապատասխանեցման ժամանակ: Բացի դրանից, վերաքննիչ դատարանը կարող էր հիմնավորված և արդարաց-

ված եզրակացություն անել, որ աս դատարանում իսկապես հնարավոր է եղել քննարկել:

Վերջապես, Դատարանը գտնում է, որ սույն գործը տարբերվում է Դատարանի կողմից միաժամանակ քննվող Միրոն ընդդեմ Ֆրանսիայի գործից (տե՛ս վերը՝ **C.VIII.1**)..., որում առկա էր 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի խախտում: Այդ գործով նոր փաստական հանգամանքը՝ մուտքը, քննարկվել է վարույթի ընթացքում, երբ դատարանի նախագահը կողմերի եզրափակիչ ելույթներից հետո ատենակալներին լրացուցիչ հարցեր է տվել բռնաբարության և ոչ թե բռնաբարության փորձի համար դիմողին առաջադրված մեղադրանքի վերաբերյալ: Հակառակ դրան, սույն գործի փաստերը, որոնք դիմողները պետք է վկայակոչեին, ամբողջ վարույթի ընթացքում նույնն են մնացել. դատախազի կողմից մեղադրանքը գողությանը համապատասխանեցնելը չի փոխել դեպքերի նկարագրությունը, այլ փոխել է հանցագործության իրավական որակումը: Բացի դրանից, Ֆրանսիայի գործով մեղադրյալին հնարավորություն չէր տրվել նոր փաստական հանգամանքների վերաբերյալ իր փաստարկները ներկայացնել, մինչդեռ սույն գործով դիմողների պաշտպաններին հնարավորություն է տրվել համապատասխանեցված մեղադրանքի վերաբերյալ իրենց դիրքորոշումը հայտնել, որից նրանք օգտվել են: Նաև հարկ է նշել, որ Ֆրանսիայի գործով քննությունն իրականացվել է ատենակալների մասնակցությամբ և կապված է եղել սեռական հանցագործության հետ, որի առումով անհրաժեշտ է առանձնահատուկ զգուշություն դրսևորել՝ ելնելով նման հանցագործությունների նուրբ բնույթից և այն հնարավորությունը հաշվի առնելով, որ ատենակալները կարող են տատանվել այն դատողության պատճառով, որ մեղսագրվող արարքը կարող է ավելի ծանր հանցագործության հանցակազմին համապատասխանել: Սույն գործով նման առանձնահատուկ հանգամանքներ չկան:

Քննարկելով, ամբողջությամբ վերցրած, սույն գործով վարույթները՝ Դատարանը գտնում է, որ իր դեմ ներկայացված մեղադրանքի վերաբերյալ դիմողներին տեղեկություն տրամադրելը եղել է բավականաչափ արագ, և նրանք Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (a) և (b) կետերի իմաստով ունեցել են բավարար ժամանակ և հնարավորություն իրենց պաշտպանությունը նախապատրաստելու համար:

***Մատեյն ընդդեմ Ֆրանսիայի (Mattei v. France), 34043/02, 19.12.2006թ.***

39. ...Դատարանը գտնում է, որ հայցվորն իմացել է հանցանքը որպես հանցակցությամբ կատարված դրամի շորթման հանցափորձ վերագնահատելու հնարավորության մասին: Բոլոր դեպքերում, հաշվի առնելով «հատուկ ուշադրության անհրաժեշտությունը շահագրգիռ անձին մեղադրանքի մասին ծանուցելու համար» և մեղադրական եզրակացության որոշիչ դերը քրեական հետապնդման համար: Դա-

տարանը գտնում է, որ Կառավարության կողմից ներկայացված և՛ ոչ մի փաստարկ, ընդհանուր առմամբ կամ առանձին վերցրած, բավարար չէ երաշխավորելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների պահպանումը:

40. Բացի դրանից, անդրադառնալով Կառավարության այն փաստարկին, համաձայն որի Վճռաբեկ դատարանը 2001թ. սկսած իր որոշումներում հղում է կատարում 6-րդ հոդվածի 1-ին մասին, իսկ պատճառաբանական մասում նշում է «եթե քրեական գործերով դատավորներն իրավասու են վերականգնել իրենց կողմից քննվող գործերում առկա փաստերի իրական որակումը, ապա միայն այն պայմանով, որ կասկածյալին հնարավորություն է տրվել պաշտպանվելու նոր որակված հանցագործության մեղադրանքից», Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը համարել է, որ «հանցակցությամբ կատարված դրամի շորթման հանցափորձի մասին վկայող փաստերի վերագնահատումը ոչ մի կերպ չի փոխել մեղադրանքի բնույթն ու էությունը, որի մասին կասկածյալները տեղեկացվել են Քրեական դատարանի առջև ներկայանալու ընթացքում»:

41. Ինչ վերաբերում է նոր գնահատման բովանդակությանը, Դատարանը հիշեցնում է, հնարավոր չէ պնդել, որ հանցակցությունը համարվում է ոչ այլ ինչ, քան հանցանքի կատարմանը մասնակցություն: Դատարանն ընդգծելով քրեական իրավունքի նեղ մեկնաբանության սկզբունքին իր հավատարիմ լինելը՝ չի կարող ընդունել այն փաստը, որ անտեսվել են հանցակցության առանձին հատկանիշներ: Այս առումով, նա նշում է, որ ինքը կոչված չէ գնահատելու պաշտպանության միջոցների հիմնավորվածությունը, ինչը կունենար հայցվորը, եթե հնարավորություն ունենար վիճարկելու հանցակցությամբ կատարված դրամի շորթման հանցափորձի փաստը, այլ Դատարանն ուղղակի գտնում է, որ հնարավոր է պնդել, որ այդ միջոցները կտարբերվեին հիմնական մեղադրանքից պաշտպանվելու համար ընտրված միջոցներից:

42. Ինչ վերաբերում է հայցվորի նկատմամբ կիրառված պատժամիջոցին, Դատարանը ոչ մի դեպքում համաձայն չէ Կառավարության կողմից շարադրված փաստարկներին: Իրականում, այն առաջին հերթին գտնում է, որ նոր գնահատումը ոչ մի հետք չի թողել մեղադրական դատավճռի կայացման վրա, քանզի ամեն դեպքում հայցվորը դատապարտվել էր ահաբեկչական գործողություններ նախապատրաստելու համար համաձայնեցված գործողություններին մասնակցելու համար: Ընդսմին, մենք չենք կարող կանխատեսել այն պատիժը, որ կկիրառվեր, եթե հայցվորը կարողանար արդյունավետ կերպով պաշտպանվեր հանցակցությամբ դրամի շորթման հանցափորձ կատարելու համար մեղադրանքից: Վերջապես, այն գտնում է, որ վերաքննիչ դատարանի կողմից կիրառված պատիժն առաջին ատյանի դատարանի կողմից կիրառված պատժից առավել թեթև է՝ 4 տարի ազատազրկումից դառնալով 3 տարի, որից մեկը՝ պայմանական վա-

ղաժամկետ: Այնուամենայնիվ, Դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի հայտարարած պատիժը պայմանավորված էր «շահագրգիռ անձի առողջական վիճակով» և նախկինում իր կողմից հանցանք կատարելու փաստով, քանզի հայցվորը «հանցանքը կատարելուն նախորդող հինգ տարիների ընթացքում չի կատարել ըստ օրենքի այնպիսի հանցանք, որը ենթակա է ազատազրկման ձևով պատժի»:

43. Նկատի ունենալով վերոնշյալ փաստերը՝ Դատարանը գտնում է, որ խախտվել է հայցվորի՝ իր դեմ առաջադրված մեղադրանքի էության և պատճառի մասին տեղեկանալու իրավունքը, ինչպես նաև մեղադրանքից պաշտպանվելու համար անհրաժեշտ ժամանակ և միջոցներ ունենալու իրավունքը:

### 7. Դիմումների մասին չտեղեկացնելը

***Բրենդստետերն ընդդեմ Ավստրիայի (Brandstetter v. Austria), 11170/84, 12876/87; 13468/87, 28.08.1991թ.***

67. ...Սույն գործով սովորական է, որ Գլխավոր հանրային մեղադրողի դիմումի պատճենը չի ուղարկվել դիմողին, և նա չի տեղեկացվել անգամ դրա ներկայացման մասին: Կառավարության փաստարկն այն է... որ դիմումները կամ, այսպես կոչված, «կրոքիսները»... ներկայացվում են ընդունված պրակտիկայի հիման վրա, որը Գլխավոր հանրային մեղադրողին հնարավորություն է տալիս ներկայացնել նման կրոքիս այն գործերով, որոնցով նա դա նպատակահարմար է գտնում: Այն ենթադրություն է արել, որ այս պրակտիկայի մասին պետք է տեղյակ լիներ դիմողի պաշտպանը, ով, համապատասխանաբար, կարող էր ճշտել, թե արդյոք դիմողի գործով կրոքիս ներկայացվել է, թե՝ ոչ: Եթե այո, ապա նա կարող էր պահանջել Քրեական դատավարության օրենսգրքի 82-րդ բաժնով սահմանված կարգով ծանոթալ այդ փաստաթղթին և իր կարծիքն արտահայտել դրա վերաբերյալ: 82-րդ բաժնի ձևակերպումներից չի երևում, որ այն անսահմանափակ իրավունք է վերապահում ուսումնասիրել ամբողջ փաստաթուղթը, այլ նախատեսում է միայն դիմումի ներկայացում այդ անելու թույլտվություն ստանալու համար...

Դատարանը նշում է՝ ակնհայտ է, որ կրոքիսն ունի լուրջ կարևորություն և որ նշված պրակտիկան պաշտպանության կողմից պահանջում է ուշադրություն և ջանք. հակառակ վերոգրյալին, Դատարանը բավարարված չէ նրանով, որ այս պրակտիկան ապահովում է դիմողների տեղյակ լինելն այն մասին, որ Գլխավոր հանրային մեղադրողը կրոքիս է ներկայացրել, որի վերաբերյալ իրենք պետք է կարծիք հայտնեն:

68. ...Դատախազության՝ դատավճռի տեքստում ներառված փաստարկների վերաբերյալ կարծիք արտահատելու՝ մեղադրողի անուղղակի և ամբողջությամբ ենթադրական հնարավորությունը հազիվ թե կարելի է դիտել որպես դատախազության կողմից ներկայաց-

ված դիմումների ուսումնասիրության և դրանց պատասխան ներկայացնելու իրավունքի պատշաճ փոխարինում…

69. Հետևաբար, Դատարանը եզրակացնում է, որ բողոքարկման վարույթներում, որոնք վերաբերում են զրպարտության գործերին, առկա է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

***Ռեինհարդը և Սլիման-Կաիդն ընդդեմ Ֆրանսիայի (Reinhardt and Slimane-Kaid v. France), 23043/93, 22921/93, 31.03.1998թ.***

105. Որպես կանոն, նախքան լսումը գլխավոր պաշտպանն ստանում է զեկույցը և որոշման նախագիծը, որը նախապատրաստվել է զեկուցող դատավորի կողմից: Ինչպես Կառավարությունն է նշել, զեկույցը բաղկացած է երկու մասից. առաջինը պարունակում է փաստերի, դատավարության և բողոքի հիմքերի նկարագրությունը, երկրորդը՝ գործի իրավական վերլուծությունը և կարծիք բողոքի որակի վերաբերյալ:

Այս փաստաթղթերը չեն ներկայացվել ո՛չ դիմողներին, ո՛չ նրանց փաստաբաններին… Պրն Ռեինհարդի և պրն Սլիման-Կաիդի փաստաբանները համապատասխան պահանջի դեպքում կարողացել են միայն բանավոր հայտարարություններ անել. գործի քննության ժամանակ նրանք պետք է հնարավորություն ունենային զեկուցող դատավորից հետո դիմելու դատարանին, ինչը կնշանակեր, որ նրանք կարողացել են լսել նրա զեկույցի առաջին մասը և կարծիք հայտնել դրա վերաբերյալ: Զեկույցի երկրորդ մասը և դատավճռի նախագիծը, որոնք օրենքով սահմանված կարգով չեն ներկայացվել որպես քննարկումների բաղկացուցիչ մաս, որևէ կերպ չեն կարող նրանց տրամադրվել. լավագույն դեպքում, նրանք կարող են տեղեկացվել զեկուցող դատավորի առաջարկությունների վերաբերյալ նիստից մի քանի օր առաջ:

Հակառակ դրան, ամբողջ զեկույցը և դատավճռի նախագիծը ներկայացվում են գլխավոր պաշտպանին: Գլխավոր պաշտպանը չի հանդիսանում բողոքը քննող դատարանի անդամ: Նա պետք է հաստատի, որ պարզ լինելու դեպքում օրենքը պատշաճ կերպով կիրառվել է, իսկ եթե այն անորոշ է, ապա դրան ճիշտ մեկնաբանություն է տրվել: Նա դատավորներին «խորհուրդ է տալիս» յուրաքանչյուր գործի լուծման հետ կապված և իր գրասենյակի հեղինակության շնորհիվ կարող է ազդել նրանց որոշումների վրա կամ բողոքատուների կողմից առաջադրված գործին ամբողջությամբ համաձայնելով, կամ հակառակ կարծիք հայտնելով… այնպիսի եղանակով, որն ամբողջությամբ ընդունելի է կամ...

Կարևորելով զեկուցող դատավորի զեկույցը (և, մասնավորապես, դրա երկրորդ մասը)՝ պրն Ռեինհարդի և պրն Սլիման-Կաիդի գործով վարույթում գլխավոր պաշտպանի դերը և նրա մասնակցության հետևանքները՝ անհավասարակշռությունը, որը ձևավորվել է դիմողների պաշտպաններին նման զեկույց ներկայացնել չթույլատրելու

արդյունքում, անհամատեղելի է արդար դատական քննության պահանջի հետ:

106. Այն փաստը, որ գլխավոր պաշտպանի դիմումների վերաբերյալ դիմողները չեն տեղեկացվել նույնպես կասկածահարույց է…

107. Հետևաբար, հաշվի առնելով վերոգրյալ դատողությունները՝ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

***Գոքն ընդդեմ Թուրքիայի** (Göç v. Turkey) [GC], 36590/97, 11.07.2002թ.*

57. ...Կառավարությունը պնդել է, որ դիմողի պաշտպանը պետք է գիտենար, որ գործի նյութերին ծանոթանալը հնարավոր էելնելով պրակտիկայից: Սակայն Դատարանը գտնում է, որ դիմողի պաշտպանից պահանջել նախաձեռնություն դրսևորել և պարբերաբար տեղեկանալ գործով նոր նյութերի ձեռքբերման մասին՝ հանգեցնում է նրա վրա անհամաչափ պարտականություն դնելուն և չի կարող անվերապահորեն երաշխավորել կարծիք արտահայտելու իրական հնարավորության առկայության մասին, քանի որ նա երբևէ տեղյակ չի պահվում բողոքարկման վարույթների ժամանակացույցի մասին… Այս կապակցությամբ Դատարանը նշում է, որ կարծիքը ներկայացվել է 1996թ. հոկտեմբերի 17-ին և գործի հետ մեկտեղ համապատասխան բաժին է ներկայացվել 1996թ. հոկտեմբերի 21-ին: Բաժնի կողմից որոշում կայացվել է 1996թ. նոյեմբերի 7-ին:

58. Քննարկելով վերոգրյալ հանգամանքները՝ Դատարանը, ինչպես Պալատը, գտնում է, որ 6-րդ հոդվածի 1-ին մասը խախտվել է՝ կապված Գլխավոր հանրային մեղադրողի կարծիքի վերաբերյալ դիմողին չտեղեկացնելու հետ:

***Վերդու Վերդուն ընդդեմ Իսպանիայի** (Verdu Verdu v. Spain), 43432/02, 05.02.2007թ.*

25. Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է պարզել, թե արդյոք հայցվորին դատախազի առարկությունների մասին չծանուցելը խախտում է արդարացի դատաքննության սկզբունքը, քանի որ մրցակցային դատավարությունը պահանջում է, որ գործի կողմերը «իրավունք ունեն ծանոթանալու և քննարկելու դատարանին ներկայացված բոլոր փաստաթղթերն ու դիտողությունները», կամ անհրաժեշտ է համարել, ինչպես դա արել է Սահմանադրական դատարանը, որ տվյալ դեպքում կարևորն այն է, թե արդյոք տվյալ ծանուցման բացակայության հետևանքով հայցվորի համար անհնարին է դարձել իր պաշտպանությունն արդյունավետ կազմակերպելը, այսինքն՝ արդյոք տվյալ առարկության մասին ծանուցումն ազդեցություն է ունեցել գործի ելքի վրա:

26. Տվյալ դեպքում Դատարանը գտնում է, որ հայցվորին դատապարտող վերաքննիչ դատարանը սահմանափակվել է դատախազի վերջնական եզրահանգումների և առարկությունների սահմաններում

առաջին ատյանի դատարանի կողմից ապացուցված ճանաչված փաստերին իրավական այլ որակում տալով և ուշադրություն չդարձնելով հիմնական մեղադրանքից դուրս փաստերի վրա:

27. Այս հանգամանքներում, Դատարանը հաստատում է, որ դատախազի առարկության ծանուցումը և դրան պատասխանելու՝ հայցվորի հնարավորությունը չէր կարող հետևանք ունենալ շրջանային դատարանում քննվող գործի ելքի վրա: Իրականում, Դատարանը չի տեսնում, թե տվյալ փաստաթղթի բացակայությունը ինչպես կարող էր խախտել հայցվորի իրավունքները կամ նվազեցնել շրջանային դատարանի առջև իր պաշտպանության համար անհրաժեշտ փաստարկներ ներկայացնելու հնարավորությունները, այն դեպքում, երբ հենց հայցվորն իր բողոքում ընդունել է, որ դատախազի առարկություններն համապատասխանում են վերաքննիչ բողոքում ներկայացված նրա պահանջներին:

28. Այդպես, շրջանային դատարանի կողմից հայցվորի նկատմամբ մեղադրական դատավճռի ընդունումը, որն այնուհետև ուժի մեջ է թողնվել Սահմանադրական դատարանի որոշմամբ, այդ առումով չէր կարող վիճարկման տեղիք տալ: Դրա հետևանքով առանձնահատուկ հանգամանքների առկայության դեպքում հայցվորը կարող էր միայն պնդել, որ դատախազի բողոքի կապակցությամբ ներկայացված իր դիտողության վերաբերյալ դատախազի առարկությունների չծանուցման հետևանքով ինքը զրկվել է այդ առարկություններին պատասխանելու, հետևաբար ներկայացված մեղադրանքից պաշտպանվելու հնարավորությունից, ինչի արդյունքում խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը: Դիմողը, սակայն, չի նշել, թե տվյալ ծանուցման բացակայությունն ինչպիսի վնաս է պատճառել...

29. Դատարանը հաստատում է, որ կողմերի պաշտպանվելու և փաստարկները վիճարկելու իրավունքը մի քանի անգամ ճանաչվել է նաև Սահմանադրական դատարանի դատական նախադեպերով: Տվյալ դեպքում, նկատի ունենալով գործի հանգամանքները, Դատարանը գտնում է, Սահմանադրական դատարանի կողմից առաջ քաշված պատճառաբանությունները՝ դատախազի կողմից ներկայացված բողոքի առարկությունների մասին չծանուցումը ոչ անօրինական և ոչ էլ անպատշաճ չի եղել:

### 8. Բավարար ժամանակ և հնարավորություններ

***Մելինն ընդդեմ Ֆրանսիայի (Melin v. France), 12914/87, 22.06.1993թ.***

19. ...Նա պնդել է, որ երբ Վճռաբեկ դատարանի քրեական բաժինը իր՝ 1986թ. մայիսի 27-ի դատավճիռը կայացրել է, նա դեռևս սպասելիս է եղել Վերաքննիչ դատարանի դատավճռի տեսքտին, որի պատճենն իրեն ուղարկելուց հետո նա դիմում էր ներկայացրել: Առանց Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների մասին

տեղեկանալու՝ նա չէր կարող իր նշումներն անել բողոքի հիմքերի վերաբերյալ: Նրան անհրաժեշտ է եղել դատավճռի պատճենը՝ անկախ այն հանգամանքից, որ նա ներկա է եղել դրա հրապարակմանը, քանի որ նախագահը հրապարակել է միայն դրանում կիրառված դրույթները…

24. …Պրն Մելինը փաստաբանի փորձ ունեցել է և որպես փաստաբան աշխատել է Պետական խորհրդի Փաստաբանների պալատում և Վճռաբեկ Դատարանի Փաստաբանների միությունում: Հետևաբար, նա տեղյակ է եղել, որ գործող օրենսդրության համաձայն՝ իշխանությունները պարտավոր չեն իրեն տրամադրել 1986թ. հունվարի 15-ին կայացված դատավճիռը, որի հրապարակմանը նա ներկա է եղել:… այսպիսով, անհիմն չի եղել նրանց հետևյալ երեք գործողություններից մեկի կատարումը պահանջելը: Առաջին, եթե անգամ նրան օրենքով սահմանված կարգով նման հնարավորություն չի տրվել, նա կարող էր այդ դատավճռի իսկական տեքստին ծանոթանալ Վերսալի Վերաքննիչ դատարանի գրասենյակում՝ նշելով, որ ինքը անհաջողության է մատնվել իր խնդրած պատճենն ստանալու կապակցությամբ, նա կարող էր և պետք է կրկներ այդ խնդրանքը դատավճռի հրապարակմանը հաջորդած չորսուկես ամիսների ընթացքում: Նա նաև վերջնական հնարավորություն ուներ Վճռաբեկ դատարանի գրասենյակ հարցում անել՝ պարզելու համար այն ժամկետը, որի ընթացքում նշված դատարանը պետք է դատավճիռ կայացներ, և խնդրել իրեն բավարար ժամանակ տրամադրել իր հուշագիրը լրացնելու և իր գործը ներկայացնելու համար: Լինելով լավատեղյակ դատավարական գործընթացներին՝ նա պետք է գիտենար, որ վերջինս համեմատաբար կարճ ժամանակում է կայացվում, հատկապես, եթե կիրառվող օրենքի դրույթները բավականաչափ տրամաբանական և պարզ են…

25. Ի վերջո, բողոքաբերը չի կարողացել վիճարկել, որ իշխանությունները անհնար են դարձրել իր կողմից հուշագրի ներկայացումը: Քանի որ նա գիտակցաբար հրաժարվել է պաշտպան ունենալու իր իրավունքից, նրան պարտավորեցրել են դատարան ներկայանալ միայնակ: Հետևաբար, չի խախտվել 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներից արդյունավետորեն օգտվելու նրա հնարավորությունը…

***Զուն ընդդեմ Նիդեռլանդների (Zoon v. Netherlands), 29202/95, 07.12.2000թ.***

37. ...Անկախ նրանից, թե դիմողի պաշտպանը տեղյակ եղել է նշված քաղաքականությանը, թե՝ ոչ, անվիճելի է մնում այն փաստը, որ դատավճռի կրճատված տարբերակը ներկայացվել է ստուգման կայացումից քառասունութ ժամ հետո:

38. Հետևաբար, Դատարանը պետք է եզրակացնի, որ անկախ այն հանգամանքից, որ դիմողը տեղյակ է եղել դատավճռի գործող

մասին, նրան և նրա պաշտպանին հնարավորություն է ընձեռվել տեղեկություններ ձեռք բերել դատավճռի կրճատված տեքստի վերաբերյալ նախքան բողոք բերելու համար սահմանված քառասունութ օր ժամկետը լրանալը, այնպես որ, նրանք բավարար ժամանակ են ունեցել բողոք ներկայացնելու համար: Այն փաստը, որ նրանք դա չեն արել, չի կարող մեղսագրվել Պատասխանող պետությանը…

47. Իրավամբ, այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է դատապարտումը, դատավճռում թվարկված չեն: Սակայն դիմողը երբևէ չի ժխտել իրեն մեղսագրվող արարքների կատարումը և երբևէ չի վիճարկել իր դեմ ներկայացված ապացույցները: Բացի դրանից, դիմողը չի բողոքարկել և ոչ էլ պարզվել է, որ նրա դատապարտումը հիմնված է այնպիսի ապացույցների վրա, որոնք գործի նյութերում առկա չեն եղել կամ չեն ներկայացվել Շրջանային դատարանում գործի քննության ընթացքում:

48. ...Նիդեռլանդների քրեական դատավարությունում բողոք ներկայացվում է ոչ թե առաջին ատյանի դատարանի դատավճռի, այլ մեղադրյալին առաջադրված մեղադրանքի վերաբերյալ: Բողոքարկման վարույթը, այսպիսով, փաստերի ամբողջությամբ նոր հիմնավորում է և կիրառելի օրենքի վերանայում: Դատարանի կարծիքով, դրանից բխում է, որ դիմողը և նրա փաստաբանը պետք է ունակ լինեին հիմնավորված գնահատական տալու յուրաքանչյուր բողոքարկման հնարավոր արդյունքի վերաբերյալ՝ դատավճռի կրճատված տարբերակի և գործի նյութերում առկա ապացույցների լույսի ներքո…

50. Սույն գործի հանգամանքներից չի երևում, որ դիմողների պաշտպանության իրավունքի վրա ոչ պատշաճ կերպով ազդել է ամբողջական դատավճռի կամ դատավճռի կրճատված տարբերակում նրա դատապարտման հիմքում դրված ապացույցների մանրամասն թվարկման բացակայությունը:

***Հուսեյնն ընդդեմ Իտալիայի (Husain v. Italy) (dec.), 18913/03, 24.02.2005թ.***

Գործը դատարան ուղարկելու մասին որոշման մեջ նշված էր դատապարտման ամսաթիվը, նշանակման ենթակա պատիժը, դիմողին մեղսագրվող արարքների իրավական որակումը և Քրեական օրենսգրքի համապատասխան դրույթներին արված հղումները և հատուկ օրենսդրությունը, որը պետք է կիրառվեր:

Այս հանգամանքներում, Դատարանը գտնում է, որ դիմողին՝ իրեն հասկանալի լեզվով տրամադրվել է բավարար տեղեկություն մեղադրանքների և իր դատապարտման վերաբերյալ: Դիմողը եղել է Իտալիայում, երբ գործը դատարան ուղարկելու մասին որոշումը հանձնվել է նրան և պետք է արդեն խորհրդակցած լիներ իր գործով նշանակված պաշտպանի կամ մեկ այլ փաստաբանի հետ՝ կապված Գենոայի Քրեական վերաքննիչ դատարանի դատավճռի դեմ բողոք

բերելու և առաջադրված մեղադրանքներից իր պաշտպանությունը նախապատրաստելու հետ կապված հարցերի վերաբերյալ…

Հետևաբար, Դատարանը չի գտնում արդար դատական քննության որևէ խախտում:

***Կրեմզովն ընդդեմ Ավստրիայի (Kremzow v. Austria), 12350/86, 21.09.1993թ.***

48. Դատարանը գտնում է, որ… քառասունինն էջանոց կրոքիսը պաշտպանին է հանձնվել 1986թ. հունիսի 9-ին՝ բանավոր քննության նշանակված օրվանից երեք շաբաթ առաջ: Դատարանը գտնում է, որ դիմողին և նրա փաստաբանին տրամադրված այս ժամանակահատվածը բավարար էր 1986թ. հուլիսի 2-ի բանավոր քննության իրենց պատասխանը ժամանակին նախապատրաստելու համար:

49. Կառավարության կողմից չի վիճարկվել այն, որ Գերագույն դատարանը չի պատասխանել 1985թ. սեպտեմբերի 18-ի և հոկտեմբերի 2-ի դիմումներին՝ կապված Գերագույն դատարանի կողմից 1985թ. հոկտեմբերի 2-ին արդեն ստացված կրոքիսները դիմողին տրամադրելու հետ… Սակայն դիմողի փաստաբանը կարող էր դատարանից թույլտվություն խնդրել ծանոթանալու գործի նյութերին, ներառյալ կրոքիսի ուսումնասիրումը՝ նախքան դրա ուղարկումը: Չկա որևէ նշում այն մասին, որ նա երբևէ արել է դա… Որևէ պատճառ չկա ենթադրելու, որ եթե նման խնդրանք ներկայացվեր՝ թույլտվություն չէր տրվի:

50. Հակառակ վերոգրյալին, Դատարանը գտնում է, որ թեև դիմողը կարող էր որոշ անհարմարություններ կրած լինել իր պաշտպանության նախապատրաստման ընթացքում, այնուամենայնիվ, նա ունեցել է «բավարար ժամանակ և հնարավորություն» կրոքիսի իր պատասխանը ձևակերպելու համար:

### 9. Նոր ապացույցների թույլատրելիությունը

***Վատուրին ընդդեմ Ֆրանսիայի (Vaturi v. France), 75699/01, 13.04.2006թ.***

58. Իրականում նա չէր կարող դատավարության ոչ մի փուլում հարցաքննել կամ պահանջել հարցաքննելու որևէ վկայի: Չնայած գործի բարդությանը, որը կապված էր քրեական հետապնդման տնտեսական բնույթի և այն ֆիզիկական և իրավաբանական անձանց թվի հետ, որոնք ծանոթ էին գործի նյութերին, Փարիզի քաղաքացիական դատարանին կից գործող դատախազը ոստիկանությանը հանձնաձարարել էր կատարել արագ հետաքննություն, որի վերջնարդյունքում որոշում էր կայացվել հայցվորին դատարան բերման ենթարկելու մասին: Դրանով հանդերձ, չէր հարուցվել քրեական հետապնդում և նշանակված չէր քննիչ, այնպես որ, նախաքննության ընթացքում շահագրգիռ անձը չէր կարող օգտվել նախաքննության ընթացքում

տրվող իրավունքներից, ինչպես նաև չէր կարող առերես հարցաքննման ենթարկվել իրեն մեղադրող անձանց հետ և առարկություններ հայտնել: Այնուհետև, դատավճռի կայացման ընթացքում վկաներին հարցաքննելու և առերես հարցաքննության մասին հայցվորի դիմումները հստակորեն մերժվել են Փարիզի վերաքննիչ դատարանի կողմից: Փաստորեն, դրանից հետևում է, որ հայցվորի կառուցած ողջ պաշտպանական տակտիկան հենվում էր դատալսումների ընթացքում թե մեղադրանքի և թե պաշտպանության կողմից կանչված վկաների հարցաքննության և առերես հարցաքննությունների վրա: Այս հանգամանքներում, Դատարանը չի գտնում, որ այն չպետք է հաշվի առնի, թե արդյոք հայցվորի կողմից պահանջված հարցաքննություններն ունեին հիմնարար բնույթ՝ այնքանով, որքանով որ այն գտնում է, որ այս դեպքում դրանք կարող էին ներդրում ունենալ հավասարության և արդարության սկզբունքի մեջ, որոնք դատական ընթացակարգի ողջ ընթացքում պետք է իշխեն մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև: Դատաքննության ընդհանուր գաղափարն ինքնին պահանջում էր հայցվորին իր ընտրած վկաներին հարցաքննելու կամ դա մեկ այլ անձի հանձնարարելու իրավունք տրամադրել: Վերջապես, հայցվորը չի ունեցել պաշտպանության իր իրավունքը լիարժեք իրականացնելու համապատասխան և բավարար հնարավորություն:

59. Եզրափակելով, հաշվի առնելով այն առանձնահատուկ կարևորությունը, որը տրվում է դատավարության ընթացքում պաշտպանության իրավունքի պահպանմանը, դատարանը գտնում է, որ հայցվորի դատաքննությունն արդարացի չի եղել:

Արդյունքում, խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը և 3-րդ մասի (d) կետը:

***Օյսթոնն ընդդեմ Միացյալ Թագավորության (Oyston v. United Kingdom) (dec.), 42011/98, 22.01.2002թ.***

Դատարանը նշում է, որ դիմողին թույլատրվել է Վերաքննիչ Դատարանում բողոք ներկայացնել այն հիմքով, որ անթույլատրելի ճանաչված ապացույցը կարող է ազդել տուժողի վստահելիության վրա, և որ պետք է գնահատվի այն, որ դա կարող է կասկածի տակ դնել դիմողի դատապարտումը: Բողոքի կապակցությամբ դիմողի փաստարկները լսելուց հետո Վերաքննիչ դատարանը հաստատել է այն տեսակետը, որի համաձայն՝ 1976թ. օրենքի 2-րդ բաժնի հիման վրա այս իրավահարաբերությանը վերաբերող ապացույցները չպետք է ընդունվեն: Սակայն Դատարանը նշում է, որ անցանկալի է թույլատրել տեխնիկական կանոնի գերակայությունը, եթե ապացույցը հանգեցրել է տուժողի վստահելիության նկատմամբ կասկածների առաջացման: Շարունակելով՝ Դատարանը գտնում է, որ այդ ապացույցը և որոշակի պատճառներով արված եզրակացությունն այն մասին, որ դա որևէ կապ չունի այն հարցի հետ, թե նա բռնաբարվել է դիմողի կողմից, համոզիչ են այս Դատարանի համար:

Դիմողը վիճարկել է, որ Զ.-ի վստահելիության հարցը կարևոր է, քանի որ ատենակալները, ըստ էության, պետք է որոշեին, թե Զ.-ն է ստում, թե՝ Լ.-ն: Այս հանգամանքներից ելնելով նա փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը չպետք է փորձեր կանխատեսել, թե ինչ ազդեցություն կարող է այս լրացուցիչ ապացույցն ունենալ համապատասխանաբար Զ.-ի և Լ.-ի վստահելիության վերաբերյալ ատենակալների կարծիքի վրա… Ի լրումն դրա, նա փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը՝ դատապարտումը կասկածի տակ դնող նոր ապացույցը գնահատելիս ուշադրություն չի դարձրել արդարության պահանջի վրա:

...Դատարանը գտնում է, որ սույն գործի հանգամանքներն ավելի նման են էդվարդսն ընդդեմ Միացյալ Թագավորության որոշման հետ կապված հանգամանքներին, որտեղ, ինչպես սույն գործում, Վերաքննիչ դատարանը վերանայել է դիմողի գործի քննությունից հետո հայտնաբերված ապացույցները: Այսպիսով, Դատարանը գտնում է, որ պաշտպանության իրավունքներն ապահովվել են Վերաքննիչ դատարանում գործի քննության ընթացքում, որտեղ դիմողի փաստաբանն անգամ հնարավորություն է ունեցել դատարանին խնդրել, որ դատապարտումը չգնահատվի նոր նյութերի լույսի ներքո, և որ Վերաքննիչ դատարանը կարող էր ինքը գնահատել նոր ապացույցների արժեքը և որոշել, թե արդյոք գործի քննության ընթացքում ներկայացված տեղեկությունները պետք է ազդեն ատենակալների դատավճռի վրա: Դատարանն այս դիմումով այլ եզրակացության հանգելու պատճառ չի տեսնում:

### 10. Վկաների հարցաքննությունը

***Վիդալն ընդդեմ Բելգիայի (Vidal v. Belgium), 12351/86, 22.04.1992թ.***

34. Դիմողն ի սկզբանե արդարացվել էր մի քանի վկաների լսելուց հետո: Երբ բողոքը քննող դատավորներն արդարացումը դատապարտմամբ են փոխարինել, նրանք նոր ապացույցներ չեն ունեցել, բացառությամբ երկու մեղադրյալների (Լիեգեում) և առանձին պահվող մեկ մեղադրյալի (Բրյուսելում) բանավոր հայտարարությունների, նրանք իրենց որոշումն ամբողջությամբ հիմնավորել էին գործի նյութերով: Բացի դրանից, Բրյուսելի Վերաքննիչ դատարանը որևէ կերպ չի պատճառաբանել, ինչը ենթադրելի էր, պրն Սքոհիին, պրն Բոդարտին, պրն Դաուֆինին և պրն Դաուսինին որպես վկա հրավիրելու վերաբերյալ խնդրանք պարունակող միջնորդության մերժումը:

Իհարկե, Դատարանի գործառույթը չէ կարծիք հայտնել առաջարկված կամ մերժված ապացույցի վերաբերելիության կամ, ընդհանուր առմամբ, պրն Վիդալի մեղավորության կամ անմեղության վերաբերյալ, սակայն 1985թ. դեկտեմբերի 11-ի դատավճռում քննարկվող հարցի վերաբերյալ որևէ բան չասելը չի համապատասխանում ար-

դար դատական քննության հասկացությանը, որը 6-րդ հոդվածի հիմքն է հանդիսանում… Այս գործով Բրյուսելի Վերաքննիչ դատարանը խստացրել է 1984թ. հոկտեմբերի 26-ին նշանակված պատիժը՝ երեք տարին փոխարինելով չորս տարով՝ առանց պատիժը պայմանականորեն չկիրառելու, ինչպես դա արել էր Լիեգեի Վերաքննիչ Դատարանը:

35. Հակիրճ՝ պաշտպանության իրավունքը սույն գործով խախտվել է արդար դատական քննություն չտրամադրելու ձևով: Հետևաբար, տեղի է ունեցել 6-րդ հոդվածի խախտում…

***Դեստրեհեմն ընդդեմ Ֆրանսիայի (Destrehem v. France), 56651/00, 18.05.2004թ.***

44. Բացի դրանից, Դատարանը նշում է, որ Քրեական դատարանն արձանագրել է, որ նախաքննության ընթացքում տրված ցուցմունքներում առկա տվյալները բավարար չեն եղել հստակ որոշելու հանցանքը կատարած անձի ինքնությունը:

45. Այսպես, 1999թ. մարտի 31-ի դատավճռից բխում է, որ Վերաքննիչ դատարանը հայցվորի նկատմամբ մեղադրական դատավճիռը հիմնավորել է վկաների ցուցմունքները նոր եղանակով մեկնաբանելով, առանց լսելու այդ վկաներին, և չնայած հայցվորի դրա մասին ներկայացրած դիմումի առկայությանը: Այս ամենը վկայում է այն մասին, որ Վերաքննիչ դատարանը կասկածներ ունենալով պաշտպանության կողմի վկաների ցուցմունքների ճշմարտացիության մասին՝ «մերժեր» դրանք՝ առանց նախնական վերլուծության, այդ վկաների ցուցմունքների հիման վրա հայցվորին ազատած առաջին ատյանի դատավճիռը վիճարկելու համար: Անկասկած, վերաքննիչ դատական ատյանն իրավասու էր գնահատելու գործով առկա բոլոր փաստերը, նույնիսկ այն փաստերի ճշմարտացիությունը, որոնք ցանկանում էր ներակայացնել հայցվորը: Դիմողը մեղավոր է ճանաչվել այն վկայությունների հիմքով, որոնք առաջին ատյանի դատարանում կասկածի տակ են դրել մեղադրանքի հիմնավորվածությունը, որոնք դրվել էին այդ դատարանի կողմից կայացված արդարացման դատավճռի հիմքում: Այս հանգամանքներում, չնայած այդ մասին հայցվորի դիմումի առկայությանը, Վերաքննիչ դատարանի կողմից վկաներին լսելու մերժումը մինչ հայցվորին մեղավոր ճանաչելը՝ զգալիորեն նվազեցրել է նրա պաշտպանության իրավունքը..

46. Բացի դրանից, Ռեյմսի վերաքննիչ դատարանը հայցվորի նկատմաբ կիրառել է, իր գնահատմամբ՝ «խիստ» պատժամիջոց:

47. Այդպիսով, հաշվի առնելով գործի խիստ յուրահատուկ հանգամանքները, Դատարանը համարում է, որ սահմանափակվել է պաշտպանության իրավունքը, քանի որ չի պահպանվել արդարացի դատաքննության սկզբունքը: Արդյունքում, խախտվել են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը և 3-րդ մասի (d) ենթակետը:

### 11. Հնարավորությունների հավասարությունը

***Բորգերսն ընդդեմ Բելգիայի (Borgers v. Belgium), 12005/86, 30.10.1991թ.***

27. Սույն գործով Վճռաբեկ դատարանի 1985թ. հունիսի 18-ի նիստում գլխավոր պաշտպանի դիմումների քննարկման արդյունքում որոշվել է, որ պրն Բորգերսի բողոքը ենթակա է մերժման… Վերջինիս որևէ պահի հնարավորություն չի տրվել այս դիմումներին պատասխանել. նախքան դրանց լսումը նա տեղյակ չի եղել դրանց բովանդակությանը, քանի որ նախքան ներկայացնելը դրանք իր հետ չեն քննարկվել, հետո՝ նա զրկված է եղել այդ հնարավորությունից ստատուտի ուժով: Դատական օրենսգրքի 1107-րդ հոդվածն արգելում է գլխավոր դատախազության ներկայացուցչի միջամտությունից հետո անգամ գրավոր նշումներ ներկայացնելը…

Դատարանը չի տեսնում որևէ հիմնավորում պաշտպանության իրավունքի նման սահմանափակումների համար: Եթե փաստաբանն այնպիսի դիմումներ է ներկայացրել, որոնք դիմողի համար ցանկալի չեն, վերջինս ուղղակիորեն շահագրգիռ է նախքան հարցի փակումն իր դատողությունները ներկայացնելու հնարավորություն ունենալու մեջ: Այն փաստը, որ Վճռաբեկ դատարանի իրավասությունը սահմանափակվում է իրավունքի հարցերի լուծմամբ, այս կապակցությամբ որևէ նշանակություն չունի…

***Ուայնենն ընդդեմ Բելգիայի (Wynen v. Belgium), 32576/96, 05.11.2002թ.***

32. ...Դատարանը սույն գործով նշում է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 420-րդ հոդվածը սահմանում է, որ Վճռաբեկ դատարան բողոքներ կարող են ներկայացվել երկու ամիս ժամկետում՝ սկսած գործը քննվող գործերի ցանկում ներառելու պահից, սակայն պատասխանող կողմի վրա նման ժամկետային սահմանափակումներ չեն տարածվում, և այս փուլում անհրաժեշտ է եղել մոտ հինգ ամիս նրա կողմից իր դիմումները ներկայացնելու համար:

Բացի դրանից, դրա արդյունքում խախտվել է պատասխանող կողմի հայտարարություններին գրավոր պատասխան ներկայացնելու՝ դիմողների հնարավորությունը, քանի որ նրանց կողմից ներկայացված լրացուցիչ դիմումները ժամկետանց լինելու պատճառաբանությամբ դիտվել են անթույլատրելի: Սակայն նման հնարավորությունը կարող է էական լինել, քանի որ մրցակցային դատավարության սկզբունքը ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմի պետք է հնարավորություն տրվի տեղեկանալու կամ կարծիք հայտնելու մյուս կողմի արած դատողությունների կամ ներկայացրած ապացույցների վերաբերյալ…

Դատարանն ուշադրություն է դարձնում Կառավարության կողմից ընդգծված այն պահանջին, որ անհրաժեշտ է համոզվել, որ ներկա-

յացված հայտարարություններին գրավոր պատասխանների անընդհատ ներկայացում թույլատրելու պատճառով վարույթների ընթացքն անհիմն չի երկարացվել, սակայն հնարավորությունների հավասարության սկզբունքը չի կանխարգելում նման նպատակի իրականացումը, որի համաձայն մի կողմը չի կարող դրվել ակնհայտ անբարենպաստ վիճակի մեջ: Այս պահանջը սույն գործով չի ապահովվել: Հետևաբար, այդ կապակցությամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդածի 1-ին մասի խախտում…

38. Դատարանը նշում է, որ Պետական պաշտպանի դիմումներն առաջին անգամ բանավոր ներկայացվել են Վճռաբեկ դատարանի նիստի ժամանակ… Դատավարության կողմերը, դատավորները և նիստին ներկա անձինք տեղեկացել են դրանց բովանդակությանը և դրանցում տրված հանձնարարականներին: Հետևաբար, հնարավորությունների հավասարության սկզբունքի խախտում տեղի չի ունեցել, քանի որ հնարավորությունների հավասարության սկզբունքց չի բխում, որ դիմողներն իրավունք ունեն այն դիմումների մասին, որոնք չեն ներկայացվել դատավարության մյուս կողմին, գործը քննող դատավորին կամ դատավորներին, տեղեկանալու նախքան դատական նիստը…

***Մ.Ս.-ն ընդդեմ Ֆինլանդիայի (M.S. v. Finland), 46601/99, 22.03.2005թ.***

31. Դատարանը գտնում է, որ սույն գործով 1996թ. նոյեմբերի 26-ի նամակը չի ուղարկվել քրեական դատավարության ոչ մի կողմի, մասնավորապես՝ դիմողին և հանրային մեղադրողին: Հնարավորությունների հավասարության սկզբունքի խախտում չի արձանագրվել, քանի որ կողմերից ոչ մեկը չի հայտնվել մյուս կողմի համեմատ անբարենպաստ վիճակում…

32. Սակայն արդար դատաքննության սկզբունքը ևս ենթադրում է քրեական դատավարության կողմի իրավունքը՝ տեղյակ լինել և կարծիք հայտնել ներկայացված բոլոր ապացույցների կամ դատողությունների վերաբերյալ, որոնք կարող են ազդել դատարանի որոշման վրա…

33. ...1996թ. նոյեմբերի 26-ի նամակի բովանդակությունն ուղղակիորեն կապված էր այլ վկայի տված ցուցմունքների արժանահավատության հարցի հետ, ով հանդիսացել է Վերաքննիչ դատարանում դիմողի պաշտպանության առանցքային մասը: Իրավամբ, դիմողի նախկին կնոջ հայտարարությունը չի հանդիսանում դիմողի կողմից իրեն մեղսագրվող արարքի կատարման վերաբերյալ միակ ապացույցը: 1996թ. նոյեմբերի 26-ի նամակը, դիմողի նախկին կնոջ նախորդ հայտարարությունների հետ մեկտեղ, թերևս, էապես կարևոր էր, քանի որ կարող էր ուղղակիորեն ազդել Վերաքննիչ դատարանի որոշման վրա…

34. ...բացառապես կողմերը կարող են պատշաճ կերպով որոշել, թե 1996թ. նոյեմբերի 26-ի նամակը մեկնաբանության կարիք ունի, թե՝ ոչ: Կարևորվում է մասնավորապես քրեական դատավարության կողմերի վստահությունն արդարադատության իրականացման նկատմամբ, որը հիմնված է, *inter alia*, նրանց այն տեղեկության վրա, որ իրենք հնարավորություն ունեն գործի յուրաքանչյուր փաստաթղթի վերաբերյալ իրենց կարծիքը հայտնել…

36. Դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված արդար դատական քննության իրավունքի ուժով դիմողը պետք է տեղեկացվեր, որ Վերաքննիչ դատարանը 1996թ. նոյեմբերի 26-ին դիմողի նախկին կնոջից նամակ է ստացել, և նրան պետք է հնարավորություն տրվեր դրա վերաբերյալ կարծիք հայտնել:

***Կորկուֆն ընդդեմ Ֆրանսիայի (Corcuff v. France), 16290/04, 04.10.2007թ.***

Դիմողը գտնում է, որ ատենակալներին գործին ծանոթացնելու համար դատական նիստի ընթացքում նրա նկատմամբ քրեական հետապնդում իրականացնող դատախազի ներկայությունը նրան դրել է անբարենպաստ իրավիճակում, որը հակասում է հնարավորությունների հավասարության սկզբունքին:

32. Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում դատական նիստին ներկա պաշտոնատար անձանց կողմից ատենակալներին ոչ մի հրահանգ չի տրվել: Նիստի չեզոքությունը երաշխավորվում էր այն վարող վերաքննիչ դատարանի նախագահի կողմից: Վերջինիս գործառույթն է տեղեկատվության փոխանակման վերահսկողությունը, և, մասնավորապես, նա հսկողություն է իրականացնում, որպեսզի գործի, մեղադրյալի անձին կամ նրա մեղավորության մասին որևէ մեկնաբանություն չարվի: Տեխնիկապես, դատական նիստն ուղղված էր վերաքննիչ դատարանում դատավարության ընթացքի մասին ատենակալներին տեղյակ պահելուն: Այդ առումով Դատարանը պնդում է, որ ատենակալների նման հասարակ քաղաքացիները ևս ծանոթ չեն իրավական ոլորտի գաղտնիքներին: Հավանական է, որ այդ նիստերը կայանային առանց դատախազության ներկայացուցչի ներկայության: Դատարանը, սակայն, գտնում է, որ դրանց ընթացքում դատախազության ներկայացուցչի ներկայությունն ինչպես և փաստաբանի ներկայությունը, իրենից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում՝ այնքանով, որ այդ անձինք լավագույնս կարող են պատասխանել իրենց գործառույթների հետ կապված ատենակալների հարցադրումներին: Բացի դրանից, տվյալ նիստին բոլոր այն ատենակալների մասնակցությունը, որոնք կոչված են մասնակցելու վերաքննիչ դատարանի հիմնական նիստին, դժվարացնում է դատախազության այնպիսի ներկայացուցչի նշանակումը, որը տվյալ դատավարության ընթացքում ուսումնասիրվող և ոչ մի գործով պահանջ չի ներկայացրել: Նույն կերպ, յուրաքանչյուր գործով պաշտպաններից բոլորի ներկայությունը միայն

կարող էր ծանրացնել արդեն իսկ ձևավորված պրակտիկան, ըստ որի՝ տվյալ նիստին միայն նկարագրվում է գործը և անդրադարձ է կատարվում ընդհանուր բնույթի հարցերին, և ոչ՝ յուրաքանչյուր գործի առանձին հանգամանքներին կամ մեղադրյալի անձին: Այդպիսով, Վերաքննիչ դատարանի կողմից միայն մեկ պաշտպանի հրավիրելու մասին որոշումը, հինավորված է: Դատարանը գտնում է, որ նախապատրաստական նիստերին դատախազության ներկայացուցչի և պաշտպանների մեկի համատեղ ներկայությունը պահպանում է ատենակալներին տրամադրվող տեղեկատվության հավասարակշռությունը: Ինչ վերաբերում է այն գանգատին, որ դատախազության ներկայացուցիչն առավելություն ուներ և կարող էր գործադրել իր բացարկի իրավունքը, ապա ոչինչ չի վկայում այն մասին, որ տվյալ նիստի ընթացքում դատախազը հնարավորություն ուներ ատենակալների անձի մասին կարծիք ստեղծել, քանի որ այդ պահին դեռևս պարզ չէր, թե վիճակահանության արդյունքում որ ատենակալը որ նիստին կմասնակցի: Տվյալ գործում չի երևում, որ դատախազի՝ ատենակալներին բացարկ հայտնելու իրավունքն առավելություն էր դիմողի նկատմամբ:

33. Այս ամենը Դատարանին թույլ է տալիս եզրահանգել, որ հնարավորությունների հավասարության սկզբունքի խախտում չի եղել:

***Բոթմեն ու Ալամին ընդդեմ Միացյալ Թագավորության (Botmeh and Alami v. United Kingdom), 15187/03, 07.06.2007թ.***

42. Սույն գործով, դիմողի գործի քննությունից առաջ և հետո Միացյալ Թագավորության Անվտանգության ծառայության տրամադրության տակ առկա է եղել «գործակալից» ձեռք բերված ապացույց այն մասին, որ դիմողների հետ չկապված ահաբեկչական կազմակերպությունը տեղեկություն է խնդրել Իսրայելի դեսպանատան հնարավոր պայթեցման վերաբերյալ: Դրա հետ կապված տեղեկությունները պայթեցումից հետո փաստել են, որ դա այս ահաբեկչական կազմակերպության արարքը չէ: Այս տեղեկությունը պարունակող փաստաթուղթը («առաջին փաստաթուղթը») դիմողների գործով դատախազներին չի ներկայացվել և, հետևաբար, մեղադրանքի կողմից գործը քննող դատավորին չի ներկայացվել, քանի որ անհրաժեշտ էր բացահայտել այն: Նույն աղբյուրից ստացված երկու այլ փաստաթղթերից մեկը, որը, սակայն, չի հիմնվում առաջին փաստաթղթում առկա տեղեկության վրա, դատավորին են ներկայացվել բացահայտման վարույթի ընթացքում:

43. Չբացահայտված նյութերն առաջին հերթին քննարկվել են Վերաքննիչ դատարանում *ex parte* դատական նիստի ընթացքում՝ նախքան վերաքննիչ բողոք բերելու թույլտվություն տալը: Հիմնական բողոքի քննության նիստի սկզբում Վերաքննիչ դատարանը տարբեր կազմերով լսել է *inter partes* դիմումները՝ կապված հասարակական շահի անձեռնմխելիության վերաբերյալ Թագի պահանջի վերաբերյալ

որոշման կայացմանը հետևող վարույթի հետ՝ նախքան նյութերը *ex parte* նիստում քննելու վերաբերյալ որոշում կայացնելը: Դիմողներն այս վարույթի ընթացքում ներկայացված չեն եղել ոչ իրենց պաշտպանների, ոչ հատուկ նշանակված՝ անվտանգությունն ապահովող պաշտպանների կողմից ...Սակայն բացահայտման վարույթից հետո և նախքան ամբողջական բողոքարկման վարույթը Վերաքննիչ դատարանը դիմողների համար բացահայտել է առաջին փաստաթղթում պարունակվող ամբողջական տեղեկությունը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք փաստորեն հանգեցրել են չբացահայտված նյութը գործը քննող դատավորին չներկայացնելուն: 2001թ. նոյեմբերի 1-ի իր դատավճռում Վերաքննիչ դատարանը գտել է, որ բացառությամբ այն նյութերի, որոնք լիարժեքորեն ներկայացվել են դիմողներին, դատարանում չի ներկայացվել որևէ էական բան, որը չի տրվել գործը քննող դատավորին... Դիմողին հնարավորություն է տրվել հայտարարություններ անել ամբողջությամբ բացահայտված նյութերի վերաբերյալ և ելնելով գործի համար դրանց կարևորությունից: Արված հայտարարությունների հիման վրա Վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ չբացահայտված նյութերը դատարանում չքննարկելու արդյունքում որևէ անարդար վերաբերմունք դիմողների նկատմամբ չի դրսևորվել, քանի որ վերջինս որևէ էական բան չի ավելացրել դատական քննության ընթացքում բացահայտված նյութերին և պաշտպանության կողմից որևէ փորձ չի տարվել, ատենակալներին որևէ կերպ ներկայացնելու միջոցով, օգտագործել դատարանում բացահայտված նյութերին նման նյութեր:

44. Վերաքննիչ դատարանի կողմից բացահայտված գաղտնի նյութերի՝ դիմողների վրա ազդեցության տվյալ չափը, ինչպես նաև այն փաստը, որ դատարանն իրավասու էր քննարկել դիմողների դատապարտման վրա նոր նյութերի ազդեցությունը՝ նրանց պաշտպանի մանրամասն փաստարկման լույսի ներքո, և այն փաստը, որ չբացահայտված նյութը դատարանի կողմից դիտվել է որպես վարույթի ընթացքում արդեն բացահայտված նյութին ոչ մի էական բան չավելացնող, Դատարանը գտնում է, որ... գործը քննող դատավորին չբացահայտված նյութ չներկայացնելը սույն գործի հանգամանքներում շտկվել է Վերաքննիչ դատարանի հետագա վարույթի ընթացքում:

### 12. Իրավական ներկայացուցչությունը

***Փոիտրիմոլն ընդդեմ Ֆրանսիայի (Poitrimol v. France), 14032/88, 23.11.1993թ.***

35. Կարևորվում է այն, որ մեղադրյալը պետք է դատարանում ներկա գտնվի՝ ինչպես այն պատճառով, որ իրավունք ունի լսված լինել, այնպես էլ այն պատճառով, որ անհրաժեշտ է համոզվել նրա ցուցմունքների ճշմարտացիության մեջ և համեմատել դրանք տու-

ժողների, որոնց շահերը ևս պետք է պաշտպանվեն, և վկաների ցուցմունքների հետ:

Օրենսդրությունը համապատասխանաբար պետք է կարողանա խոչընդոտել անհիմն բացակայությունները: Սույն գործով, սակայն, անհրաժեշտ է որոշել, թե սկզբունքորեն թույլատրելի է, արդյոք, պատժել նման բացակայությունները՝ իրավական օգնություն տրամադրելու իրավունքը չապահովելու ձևով, քանի որ, բոլոր դեպքերում, այդ իրավունքի խախտումը չէր համապատասխանում գործի հանգամանքներին: Դա պրն Փոիտրիմոլին, ով իրավասու չէր դիմելու Վերաքննիչ դատարան՝ կայացված դատավճիռը բեկանելու և գործը վերաձայելու խնդրանքով, զրկել է իր դեմ ներկայացված մեղադրանքի իրավական և փաստական կողմը երկրորդ ատյանում վիճարկելու իր միակ հնարավորությունից…

37. Վճռաբեկ դատարանի քրեական բաժնի նախադեպային իրավունքի համաձայն, որը կիրառվել է սույն գործով, դատապարտյալը, ով չի ներկայացել դատարան իր ծերբակալման թույլտվության քննության ժամանակ, չի կարող օրենքով սահմանված կարգով ներկայացվել դրա բողոքարկման նպատակով: Դիմողը չի կարողացել պատշաճ կերպով նման բողոք ներկայացնել՝ առանց կալանավայր ներկայանալու…

38. Դատարանը գտնում է, որ օրենքի իմաստով բողոքարկման անթույլատրելիությունն այն հիմքերով, որոնք կապված են դիմողի՝ արդարադատությունից թաքնվելու հետ, ևս հանգեցնում են անհամաչափ պատժի, եթե հաշվի առնենք պաշտպանության իրավունքի լուրջ կարևորությունը և ժողովրդավարական հասարակությունում օրենքի գերակայության սկզբունքը: Ակնհայտ է, որ քննարկվող ընթացակարգը բացառիկ է եղել՝ կապված օրենքի կիրառման և ոչ թե գործի հանգամանքների հետ: Այնուամենայնիվ, քրեական դատավարության ֆրանսիական համակարգի համաձայն՝ դատարան չներկայացած մեղադրյալն, իրեն առաջադրված մեղադրանքով երկրորդ ատյանում կարող է ներկայացնել իրավական կամ փաստական ապացույցներ, եթե իր բացակայությունն արդարացնող բավարար հիմքեր ներկայացնի: Հետևաբար, ակնհայտ է, որ պետք է լինեն վերաձայման իրավական հիմքեր, որոնցով վերաքննիչ դատարանը մերժել է նման արդարացումը:

39. Բոլոր այս դատողությունների լույսի ներքո, Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի խախտում… երկուստեք՝ ինչպես Վերաքննիչ դատարանում, այնպես էլ Վճռաբեկ դատարանում:

***Բոները և Մաքսվելն ընդդեմ Միացյալ Թագավորության (Boner and Maxwell v. United Kingdom), 18711/91 և 18949/91, 28.10.1994թ.***

41. ...Սույն գործի իրավական կողմը, հնարավոր է, առանձնապես բարդ չի եղել: Այնուամենայնիվ, դատական քննության ընթաց-

քում դատավորի դրսևորած կողմնակալության դեմ բողոք ներկայացնելը... պահանջում է որոշակի իրավական ունակություններ և փորձ: Որ պրն Բոներն ունակ էր հասկանալու իր բողոքի հիմքերը, և որ պաշտպանը նախապատրաստված չէր ներկայացնելու նրան ... չեն փոխարինում այն փաստին, որ առանց փաստաբանի ծառայությունների նա չէր կարող ամբողջականորեն դատարանին ներկայացնել այս իրավական դեպքը և ապահովել իր արդյունավետ պաշտպանությունը...

Բացի դրանից, ինչպես նշվել է, Վերաքննիչ դատարանն, օժտված էր նրա բողոքը քննելու լայն իրավասությամբ և նրա որոշումը վերջնական է: Անգամ ամենալուրջ հիմնավորման դեպքում, սակայն, դիմողը դատապարտվել է ութ տարի ժամկետով ազատազրկման: Պրն Բոների համար քննարկվող հանգամանքը հատկապես կարևոր է եղել:

43. ...Սույն գործի հանգամանքներում, ներառյալ խիստ պատիժը, երբ դիմողը պետք է բարձրագույն ատյանում իր պաշտպանությունն իրականացնի առանց որևէ օգնության, չեն պահպանվել 6-րդ հոդվածի պահանջները ...

44. Հաշվի առնելով դատավարությունների բնույթը, Բարձրագույն դատարանի լայն լիազորությունները, ներկայացուցիչ չունեցող բողոքաբերի կողմից իրավական փաստարկներ ներկայացնելու սահմանափակ հնարավորությունը, և, բացի դրանից, գործի կարևորությունը՝ հաշվի առնելով նախատեսվող պատժի խստությունը՝ Դատարանը գտնում է, որ արդարադատության շահը պահանջում է, որ դիմողին իր բողոքի քննության ժամանակ տրամադրվի անվճար իրավական օգնություն:

***Թվալիբն ընդդեմ Հունաստանի (Twalib v. Greece), 24294/94, 09.06.1998թ.***

53. Լրացուցիչ գործոնը վճռաբեկ վարույթի բարդությունն է: Այն ներառում է գործի քննության արդարության վիճարկումը, որը պահանջում է նրա կողմից իրավական փաստարկների ներկայացում, որոնք կհամոզեին Վճռաբեկ դատարանին, որ նրա պաշտպանության իրավունքը խախտվել է: Հարկ է նշել, որ վճռաբեկ վարույթների բարդությունը հաստատվում է այն դրույթով, որ կողմերը պետք է Վճռաբեկ դատարանի նիստում ներկայացված լինեն փաստաբանի միջոցով...: Նաև բողոքի նախապատրաստումը ևս պետք է դիտվի որպես բողոքի ընդունելիության հիմքերի վերաբերյալ իրավական գիտելիքներ, փորձ և գործնական իմացություն պահանջող: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ դիմողը հանդիսանալով այլազգի և անծանոթ լինելով Հունաստանի լեզվին և իրավական համակարգին, իր գրավոր բողոքում չի կարողացել նշել բողոքի հիմքերը և այս խախտումը հանգեցրել է նրա բողոքը չընդունելուն...

54. Այս հանգամանքներում, Դատարանը գտնում է, որ արդարադատության շահերը պահանջում են, որ դիմողին տրամադրվի անվճար իրավաբանական օգնություն՝ կապված Վճռաբեկ դատարան բողոք ներկայացնելու նրա մտադրության հետ…

55. Ի սկզբանե Դատարանը նշում է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 513-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով՝ օրենքով սահմանված կարգով բողոք ներկայացնող կողմը պետք է Վճռաբեկ դատարանի նիստում ներկայացված լինի փաստաբանի միջոցով… Սակայն… Քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում իրավական օգնության տրամադրում՝ նման բողոքների հետ կապված… Թեև Կառավարությունը նշել է, որ Փաստաբանների մասին օրենքի 201-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն բողոքատուներին վճռաբեկ վարույթներում անվճար իրավաբանական օգնություն կարող է տրամադրվել Փաստաբանների միության կողմից…, նրանք չեն ներկայացրել որևէ կոնկրետ օրինակ, թե ինչպես է այս սխեման գործում գործնականում: Ամեն դեպքում, ոչինչ թույլ չի տալիս ենթադրելու, որ այս հնարավորության հասանելիության վրա պրն Թվալիբի ուշադրությունը հրավիրվել է կամ որ նրա՝ 1993թ. հունիսի 8-ի խնդրանքն ուղարկվել է Փաստաբանների միություն, կամ որ դա ցանկալի արդյունք է ունեցել:

56. Այս հանգամանքներում, Դատարանը եզրակացնում է, որ Հունաստանի օրենսդրությունը որևէ դրույթ չի պարունակում դիմողի նման անձանց բողոք ներկայացնելիս օրենքով սահմանված կարգով իրավական օգնություն տրամադրելու վերաբերյալ: Սույն գործին, համապատասխանաբար, չի առնչվում այն, որ իրավական օգնություն տրամադրելու վերաբերյալ դիմողի խնդրանքը ներկայացվել է բողոք բերելու ժամկետն անցնելուց հետո. դա չի կարող համապատասխան համարվել…

57. …հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և դրա հետ զուգակցված՝ 3-րդ մասի (c) կետի խախտում:

***Չեկալան ընդդեմ Պորտուգալիայի (Czekalla v. Portugal), 38830/97, 10.10.2002թ.***

68. …որոշիչ կետն այն է, որ պաշտոնապես նշանակված փաստաբանը Գերագույն դատարան բողոք ներկայացնելիս չի պահպանել պարզ և հասկանալի ձևական կանոնը: Դատարանի կարծիքով, այն հանդիսացել է «ակնհայտ սխալ», որի վերաբերյալ իրավասու պաշտոնատար անձինք պետք է դրական միջոցներ ձեռնարկեին: Գերագույն դատարանը բողոքն անընդունելի համարելու փոխարեն կարող էր, օրինակ, հրավիրել պաշտոնապես նշանակված փաստաբանին և առաջարկել լրացնել կամ ուղղել իր պահանջը:

70. Դատարանը… չի տեսնում, թե ինչպես իրավական մասնագիտության անկախության վրա կարող է ազդել ձևական սխալն ուղղելու վերաբերյալ դատարանի առաջարկը: Երկրորդ, Դատարանը

գտնում է, որ չի կարելի *a priori* ասել, որ նման իրավիճակն անխուսափելիորեն խախտում է հնարավորությունների հավասարության սկզբունքը՝ հաշվի առնելով այն, որ դատավարության ընթացքն ուղղորդելու վերաբերյալ դատավորի լիազորությունների բնույթին դա ավելի է համապատասխանում և իրականացվում է արդարադատության պատշաճ իրականացման նկատառումով…: Պարզ է դառնում, ելնելով ներկայումս Պորտուգալիայում առկա իրավիճակից, որ Գերագույն դատարանի կողմից 1996թ. հուլիսի 10-ի որոշման նման որոշումն այլևս չէր կարող դիտվել որպես Սահմանադրական դատարանի՝ վերջերս ընդունված որոշման արդյունք:

71. Գործի հանգամանքները, հետևաբար, իրավասու դատարանի վրա պարտականություն են դնում համոզվելու, որ ամբողջ դատավարության ընթացքում գործնականորեն և արդյունավետ ապահովվել են դիմողի իրավունքները: Քանի որ սույն գործով դա տեղի չի ունեցել, Դատարանը գտնում է, որ այն չի համապատասխանում միաժամանակ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին և 3-րդ մասի (c) կետին: Հետևաբար, տեղի է ունեցել այս դրույթների խախտում:

***Հերմին ընդդեմ Իտալիայի (Hermi v. Italy) [GC], 18114/02, 18.10.2006թ.***

97. Սույն գործով դիմողը որևէ կերպ չի տեղեկացրել իշխանություններին, որ ունի դժվարություններ՝ կապված իր պաշտպանության նախապատրաստության հետ: Բացի դրանից, Դատարանի կարծիքով, դիմողի փաստաբանի թերացումները չեն բացահայտվել: Ներպետական իշխանությունները, հետևաբար, պարտավոր չէին միջամտել կամ քայլեր ձեռնարկել համոզվելու համար, որ մեղադրյալը պատշաճ կերպով ներկայացված և պաշտպանված է…

98. Ի լրումն դրա, Դատարանը նշում է, որ Հռոմի Վերաքննիչ դատարանն ըստ էության մեկնաբանել է դիմողի կողմից իրեն դատական նիստի դահլիճ տեղափոխելու մասին խնդրանքի բացակայությունը՝ որպես աներկբա և թերևս լռությամբ արտահայտված, սակայն վերաքննիչ բողոքի քննությանը մասնակցելու իրավունքից հրաժարում… Սույն գործի մասնավոր հանգամանքներից ելնելով՝ Դատարանը գտնում է, որ վերջինս հանդիսացել է պատճառաբանված և ոչ իրավասությունների չարաշահմամբ կայացված որոշում:

### 13. Մեղադրյալի ներկայությունը

***Բուլութն ընդդեմ Ավստրիայի (Bulut v. Austria), 17358/90, 22.02.1996թ.***

42. Սույն գործով Դատարանը նշում է, որ հասարակական լսումները տեղի են ունեցել առաջին ատյանում: Այն նաև նշում է, որ Գերագույն դատարանը մերժել է պրն Բուլութի վերաքննիչ բողոքը՝ կապված Քրեական դատավարության օրենսգրքի 285 (դ)-րդ հոդվածի

1-ին մասի հետ… Այս դրույթի հետ կապված՝ Գերագույն դատարանը պարզեցված վարույթով կարող էր մերժել վերաքննիչ բողոքի հետագա քննարկումը, ինչն այն միաձայն դիտել է որևէ հիմքից ակնհայտորեն զուրկ: Հետևաբար, վերանայման բնույթը կարող է համեմատվել բողոքն առանց քննության թողնելու վարույթի հետ: Բացի դրանից, Դատարանը բավարարված չէ նրանով, որ Քրեական դատավարության օրենսգրքի 281-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերի իմաստով իրավական հիմքից զուրկ ճանաչելու հիմքերը, ինչպես դրանք ձևակերպել է դիմողը…, բարձրացնում են դիմողի մեղավորության կամ անմեղության գնահատման փաստի հետ կապված հարցեր, որոնք անհրաժեշտ է քննարկել դատական նիստի ընթացքում: Նա ըստ էության բողոքարկել է գործը քննող դատարանի գնահատականը թույլատրելի ապացույցի վերաբերյալ, այսինքն՝ սա այն բողոքն է, որը Գերագույն դատարանը չի ընդունել:

Հետևաբար, Դատարանը չի գտնում որևէ խախտում՝ կապված Գերագույն դատարանի կողմից գործը չքննելու հետ:

***Բոթենն ընդդեմ Նորվեգիայի (Botten v. Norway), 16206/90, 19.02.1996թ.***

49. ...Դատարանը համոզված չէ… որ մեղադրող կողմի բողոքը կապված է բացառապես իրավունքի հարցերի հետ: Թեև Քաղաքային դատարանի կողմից մեղքի հիմնավորման հետ կապված հարցերը չեն վիճարկվել և Գերագույն դատարանը սահմանափակված է եղել այդ հիմնավորումներով, այն պետք է որոշ դեպքերում տար սեփական գնահատականները՝ պարզաբանելու նպատակով այն հարցը, թե արդյոք դրանք բավարար են դիմողին դատապարտելու համար. եթե ոչ՝ ապա դատարանը պետք է բեկաներ Քաղաքային դատարանի դատավճիռը և գործի նոր քննություն նշանակեր… Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ… պնդումն առ այն, որ դիմողը պարտավոր էր որոշակի կանոնների հիման վրա օգտագործել նավակը փրկարարական աշխատանքների իրականացման ժամանակ, և այն հանգամանքը, թե դա չանելու արդյունքում նա արդյոք 78-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով հանցագործություն է կատարել՝ լուրջ հարցեր է բարձրացնում... [որոնք] ոչ միայն կիրառելի հրահանգների հասկացությունների մեկնաբանությանն են վերաբերում, այլ նաև այն հարցին, թե արդյոք ցուցաբերվել է անզգուշություն կամ անփութություն՝ կապված տվյալ ժամանակ կատարված փրկարարական աշխատանքի վայրի մասնավոր պայմանների հետ…

50. ...Հաշվի առնելով հանցագործության բնույթը՝ պատիժը, անկախ Գերագույն դատարանի կողմից հիմք ընդունված դատողություններից, կարող է խնդիրներ առաջացնել՝ կապված դիմողի անձը բնութագրող հագամանքների հետ… Սակայն պատժի հետ կապված հարցերի լուծման ժամանակ Գերագույն դատարանն անգամ եզրահան-

գումներ չի արել դիմողին անմիջականորեն լսած ստորադաս ատյանի կողմից հարցի նախնական գնահատումից:

51. Ի լրումն դրա, հիշելով քննարկվող հանցագործության բնույթը՝ Դատարանը չի տեսնում որևէ պատճառ կասկածելու, որ վարույթների արդյունքում կարող է վնաս պատճառվել դիմողի մասնագիտական առաջընթացին… Իհարկե, քրեական գործով դատապարտումը և պաշտոնական պարտականությունները կատարելիս թույլ տված անզգուշությունը կարող են լուրջ խնդիրներ առաջացնել պետական ծառայողի համար:

52. Հաշվի առնելով կարևորվող հանգամանքը՝ Դատարանը չի գտնում, որ դիմողին դատապարտելիս կամ նրա նկատմամբ պատիժ նշանակելիս, և Քաղաքային դատարանի կողմից նրա արդարացումը բեկանելիս Գերագույն դատարանի կողմից որոշման ենթակա հանգամանքները կարող են, որպես արդար դատական քննության դրսևորում, պատշաճ կերպով հետազոտվել՝ առանց դիմողի կողմից անձամբ տրված ցուցմունքները լսելու:

53. Քննարկելով Նորվեգիայի դատարաններում վարույթի ամբողջ ընթացքը, Գերագույն դատարանի դերը և քննարկվող հանգամանքների բնույթը, Դատարանը հանգում է այն եզրակացությանը, որ առկա չեն եղել առանձնահատուկ հանգամանքներ, որոնք կարդարացնեին Գերագույն դատարանի կողմից դիմողին նիստի չկանչելը և նախքան Քրեական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով որոշում կայացնելը նրա ցուցմունքներն անմիջականորեն չլսելը…

Հակիրճ՝ Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

***Տիերսեն և այլոք ընդդեմ Սան Մարինոյի (Tierce and Others v. San Marino), 24954/94, 24971/94 և 24972/94, 25.07.2000թ.***

99. Պրն Տիերսեի դեմ հարուցված վարույթներով բողոքը քննող դատավորը պետք է քննարկեր երկուստեք՝ փաստի և իրավունքի հարցեր:

Առաջին դիմողը պնդել է, որ ինքը չի կարող դիտվել քրեական պատասխանատվության ենթակա անձ: Հետևաբար, բողոքը քննող դատավորի խնդիրն է եղել սպառիչ գնահատական տալ նրա մեղավորության կամ անմեղության վերաբերյալ: Հայտնի է, որ դատավորը չի կարող ավելացնել առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված պատժի չափը, սակայն նրա համար առաջնային խնդիր է եղել առաջին դիմողի մեղավորության կամ անմեղության հարցի պարզումը: Նա քննարկել է առաջին դիմողի վարքագծի իրավական որակումը և առանց առաջին դիմողի կողմից անձամբ ներկայացված ապացույցների ուղղակի գնահատման հաստատված է համարել այն, որ դիմողի արարքը համապատասխանում է խարդախության հանցակազմին և ոչ թե յուրացմանը, եթե նույնիսկ այս երկու հանցագործությունների

միջև տարբերությունն առավելապես սուբյեկտիվ կողմին է (մոլորեցման դիտավորությունը): Բացի դրանից, բողոքատուի խնդրանքով դատավորն անգամ քննարկել է առաջին դիմողի կողմից ենթադրաբար կատարված մյուս հանցանքը և դրա արդյունքում վկայակոչել Կոմիսարիո դելա Լեգեի *(Commissario della Legge)* դեպքը: Առաջին դիմողի գույքի վրա կալանք դնելու հարցը ևս առաջնային է եղել զբաղեցրել բողոքարկման վարույթում:

100. Հետևաբար, դիմողն անձամբ պետք է լսվեր բողոքը քննող դատավորի կողմից…

***Հերմին ընդդեմ Իտալիայի (Hermi v. Italy) [GC], 18114/02, 18.10.2006թ.***

92. Ցավալի է, որ ծանուցման մեջ չի նշվել, որ դիմողը պետք է խնդրեր, նիստի օրվանից առնվազն հինգ օր առաջ, որպեսզի տարվի դատարանի դահլիճ… Սակայն Պետությունը չի կարող պարտավորեցվել յուրաքանչյուր փուլում հանգամանորեն նշելու մեղադրյալի իրավունքներն ու դրանք նախատեսող փաստաթղթերը: Մեղադրյալի պաշտպանը պետք է տեղեկացնի նրան հարուցված վարույթի ընթացքի և այն քայլերի մասին, որոնք պետք է ձեռնարկվեն նրա իրավունքները պաշտպանելու համար:

93. Սույն գործով դիմողը տեղեկացվել է բողոքի քննության ժամանակի մասին 2000թ. սեպտեմբերի 1-ին, այսինքն՝ նիստից ավելի քան երկու ամիս առաջ: Նույն կերպ էլ դիմողի կողմից նշանակված փաստաբանները…: Այդ ժամանակահատվածում դիմողի փաստաբաններն անհրաժեշտ չեն համարել կապ հաստատել իրենց վստահորդի հետ… գործի նյութերում չկա որևէ նշում այն մասին, որ դիմողն է փորձել կապ հաստատել նրանց հետ…

101. Իրավամբ, վերաքննիչ վարույթում պրն Մարիանին միջնորդել է վարույթը չշարունակել առանց իր վստահորդի ներկայության… Սակայն, Դատարանի կարծիքով, այդ միջնորդությունը ներկայացվել էր վերջին պահին և չէր հիմնավորվել դիմողի կողմից ներկայացված որևէ հայտարարությամբ, ուստի այն չէր կարող գերակշռել դիմողի որդեգրած դիրքորոշումը:

102. Վերոգրյալի լույսի ներքո և հաշվի առնելով դիմողի փաստաբանների վարքագիծը՝ Դատարանը գտնում է, որ Իտալիայի դատական իշխանությունները պետք է եզրակացնեին, որ դիմողը լռությամբ, բայց աներկբայորեն հրաժարվել է Հռոմի Վերաքննիչ դատարանի 2000թ. նոյեմբերի 3-ի նիստին ներկա գտնվելու իր իրավունքից: Բացի դրանից, դիմողը կարող էր պաշտպանել իր այդ իրավունքը՝ առանց չափազանց ձևական պահանջների անհրաժեշտության:

***Մարսելո Վիոլան ընդդեմ Իտալիայի (Marcello Viola v. Italy), 45106/04, 05.10.2006թ.***

72. …Դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանում դատալսումներին տեսակամրջի միջոցով հայցվորի մասնակցությունը հետապնդում էր օրինական նպատակներ, այն է՝ հանրային կարգի ապահովումը, նոր հանցանքի կանխումը, վկաների և հանցագործություններից տուժողների կյանքի, ազատության և անվտանգության իրավունքի պահպանումը, ինչպես նաև դատաքննության «ողջամիտ ժամկետների» պահպանումը: Մնում է պարզել, թե արդյոք տվյալ մեթոդները չեն խախտել մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը:

73. Դատարանը գտնում է հայցվորի և դատական լսումների դահլիճի միջև հաստատվել էր տեսաձայնային կապ, որը հայցվորին թույլ էր տալիս տեսնել դահլիճում ներկա բոլոր անձանց, ինչպես նաև լսել նրանց ասածները: Նրան տեսնում և լսում էին կողմերի ներկայացուցիչները, դատավորը և վկաները, ինչպես նաև նա հնարավորություն ուներ հայտարարություններ անել դատարանին անմիջապես իր կալանավորման վայրից:

74. Իհարկե, հնարավոր է, որ տեխնիկական բնույթի խնդիրների պատճառով դատարանի դահլիճի և կալանավայրի միջև հաստատված կապն անթերի չէր, որը կարող էր հանգեցնել ձայների և պատկերների փոխանցման դժվարությունների: Այնուամենայնիվ, տվյալ դեպքում հայցվորը ոչ մի անգամ չի փորձել ինքնուրույն կամ իր պաշտպաններից մեկի միջնորդությամբ դատավորին հայտնել նման ձայնային կամ տեսագրական անսարքությունների մասին:

75. Դատարանն ընդգծում է, որ հայցվորի պաշտպանն իրավունք ուներ ներկա գտնվելու իր պաշտպանյալի գտնվելու վայրում և նրա հետ գաղտնի զրուցել: Նման հնարավորություն ուներ նաև նիստերի դահլիճում գտնվող պաշտպանը: Ոչինչ չի վկայում այն մասին, որ չի պահպանվել հայցվորի՝ իր պաշտպանի հետ առանց երրորդ անձանց ներկայության խորհրդակցելու իրավունքը:

76. Նման հանգամանքներում, Դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանի լսումներին հեռուստակամուրջի միջոցով հայցվորի մասնակցությունը պաշտպանության կողմին գործի այլ կողմերի համեմատ չի դրել էական անշահավետ դրության մեջ, և որ շահագրգիռ անձն օգտվում էր արդարացի դատավարության սկզբունքի անբաժան մաս կազմող իրավունքներից և հնարավորություններից, որոնք նախատեսված են Կոնվենցիայի 6-րդ հոդվածով:

77. Արդյունքում, վերոնշյալ դրույթի խախտում չի եղել:

### 14. Հասարակական լսումներ

***Հերմին ընդդեմ Իտալիայի (Hermi v. Italy) [GC], 18114/02, 18.10.2006թ.***

78. Սակայն Դատարանը գտնում է, որ նիստերը հրապարակային չեն եղել դիմողի կամավոր խնդրանքի հիման վրա պարզեցված քննության կիրառման արդյունքում: Պարզեցված քննությունն անվի-

ճելի առավելություններ է նախատեսում մեղադրյալի համար. դատապարտման դեպքում նրա պատիժը էականորեն նվազեցվում է, և դատախազությունը չի կարող պատժի հետ կապված բողոք ներկայացնել… Մյուս կողմից, պարզեցված վարույթը հանգեցնում է ներպետական օրենսդրությամբ նախատեսված դատավարական երաշխիքների նվազեցման, դա վերաբերում է, մասնավորապես, լսումների հասարակական բնույթին և Գլխավոր դատախազի գրասենյակի կողմից գործում չներառված ապացույցներ ձեռք բերելու խնդրանք ներկայացնելու հնարավորությանը:

79. Դատարանը գտնում է, որ դիմողը, ով իր ընտրությամբ երկու պաշտպան է ունեցել, անկասկած, ունակ է եղել հասկանալու պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ իր խնդրանքի հետևանքները: Բացի դրանից, չի երևում, որ այս վեճը հասարակական շահի հետ որևէ առնչություն է ունեցել՝ այդպիսով խոչընդոտելով վերոնշյալ դատավարական երաշխիքներից հրաժարվելուն…

80. ...Իտալիայի օրենսդրության մեջ պարզեցված վարույթի ամրագրումն ուղղված է բացառապես քրեական դատավարության պարզեցմանը և արագացմանը…

81. Վերոգրյալ դատողությունների լույսի ներքո, այն փաստը, որ առաջին և երկրորդ ատյաններում գործի քննությունը կատարվել է դռնփակ և, հետևաբար՝ առանց հասարակության ներկայացուցիչների մասնակցության, չի կարող դիտվել որպես Կոնվենցիայի խախտում…

***Հումատովն ընդդեմ Ադրբեջանի (Hummatov v. Azerbaijan), 9852/03 և 13413/04, 29.11.2007թ.***

142. Դատարանը նշում է, որ սույն գործով առկա են բազմաթիվ առանձնահատուկ հանգամանքներ, որոնք տարբերակում են այն սովորական քրեական վարույթից: Մասնավորապես, դիմողը դատապարտվել է առաջին ատյանի դատարանի կողմից… և նրա համար հասանելի որևէ բողոքարկման իրավունք տվյալ ժամանակահատվածում նախատեսված չի եղել: Միայն նոր Քրեական դատավարության օրենսգրքի և անցումային օրենքի ընդունումից հետո… դիմողին բողոքարկման իրավունք է տրվել… Դատարանը որպես փաստ չի կարող ընդունել նաև այն, որ նախքան դիմողի բողոքի հիման վրա գործի քննության հարուցումը հրապարակայնության պահանջն ապահովված է եղել առաջին ատյանում գործի քննության ընթացքում: Դիմողի գործի վերաբացման առաջնային պատճառը եղել է առաջին ատյանի դատարանում արդար դատական քննության նշված խախտման շտկումը, քանի որ դիմողը Եվրոպայի խորհրդին Ադրբեջանի անդամակցությունից հետո վերջինիս կողմից ճանաչվել է «քաղբանտարկյալ» և Ադրբեջանն ինքը պարտավորվել է բոլոր քաղբանտարկյալների, ներառյալ՝ դիմողի գործերի կրկնակի քննություն իրականացնել: Բացի դրանից, Վերաքննիչ դատարանն ընդհանուր իրավասության դատական մարմին է հանդիսացել, քանի որ իրավասու էր

գործը քննելու փաստի և օրենքի հիման վրա, ինչպես նաև գնահատել կատարված արարքին նշանակված պատժի համաչափությունը: Այս պատճառով Դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանում հասարակական լսումների իրականացումը սույն գործով անհրաժեշտ է եղել 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների բավարարման համար:

143. Անվիճելի է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանում գործի քննությանը հասարակության մասնակցությունն ընդհանուր առմամբ չի բացառվել: Միայն այն փաստը, որ գործի քննությունը տեղի է ունեցել Գոբուստանի բանտում՝ անպայմանորեն չի հանգեցնում այն եզրակացությանը, որ չի ապահովվել դրա հրապարակայնությունը: Հրապարակայնության խախտման չի հանգեցրել նաև այն փաստը, որ հնարավոր դիտորդները պետք է որոշակի նույնացում և հնարավոր ստուգումներ անցնեին…

145. Իրավամբ, Վերաքննիչ դատարանի տարբեր նիստերի ներկա են եղել մի շարք դիտորդներ, սակայն պարզ չէ, թե դա արդյոք տեղի է ունեցել բոլոր նիստերի ժամանակ: Սակայն այս փաստն ինքնին չի նշանակում, որ անհրաժեշտ բոլոր միջոցներն իշխանությունների կողմից կիրառվել են ապահովելու համար նիստի հրապարակայնությունը և ամբողջ գործի քննության ընթացքում հնարավոր դիտորդների ազատ մասնակցությունը:

146. Դատարանը նշում է, որ բողոքարկման արդյունքում հարուցված վարույթը տևել է 2002թ. հունվարից մինչև 2003թ. հուլիս և ներառել է ավելի քան քսան նիստ: Ինչպես երևում է նիստի արձանագրությունից, մի շարք նշանակված նիստեր հետաձգվել են: Թեև Կառավարությունը պնդել է, որ հասարակությունը և լրատվամիջոցները պատշաճ կերպով տեղեկացված են եղել նիստերի տեղի և ժամանակի մասին, սակայն ի հիմնավորումն դրա չի ներկայացրել որևէ ապացույց: Կառավարությունը չի մանրամասնել, թե ինչ ձևով և ծանուցման ինչ եղանակով ու հաճախականությամբ է այս տեղեկությունը պաշտոնապես հասցվել հասարակությանը: Հակառակ դրա, չկա որևէ նշում այն մասին, որ հասարակությանը թեկուզ ձևականորեն տեղեկություն տրամադրված լինի այն մասին, թե ինչպես հասնել Գոբուստանի բանտ, ինչպես նաև պարզաբանված լինեն մասնակցության պայմանները:

147. ...անկախ առկա տարածությունից, չի կարող վիճարկվել, որ բանտը հեռու է գտնվել ցանկացած բնակավայրից, դժվար է եղել այնտեղ տրանսպորտային միջոցներով հասնելը և դրա մոտակայքում չեն գործել կանոնավոր հասարակական տրանսպորտային փոխադրումներ … Դատարանը գտնում է, որ այն հանգամանքը, որ անհրաժեշտ է եղել ապահովելու տրանսպորտային միջոցների հետ կապված լուրջ ծախսերը և մեծ հեռավորություն անցնել Բաքվում գտնվող Վերաքննիչ դատարանի դահլիճ ներկայանալու փոխարեն, ուղղակի խոչընդոտող ազդեցություն է ունեցել դիմողի գործը լսել ցանկացող հավանական դիտորդների համար:

148. Դատարանը նաև քննարկել է դիմողի հայտարարությունները, ինչպես նաև դիտորդների վստահելի զեկույցները, որոնց համաձայն՝ մի շարք նիստերի ընթացքում դիտորդները և լրագրողները նախապես են ընտրված եղել կամ նրանց չի թույլատրվել մասնակցել նիստերին…

149. Ամփոփելով՝ Դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը չի սահմանել պատշաճ փոխհատուցման միջոցներ հակակշռելու համար այն վնասակար ազդեցությունը, որը դիմողի գործի քննության հրապարակայնության վրա ունեցել է Գոբուստանի բանտի փակ տարածքը: Հետևաբար, գործի քննությունը չի համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հրապարակայնության պահանջին:

150. ...Այն պարզ փաստը, որ իր բողոքի քննության ժամանակ դիմողն արդեն դատապարտված է եղել ցմահ ազատազրկման և պատիժը կրելիս է եղել, ինքնին չի ենթադրում, որ անհրաժեշտ է բողոքարկման վարույթի քննությունը դատարանի դահլիճից տեղափոխել դիմողի ազատազրկման վայր… Սույն գործով ցույց չի տրվել, որ առկա է եղել … որևէ անվտանգություն ապահովելու անհրաժեշտություն: Բացի դրանից, եթե անգամ նման անհրաժեշտություն առկա է եղել, Վերաքննիչ դատարանը, ըստ էության, դրանք բավականաչափ լուրջ չի դիտել կամ դրանք իր միջանկյալ որոշումներում քննարկելու… կամ ձևական որոշում կայացնելու համար… բացառելով հասարակության մասնակցությունը: Նման հանգամանքներում Դատարանը չի գտնում Վերաքննիչ դատարանում գործի քննության հրապարակայնության խախտման որևէ հիմնավորում:

151. Դատարանը նաև նշում է, որ Գերագույն դատարանի կողմից դիմողի վճռաբեկ բողոքի հետագա քննությունը, եթե անգամ այն հրապարակայնորեն է իրականացվել, բավարար չէ շտկելու համար բողոքի քննության հրապարակայնության բացակայությունը, քանի որ Գերագույն դատարանի իրավասությունը սահմանափակված է միայն օրենքի հարցերով և այն իրավասու չէ ամբողջ ծավալով գործի վերանայում իրականացնել…

152. Հետևաբար, Դատարանը եզրակացնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում հասարակական լսումներ չանցկացնելու պատճառով, որը հանդիսանում է արդար դատական քննության էական տարրերից մեկը:

***Բաստո Գոնսալեսն ընդդեմ Իսպանիայի (Bazo Gonzalez v. Spain), 30643/04, 16.12.2008թ.***

35. Տվյալ դեպքում, Բիսկայի Շրջանային դատարանը՝ որպես վերադաս դատական ատյան, իրավունք ուներ ըստ փաստի նոր դատավճիռ կայացնել, ինչն արեց 2002թ. դեկտեմբերի 18-ին: Այդ առումով, գնահատելով շահագրգիռ անձի մեղավարության կամ անմեղության հարցը, այն կարող էր որոշում կայացնել արդարացման դա-

տավճիռն ուժի մեջ թողնելու կամ մեղադրական դատավճիռ կայացնելու մասին:

36. Շրջանային դատարանի կողմից գործի քննության սահմանները Դատարանին թույլ են տալիս համարել, որ դռնբաց նիստի անհրաժեշտություն չի եղել: Դատարանը հաստատում է, որ հայցվորի մեղքը հաստատելու համար դատարանի կողմից վերլուծված հանգամանքները հիմնականում իրավական բնույթի են: Դատարանի որոշումը բացահայտ ցույց է տալիս, որ այն լիազորված չէ կրկին գնահատելու ներկայացված փաստերը: Դրա հետևանքով այն սահմանափակվել է ցածր դատական ատյանի կողմից տրված՝ Ծխախոտի շուկայի մասին 13/1998 օրենքով ապաքրեականացված արարքների նորովի մեկնաբանությամբ: Բացի դրանից, շրջանային դատարանը որոշ չափով անդրադարձել է ոստիկանության կողմից կազմված արձանագրության օրինականությունը պայմանավորող իրավաբանորեն պարտադիր պայմաններին, սակայն առանց ըստ փաստի որոշման կայացնելու: Ի տարբերություն այլ գործերի, վերադաս դատական ատյանը կոչված չէր գործը քննել ըստ փաստի և ըստ իրավունքի: Հակառակը, դատարանի կողմից վերլուծվել են գործի իրավական բնույթի հանգամանքներն առաջին ատյանի դատարանում ապացուցված փաստերը չփոխելու համար:

37. Խոսելով հայցվորի այն բողոքի մասին, որ իր արդարացման հետևանքով նա չէր կարող վիճարկել առաջին ատյանի դատարանի կողմից ապացուցված ճանաչված փաստերը՝ Դատարանը հաստատում է, որ ներպետական իրավական համակարգն արդարացված անձանց համար չի նախատեսում ապացուցված փաստերը վիճարկելու հնարավորություն: Այնուհանդերձ, այն հաստատում է, որ Բարկալդոյի Քրեական դատարանի դատավորի կողմից գործը քննվել է դռնբաց, որի ընթացքում հայցվորը հնարավորություն ուներ փաստերը վիճարկելու համար իր գնահատմամբ անհրաժեշտ փաստարկներ առաջադրել: Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանում գործի քննությանը՝ Դատարանը նշում է, որ հայցվորին հաղորդել են վերաքննիչ բողոքի հետ կապված դատախազների դիտողությունները, որոնց նա սահմանված ժամկետում իր փաստաբանի օգնությամբ պատասխան է ներկայացրել: Դրանից երևում է, որ հայցվորն օգտվել է մրցակցային դատավարության սկզբունքից, որը նախատեսված է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին մասով:

38. Այս ամենը բավարար է Դատարանի համար եզրակացնելու, որ դռնբաց դատական նիստի անհրաժեշտություն չկար: Փաստորեն, նկատի ունենալով Շրջանային դատարանի կողմից ուսումնասիրված հարցերի բնույթը և այն փաստը, որ հայցվորը դատավարության բոլոր փուլերին կարողացել է ներկայացնել իր գրավոր փաստարկները, դռնբաց նիստի բացակայությունը չի խախտել դիմողի՝ գործի արդար դատական քննության իրավունքը:

***Իգուալ Կոլն ընդդեմ Իսպանիայի (Igual Coll v. Spain), 37496/04, 10.03.2009թ.***

33. Դատարանը հաստատում է, որ հայցվորն արդարացվել է առաջին ատյանի դատարանում՝ դռնբաց դատական նիստի ընթացքում, որի ժամանակ հայցվորը ելույթ է ունեցել և ներկայացրել բազմաթիվ ապացույցներ: Դատական լսումների արդյունքում դատավորը համարել է, որ չնայած չվճարման ապացուցված փաստին, ապացուցված չէր, որ հայցվորը գիտակցաբար չի կատարել վճարման իր պարտավորությունը: Նման եզրակացության գալու համար դատավորը որպես հիմք է ընդունել հայցվորի պարտավորության կատարմանը խոչընդոտող ֆինանսական դրության ուսումնասիրությունը, իսկ որպես հիմնական աղբյուր՝ դիմողի հայտարարությունը:

34. Իր հերթին, Շրջանային դատարանը եկել է հակառակ եզրահանգման և հաստատել է, որ հայցվորը ոչ միայն կանխամտածված խախտել է վճարման իր պարտավորությունը, որը նա կարող էր կատարել, այլ նաև ապացույցներ չի ներկայացրել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ և գումար վաստակելու նպատակով իր դրական վարքագիծը հիմնավորելու համար, չնայած նրան, որ նա ուներ մասնագիտական բարձր ընդունակություններ:

35. Դատարանը հաստատում է , որ Շրջանային դատարանը ոչ միայն հաշվի է առել հանցակազմի օբյեկտիվ կողմը, տվյալ դեպքում՝ աշխատավարձի չվճարումը, այլ նաև վերլուծել է հայցվորի դիտավորությունը և նրա վարքագիծը, ինչպես նաև իր մասնագիտական բարձր որակավորման շնորհիվ գումար վաստակելու հնարավորությունները: Դատարանի կարծիքով, դժվար թե նման քննությունը կարող է համարվել միայն ըստ իրավունքի: Իր հատկանիշներով այն նաև ներառում է ըստ փաստի քննություն՝ հայցվորի մեղքը հաստատելու նպատակով:

36. Տվյալ դեպքում Շրջանային դատարանի կողմից իրականացված քննության սահմանները թույլ են տալիս Դատարանին համարել, որ դռնբաց դատական նիստն անհրաժեշտ էր: Իրականում, Շրջանային դատարանը չի սահմանափակվել գործի օբյեկտիվ կողմին այլ իրավական մեկնաբանություն տալով, այլ նաև վերանայել և նորովի է գնահատել առաջին ատյանի դատարանի կողմից ապացուցված փաստերը: Վերջինս անցնում է ըստ իրավունքի քննության սահմանը: Հետևաբար, վերադաս դատարանը գործը վերանայել է ըստ իրավունքի և ըստ փաստի:

37. Հաշվի առնելով հայցվորի արդարացումն առաջին ատյանի դատարանի կողմից՝ դռբաց նիստի արդյունքում, որի ժամանակ ներկայացվել են բազմաթիվ ապացույցներ ինչպես իրեղեն՝ դատական սեկվեստրի բանկային հաշվից տեղեկանքներ, այնպես էլ անձնական՝ հայցվորի հայտարարությունը, Դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից հայցվորի դատապարտումը՝ առանց նրան լսե-

լու, չի համապատասխանում Կոնվենցնիայի 6-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված արդար դատաքննության պահանջին:

38. Այդ տվյալները բավարար են Դատարանի համար եզրահանգելու, որ Վերաքննիչ դատարանում գործն անհրաժեշտ էր քննել դռնբաց նիստում:

### 15. Դատավճռի վերաբերյալ տեղեկացումը

***Պրետտո և այլոք ընդդեմ Իտալիայի (Pretto and Others v. Italy), 7984/77, 08.12.1983թ.***

27. …Դատարանի կարծիքով, 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով հետապնդված նպատակը… այս ենթատեքստում, մասնավորապես՝ համոզվելու համար, որ դատական քննությունը հասանելի է հասարակության համար, ինչպես նաև արդար դատական քննությունն ապահովելու նպատակով, յուրաքանչյուր փուլում, որը վերաբերում է նաև վճռաբեկ վարույթին, կարող է ապահովվել դատավճռի ամբողջական տեքստը դատարանի գրասենյակից ստանալու միջոցով յուրաքանչյուրին հասանելի դարձնելով, ավելին, դռնբաց նիստում բողոքը մերժելու կամ նախորդ դատավճիռը բեկանելու վերաբերյալ որոշումը հրապարակելով. նման հրապարակումը երբեմն կարող է սահմանափակվել որոշումների եզրափակիչ մասով:

28. Հետևաբար, սույն գործով Վճռաբեկ դատարանի դատավճռի վերաբերյալ հասարակական կարծիքի բացակայությունը չի խախտում Կոնվենցիան:

***Էռնստը և այլոք ընդդեմ Բելգիայի (Ernst and Others v. Belgium), 33400/96, 15.07.2003թ.***

69. Ինչ վերաբերում է Վճռաբեկ դատարանի կողմից դատավճիռը չհրապարակելու մասին հայցվորի բողոքին, որում հայցվորը որևէ ճշգրտում չի կատարել, Դատարանը հիշեցնում է, որ չնայած արգելքների բացակայությանը, դատավճռի հրապարակման պահանջը դյուրին էր մեկնաբանված: Այսպես, Դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր գործով յուրաքանչյուր երկրի օրենսդրությամբ նախատեսված «դատավճռի» հրապարակման եղանակն անհրաժեշտ է գնահատել դրան վերաբերող գործի առանձնահատկությունները և հոդված 6-ի 1-ին մասի նպատակն ու առարկան հաշվի առնելով: Սուտերն ընդդեմ Շվեյցարիայի գործով Դատարանը որոշել է, որ դատավճռի հրապարակումը չպետք է կատարվի այն բարձրաձայն կարդալու եղանակով, և հաստատատել է, որ 6-րդ հոդվածի դրույթները պահպանվել են, քանզի յուրաքանչյուր շահագրգիռ անձ հնարավորություն ուներ Ձինվորական հարցերով վճռաբեկ դատարանում ծանոթանալու դատավճռի ամբողջ տեքստին:

70. Տվյալ դեպքում, խորհրդակցական սենյակում ընդունված դատավճռի հրապարակելուց հետո մի քանի օր հետո հայցվորները դա-

տավճիռը կարող էին ստանալ դատական կատարածուին դիմում ներկայացնելով: Բացի դրանից, տվյալ դեպքում 1996թ. ապրիլի 1-ին Վճռաբեկ դատարանի կայացրած դատավճիռը հրապարակվել էր պաշտոնական տեղեկագրում, որին կցվել էին դատախազի մեղադրական ճառը և նրա վերջնականն եզրակացությունը: Նման հրապարակումը Վճռաբեկ դատարանի դատական նախադեպերը վերահսկելու որոշակի հնարավորություն է տվել (տե՛ս Սուտերն ընդդեմ Շվեյցարիայի): Դիմողի կողմից ճշգրտումներ չներկայացնելու հետևանքով և հաշվի առնելով վերոհիշյալ դատական նախադեպերը՝ Դատարանը չի գտնում, որ խախտվել է Վճռաբեկ դատարանի կողմից դատավճիռները հրապարակելու պահանջը:

71. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ պահպանվել են 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ դատավճիռը հրապարակելու պահանջները:

Տե՛ս նաև վերը՝ **C.XI.5**

### 16. Անարդարություն

***Ուայնենն ընդդեմ Բելգիայի (Wynen v. Belgium), 32576/96, 05.11.2002թ.***

41. Դատարանը կրկնում է, որ առաջին հերթին Կոնվենցիան՝ որպես այդպիսին, չի երաշխավորում որևէ իրավունք՝ կապված ներպետական դատարանի կողմից նախնական կարգավորման հարցերով այլ ազգային կամ միջազգային դատարան դիմելու դեպքի հետ… Սա համապատասխանում է այնպիսի կառուցակարգի գործողությանը, որը կոչված է ապահովելու դատարանի կողմից այն հանգամանքի հաստատումը, որ այն իրավասու է կամ նրան խնդրվել է նախնական լսմանը հղում կատարել՝ առաջին հերթին բավարարելով այն, որ հարցին պետք է պատասխան տրվի նախքան դատարանի կողմից գործի քննության կանխորոշումը: Սակայն ամբողջությամբ չի բացառվում, որ որոշակի հանգամանքներում վերջին ատյանում գործը քննող ներպետական դատարանի մերժումը կարող է խախտել արդար դատաքննության սկզբունքը, որն ամրագրված է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում, հատկապես, եթե նման մերժումն անօրինական է...

42. Դատարանը գտնում է, որ սույն գործով այդպես չի եղել: Վճռաբեկ դատարանը պատշաճորեն հաշվի է առել դիմողների բողոքները՝ կապված Բժշկական ակտի 44-րդ հոդվածի անօրինականության և հակասահմանադրականության հետ, և նրանց պահանջն այն մասին, որ այս հարցի նախնական լսումը պետք է իրականացվեր Վարչական արդարադատության և դատավարության դատարանի կողմից: Նաև այն որոշում է կայացրել որոշման մեջ բավարար պատճառաբանության առկայության վերաբերյալ և հանգել այն եզրակացության, որ այն անօրինական չէ: Դատարանը նաև գտնում է, որ ներ-

պետական իշխանությունների, հատկապես դատարանների համար առաջնային պետք է լինի ներպետական օրենսդրության մեկնաբանության հետ կապված խնդիրների լուծումը…

43. Հետևաբար, նախնական հարցի՝ Վարչական արդարադատության և դատավարության դատարանին վերապահելու մերժումը չի խախտել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ի մասը:

***Ֆերան ընդդեմ Իտալիայի (Fera v. Italy), 45057/98, 21.04.2005թ.***

45. հանգելով այդ եզրակացությանը՝ Դատարանը պետք է ստուգի, թե արդյոք Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների կողմից պատիժը 1/3-ով նվազեցնելու դիմումի մերժման պատճառաբանական մասում թույլ տրված գնահատման սխալը կարող էր ինքնին խոչընդոտել գործի արդարացի դատաքննությունը:

Դատարանը նշում է Վերաքննիչ դատարանի կողմից արված սխալ պատճառաբանության մասին, որը նշված չէր հայցվորի վճռաբեկ բողոքում: Բոլոր դեպքերում խոսքը վերաբերում է այնպիսի սխալին, որը հետևանք չի ունեցել դատավարության ելքի համար: Ինչպես Դատարանը վերը նշել է, նախնական դատալսմանը հայցվորի կողմից ներկայացված բժշկական փաստաթղթերն առջացնում էին անհրաժեշտություն հոգեբանական փորձաքննություն կատարելու: Հետագայում, Վերաքննիչ դատարանում գործի քննության ընթացքում հայցվորի պահանջով նշանակվել է բժշկական փորձաքննություն նրա մեղսունակության աստիճանն ստուգելու համար: Բացի դրանից, Վերաքննիչ դատարանում նա պահանջել է այլ հարցի կապակցությամբ մեկ այլ փորձաքննություն, այն է՝ հիվանդանոցում տուժողի բուժման եղանակի և նրա մահվան միջև պատճառական կապի առկայության մասին: Ինչպես նշվել է Վերաքննիչ դատարանի դատավճռում՝ համաձայն գործով կիրառվող իրավական դրույթների՝ արագացված դատաքննության ընթացքում նման դիմումները չեն ընդունվում:

Իհարկե, հայցվորը կարող էր հենվել այն փաստի վրա, որ պատիժը 1/3-ով նվազեցնելու հնարավորությունը չկորցնելու համար մեղադրյալի կողմից նոր փորձաքննության մասին դիմում ներկայացնելուն խոչընդոտելու փաստը, որը կապված էր արագացված դատաքննություն նշանակելու մասին սխալ մերժման հետ, կարող էր խախտել արդարացի դատաքննության սկզբունքը: Սակայն հաշվի առնելով, որ հայցվորը փորձաքննություն նշանակելու մասին դիմում է ներկայացրել, գործի արդարացի դատաքննությունը տվյալ դեպքում քննարկման առարկա չի կարող լինել:

Հետևաբար, գործի արդարացի դատաքննության սկզբունքը չի խախտվել Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների կողմից կատարված սխալ հիմնավորման հետևանքով:

46. Ի վերջո, Դատարանը գտնում է, որ ընդհանուր առմամբ դատաքննությունն արդար բնույթ է կրել՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի

առաջին մասի շրջանակներում: Արդյունքում, տվյալ դրույթի խախտում չի եղել:

***Պերլալան ընդդեմ Հունաստանի (Perlala v. Greece), 17721/04, 22.02.2007թ.***

27. …Դատարանը հիշեցնում է, որ համաձայն Հունաստանի Սահմանադրության՝ Կոնվենցիան կազմում է հունական իրավական համակարգի անբաժան մաս և օժտված է ավելի բարձր իրավաբանական ուժով, քան դրան հակասող բոլոր ազգային իրավանորմերը Չնայած հայցվորն իր վճռաբեկ բողոքում մատնանշել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման մասին, Վճռաբեկ դատարանը վերոհիշյալ հիմքն անընդունելի է համարել այն պատճառաբանությամբ, որ տվյալ դրույթը կիրառելի չէ այդ գործով և որպեսզի բողոքն ընդունվեր, հայցվորն այն պետք է ներկայացներ Քրեական դատավարության օրենսգրքով սպառիչ կերպով սահմանված հիմքերից մեկի հետ համադրությամբ: Դատարանը գտնում է, որ նման մեկնաբանությունը հնարամիտ բնույթ է ունեցել և զգալի չափով նվազեցրել էր դատապարտյալների՝ իրենց իրավունքներն ազգային վերադաս ատյանի առջև պաշտպանելու իրավունքը: Եթե նույնիսկ Դատարանը ճանաչում է, որ վճռաբեկ բողոք ներկայացնելու համար նախատեսված հիմքերը կարող են առավել խիստ լինել, քան վերաքննիչ բողոք ներկայացնելու համար այն գտնում է, որ վերոհիշյալ պատճառաբանությամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հիմքի առկայությամբ վճռաբեկ բողոքը չընդունելը կրում է չափազանց ձևական բնույթ, որի պատճառով հայցվորը զրկվել է Վճռաբեկ դատարանում իր գործի քննության հնարավորությունից:

28. Իրականում, նկատի ունենալով Վճռաբեկ դատարանի կողմից հայցվորի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի իրացումն ապահովելու կապակցությամբ ներկայացված բողոքի մերժման փաստը, Դատարանը կարող է իրավացիորեն եզրահանգել, որ վերոհիշյալ սահմանված երաշխիքները հաշվի չեն առնվել և տվյալ դեպքում չեն կիրառվել: Կառավարության դիտողությունները սահմանափակվում են գործի սպառիչ վերլուծությամբ և չեն պարունակում էական ոչ մի փաստ, որը թույլ կտար այլ եզրահանգման գալ:

30. Վերոհիշյալ փաստերը բավարար են Դատարանի համար եզրահանգելու, որ Վճռաբեկ դատարանը չի ապահովել հայցվորի արդարացի դատաքննության իրավունքը:

### 17. Պատճառաբանված դատավճռի անհրաժեշտությունը

***Հադջիանաստասիուն ընդդեմ Հունաստանի (Hadjianastassiou v. Greece), 12945/87, 16.12.1992թ.***

34. Այս փուլում դատավճիռը հրապարակվել է Դատարանների նախագահի կողմից. Զինվորական վերաքննիչ դատարանը չի կատարել որևէ նշում այդ հարցերի մասին նախքան նիստի արձանագրության մեջ դրանց հայտնվելը … Ակնհայտ է, որ հղում է արվել Զինվորական քրեական օրենսգրքի 366-րդ հոդվածին… և տրամադրված տեղեկությունը որոշվել է որպես նվազ կարևոր, սակայն այն հիմնված չի եղել այն նույն հիմքերի վրա, ինչ Օդային ուժերի մշտական դատարանի որոշումը: Հարց 1 (a)-ն, որը կապված է «հրթիռների ընթացքին վերաբերող ընդհանուր տեղեկության հետ», որը պետք է գաղտնի պահեր, առաջին անգամ նշվել է Վերաքննիչ դատարանում՝ գործի քննության ընթացքում: Երբ դատավճիռն ստանալուց մեկ օր հետո դիմողը խնդրել է ընդունել հարցերի ամբողջական տեքստը, գրանցող պաշտոնատար անձն իբրև տեղեկացրել է նրան, որ նա պետք է սպասի դատավճռի «վերջնական տարբերակին»: ...Զինվորական քրեական օրենսգրքի 425-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված հնգօրյա ժամկետում օրենքով սահմանված կարգով ներկայացված իր բողոքում…, պրն Հադջիանաստասիուն կարող էր հիմնվել միայն այն բանի վրա, ինչ նա կարողացել է լսել կամ հավաքել դատական նիստի ընթացքում, և չէր կարող անել ավելին, քան նախատեսված է 426-րդ հոդվածում:

35. Կառավարության պնդմամբ՝ դիմողը պետք է այլ հայտարարություններ աներ լրացուցիչ հուշագրի միջոցով,…

36. Դատարանին այս փաստարկը չի համոզում: Երբ պրն Հադջիանաստասիուն 1986թ. հունվարի 10-ին ստացել է դատական լսման արձանագրությունը, նրան հնարավորություն չի տրվել օրենքի հիման վրա հանգամանորեն ներկայացնել իր բողոքը: Համաձայն ձևավորված կայուն պրակտիկայի՝ լրացուցիչ հայտարարությունները կարող են հաշվի առնվել, եթե միայն նախնական բողոքում առկա է գոնե մեկ հիմք, որը կարող է դիտվել ընդունելի և բավարար չափով հիմնավորված…

37. Հետևաբար, պաշտպանության իրավունքը հանդիսացել է այնպիսի սահմանափակումների առարկա, որոնց արդյունքում դիմողն արդար դատաքննության հնարավորություն չի ունեցել: Ուստի տեղի է ունեցել 1-ին մասի հետ կապված՝ 6-րդ հոդվածի 3-րդ մասի (բ) կետի խախտում…

### 18. Որոշման սահմանները

***Կրեմզովն ընդդեմ Ավստրիայի (Kremzow v. Austria), 12350/86, 21.09.1993թ.***

76. Դիմողը նշել է, որ «ֆինանսական խախտումների» մեղսագրման արդյունքում Գերագույն դատարանն իրեն մեղավոր է ճանաչել խարդախության մեջ՝ խախտելով անմեղության կանխավարկածը:

Նա նշել է, որ ատենակալները, ովքեր լսել են գործով բոլոր ապացույցները, չէին կարող դրդապատճառ ձևավորել՝ «շատ մեծ հավանականությունների» հիմքով…

77. Դատարանը չի ընդունում այն, որ դիմողն արդեն մեղավոր է ճանաչվել սպանության մեջ, և որ Գերագույն դատարանի դիտողությունը կապված է բացառապես հանցանքի կատարման դրդապատճառի հարցի հետ: Ավելին, «ֆինանսական զանցանքներին» հղումը չի կարող մեկնաբանվել որպես կարծիք այն մասին, որ դիմողը մեղավոր է առանձնահատուկ հանցագործության մեջ: Նման հանգամանքներում, անմեղության կանխավարկածի խախտման որևէ հարց չի առաջանում:

## II. ՎԱՐՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

### 1. Մեղադրանքի կողմի պահանջը

***Նիկիտինն ընդդեմ Ռուսաստանի (Nikitin v. Russia), 50178/99, 20.07.2004թ.***

46. Դատարանը նշում է, որ նշված ժամանակահատվածում գործող ռուսական օրենսդրությունը թույլատրում է նոր կամ նոր երևան եկած հանգամանքների կամ հիմնարար խախտման հիմքով այն քրեական գործով վարույթի վերաբացումը, որով վերջնական որոշում է կայացվել… Այս վարույթն ակնհայտորեն մտնում է 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանների մեջ: Ինչևէ, Դատարանը նշում է, որ, ի լրումն դրա, գոյություն ունի նաև ընթացակարգ՝ կապված նյութական և դատավարական իրավունքի խախտման հիմքով վարույթի վերանայման հետ (հսկողական վերանայում…): Նման վարույթների առարկա հանդիսացող դեպքերը վերաբերում են նույն քրեական մեղադրանքին և նախկին որոշման իրավական ուժին: Եթե խնդրանքը մերժվել է և վարույթները վերաբացվել են հետագա քննարկումների համար, հսկողական վարույթի վերջնական արդյունքը կլինի այն, որ դատարանների կողմից նախկինում կայացված բոլոր որոշումները կբեկանվեն և քրեական մեղադրանք առաջադրվելու վերաբերյալ նոր որոշում կկայացվի: Այս դեպքում, հսկողական վարույթի արդյունավետությունը համընկնում է վերաբացմանը, քանի որ երկուսն էլ սահմանում են նախորդ վարույթների շարունակություն: Դատարանն այնուհետև եզրակացնում է, որ *non bis in idem* սկզբունից ելնելով՝ հսկողական վարույթը կարող է դիտվել որպես վարույթի վերաբացման առանձնահատուկ ձև, որը տեղավորվում է 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի շրջանակներում:

54. … Այն փաստը, որ հսկողական վարույթի կարգի կիրառումը, ինչպես նշվում է սույն գործով դիմումի մեջ, համապատասխանել է 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի պահանջներին, բավարար չէ

հավաստելու համար Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ համապատասխանությունը:

58. ...դիմողի գործով Նախագահությունն իրականում միայն որոշում է կայացրել այն հարցի վերաբերյալ, թե վարույթը պետք է վերաբացվի, թե՝ ոչ: Այն հարցը, թե դա մերժում է արդարացումը, անպայման կհանգեցնի նրան, որ իրավասու դատարանում տեղի կունենան տարբեր հակադիր վարույթներ փաստերի առնչությամբ... Գլխավոր դատախազության պահանջը կարող է ինքնին քննադատվել որպես ինքնիրավ կամ վարույթը չարաշահող: Ինչևէ, այն չի ունեցել որևէ որոշիչ ազդեցություն ամբողջ վարույթի վերաբացման արդարացիության վրա, ինչը հանդիսացել է Նախագահության քննարկման առաջնային առարկա... Հետևաբար, վարույթի վերաբացման վերաբերյալ Գլխավոր դատախազության ներկայացուցչի խնդրանքը չէր կարող և չի հանդիսացել նախադատելի սույն գործով քրեական մեղադրանքներ չառաջադրելու համար:

59. Դատարանը եզրակացնում է, որ իշխանությունները, սույն գործով իրականացնելով վերահսկողություն՝ չեն խախտել արդարացի հավասարակշռությունը դիմողի շահերի և արդարադատության պատշաճ վարչարարության հավաստման պահանջների միջև:

***Բուջնիտան ընդդեմ Մոլդովայի (Bujnita v. Moldova), 36492/02, 16.01.2007թ.***

23. Դատարանը նշում է, որ վարույթների վերաբացման հիմքերը հիմնված են եղել ոչ նոր փաստերի, ոչ էլ լուրջ դատավարական խախտումների վրա, այլ փաստերի գնահատման և ցածր ատյաններում դիմողի գործողությունների որակման հետ Գլխավոր դատախազության ներկայացուցչի անհամաձայնության վրա: Դատարանը գտնում է, որ վերջինը հետազոտել է բոլոր կողմերի հայտարարությունները և ցուցմունքները և նրանց իրական եզրակացությունները չեն եղել ակնհայտ չպատճառաբանված: Դատարանի կարծիքով, կարճման վերաբերյալ Գլխավոր դատախազության ներկայացուցչի խնդրանքի հիմքերը սույն գործով բավարար չեն եղել արդարացնելու համար վերջնական դատավճռի վիճարկումը և կիրառելու այս բացառիկ ընթացակարգը՝ մինչև վերջ: Այսպիսով, Դատարանը գտնում է, որ ինչպես նշվել է նույնանման հանգամանքներում..., Պետության իշխանությունները խախտել են խիստ հավասարակշռությունը դիմողի շահերի և քրեական արդարադատության համակարգի արդյունավետության հաստատման անհրաժեշտության միջև:

## 2. Բավարարման առավել ընդունելի ձևը

***Սեջդովիցն ընդդեմ Իտալիայի** (Sejdovic v. Italy) [GC] 56581/00, 01.03.2006թ.*

126. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ ինչպես սույն գործով է, անձը դատապարտվել է այնպիսի վարույթի արդյունքում, որն իրականացվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջների խախտմամբ, գործի կրկնակի քննությունը կամ վարույթի վերաբացումը, եթե անհրաժեշտ է, հանդիսանում է խախտմամբ պատճառված վնասի հատուցման համապատասխան միջոց (տես Նախարարների կոմիտեի R(2000)2 հանձնարարականում ամրագրված սկզբունքները…): Ինչևէ, առանձնահատուկ վարութային միջոցները, որոնք պահանջվում են Պատասխանող պետությունից, Կոնվենցիայով նախատեսված իր պարտականություններից ազատվելու համար պետք է հիմնված լինեն գործի մասնավոր հանգամանքների վրա և մեկնաբանվեն այդ գործով Դատարանի վճռի լույսի ներքո՝ պարտադիր պահպանելով Դատարանի վերոնշյալ նախադեպային իրավունքով սահմանված պահանջները…

127. Մասնավորապես, Դատարանը չպետք է ցույց տա ինչպես և ինչ ձևով պետք է իրականացվի յուրաքանչյուր նոր դատավարությունը: Պատասխանող պետությունն ազատ է ընտրել դիմողին պարտականությունից ազատելու այդ միջոցները՝ դնելով դիմողին, որքանով դա հնարավոր է, այն վիճակի մեջ, որում նա կլիներ, եթե Կոնվենցիայի պահանջները խախտված չլինեին… նման միջոցները համեմատելի են Դատարանի վճռում առկա եզրակացությունների և պաշտպանության իրավունքների հետ…

# Ե. ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ

## ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ

### 1. Նշանակված ժամանակահատվածը

***Շումախերն ընդդեմ Լյուքսեմբուրգի (Schumacher v. Luxembourg), 63286/00, 25.11.2000թ.***

27. Համաձայնելով Կառավարության վարկածին՝ Դատարանը գտնում է, որ գործի քննության «ողջամիտ ժամկետի» պահանջների պահպանման հաշվարկը պետք սկսել 1991թ. հոկտեմբերի 24-ից՝ դիմողին քննիչի կողմից մեղադրանքի առաջադրման օրվանից:

28. Դատարանը մատնանշելով իր դատական նախադեպերը, ըստ որոնց՝ գործի քննության ժամկետները 6-րդ հոդվածի իմաստով շարունակվում են մինչև արդարացման կամ մեղադրական դատավճռի կայացման պահը: Տվյալ գործով ստացվում է, որ ոչ մի դատական ատյան գործն ըստ էության չի քննել, հետևաբար, դիմողը հստակորեն ո՛չ արդարացվել է, ո՛չ դատապարտվել: Անհրաժեշտ է նաև հաստատել, որ շահագրգիռ անձն սպասել է իր գործի ելքին մինչև նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդման վաղեմության ժամկետների լրանալը: Դատարանը գտնում է, որ արդյունքում՝ գործի քննության ժամկետներն ավարտվել են քրեական հետապնդման դադարեցմանը զուգահեռ՝ 2000թ. նոյեմբերի 17-ին:

***Սթոիանովան և Նեդելքուն ընդդեմ Ռումինիայի (Stoianova and Nedelcu v. Romania), 77517/01 և 77722/01, 04.08.2005թ.***

20. Դատարանը նշում է, որ դիմողների դեմ հարուցված քրեական վարույթները ներառում են երկու տարբեր փուլեր: Առաջինն սկսվել է 1993թ. ապրիլի 14-ին, երբ նրանք ձերբակալվել և կալանավորվել են, և ավարտվել է 1997թ. նոյեմբերի 11-ին, երբ դատախազ Ն.Ո.-ն որոշում է կայացրել վարույթը կարճելու վերաբերյալ: Երկրորդ փուլն սկսվել է 1999թ. մայիսի 12-ին, երբ դատախազը վարույթը վերաբացելու մասին որոշում է կայացրել, և ավարտվել է 2005թ. ապրիլի 21-ին, երբ մեղադրանքի կողմը որոշում է կայացրել կարճել գործով վարույթը:

21. Դատարանը չի կարող ընդունել Կառավարության պնդումն առ այն, որ առաջին փուլը չպետք է հաշվի առնվի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով: Դա նշանակում է, որ վարույթը կարճելու վերաբերյալ որոշումը, որը կայացվել է դատախազ Ն.Ո.-ի կողմից 1997թ. նոյեմբերի 11-ին, չի կարող դիտվել որպես դիմողի դեմ հարուցված վարույթը դադարեցնող, քանի որ այն չի հանդիսացել վերջնական որոշում…

... դատախազության համար հնարավոր է եղել քրեական գործով նախնական քննության վերաբացումը՝ առանց ներպետական դատարանի կողմից թույլտվություն ստանալու, որը պարտավոր կլիներ քննարկել դիմումը՝ որոշակի չափանիշներին համապատասխան, ներառյալ գործի վերաբացման արդարացիությունը և այն, թե արդյոք սահմանազանցող ժամանակահատվածն անցել էր նախքան վարույթի կարճման մասին որոշում կայացնելը... Այդ կապակցությամբ Դատարանը չի կարող ուշադրություն չդարձնել այն հանգամանքի վրա, որ Ռումինիայի դատախազները՝ գործելով որպես Գլխավոր դատախազի գրասենյակի անդամ, չեն բավարարել գործադիր իշխանությունից անկախ լինելու պահանջը... Ավելին, քրեական դատավարությունները պետք է վերաբացվեին այն հիմքով, որ առաջին նախնական քննությունները եղել են ոչ ամբողջական... Դիմողները պատասխանատու չէին իշխանությունների թերացումների համար և դրանց արդյունքում չպետք է հայտնվեին ստեղծված անհարմար իրավիճակում:

Ի վերջո, Կառավարությունը որևէ կերպ ցույց չի տվել, որ մեղադրանքի վերաառաջադրումը, որը հանվել էր դատախազի որոշմամբ, եղել է բացառիկ քայլ...

***Վայիցն ընդդեմ Թուրքիայի** (Vayíç v. Turkey), 18078/02, 20.06.2006թ.*

44. Ինչ վերաբերում է քննարկվող ժամանակահատվածին, Դատարանը գտնում է, որ 1996թ. սեպտեմբերի 9-ին՝ դիմողի ձերբակալման օրն սկսված վարույթները դեռևս ավարտված չեն: Հետևաբար, դրանք արդեն տևել են ավելի քան ինը տարի և ութ ամիս՝ անցնելով երեք ատյաններով: Ինչևէ, Դատարանը գտնում է, որ դիմողը չի կարող հիմնվել այն ժամանակահատվածի վրա, որի ընթացքում նա հետախուզման մեջ է գտնվել, երբ խուսափել է իր երկրի արդարադատության առջև կանգնելուց: Դատարանի կարծիքով, մեղադրվող անձի փախուստը ինքնին ունի որոշակի ազդեցություն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վարույթի տևողության հետ կապված երաշխիքների կիրառման վրա: Երբ մեղադրվող անձը փախուստի է դիմում մի պետությունից, որտեղ պահպանվել է օրենքի գերակայության սկզբունքը, ապա կարելի է եզրակացնել, որ նա իրավասու չէ վիճարկել այդ փախուստին հետևող վարույթի ոչ ողջամիտ լինելը, եթե չներկայացվեն այս ենթադրությունը հերքող բավարար պատճառներ... սույն գործով այդ ենթադրությունը որևէ կերպ չի հերքվել...

### 2. Խախտումների հայտնաբերման հետ կապված քննություն

***Յագսին և Սարգին ընդդեմ Թուրքիայի** (Yağci and Sargin v. Turkey), 16419/90 և 16426/90, 08.06.1995թ.*

59. Վարույթի տևողության ողջամտությունը պետք է գնահատվի գործի մասնավոր հանգամանքների լույսի ներքո և դիտվի որպես չափանիշ, որը դրված է Դատարանի նախադեպային իրավունքի հիմքում, ինչը վերաբերում է, մասնավորապես, գործի ամբողջականությանը, դիմողի վարքագծին և իրավասու պետական մարմիններին…

63. Դատարանը միայն նշում է, որ 1999թ. հունվարի 22-ից Ազգային անվտանգության դատարանում տեղի են ունեցել քսան լսումներ, որոնցից տասնվեցը գրեթե ամբողջությամբ վերաբերել են ապացույցների հավաքմանը: Այդ գործընթացը, անգամ նախատեսելով մեծ քանակությամբ փաստաթղթերի ուսումնասիրություն, չի կարող դիտվել որպես լիարժեք…

66. Դատարանը կրկնում է՝ 6-րդ հոդվածը… չի պահանջում, որ քրեական հանցագործության մեջ մեղադրվող անձն ակտիվորեն համագործակցի դատական իշխանության ներկայացուցիչների հետ… Այն նշում է, որ լսումների ժամանակ պրն Յագսիի և պրն Սարգիի և նրանց փաստաբանի համագործակցությունը որևէ խոչընդոտող հանգամանք չի հանդիսացել: Բոլոր դեպքերում, դիմողները չեն կարող մեղադրվել այն բանում, որ օգտվել են ներպետական իրավունքով իրենց պաշտպանության առումով սահմանված բոլոր միջոցներից: Եթե անգամ լսումներին ներկա գտնվեին շատ փաստաբաններ և անվտանգության միջոցների վերաբերյալ նրանց դիրքորոշումը որոշ չափով դանդաղեցներ վարույթը, դա, առանձին վերցրած, չէր կարող հանդիսանալ հանգամանքի այդ գործով ժամանակի տևողության արդարացում:

69. …1990թ. հունվարի 22-ից 1992թ. հուլիսի 9-ն ընկած ժամանակահատվածում… դատարանում սույն գործով սովորական ընդմիջումներով (երեսուն օրից պակաս) կատարվել են քսան լսումներ, որոնցից միայն մեկը տևել է ավելի, քան կես օր:

Ավելին, 1991թ. ապրիլի 12-ի Հակաահաբեկչական ակտի ընդունումից հետո, որով վերացվում էր Քրեական օրենսգրքի 141–43-րդ հոդվածները… Ազգային անվտանգության դատարանը… սպասել է մոտ վեց ամիս նախքան այդ դրույթների հիման վրա հիմնված մեղադրանքում դիմողներին արդարացնելը:

70. Դատարանը եզրակացնում է, որ քննարկվող քրեական դատավարության տևողությունը հակասում է 6-րդ հոդվածի 1-ին մասին…

***Գելին ընդդեմ Իտալիայի (Gelli v. Italy), 37752/97, 19.10.1999թ.***

43. Դատարանը գտնում է, որ ի սկզբանե… քննարկվող վարույթները եղել են շատ բարդ. թեև, իրոք, նախնական քննությունները հիմնականում չեն վերաբերել սուտ մատնության մեղադրանքին, այսինքն՝ նրան, ինչի հետ կապված դիմողը դիմում է բերել, Դատարանն ընդգծում է, որ այս մեղադրանքի հետ կապված վարույթը երբևէ չի

տարանջատվել մնացածից: Դատարանի իրավասությունը չէ ասելու, որ դրանք պետք է տարանջատվեին…

44. Դատարանը չի անհատականացրել վարույթում տեղ գտած որևէ հետաձգում՝ կապված դիմողի վարքագծի հետ, բացառությամբ չորս տարի և մեկ ամիս ժամանակահատվածի, որի ընթացքում անձը փախել է բանտից, և որը ոչ մի դեպքում չէր կարող ներառվել քննարկվող ժամանակահատվածի մեջ…

45. Ինչ վերաբերում է Պետության իշխանությունների վարքագծին, Դատարանը նշում է, որ տեղ է գտել 1985թ. մարտի 26-ի որոշման խիստ երկարատև ձգձգում, որով Հռոմի Շրջանային դատարանը ճանաչվել է գործը քննելու իրավասություն ունեցող, և նախնական քննության ավարտից հետո գործը դատական քննության նշանակելու վերաբերյալ 1991թ. նոյեմբերի 18-ի որոշման միջև: Կառավարությունը չի ներկայացրել որևէ բացատրություն ժամանակի այս ձգձգման վերաբերյալ:

46. Դատարանը գտնում է, որ այս ձգձգումը, որը տևել է քննարկվող ամբողջ ժամանակահատվածի ավելի քան կեսը, ինքնին բավարար է եզրահանգելու, որ գործը չի քննվել «ողջամիտ ժամկետում»:

***Վաչևն ընդդեմ Բուլղարիայի*** ***(Vachev v. Bulgaria), 42987/98, 08.07.2004թ.***

88. Դատարանը համաձայն է, որ դիմողի դեմ հարուցված քրեական դատավարությունները՝ իրենց ամբողջությամբ, կրել են փաստական և իրավական բնույթ: Դրանցում ներգրավված են եղելմի քանի անձ, որոնք մեղադրվել են տվյալ ժամանակահատվածում ֆինանսական բնույթի բազմաթիվ հանցագործությունների մեջ…

91. Դատարանը համոզված չէ, որ դիմողի՝ երկու փորձագետների որակազրկման պահանջի հետ կապված ենթադրյալ խախտումը հանդիսացել է որևէ հետաձգման հիմք: Իշխանությունների վրա դրված պարտականությունն էր ի սկզբանե գործել քրեական դատավարության և նշված փորձագետների, որոնց անկողմնակալությունը կասկած չի հարուցում, մատնանշած կանոններով: Ավելին, երբ դիմողը խնդրել է որակազրկել փորձագետներին, նրա խնդրանքը երկու անգամ մերժվել է նախաքննության մարմինների կողմից… Փորձագետները փոխարինվել են այն ժամանակ, երբ նա այդ հարցը բարձրացրել է Տետևենի Շրջանային դատախազությունում…

92. Ինչ վերաբերում է դիմողի փաստաբանին փոխարինելուն, ապա դա չի կարող դիտվել հիմնական պատճառ, թե ինչու է Տետևենի Շրջանային Դատախազությունը 1998թ. հուլիսին որոշել գործը վերադարձնել նախնական քննության փուլ: Սա անհրաժեշտ է եղել, որովհետև կոնկրետ փաստերն ամբողջությամբ բացահայտված չեն եղել, նախնական քննության մարմինը դիմողին մեղսագրվող արարքի իրավական որակման սխալ էր թույլ տվել և անհրաժեշտություն էր

առաջացել փոխարինել ֆինանսական փորձագիտական եզրակացությունը կայացրած փորձագետներից մեկին…

93. Վերջապես, ինչ վերաբերում է դիմողի հետ կապված այլ ձգձգումներին, որոնք տևել են մոտավորապես երկու շաբաթ…, Դատարանը գտնում է, որ դրանք էական ազդեցություն չեն ունեցել ամբողջ վարույթի ընթացքի վրա…

96. Դատարանը նշում է, որ քննարկվող ամբողջ ժամանակահատվածում՝ ավելի քան հինգ տարի և ինն ամիս, գործը եղել է նախնական քննության փուլում: Նաև հաշվի առնելով այն փաստը, որ գործը եղել է իրավաբանորեն և փաստացի ամբողջական, նման ժամանակահատվածը չափազանց երկարատև է: Դատարանը նաև նշում է, որ եղել է երկարատև ժամանակահատված, որի ընթացքում որևէ գործողություն չի կատարվել: Նման բացթողումները տևել են 1998թ. նոյեմբերի 4-ից մինչև 1999թ. հունիսի 1-ը…, 1999թ. հունիսի 13-ից 2000թ. հունվարի 7-ը…, 2000թ. փետրվարի 14-ից 2000թ. մայիսի 12-ը և 2000թ. օգոստոսի 4-ից 2001թ. հունիսի 8-ը…:

Վերջապես, Դատարանը նշում է, որ, անշուշտ թույլ է եղել համագործակցությունը վարույթին ներգրավված տարբեր մարմինների միջև, ինչն ապացուցվում է դիմողի դեմ ներկայացված մեղադրանքի բազմաթիվ վերաձևակերպումներով… Սա է գործին առնչվող բազմաթիվ ցուցումների հետ մեկտեղ, որոնք դատախազը տվել է նախաքննության մարմիններին լրացուցիչ քննություն կատարելու կամ դատավարական թերությունները շտկելու համար…, հանդիսացել դատավարության ձգձգումը պայմանավորող հիմնական պատճառը…

97. Ելնելով դատավարության ողջամիտ ժամկետի գնահատման վերաբերյալ նախադեպային իրավունքով սահմանված չափանիշից՝ Դատարանը գտնում է, որ դիմողի դեմ հարուցված քրեական վարույթի տևողությունը չի բավարարում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ողջամիտ ժամկետի պահանջը:

***Դե Կլերկն ընդդեմ Բելգիայի (De Clerck v. Belgium), 34316/02, 25.09.2007թ.***

50. Դատարանը գտնում է, որ 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործի քննության «ողջամիտ ժամկետի» պահանջների պահպանման հաշվարկն սկսվել է 1990թ. նոյեմբերի 30-ին՝ խմբավորման կենտրոնացման վայրերում խուզարկություններ կատարելու օրը: Հաշվածայն դիմողի փաստաբանի տեղեկությունների, որը չի հերքվում Կառավարության կողմից, 2007թ. հունիսի 7-ի դրությամբ գործը դեռևս գտնվում էր նախապատրաստման փուլում և, համաձայն Քրեական հետապնդման մասին օրենսգրքի 127-րդ հոդվածով սահմանված դրույթների՝ որոշակի քննչական գործողություններ կատարելու նպատակով դրա քննությունը հետձգվել էր անորոշ ժամկետով: Ըստ այս տվյալների՝ սույն գործով դատավճռի կայացման պահին դատաքննությունն արդեն մոտ 6 տարի և 10 ամիս շարունակվում էր:

56. Տվյալ դեպքում, Դատարանը չի կարող հաստատված չհամարել գործի բարդությունը: Դատարանը համամիտ է Կառավարության հետ, որ 427/90 գործով քննիչ Բ.-ի աշխատանքը բարդ է եղել: Տվյալ գործով նախաքննությունն սկսվել էր 1990թ. նոյեմբերի 8-ին և ավարտվել 2001թ. մայիսի 18-ին՝ առաջին դիմողի մասով գործը դատախազին ուղարկելու մասին երկրորդ որոշման կայացմամբ: Կառավարության ներկայացրած փաստերից հետևում է, որ քննչական գործողությունները շատ են եղել՝ մեղադրական եզրակացության 26 լրացում, 23 փորձագիտական եզրակացություն, 10 տարբեր երկրներում 49 դատական հանձնարարություններ, 250.409 էջ գործի նյութեր, 5950 արձանագրություն, 647 հարցաքննություն, 143 խուզարկություն և 611 դատական արգելանք (սեկվեստր): Դրան գումարվել են հավելյալ գործերի շրջանակներում կատարված քննչական գործողությունները, ինչպես նաև տարբեր քննիչների կողմից քննված 7 այլ գործերն այս երեք գործերին միացնելու մասին գլխավոր դատախազի 2005թ. ապրիլի 14-ի որոշումը:

57. Այնուամենայնիվ, Դատարանը գտնում է, որ գործի բարդությունն ինքնին չէր կարող արդարացնել քննության երկար ընթացքը:

63. Դատարանը նշում է, որ 2000թ. մարտի 8-ին քննիչ Բ.-ն Քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի հիման վրա 427/90 գործն ուղարկել է դատախազություն: Արդյունքում, նա պետք է տվյալ գործով իր աշխատանքներն ավարտված համարեր: Այնուամենայնիվ, տվյալ գործը նրան վերադարձվել է նախաքննության անվտանգության և գաղտնիության պահպանման նպատակներով, իսկ 2001թ. մայիսի 18-ին գործը կրկին ուղարկվել է դատախազություն: Թագավորական դատախազը վերջնական պահանջները կազմել է 2005թ. ապրիլի 24-ին: Հիմք ընդունելով վերոհիշյալ ամսաթվերից թե՛ առաջինը, թե՛ երկրորդը, պարզվում է, որ առաջին դեպքում անցել է 5 տարի և մեկ ամիս, իսկ երկրորդ դեպքում՝ 3 տարի և 11 ամիս ժամանակահատված, և այս չափազանց սահմանափակ ժամանակահատվածում կատարվել են նշված գործողությունները…

Փաստորեն, ինչպես նշել է Կառավարությունը, տվյալ գործով վերջին գործողությունը կատարվել է 2001թ. մայիսի 18-ին՝ առաջին դիմողի մասով գործը դատախազին հանձնելու մասին որոշման ընդունման օրը:

67. Բացի դրանից, Դատարանը նշում է, որ համաձայն Կառավարության ներկայացրած տվյալների՝ հայցվորների վերաբերյալ քննիչ Բ.-ին հանձնարարված գործի նյութերը կազմել են գրեթե 360.012 էջ:

68. Վերջապես, Դատարանը միայն կարող է հիշեցնել, թե ինչ է նշել գործը դատաքննության համար նախապատրաստող Պալատն իր 2005թ. դեկտեմբերի 6-ի որոշման մեջ այն է՝ գործի նյութերին ծանոթանալու ժամկետը մինչև 2005թ. ապրիլի 14-ը երկարացնելով առաջանում է վտանգ, որ կլրանան քրեական հետապնդման վաղեմության ժամկետները:

70. Դատարանը գտնում է, որ գործը քննող իշխանության ներկայացուցիչները պարտավոր էին առանձնահատուկ ջանք գործադրել՝ հաշվի առնելով հայցվորների համար գործի հիմնարար ֆինանսական նշանակությունը և այն փաստը, թե այն ինչ նշանակություն կարող էր ունենալ իրենց մասնագիտական գործունեության և իրենց ղեկավարած ընկերությունների համար:

71. Դատարանն ընդգծում է, որ գործի քննության ողջ ընթացքում հայցվորների գործը գտնվել և դեռևս գտնվում է նախաքննության փուլում: 2007թ. հունիսի 7-ին հայցվորների խորհուրդը տեղեկացրել է Դատարանին, որ գործն առայժմ հետաձգված է՝ պաշտպաններից մեկի միջնորդությամբ քննչական գործողություններ կատարելու համար:

72. Հաշվի առնելով գործի բոլոր հանգամանքները՝ Դատարանը տվյալ գործով անցած ժամանակահատվածը «ողջամիտ» չի համարում:

### 3. Արդյունավետ ընթացակարգի ապահովում

***Կուդլան ընդդեմ Լեհաստանի (Kudla v. Poland), [GC] 30210/96, 26.10.2000թ.***

156. ...13-րդ հոդվածի ճիշտ մեկնաբանությունն այն է, որ այն սահմանում է ազգային պետական մարմնի առաջ արդյունավետ դատական քննության երաշխիք՝ կապված 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված ողջամիտ ժամկետում գործի դատաքննության պահանջի խախտման վերաբերյալ հայտարարության հետ…

159. Դատարանը նշում է, որ ի սկզբանե Կառավարությունը չի վիճարկել այն, որ եղել է այլ առանձնահատուկ իրավական միջոց, որով դիմողը կարող էր վիճարկել դատավարության տևողությունը, սակայն հայտարարել է, որ մի քանի ընթացակարգերի համակցությունը բավարարում է 13-րդ հոդվածի պահանջները: Այն, հավանաբար, ուշադրություն չի դարձրել այն հանգամանքին, թե արդյոք կամ եթե դիմողը կարող էր ձեռք բերել դատական պաշտպանության միջոց՝ կամ կանխարգելիչ, կամ փոխհատուցող, այս ընթացակարգերին դիմելու միջոցով… Չի նշվել, որ վկայակոչված ընթացակարգերից որևէ մեկը կամ իրենց համակցությամբ կարող էին արագացնել դիմողին առաջադրված մեղադրանքների քննությունը կամ ապահովել նրա՝ արդեն եղած ձգձգումների համար համապատասխան փոխհատուցում ստանալը: Կառավորությունը չի ներկայացրել որևէ օրինակ ներպետական պրակտիկայից՝ ցույց տալու համար, որ քննարկվող միջոցների կիրառմամբ դիմողի համար հնարավոր կլիներ դատական պաշտպանության նման միջոց ձեռք բերել:

Այն ինքնին ցույց կտար, որ այն միջոցները, որոնք վկայակոչվել են, չեն պարունակում 13-րդ հոդվածով նախատեսված «արդյունավետության» պահանջը, քանի որ, ինչպես Դատարանն արդեն նշել է…,

պահանջվող ընթացակարգը պետք է լինի արդյունավետ ինչպես իրավական, այնպես էլ գործնական տեսակետից:

***Կալդաս Ռամիրես դե Առելանո ընդդեմ Իսպանիայի (Caldas Ramirez de Arrellano v. Spain (dec.)), 68874/01, 28.01.2003թ.***

2. …Ինչ վերաբերում է Սահմանադրական դատարանի՝ որպես ներպետական դատավարության իրավազորության վերջնական մակարդակի, հատուկ բնույթին, որն ուղղված է Սահմանադրությունում ամրագրված հիմնարար իրավունքների հնարավոր խախտումներից պաշտպանությանը, ապա այս պարագայում միակ հնարավոր ընթացակարգը այն է, որ ներկայացվի դիմում՝ արդեն թույլ տրված ձգձգումների համար համապատասխան փոխհատուցում պահանջելու վերաբերյալ… Կառավարության պնդմամբ՝ այդ ընթացակարգը սահմանված է Դատարանակազմության մասին ակտի 292-րդ բաժնում:

... դիմողը կարող է, եթե նրա դիմումը դատարանի կողմից ճանաչվել է անթույլատրելի, հաջողության հասնելու ցանկացած հեռանկարի դեպքում դիմել Արդարադատության նախարարություն Դատարանակազմության մասին ակտի 292-րդ բաժնի համաձայն հատուցում ստանալու համար …

Այս հանգամանքներում, Դատարանը գտնում է, որ դիմումի այս մասը պետք է մերժվի ներպետական ընթացակարգերն սպառված չլինելու պատճառով…

***Օհլենն ընդդեմ Դանիայի (Ohlen v. Denmark), 63214/00, 24.02.2005թ.***

29. Իր՝ 22.05.2003թ. դատավճռում Բարձրագույն դատարանը նշել է, որ վարույթի տևողության ամբողջական, սկսած մեղադրանք առաջադրելուց մինչև Բարձրագույն դատարանի դատավճռի կայացումը, գնահատումից պարզ է դառնում, որ ողջամիտ ժամկետում գործի դատաքննության՝ դիմողի իրավունքը, որը համապատասխանում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածին, խախտվել է: Ի լրումն դրա, հաշվի առնելով այն, որ Քաղաքային դատարանը դիմողին լիովին ազատել է ծախսերի հատուցումից, Բարձրագույն դատարանը գտել է, որ 40000 դանիական կրոնը (DKK)՝ տուգանքի պակասեցման ձևով, համարժեք հատուցում է դատավարության տևողության համար, որն այդ ժամանակ կազմել է մոտ յոթ տարի և ինն ամիս…

30. Թեև Բարձրագույն դատարանն ընդունել է ողջամիտ ժամկետի պահպանման պահանջի խախտման առկայությունը, դիմողի՝ որպես տուժողի կարգավիճակը, կախված է եղել նրանից, թե արդյոք ներպետական մակարդակում Կոնվենցիայի 41-րդ հոդվածով նախատեսված բավարարում ստանալու համար համարժեք և բավարար հատուցում կտրամադրվի…

31. Համեմատելով նմանատիպ ձգձգումների կապակցությամբ սույն գործով ոչ նյութական վնասի համար սահմանված հատուցման արժեքը Դատարանի նախադեպային իրավունքով սահմանված հատուցումների արժեքների հետ՝ Դատարանը գտնում է, որ դիմողին տրված գումարը չի կարող դիտվել որպես անհամաչափ…

33. Այս հանգամանքներում… Դատարանը գտնում է, որ գործը քննվել է 37-րդ հոդվածի 1-ին մասի (բ) կետի պահանջների պահպանմամբ…

# Զ. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ԵՎ ՕԶԽՍԵՐ

## Ի. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

### 1. Չերբակալում և կալանք

*ա) ՄԻԵԴ-ի պահանջների խախտում*

***Ն. Ս.-ն ընդդեմ Իտալիայի (N. C. v. Italy) 24952/94, 18.12.2002թ.***

49. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետը կիրառվում է այն դեպքերում, երբ հնարավոր է դիմել փոխհատուցման համար՝ կապված 1-ին, 2-րդ, 3-րդ կամ 4-րդ կետերին հակառակ պայմաններում իրականացված ազատությունից զրկելու հետ:…

61. Փոխհատուցման իրավունքը 5-րդ կետում չորրորդն է, այդ իսկ պատճառով ենթադրում է, որ մյուս կետերից որևէ մեկի խախտումը նույնպես սահմանված է ներպետական իշխանությունների կամ Կոնվենցիայի մարմինների կողմից:

*բ) Դրույթների բացակայություն*

***Սակիկը և այլոք ընդդեմ Թուրքիայի (Sakik and Others v. Turkey) 23878/94-23883/94, 26.11.1997թ.***

60. … Դատարանը նշում է, որ գործի նյութերում առկա չէ որևէ օրինակ, որով որևէ կողմ ստացել է 5-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված փոխհատուցումը՝ հիմնվելով Կառավարության մատնանշած դրույթներից որևէ մեկի վրա:

Թիվ 466 օրենքի 1-ին բաժնի մասնակի մեջբերմամբ՝ Դատարանը նշում է, որ բացառիկ դեպքերում (որը չի վերաբերում տվյալ գործին), երբ փոխհատուցում չի կիրառվում, և անձը դատարան չի ներկայացվել կամ դատավարության արդյունքում արդարացվել կամ ազատ է արձակվել (6-րդ ենթաբաժին), բոլոր այն գործերով, որոնցով փոխհատուցումը ենթակա է վճարման համապատասխան դրույթով, պահանջվում է, որ ազատությունից զրկելը լինի ապօրինի: Սակայն տվյալ գործով, ինչպես նշել էր Կառավարությունը, կալանավորումն իրականացվել է թուրքական օրենսդրությանը համապատասխան:

Ամփոփելով՝ նշենք, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետով երաշխավորված իրավունքի արդյունավետ իրականացումն արժանահավատության բավարար աստիճանի չէ...

61. Հետևաբար, Դատարանը չի ընդունում Կառավարության նախնական առարկությունների երկրորդ մասը և եզրակացնում է, որ տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում:

***Կաբալերոն ընդդեմ Միացյալ Թագավորության (Caballero v. United Kingdom) 32819/96, 08.02.2000թ.***

18. Դիմողը … բողոքել է, որ այս իմաստով ինքը չի ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի իմաստով փոխհատուցման իրականանալի իրավունք…

21. Դատարանն ընդունում է Կառավարության դիրքորոշումն առ այն, որ տվյալ գործով տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ կետերի խախտում՝ այն պատճառով, որ այն իրավասու է դիմողին տրամադրել արդարացի փոխհատուցում 41-րդ հոդվածի ներքո:

***Չիտաևը և Չիտաևն ընդդեմ Ռուսաստանի (Citayev and Chitayev v. Russia) 59334/00, 18.01.2007թ.***

192. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետը երաշխավորում է այն անձանց փոխհատուցման իրավունքը, որոնց կալանքը կամ ներպետական իշխանությունների, կամ կոնվենցիոն մարմինների կողմից ճանաչվել է որպես Կոնվենցիայի 5-րդ հոդվածի կետերից որևէ մեկին հակասող… և այս իրավունքը, ըստ էության, իրականացված է, երբ հնարավոր է դիմել նման փոխհատուցման համար…

193. Սույն գործում, Դատարանն առաջին հերթին վկայակոչում է իր վերոհիշյալ եզրահանգումները 5-րդ հոդվածի 1(c) կետի, 3-րդ և 4-րդ կետերի խախտումների վերաբերյալ և նկատում, որ, հետևաբար, 5-րդ հոդվածի 5-րդ կետը կիրառելի է:

194. Այնուհետև Դատարանը նկատում է, որ ներպետական իրավունքի համաձայն՝ կալանավորված անձը կարող է փոխհատուցում հայցել տվյալ հանցագործությանն անձի մասնակցությունը հաստատող ապացույցների անբավարարության հիմքով քրեական գործի կարճումից հետո… Դիմողների պարագայում քրեական գործը կարճվել և նորոգվել է երկու անգամ, այն է՝ համապատասխանաբար 2000թ. հոկտեմբերի 9-ին և նոյեմբերի 23-ին, 2001թ. հունվարի 20-ին և 2003թ. հոկտեմբերի 29-ին: Ավելին, վերջին անգամ նորոգվելուց հետո վարույթը դեռևս շարունակվում է:

195. Դատարանն այս կապակցությամբ գտնում է, որ մինչև 2000թ. նոյեմբերի վերջը Չեչնիայում դատական համակարգի չգործելու փաստը, ինչպես դա ընդունել է Կառավարությունը, և այն փաստը, որ ամեն դեպքում քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումներից ոչ մեկը վերջնական չէ, ինչպես նաև այն փաստը, որ քրեական գործի վարույթը դեռևս շարունակվում է, տվյալ գործի հանգամանքներում դիմողներին էապես խոչընդոտել են հայցելու փոխհատուցում կալանքի դիմաց:

196. Ուստի Դատարանը մերժում է Կառավարության նախնական առարկությունն այս հատվածի կապակցությամբ և գտնում է, որ տեղի

է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում՝ կապված դիմողների կալանքի ժամկետի հետ:

*գ) Կասկածի վրա հիմնված մերժում*

***Սեկանինան ընդդեմ Ավստրիայի (Sekanina v. Austria) 13126/87, 25.08.1993թ.***

28. Ասսիզների դատարանը, որի նիստը կայացել էր Լինսի Տարածքային դատարանում 1986 թվականի հուլիսի 30-ին, պրն Սեկանինային ազատ արձակելու վերջնական վճիռ էր կայացրել …

29. Չնայած այս որոշմանը, 1986 թվականի դեկտեմբերի 10-ին Լինսի Տարածքային դատարանը մերժել էր դիմողի փոխհատուցման վերաբերյալ բողոքը՝ համաձայն 1969 թվականի Օրենքի 2-րդ (1) (բ) բաժնի… Այս տեսակետից առկա էին բավականին լուրջ ցուցմունքներ, որոնք կարող էին ամրապնդել պրն Սեկանինայի մեղավորության վերաբերյալ կասկածները. դրանք գրանցվել էին Ասսիզների դատարանի նյութերի ցուցակներում: Նման ցուցմունքները՝ որպես այդպիսիք, կարող էին հաստատել դիմողի մեղավորության փաստը: Դատարանը երդվյալ ատենակալների քննարկումների ձայնագրությունից եզրակացրեց, որ դիմողին ազատ արձակելով՝ նրանք առավելապես մեծացրել էին կասկածը…

Լինսի Վերաքննիչ դատարանն ավելի մանրամասն էր ուսումնասիրել դիտարկեց 1987 թվականի փետրվարի 25-ի վճռի հիմքերը: Այն եզրակացրել էր, որ 1969 թվականի Օրենքի 2-րդ (1) (բ) բաժինը, համաձայն որի փոխհատուցում սահմանվում է այն անձանց նկատմամբ, որոնք ոչ միայն ազատ են արձակվել, այլ նաև ազատվել են բոլոր կասկածներից, համապատասխանել է Ավստրիայի Սահմանադրությանը և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասին :…Այս առումով այն չի կաշկանդվել Ասսիզների դատարանի արդարացմամբ: Մյուս կողմից, այն հղում է կատարել 1986 թվականի ապրիլի 30-ի իր որոշմանը, որով սահմանել է կալանք՝ մեկ տարի ժամկետով : … դա դիտարկվել է որպես դիմողի վերաբերյալ կասկածների լրջության հաստատում: Պրն Սեկանինայի դեմ առկա՝ իր կարծիքով դատարանում չժխտված կասկածների բոլոր կետերի լիարժեք ցուցակ կազմելուց և տարբեր վկաների ցուցմունքներն ուսումնասիրելուց հետո այն եզրակացրել է. «Երդվյալ ատենակալների համար պարզ էր, որ կասկածը բավարար չի եղել մեղադրական դատավճիռ կայացնելու համար, այնուամենայնիվ, կասկածից վեր է եղել այն, որ կասկածը վերացել է»…

30. Նման պնդումները, որոնք չեն հիմնավորվել դիմողին արդարացնող դատավճռով կամ երդվյալ ատենակալների քննարկումների ձայնագրությամբ, ոչ փարատված են թողել ինչպես դիմողի անմեղության, այնպես էլ Ասսիզների դատարանի վճռի հավաստիության վերաբերյալ առկա կասկածը: Չնայած այն փաստին, որ առկա էր վերջնական որոշում պրն Սեկանինային արդարացնելու վերաբերյալ,

դատարանները, որոնք պետք է որոշում կայացնեին փոխհատուցման պահանջի առնչությամբ, հաշվի են առել դիմողի մեղավորության գնահատումը՝ հիմք ընդունելով Ասսիզների դատարանի նյութերի բովանդակությունը: Կասկածյալն անմեղ է համարվում այնքան ժամանակ, քանի դեռ նրա նկատմամբ չի կայացվել մեղադրական դատավճիռ: Այնուամենայնիվ, այլևս թույլատրելի չէ ապավինել նման կասկածներին այն դեպքում, երբ արդարացման դատավճիռը դարձել է վերջնական: Հետևաբար, Լինսի Տարածքային դատարանի և Լինսի Վերաքննիչ դատարանի կողմից բերված փաստարկներն անհամատեղելի են անմեղության կանխավարկածի հետ:

31. Ուստի տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում:

***Հիբերտն ընդդեմ Նիդեռլանդների (Hibbert v. Netherlands) 26.01.1999թ.***

Հաշվի առնելով Վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված փաստարկները քրեական դատավարության օրենսգրքի 89-րդ հոդվածի ներքո դիմողի պահանջը մերժելու վերաբերյալ՝ Դատարանը նշում է, որ Վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ հաշվի առնելով դիմողի՝ օրինազանց գործողություններում ներգրավվածության փաստի վերաբերյալ վկաների մեղադրական հայտարարությունները, վերջինիս նկատմամբ կիրառված մինչդատական կալանքն լիովին արդարացված է:

Դատարանը կարծում է, որ Վերաքննիչ դատարանի ձևակերպումը կարող է մեկնաբանվել որպես մատնանշում, քանի որ այն պետք է դիմողի պահանջով քննարկվեր քրեական դատավարության օրենսգրքի 89-րդ հոդվածով սահմանված կարգով մինչդատական վարույթում կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածի դիմաց փոխհատուցման հարցի շրջանակներում, այն է՝ եղե՞լ են, արդյոք, դիմողի վերաբերյալ հիմնավոր կասկածներ: Եթե անգամ դիմողի նկատմամբ քրեական վարույթի ընթացքում Վերաքննիչ դատարանի եզրակացություններին հղում կատարելը կարող է վերջինիս կողմից դիտվել որպես երկիմաստ կամ ոչ բավարար, Դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, ըստ էության, սահմանափակվել է՝ նշելով, որ առկա է եղել «ողջամիտ կասկած» առ այն, որ դիմողը «հանցանք է կատարել» (Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին (c) կետ):

Այդ իսկ պատճառով Դատարանը չի կարող գտնել, որ քրեական դատավարության օրենսգրքի 89-րդ և 591(a) հոդվածների ներքո դիմողի պահանջի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի ընդունած որոշումը համապատասխանաբար խախտում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետով երաշխավորված դիմողի անմեղության կանխավարկածը:

***Կապոն ընդդեմ Բելգիայի (Capeau v. Belgium) 42914/98, 13.01.2005թ.***

25. Դատարանը նշում է, որ Վերաքննիչ հանձնաժողովի մերժումը հիմնվել է բացառապես այն փաստի վրա, որ դիմողը փոխհատուցման իր պահանջը չի ներկայացրել իր անմեղությունն ապացուցող փաստերի հետ մեկտեղ: Չնայած այն հիմնված է եղել 1973 թվականի մարտի 13-ի օրենքի 28-րդ (1)(b) բաժնի վրա, որը հստակորեն սահմանում է, որ անձը, որի նկատմամբ քրեական գործի վարույթը կարճվել է, պետք է ապացուցի իր անմեղությունը՝ դրա առնչությամբ փաստացի ապացույցներ կամ օրինական փաստարկներ ներկայացնելով, նման պահանջը, առանց սահմանափակման կամ վերապահման, կասկածի տակ է դնում դիմողի անմեղության հարցը: Այն նաև խուսափում է ընդունել գործը քննող դատարանների որոշումների հավաստիությունը՝ չնայած Վերաքննիչ ատյանի որոշման դիտարկումներին առ այն, որ դիմողին մերկացնող ապացույցներն այդ դատարաններում գործի քննության ժամանակ բավարար չեն համարվել նրա գործը դատարանում քննելու համար: Ճշմարտությունն այն է, որ մեղադրյալի անմեղության վերաբերյալ կասկած հայտնելը հնարավոր է այնքան ժամանակ, քանի դեռ քրեական գործի վարույթների եզրակացությամբ մեղադրանք չի առաջադրվել… և, ըստ բելգիական օրենսդրության, կարճման մասին որոշումը չի արգելում քրեական գործի վարույթի նորոգումը նոր ապացույցների կամ երևան եկած հանգամանքների առկայության դեպքում: Այնուամենայնիվ, ապացուցման պարտականությունը չի կարող պարզապես վերանալ փոխհատուցման վերաբերյալ վարույթներում վարույթը կարճելու կապակցությամբ վերջնական որոշում կայացնելուց հետո: Անձին ներկայացվող՝ իր անմեղությունն ապացուցելու պահանջը, որը ենթադրում է, որ դատարանն այդ անձին մեղավոր է համարում, անհիմն է և հանգեցնում է անմեղության կանխավարկածի խախտմանը:

*դ. Առանց լսումների և պատճառների մերժումը*

***Գյոքն ընդդեմ Թուրքիայի (Göç v. Turkey) 36590/97, 11.07.2002թ.***

50. Այն նշում է, որ Կարսիյակայի Ասսիզների դատարանն զգուշություն է ցուցաբերել դիմողին տրվող փոխհատուցման չափի առնչությամբ, քանի որ սահմանվել է, որ նրա գործը համապատասխանել է Թիվ 466 օրենքի 1-ին բաժնի հիմքերից մեկին… Կարսիյակայի Ասսիզների դատարանը հաշվի է առել դիմողի փաստաբանի ներկայացրած միջնորդության մեջ տեղ գտած բոլոր գանգատները և ուշադրություն է դարձրել մի շարք անձնական գործոնների վրա, այն է՝ դիմողի ֆինանսական և սոցիալական դրության, հատկապես հաշվի է առնվել հոգեկան տառապանքների տևողությունը, որոնք նա կրել է իր կալանքի ընթացքում…

51. Չնայած ճիշտ է, որ դիմողի կալանքը, դրա տևողությունը, ինչպես նաև նրա ֆինանսական և սոցիալական դրությունը կարող

էին որոշվել զեկուցող դատավորի կողմից կազմված զեկույցով և առանց դիմողին լսելու անհրաժեշտության …, տարբեր դիրքորոշումներ պետք է կիրառվեն, երբ գնահատվում են դիմողի կողմից վկայակոչված հոգեկան տառապանքները: Դատարանի կարծիքով, դիմողը պետք է հնարավորություն ունենար Կարսիյակայի Ասիզների դատարանին բանավոր բացատրություն ներկայացնելու բարոյական վնասի առնչությամբ, որն իրեն պատճառվել է կալանքի արդյունքում հոգեկան տառապանքների և վախի պայմաններում: Դիմողի դեպքի բուն անձնական բնույթը և փոխհատուցման պատշաճ չափի որոշումը պահանջում էին, որպեսզի նրան լսեին: Չի կարելի ասել, որ այս պատճառները տեխնիկական բնույթի են և կարող են հաշվի առնվել սոսկ գործի նյութերի հիման վրա: Ընդհակառակն, Դատարանը կարծում է, որ արդարադատության իրականացումը և պետության պատասխանատվությունն առավել արդյունավետ կիրականացվեին դիմողի գործով, եթե նրան իրավունք տրվեր բացատրելու իր անձնական դրությունը ներպետական դատարանում ընթացող դատաքննության ժամանակ՝ թողնելով այն հանրության դատին: Այս տեսակետից, տվյալ գործոնը գերակշռում է արագության և արդյունավետության վերաբերյալ եզրակացությանը, որի վրա, ըստ Կառավարության, հիմնված է Թիվ 466 օրենքը:

52. Վերը նշված պատճառներով Դատարանը գտնում է, որ որևէ բացառիկ հանգամանք առկա չէ, որը կարդարացներ բանավոր լսումները, և, համապատասխանաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

***Ֆեդոտովն ընդդեմ Ռուսաստանի (Fedotov v. Russia) 5140/02, 25.10.2005թ.***

86. Ինչպես սահմանել էր Դատարանը դիմումի ընդունելիության վերաբերյալ իր 2004 թվականի նոյեմբերի 23-ի որոշմամբ, դիմողն ընդունելի եղանակով էր ներկայացրել իր բողոքն անօրինական կալանքի հետևանքով առաջացած վնասների վերաբերյալ: Այնուամենայնիվ, ներպետական դատարաններն անտեսել էին այն,չնայած դիմողի և նրա փաստաբնի բանավոր և գրավոր հայտարարություններին: Ավելին, Բասմանիյի շրջանային դատարանը կամայականորեն է վեր հանել փաստերը՝ իր դատավճռում նշելով, որ դիմողը «իրականում չէր կալանավորվել», չնայած դրան հակասող բազմաթիվ ապացույցներին:

87. Այս հանգամանքներում Դատարանը գտնում է, որ դիմողը զուրկ է եղել ապօրինի ձերբակալման համար փոխհատուցման իրական իրավունքից, ուստի տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում:

*ե. Գնահատում*

***Էնգելը և այլոք ընդդեմ Նիդեռլանդների (Engel and others v. Netherlands) 5100/71, 5101/71, 5102/71, 5354/72 և 5370/72, 23.11.1976թ.***

10. Պրն Էնգելը զրկվել էր ազատությունից Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետից տարբերվող պայմաններում … , ինչպես նաև 22-30 ժամվա միջև ընկած ժամանակահատվածով՝ ի հակասումն վերը նշված 1903թ. ապրիլի 27-ի ակտի 45-րդ հոդվածի: Այս ընթացքում նա կրել է կալանքի խիստ ռեժիմից բխող տհաճ հետևանքները: Այսպիսով, նա կրել է բարոյական վնաս:

Վնասը գնահատելիս Դատարանը չի կարող հաշվի չառնել պրն Էնգելի կալանքի կարճատևությունը: Ավելին, նրան տրամադրվել էր մեծ չափով փոխհատուցում կրած վնասի համար: Փաստորեն, կարգապահական զանցանք կատարելու մեջ մեղավոր ճանաչվելուց հետո, ինչը հանգեցրել էր 1971 թվականի մարտի 20-ի նրա ձերբակալմանը, նա չպետք է երկու օր անցկացներ խիստ կալանքի տակ, ինչը տեղի է ունեցել այդ զանցանքից անմիջապես հետո: … 1971 թվականի ապրիլի 5-ին նրա նախնական կալանքը փոխարինվել է տուգանքով՝ բողոքները քննարկող պաշտոնյայի որոշմամբ, որը 1971 թվականի հունիսի 23-ին հաստատվել է Գերագույն զինվորական դատարանի կողմից … Չնայած դա չի առաջացնում restitutio in integrum, այն, այնուամենայնիվ, համապատասխանում է 50-րդ հոդվածի ենթատեքստին … Հաշվի առնելով այս տարբեր գործոնները՝ Դատարանը գտնում է, որ պրն Էնգելին պետք է տրամադրվի խորհրդանշական փոխհատուցում՝ հարյուր հոլանդական գիլդերի չափով (Hlf. 100)՝ 1976 թվականի հունիսի 8-ի վճռի էական դրույթների 4-րդ և 5-րդ կետերից բխող բավարարման հետ մեկտեղ:

***2. Արդարացում/կարճում***

*ա. Մեղքի ընդունման վրա հիմնված մերժում*

***Անեմերսբիդրիֆ Գեբրոեդերս վան Լիուվին Բ. Վ.-ն ընդդեմ Նիդեռլանդների (Aanemersbedrijf Gebroeders van Leeuwen B. V. v. Netherlands) 32602/96, 25.01.2000թ.***

… Սկզբում Դատարանը նշում է, որ պետական պաշտոնյայի կողմից պատճառված վնասի փոխհատուցումը մերժելը քրեական վարույթների ընթացքում, որոնք հետագայում կարճվել են, ինքնին չի հանգեցնում տուգանքի կամ որևէ միջոցի, որը կարող է հավասարեցվել տուգանքին… Ավելին, ո՛չ 6-րդ հոդվածի 2-րդ կետը, ո՛չ էլ Կոնվենցիայի և դրա Արձանագրությունների որևէ այլ դրույթ չեն պարտավորեցնում Պայմանավորվող պետություններին տրամադրել փոխհատուցում «քրեական հանցագործության մեջ մեղադրվող» անձին ցան-

կացած տառապանքի համար, որ վերջինս կարող է կրած լինել այն դեպքում, երբ քրեական հետապնդումը դադարեցվել է … :

… Դատարանը նշում է, որ դիմող ընկերությունը հայց է ներկայացրել ընդդեմ Նիդեռլանդների պետության՝ պահանջելով փոխհատուցում իր դեմ իրականացվող քրեական վարույթների ընթացքում պատճառված վնասի համար: Նման փոխհատուցում տրամադրելը մերժելիս Վերաքննիչ դատարանն ուշադրություն է դարձրել կեղծված հաշիվ-ապրանքագրերի օգտագործման ոչ երկիմաստ թույլտվությանը, որոնք դիմող ընկերության ղեկավարությունը պատրաստել է քրեական գործի քննության ընթացքում: Մեղքի նման հստակ ընդունումը ինքնին հերքել է անմեղության կանխավարկածը և բավարար չափով արդարացնում է Վերաքննիչ դատարանի կողմից մեղքի նման ընդունման վրա հիմնվելը: Այդ իսկ պատճառով, նման հանգամանքներում, Դատարանը գտնում է, որ տեղի չի ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում:

*բ. Կասկածի վրա հիմնված մերժում*

***O.-ն ընդդեմ Նորվեգիայի (O. v. Norway) 29327/95, 11.02.2003թ.***

39. … Դատարանը նկատում է, որ իր 1995 թվականի հունվարի 25-ի որոշման մեջ Գերագույն դատարանն ամփոփել է քրեական գործի քննության ժամանակ սեռական ոտնձգության համար դիմողին առաջադրված մեղադրանքները, ինչպես նաև կրկնել է երդվյալ ատենակալների վճիռը և դատավորների ընդունած՝ նրան արդարացնելու մասին որոշումը: Այնուհետև, այն քննել է, թե արդյոք, բավարարվել են 444-րդ հոդվածի ներքո իրականացվող փոխհատուցման տրամադրման պայմանները: Քրեական գործով ապացույցին հղում կատարելով՝ Գերագույն դատարանը հնարավոր է համարել այն, որ դիմողի դուստրը ենթարկվել է սեռական ոտնձգության և, «գործն ամբողջապես քննարկելով, … բոլոր հավանականությունները հաշվի առնելով, այն չի գտնում, որ նա չի ունեցել սեռական հարաբերություններ աղջկա հետ»…, Գերագույն դատարանի հիմնավորումները հանգեցրել են դիմողի դեմ կասկածանքի առաջացմանը՝ հաշվի առնելով դիմողի նկատմամբ սեռական ոտնձգությունների մեղադրանքները, որոնցից նա ազատվել է:

40. Դատարանն ուշադրություն է դարձնում այն փաստին, որ հաստատելով Գերագույն դատարանի որոշումը՝ Գերագույն դատարանի Բողոքարկման հանձնաժողովը հաշվի է առել և մեջբերել 1994 թվականի որոշման մեջ առկա՝ 444-րդ հոդվածի իր նախկին մեկնաբանությունը, որում մեջբերված է, որ փոխհատուցման վերաբերյալ բողոքի մերժումը չի թուլացնում կամ կասկածի տակ դնում սկզբնական արդարացումը: … Դատարանը գտնում է, որ դիտավորյալ փորձ է արվել կիրառված օրենսդրական դրույթը մեկնաբանելիս խուսափել 6-րդ հոդվածի 2-րդ կետին հակասելուց: Ինչևէ, Դատարանը համոզ-

ված չէ, որ անգամ նման նախազգուշական հայտարարության հետ մեկտեղ ներկայանալու դեպքում, վիճահարույց պնդումները չէին կարող կասկածի տակ դնել դիմողի արդարացման իրավացիությունը՝անմեղության կանխավարկածին անհամապատասխան եղանակով:

41. … Ուստի տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում:

***Պուիգ Պանյելան ընդդեմ Իսպանիայի (Puig Panella v. Spain) 1483/02, 25.04.2006թ.***

55. Դատարանը հաստատում է, որ Արդարադատության նախարարի մերժումը բացառապես հիմնված էր հայցվորին մեղսագրվող հանցանքը նրա կողմից չկատարելու մասին փաստերի բացակայության վրա: Արդարադատության նախարարի որոշման հիմնավորումից հետևում է, որ հայցվորի դիմումը մերժվել է նրա ենթադրվող մեղավորության «կամ նրա անմեղության մեջ համոզվածության բացակայության» պատճառով: Հայցվորը հիմնվում է Քրեական դատավարության օրենսգրքի 294-րդ հոդվածի վրա, ըստ որի՝ վնասի փոխհատուցման իրավունք ունեն միայն այն անձինք, ովքեր արդարացվել են, կամ որոնց նկատմամբ հաստատվել է հանցագործության սուբյեկտիվ և օբյեկտիվ կողմերը չկատարելու փաստը: Սակայն տվյալ գործի հանգամանքներում նման պահանջը կասկածի տակ է դնում հայցվորի անմեղության հարցը: Ճիշտ է, հայցվորը պարտավոր չէր ապացուցելու իր անմեղությունը թե Արդարադատության նախարարին իր դիմումի մեջ և թե դրանից առաջ վարչական դատավարության ընթացքում (տես Կապոն ընդդեմ, Բելգիայի), սակայն Արդարադատության նախարարի և Վարչական դատարանի դատավորի որոշումները հիմնված էին այն փաստի վրա, որ Սահմանադրական դատարանն իր արդարացման դատավճռով չեղյալ է հայտարարել հայցվորի դատապարտումը՝ անմեղության կանխավարկածի սկզբունքի չպահպանման համար, միևնույն ժամանակ չհաստատելով մեղսագրվող հանցագործությունը հայցվորի կողմից չկատարելու փաստը:

56. Դատարանը նշում է, որ հայցվորը նախարարին ուղղված իր պահանջում չէր մատնանշել վերոհիշյալ օրենքի ոչ մի կոնկրետ դրույթ՝ հաշվի առնելով, որ 294-րդ հոդվածն անհնարին էր կիրառել, քանզի նա բողոք էր ներկայացրել ոչ թե նախնական կալանքի, այլ ազատազրկման վայրում նրա կրած պատժի վերաբերյալ: Դատարանը նաև գտնում է, որ Սահմանադրական դատարանը սխալ է թույլ տվել հասատատելով՝ որ հայցվորի պահանջը հանդիսանում էր քրեական դատավարության օրենսգրքի 294-րդ հոդվածով նախատեսված դեպք, այն է՝ նախնական կալանք կրելու պատճառով վնասների փոխհատուցում: Թվում է, թե տեղական իշխանությունները չափից դուրս խիստ են գտնվել՝ կիրառելով վերոհիշյալ հոդվածը, հաշվի առնելով, որ հայցվորի բողոքը չէր վերաբերում նախնական կալանքին, և նա ոչ արդարացվել էր, ոչ էլ ապացուցվել էր նրա կողմից հանցանքը

չկատարելու փաստը: Փաստորեն,291-րդ հոդվածը կիրառվել է անալոգիայով, 292-րդ հոդվածի փոխարեն, որը նախատեսում է ավելի ընդհանուր դեպքեր (դատական սխալ կամ արդարադատական սխալ գործողություն): Այս հանգամանքն ստիպել է ներպետական դատարաններին և նախարարին վերլուծել հայցվորի՝ հանցագործությանը մասնակցելու հարցը և այդպիսով մերժել նրա դիմումը:

57. Նման պատճառաբանությունը կասկածի տակ է դնում հայցվորի անմեղությունը, չնայած Սահմանադրական դատարանի որոշմանը, որն անմեղ է ճանաչել շահագրգիռ անձին՝ վերականգնելով նրա անմեղության կանխավարկածի իրավունքը: Մեղադրյալի անմեղության մասին կասկած արտահայտելը կարող է նշանակել, որ քրեական հետապնդման դադարեցումը չի հաստատել մեղադրանքի հիմնավորվածությունը: Սակայն անթույլատրելի է նման կասկածների հիմնավորվածության մասին խոսել, եթե կա ուժի մեջ մտած արդարացնող դատավճիռ: Առավել ևս՝ տվյալ գործով, որի դեպքում Արդարադատության նախարարը վնասների հատուցման դիմումը մերժելու համար հիմնվել է այն փաստի վրա, որ բացակայում է հայցվորի անմեղության մասին համոզվածությունը, չնայած Սահմանադրական դատարանի՝ նրա անմեղության կանխավարկածի իրավունքը վերականգնող որոշմանը: Այս հանգամանքներում, Արդարադատության նախարարի պատճառաբանությունը, որը մինչ այդ հաստատվել էր ներպետական դատարանների կողմից, չի համապատասխանում անմեղության կանխավարկածի սկզբունքին:

58. Բացի դրանից, Դատարանը նշանակություն է տալիս այն փաստին, որ, ինչպես այն ճանաչել է Կառավարությունը, հայցվորն ավելի քան 3 տարի դատվածություն ունի տվյալ հանցագործության համար, չնայած որ այն Սահմանադրական դատարանի կողմից չեղյալ է հայտարարվել:

59. Արդյունքում, խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետը:

***Թալիադորու և Ստիլիանու ընդդեմ Կիպրոսի (Taliadorou and Stylianou v. Cyprus) 39627/05 և 39631/05, 16.10.2008թ.***

26. Դատարանը նշում է, որ ներպետական դատարանում ընթացող քննության երկրորդ փուլն անցկացվել է դիմողների խնդրանքով, որոնք փոխհատուցում են պահանջել վարչական որոշման վերացման պայմաններում, որով նրանց համար պատասխանատվություն էր նախատեսվել խոշտանգման համար, և պահանջել են իրենց արդարացնել: Վարչական որոշումը վերացվել է Գերագույն դատարանի կողմից, քանի որ, *inter alia*, այն խախտել էր Սահմանադրությամբ, ինչպես նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետով երաշխավորված անմեղության կանխավարկածը: Հաստատելով, որ քննության երկրորդ փուլը վերաբերել է փոխհատուցման պահանջին՝ որպես այնպիսի գործողության դեմ միջոց, որը հակասում էր 6-րդ հոդվածի 2-րդ կե-

տով նախատեսված երաշխիքին, Դատարանը համաձայն է կողմերի հետ, որ այս դրույթը կիրառելի է … Այս կապակցությամբ Դատարանը կրկնում է, որ 6-րդ հոդվածի 2-րդ կետի գործառույթներից մեկն է պաշտպանել արդարացվածի համբավն այնպիսի գործողություններից կամ հայտարարություններից, որոնց հետևում է այնպիսի արդարացում, որը, թվում է թե, կասկածի տակ է դնում այդ անձի համբավը:

27. Այնուամենայնիվ, Դատարանը նկատում է, որ Գերագույն դատարանը չի տվել որևէ հստակ, հավաստի ցուցում, որը կասկածի տակ կդներ դիմողի անմեղությունը և արդարացումը: Չնայած Գերագույն դատարանը փոխել է շրջանային դատարանի կողմից սահմանված բարոյական վնասի փոխհատուցումը, այն այդ փոփոխությունը չի կապել որևէ կասկածի հետ առ այն, որ դիմողն իրականում մեղավոր է եղել այնպիսի հանցագործությունների համար, որոնց կապակցությամբ արդարացվել է, փոխարենը Գերագույն դատարանը հիմնվել է պատճառահետևանքային կապի վրա:

28. Ուստի Դատարանը գտնում է, որ տեղի չի ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում:

### 3. Ապօրինի դատապարտում

***Բարբերան, Միսեքը և Ջաբարդոն ընդդեմ Իսպանիայի (Barberà, Messegué and Jabardo v. Spain) 13.06.1994թ.***

16. … դիմողները գտնվում էին բանտում՝ այնպիսի դատաքննության արդյունքում, որը, Դատարանի համոզմամբ, իրականացվել էր ի խախտումն Կոնվենցիայի: Ավելին, 1993 թվականի հոկտեմբերի 30-ին Audiencia Nacional–ի վերջնական վճռի լույսի ներքո …, չի կարելի գնահատել, որ, եթե անգամ առաջին դատաքննությունն իրականացվեր Կոնվենցիային համապատասխան, հետևանքը դիմողների համար չէր լինի առավել բարենպաստ: Բոլոր դեպքերում, նրանք իսկապես զուրկ են եղել իրենք իրենց 6-րդ հոդվածի պահանջներին համապատասխան պաշտպանելու հնարավորությունից … և, այդ իսկ պատճառով, չեն կարողացել ավելի ցանկալի արդյունքի հասնել: Այսպիսով, Դատարանի կարծիքով՝ դիմողների կողմից վկայակոչվող վնասի և Կոնվենցիայի խախտման միջև առկա է հստակ պատճառական կապ: Այս պարագայում դիմողների հետագա ազատ արձակումն ու արդարացումը չէին կարող ինքնին նրանց տրամադրել restitutio in integrum կամ փոխհատուցել իրենց կալանավորման արդյունքում կրած վնասը…

18. Լսողության և կարիերայի հեռանկարի կորստի առնչությամբ պահանջվող գումարների հարցում Դատարանը չի կարող ընդունել դիմողների կողմից 1993 թվականին առաջարկված հաշվարկման մեթոդը, որը հիմնված է Իսպանիայում անաշխատունակության վերաբերյալ գործերով պահանջվող գումարի չափերի վրա …, քանի որ նման մեթոդը որևէ կապ չունի գործի հանգամանքների հետ: Չնայած

աջակցող փաստաթղթերի բացակայությանը և դիմողների կողմից նախքան իրենց բանտարկությունն իրենց զբաղմունքի վերաբերյալ արված հայտարարությունների մեջ առկա հակասություններին… Դատարանը գտնում է, որ նրանց պետք է փոխհատուցում տրամադրվի 1987 թվականին նրանց ներկայացրած թվերի հիման վրա:

19. Եվրոպական դատարանի կողմից խախտման արձանագրմանը համապատասխան Իսպանիայի դատարանների որոշումներն սկզբնական դատավճռի նման դիմողներին տրամադրել են ոչ նյութական վնասի փոխհատուցում: Այնուամենայնիվ, նրանք չեն կարող լիովին փոխհատուցել կրած վնասը:

20. 50-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերով հաշվարկներ կատարելով և հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ Դատարանը պրն Բարբերային տրամադրում է 8.000.000 պեսետ, պրն Միսեքին՝ 8.000.000 պեսետ, իսկ պրն Ջաբարդոյին՝ 4.000.000 պեսետ՝ որպես կրած վնասի լիովին փոխհատում:

***Շիլյաևն ընդդեմ Ռուսաստանի (Shilyayev v. Russia) 9647/02, 06.10.2005թ.***

19. Դիմողը բողոքել էր, որ 2001 թվականի հուլիսի 20-ին դատարանի կողմից սահմանված փոխհատուցումը ոչ բավարար է եղել: Նա հիմնվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի և 7-րդ արձանագրության 3-րդ հոդվածի վրա…

20. Դատարանը կրկնում է, որ վերը նշված դրույթները փոխհատուցման իրավունք են ապահովում այն անձանց համար, որոնց կալանքը խախտում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի կետերից որևէ մեկը … նաև՝ արդարադատության խափանման համար փոխհատուցման իրավունք այն դեպքերում, երբ դիմողը վերջնական որոշմամբ դատապարտվել է քրեական հանցագործությունների համար և տառապել դրան հետևած պատժից… Այնուամենայնիվ, Կոնվենցիայի այս դրույթները չեն արգելում Պայմանավորվող պետություններին փոխհատուցում նշանակել՝ կախված խախտման արդյունքում վնասը ցույց տալու անձի հնարավորությունից, իրականում նրանք որևէ հատուկ գումարներ չեն սահմանում…

21. Հիմնվելով փաստերի վրա՝ Դատարանը նկատում է, որ ներպետական իշխանությունները դիմողի քրեական գործում ընդունել են արդարադատության խափանման փաստը՝ 1997 թվականի հոկտեմբերի 24-ի դատավճիռը չեղյալ հայտարարելով, նրա կալանքն անօրինական համարել և այս կապակցությամբ որպես վնասի փոխհատուցում նրան տրամադրել 70.000 RUR (2.740 եվրո): Այս փոխհատուցումը կամայական կամ անհիմն չի համարվել, քանի որ երկու ատյանների դատարանները մանրակրկտորեն քննել էին դիմողի անձնական դրության վերաբերյալ բոլոր հանգամանքները, ներառյալ նրա դեմ քրեական գործի բնույթը, կալանքի տևողությունը և անձնական հետևանքները, և հանգել այդ որոշումը ընդունելու եզրակացութ-

յան: Դիմողը միանգամայն ի վիճակի էր մասնակցել սույն վարույթներին, և փոխհատուցման վերաբերյալ որոշումն անգամ ներպետական չափանիշներով չդիտարկվեց որպես անհամաչափ:

22. Ելնելով վերոհիշյալից՝ Դատարանը դիմումի այս մասը համարում է ակնհայտ անհիմն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով:

***Մատվեևն ընդդեմ Ռուսաստանի (Matveyev v. Russia) 26601/02, 03.07.2008թ.***

40. … դիմողը 1981 թվականի սեպտեմբերի 25-ի վերջնական որոշմամբ դատապարտվել էր ազատազրկման՝ 2 տարի ժամկետով, որը նա կրել է: Նրա դատավճիռը վերացել է 1999 թվականի հոկտեմբերի 6-ի վերաքննիչ վարույթի արդյունքում՝ Արխանգելսկի Տարածքային դատարանի նախագահության կողմից: Հաշվի առնելով 7-րդ արձանագրության 3-րդ հոդվածի պարզաբանական դրույթները՝ Դատարանն ընդգծում է, որ էական չէ, թե ինչպիսի ընթացակարգ է կիրառվել ներպետական դատարանների կողմից դատավճռի փոփոխման նպատակով:

41. Նաև Դատարանը նշում է, որ կողմերը համամիտ չէին դիմողի դատապարտման փոփոխման հետ՝ «նոր կամ նոր երևան եկած հանգամանքների» հիման վրա: Դիմողը վիճարկել է, որ «Փոստային դրույքների և ծառայությունների» վերաբերյալ թիվ 125 գնացուցակը, որը հիմք է հանդիսացել Արխանգելսկի Տարածքային դատարանի նախագահության կողմից 1999 թվականի հոկտեմբերի 6-ին նրա դատապարտումը վերացնելու համար հասու չի եղել նրա դատապարտման ժամանակ ո՛չ կողմերին և ո՛չ էլ դատարաններին: Կառավարությունը չէր համաձայնել այդ մտքին և պնդել էր, որ գնացուցակը ոչ միայն հասու է եղել, այլև դրան հղում է կատարվել Լոմոնոսովսկու շրջանային դատարանի՝ 1981 թվականի օգոստոսի 11-ի դատավճռում:

42. Դատարանը նկատում է, որ դիմողն ինքն է հղում կատարել «Փոստային դրույքների և ծառայությունների» վերաբերյալ թիվ 125 գնացուցակին Լոմոնոսովսկու Շրջանային դատարանում դատաքննության ընթացքում: Դիմողը վիճարկել է, որ նա չէր կարողացել օգտագործել փոստային կնիքը, քանի որ գնացուցակի համաձայն այն ոչ պիտանի էր դարձել: Շրջանային դատարանը չի ընդունել դիմողի պնդումները՝ գտնելով, որ գողության պահին դիմողը տեղյակ չէր գնացուցակի մասին և մտադրություն ուներ ապօրինաբար օգտագործել փոստային կնիքը: Դա վկայում է այն մասին, որ դատավարության ընթացքում և՛ Շրջանային դատարանը, և՛ դիմողը իրազեկ էին գնացուցակի բովանդակությանը:

43. Նաև Դատարանը նկատում է, որ 1999 թվականի հոկտեմբերի 6-ին Արխանգելսկի Տարածքային դատարանի նախագահությունը վերացրել էր դիմողի դատապարտումն այն հիմքով, որ գնացուցակի

համաձայն նշված ժամանակահատվածում փոստային կնիքը պիտանի չէր և չէր կարող ապօրինաբար օգտագործվել եկամուտ ստանալու նպատակով: Ուստի դատապարտումը վերացվել էր ոչ թե «նոր կամ նոր երևան եկած հանգամանքների» հիման վրա, այլ Նախագահության կողմից դիմողի դեմ իրականացվող քրեական վարույթների ընթացքում օգտագործվող ապացույցների վերագնահատման արդյունքում:

44. Հաշվի առնելով վերոհիշյալը և 7-րդ արձանագրության 3-րդ հոդվածի պարզաբանական դրույթները՝ Դատարանը գտնում է, որ 7-րդ արձանագրության 3-րդ հոդվածի կիրառելիության պայմանները չեն պահպանվել:

## II. ՇԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

### 1. Ոչ ընդհանուր իրավունք

***Մասոն և Վան Զոնն ընդդեմ Նիդեռլանդների (Masson and Van Zon v. Netherlands) 15346/89 և 15379/89, 28.09.1995թ.***

49. Նիդեռլանդների իրավական համակարգերում՝ Կոնվենցիայի կարգավիճակի տեսանկյունից, Դատարանն առաջին հերթին նկատում է, որ Կոնվենցիան «քրեական հանցանք կատարած» անձին ոչ միայն փոխհատուցման իրավունք չի տրամադրում, այլև, համապատասխանաբար, վերացրել է քրեական գործի քննության ընթացքում կատարված ծախսերի փոխհատուցման նրա իրավունքը, թեև օբյեկտիվորեն այս ծախսերը պետք է ծագեն նրան ազատությունից օրինական կարգով զրկելու դեպքում: Նման իրավունքը կարող է ծագել ո՛չ 6-րդ հոդվածի 2-րդ կետից, ո՛չ էլ Կոնվենցիայի կամ դրա Արձանագրությունների որևէ այլ դրույթից: Դա վկայում է այն մասին, որ որևէ կոնկրետ գործով նման իրավունքի առումով առկա հարցը պետք է ունենա բացառապես ներպետական օրենսդրությամբ պայմանավորված պատասխան:

### 2. Մերժում և անմեղության կանխավարկած

***Լյուչերն ընդդեմ Նիդեռլանդների (Leutscher v. Netherlands) 17314/90, 26.03.1996թ.***

29. Դատարանը նշում է, որ առկա են ընդհանուր հիմքեր առ, որ 6-րդ հոդվածի 2-րդ կետը «քրեական հանցանք կատարած անձին» չի տալիս օրինական ծախսերի փոխհատուցման իրավունք նրա նկատմամբ ընթացող վարույթների կարճման դեպքում…

Դատարանը… նաև վերհիշում է ձևավորված նախադեպն առ այն, որ նախկին մեղադրյալին անհրաժեշտ ծախսերի և ծախքերի համար փոխհատուցման տրամադրման մերժումը հետևելով նրա դեմ

ընթացող քրեական վարույթների կարճմանը՝ չի հանգեցնում տուգանքի կամ տուգանքին հավասարեցված այլ միջոցի …

Այնուամենայնիվ, նման որոշումը կարող է 6-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով առաջացնել հարց …այն մասին, թե արդյո՞ք նպաստող փաստարկները, որոնք չեն կարող տարանջատվել գործող դրույթներից, հանգեցնում են նախկին մեղադրյալի մեղավորությունը որոշող իրադրությանը՝ առանց նախկինում օրենքի համաձայն նրա մեղքն ապացուցելու, և, հատկապես, նրան հնարավորություն չընձեռելով իրականացնելու իր պաշտպանության իրավունքը …

31. Քրեական դատավարության օրենսգրքի 591a հոդվածի 2-րդ կետից ելնելով՝ 90-րդ հոդվածի հետ մեկտեղ, Վերաքննիչ դատարանը իրավասու էր որոշել, որ դիմողի ծախսերը պետք է վճարվեին պետական միջոցների հաշվին միայն այն դեպքում, եթե այն կգտներ, որ առկա են նման փոխհատուցման համար «օբյեկտիվ պատճառներ»: Այս դրույթներից ելնելով՝ զգուշավորություն ցուցաբերելիս Վերաքննիչ դատարանն ինչպես Կոնվենցիայի, այնպես էլ Նիդեռլանդների օրենքի պահանջներից ելնելով իրավասու էր հաշվի առնել դիմողի նկատմամբ առկա կասկածները, որոնք ի հայտ են եկել այն փաստի շնորհիվ, որ նրա դատապարտումը վերաքննության արդյունքում վերացել էր միայն այն պատճառով, որ գործը դատարան ուղարկելու ժամանակ քրեական հետապնդման համար վաղեմության ժամկետներն սպառվել էին: Ակնհայտ է, որ այն նման կերպ է վարվել՝ նշելով, որ «ո՛չ քրեական քննության նյութերը, ո՛չ էլ տվյալ պահանջի հետ կապված որևէ հանգամանք որևէ կասկածի առիթ չեն տալիս դատապարտման ստուգության վերաբերյալ»…

Քրեական դատավարության օրենսգրքի 591a հոդվածի 2-րդ կետը կիրառելիս Վերաքննիչ դատարանը կոչված չէր վերագնահատելու դիմողի մեղքը կամ կարծիք հայտնել այն մասին, թե արդյոք նրա դատապարտումը կհաստատվեր վերաքննության արդյունքում: Ոչ էլ այդ դրույթի համատեքստում նրա՝ 1990թ. մարտի 16-ի որոշումը կարող է մեկնաբանվել որպես այդ առթիվ արված հետևություն:

32. Այդ իսկ պատճառով, տվյալ գործի փաստերի հիման վրա առկա չէ 6-րդ հոդվածի 2-րդ կետի որևէ խախտում:

***Բարսն ընդդեմ Նիդեռլանդների (Baars v. Netherlands) 44320/98, 28.10.2003թ.***

28. Սույն գործի՝ Լյուցի գործին նմանությունը կայանում է նրանում, որ երկու գործերում էլ քրեական վարույթներն ավարտվել են առանց որևէ որոշման՝ այն պատճառով, որ քրեական հետապնդման համար սահմանված վաղեմության ժամկետն սպառված է եղել: Լյուցի գործով համապատասխան քննության ժամանակ, որն առնչվում էր ծախսերի և ծախքերի փոխհատուցմանը, Գերմանիայի առաջին ատյանի դատարանը նշել է…

Դատարանը եզրակացնում է, որ Գերմանիայի դատարաններն այդպիսով պետք է ցույց տային, ինչպես որ նրանք կոչված էին անելու որոշում կայացնելիս, որ դիմողի առնչությամբ դեռևս առկա են խիստ կասկածներ: Այն հավելել է, որ, եթե անգամ կիրառված ժամկետները թվում են կասկածելի և ոչ բավարար, ներպետական դատարանները սահմանափակվել են՝ մատնանշելով «էական կասկածի» առկայությունն առ այն, որ մեղադրյալը «հանցագործություն է կատարել»: Ապացույցների, մասնավորապես՝ պրն Լյուցի նախկին ցուցմունքների հիման վրա որոշումները հիմնավորվել են «կասկածի հաստատումը» և չեն պարունակել մեղքի հայտնաբերում: Այս կապակցությամբ, Դատարանը գտնում է, որ ավելի էական, մանրամասն որոշումների մեջ առկա են հակասություններ, որոնք նաև առկա են վերոհիշյալ Մինելիի գործում:

29. Այնուամենայնիվ, տվյալ գործում Վերաքննիչ դատարանը կայացրել էր դիմողին փոխհատուցում չտրամադրելու մասին որոշում, որին մեղադրանք էր առաջադրվել խարդախության համար՝ «դիմողը կեղծել էր անդորրագիրը», և մանրամասն թվարկել էր դրա պատճառ հանդիսացած բոլոր հանգամանքները:

30. Նման հանգամանքներում, չի կարելի ասել, որ Վերաքննիչ դատարանը պարզապես ցույց էր տվել, որ դիմողի նկատմամբ դեռևս առկա էին խիստ կասկածներ:

31. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները, ըստ էության, հանգեցրել են դիմողին մեղավոր ճանաչելուն, մինչդեռ դիմողը «չի ճանաչվել մեղավոր օրենքի համաձայն»: Դա պայմանավորված էր այլ անձի՝ պրն Բ.-ի նկատմամբ իրականացվող քննության ընթացքում արված հետևություններով: Այս վարույթներում դիմողը հանդես է եկել միայն որպես վկա՝ առանց 6-րդ հոդվածով սահմանված պաշտպանության:

32. Ուստի Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում:

### 3. Մերժում այն դեպքերում, երբ հանցագործությունները հակասում են ՄԻԵԴ-ին

***Վուլֆմեյերն ընդդեմ Ավստրիայի (Wolfmeyer v. Austria) 5263/03, 26.05.2005թ.***

24. Դիմողը գանգատվել էր Քրեական օրենսգրքի 209-րդ հոդվածի և ըստ այդ դրույթի իր նկատմամբ իրականացված քրեական վարույթների կապակցությամբ: Հիմնվելով Կոնվենցիայի 8-րդ հոդվածին՝ առանձին վերցրած, և 14-րդ հոդվածի հետ փոխկապակցված՝ նա բողոքել էր, որ խախտվել է իր անձնական կյանքի իրավունքը, և որ վիճելի դրույթը եղել է խտրական, քանի որ միևնույն տարիքային խմբում չափահասների և պատանիների միջև համասեռամոլային հարաբերությունները պատժելի չէին:

31. Դատարանը … նկատում է, որ ո՛չ դիմողի ազատումը, ո՛չ հետագա ծախսերի վերաբերյալ որոշումը որևէ հայտարարություն չեն պարունակում, որն առնվազն կհաստատեր սեռական կողմնորոշման առնչությամբ իր անձնական կյանքի ոլորտում խտրականությունների չենթարկվելու դիմողի իրավունքի խախտումը: Եթե անգամ դրանք առկա լինեին, Դատարանը գտնում է, որ դրանցից ոչ մեկը չի ապահովում իր նախադեպով պահանջվող համապատասխան փոխհատուցում:

32. Այս կապակցությամբ Դատարանի դիրքորոշման համար վճռորոշ է այն, որ տվյալ գործով Քրեական օրենսգրքի 209-րդ հոդվածի բովանդակությունն ինքնին խախտում էր Կոնվենցիան … և, հետևաբար, Կոնվենցիան խախտվում էր նաև ըստ այս դրույթի իրականացվող քրեական վարույթներով:

33. Դիմողն ստիպված կանգնել է դատարանի առջև և դատապարտվել առաջին ատյանի դատարանի կողմից: Անհասկանալի է, թե ինչպես արդարացումը՝ առանց վնասների որևէ փոխհատուցման և ուղեկցվելով անհրաժեշտ պաշտպանության ծախսերի չնչին մասի հատուցմամբ, կարող էր ապահովել համապատասխան փոխհատուցում … Դատարանն ինքը նմանատիպ գործերով էական գումարներ է սահմանել ոչ նյութական վնասի փոխհատուցման համար՝ հաշվի առնելով այն փաստը, որ դատավարությունը, որի ընթացքում դիմողի անձնական կյանքի մանրամասները հայտնի են դարձել հանրությանը, պետք է դիտվեին որպես խիստ ցնցող իրադարձություն դիմողի կյանքում…

34. Եզրափակելով՝ Դատարանը գտնում է, որ դիմողի արդարացումը, որը չի հաստատել Կոնվենցիայի վկայակոչված խախտումը և չի ուղեկցվել համապատասխան փոխհատուցմամբ, չի նվազեցրել դիմողի՝ զոհի կարգավիճակը Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով:

## Է. ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

### 1. Կալանքի տակ պահելը

***Ասենովն ընդդեմ Բուլղարիայի** (Assenov v. Bulgaria) **24760/94, 28.10.1998թ.***

155. Դատարանը հիշեցնում է, որ երկու դեպքերում էլ, երբ պրն Ասենովի կալանքի օրինականությունը վերանայվել է դատարանի կողմից, նրան ազատելու հարցը մերժվել է այն հիմքերով, որ նա մեղադրվել է մի շարք լուրջ հանցագործությունների մեջ, ինչպես նաև նրա կայուն քրեական գործունեության պատճառով, ինչը վտանգ էր առաջացնում այն առումով, որ ազատվելուն պես նա կրկին հանցանք կգործեր…

156. … Այս հանգամանքներում, Դատարանը կարծում է, որ ազատ արձակվելու դեպքում դիմողի՝ կրկին հանցանք գործելու հավանականությամբ պայմանավորված ներպետական իշխանությունների երկյուղն անհիմն չէ:

157. Այնուամենայնիվ, Դատարանը հիշեցնում է, որ դիմողն անչափահաս է եղել և, այդպիսով, Բուլղարիայի օրենսդրության համաձայն նա կարող էր կալանքի տակ պահվել միայն բացառիկ հանգամանքների պարագայում… Ուստի սովորականից ավելի կարևոր էր, որպեսզի իշխանությունները յուրահատուկ զգուշություն ցուցաբերեին նրան ողջամիտ ժամկետում դատարանին հանձնելու առնչությամբ: Կառավարությունը հայտարարել է, որ երկու տարի է անցել մինչև գործը փոխանցվել է դատարան, որովհետև այն եղել է հատկապես բարդ՝ պահանջելով երկարատև քննություն: Այնուամենայնիվ, Դատարանում առկա տեղեկատվությունից երևում է, որ այդ տարիներից մեկի ընթացքում՝ 1995 թվականի սեպտեմբերից մինչև 1996թ. սեպտեմբեր, քննության կապակցությամբ իրականում որևէ գործողություն տեղի չի ունեցել՝ որևէ նոր ապացույց չի ստացվել, և պրն Ասենովն ընդամենը մեկ անգամ է հարցաքննվել 1996 թվականի մարտի 21-ին… Ավելին, ազատության իրավունքի կարևորությունը և, օրինակ, պաշտոնատար անձին համապատասխան փաստաթղթերի բնօրինակներն ամեն անգամ ուղարկելու փոխարեն դրանք պատճենահանելու հնարավորությունը, դիմողի բազմաթիվ միջնորդություններն ազատ արձակվելու վերաբերյալ չպետք է քննության ձգձգման և, հետևաբար, դատավարության հետաձգման պատճառ դառնային …

158. Դատարանը գտնում է, որ պրն Ասենովի գործի քննությունը չի իրականացվել «ողջամիտ ժամկետում»՝ ի խախտումն 5-րդ հոդվածի 3-րդ կետի:

***Բուամարն ընդդեմ Բելգիայի (Bouamar v. Belgium) 9106/80, 29.02.1988թ.***

50. … Դատարանը նշում է, որ անչափահասի բանտարկությունը ոչ բոլոր դեպքերում է համարվում (d) ենթակետի խախտում… եթե անգամ դա ինքնին չի ապահովում անձանց «դաստիարակչական հսկողությունը»: Ինչպես պարզվում է «նպատակի համար» ("pour")արտահայտությունից՝ տեքստում նշված «կալանքը» ենթադրում է անձին «դաստիարակչական հսկողության» հանձնելը, սակայն անհրաժեշտ չէ, որ դա շուտափույթ իրականացվի: Ինչպես սահմանված է 5-րդ հոդվածի 1-ին կետի (c) և (a) ենթակետերում… մինչդատական կալանքի և դատապարտումից հետո կալանքի տարբերությունների վերաբերյալ, այսպես, (d) ենթակետը չի արգելում ժամանակավոր խնամակալության միջոցի կիրառումը որպես դաստիարակչական հսկողության նախնական ռեժիմ, առանց ինքնին ներառելու որևէ կարգապահական հսկողություն: Այնուամենայնիվ, նման հանգամանքներում, բանտարկությունն արագորեն պետք է շարունակվի այդ նպատակով ստեղծված և բավարար պայմաններ ունեցող որևէ հաստատությունում (բաց կամ փակ):

51. Տվյալ գործում դիմողին պարբերաբար տեղափոխել են Լանթինի բանտից տուն: 1980թ. միայն անչափահասների գործով դատարաններն ինն անգամ թույլատրել են նրա կալանքը և այնուհետև ազատ են արձակել նրան՝ օրենքով նախատեսված տասնհինգօրյա ժամկետը լրանալիս կամ մինչ լրանալը, այսպես, ընդհանուր առմամբ, նա ազատազրկվել էր 119 օր՝ 1980թ. հունվարի 18-ից մինչև նոյեմբերի 4-ն ընկած 291-օրյա ժամանակահատվածում..

52. … Բելգիայի պետությունն անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների առնչությամբ իր քաղաքականությունն իրականացնելու նպատակով ընտրել է դաստիարակչական հսկողության համակարգը: Համապատասխանաբար, այն պարտավոր էր նախատեսել համապատասխան հաստատություններ, որոնք պետք է բավարարեին 1965թ. Արձանագրությամբ սահմանված անվտանգության և կրթական նպատակների պահանջները՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին (d) կետի պահանջները բավարարելու համար…

Այնուամենայնիվ, գործի ապացույցներում ոչինչ բան չէր վկայում դրա մասին: Գործի դեպքերի ժամանակ Բելգիան՝ համենայնդեպս, ֆրանսախոս շրջանում, որտեղ բնակվում էր դիմողը, չուներ որևէ փակ ուսումնական հաստատություն, որն ի վիճակի կլիներ ընդունել չափազանց բարդ անչափահասների: Մեկուսացման պայմաններում, առանց ուսուցում ապահովող անձնակազմի աջակցության, երիտասարդի կալանքը բանտում չի կարող դիտվել որպես կրթական նպատակներ հետապնդող…

53. Ուստի Դատարանը եզրակացնում է, որ միասին վերցրած կալանավորման բոլոր ինը որոշումները չեն համապատասխանում

(d) ենթակետին… Դրանց անտեղի կրկնությունը հանգեցրել է դրանց առավել նվազ «օրինական» լինելուն՝ (d) ենթակետի իմաստով…, մասնավորապես՝ քանի որ մեղադրողը երբեք դիմողի նկատմամբ չի իրականացրել քրեական վարույթներ նրան մեղսագրվող հանցագործությունների կապակցությամբ:

***Մաբիլանզիլա Մայեկան և Կանիկի Միտունգան ընդդեմ Բելգիայի (Mubilanzila Mayeka and Kaniki Mitunga v. Belgium) 13178/03, 12.10.2006թ.***

99. Երկրորդ դիմողը կալանավորվել էր 1980թ. դեկտեմբերի 15-ի՝ Օտարերկրացիների մասին օրենքի (մուտքի, բնակության, կայանման և արտաքսման) 74-5-րդ բաժնի համաձայն, նրա՝ ապաստանի վերաբերյալ դիմումի կապակցությամբ սպասվող որոշումից առաջ, և համապատասխանաբար, իր արտաքսումից առաջ: Տվյալ ժամանակահատվածում Ակտն անչափահասների վերաբերյալ որևէ հատուկ դրույթներ չէր պարունակում: Այսպես, այն փաստը, որ օտարերկրացին անչափահաս էր, որևէ առնչություն չուներ նրա կալանքը կարգավորող դրույթների հետ:

100. Դատարանը համաձայն չէ երկրորդ դիմողի հայտարարությանն առ այն, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին (d) կետն անչափահասի կալանքը թույլատրող միակ դրույթն է: Փաստորեն, այն պարունակում է հատուկ, սակայն ոչ սպառիչ հանգամանքների օրինակներ, որոնց դեպքում կարող են կալանավորվել անչափահասները, այն է՝ նրանց դաստիարակչական հսկողության կամ նրանց իրավազոր պաշտոնատար անձի մոտ բերելու նպատակով:

101. Տվյալ գործում, երկրորդ դիմողի կալանքի համար հիմք է հանդիսացել այն փաստը, որ նա անօրինական ճանապարհով էր մուտք գործել երկիր, քանի որ չէր ունեցել անհրաժեշտ փաստաթղթեր: Այդ իսկ պատճառով նրա կալանքն իրականացվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, որը թույլատրում է «անձի օրինական ձերբակալումը կամ կալանքը՝ նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական ձերբակալումը կամ կալանքը, ում նկատմամբ իրականացվում է գործողություն՝ արտաքսման կամ հանձնման նպատակով»:

102. Այնուամենայնիվ, այն փաստը, որ երկրորդ դիմողի կալանքն ընթացել է ըստ 5-րդ հոդվածի 1-ին (f) կետի, դեռ չի նշանակում, որ այն եղել է օրինական՝ ըստ այդ դրույթի, քանի որ Դատարանի նախադեպերը պահանջում են, որպեսզի որոշակի կապ առկա լինի թույլատրելի ազատազրկման հիմքերի և կալանքի վայրի և պայմանների միջև…

103. Դատարանը նշում է, որ երկրորդ դիմողը կալանավորված է եղել ապօրինի ներգաղթողների համար նախատեսված փակ կենտրոնում՝ չափահասների համար նախատեսված միևնույն պայմաններում, հետևաբար, նման պայմանները հարմարեցված չեն եղել ծայ-

րահեղ խոցելի իրավիճակի համար, որում նա հայտնվել էր որպես չուղեկցվող անչափահաս:

104. Նման հանգամանքներում, Դատարանը գտնում է, որ Բելգիայի իրավական համակարգն այդ ժամանակ բավարար չափով չի ապահովել երկրորդ դիմողի ազատության իրավունքը:

***Նարթն ընդդեմ Թուրքիայի (Nart v. Turkey) 20817/04, 06.05.2008թ.***

30. Տվյալ գործով Դատարանը նշում է, որ հաշվի առնվող ժամանակահատվածն սկսվել է 2003 թվականի նոյեմբերի 28-ին՝ դիմողի ձերբակալումից, իսկ ավարտվել է 2004 թվականի հունվարի 16-ին՝ Իզմիրի անչափահասների գործերով դատարանում առաջին նիստի ընթացքում նրա ազատ արձակմամբ: Այսպես, դա տևել է 48 օր:

31. Այս գործն ուսումնասիրելիս Դատարանը հաշվի է առնում վերը հիշատակված կարևոր միջազգային փաստաթղթերի մեծ քանակությունը… և հիշեցնում է, որ անչափահասների մինչդատական կալանքը կարող է կիրառվել միայն որպես ծայրահեղ միջոց, որը պետք է լինի հնարավորինս կարճատև, և անչափահասները պետք է պահվեն չափահասներիցառանձին:

32. Դատարանը նկատում է, որ այն ժամանակ, երբ դիմողը ենթարկվել է կալանքի, Իզմիրի Ասսիզների դատարանը մերժել է նրա միջնորդությունը գործի նյութերի ծավալի, հանցագործության բնույթի և ապացույցների հիմնավորվածության հիման վրա… Ընդհանրապես, «հիմնավոր ապացույց» արտահայտությունը կարող է համապատասխան գործոն հանդիսանալ մեղավորության վերաբերյալ լուրջ ցուցանիշների գոյության և անհերքելիության համար, տվյալ գործում միայն այն չի արդարացնում կալանքի երկարատևությունը, որում էլ կայանում է դիմողի գանգատը…

33. Այն նաև նշել է, որ չնայած դիմողի փաստաբանը կոչ էր արել իշխանությանը հաշվի առնել դիմողի անչափահաս լինելու փաստը, սակայն, ինչպես պարզվում է, իշխանությունները նրա նկատմամբ կալանք նշանակելիս հաշվի չեն առել դիմողի տարիքը: Բացի դրանից, գործի նյութերից պարզվում է, որ կալանքի ընթացքում դիմողը պահվել է բանտում՝ չափահասների հետ մեկտեղ…

34. Վերոհիշյալի լույսի ներքո, և, մասնավորապես, հաշվի առնելով այն փաստը, որ դիմողն այդ ժամանակ անչափահաս է եղել, Դատարանը գտնում է, որ դիմողի նախնական կալանքի երկարատևությունը հակասում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետին:

***Գյուվեչն ընդդեմ Թուրքիայի (Güveç v. Turkey) 70337/01, 20.01.2009թ.***

106. Կառավարությունն առարկել է, որ հասարակական շահով էր պայմանավորված դիմողի շարունակվող կալանքը, որը մեղադրվել էր լուրջ հանցագործությունների համար: Նաև եղել է լուրջ վտանգ, որ

նա կդիմի փախուստի կամ կոչնչացնի իր դեմ առկա ապացույցները…

108. Դատարանը նկատում է, որ Կառավարությունն այն բանից հետո, երբ առարկել է, թե դիմողի կալանքն արդարացված է եղել հանցագործությամբ, որում նա մեղադրվել է, և չի վիճարկել՝ թե սկզբում կիրառվել են այլընտրանքային մեթոդներ, թե նրա կալանքը կիրառվել է իբրև վերջին մեթոդ՝ ի հակասումն ինչպես ներպետական օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային մի շարք պայմանագրերով նախատեսված իրենց պարտավորությունների…Նաև նյութերում որևէ փաստաթուղթ առկա չէ, որը կվկայեր այն մասին, որ դիմողի շարունակվող կալանքը թույլտրող դատարանը երբևէ անդրադարձել է դիմողի կալանքի երկարատևությանը: Իրոք, Թուրքիայում ներպետական իշխանությունների կողմից այնպիսի հարցերի նկատմամբ հսկողության բացակայությունը, ինչպիսին է անչափահասների կալանքը, ակնհայտ է վերը նշված միջազգային կազմակերպությունների զեկույցներից…

109. Թուրքիային առնչվող առնվազն երեք վճիռներում Դատարանն արտահայտել է իր կասկածները երեխաների մինչդատական կալանքի պրակտիկայի վերաբերյալ…և Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում է արձանագրել տվյալ գործով դիմողի կալանքից ավելի կարճատև կալանքների նկատմամբ…Տվյալ գործում, դիմողը կալանավորվել է տասնհինգ տարեկանում և նախնական կալանքի տակ է պահվել չորս և կես տարի, ինչը չափազանց երկար ժամանակահատված է:

110. Վերոհիշյալի լույսի ներքո, Դատարանը գտնում է, որ դիմողի նախնական կալանքը բավարար է այն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում որակելու համար:

### 2. Հարցաքննություն

***X.-ն ընդդեմ Գերմանիայի Դաշնային հանրապետության (X v. Federal Republic of Germany) 8819/79, 19.03.1981թ.***

… որքան էլ ցավալի և անհամապատասխան լինեն ոստիկանության գործողությունները, դա ինքնին չի համարվում անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք: Թեև անչափահասները քրեական պատասխանատվության են ենթարկվում որոշակի տարիքի հասնելուց հետո (սովորաբար՝ տասնչորս), արդարադատության արդյունավետ իրականացման շահերով և այլոց իրավունքների պաշտպանությամբ է արդարացված նրանց այնպիսի քննչական միջոցների ենթարկելը, ինչպիսի են ոստիկանության կողմից իրականացվող հարցաքննություններն այն դեպքերում, երբ առկա է խիստ կասկած, որ նրանք ներգրավված են այնպիսի գործողություններում, որոնք պատժելի կլինեին, եթե նրանք քրեորեն պատասխանատու լինեին:

Անշուշտ, անհրաժեշտ է, որպեսզի երեխաների հարցաքննությունն ընթանա՝ հաշվի առնելով նրանց տարիքը և զգայունությունը: Տվյալ դիմողը չի վկայակոչել որևէ անկանոնություն ոստիկանության կողմից իրականացվող հարցաքննության ընթացքում: Նա միայն բողոքել է, որ կարճ ժամանակով պահվել է չկողպված խցում: Այնուամենայնիվ, չկա որևէ հանգամանք, որը ցույց կտա, որ դա վնաս է հասցրել դիմողին: Հանձնաժողովը նաև հաշվի է առնում այն, որ դիմողին ընկերակցում էին երկու համադասարանցիներ…

… դիմումի այս բաժինն ակնհայտորեն անհիմն է…

***Պանովիցն ընդդեմ Կիպրոսի (Panovits v. Cyprus) 4268/04, 11.12.2008թ.***

84. Վերադառնալով տվյալ գործի փաստերին՝ Դատարանը կրկնում է վարույթների միճչդատական փուլում դիմողի պաշտպանության իրավունքի խախտան վերաբերյալ իր հետևությունները՝ համաձայն այն փաստի, որ լինելով անչափահաս, նրա հարցաքննությունն անցկացվել էր խնամակալի բացակայությամբ և առանց նրան ներկայացուցչի տրամադրման իր իրավունքի կամ լռություն պահպանելու իր իրավունքի մասին բավարար տեղեկացնելու: Դատարանը նշում է, որ վերոհիշյալ հանգամանքներում, դիմողից ստացված խոստովանությունը նրա դեմ մեղադրանքի համար որոշիչ տարր է հանդիսացել, որը էականորեն խոչընդոտել է դատարանում նրա պաշտպանության հեռանկարներին, և որը չի փոխհատուցվել համապատասխան գործողություններով:

85. Դատարանը նշում է, որ դիմողի խոստովանության հետ մեկտեղ, նրա դատապարտումը պայմանավորված էր նրա երկրորդ հայտարարությամբ այն մասին, որ ինքը հարվածներ է հասցրել տուժողին, ցուցմունքով, որը նկարագրել է դիմողի հայտարարությունն առ այն, որ նա լուրջ կռվի է բռնվել տուժողի հետ, նաև՝ տարբեր ցուցմունքներով, որոնք վկայում են այն մասին, որ դիմողը հարբել է տուժողի հետ այն երեկո, երբ վերջինս մահացել է, և որ հաջորդ օրը՝ առավոտյան ժամերին, դիմողի հագուստը պատված է եղել կեղտով: Բժշկական եզրակացությունը հաստատել էր, որ տուժողի մահը վրա է հասել բազմաթիվ ուժգին հարվածների արդյունքում: Չնայած որ Դատարանի խնդիրը չէ ներպետական դատարանների կողմից գնահատված ապացույցների ճշտումը, Դատարանը գտնում է, որ դատապարտումը մեծամասամբ հիմնված է եղել դիմողի խոստովանության վրա, որը մեծապես հաստատվել է նրա երկրորդ ցուցմունքով: Դատարանը գտնում է, որ ծավալը, որով դիմողի կողմից տրված երկրորդ ցուցմունքն արատավորված է եղել նրա պաշտպանության իրավունքի խախտմամբ՝ կապված այն հանգամանքների հետ, որոնցում ստացվել է խոստովանությունը, չի քննարկվել Դատարանի կողմից և մնում է չպարզված: Ավելին, Դատարանը գտնում է, որ հաշվի առնելով Ասսիզների դատարանի կողմից դիմողի առաջին ցուցմունքի ընդունման

փաստը, ակնհայտ է դառնում, որ դիմողի երկրորդ ցուցմունքի թույլատրելիության հերքումն աննպատակ կլիներ նրա համար:

86. Վերոհիշյալ դատողությունների լույսի ներքո, Դատարանը եզրակացնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում՝ այն պատճառով, որ դատաքննության ընթացքում օգտագործվել է դիմողի խոստովանությունը, որն ստացվել է այնպիսի պայմաններում, որոնք խախտել են նրա՝ գործի պատշաճ քննության իրավունքները, այդպիսով, անդառնալիորեն խախտել են իր պաշտպանության իրավունքը:

Տե՛ս նաև վերը՝ **Բ. Վ. 1** և **Ս. VI. 6**

### 3. Ապացույցների օգտագործումը

Տե՛ս վերը՝ **Բ. VI. 10**

### 4. Արդարացի դատաքննության ապահովում

***Տ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (T. v. United Kingdom) 24724/94, 16.12.1999թ.***

86. Դատարանը նշում է, որ դիմողի նկատմամբ հրապարակային դատաքննությունը Թագավորական դատարանում տևել է առավել քան երեք շաբաթ: Հաշվի առնելով դիմողի երիտասարդ տարիքը՝ վարույթների ընկալմանը նպաստելու համար հատուկ միջոցներ են ձեռնարկվել, օրինակ՝ նրան պարզաբանվել է դատավարության ընթացքը և նրան նախօրոք ցույց է տրվել դատարանի դահլիճը, ինչպես նաև կրճատվել է նիստերի տևողությունը՝ ամբաստանյալին շատ չհոգնեցնելու նպատակով: Այնուամենայնիվ, Թագավորական դատարանի պաշտոնական արարողությունը տասնմեկ տարեկան երեխայի համար պետք է որ անհասկանալի և սարսափազդու լիներ, նաև ապացույցներ կային առ այն, որ դատարանի դահլիճի որոշ ձևափոխություններ, մասնավորապես՝ ամբաստանյալի բարձրացված աթոռը, որն այնպես էր կառուցված, որպեսզի ամբաստանյալը կարողանար տեսնել, թե ինչ էր տեղի ունենում, իր հերթին նիստերի ընթացքում ավելացնում էր դիմողի անհանգստության զգացումը, քանի որ նա զգում էր, որ ենթարկվում է լրատվամիջոցների և հանրության քննադատությանը: Դատավարությունը լրատվամիջոցների և հանրության համար ծայրահեղ մեծ հետաքրքրություն էր առաջացրել ինչպես դատարանի դահլիճում, այնպես էլ դրանից դուրս, այնաստիճան, որ դատավորն իր ամփոփիչ ճառում հղում էր արել խնդիրներին, որոնք առաջանում էին վկաների համար հանրության աղմուկի պատճառով, և խնդրել էր ատենակալներին ապացույցները գնահատելու ընթացքում հաշվի առնել այդ ամենը…

87. … հատկանշական է, որ բժիշկ Վիսարթն իր 1993թ. նոյեմբերի 5-ի զեկույցում գտել է, որ դիմողը տառապել է հետվնասվածքային սթրեսային խանգարմամբ, որը զուգորդվել է հանցագործությունից

հետո թերապևտիկ միջամտության բացակայությամբ, ինչը սահմանափակել է նրա կարողությունն իր փաստաբանին ցուցումներ տալու և իր պաշտպանության համար համապատասխան ցուցմունքներ տալու հարցում … Ավելին, դիմողը հիշատակել է նաև, որ դատավարության ընթացքում նա պահվել է այնպիսի պայմաններում, որ ի վիճակի չի եղել հետևել դատավարությանը կամ հօգուտ իր սեփական շահերի որևէ որոշում կայացնել…

88. Նման հանգամանքներում, Դատարանը չի գտնում, որ ի կատարումն 6-րդ հոդվածի 1-ին կետի՝ բավարար է այն, որ դիմողին տրամադրվել են հմուտ և փորձառու փաստաբաններ: Սույն գործը տարբերվում է Ստանֆորդի գործից …, որում Դատարանը խախտում չհամարեց այն փաստը, որ մեղադրյալը չէր կարողացել լսել նիստի ընթացքում հնչած որոշ ցուցմունքներ, այն տեսակետից, որ նրա փաստաբանը, ով կարող էր լսել այն ամենը, ինչ ասվում էր, և ամբողջ ժամանակ կարող էր ցուցումներ ստանալ իր պաշտպանյալից, տակտիկական նկատառումներով նախընտրել է չմիջնորդել, որպեսզի ամբաստանյալն ավելի մոտ նստի վկաներին: Չնայած որ դիմողի օրինական ներկայացուցիչները, ինչպես նշել է Կառավարությունը՝ «նստել էին շատ մոտ տարածությունում», չի երևում, որ դիմողն իրեն բավականաչափ ազատ է զգացել լարված նիստերի դահլիճում, հասարակության հսկողության ներքո, նիստերի ընթացքում խորհրդակցել է իր ներկայացուցիչների հետ, կամ, իրոք, հաշվի առնելով նրա անչափահասությունը և խաթարված հոգեվիճակը, չի երևում, որ կարող էր նիստերի դահլիճից դուրս համագործակցել իր փաստաբանների հետ և տեղեկություններ հայտնել նրանց իր պաշտպանության առնչությամբ:

89. Ամփոփելով՝ Դատարանը գտնում է, որ դիմողն ի վիճակի չի եղել արդյունավետորեն մասնակցել իր դեմ ընթացող քրեական վարույթներին, հետևաբար, տեղի չի ունեցել արդար դատաքննություն՝ ի խախտումն 6-րդ հոդվածի 1-ին կետը:

***Ս.Կ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (S. C. v. United Kingdom) 60958/00, 15.06.2004թ.***

30. … չնայած որ դիմողի վրա ազդել է հասարակությունը … քայլեր են ձեռնարկվել, որպեսզի վարույթները հնարավորինս ոչ պաշտոնական լինեն, օրինակ՝ իրավաբանները չեն կրել կեղծամներ և փիլոններ, ինչպես նաև դիմողին թույլատրվել է նստել հանրային պաշտպանի կողքին: Ի հակադրումն վերոհիշյալ Տ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության գործում առկա իրավիճակի, դիմողի ծերբակալությունը և դատավարությունը հասարակության և զանգվածային լրատվության միջոցների հետաքրքրության և բարձր մակարդակի թշնամանքի առարկա չէին դարձել, և որևէ ապացույց առկա չէ այն մասին, որ դատարանի դահլիճում եղել է խիստ լարված կամ սարսափազդու մթնոլորտ…

32. Այնուամենայնիվ, Դատարանն ուշադրության արժանի է համարում այն, որ դիմողին լսումներից առաջ քննած երկու փորձագետներն արտահայտել են այն տեսակետը, որ նա իր տարիքի համեմատ ունեցել է բավականին ցածր մտավոր ունակություններ … բժիշկ Բրենանը… խորհուրդ է տվել դիմողին զգուշորեն բացատրել դատարանում առկա ընթացակարգը՝ դիմողի ուսումնառական բարդություններին համապատասխան:

33. Չնայած այդ ամենն արվել էր, համենայնդեպս, հանրային պաշտպանը, ու դիմողի կողքին էր Թագավորական դատարանում, իր հայտարարության մեջ մանրամասն նշել է, որ «Չնայած, դիմողին իրավիճակը պարզաբանելու իմ բոլոր փորձերին՝ դիմողը չէր ընկալում այն իրավիճակը, որում նա գտնվում էր»… Այսպիսով, դիմողը դժվար թե կարողանար հասկանալ վարույթների ընթացքում երդվյալ ատենակալների դերը կամ նրանց վրա լավ տպավորություն գործելու կարևորությունը: Առավել զարմանալի է, որ նա, չի թվում, թե ըմբռնել է այն փաստը, որ առկա է եղել ազատազրկման դատապարտվելու վտանգ, անգամ, որ մեկ դատավճիռը կայացել էր, և նա տարվել է խուց, նա ընկճված է եղել և կարծել է, թե կարող տուն գնալ իր խնամակալ հոր հետ:

34. Այս ապացույցների լույսի ներքո, Դատարանը չի կարող եզրակացնել, որ դիմողը ընդունակ էր արդյունավետորեն մասնակցություն ունենալ դատաքննությանը վերը՝ 29-րդ կետում նշված չափով:

35. Դատարանը գտնում է, որ երբ ընդունվում է որոշում այնպիսի երեխայի կապակցությամբ, ինչպիսին դիմողն է, որն իր երիտասարդ տարիքի և սահմանափակ մտավոր կարողությունների պատճառով չէր կարող արդյունավետորեն մասնակցել դատաքննությանը, առավել արդյունավետ են քրեական վարույթները, քան այլ եղանակները, որոնք ուղղակիորեն ուղղված են երեխաների և հանրության շահերի պաշտպանությանը, շատ կարևոր է, որպեսզի նրա գործը քննվի պրոֆեսիոնալ դատարանի կողմից, որը կարող է լիարժեք հետևություններ անել, պատշաճ կերպով հաշվի առնել առկա մտավոր թերությունները և իրականացնել պատշաճ դատաքննություն:

36. Ճիշտ է, որ չի վիճարկվել այն, որ ներպետական վարույթների ընթացքում դիմողն ի վիճակի չի եղել պաշտպանվելու: … Այնուամենայնիվ, Դատարանը ներկայիս գործի հանգամանքներում չի համոզվել, որ դիմողն ընդունակ է եղել արդյունավետորեն մասնակցելու իր գործի քննությանը՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվող սահմանում:

Տե՛ս նաև վերը՝ **C. VI. 6**

## 5. Դատավարության գործընթացի ընդհատում

***Տ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (T. v. United Kingdom) 24724/94, 16.12.1999թ.***

73. 3-րդ հոդվածի ներքո դիմողի բողոքի՝ դատաքննությանն առնչվող երկրորդ բաժինը վերաբերել է այն փաստին, որ քրեական վարույթները տևել են շուրջ երեք շաբաթ, հասարակության ներկայությամբ՝ չափահասների Թագավորական դատարանում, որը պաշտոնական էր, և որ դատապարտումից հետո թույլատրվել է, որպեսզի նրա անունը հրապարակվի…

76. Դատարանը գտնում է, որ դիմողի դեմ իրականացված քրեական վարույթներում պետական իշխանությունները չէին հետապնդել դիմողին նվաստացնելու կամ տառապանք պատճառելու նպատակ: Իսկապես, Թագավորական դատարանում որոշակի միջոցներ են ձեռնարկվել Թագավորական դատարանի ընթացակարգերի փոփոխման ուղղությամբ՝ չափահասների դատարանի խիստ բնույթը թուլացնելու նպատակով, հաշվի առնելով ամբաստանյալների երիտասարդ տարիքը…

77. Եթե անգամ առկա լինեին այնպիսի ապացույցներ, որ դիմողի նկատմամբ կիրառված նման կարգի վարույթները կարող էին վտանգավոր լինել 11 տարեկան երեխայի համար… Դատարանը գտնում է, որ որևէ վարույթ կամ հարցաքննություն, որի միջոցով որոշվում են Վ.-ի և դիմողի կողմից կատարված գործողությունների հանգամանքները, անկախ նրանից՝ նման հարցաքննությունը կատարվել է հրապարակայնորեն, թե՝ դռնփակ, Թագավորական դատարանի պաշտոնական ոգով, թե դեռահասների դատարանում՝ ոչ պաշտոնական մթնոլորտում, բոլոր դեպքերում, դիմողի մոտ առաջացրել են մեղքի, մտահոգության, տառապանքի և վախի զգացումներ: Ըստ բժիշկ Վիսարթի վկայության՝ դատական նիստն սկսվելուց առաջ Թ.-ն հետվնասվածքային սթրեսային խանգարումների նշաններ է ցուցաբերել, որոնք առաջացրել են հանցագործության հանգամանքների նկատմամբ կայուն ցրվածություն, բարձր աստիճանի անհանգստություն, ինչպես նաև դիմողը սկսել էր վատ սնվել և քնել… Չնայած վարույթների հրապարակային բնույթը որոշակի չափով կարող էր սրել դիմողի այդ զգացումները, Դատարանը չի գտնում, որ դատավարության ընթացքի որոշակի առանձնահատկությունները, որոնք կիրառվել են դիմողի նկատմամբ, էական տառապանք են պատճառել նրան, որը դուրս է գալիս այն տառապանքի սահմաններից, ինչն անխուսափելիորեն առաջանում է իշխանությունների կողմից ցանկացած միջոց ձեռնարկելիս, որն ուղղված է դիմողին՝ նրա կողմից հանցագործություն կատարելուց հետո …

78. Ուստի ամփոփելով՝ Դատարանը գտնում է, որ դիմողի նկատմամբ իրականացված դատաքննությունը չի առաջացրել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

ՋԵՐԵՄԻ ՄԱՔԲՐԱՅԴ

# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

## ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Jeremy McBride

# HUMAN RIGHTS AND CRIMINAL PROCEDURE

## THE CASE LAW OF THE EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS


Խմբագիր՝ **Վահե ԵՆԳԻԲԱՐՅԱՆ**
Լեզվաոճական խմբագիր՝ **Արմինե ՆԱԶԱՐՅԱՆ**
Տեխնիկական խմբագիր՝ **Արարատ ԹՈՎՄԱՍՅԱՆ**
Կազմի ձևավորող՝ **Տիգրան ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

«Անտարես» հրատարակչատուն
Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59, 56 15 26
Հեռ./ֆաքս՝ (+374 10) 58 76 69
antares@antares.am
www.antares.am